Universitäts- und Landesbibliothek Bonn

Kirakosi Vardapeti Ganjakec‘woy Hamaṙôt patmowt‘iwn i Srboyn Grigorê c‘awowrs iwr

Kirakos <Ganjakec'i>

Venetik, 1865

urn:nbn:de:hbz:5:1-10546

Visual Library

Gaussen 3039

ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Բ

ԿԻՐԱԿՈՍ Վ. ԳԱՆՁԱԿԵՑԻ

ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԳԱՆՁԱԿԵՑԻՈՑ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ի ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԷ ՅԱՒՈՒՐՍ ԻՒՐ

ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

1865

3039

EX BIBLIOTHECA DRIS. GOUSSEN
BONNAE (BIBL. UNIV.)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Յետ վարդանայ վարդապետի դասել՝ ի տպագիր շարակարգի Պատմչաց մերոց՝ չիք արդարև ճահադոյն որ քան զկիրակոս [1], առաջնոյն ըստ բազում գլխոց և դիպաց յարակից և հաւասար, ընտանութեամբ, ուսմամբ, աշակերտութեամբ և կենացն իսկ պարագայութեամբ, այսինքն է Թուականաւ ծննդեանն և մահուան. որպէս և նոյն ինքն վարդան կոչէ զնա հաւշիրակ իւր, և օժանդակ ինձ յամենայնի, և այլուր՝ ի պատմութեան [2], հարազատաւ մեր կիրակոս վարդապետաւ հօրն հաւանեալ, այսինքն վանականայ վարդապետի մեծի. և այլ ևս գործակից և արդադիր բանիք, յորոց և նշանակեցաքս՝ ի յառաջաբանի պատմութեան վարդանայ [3]. որոց փոխարէն իմն և Կիրակոս՝ գովութեամբ և մեծարանօք յիշէ զիւրն ուսումնակից և համշիրակ «հարազատաւ մեր վարդան . . . որոյ բանիք արժանի էին ընդ միմեանս». և այլուր սրանչելի վարդապետ՝ Յաւանեալ եմ թէ սա առաւել արդար գտանի՝ ի գովելն զվարդան, քան նա՝ ի մեծարելն զկիրակոս և հանել ձգել՝ ի հօրն համանմանութիւն. յոր ոչ միայն ոչ տեսանեմ ժա-

1 Եւ՝ ի գրչագիրս գրեալ է միշտ երկոքին ապա զոյգ գտանին ընդօրինակեալք. որպէս և առ մեզ չիք օրինակ Կիրակոսի պատմչի առանց վարդանայն:

2 Վարդան. էջ 146:

3 Վ. էջ 9:

մանեալ զնա, այլ և բազում՝ ասպարիզօք բացակացեալ. նաև քան զիւր իսկ զհամչիրակն. բայց այս թերևս զի չուենիմք ՚ի ձեռին ապացոյց զիտութեան և հանճարոյ Կիւրակոսի՝ բայ ՚ի գրոցս պատմութենէ, որ ոչ ներքուխեամբ բանից և ոչ ընտրութեամբ բառից յաստիճան հօրն և եղբայրակցին զուգադասիլ արժանասցի ըստ մեզ։

Թէպէտ և զայլ ինչ գրուածոյ չունիմք զսորա համբաւ, և ոչ զքաղաքավարութենէ կենացն և զկատարածին, սակայն և ոչ սակաւ ծանօթս ինքնին զանձնէն ընծայէ ՚ի մատենի աստ յայսմիկ պատմագրութեան. յորում և հաւաստէ նախ զթիւ ամաց կենացն, քառասնամեայ՝ աւելի կամ պակաս զինքն ասելով յամի 1241 (ՈՂ), որով յայտնի ժամանակ ծննդեանն ՚ի սկիզբն ԺԴ դարու, իսկ մահուանն վկայի լինել զուգաթիւ ընդ Վարդանայ՝ յամի 1272 (ՉԻԱ), անցեալ զեօթանասնամեայիւք։ Վկայէ և զհայրենեացն ՚ի Գանձակայ լինել (66), յորմէ նշանաւոր վարդապետքն ԺԲ դարուն՝ Սարկաւագ և այլք զորս յիշէն անդ, և որ զկնի (107) մեծ վարդապետն Մխիթար Գոշ, չինող և առաջնորդ Գետկայ վանացն. ուր և զառաջինն աշակերտեալ սնաւ և ուսաւ հեղինակս մեր (115) յառաջնորդութեան Մարտիրոսի՝ յաջորդին Մխիթարայ, որպէս կարգ բանիցն ցուցանէ. նա զի և սորա վախճանեալ յամին 1213 (115) ՚ի ծերութեան հասակի, անդէպ երևի Կիրակոսի իբր երկքառասնամեայի աշակերտիլ նմա, որպէս կամին ցուցանել բանք պատմութեան մերոյ՝ զոր յետոյ ուրեմն յիշելոց եմք։ Թուի թէ անդստին ՚ի Գետիկ յարեալ էր Կիրակոս ՚ի Վանական վարդապետ՝ յընտիրն աշակերտաց Մխիթարայ. և զհետ նորա գնացեալ, և «բազում ժամանակս կացեալ առ նմա ՚ի վարժս կրթութեան» ՚ի սահմանս Տաւուշն բերդի, յանապատի անդ՝ զոր առացաւ իւր բնակութիւն» (113), որ և չինեալ վաներով միաբանակեցիկ և եկեղեցեօք՝ Խորանաշատ կոչեցաւ. և յաւելել տեղւոյն ՚ի ձէլալէտտինայ հինից (129) փոխադրեցաւ յանապատն և ՚ի քարայրս որ ՚ի հարաւոյ Տաւուշ բերդի. ուրանօր նստէր ընդ վարդապետին և ՚ի հասանել աստղատակի Թաթարաց, յորոց և զերծի վաբեցաւ ընդ նմին և զառուցաւ ՚ի վարդապետէն իւրմէ, և ապա զաղաւաղողի փախստեամբ զերծեալ՝ նկն անդրէն յառաջին վայր աննդեան իւրոյ ՚ի Գետիկ՝ ՚ի կիսաւեր եղեալն ՚ի Թաթարաց, որպէս պատմէ ինքնին զայսոսիկ մի ըստ միո-

ջէ, (129–135)։ Իսկ եթէ ոչքան ժամանակս եկայ անդէն և կամ ուր յետոյ գնայ և ուր հաստատեալ գրենակութիւն իւր, որմ վանիցն միաբան էր կամ հայր, և զինչ ինչ դրամեաց կամ գրեաց՝ կամ որպէս եղև վախճան նորա, չեհաս առ մեզ այսր ամենայնի յիշատակ, բայց միայն թուական ժամանակի մահուանն՝ զոր յիշեցաք։ Այլ հռչակ առնուանն՝ իբրու միոյ ի չորից ընտրելագոյն աշակերտաց Վանականի և կոչիլն ի Վարդանայ՝ Բաբռևևաց պետ[1], և բանք ինչ իւր վասն գրելոյ զկոչ զգուշութեան ընդդէմ Դաւթի Մոլորեցուցչի, որպէս գրէրն և Վանական, տան կարծել եթէ և ինքն Կիւրակոս առաջնորդ կամ տեսուչ կարգեալ էր ուխտի ուրեք վանաց կամ եկեղեցւոյ, զի իշխանութեամբ ինն գրէր սաստիւ և թանապրանօք (194). նոյն դարձեալ նշմարի և ի բանէ պատասխանատուութեան արևելեան վարդապետաց առ արևմտեայս՝ վասն խնդրոյ հատուցոյ հարցելոյ ի Հռովմայ։ Հաւանագոյն թուի ի միում վանորէից Աղուանից հռչակելոցն անդ յայնմ դարու՝ կեցեալ զվերջին ամս կենացն, մանաւանդ եթէ յանապատ տեղիս. և զայս կարծեցուցանէ միւս բան Վարդանայ առ նա ինքն Կիւրակոս գրեալ ի վերջաբանի մեկնութեան Երգոց Երգոյն յամի 1265, կոչելով զուսումնակիցն «մշակ մորենի» նեաց և աղտաղտ անբուսաբեր վայրաց»։

Միակ ծանօթ և առ մեզ հասեալ գրաւոր երկասիրութիւն Կիւրակոսի է մատեանս այս Պատմութեան, զոր առնուանէ նա կամ ընդօրինակողքն «Հատուցումն պատմութիւնք ժամանակաց ի սրբոյն Գրիգորէ մինչև ի յետին առեալս թուական» ։ այսինքն ժամանակագիր թուականաւ համարեալ. և արդարև սկսեալ զպատմութիւնն ի Ս. Գրիգորէ յետ լուսաւորութեանն Հայոց և երթալոյն ի Հռոմ, համառօտիւ պատմէ զկարգս և զարարս յաջորդաց նորին կաթուղիկոսաց և զթագաւորաց Հայոց և զիշխանաց ըստ ժամանակին կացելոց, և զաշխարհակալաց և զթագաւորաց դրացեաց կամ իշխողաց մերոյ աշխարհիս, մինչև ցիւր ժամանակս կամ ցելս Թաթարաց յարևելից. և յետ այնորիկ ըզգործս նոցին Նաւասղաց յաշխարհս մեր՝ յերկարագոյն բանիւք վիպելով հատուցանէ ցամ Տեառն 1265, և լռէ առդ

1 Ի յառաջաբանի մեկնութեան Երգոց երգոյն։

ինչ յառաջ քան զվարդան պատմիչ, զոր և վասն այսո-
րիկ չկարէ դասել ի շարս պատմագրաց Հայոց (4). իսկ ինքն
Վարդան Թուխ իսկ տեսանել և յանկն արկեալ զայս գործ
ընկերակցին, որպէս ասէն. « Ի ՈՁՆ Թուականէն Հայոց
մինչև յ'ԶԾԴ . . . զոր ինչ արարին աղգն Նետողաց . . . .
գրեալ են մանրամասնաբար փառաւորեալ հայրն մեր Վա-
նական վարդապետ և հարազատն մեր Կիրակոս վարդա-
պետ, հօրն համանմանն, զոր մեք ոչ համարձակեցաք և-
րեքինել կամ բաղմաբանել . . . պատկառելով ի գրոցդն
պատուոյ » :

Պատմութիւն Թաթարաց արշաւանին ի Հայս, կամ լաւ
ևս յարևելեան Հայս՝ որ Աղուանք կոչէին յայնժամ, այս
իսկ է գիտումն նպատակի պատմչին, որպէս և ծանուցա-
նէ (121), զլուխս կարգեալ, « Թէ որպէս ել Թաթարն ապա-
» կանել զաշխարհս աժենայն : Աժենայն բանք պատմու-
» թեանս մերոյ և նախաշաւիղ որ մինչև զայսօր (զամն 1225)
» էր վասն ազգիս այսորիկ, զոր չնորհօքն Քրիստոսի հան-
» դերձեալ եմք ճառել. կարծեմք թէ յոլով ևս զնոյնս պատ-
» մեացեն. և ամենեքեան նուազեալ զտանին յարժանա-
» տորութենէն. զի յաճախեն քան զպատմութիւնս չարիքն՝ որ
» եկին կալան զաշխարհս աժենայն [1] » : Բայց թէպէտ և
զայս նպատակ ունի պատմիչն, այլ գրեալն զԹաթարաց
չառաւելու քանակաւ քան զկէս բովանդակ գրոց պատմու-
թեանն, որ և ինքնին չէ մեծ. հետևելով և յայսմ յոլովից
ի մերոց պատմչաց, որոց զիւրեանց ժամանակի զէպսն կա-
մելով ճառագրել՝ յամենան ի նախակարգութիւն անցից
յառաջագոյն անցելոց, կամ ի բովանդակութիւն առհմային
պատմութեան, և քան զնոստացեալն իւրեանց և քան զա-
կընկալութիւն մեր՝ կարճառօտս կոտորն զբուն վէպսն .
այլ գուցէ մերս այս՝ որպէս և իւր ընկերակից՝ պատկառ
կալով ի մեծէ վարդապետէն իւրեանց Վանականայ՝ ոչ իշ-
խեաց երկրորդել զամենայն զնորա պատմեալսն, այլ յա-
ւէտ զթողեալսն առ ի նմանէ հաւաքեաց : Եւ զի զիւրոց
հայրենի առհմանաց զգէպսն գրէր, որպէս կանխեցաք նը-
շանակել, և տեղիքն յայնժամ յանուն Աղուանից աշ-

1 Աչապէս ինչ խնդառ խառնէ և Վարդան յետ վերոյգրեալ յի-
շատակութեան գրուածոց Վա-
նականայ և Կիրակոսի : Տես ի
նորին պատմութեան, էջ 147 :

խարհի կոչէին, զայս մասն պատմութեան զոր երկրորդ Հատած կոչէ (96), սկսանի համառօտութեամբ պատմութեան եկեղեցական և քաղաքական աթոռակալաց Աղուանից. յորմէ և ձև գրոցն Հաւաստի յերկուս տրոհիլ Հատածս. բայց զի 'ի սկզբան ոչ յիշէ զայդ և ոչ 'ի խորագրին էր նշանակեալ, և մեք ոչ իշխեցաք մեզէն վերակարգել կամ աստանօր տրոհել, այլ որպէս գրչագիրքն ունէին՝ զառաջին մասն անընդհատ առանց գլխակարգութեան չարայարեցաք. և երկրորդին սկիզբն ոչ 'ի նշանակեալ Հատածիդ եդաք, այլ ուստի գլխակարգութիւնքն սկսանէին, և ուր ինքնին խակ հեղինակն նորով յառաջաբանութեամբ ծանուցանէ՝ զի ոչ ևս զառ յայլոցն նախագրելոց Հաւաքածոյս՝ այլ զիւր խակ ականջալուրս և ականատես պատմել ունի այնուհետև։

Ժամանակ ձեռնարկութեան գործոյս լեալ է յամի 1241, որպէս երկիցս նշանակէ հեղինակն (39 և 151), այլ և զօր սկսանելոյ զգրուածն (5) որ է 19 մայիսի, զի յայնմ աւուր Հանդիպի տօն Հոգեգալստեան այնր ամի. և յայսց բանից ստուգի՝ 'ի նմին խակ ամի իբր յեօթնամսեայ ժամանակի գրեալ զբովանդակ պատմեալսն և զեղեալսն մինչև ցնոյն ցայն ամ, յորում և առ վայր մի դադարեցուցեալ թուի զգործն, և ապա մի ըստ միոջէ ըստ իրացն յամբոկ եղանելոյ՝ չարայարեալ ժամանակագրաբար զանցս քանն և Հնդից վերջնոց ամաց, 'ի 1241 ամէ ցամն 1265, յորում առարտ պատմութեան կամ գրոցս՝ առանց նշանակի վերջաբանութեան. կամ զի եղեալ էր 'ի մտի նշանակել և զոր յետ այնր դէպս՝ եթէ յերկարակեաց լինէր՝ և գտանէր պատեհ ժամանակի և Հանդուտեան, և կամ թէ և գրեաց ինչ աւարտաբանութիւն և չեհաս առ մեզ[1]։

Ա.յսոքիկ զկենաց և զգործոյ մատենագրին ըստ արտաքին կերպարանաց. յանդիման արտացուք Համառօտիւ և գեհութիւնս մեր զարժէից և զոճոյ գրուածոյն։ Ոչ ինչ

1 Ոմն յընդօրինակողաց պատմութեանն Թուղթ պատարիկ Թողուով 'ի վերջն ազգ առնէ. «Ով եղ» բարք, եօթն Թուղթս պարապ » Թողի, զի օրինակն չկայր. ապա » Թէ զօրինակն գտանիս՝ զպա» կան լցուցանիս. բայք ազէկ » Հաշուէս զի պարապար գայ և » Թուղթ պարապ չի Թողուս »։ Համարէր ուրեմն իբր եօթն Թըղթով պակասել, և Թուղթք նորա աւուղ ինչ փոքր են քան զմեր տըպագրիս։

երկբայիմ զի համօրէն քանասիրաց, մանաւանդ որ ժամանակիս բազմահոյզ որևարն է անցիցն անցելոց՝ ի հին և՝ ի միջին ժամանակս, ցանկալի և պիտանի իցէ երկրորդ հատածն պատմութեան Կիւրակոսի, և այնչափ առաւել, որչափ զի այժմ չունիմք՝ ի ձեռին ոչ զվանականի, ոչ զԳրիգորի ուրուքն երիցու, և ոչ զայլոյ մերազնէի կամ զծանօթից մերձաւորաց և ականատեսից ստուգաբան պատմութիւնս գործոց ազգին այնորիկ, որ յԺԳ դարու երևեցաւ յետ այլոցն՝ կերպարանափոխս առնել զքաղաքական կրօնս գրեաթէ բոլորումն Ասիոյ, յելից արևու՝ ի բացաճիգ ծովէն ձենաց՝ մինչև՝ ի ծովն արևմտից՝ ի Մէջերկրեայ: Եւ յայսմ թերևս կանխեցին քան զմեզ յառաջագէմքն յաւուրս նոցայն Եւրոպէացի քանասէրք՝ պատուադիր և օգտաշահ լինել, քաղելով՝ ի բանից պատմչիս ըստ իւրեանց պիտոյից և առաջարկեալ երկասիրութեանցն, մինչև գրեաթէ զողջոյն իսկ զերկրորդն Հատած թարգմանել հանդերձ ծանօթաբանութեամբ՝ ի փոանկ լեզու և հրատարակել տպագրութեամբ՝ ի Բարիզ՝ հայագիտին և լեզուիս մերոյ անդ այժմ վարժապետի՝ տեառն Եդուարդայ Տիւլորիէ [1], և յառաջ քան զնա մասամբ Մ. Պրոսէ: Ընդ պատմութեանն նշանաւոր և պատուական է յաչս լեզուաքննաց հաւաքումն մոզոլ բառից (էջ 149): Իսկ մեզ ընդ նոցին պիտանի են և որ լինչ այլ զկողմանց արևելից կամ զԱղուանից Հայոց պատմէ ականատես գոլով, զդէպս մեծի կիսոյ ԺԳ դարու, և զկրօնական լինչ յիշատակս, որպէս խնդիրն բղխման Հոգւոյն Սրբոյ, և որ առակս այնր գեղեցիկ դաւանութիւնք վանականի և այլոց, Թուղթն կանոնական Կոստանդեայ կաթողիկոսի, այլովք հանդերձ. որք ընծայեն մեզ փառաս կարևորս՝ ի դիտութիւն և՝ ի հիւսուած եկեղեցականս պատմութեան: Եւ այսոքիկ գարձեալ պատուականագոյնք ևս ընծային՝ արժանահաւատ և ստուգապատում ցուցանելով զդրիչն՝ յիւրոց իսկ բանից և՝ ի վկայութենէ ուսումնակցին:

Սակայն ոչ կարեմ զայս այսպէս հաւատալ և ասել զերկարժամանակեայ պատմելոցն յառաջնում հատածին, յորում բազում ուրեք թերացեալ երևի հեղինակս՝ ի քաջագատութենէ, և դիւրահաւան, մանաւանդ յիրս հրա-

1 Les Mongols d'après les historiens arméniens. Premier fascicule. Extraits de Guiragos. Paris, Imprimerie imperiale, 1858:

չալևայ՝ որք ուրևք հրէշաւորս անգամ կերպարանին . և ոչ սակաւ ուրևք մատն լինին տարապայման աղգանախանձութեանն , եթէ ներհայի ինձ ձայնդ , որպէս 'ի պատմեալսն գՅովհաննէ Գառնեցւոյ : Այնու ոգւով և մեծամեծս կոտորէ 'ի ջատագովութիւն իւրայոցն՝ ըստ կարծելոյ յաջողելն նմա բաղդին կամ առթին : Ապաշաւանայ և է զի սովին մոլութեամբ զառանցեալ զոյգ ընդ կանխակալս ասանդութեան՝ բաղում ուրևք մարտնչի ընդ ճշմարտութեան , մերթ ընդհարկանելով ընդ Ցոյնս (որպէս յէջ 53 , 57 , 70 և այլն) և մերթ ընդ իւրան իսկ յանղգաստից . մինչև զբերոյ և զմեծոգւոյ առն Ներսէսի Լամբրոնացւոյ հաւատալ կեղծաւորութեան բասրելի (76) . և յաճախագոյն և ընդ հաւանողս տիեզերական ժողովոյն Քաղկեդոնի , զրեաթէ 'ի սովորականն իւրոցն համախոհից անկեալ յերկբանութիւն , զժողովն երգիծանելով և զհաւատս ժողովոյն այլոյր պանծանօք հռչակելով , որպէս յերկարաբան դասանութեանն (էջ 187–192) թէ իւր իցէ յօրինածն և թէ այլոյ վարդապետի , զի յօժար հաւանութեամբ ընդունի , որպէս և զբղխումն Ս . Հոգւոյն 'ի Հօրէ և յՈրդւոյ , նաղաբանելով իսկ թէ «ընդունելի է յեկեղեցիս Հայաստանեայց և յոգիս Կիւրակոսի » :

Այնուհանդերձ այսոքիւք և քննողական ընտրութեամբն ըստորև գտանի[1] քան զուսումնակիցն իւր Վարդան , և նըւազեալ 'ի հետամտութենէ նորին 'ի գիրս և 'ի բաղդատութիւն բանից պատմչաց . յորոց է զի և զսխալ առեալ գրէ , որպէս 'ի պատմութեան Գրիգորի Վկայասիրի (55) : Այլ և յոճ բանից լեզուին և խմաստից նուաստագոյն է . զի ոչ նրբութիւն և ազդուութիւն է չարաբանութեանն , և ոչ իմաստից վսեմութիւն կամ յանկարծական ինչ սլացք և զեղչիկ առածք , որպէս է հանդիպել առ միւսոյն : Թէպէտ ունել ունի և անպաճոյճ հարթութիւն և պարզութիւն պատմածոյն գիւր յարդ , յստակութեամբն և անկնճիռն բացայայտութեամբն , միանգամայն և հեռի գոլով 'ի հետևակութենէ յետնոցն քան զինքն պատմագրաց :

Արժան է աստանօր յաւելուլ յիրաւունս Կիրակոսի և զհանգամանս գաղափարաց զրոց պատմութեանն՝ի մեր ձեռս

1 Թէ ոչ թեթևամտութեանն այլ և ոչ կարի նրբութեան՝ 'ի ձահ դիւացն և 'ի յատաջաբանին զիա- տաւորել զանուն իւր յօդել· դուչ է զի անմոռաց ունացեալ այն 'ի չժամանելն առ վերջաբանն :

հասելոց, որք երեք միայն էին, և ոչ միւն՝ի նոցանէ հին կամ զգաստ գրչութիւն, որպիսիք էին առ մեզ օրինակքն վարդանայ պատմութեանն, այլ սոքա նօտրագիրք ժէ դարու, բազմասխալք և թերաբանք. վասն որոյ հարկ համարեցաք ուրեք թողուլ որպէս և էրն և ուրեք ուղղել գլայտնի վրիպակս՝ որպէս անկն էր լինել, և զթերի բառն յաւելուլ նօտրացի դրոշմելով, կամ՝ ի փակագծի ամփոփելով զթերին՝ զոր առաք՝ի Դ օրինակէ. և է սա անսեթևեթ տպագիրն փոքրագիր յՈսկանայ տէր Գրիգորեան Յովհաննէսեանց, ընծայեալ՝ի լոյս յամի 1858 ի Մոսկուա[1] առանց ինչ բնաւ ծանօթութեան զսկզբնագիր գրոցն. որով՝ թէպէտ և բազում ուրեք ընտիր քան զմերսն երևեցաւ նորա օրինակն, այլ ոչ կարացաք համօրէն վստահ լինել, ոչ գիտելով զչափ հաւատարմութեանն կամ զուղղագրութեան զոր արժանն իցէ համարեալ վարել յիւրում տպագրին. վասն որոյ և ուրեք՝ի ստորև՝ի լուսանցս գրոցս նշանակեցաք զտարաձայնութիւն սորա՝ի մերոցս, որպէս և զմերոց օրինակաց՝ի նորայոյն, կամ զսխալ սոցա. նշանակելով որպէս՝ի վարդանայ պատմութեանն, 00, և իմանալով զաժենայն օրինակսն, իսկ զմին և զերկուս՝ յանուանէ նշանակելով Ա. կամ Բ կամ Գ. 0։

Իսկ՝ի բացայայտութիւն կամ յիմացուած և յորոշումն բանիցն պատմելոյ կամ յուղղութիւն՝ յաւելաք ծանօթութիւնս՝ ոչ յաճախս և երկարս, այլ և բազում ուրեք հրաւիրեցաք զընթերցօղն՝ի պատմագիրս վարդանայ, նշանակելով զէջս նորին գրոց[2], զտպագրեալն առ՝ի մէնչ երկեսեան յառաջ (1862). քանզի բազում ինչ զնոյն մի գործ և զդէպ՝ պատմեն երկոքին սոքա, և մեզ ծանր թուեցաւ կրկնել զնոյն և նման բան՝ յետ առաջնոյն և յերկրորդումն յայսմիկ մատենի պատմութեան. ակն ունելով թէ և ընթերցասէրք գրոցս Կիրակոսի՝ ոչ անախորժք գտցին և վարդանայ, նա և կանխաւ զնոյն առ ձեռն ունիցին, գուցէ թէ և՝ի մի տուփ կազմեալ ամփոփիցին երկոքին մատեանքս, որպէս գտանին զուգահաւաք՝ի գրչագիրս։ Եւ եթէ դէպ

1 Խորագիր տպագրին է. Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ. ՚ի լոյս ընծայեաց Ոսկան Տէր-Գրիգորեան Յովհաննիսեանց Ե. րևանցի. ՚ի Մոսկուա, ՚ի տպարանի արևելեան լեզուաց ձեռնարանի առաջնոյ։

2 Դնելով Վ. (Վարդան) և առնմին զթիւ իջին։

և լինիցի և յետ այսորիկ զայլ պատմիչ մերձաւոր և գնոյ-
նաբան՝ ի լոյս ընծայել՝ համարձակիմք աստանին ծանուցա-
նել թէ այսու օրինակաւ և՝ ի նոսին վարեսցուք, առ՝ ի կար-
ճել զյաճախութիւն կամ զերկրորդումն բանից։ Մանա-
ւանդ զի և ոչ օրինակագիր և ճարտասրահիւս սրանց են
բանք ցանկալիք և ներկուռք, յորս ախորժ է մտաց ինքնա-
բեր զեզերումն և ներումն. իսկ՝ ի սոսին, սահպիմք խոս-
տովանել և զայս, զի բազում անգամ տագտուկ և զզուանս
զայ մեզ ժամավաճառն իսկ լինել՝ ի քննութիւն և յընդ-
րութիւն անոճ և անյաջ բանից և բաղադրից, որքան և սի-
րողք իցեմք տոհմային պատմութեան և պատմչի. որոց սի-
րոզացն մեզ նմանեսց՝ ընծայեմք աւադիկ որպիսի ինչ են
սոքա. զաւելին կամ զնուազ վարկի Թողեալ՝ ի կամս և՝ ի
ճաշակ նոցին ընթերցանելեաց, որպէս և զմեր բանքս։

Դարձ առնելով մերսանգամ՝ ի հեղինակ մատենիս, զի
չկամիմք լռել որ ինչ զնմանէն, հարկ է համարել զնա, ըստ
իւրոց ինչ բանից, հմուտ կամ զիտակ Թուրք կամ պարսիկ
լեզուի, կամ թէ և նորամուտ Թաթար բարբառոյն, յոր
տակս և փոխանակ զրագրի և Թարգմանի կալեալ պահէին
զնա՝ ի գերեզն ընդ վ անականայ վարդապետին իւրոյ (132).
քանզի՝ ի Գանձակայ գոլով ծննդեամբ և քաղաքին՝ ի դա-
րուց հետէ անկեալ ընդ արաբացի և պարսիկ իշխանօք՝ լե-
զու նոցին հասարակեալ էր՝ ի նմին։ Իսկ զայլոց հմտու-
թեանց նորին չունիմք հաւաստիս առ ձեռն, չունելով իսկ
զնորա զայլ գրաւոր վաստակ, որպէս կանխեցաքս ասել.
այլ յաւելցուք աստանօր զկարծեցեալսն ինչ կամ զոչ հե-
ռիս՝ ի կարծեաց. յորս միակ նորուն իսկ անուամբ յիշա-
տակեալ է համառօտ պատմութիւնն այն վարուց կամ տես-
լեան Մխիթարայ Գոշի, որ գտաւ՝ ի գիրս մի Յայսմաւուրաց
՝ի Սևան կղզւոջ, և՝ ի բանասիրէ ուժեմն վարդապետէ [1]
ընդօրինակեալ հասուցաւ մեզ. և որոյ սկիզբն էր ԺՍ.
գլուխ Բ Հատածի պատմագրութեանս (106), ապա Միւռե
այն պատմութիւն սրանչելի վարդապետին Մխիթարայ, զոր և
արարաք Յաւելուած գրոցս. ի վերջաբանին ընթեռնուս զգ-
պատճառս և զանուն հեղինակիս, որ և զոյգ պատմելեացն
յօդուածոյ Թուի, գէթ ըստ մասին. զի որպէս ցուցաք՝ ի

1 Պօղոս վարդապետ Պետրոսեան։

սկզբանն՝ չէր մարթ Կիրակոսի պատանեկի ականատես և ականջալուր լինել այնց իրաց, և ոչ աշակերտել վարդապետի իւրումն վարդապետի. այլ և ծաղրագոյն պատճառ Գոչ կոչման Մխիթարայ անհամաճայն գոռանի պատմելոցն՝ ի մերոյս յայսմ իսկ պատմութեան մատենի (114–8). ապա այլոց ուրուք գրեալ և վերագրեալ է զայդ յանուն Պատմագրիս, խառնելով՝ ի նորա գրածան. զոր մեք՝ ի զբօսանս բանասիրաց և յանկորուստ մնացուած աւանդական պրուցայ՝ հաճեցաք չտեմարանել յամբարս տպագրութեան, ախորժելով և ընդ տեղագրական ինչ ծանօթս սահմանաց Գետիկայ և Ձագոսիկին գեղջ, զորմէ տեսցես՝ ի կարգին։

Միւս գրուած մեծ և կարևոր են Յայսմաւուրքն Կիւրակոսի Արևելցոյ, որ ոչ լոկով անուամբն և հայրենեացն կոչմամբ մերձաւոր գոռանի մերումս, այլ գոգչիր և կենացն ժամանակաւ. զի յօրինեալ է դորա զգիրս Յայսմաւուրացդ յամի 1269 և՝ ի վաթսներորդի վեցերորդի ամի կենաց իւրոց. այլ՝ ի Սիս քաղաքի Թագաւորութեան Կիւլիկեցւոց։ Եւ զի ոչ այլ ոք՝ և ոչ մեք ասեմք Գանձակեցւոյն[1] զգործս գայս. այլ առ հանդիպակցութեան անուանն և ժամանակին և աշխարհին՝ ոչ խղճեցաք յիշումն առնել առ տեղեաւս. մինչև ասպագայն ցուցցէ մեզ առուգիւ զվարս Արևելցոյդ յորոյ անուն գոռանին և բանք խրատականք և թուղթք. և յոմանց չփոթմամբ նոյն կարծին ընդ այլոց և Կիւրակոսի Երզնկացւոյ՝ յետնագունի հարուստ ժամանակաւ։

1 Մանաւանդ զի ոչ բազում ամօք յառաջ քան զժամանակ երկասիրութեանն Արևելցոյդ՝ մեծն վանական՝ վարդապետան Կիրակոսի, շարժեալ՝ ի խնդրոյ Զալալ-դօլայ իշխանի Խաչենոյ՝ պատուիրեալ էր առնուն Խրայելի ուխտին, և սորա արարեալ զգիրսն Յայսմաւուրցս. ապա անդէպ էր մերոյս Կիրակոսի Գանձակեցւոյ զնոյն գիրս յօրինել։

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ ԺԱՄԱՆԱԿԱՑ

Ի ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԷ ՄԻՆՉԵՒ Ի ՑԵՏԻՆ ԱԽՈՒՐՍ ԹՈՒԱՑԵԱԼ

Կիրք՝ որ ՚ի բնութեան մարդկան յայտնի, հաստատեալ է խնամօք յարարչէն, քննասէր լինել իրաց ինչ անցելոց կամ հանդերձեալն լինելոց.

Թէպէտ այսմ ոչ է հնար այլազգ հատու լինել կամ իմանալ, բայց թէ բազում աշխատութեամբ և յերկար ջանիւ,

Ուխծիլ և մաշիլ տաժանմամբ և յոյժ վաստակօք. զի թերևս գտցէ ինչ պիտանացու՝ որ կարողն իցէ ընդ զփափագս ինչ խնդրողին ըղձից.

Պաբունաբար երկօք և ոչ վարկպարազի անցանել[1] ընդ պատմութիւնս ժամանակաց ներքնոց և արտաքնոցն.

Ընդհարկելով և ազդեցութեան չոգւոյն, որ կարողն է իմաստնացուցանել զտգէտս և բանաւոր առնել զանբանս[2]:

Կարող և ձեռնհաս գնա հաւատալ, առանց երկմտութեան և թերութեան.

Սրով և ամենայն ինչ ըստ կամաց նորա յօրինի և կազմի, երևոյթքս և աներևոյթքն:

Սրբապէս մտօք և անաչառութեամբ մատուցանել զունկն՝ վերին և ներքին աստուածայնոցն բանից և գրոց

1 ՕՕ. անցուցանել:

2 Ա. Գ. գբանս:

պատմութեանց, որք կարող են հասուցանել զխընդրողն խնդրելոյն։

Վասնզի և այս օրէնք աստուածայինք են, ցուցանել հարց որդւոց՝ զի ծանիցեն յազգ այլ, որպէս մարգարէն Դաւիթ հրամայէ. զի յայս խրատեր մեծն ի մարգարէս Մովսէս զորդիսն Իսրայելի՝ խրատեր և ասեր. Ուսուցից ի սոսա ի տուէ և ի գիշերի, ի նստել ի տան և ի գնալ ի Ճանապարհ, ի ննջել և ի յառնել։ Եւ յայսոսիկ որք յօժանդակ են և ձեռն տան՝ յոլովք են աստուածայնոց արանց, որք կենդանի արձան թողին զգիրսն յետ իւրեանց, յամենայն ազգաց։ Որպէս մեծն Եւսեբոս զերկուս գիրսն եթող, զԸրոշնիկոնն սկսեալ ի նախնոյն Ադամայ, զիւժական անուանս նահապետացն՝ զոր գրեցին արտաքինքն, համեմատելով ընդ աստուածայնոց արանց պատմութիւնս. և բերեալ հասուցանէ մինչև ի գալուստն Քրիստոսի և այսր ըզյոլովից ազգաց նահապետս և զթագաւորս։ Եւ զնկեղեցւոյ պատմութիւնս, սկսեալ ի ծագմանէ արեգականն արդարութեան, զժամանակս թագաւորաց և զառաքելոց սրբոց քարոզութիւն, և թէ ո՞ի նոցանէ զինչ գործեաց, և թէ յո՞ր կողմն չոգաւ իւրաքանչիւր ոք, և կամ թէ ո՞րպէս վկայեցին, և զեպիսկոպոսաց սրբոց և զերևելի արանց զգործ և զքաջութիւն, և բերեալ հասուցանէ մինչև յաւուրս մեծին Կոստանդիանոսի բարեպաշտի, և անդ դադարէ։

Եւ ապա մեծիմաստն Սոկրատէս կորովի բանիւք, սկսեալ ի սրբոյն Սեղբեստրոսէ Հռոմայ հայրապետէ և ի Կոստանդիանոսէ, և ածէ մինչև յաւուրս Թէոդոսիոս փոքու, զարարածս և զգործս իւրաքանչիւր Թագաւորաց, և զեպիսկոպոսաց՝ զառաքինեաց և զվատԹարաց, և զժողովելոց[1] բազմաց եղելոց, պիտանեաց և խոտանեաց, ընդարձակ և յաձախ պատմութեամբ աւարտէ։

Իսկ Հայոց ազգիս պատմագիրք յոլովք ցուցին աշխատութիւնս, որպէս սքանչելի և կորովամիտն ԱգաԹանգեղոս, որ Թարգմանի Խարի–Հրեշտակ. զոր եղեալ հրամանաւ մեծազօր և քաջ արքային Տրդատայ զհան-

1 Ա. յոպէս յ'ՕՕ։

զամենս իրաց եղելոց առ Հայս ի ձեռն սրբոյն Գրիգորի պարթևի և խոստովանողին Քրիստոսի, զգործն նշանաց և արուեստից և զաքանչելագործութեանց և զպատճառ լուսաւորութեան ազգիս Հայոց գեղեցիկ և պայծառ պատմութեամբ աւարտէ։

Եւ զկնի նորա ամենահարուստն գիտութեամբ և մեծն իմաստութեամբ քան զյոլովս՝ սուրբ այրն Աստուծոյ Մովսէս Խորենացի, որ զՀայոց պատմութիւն շարադրեաց բազմահանճար և յոգնադրուստ բառիւք, և համառօտ պատմութեամբ և ընդարձակ մտօք ի նախնի մարդոյն սկսեալ զյոլովից ազանց իրս և զգործս և զարարս՝ բերեալ մինչև յաւուրս Տրդատայ և սրբոյն Գրիգորի, և անտի մինչև ցկատարումն սրբոյն Սահակայ Հայոց հայրապետին, և զողբս ասացեալ ի վերայ աշխարհին Հայոց՝ անդադար դադարեցուցանէ։

Եւ յետ նորա՝ սուրբն Ագաթէ, որ պատմէ զքաջութիւն Արդանայ Թոռին սրբոյն Սահակայ և ընկերացեալ նորին, որք յաւուրսն Քրիստոսի զանձինս ի մահ եդին և պսակեցան ի Քրիստոսէ, և զարիական մահս սրբոց Յովսեփեանց, և զկամաւ տալ զանձինս ի կապանս արքունի նախարարացն Հայոց վասն յուսոյն որ ի Քրիստոս. և զհամբերող նահատակութիւն սրբոցն Խորենայ և Ալբրահամու, զոր ստուգութեամբ ցուցանէ այրն Աստուծոյ աքանչելի։

Եւ ապա Ղազար Փարպեցի Ճարտասան, սկսեալ յաւուրցն սրբոյն Սահակայ, և զնոյն ոճ պատմէ։ Եւ զկնի նորա Փաւստոս Բիւզանդ, որ զերեալ իրս պատմէ Հայոց աշխարհիս ընդ Պարսիկս և ի նոցանէ ի մերս. և Հերակլ ի Սեբէոսէ եպիսկոպոսէ ասացեալ[1]. և պատմութիւն առն աքանչելի Կորեան. և Խոսրով, և Ղևոնդ Արծրունւոյ պատմութիւնն՝ որ զոր ինչ գործեցին Մահմէտ և աթոռակալք նորա ընդ աշխարհս ամենայն, և առաւել ևս ընդ ազգս Հայոց. և Մովսէս վարդապետ տանն Գնծրունեաց. և Ճ ապուհ Բագրատունի. և տէր Յովհաննէս կաթուղիկոսն Հայոց. և Մովսէս

1 Այսինքն է Պատմութիւն արշաւանաց Հերակլի կայսեր ի Պարս, զոր գրեաց Սեբէոս եպիսկոպոս։

Կաղկանդուացի Աղուանից պատմագիր [1]. և Աւետանէս եպիսկոպոս Ասողիկ վարդապետ. և Յատենագոս մականուն Ասողիկ վարդապետ. և Դաստակէս վարդապետ կոչեցեալն Աստխլերցի. և Յատենէոս վանաց երէց Ասողկայ. և Յամուէլ անուն քահանայ կաթուղիկկին Գնունց. և ապա մեծ և հանճարեղ վարդապետ անուանեալն Ասնական։

Որոց փոյթ եղև սոցա իւրաքանչիւր սրբոցս՝ գրով թողուլ յիշատակս բարւոյ գլխի եկեղցոյ, յօգուտ ըստ ղայն և ի վարձատրութիւն նոցին սրբոց, անջինջ լինել յիշատակ մինչև ի յօրն Քրիստոսի։ Նակ մերս ձեռնարկութիւն մի ումեք յանդգնութիւն համարեսցի, այլ առաւել բարեացն նախանձոյ գործ. զի հարկանեն զմեզ միտք մեր ոչ տալ լռութեան այսպիսի աղէտ տարակուսանացն, զոր լուաք ականջօք մերովք, և տեսաք զի ի գլուխ ելին ամենայն սրբոց մարգարէութիւնք՝ որ յառաջագոյն գուշակեցին վասն նեղութեանցն, որ հանդերձեալ էր լինել, և առ մեզ գործովք կատարեցաւ. զոր և ասաց փրկիչն մեր և Աստուած տէր Յիսուս Քրիստոս, եթէ Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ. և այն ասէ սկիզբն ե երկանց. յայտնութիւն որդւոյն կորստեան։ Զոր երկնչիմք՝ մի գուցէ երևեսցի նա ի մերում ժամանակիս, զի գործք ամենայն որ գործին այժմ՝ զնոյն նշանակեն. սէր ցամաքեալ, անգթութիւն տիրեալ, աստուածպաշտութիւն նուազեալ, և անհաւատութիւնք բարձրացեալ, սեղանք և պատարագք լռեալք, քահանայք անողորմ ի սուր արկեալք, կանայք և մանկունք գերեալք, և արք դառնամահք լեալ։ Զի զոր գուշակեաց այրն Աստուծոյ սուրբն Գերսէս վասն ազգին Գետողաց [2] և աւերման աշխարհիս Հայոց, այժմ կատարեցաւ յազգէն որ Վրաց կոչի. զի բազում ազգ և ազինս ջնջեաց սա. զոր և յիւրում տեղւոջն պատմեսցուք, եթէ տէր կամեսցի։

1 Մովսէս Կաղանկատուացի (զի Կաղանկատուք կոչի Հայրենի նորա աւանն) Հաւանօրէն յ'ԺԴ դարու եկեաց։ Բայց զպատմութիւն Աղուանից շարակարդեցին այլք յետ նորա։

2 Որ են այժմու Թաթարք։

Բայց իւրաքանչիւր ոք յառաջին աշխատասիրեայն է, պիտ տեղւի ինչ բուռն հարկանելոյ, կամ Թագաւոր է, րևելւի, կամ նահապետութիւնք ազգացն յայտնի. իսկ մերս յայսմ ամենայնէ Թափուր եղեալ. զի Թագաւորութիւնն վազ ուրեմն բարձեալ, Ասորւոցն և Յունաց գլատունին, և իշխանք ոչ ուրեք երևեալ հայկազնի. բայց Թէ ուրեք ուրեք զօրեալք յօտար աշխարհի: Բայց միայն մերոյս եղեալ առաջի զաւուրս ընդհ, և զևսորհրդոյս զօրութիւն, զի յայսմ աւուրս յորում ձեռնարկեցաք 'ի սմայ՝ տօն էր գալստեան ամենասուրբ Հոգւոյն 'ի վերնատունն 'ի դասս առաքելոց հրեղէն լեզուօք, հրաշազարդեալ զնոսա ընդ տիեզերս առաքեաց՝ կոչել զամենեսեան ուղղանաւ աւետարանին 'ի կեանս անմահականս: Այս մեք 'ի նոյն Հոգին վստահ եղեալ արկաք զանձինս յաշխատութիւնս՝ որ 'ի վեր ևս քան զկար մեր: Այլ ասն որոյ աղաչեմք զկնի եկեալսդ, ոչ աղարտել զաշխատութիւնս մեր որպէս անուսումնք, և խնջել քթօք և յունօք պռատել. այլ զինջանել եղբայրաբար, և ձեզ՝ Թողուլ յիշատակ ապագայից. զի Հրիտոսի աշակերտացն ամենայն ինչ հաւանութեամբ է, որպէս ուսանիմք 'ի գրոց: Այլ մեք բուռն հարցուք զինչս զոր սկսաք և ցուցաք. նախ զանուանս աԹոռակալացն սրբոյն Գրիգորի, 'ի նմանէ սկսեալ մինչև առ մեզ սուղ ինչ համառօտիւք. զի լիցի սա մեզ արձան գերեզմանի, ոչ ըստ նմանութեան Աբիսողոմ սրբոյն [1], այլ կենդանի, զի յիշեսցի 'ի սմա անուն Պետրոսի:

1 Ա. Գ. Աբիսողոման սրբին: Տըպագիրն աբիսողոմեան փոքին: — Հեղինակն ակնարկէ յանձնախ յորձանն՝ զոր կանգնեաց Աբեսաղոմ յիւր անուն 'ի Հովիտս Թագաւորաց: Բ Թագ. ԺԸ. 18:

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՒ ՅՈՑՑՔ ԱՆՈՒԱՆ ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ

ՆԻ

ՈՐՔ ՑԵՏ ՆՈՐԱ ՅԱՋՈՐԴԵՑԻՆ [1]

Ամենայն գովեստից արժանի և յիշատակաւ բարեաւ հռչակեալն հայրն մեր հոգևոր և ըստ աւետարանին ծնօղ սուրբն Գրիգորիոս՝ յետ լուսաւորելոյ նորա զՀայաստան աշխարհս աստուածգիտութեամբ, և ձեռնադրելոյ եպիսկոպոս աւելի քան զչորեքհարիւր և երեսուն, գնաց եղև նմա ընդ մեծի արքային Տրդատայ ՚ի Հռոմ՝ ՚ի տեսութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և մեծ Թագաւորին Կոստանդիանոսի և սուրբ Հայրապետին Սեղբեստրոսի, գնել ուխտս և դաշինս ՚ի մէջ իւրեանց։ Եւ ընկալեալ մեծաւ պատուով Կոստանդիանոսէ և մեծ հայրապետն աշխարհամուտ դրան՝ մեծարանս արարեալ սրբոյն Գրիգորի, որպէս խոստովանողի և առաքելաշնորհ վկայի Քրիստոսի, տան նմա աթոռ հայրապետութեան որպէս աթոռակալի Պետրոսի [2]. տան և մասն ինչ ՚ի նշխարաց առաքելոցն, և զահեակ ձեռն Ընդրկի առաքելոյն, և այլ ընծայս բազումս, և յԱրուսաղէմ զտեղի խաչելու-

1 Ա. Գ. առաջնորդեցին։

2 Աթոռակալ Բարդողիմէոս առաքելակցին Պետրոսի։

Թեանն Քրիստոսի ըստ մարմնոյ, և զսուրբ Յակոբն, և տեղի մի պատարագի՝ ի նմանս սուրբ Յարութեանն. և ասեն կախեաց կանթեղ մի սուրբ Աստուածոյ ի վերայ գերեզմանին Քրիստոսի. և խնդրեաց յԱստուծոյ առնել հրաշս, առանց ղգալի լուսոյ լուցանիլ ի սուրբ Պատարագի տօնին, որ լինի մինչև ցայսօր նշանն [1]: Նոյնպէս և զմեծն Տրդատ մեծարեալ որպէս վայել էր նորա քահանայութեանն, արեամբն Քրիստոսի [2] և հաւատովն որ ի նա՝ դաշինս կռեալ անքակ ունել զսէրն ի մէջ երկուց ազգացս յետ նոցա: Նմարոյ Կոստանդիանոս զմեծն Աստուածասէր. Ընդքան ուրախութիւն է առաջի հրեշտակաց ի գիւտ այսքան մոլորեալ ոչխարացն: Նա պատասխանի ետ, Այժ. բայց մի ոչխար համարին ադամայինքս առ վերնոց բազմութիւնս: Նա կայսրն ասէ. Նա փըրկեալքս մի վերջացուք հանդիսանալ ընդ նոսա յեկաւորիդ ձեր: Նա հրամայեաց ամենայն քաղաքին խրախճանալ զենմամբ խաչանց. և հրեայք և հեթանոսք որք մնացեալ էին յանհաւատութեանն՝ լուանային յօրհնութեան աղէն. սուրբն Աստուածասէր և Առաքեալոտոս աղօրհնեցին: Նա ասէ սուրբն Աստուածասէր ցհրեայսն. Զի զթափատութիւնն անթափատ արարիք հակառակ օրինացն. և ասէ, անասնոցն՝ որք մատչին պատարագ Աստուածոյ, և կամ նուէր սրբոց կամ յիշատակ ննջեցելոց՝ առանց օրհնութեան աղի իբրև զզոհ հեթանոսաց է:

Նա ապա եկեալ յաշխարհս մեր հոգևոր ցնծութեամբ և մեծաւ ուրախութեամբ յոգնապէս զարդարեին զաշխարհս մեր ամենայն քրիստոնէական կարգօք: Նա ի կենդանութեան իւրում ձեռնադրեաց զորդի իւր զսուրբն Ագրիպպէս եպիսկոպոսապետ Հայոց և Պարթևաց և Վրաց. և ինքն բուռն հարեալ զմիայնակեցութեան, զի ամենայնիւ պսակեցի առաքելական նաւ՝ հայրապետականաւ և միայնաւորականաւ, առաւել ընտանեցուցանէր զմարդն Աստուածոյ անդադար պատրաստ: Նա յորժամ եկն Ագրիպպէս ի ժողովն Ան-

1 Եւ զայս իրս անշուշտ ասէն որք ասէնն:

2 Որպէս թէ ի բաժակ սուրբ խորհրդոյն Թաթաւեալ և գրեալ էին գաշինքն, ըստ աւանդելոյ այլոց և մեծաբանից, որպիսի և հետևեալ բանքդ էն:

կիսայ, այնուհետև սուրբն Կղիմոր այլ ոչ ումեք երևեցաւ. կեցեալ ժամանակս յոլովս՝ հանգեաւ ի Կրիստոս, կալեալ զհայրապետութիւնն ամս երեսուն։ Եւ դաեալ զնա հովուացն վաղճանեալ՝ կարկառ քարի կուսեցին ի վերայ նորա. և յետոյ ազդեցութեամբ սուրբ Յոգւոյն ամն Կառնիկ այր Աղնաւոր և սուրբ տարեալ հանգուցին ի Քորթան։ Եւ յաւուրս Օենանի կայսերն տարան ի նշխարաց նորա և ի սրբոյն Յուխիսթեանցն ի Կոստանդինուպօլիս [1]. և արարեալ տապան արծաթի՝ եդին ի նմա զնշխարս սրբոյն. դրելով զնուրբաքանչիւր զանուանս ի վերայ, և եդին ի վերայ մարմարեայ տապանի, և ինքեցին մատանեաւ, և եկաց ժամանակս յոլովս անյայտս՝ ոչ գիտելով այր ուրեք է. բայց զայս միայն՝ Թէ սրբոց է։ Ետ կայսերս Կասլն կայսեր և Աշոտի Նագրատունւոյ Յայոց Թագաւորի յայտնի եղև այսպէս։ Պատանի մի ըմբռնեալ յոգւոյ չարէ մինչդեռ յաղօթս էր ի նմին եկեղեցւոջ՝ ուր կայրին նշխարքն սրբոց, վերայուցեալ դիւին զպատանին ընկէց ի վերայ սրբոցն, աղաղակեր և ասէր. Սուրբդ Կրիգոր լուսաւորիչ Յայոց՝ մի տանջեր զիս. և դու տիկին Յուխիսիմէ եկիր տանջել զիս. և դու Կայիանէ տանջես զիս։ Եւ զայս աղաղակեր ի բազումժամն. և լուեալ զայս բազմութեանն ազդեցին Թագաւորին. և հրամայեաց բանալ զտապանն. և իբրև բացին, լցաւ սաստիկ փայլատակեաց ի նշխարաց սրբոց։ Եւ հրամայեաց կայսրն զմարմարիոնեայ տապանն ոսկւով պատել և գրել զանուանս սրբոցն ի վերայ, զի ամենայն ոք գիտասցէ Թէ նոքա՛ էր տապանն։ Զայս ամենայն եկեալ նեղբինէ մի պատմեաց Թագաւորին Աշոտի. և նորա լուեալ եհան փառս Աստուծոյ, և կարգեցին զօրն զայն տօն սրբոցն Կրիգորի, որ ի վեցերորդ շաբաթու աղուհացին շաբաթի օրն կատարի, մինչև ցայսօր [2]։

Իսկ սուրբն Ագիսթակէս բարիոք հովուեր զհօտն որ հաւատացաւ նմա. և յանդիմաներ անաչառութեամբ զոչ եկեալսն յուղղութիւն։ Ոմն որոյ Աբքեղայոս անուն որ էր վերակացու կարգեալ Ողրոցդն կոչեցեալ Յայոց, յանդիմանեալ ի նմանէ վասն չար գործոց իւ-

1 Վ. 41։ 2 Վ. 85։

րոց՝ պատահեալ նմա ի Հռոմից գաւառին սպան զնա. և ինքն երկուցեալ ի Տրդատայ արքայէ՝ գնաց փախըստական ի Տարսոն Կիլիկեցւոց։ Օ՜ւ ետճն ամ կալեալ զեպիսկոպոսութիւն՝ մարտիրոսական մահուամբ փոխեցաւ ի Քրիստոս։ Եւ կացոյց փոխանակ ի հայրապետութեան աթոռ Տրդատ արքայն զերկեց որդին սրբոյն Գրիգորի՝ զմեծն Ա՛րիստակէս, զեղբայր սրբոյն Ա՛րիստակիսի։

Եւ ինքն սիրեաց զվարս միայնակեցութեան որպէս զսքէն Գրիգոր. այնուհետև ընդ ժամանակս ժամանակս անյայտս լինէր ի զօրաց իւրոց, քառասնօրեայ ժամանակս ձգեալ պահօք և աղօթիւք. և երթեալ զօրաց նորա ունել զթագաւորութիւն աղաչէին զնա։ Իսկ նա ոչ հաւանէր ասելով տիրանենդ զնոսա, և առ աչս մարդկան ունել զաստուածպաշտութիւն։ Եւ նոքա երդմունս արարեալ և մուրհակս կնքեալ սրբութեամբ ունել զքրիստոնէութիւն և միամտութեամբ ծառայել նմա, և նորա հաւանեալ կամաց նոցա գառնոյ յանձն իւր, և ամենայն կարգաց և առաքինութեան ինքն լինէր օրինակ։ Իսկ նոքա տաղտկացեալք ի քարեպաշտութենէ նորա խորհեցան նենգութեամբ սպանանել զնա յորս՝ զբօսանաց աղագաւ. Հարեալ նետիւ խոցեն զնա իբրև անդիտութեամբ. և տեսեալ թէ ոչ մեռանի յայնմանէ, տան նմա դեղ մահու. և այսպէս լուծին զնա ի կենցաղոյս, զայն որ Քրիստոսի ոչ կարացին սպանանել զնա։ Ալ հսկայաբար յաղթէր ամենայն հինամեաց, որ անհնարին համարեալ ուժով, որ համբաւ քաջութեան նորա ելեալ էր ընդ ամենայն տիեզերս, զնա սպանին նենգութեամբ, և անձանց իւրեանց շինջուցին զբազմալոյս Լահն. այնպէս հանգեաւ քարեպաշտ և աստուածասէրն Տրդատիոս կալեալ զթագաւորութիւնն ամս չխուն և վեց։

Իսկ մեծն Ա՛րիստակէս երթեալ առ Կոստանդին կայսրն՝ թագաւորեցուցանել զՅոսրով զորդի քաջին և առաքինւոյն Տրդատայ, զոր և արար իսկ. զօրս բազում տուեալ յօգնականութիւն նմա, ընդդէմ կալ պատերազմաց Պարսից արքային Շ՛ապհոյ։ Նայց Աանատրուկ որ[1] Ա՛ղուանից վերակացու կարգեալ էր ի

1 ՕՕ. յաւելուն «որ Պարսից արքային Աղուանից»։

Տրդատայ, իբրև լուաւ զմահ նորա, սպանանէ զսուրբն Գրիգորիս զորդին Վրթանիսի զեղբայր Յուսկանն կապեալ զնա ընդ ագի ամեհի ձիոյ՝ ի դաշտի Վաղարշապատ, և ինքն երթայ առ Շապուհ արքայն Պարսից։ Եւ ընդունի զձև թագաւորութեանն, հատուածէ զաշխարհն Խոսրովայ. և Խոսրովու բաւական համարեալ զմնացեալ աշխարհն իւր, ոչինչ փոյթ զպատերազմայ արարեալ, այլ խաղաղական կենօք կացեալ հնազանդեալ մեծին Վրթանիսի՝ փոխ զԱրտաշատ քաղաքն՝ ի Գողին, և տնկէ անտառս կաղնեաց՝ տեղի զբօսանաց, և թագաւորեալ ամս լինն՝ վաղճանի բարեպաշտութեամբ։ Եւ թագաւորէ փոխանակ նորա որդի նորա։

Իսկ սուրբն Վրթանէս բարւոք կարգաւորութեամբ վարեաց զժամանակս կենաց իւրոց. թէպէտ բազում անգամ կամեցան սպանանել զնա նախարարքն, այլ Աստուած ոչ ետ թոյլ այնպէս լինել, այլ խաղաղական մահուամբ փոխեցաւ առ Քրիստոս յոյն՝ամենեցուն։ Եւ թագաւորն Տիրան կացոյց փոխանորդ նորա զորդին զսուրբն Յուսիկ զեղբայր Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի։ Բայց Տիրան ոչ ըստ իրաւանցն Աստուծոյ վարէր զթագաւորութիւնն՝ այլ չար գործովք. զոր յանդիմանէր սուրբն Յուսիկ անաչառութեամբ. իսկ Տիրան ատէր զնա, զոր և սպան զնա յետոյ այսպիսի պատճառաւ։

Եղև յետ մահուան Կոստանդնի որդւոյ մեծի Կոստանդիանոսի, թագաւորէ Յուլիանէսոյ ուրացողն Յուլիանոս, և առաքէ տախտակ մի որով վերայ նկարեալ էր զպատկերն սատանայի և մերձ առ նմա Յուլիանոսի և դնել զայն յեկեղեցին Նայոց, և Տիրան առ երկիւղի նորին առնէր զհրամայեալն։ Իսկ սուրբն Յուսիկ դիմադարձ եղեալ ոչ տայր թոյլ մուծանել յեկեղեցին, այլ առեալ՝ ի ձեռաց նորա ընկէց յերկիր, և կոխան արարեալ ոտից իւրոց մանրեաց զնա. և բարկացեալ Տիրան հրամայեաց ջալոտիւք հարկանել զնա այնչափ մինչև մեռցի։ Ոչ կալաւ զայն առ եպիսկոպոսութեան զամս վեց։ Իսկ Տիրան կոչէ զմեծ քորեպիսկոպոսն Վանիել աղգաւ ասորի՝ զոր կացուցեալ էր սրբոյն Գրիգորի տեսուչ գաւառաց, այր սուրբ և աքանչելի. և նորա եկեալ յանդիմանէ զնա սաստիկ անիծիւք վասն սպան-

մանն սուրբ քահանայապետին Յուսկան։ Եւ քարկաւեալ Թագաւորն հրամայէ խեղդել զնա, և կատարեցաւ սուրբն մարտիրոսական մահուամբ։ Եւ յետ այնորիկ կացոյց Տիրան յաթոռ հայրապետութեան զՓառներսեհ ոմն, ոչ յազգէ սրբոյն Գրիգորի, այլ՝ի Տարօնոյ՝ի գեղջէն Աշտիշատայ, որ կալաւ զաթոռն աւուրս հինգ։ Եւ Շապուհ արքայն Պարսից կոչէ զՏիրան առ ինքն խաբէութեամբ, և՝ի Ձանասպարհին կուրացուցանեն զաչս նորա ածղով, վրէժխնդրութիւն Յուտուծոյ եկեալ անիրաւ մահուանցն, զոր արար նա ընդ Յուսիկ և ընդ Գանիէլ. յետոյ խեղդեաց զնա որդին իւր Արշակ. որ Թագաւորեաց աւուրս երեքտասան։ Եւ առնու զաթոռ Թագաւորութեան հօր իւրոյ Արշակ, հրամանաւ Շապհոյ. և եկին առ նա ամենայն նախարարքն իւր, և ամենայն եպիսկոպոսունքն աշխարհին Հայոց, և խնդրէին՝ի նմանէ հայրապետ արժանաւոր՝ի ցեղէ սրբոյն Գրիգորի, և գտին մանուկ մի գեղեցիկ հասակաւ և բարիոք տեսանելով տեսառն, որում՝ անուն էր Ներսէս, որդի Արշ. Թանապինի որդւոյ Յուսկանն. զի էին նորա երկու որդիք, անուն միոյն Պապ և միւսոյն Արշ. Թանապինէ, և մինչ կենդանի էր Յուսիկ ոչ ձեռնադրեաց զնոսա՝ի գործ ինչ եկեղեցւոյ, քանզի չէին արժանիք, և յետ մահուան նորա ձեռնադրեն զնոսա՝ի սարկաւագութիւն բռնութեամբ։ Իսկ նոքա Թողեալ զգործ եկեղեցւոյ, ուտելոյ և ըմպելոյ պարապեալք և փոխանակ սաղմոսից և երգոց Հոգևորաց, գուսանօք և վարձանօք[1] և բողիւք շատանային. և յաւուր միում նստեալ եկեղեցւոջն ուտել և ըմպել կանամբք և մանկտիւք՝ հուր անկաւ յերկնից և այրեաց զերկուսեանն, նորանշան մահուամբ խայտառակեալք, և զաւուրս բազումս՝ի ներքս եկեղեցւոջն մնացեալք, ոչ ոք իշխել մտանել և հանել արտաքս զդիս նոցա։

Այլ սքանչելին Ներսէս արժանի էր կոչմանն որ կոչէին զնա, զի էր նա արդար և սուրբ. և էր նա զինուորեալ արքային Արշակայ, որ զսուսերն պողպատիկ նորա բարձեալ ունէր՝ի սպասու, որ և զանձն անարժան համարէր այնպիսւոյ պատուոյ։ Իսկ Արշակ արքայն

1 Ախտակ յ'00։

հրաման ետ ծերունի եպիսկոպոսին Փաւստոսի ձեռնադրել զնա սարկաւագ. և ապա զօր բազում գումարեալ առաքէ զնա ՚ի Կեսարիա ձեռնադրել զնա Հայրապետ։ Եւ եկեալ անտի լուսաւորել զաշխարհս Այոց զանազան կարգաւ՝ շիներ վանորայս և աղքատանոցս շիներ, և ժողովեր զուրուկս և զհալածս, և կարգեր դարմանս և ռոճիկս նոցա։ Այլ Արշակ ոչ ըստ իրաւանցն Աստուծոյ վարէր զթագաւորութիւն, զի սպան նա զեղբօրորդին իւր զՎնեւ, և էառ զկինն նորա զԽոսրովիդուխտ նեմ. անէծ զնա սուրբն Գրիգոր, այլ և Թշնամի եղև նմա։ Ապուհ արքայն Պարսից, և Վաղէս կայսրն Յունաց, որ յետ Վղբիանոսի՝ բարեպաշտի. և աղաչէ Արշակ զԳրիգոր գնալ դեսպանութեան առ Վաղէս կայսրն. և գնաց սուրբն Գրիգոր խաղաղութիւն առնել՚ի մէջ երկուց թագաւորաց։ Այլ Վաղէս քանզի մոլորեալ էր յաղանդն Ապիանոսի և Աւանկեդոնի, և հալածիչ էր ուղղափառաց, իբրև ետես զսուրբն Գրիգոր սէս և լուաւ Թէ սքանչելագործ այր է, ասէ ցնա. Ընդ ժըշկեա զորդի իմ. քանզի հիւանդ էր մերձ՚ի մահ։ Այն սուրբն Գրիգոր. Դնեմ՚ի քեզ կացցես յանհաւատութեան, ես բժշկեցից զնա. և յանձն առ՚ի քաց կալ, և աղօթեալ յարեաւ մանուկն յախտէն, և Վաղէս պարձեալ՚ի նոյն հերձուածս դարձաւ, և իսկոյն մեռաւ մանուկն. և հրամայեաց աքսորել զսուրբն՚ի տեղի մի անբնակ, յորում ոչ գոյր բայս դալարոյ, բայց միայն աւազ. և աղօթել սրբոյն բղխեաց աղբիւր քաղցրահամ, և ծոմն ընկենոյր ձուկն և փայտս. և փայտն առանց հրոյ խնձնին լուսանիւր, և այնպէս կերակրեալ լինէին զինն ամիս։

Իսկ Արշակ իբրև ետես եթէ աքսորեցաւ սուրբն Գրիգոր, սկսաւ գործել մեծամեծ չարիս. շինեաց քաղաք մի և անդ ժողովեաց զամենայն չարագործս, և ասաց ոչ լինել իրաւանց՝ որ ոք գործեսցէ զչարիս և անկցի անդ, և լցաւ քաղաքն անիրաւութեամբ, և անուանեաց Արշակաւան։ Իսկ Վաղէս կայսրն չարաչար տանկեցաւ, զյաւիտենական՝ գեհենոյն աստէն բերելով զօրինակն, հրակէզ եղեալ. և առնու զթագն մեծն

1 Այսինքն Ի Յովհաննես կամ Յովիանոս։

Յովհաննու հրամանաւ Կրատիանոսի. և ածեալ զսուրբն Ներսէս յաքսորանացն առ իւր պահէր մեծաւ պատուով մինչև ի հաւաքումն ժողովոյն հարիւր յիսնից՝ որ ի Կոստանդինուպոլիս[1] վասն հոգեմարտին Մակեդոնի. յորում էր Կրիպոր աստուածաբանն, և Կրիգոր Նիւսացին եղբայր սրբոյն Բարսեղի, և այլ բազում սուրբ հարք. և ապա առաքէ զսուրբն Ներսէս յաթոռն իւր: Նա տեսեալ զանիրաւ գործս Ընդակայ անէծ զԸնդակաւանն. և անդէն սատակեցան բնակիչք նորա չարամահ, և անբնակ եղև քաղաքն բազմամարդ: Նա զԸնդակ կոչեաց Շ ապուհ, և եդ զնա ի բանդի ա նել. և ինքն ձեռօք իւրովք սպան զինքն, որ Թագաւորեաց զամս երեսուն: Իսկ սուրբն Ներսէս աղաչեաց զմեծն Յովհաննէս, և Թագաւորեցոյց ի վերայ Հայոց ըզ Պապ զորդի Ընդակայ: Իսկ Պապ քանզի զազրագործ էր և յանդիմանէր զնա սուրբն Ներսէս, ետ նմա դեղ մահու, և եբարձ զարդարն ի կենցաղոյս. և սուրբն ի մեռանելն իւրում կոչեաց զՀօտ իւր և օրհնեաց զնոսա. և բազում ինչ մարգարէացաւ վասն ազգին Կետացն և աւերման Հայոց աշխարհիս, և վասն նեռին և նեղութեանցն՝ որ ի նմանէ ընդ ամենայն աշխարհս. և ապա հանգեաւ մարտիրոսական մահուամբ, արտօսր բազում Թողեալ Հօտին իւրոյ, կալեալ զՀայրապետու Թիւնն ամս երեսուն և չորս[2]: Նա յաջորդէ զաթոռն Շ ահակ ումն, ոչ ի նոյն ազգէ՝ այլ ի զաւակէ Ընդիւթանոսի ի Հարքայ ի Մանազկերտոյ, ամս չորիս:

Իսկ բարեպաշտն Յովհաննէս՝ իբրև լուաւ զչարիսն զոր գործեաց Պապ, կորոյս զնա ըստ անզգամութեանն. որ Թագաւորեաց ամս եօթն: Նա կացոյց մեծն Յովհաննէս Թագաւոր Հայոց զՎաղգաս ումն, յազգէն Ընդակունեաց՝ զայր զօրաւոր և ուժեղ: Նա յետ Շ ահակայ առնու զկաթողիկոսութիւնն Օ աւէն եղբայր նորա զամս չորիս: Իսկ Վաղգաս խորհեցաւ ապստամբել ի Յովհաննէսէ և ձեռն տալ ի Պարսիկս. և հալածեաց զնա Մանուել և Մամիկոն եղբայր նորա՝[3] Մուշեղայ քաջի, սպարապետին Հայոց, զոր սպան Վաղգաս

1 Ամք յառաջ քան զգումարումն ժողովոյն վախճանեալ էր Ս. Ներսէս:

2 Վ. 48:

3 Այսպէս յOO:

ներգուեաւք. երթեալ յաշխարհն Յունաց անդ վաղձանեցաւ կալեալ զթագաւորութիւնն ամս չորս։ Եւ յետ Օաւենայ առնու զկաթողիկոսութիւն Ներսէս եղբայր նորա, Շ ահակայ և Օաւենայ, ամս հինգ։ Եւ կացուցանէ Ներսէս յաթոռ Թագաւորութեան զերկու որդիսն Պապայ, զՆերսէհ և զՍաղարշակ, զոր փեսայացոյց ինքեան. որ Թագաւորեցին ամս չորս։

Եւ ապա Թագաւորքն Յունաց և Պարսից զաշխարհն Հայոց յերկու բաժանեցին. բաժինն Յունաց տիրեր Ներսէհ՝ հրամանաւ Ներսեհայ և Ինորեայ որդւոց մեծին Թէոդոսի. իսկ արքայն Պարսից Շ ապուհ կացոյց բաժնին իւրոյ Թագաւոր՝ զՀոսրով անն՝ի նոյն ազգէ։ Եւ եր մարտ՝ի մէջ Ներսեհայ և Հոսրովայ. քանզի իշխանքն որ էին ընդ Ներսեհայ՝ առեալ զգանձս նորա գնային առ Հոսրով։ Իսկ Հոսրով յետ Ներսէսի նստուցանէ զսուրբն Շահակ յաթոռ Հայրապետութեան, զորդի մեծին Ներսէսի։ Եւ յաւուրս Հայոսիկ եր Հայրապետ Կոստանդինուպոլսի զարմանալի և պայծառ ջահն եկեղեցւոյ սուրբն Յոհան Ոսկեբերան, որ լուսաւորէր զընդհանուր զեկեղեցիս Քրիստոսի վարդապետութեամբ բանին կենաց։ Ա զառաջինն յոմանց արհամարհեալ լինէր վասն ոչ խօսելոյ՝ի բարբառն Յունաց. զի՝ի հօրէ կողմանէ ասորի էր։ Ա յորմէ հետէ մկրտեցաւ՝ զինի ոչ էարբ և ոչ ծիծաղեցաւ, և ոչ երդուաւ, և ոչ երդմնեցոյց զոք, և ոչ նզովեաց զոք. և յորժամ աքսորէին զնա՝ եհար զձեռն յեկեղեցին և ասաց. Ողջ մնա սուրբ եկեղեցի բնակարան փառաց տեառն, և մի մոռանար զաշխատութիւնս իմ։ քանզի՝ի պարգևացն՝ զոր առի Ա՛ստուծոյ՝ յաւելի՝ի գանձս քո գիրք ուղիղ հարիւր, և Ճառք երկոտասան հազար[1]։ Ա եկաց Հայրապետ հնգետասան ամ, և երեք ամ յաքսորանս, և մեռաւ՝ի Կոմանա՝ լիսուն ամաց։ Եւ Թագաւորեալ Հոսրով ամս հինգ, հանէ զնա արքայն Պարսից՝ի Թագաւորութենէ, և Թագաւորեցուցանէ զՇ ապուհ։ Իսկ սուրբն Շահակ պայծառացոյց զեկեղեցին Քրիստոսի առաւել քան զամենեսեան զանա-

1 Ա յսպէս գրի և՝ի Յայսմաւուրս։

զան կարգօք առաքինութեան կանոնական օրինադրու-
թեամբք. և՚ի ժամանակս սորա ծագեաց լոյս մեծ յաշ-
խարհս Հայոց աստուածգիտութեան. քանզի երանե-
լին Ներսէս եկեալ առ սուրբն Ահակ ետէ հնար ինչ
իցէ ստեղծանել նշանագիր հայերէն լեզուի, և եգիտ
զնա առաւել ևս այնմ փափաքող, քանզի ցայնվայր ոչ
ունէին գիր Հայք, այլ յոյն և ասորի գրով վարէին և
նշանագրաւ։ Եւ ծանուցանեն զնորհուրդն Ա ռամշա-
պուհոյ Թագաւորին, և նա ասաց Թէ Ինչ էի ես՚ի
կողմանս Հայոցս, ասաց ինձ ոմն եպիսկոպոս ասորի՝
Դանիէլ անուն, Թէ ունիմ ես նշանագիր հայերէն լե-
զուի. և ես անփոյթ արարի առժամայն։

Եւ առաքեն զնախարար զոմն՝ Ա բրահձայ՝ անուն,
առ Դանիէլն խնդրել՚ի նմանէ զնշանագիրսն. և նա
առաքէ՚ի ձեռն Հաբելի երիցու։ Եւ իբրև տեսին՝ ու-
րախ եղեն, և սկսան՚ի հայ լեզու փոխել զամենայն
գիրս աստուածաշունչս. բայց հայեցեալ տեսին զի ոչ
էր բաւական զամենայն սիզոբայսն ողջ ածել և զշաղ-
կապս և զկապս և զբառս, և սկսան դարձեալ՚ի հոգ
մտանել վասն այնորիկ. և իբրև Թափեցան յամենայն
հնարից մարդկային, ապաւինեցան յայն որ ամենայն
ինչ հնարաւոր է նմա, աղօթիւք խնդրել՚ի տեառնէ,
յանձն առեալ զպահոց պնդութիւն և զաղօթս։ Ապա
այն որ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր և աղօթից
նոցա լսէ, ոչ անտես արարեալ զբարի խնդրուածս, ե-
րևեալ Ա ստուածպայ Թաթ ձեռին հզօրին, գրելով՚ի վե-
րայ վիմի, և ծանուցաւ ամենայն համանգամայնս. և
յարուցեալ ստեղծ զգիրսն։ Եւ ժողովեն այնուհետև
մանկունս բազում, և ուսուցանեն զբովանդակ աշ-
խարհս, և բաժանեն զմանկունս մատաղս և քաջուս-
մունս, փափկաձայնս և երկարոգիս, և կարգեն դըպ-
րոցս երկուս[2] ասորերէն և յունարէն։ Եւ ուսեալ ման-
կանցն այնոցիկ զամենայն իմաստութիւնս ներքինս և
արտաքինս, եղեն Թարգմանիչք Աչմարտութեան, և
Թարգմանեցին զամենայն գիրս հին և նոր կտակարա-
նացն, սկսեալ առաւկացն Ադոմայի բովանդակեցին զա-

1 Ա յն է վահրիճ ըստ հնոց պատմչաց։

2 ՈՕ։ երիտասարդս ի և յորմէն դպրոցս ասորերէն։

մեծայն։ Սոքա ոչ միայն Թարգմանիչք, այլ և վարդապետք և ուսուցիչք և մարգարէք պատմողք ապագայիցն։ Սոքա լցեալք Հոգւով սրբով, խօսողք լեզուաց աղգաց, Թարգմանողք և յայտածողք զբանս խրիմինա, և խոտային խօսից պարզ մեկնիչք։ Սոքա ամուր պարիսպք և սիւնք եկեղեցւոյ, աշտանակ լուսատուք, և ջահք բորբոքեալք ընդհանուր ծաւալելով ընդ ոլորտս տիեզերաց։ Սոքա աստուածաբանք բանին կենաց և արբուցիչք պաքեալ անձանց, զովացուցիչք տապոյ ջերմուԹեան բանսարկուին և ջեռացուցիչք ցրտոյն՝ի հաւատս։ Սոքա երգեցողք ծիծառունք, տատրակք քաղցրախօսք և ողջախոհք, սրբուԹեան սիրիչք և աղտեղուԹեան անարգիչք։ Սոքա մանկանց դաստիարակք, և երիտասարդացն բարւոյ օրինակ, կուսանաց զարդք, ամուսնացելոց օրէնն, ծերոց սփոփիչք, տկարաց մխիԹարիչք, զլուրելոց կանգնիչք, մեղաւորաց դարձուցիչք, հեղգացելոց խԹան յարուցիչք, և ժրացելոց՝ի նոյն յօժարեցուցիչք, ուսման սիրիչք և ատեցողացն յանդիմանիչք։ Որոց վարդապետ և ուսուցիչ սուրբն Սահակ և Մեսրոբ. և գլխաւոր աշակերտացն սուրբն Յովսէփ, Յովհան[1] և Ղևոնդ, Սահակ, և Մովսէս քերԹողն, և Մամբրէ վերծանողն՝ նորին եղբայր, Եզնիկ և Կորիւն, սուրբն Եղիշէ, ԴաւիԹ անյաղԹ փիլիսոփայ, և Յովհաննէս, տէր Ա֊բրահամ, Ա֊բգան, Մուշէ, Ա֊բգան[2], Խոսրով, Դ ազար, և յետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, և որ զգիրսն յարմարէր գեղեցիկ Հռոփանոս սամոստացի և այլք բազումք, որոց ոմանք յեպիսկոպոսուԹեան աստիճանս հասին, և այլք առաջնորդք ժողովրդոցն կարդեալք, և՝ի սոցանէ ոմանք՝ի վերայ ԹարգմանուԹեան և գիրս յինքեանց շարադրեցին, որպէս աքանչելին Մովսէս՝ զՀայոց պատմուԹիւնն՝ի խնդրոյ Սահակայ Հայրապետունւոյ, և զպատմուԹիւն սրբուհւոյ Ա֊տուածածնին և զպատկերի նորա՝ի խընդրոյ իշխանացն Ա֊բծրունեաց, և զՊէտքն՝ի խնդրոյ Վահէդոսի ումեմն[3], և զնեբրոդեան սրբոյ Հռիփսիմեայ

1 Յովհաննէս Եկեղեցացին է. իսկ որ՝ի տոմարն Յովհաննէսն՝ Թուի Մանդակունին։

2 Երկիցս գրի Ա֊բգան, Թերևս մին փոխանակ Աղանայ։

3 Պետոյից գիրքն որպէս այժմ ասի, և՝ի վերջաբանին ուղղի առ Թէոդորոս ումն աշակերտ։

մեանցն և զմի արդասաւորն, և այլ ձառս և խօսս իմաստասիրականս։ Եւ կօրինն զպատմութիւն սրբոցն Աւետարանոցդ և այլ ժամանակաց։ Եւ Եղիշէ զպատմութիւն սրբոց Առաքելոցն, և զգիրս կանոնացն, և այլ մեկնութիւնս գրոց, և զջարչարանացն փրկչին. և Ագաթ՝ զգիրսն. և Եզնիկ խօսս յոլովս եւթող յօգուտ լսողաց։ Եւ Դաւիթ փիլիսոփայ զգիրսն սահմանաց և զեկաց և զմեկնութիւնն Porphyrեայ և ներածութեանց Պորփիւրի, և այլ հարցմունս և պատասխանիս, և ներբողեանս սրբոց խաչին, և զծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Նոյնպէս և Ամբրկ վերծանող ասաց ներբողեան յօրն արմատենեաց, ի գալուստն Քրիստոսի Երուսաղէմ յաւանակաւ։ Եւ յետոյ մեծն Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս բազում մեկնութիւնս եւթող սուրբ գրոց՝ Յոբայ և աւետարանացն, այլ և Դանիէլի և Եզեկիէլի, և զպատասխանիս Թղթոյն Դերմանոսի պատրիարգին Կոստանդինուպոլսի[1]։ Քարին և երգս շարականաց քաղցր և գեղեցիկ եղանակաւ և մեծ խորհրդով, ծննդեանն Քրիստոսի և քառասնօրեայ գալստեան ի տաճարն, մկրտութեանն և եկաւորութեան ի Յեթանիա և Երուսաղէմ, մեծի շաբաթու չարչարանացն, յարութեանն և համբարձման և Հոգւոյ գալստեան, խաչի, և եկեղեցւոյ, և այլ տօնից տէրունականաց, և ամենայն սրբոց, ապաշխարութեան և ամենայն ննջեցելոց. պէսպէս զանազանս և անթիւս, զոր մինչև ցայսօր պաշտի եկեղեցիս Հայաստանեայց։ Իսկ սուրբ վարդապետն Աւետրոպ իբրև եւթոյ զերկիրս Հայոց ուսմամբ և թարգմանութեամբ՝ յանձն առնէ զամենայն կաթողիկոսին Առհակայ, և ինքն գնացեալ Հոռմայ առնէ և նոցա նշանագիրս, ըստ տուելոյ նմա շնորհացն ի վերուստ։ Եւ այսպէս զուարճացեալ զաշխարհս ամենայն անպայման խնդութեամբ թողեալ նոցա վարդապետս հիւրոյ աշակերտաց, և անտի գնաց ի Հռոմ. առնէ և նոցա գիրս, և թողեալ և նոցա վարդապետս, դառնայ ինքն ի Հայս, և գտեալ զմեծն Առհակ թարգմանութեան պարապեալ։ Իսկ թագաւորն Հռոմայեցւոց կալաւ զթագաւորութիւնն ամն քսան և մի. և վաղճանի բարիոք։

1 Ստեփանոսդ այդ 300 ամաւ կրսեր է քան զԹարգմանիչդ։

Եւ դարձեալ Թադէոսէ եղբայրն նորա Յուդա ամ մի. և ապա Ադդայ, և Ադդայէս Թադէոսէ յետ նորա[1]: Ընդ այն ժամանակս Թադէոսեայ Յունաց բարեպաշտն փոքր Աբգարոս, որդի Ուքկաձեայ. և առաքէ սուրբն Աճակ զԵսրովպ վարդապետն և զԹոռն իւր Թղթով առ Աբգարոս կայսր, զի հրաման տացէ այնոցիկ՝ որ ընդ իշխանութեամբ նորա էին, ուսանել զկրօն հայերէնս, և վերակացուք նոցա լինիլն Թովմ ուսանել զկրօն Յայոյն վասն նախանձու: Իսկ հեթն Աբգարոս մեղադրեաց զառաջինն, Թէ Ընդէր յաստուած և ոչ՝ ի յունաց իմաստասիրաց որ՝ ի մերում քաղաքին՝ խնդրեիք զկրօն. և պատմեաց Եսրովպ եթէ կատարումն արուեստին՝ ի հնոցէ Յոգւոյն եղև: Յայնժամ գոհացեալ զԱստուծոյ բարեպաշտ Թագաւորն՝ հրամայեաց պատուել զսուրբն Եսրովպ իբրև զձշմարիտ և զիմաստուն վարդապետ: Նա և պատրիարգն Աստիկոս և ամենայն ուխտ եկեղեցւոյն՝ հանդերձ Թագաւորաւն գրեցին զԵսրովպ ընդ առաջին վարդապետս եկեղեցւոյ[2], ընդ Աթանասի և Գրիգորեանս, ընդ Նարսեզի և ընդ Յովաննու Ոսկեբերանի. և զի արդեան արար ստրատելատ բարեպաշտն Աբգարոս. գրեցին և Թուղթս առ մեծն Աճակ՝ տալով նմա զպատիւ վեհագոյն. այլ և հրաման ետ յիշխանութեան իւրում ժողովել մանկունս մտաւարժս ուսանել զկրօն, և դարմանք և ծախք յարքունուստ կարգեաց: Նա հրաման և յաշխարհին Յայոց շինել քաղաք՝ ի Կարին գաւառի, և անուանել զնա Թէոդուպօլիս, որ այժմ կոչի Կարնոյ քաղաք: Նա եկեալ Եսրովպ՝ ուսոյց և զկէս ազգին որ ընդ իշխանութեամբ Աբգարոսի:—Իսկ Թագաւորն Յայոց՝ մանուկն Արտաշէր, էր զազրագործ և գիձասէր, որ ոչ միայն՝ ի գիշերի, այլ և՝ ի տունջեան դործէր զգործս անարժանս, և խրատու սրբոյն Աճակայ ոչ լսէր. վասն որոյ տագնապեցան նախարարքն, և եկին առ սուրբն Աճակ, զի նովաւ ամբաստ լինիլն Պարսից

1 Արտաշէր և Արտաշէս մի անձն է, որդին Վռամշապհոյ. բայց յառաջ քան զնա Շապուհ արքայորդի Պարսից անուանեցաւ փոխանակ Յայոց Թագաւորի:

2 Վարդան՝ կոչէ Վրդապէպոյ Վրդապէպ. հնագոյն պատմիչք և աշակերտք սուրբ վարդապետին չափաւորագոյնս վարին:

արքային, և ընկենուլ զնա յաթոռոյն։ Իսկ սուրբն Ա-
հակ ոչ առ յանձն ընկենուլ զպատն գայլոց. և նոքա եր-
թեալ առ արքայն Պարսից Ա՛ռամ՝ ընկեցին զնա յաթո-
ռոյն, և զսուրբն Ահակ և ա՛ր ոչ հաւանեցաւ նոցա կա-
մացն։

Յայսմ հետէ բարձաւ թագաւորութիւնն Ա՛շա-
կունեաց յետ Ա՛րտաշիրի, որ թագաւորեաց ամս վեց.
և տևեաց թագաւորութիւնն Ա՛շակունեաց ՚ի Նայ՝
ամս հինգհարիւր վաթսուն և ութ։ Պատարեաց և
քահանայապետութիւնն յարժանաւոր ցեղէն սրբոյն
Գրիգորի. զի Թէպէտ եւ[1] եկաց սուրբն Ահակ և
յետ այնորիկ ամս վեշտասան և լուսաւոր վարդա-
պետութեամբն իւրով պայծառացոյց զաշխարհս, սա-
կայն անարժան վերակացուօք և պարսիկ մարզպա-
նաւ որպէս զի՝ եհմիհրշապուհ փոխանակ Ա՛րտաշիրի
թագաւորին, և՝ զոսոխասէրն Աւրմակ փոխանակ սըր-
բոյն Ահակայ. որ եկաց ամ մի։ Ու՛ր յետ Աւրմա-
կայ Գրքիշոյ ասորի վաթսար քան զնա, ամս երեք. և
յետ նորա Շ մնաց հինգ, և ս անպիտան։ Իսկ
սուրբն Ահակ աղօթից և վարդապետութեան պա-
րապեալ. և ապա եկեալ ամենայն նախարարքն Նայոց,
անկանէին առաջի սրբոյն Ահակայ, զի՛ գուցես յանձն
առեալ խնդրէին թողութիւն ՚ի նմանէ, և աղաչէին
զնա դառնալ և ունել զաթոռ իւր. իսկ նա ոչ հաւա-
ներ։ Իբրև կարի ստիպէին՝ յայնժամ պատմեաց նոցա
զտեսիլն զոր ետես եթէ ՚ի տեառնէ եղև այդ, դադա-
րել քահանայութեան ՚ի ցեղէն սրբոյն Գրիգորի, և
թագաւորութեան ՚ի տանէն Ա՛շակունեաց. և թէ
մերձ յերևումն նեռին դարձեալ կանգնելոց է Ա՛ս-
տուած զթագաւորութիւն Նայոց և քահանայապետու-
թիւն։ Ա՛յսպա թոյլ ետուն նմա կալ ըստ իւրոց կամաց.
և արքայն Պարսից զվարդան մարզպան արարեալ Նայոց
տայ զաշխարհս ՚ի ձեռս նորա։ Ու՛ր սուրբն Ահակ կա-
լեալ զՀայրապետութիւնն ամս չիսուն և մի, և փոխի
խաղաղական մահուամբ ՚ի կարգս հրեշտակաց։ Ցուեալ
զաթոռն ցսուրբն Ա՛ետրոս. յոր և նա ՚ի նոյն ամի ելից
զկենցաղս չիշատակ բարւոյ թողեալ ապագային, ՚ի սկըզ-

[1] 100. վի Ռեպէպ փէղ եկաց։

բան [1] առաջին Յակէրտին Պարսից արքային, որդւոյն Վռամայ Երկրորդի. և առնու զաթոռն սուրբն Յովսէփ աշակերտ նոցա։ Իսկ Յակէրտ արքայ բռնադատեր զամենայն քրիստոնեայս ուրանալ զՔրիստոս, և դառնալ յօրէնս Զաղզեզանց, որում ոչ հաւանեալ զօրացն Ներսէհ, դառնան ընդդէմ հրամանին, սպանանեն զմոգս և զմոգպետան։ Իսկ Յակէրտ իբրև լուաւ զայն ամենայն, առաքէ զօրս բազում պատերազմել ընդ զօրացն Ներսէհ, որոց դլխաւոր էր սուրբն Վարդան և ընկերք իւր. և Պարսից աւերեալ զաշխարհն խաղացուցանեն ի գերութիւն խրատու ուրացելոյն Վասակայ զմնացեալ նախարարսն, և զսուրբն Յովսէփ, զՄահակ և զվեց եղբարս և զընկերս նոցա, և տան ի կապանս արքունի։ Եւ յետ այնորիկ սպանանեն զսուրբն Յովսէփ և զընկերս նորին, և զնախարարսն արգելուն ի բանդ, մինչև յաւուրս Պերոզի արքայի, և ապա արձակեալք ի կապանաց խնամօքն Ղատուծոյ, խոստովանութեան անուն ժառանգեալք դառնան յաշխարհս Ներսէհ։

Իսկ յետ մահուան բարեպաշտին Թէոդոսի կայսեր՝ առնու զթագաւորութիւնն Մարկիանոս՝ որ արար զժողովն Քաղկեդոնի, վեցհարիւր երեսուն և վեց եպիսկոպոսաց, ի քակտումն ուղղափառ հաւատոյ, որ եւևոյ զտիեզերս մինչև ցայսօր հայհոյութեամբ նոցա (!)։ Յետ սրբոյն Յովսէփայ առնու զկաթուղիկոսութիւն տէր Պիւտ, ամս հնգետասան, որ խնդրեաց ի Պաւթէ փիլիսոփայէ զՔարձրացուցեքն։ Եւ ապա Յովհան Մանդակունի՝ զամս երկոտասան. սա բազում կարդաւորութիւնս եմոյծ յեկեղեցի, կարգեաց զքարոզս աղուհացին և զաղօթս նոցա, զերրորդ ժամին, և զվեցերորդ և զիննեերորդ ժամին, և զեկեղեցւոյ հիմնարկէքն, և ժամահարի, սկիհ և մաղզմայի, գիրք և կնունք [2], խաչ օրհնեք և պսակ [3]։ Ո՛չ այս ամենայն նորա կարդեալ է. այլ և առաջի Պերոզի արքայի հանդիսակութեամբ խոստովանեցաւ զՔրիստոս և ոչ երկեաւ ի սպառնալեաց նորա, որ հրապուրէր ի բաց կալ ի Քրիստոսէ և ի հաղորդութենէ Յունաց, և կատարեալ զամենայն առաքինութեամբ՝ փոխի ի Քրիստոս։

1 Ա յոյնքն ի սկզբան կամ յառաջնումն ամի Թագաւորութեան։

2 յ'ՕՕ. ինոն, ինոյ, ինոնք։

3 յ'ՕՕ. պսակ։

Յոկ յետ Մարկիանոսի Թագաւորեաց Յուննոյ Լեոն ամեծն, և Պերոզ Պարսից արքայն զՄանգոսա[1] մարզպան Հայոց արար առ քսան։ Յայսոսիկ[2] Մովսէս Խերթողահայրն։ Նոքին[3] ժամանակի պայծառացեալ յերկրի աքանչելի վարուք միաբնաւորութեամբ սուրբ հայրն Թաղեոս Հանդերձ Մարոսիւ եղբարբն իւրով, և Թումայիւ աշակերտիւ։ Նոյ յետ Յովհաննու Մանդակունւոյ առնու զկաթուղիկոսութիւն տէր Բաբգէն, առն հինգ, յաւուրս Լենոնի կայսեր։ Կայ Լենոնս նզովեաց զԺողովն Քաղկեդոնի[4], և երկոտասան գլուխս նզովից կարգեաց ընդդէմ նոցա։ Լոմանէ ասեն թէ յառաջ ուտէր միս, և յաւուր միում յանչափ ուտելոյն քացախեաւ յորովայնի նորա կերակուրն, յայնմանէ տաղտկացեալ՝ օրէնս եդ յերկու շաբաթս քառեկեղանին ոչ ուտել միս, այլ պանիր։ զոր պանիր—ուտան անուանեն մինչև ցայսօր։ Լսեն թէ Յուլիանոս եկեալ ի Կոստանդինուպոլիս Նրամայեաց յամենայն կերակուր վաճառոցն խառնել յարեւնէ զոհից։ և սուրբն Լեւոն որոտս լմացոյց քրիստոնէից։ և նոքա ասացին թէ մեզ էէ օրէն յայս երկու շաբաթս միս ուտել, այլ միայն պանիր։ Նա յաւուրս նորա երանելին Դաւռնիկ եգիտ զնշխարս սրբոյն Գէորգայ ի Լանեայ այրէն, և հանեալ ի Լոդիան։ Նա յետ Բաբգենայ առնու զկաթուղիկոսութիւնն տէր Սամուէլ, ամս հինգ։ Յայսոսիկ աւուրս պայծառանայր եկեղեցին սուրբն Միքայէլ սիւնակեցաւն Ղեքսանդրիա։ Նա Տիմոթէոս երէց ուղիղ Հաւատով[5] և խնաստասէր, որ զամէն արուեստի գիրսն գրեաց Հաւաքեալ զամենայն քանս աստուածայնոց արանց ընդդէմ ամենայն հերձուածողաց։ Նայց Պերոզ արքայն Պարսից կարի անմարդի բարս ունէր, վասն որոյ սպանաւ ի Հեփթաղաց։ և Թագաւորէ Ա՛ղարշ եղբայր նորա։ Սա զԱհան Մամիկոնեան զօրդին Խմայեկայ մարզպան կարգէ։ այս Ա՛հանս պատկեաց զեկեղեցի զանազան իրօք։ այս Ա՛հան զԼանս արգելական արար։ Ի սորա աւուրս էր Ղազար Փար-

1 Խմա զՄեծն Ահան Մամիկոնեան։

2 Խմա Յայսոսիկ աւուրս։

3 ՃՀՀ։ Նոյն ժամանակի։

4 Զգուշացոյնս ասէ Վարգան, 83։

5 Տիմոթէոս կուզն մականով և ոչ ուղղադոյն մտօք։

պեցի Ձարտասան և պատմագիր։ Նա յետ Սամուէլի առնու զկաթուղիկոսութիւն տէր Սուշէ, ամս ութ։ Նա յետ Օենանի կայսեր առնու զթագաւորութիւնն Պհռաստաս, որ և սա ընդ Օենանի յուղղափառս գրեցաւ (!), զի կամեցաւ ժողովս առնել ընդդէմ.... ժողովոյն Քաղկեդոնի, հաստատեալ զուղղափառութիւնն (!) և դեղակուր եղեալ մեռաւ։ Նա թագաւորէ յետ նորա Յուստինոս այր տգէտ և անաստուած, որ ելից զերկիրս արեամբ ուղղափառաց, զի էդ յաշտանակի ըզՔաղկեդոնին, և կատորեալ հալածեաց զաստղսն մի բնութիւն մարմնացելոյն Բանին։ Յետ Նա աղաչու Պարսից աղքային առնու զթագն Կաւատ, և անդ Ջ ամաւոք, և ապա Կաւատ։ Նա յետ Սուշէի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Սահակ ամս եօթն. և ապա տէր Քրիստափոր, ամս հինգ. և յետ նորա տէր Գևոնդ ամս երկու։ Ընդեղակն նուաղեցաւ յաւուրս սորա, և սով սաստիկ եղև։ Նա ապա տէր Ներսէս, ամս լինն. յաւուրս սորա Նզրաս Ընդեղացի աշակերտ Սովսէսի եպիսկոպոսի՝ի Մազրևանդայ բազմացոյց զդասս Ձարտասանաց։ Գառնայ և Սամքրէ եղբայրն Սովսէսի՝ի Նայս՝ զորմէ ասեն երկրորդ եղեալ փիլիսոփոս։

Յետ Յուստինոսի առնու զթագաւորութիւն միւս Յուստինոս քոյերորդի նորա։ Սորա էր կին Թէոդորա ուղղափառ, և աղաչէր զայրն իւր հաստատել զուղղափառութիւն (!). և նա թէպէտ կամէր՝ ոչ իշխեաց յահէ երկաբնակացն, որք սպառնային նմա մահու։ Նա առ սա եկեալ չարախօսէ Հրեայ մի ասաց, թէ պարտ է զտեառնընդառաջն առնել ընդ Ծննդեանն՝ զոր առնեն Յոյնքն, և ոչ ըստ յայտնութեան որ՝ի վեցն յունվարի, զի մինչև ցայն՝ առաքելական դրութեամբ[1] առնէին ամենայն քրիստոնեայք՝ի փետրվարի չորեքտասան. և կայսրն հաւանեալ բանից անօրինին և առաքէ Երուսաղէմ այնպէս առնել։ Իսկ Երուսաղէմացիքն ոչ առին յանձն փոխել զաւանդութիւնս սուրբ Հարցն, որ մինչև ցայն օրն պահեալ էին. և հրամայէ կայսրն զօրավարին բռնութեամբ առնել, և թէ ոք ընդդիմանայ՝ սպանանել. և ամենեքեան՝ի մահ դիմեցին յա-

1 Հին աւանդութիւն, բայց ոչ ատուգի առաքելադիր լինել։

պատս Աշմարտութեան։ Իսկ մարդասէրն Աստուած ոչ եթող ընդ վայր գյուսայեալս նա, այլ ահեղ սքանչելեօք զարհուրեցոյց զյանդգնեալսն. զի աչն աստուածային երևեցաւ ի սուրբ մատրանն, այլ և նշան ահեղ և հրաշափայլ յերկինս՝ արիւնատեսակ, և զարհուրեալ յայնմանէ դադարեցին ի խնդրոյն։ Այլ ի գալ միւսում ամին նոյն խռովութիւնն յուզէր. զի հրամանն ետ սաստիւ կորուսանել զընդդիմացողսն, և նոքա առ հասարակ պնդեցան ի մահ քան ի կեանս խղճիւ։ Այլ տեսեալ բարերարին Աստուծոյ զհաւատս մանկանն՝ այց արար հօտին իւրում. երևեալ ամենասրբուհւոյ Աստուածածնին ի ծիրանի սեանն, ունելով ի գիրկս իւր զմանուկն Յիսուս, և ջուր բղխեալ ի սիւնէ անտի, և ողք օծանէին ի ջրոյն յայն՝ բժշկէին յիւրեանց ցաւոցն. և այսպէս դադարեցին յունայն ի խնդրոյն։ Այլ ի ժամանակս Յուստինոսի խաւարեցաւ արեգակն ութեւտասն ամիս. երեք ժամ լոյս տայր օրն, և զայլն ոչ տիւ և ոչ գիշեր. և պտուղք տարւոյն այնորիկ ոչ հասան, և եղև ամենայն երկիր իբրև զբազմօրեայ հիւանդ. և եղև մարդամահ տարաժամ, որ քնաւ ոչ էր լեալ. առաջին օրն հինգ հազար[1], երկրորդ օրն տասն հազար, և երրորդ օրն եօթնևտասն հազար, և չորրորդ օրն ութևտասն հազար. և թուեցին մինչև երեքհարիւր հազար, ողք մեռանէին ի յօրն. ի մէջ ձեռացն բուշտ ելանէր և առ ժամայն մեռանէր. մտանէր մարդ ի տունն և տեսանէր զամենեսեան մեռեալ. և նեխեցաւ քաղաքն, զի ոչ կարէին թաղել զմեռեալս, և տարածեցաւ ընդ ամենայն տիեզերս։ Այլ բազում քաղաք անմարդ մընաց. բայց միայն Նամն ապրեցան, զի ապաւինեցան ի գլուխն Յովհաննու Մկրտչի, որ կայր անդ։ Նաշտեցան ընդ միմեանս Յուստինոս և Կոսրով արքայն Պարսից, և ծաղիկն ուխտ քրիստոնէութեան ընդ ամենայն տիեզերս։ Իսկ Ա՝ահան Մամիկոնեան վաղճանեցաւ բարւոք. յետ նորա՝ եկաց Ա՝արդ եղբայր նորա ամս երիս։ Այլ յետ նորա պարսիկք մարզպանք ամս չորս. և ապա Մ՝ժեժ Վնուկն ամս երեսուն և չորս։ Իսկ յետ՝ Ներսեհի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Յով-

1 ՈՕ. ու էր լեալ աստղի նորա. երիցորդ օրն, և այլն։

հանդէս ամն հնգետասան. յաւուրս սորա մանկամահ սատակեալ եղև. սկսեալ յարևմտից և յԱստան Նայոց՝ նշան սքանչելի եղև, զի հուր բորբոքեալ այրէր զապա-րանս համակարկին պարսկի որ վերակացու էր յաշխար-հին: Եթէև ոչ կարէին շիջուցանել՝ ապաւինէին ի խաչն Քրիստոսի, և աղաչէին զպաշտօնեայսն փութալ և տա-նել զնաչն. և իբրև մօտ եղև նշանն փրկական՝ առժա-մայն շիջաւ բոցն, և տեսեալ ամենայնի փառաւորէին զփրկիչն Քրիստոս, և գովէին զՀաւատս քրիստո-նէից. որ և հաւատաց երանելին Մահոժ և վկայու-թեամբ կատարեցաւ ի Քրիստոս: Նոյ յետ Յովհան-նիսի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Մովսէս. յա-ռաջին ամին սորա՝ սուրբն Մանաճիհր որ անուանեցաւ Գրիգոր՝ ազգաւ տաճիկ[1], մարտիրոսութեամբ կատա-րեցաւ:

Նոյ յերրորդ ամին սորա լցեալ լինի ի ծննդենէն Քրիստոսի ամք հինգ հարիւր չիսուն և երեք, և թո-ւականացաւ կանոնք երկերիւրեկին, զոր կարգեաց իմաստասէրն Ընդրէաս եղբայր Մանգնոսի եպիսկոպո-սի, հրամանաւ Կոստանդիանոսի կայսեր, վասն լրմանց զատկաց և այլ ծոմից. զի իբրև լցաւ երկերիւր ամն, լուծին զատկին մարտի քսանևհինգ էր. և սկզբանն՝ ապրիլի չորս. և զի ոչ ի սկիզբն կարացին գնալ, զի յետ քսանևհնգին՝ երեքտասան էր ապրիլի, և ինն լրմունք ի մէջ կային, և այնր աղագաւ սկսան շիջոմել ծոնք և ամենայն արհեստք ծոմարարականք: Այս հայրապետն Յովհաննէս ժողովեաց զիմաստունսն՝ որ էին ի ժամա-նակին, յորս էր և Ստեփանոս ի վանից Սուրբ Կարա-պետին, և կարգեցին Թուական Նայոց՝ որով ուղղեցին զզատիկն Նայոց, և այլովք հանդերձ. բայց ոչ կարա-ցեալ կալ ի Ձիմարտութեան անսխալ զամն լինն: Սակ ի տասներորդ Թուականին՝ Նաս ամն անուն աղեք-սանդրացի, այր կորովի և իմաստուն, իբրև եհաս զայնպիսի շիջոմումն՝ որ յամենայն եկեղեցիս, ձայն ար-կեալ հաւաքեաց զամենայն իմաստունսն՝ որ յամենայն ազգաց. զՍտեփանոս ի Վանից[2], զՎինէնէս ի Նրեւաստա-

1 Ալյլք Ուածիկ ասեն:

2 Տպ. զՍիփան Աւորոց, պնդփ ի Ցոռնոց:

նէ, զՅոհան Ա՛րաբիոյ, և այլ արս երեսուն և վեց իւր նմանիս, և այլ բազմութեամբ. և յառաջ վարեալ զարուեստն Ընդրէասի, հինգ հարիւր երեսուն և երկու այլ՝ ի նոյն դարձաւ. ապա կարգեցին զանտարակուսելի զօրինակն, որ հինգհարիւրեակ անուանի, բազում խնամս և անսխալ գլուխ եդեալ բոլորին զջորս ապրիլն, զի իբրև աւարտի հինգ հարիւր երեսուն և երկու ամն՝ դարձեալ ՚ի նոյն դառնայ: Նա սկսան ուղղիլ տօնք և արուեստք իրողութեան. բայց Որոն ամն՚ի դրան Յուստինոսի (զոր) ոչ կոչեցին՚ի ժողովն, քանզհանս վարկաւ անձին իւրում: Իբրև տարաւ Լոգս խնամատարն զօրինակն առ Թագաւորն, սկսաւ Որոն քննել ըզմասունս հնգեակի և վեցեակի, որ ոչ երբեք լեալ էր. զի հնգեակ և վեցեակ՝ մասունքն են, միոյն արեգական և միւսն լուսնի. այլ նա զհակառակն արար, փոխեաց զապրիլն եօթնևւտասն՝ վեշտասան, և զվեցն՝ ՚ի հինգ. այն վեշտասանն չբերէ ինչ սխալ. այն վեց եղեալ՝ ինսաւն և հինգ՝ կիրակի ածէ մեզ. և այն հինգ՝ նոցա շաբաթի, ըստ Որոնի գործելեացն. և ըստ Հրեայն առնեն զպատիկն, և ՚ի տուրբ ժողովին՝ Աիկիայ անկանին նզովքն, որք օրինադրեցին ոչ առնել զատիկ ընդ խաչահանուսն: Սակ մեք ՚ի միւս կիրակէն տամք և զերծանիմք ՚ի նզովից. զի Հայք ոչ ընկալան զթիւր օրինակն, որպէս և ոչ[1] զժողովն Ալեքսանդրի, ընդ իշխանութեամբ Պարսից գոլով. զի յետ ութ ամի երևեցաւ եղծումն իրացն:

Սակ յետ Սեժեժայ մարզպանք պարսիկք Հայոց տիրեն ամ երեսուն և վեց: Ընդ ժամանակս ընդ այն վաղճանի եպիսկոպոսն Ա՚րտաշ, և եկեալ առ տէր Սովսէս, զի տացէ նոցա եպիսկոպոս, և նա ձեռնադրեալ զոմն փակակալ իւրոյ եկեղեցւոյն Ալիւռն անուն՝ տայ նոցա, Հաւատացեալ ՚ի նա՝ եթէ պահեսցէ զսէր և զմիաբանութիւն առ աթոռ սրբոյն Կրիկորի. զի մինչև ցայսվայր ՚ի Հայոց առնուին Ա՚ իրք ձեռնադրութիւն: Ա՚յս Ալիւռն յետ վաղճանելոյն Սովսէսի՚ ՚ի բաց քեցեաւ ՚ի դաւանութենէ ուղղափառ Հաւատոյ (!) Կրիտոսի, և զՔաղկեդոնի դաւանութիւն խոստովանե-

1 Ոչ ամենևքեին այդպէս ծանեան զթիւր և զուղիղ:

ցաւ. զի՛ի մանկութենէ խանդեալ էր յաշխարհին Յունաց՝ յաղանդն (!), և՛ի ծածուկ ունէր զչարութիւնն որպէս հուր ընդ յարդիւ թագուցեալ, բայց ոչ իշխէր յայտնել՛ի կենդանութեան Ա՛ովսէփայ։ Երեսուն ամ կալեալ զհայրապետութիւնն տէր Ա՛ովսէփ՝ վաղճանի, և տայ զտեղապահութիւնն աթոռոյն՛ի Ա՛րթանէս քեռիմողն։ Իբրև ետես զթերութիւնն Կիւրիոնի Ա՛ովսէփ Յուրտասայ[1] եպիսկոպոսն, ազգ առնէ Ա՛րթանիսի, զի թերևս կարասցէ օգնել ինչ մերբեալ մնացն Կիւրոնի. առ որ բազում անգամ գրեաց աղաչանօք՛ի բաց կալ յանհանձար աղանդէն. իսկ ոչ միայն թէ ոչ հաւանեցաւ գրելոյն, այլ և հալածեաց զՅովսէփ եպիսկոպոսն։ Իբրև յաջորդեաց յետ Յովսէփայ տէր Ա՛բրահամ՛ի կաթուղիկոսութեան աթոռ, նոյնպէս և նա գրեաց երկիցս և երիցս թուղթ յիշեցուցանելով նմա զթիւրութիւնն. իսկ Կիւրոն պատճառեր ոչ այլ ինչ խորհել բայց զոր նոքայն խորհին, և առեր զՅովսէփ զրպարտող նորին։ Իսկ իբրև ասացաւ ժողովք քննութեան լինել և տեսանել վասն այնր, յայտնապէս խոստովանեցաւ Կիւրիոն զդաւանութիւն Կաղկեդոնի։ Յայնժամ իբրև ետես Ա՛բրահամ թէ ոչինչ օգտեցաւ այլ առաւել յանառնութիւն եկն, յայնժամ գրեաց թուղթ շրջաբերական առ վիճակեալսն իւր, զի մի ամենևին հաղորդեսցին ընդ Ա՛իրս եկեղեցեաւ կամ ուխտիւ կամ ամուսնութեամբ կամ այլ ինչ հոգևորական իրօք, բայց՛ի վաճառէ իմեքէ որպէս՛ի հեթանոսաց. զի մի մարմնաւոր ծանօթութեամբ՛ի հոգևոր ջնասս ընկղմեսցին. և յայնմհետէ բարձաւ ձեռնադրութիւն Ա՛րթայ որ՛ի Նայոց, զի սկսան նոքա ըզՅունօք թևակոխել։ Զայս ամենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ա՛խտանէս եպիսկոպոսն. զի նա զամենայն լուսով գրեաց զթուղթն և զպատասխանիսն և զքաջախօսութիւնն Պետրոսի եպիսկոպոսին, որ պատգամաւոր էր տեառն Ա՛բրահամու առ Կիւրիոն. զոր Ա՛իրք վասն համարձակութեան նորա՝ Պայլ կոչեցին զնա։

Յետ Յուստինոսի, այր չար և պիղծ որ զբազում

1 ՕՕ. Յրպովայ։

սպան յուղղափառացն, որ և ինքն և պատրիարգն Յո-
հան այսահարեալք մոլեգնէին, և այնպէս սատակեցան[1].
և ապա Թագաւորեաց Տիբեր, և յետ նորա Ա՛ուրիկ.
զսա ասեն՝ի Հայոց յՕշական գեղջէ, և այլք թէ՝ի
Տարօնոյ. աղքատութեամբ աղագաւ երթեալ՝ի Կոս-
տանդինուպօլիս, և անդ՝ի դիպուածէ իմեքէ բարեբախ-
տիկ եղեալ Թագաւորեաց այսպիսի պատճառաւ: Ել
եղև մեռանել Տիբերի կայսեր, և մեծամեծք ընդ մի-
մեանս հակառակեալք ոչ հնազանդելով միմեանց, և
էր մարտ անհնարին՝ի մէջ նոցա, որպէս թէ ո՛ չաղ-
թիցէ և Թագաւորեսցէ. և պատրիարգն՝ի մէջ ան-
ցեալ համոզեաց զնոսա արկանել վիճակս, և ում հա-
սանիցէ՝ նմա ունել զԹագաւորութիւնն, և այլոցն հնա-
զանդել, և զայս երդմամբ ամենեցուն մուրհակաւ. և
էր վիճակն այսպիսի: Ընդ լուսանալն բանալ զաւագ
դուռն քաղաքին, և զայր որ պատահեսցի անդ, թէ-
պէտ և կարի յանարգացն իցէ, ածել՝ի պալատն ար-
քունի, և իշխանացն նստիլ՝ի միասին, և յոյր[2]՝ի գլու-
խըն դնիցէ զԹագն՝ նմա լինել Թագաւոր. հաւանեցան
ամենեքեան և դադարեցին՝ի խռովութենէ: Ել իբրև
եհաս ժամն ժամադրեալ, բացեալ զքաղաքին դուռն,
և տեսեալ զԱ՛ուրիկ առ դրան, ցօղուն ինչ առ՝ի վա-
ճառել և ընուլ զպէտս իւր. և յափշտակեալ զնա զօրա-
կանաց տարան՝ի բաղանիս, և լուացեալ զնա զգեցու-
ցին նմա հանդերձս ազնիւս, և տարան զնա յարքու-
նիսն: Ել իբրև ասացին նմա վասն որոյ կոչեցաւ, և նա
պահանջեաց՝ի նոցանէ գիրս և երդմունս, զի մի սպան-
ցեն զնա մինացեալքն՝ի Թագէն, և նոքա երդուան նմա
սատակ, զի անհոգ լիցի յայնմանէ. բազմեալ էին ա-
մենեքեան անոտի յուսով, և իւրաքանչիւր ոք անձին
իւրում ասէր՝ Թէ լիցի. կայր աԹոռն և Թագ՝ի վե-
րայ նորա, և կօչիկքն հուպ առ նմին: Ընդ Ա՛օրիկն՝ի
մէջ և առ զԹագն՝ի ձեռն իւր, և սկսաւ շրջել ընդ
բազմեալսն. իբրև եկն առաջինն՝ ուրախացաւ նա, բայց
տրտմեցաւ երկրորդն. և իբրև եՀաղ զնա՝ կալաւ տըրտ-
մութիւն զնա, և զընկերս նորա ուրախութիւն, և այս-

1 Ըստ կարծեաց հակառակո-
դաց իւրեանց:

2 Ա՛Օ. խե. Բ. Գ. ոը:

պէս ըստ կարգի երկիցս և երիցս շրջեցաւնա, տրտմե-
ցոյց զնոսա և ուրախացոյց։ Ընդ նստաւնա՝ի վերայ ա-
թոռոյն և եդ գլխազն՝ի գլուխ իւր, և տեսեալ ամե-
նեցուն սխրացան[1]։ Այլ զի երդուեալ էին նմա թէ
յոյր և դիցես գլուխն՝ մեք հնազանդիմք նմա, թոյլ
ետուն նմա։ Ա՝ատուցեալ պատրիարքն ագոյց զկօշկիկ
յոտս նորա, և երկիր եպագ. նոյնպէս և ամենայն մե-
ծամեծքն երկրպագին նմա և ասեն. Կեցցէ արքայ Ա՝օ-
րիկ։ Ա՝ա արար ժողով Վ՝ասիլեւսնին վասն դաւանու-
թեան. կոչեաց և զվարդապետս Հայոց, և չոգան Ա՝ը-
թանէս և Վ՝րիգոր, և այլ վարդապետք, և ոչ ինչ օգ-
տեցուցեալ զՀոյնսն՝ դարձան նզովելով։ Ո՝ւ սա ապաս-
տանեալ նախարարաց Հայոց՝ փախուցեալք՝ի տերու-
թենէն Պարսից. իսկ սա անմարդն բարս ցուցեալ, ոչ
եթէ ընդարձակեաց նոցա, այլ և զկարգեալ ռաձիկան
յառաջինն թագաւորացն արգել՝ի նոցանէ։ Ա՝յսեն զսը-
մանէ թէ առաքեաց առ Հայրն իւր թողուլ զպանդխտ-
ութիւնն և գալ վայելել զփառս նորա, և թէ ոչ՝
խրատ առաքել նմա, որով կարասցէ վարել զթագաւո-
րութիւնն. և երթեալ սպասաւորացն՝ գտին զնա զի դար-
մաներ զպարտէզն, և ասացին նմա զՀրաման թագաւո-
րին։ Ա՝յս պատասխանի ետ և ասէ. Ա՝թագաւորի Հայր
ես ոչ վայելեմ. և ինքն սկսաւ զմեծամեծ կաղամբան՝
որ՝ի պարտիզն անդ՝ արմատախիլ առնել, կտրել զգը-
լուխս և ծածկել ընդ հողով, և զմանուսն փայփայել
և յօրինել. և արանցն տեսեալ զայն համարեցան զնա
բախած, թողեալ զնա՝ի բաց գնացին, իսկ զոր ինչ ա-
բար նա՝ զայն ոչ գիտացին։ Ա՝ւ գնացեալ առ թագա-
ւորն պատմեցին զամենայն, և զյիմարութիւնն զոր գոր-
ծեաց՝ի պարտիզին։ Իսկ Ա՝օրիկ լըսեալ լուաւ ծիծա-
ղեցաւ, և ոչ ինչ յայտնեաց, և կալեալ զմեծամեծս՝
զոր կարծէր թէ սատան են թագաւորութեան իւրոյ,
եբարձ զամենեսեան, զի մի դաւ ինչ լինիցի, և զփո-
քունն՝ի տեղիս նոցա կարգեաց. և կոչեցեալ զարան
զայնոսիկ զոր առաքեաց առ Հայրն, ասէ ցնոսա. Ա՝յս
էր խրատ Հօրս իմոյ՝ զոր արար՝ի պարտիզին, և դուք
ոչ իմանայիք։ Ա՝կսք ասեն զսա Ա՝լփաստուս զեղջէ Կա-

1 Բ Օ. փխրեան։

պատուիրեցաւոց, զոր յետոյ քաղաք չինեաց զօրաւարն Տիբերի։ Նայց Աւրիկ վասն խստութեան բարուց իւրոց աղգաւ և որդւովք ողորմատես մահուամբ կորնչի՝ յիւրոյ զօրաց, քանզի յարեան ի վերայ նորա զօրքն իւր՝ որոց առաջնորդեր Փոկաս, որ Թարգմանի Հուր [1], և սպան զնա, և ինքն Թագաւորեաց ընդ նորա։—Ի յետ Աւրիկի Պարսից արքայի՝ Թագաւորէ Խոսրով Ձեռընտուութեամբ Աւրկայ։

Ընդանօր Ամբատ Նագրատունի բազում մարտս յաղթութեաներ առաւել քաջութեամբ առ Թշնամիսն Խոսրովայ. վասն որոյ պատուեալ զԱմբատ՝ նմա տայ զմարզպանութիւն Աղբկան աշխարհին. և նա երթեալ գտանէ աղգս գերեալս ի Հայոց՝ անդ, որ Ասպաստանն կոչի, մռայեալ զերզուն. զոր նորոգեալ Ամբատայ, և զՀաբէլ զոմն եպիսկոպոս տայ ձեռնադրել կաթողիկոսին Հայոց, և կացոյց վիճակս յաթոռ սրբոյն Գրիգորի։ Ի տանեերորդ ամի տեառն Աբրահամու, և յերեսներորդ եօթնեերորդ Թուականին Հայոց եկին ի Հայս ասորիք արք քաջաբան, և կամէին սերմանել զաղանդն Նեստորի. և նզովեալ հալածեցին։ Նայց ոմանք ընկալան, և նոքա Թարգմանեցին զնոցա սուտ գիրս [2], զԳորտոսակ, զԱիրակոսակ, զՊօղոսի տեսիլն, զԴամայ ապաշխարութիւնն, զՏիադեկ մանկութիւն տեառն, և զԲիոս և զՆոյեան օրհնութեան, և զանթաքչելի մատեանս, և աւետարանի մեկնութիւն զԱնեայ. և որ հաւատայ նոցա՝ նզովի յաղղափառացն։

Ի յետ տեառն Աբրահամու առնու զկաթողիկոսութիւնն տէր Յովհաննէս ի Կոգովտէ, ի գեղջէ Նարարանէ, ամն քսան և վեց։ Ումանք ի պատմագրաց գերկոսեան ի միում աւուր ասեն վաղճանեալ, զԱբրահամ և զՅովհաննէս, և կէսք ոչ։—Նակ Խոսրով Պարսից արքայն իբրև լուաւ զմահն Աւրկայ՝ վրէժխնդիր եղև Աւրկայ, զի դաշնադիրք էին միմեանց, և բազում դառնաւս աւերեաց Յունաց։ Ընդաքէ և զՍոռիան զօրավարն իւր ի Պաղեստինէ, որ երթեալ պաշարեաց զքաղաքն Երուսաղէմ, առ զնա և կոտորեաց զբնակիչս նորա։ Գերեաց և զխաչն Քրիստոսի, և տա-

1 Ըստ լատին լեզուի Focus. 2 Ոչք անծանօթ են առ ի մէնջ։

րաւ զնա ՚ի Պարս. և գնաց բազում զօրօք ՚ի վերայ Թագաւորին Հերակլայ և ՚ի նեղ արկ զԹագաւորանիստ քաղաքն Կոստանդինուպոլիս։ Իսկ Հերակլ կայսրն ձեռնտուութեամբ Աստուածոյ Աստղաց Թագաւորի զբնաց յաշխարհն Պարսից, սպան զԱստղոսրով. դարձոյց և զսուրբ խաչն և առաքեաց յԵրուսաղէմ։ Ո՛այս Աստքանս ծաղը արարին քնակիչք Տփխեաց, և առեալ զբդեամ մի նկարեցին զպատկերն Աստքանայ ՚ի վերայ նոքա՝ կոյր, որպէս թէ աչք նոցա նեղ են և փոքր. եդեալ զդրմին ՚ի վերայ պարսպին հանդէպ նորա, սկսան նետաձիգ առնել. իսկ նորա տեսեալ զայն՝ բարկացաւ յոյժ, բայց զի ժամանակն ձմեռնային էր, ոչինչ կարաց հատուցանել. բայց ՚ի գալ գարնան եկեալ պաշարեաց զնա. և առեալ զքաղաքն հրամայեաց կոտորել զարս և զկանայս նաև զմանկտի, և առեալ զաւար ՚ի քաղաքն և զինչան, գնաց յաշխարհն իւր։ Իսկ յետ սպանման մարզպանացն Ա՛ինր-Խուզենայ, Ա՛ինր-Ա ընասպ Աուհենայ, Ա՛ինր-Ա զոյժ Ա՛ինրանայ[1], և այլ տաճկատանաց, Գաւիթ Աահառունի մարզպան լեալ ամն եւթեսուն, յաւուրս սորա ՚ի վաթսուն և երկու Թուականին՝ եղև շինուած կաթուղիկէին Ա՛րեանոյ։

Յետ տէր Յովհաննիսի՝ առնու զկաթողիկոսութիւնն տէր Աոմիտաս ամն ուԹ։ Ա՛ա շինեաց զսուրբ տիկնոջն Հռիփսիմեայ զվկայարանն պայծառ և հրաշալի, զի խրթին էր առաջին շինուածն. գտանէ ՚ի նմա զնշխարս սրբոց, կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյն Աահակայ, և ոչ իշխեաց քանալ, այլ իւրով մատանեաւ կնքեալ ամփոփէ անդէն, արարեալ զերդս շարականաց հայերէն այբբենիւք, որոյ սկիզբն է այս. Ո՛ՅՆՈՎ ՆՈՒԷՐԱՉ ՍԷՐՅՆ Ա՛ՐԻՈՊՈՍԻ։ — Յետ Աստրովու Պարսից արքայի՝ առնու զԹագաւորութիւնն Կաւատ. սա արձակեաց ՚ի գերութենէ զԱ՛ետ Հայր Նորա. և յետ Կաւատայ Ա՛ռտաշիր, և ապա Աուռեամ Հրամանաւ Հռաքակլի, և ապա Աոսրով, և յետ Նորա Ա՛որն և Ո՛ազ-

1 Ոչ յիշի յայլոց մի քան միոյէ երէք Ա՛ինր, այլ Բուրզան իբր Ա՛ինրան ամաւ յառաջ քան զՎինր Վչնասպ Սուրէն, և Ա՛ինրան Ա՛ինր Վզոն իբր տասն ամաւ յետոյ քան զսա։

մանդուխտ[1]. սոքա ամենեքեան սակաւակեացք. և ա-
պա Յաղկերտ:

Իսկ յետ տեառն Կոմիտասայ առնու զկաթուղիկո-
սութիւնն տէր Ներսիսափոր, ամս երկու. և ապա Նզը՝
ամս տասն: Իսկ Ներսիկ կայսեր եկեալ ի Կարնոյ քա-
ղաքն՝ ժողով արարեալ կոչէ և զՆզը կաթուղիկոս
Նայոց. իսկ նա ոչ տարաւ ընդ իւր զարս խմաստունս,
մանաւանդ զՅովհաննէս վարդապետն Մայրավանեցի,
որ յոյժ տեղեակ էր աստուածային գրոց. երթեալ հա-
ւանի աղանդոյն (!) Քաղկեդոնի. և տայ նմա պարգևս
կայսրն զերիր մանն Կողբայ և զաղահանան[2] բովանդակ. և
եկեալ ի Նայս փոխեաց զամենայն ուղղափառ կարգա-
ւորութիւնս եկեղեցւոյ և զընթերցուածս Յակոբայ և
Կիւրղի. փոխանակ այնորիկ զԼուսաւորչէն եդեալ, զոր
յանդիմանեաց սուրբ վարդապետն Յոհան, եթէ Ին-
դէր տգիտաբար հաւանեալ եղեր և լուծեր զբարինք
կարգաւորութիւնս՝ որ'ի սրբոյն Կիրիպորէ մինչև ցայսօր
պահեալ էր յաղգիս Նայոց: Իսկ Նզը փոխանակ զըղ-
ջանալոյ հալածեաց զսուրբն անարգանօք Մայրագոմե-
ցի կոչելով զնա: Իսկ մի ոմն յաշակերտացն Յոհաննու՝
Սարգիս անուն՝ հերձուածս յարոյց. և Նզը համբա-
ւեաց թէ Յոհաննու է հերձուածս, և գիրս շարադրեաց,
և ընդ այլ հերձուածողաց բանս եդեալ, զբանս աշա-
կերտի նորա Յոհաննու վերադրելով. զոր մի ոք իշխես-
ցէ բամբասել զսուրբն: Նա երթեալ Յովհաննու ընտ-
րեաց իւր տեղի լուսաթեան'ի կողմանս Վասպուրական Ներ-
ղոյ, և անդ դադարեալ՝ հանապազ ընդ Մ:ստուծոյ խօ-
սելով, եղոյց Մ:ստուած[3] մեծամեծ սքանչելիս՝ վկայ լի-
նել սրբութեան նորա. զի էր նորա էշ մի՝ որ սպասա-
ւորէր զպէտս նոցա, պատահեաց նմա արջ մի և եկեր
զնա. և իբրև առացին Յոհաննու՝ երթեալ ասէ ցարջն.
Որովհետև սպաներ զսպասաւորն մեր, արդ փոխանակ
նորա դու սպասաւորեա մեզ: Նա երթեալ արջուն սպա-
սաւորէր ամենայն հնազանդութեամբ'ի բեռնակրու-
թիւնս և յամենայն ինչ, ամս բազումս: Նա յետ ժա-

1 Վ. 62:
2 ՕՕ. պաղանդան:
3 Թերևս վայելուչք էին Մայ-
րագոմեցւոյդ սպասաւորութիւն-
կամ ընկերութիւն իշոյ և արջոյ,
բայց յոյժ անվայել հրաշիցդ կար-
ծիս և պատճառ:

մանակաց պատահեալ որսորդաց սպանին զարջն, կալ-
ծելով զնա վայրենի. և իբրև տեսին եղբարք վանիցն՝
ընկեցին զնա ի խորափիտ մի, և մինչև ցայսօր քնակիչք
վայրացն երթան և առնուն հող ի տեղւոջէն յորում
թաղեցաւ արջն, և լինի դեղ ամենայն ցաւոց անաս-
նոց, աղօթիւքն Յովհաննու. նոյնպէս և գերեզմանն որը-
բոյն դեղ է ամենայն ցաւոց որք հաւատով ապաւինին
յաղօթս սրբոյն:

Յետ Նաւթի Ահատունեաց լինի մարզպան Այոց
Ներսեհոդոտոս Աշտունի, ամս քսան և հինգ. և յետ Ներ-
սեհի կայսեր թագաւորէ որդի նորա Կոստանդին: Ասէ
իբրև լցաւ ի ծննդենէն Քրիստոսի ամք վեց հարիւր
և ութեւտասն, և Այոց թուականին վաթսուն և
եօթն, յայտնեցաւ ոմն .... մարգարէ հեթանոսաց,
աղանդեալ ի Մերինթոսէ և յարիանոսաց, Մահմէտ
անուն, իսմայելացի ազգաւ, յորդւոցն Ագարու. սա
մինչդեռ վաճառականութեան ազգաւ երթայր Ա-
գիպտոս, հանդիպեցաւ միայնակեցի միոջ որում ա-
նուն էր Արգիս Եխիրա, արիանոս աղանդով, յանա-
պատին Ամինեայ: Ա՛ա ուսոյց Մահմետ զ.... աստուա-
ծաճանօթութիւն, գովեաց նմա զհին օրէնս, զտուեալն
ի Մովսիսէ, և ասաց. Ծե՛ւ լուիցես բանիւ իմով՝ լինիս
առաջնորդ և օրէնսդիր ի վերայ ազգին քո. և գնա-
ցեալ Մահմէտ զձանապարհս իւր, յանկարծակի ե-
մուտ ի նա ոգի ...., և անկեալ փրփրեցաւ, և ընկե-
րայ նորա տեսեալ զայն՝ կացին առ նմա մինչև սակաւ
մի ուշաբերեցաւ, և ապա յարուցին զնա. Հարցեալ ըզ-
պատճառս այնպիսւոյ ....., ասէր ի հրեշտա-
կէ սրբոյ լինել զայն, և յղել զնա պատգամաւոր յաղգն
իւր: Ա՛ւ երթեալ ի քաղաքն իւր սկսաւ քարոզել զոր
ուսոյց նմա տուտ քրիստոնեայն. էին նմա հօրեղբարք
գլխաւորք, նոքա հալածեցին զնա սպառնալեալ նմա մա-
հուամբ, եթէ այլ այնպիսի ինչ բան լսիցեն ի նմանէ.
և նա երթեալ ի տան իւր նստէր տրտում. և մտեալ
Ա՛լի՝ որ էր նորա հօրեղբօր որդի և փեսայ, և հարցեալ
զպատճառս տրտմութեան, և նա ասաց. Ա՛ա ան զի զ՛ա-
տուած քարոզեցի նոցա, սպառնացան մահու ինձ. և
ասէ Ա՛լի. Ա՛յդ երթիցուք և դարձեալ քարոզեսցուք,
և թէ ընդդէմ դառնան մեզ՝ սպանցուք զնոսա սրով.

զի այր զօրաւոր էր Ա՛ղի, և արք զօրաւորք ընդ նմա։ Եւ իբրև սկսան քարոզել՝ եղև խռովութիւն յոյժ և պատերազմ, և պարտեցաւ կողմն Մա՛ահմետի, և փախըստեայ գնացին՝ ի փոքր Մա՛ադիամ [1], ուր էին ժողովեալ Հրէայք երկոտասան հազար, զոր հալածեալ էր Կոստանդին կայսեր. և առեալ զնոսա Մա՛ահմետայ՝ դայ՝ ի վերայ նոցա՝ որք հալածեցին զնա, և կոտորէ զնոսա։ Իբրև տեսին Հրէայքն զյաջողուած գործոցն, կացուցին զնա իւրեանց առաջնորդ. յարեցան՝ ի նոսա և այլ Մա՛ադիանացիք, և եղեն բանակ մեծ. չոգան՝ ի վերայ Պաղեստինի, հարին զգօրս Հռոմոց՝ որք յափշտակեցին զինչս վաճառականաց նոցա։ Իբրև տեսին զյաղթութիւնն՝ չոգան՝ ի վերայ տէրութեան Պարսից, և սպանին զՅազկերտ թագաւորն, և դադարեաց Պարսից թագաւորութիւնն։ — Ո՛յսու ժամանակաւ խաւարեցաւ կէս արեգակն, յարեգ աշնան ամիսն, մինչև՝ ի քաղց ամիսն։ — Ա՛պա արձակեցին զգօրս յերից կողմանս, մի՝ ի Հռոմ՝ Յազ [2] անուն, և խրատատու Յովել անուն, որք կոտորեցին՝ ի Հռոմոց եօթանասուն հազար. և՝ ի Պարսից կողմն արձակեցին զԱ՛ղիմանն ամիրայ և զՄա՛ահէ զօրավար. նոքա հարին զՄ՛իհրդատ [3] քան հազարաւ, և զՄ՛ուշեղ սպարապետն Հայոց, և տիրեցին բոլոր աշխարհին Հայոց, Պարսից և Վրաց, Եգիպտացւոց, Մա՛րաց և Պարթևաց. և սկսան շրջել զՀաւատս նոցա, և նոքա ոչ հաւանեցան։

Իսկ Մա՛ադիանացիք և հաւանեալք նոցա՝ խնդրեցին օրէնս՝ ի Մա՛ահմետէ, և նա ետ նոցա օրէնս . . . . . ։ Ա՛յս եղև օրէնսդիր պատգամաբեր սմա եօթն . . . . [4]։ Եւ կոտորեցին զՎ՛ենունիս, զՎ՛ղիմիա և զՏարօն. և Մա՛ահմետ այս արգել զսուրն, և բանիւ խրատու նորա զմեծ մասն տիեզերաց հնազանդեցուցին. և անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս՝ համաձակութեամբ ունել զքրիստոնէութիւն, և վաճառեաց նոցա զՀաւատս նոցա յամենայն տանէ առեալ չորս

1 Ջմէհինէ ասէ։

2 Որ է Եյատ կամ Իմատ Իսմաղանէմ, և կամ Եղիա որդի Էսդու Սօֆիանայ։

3 Թուի պարսիկ կուսակալն՝ ի Ռագաւ։

4 Ամենայն ՕՕ. որպէս և տպագիրն Մոսկուայ Թուին պակասել յայսմ տեղւոջ։

պրամ, և երեք մղի խորքալ՝ որ է ցորեան, և ձիատոպրակ մի, և պարան մի մազէ, և ձեռնարար մի։ Ասկ՚ի քահանայիկ և յազատաց և՚ի հեծելոց ոչ հրամայեաց առնուլ զՀարկն. և՚ի տիրելն աշխարհաց կոչեցան Ա՛միրմումինիք։ Եւ յետ քսան ամին Ա՛ահմետայ՝ կալան զիշխանութիւնն Համայելի Ա՛պու–Պաքր, ( )թման, և Ա՛մր, ամս երեսուն և ութ։

Յետ Աղրի առնու զկաթուղիկոսութիւնն տէր Ներսէս ամս քսան։ Ա՛ա շինեաց զվկայարան սրբոյն Սարգսի՝ որ՚ի Գումին, և՚ի կոտորելն Համայելի զքաղաքն Գումին, երկոտասան հազար, և արեամբ կոտորելոցն ծածկեցաւ սուրբ սեղանն և աւազանն, և զայլսն գերեցին աւելի քան զերեսուն և հինգ հազար. և զոսկերսն սպանելոցն ամփոփեաց սուրբ Հայրապետն՚ի նոյն վկայարանի. և զվիրապն սրբոյն Գրիգորի շինեաց. և շինեաց զսուրբն Գրիգոր զարմացուցիչն տեսողաց, որ յետոյ աւերեցաւ՚ի Տաճկացն։ Ա՛ւ սա եկեալ Ա՛ղուանոց ուղղափառաց՝ խնդրեին՚ի սմանէ եպիսկոպոս. և նա պահանջեաց՚ի նոցանէ գրով խոստովանութիւն հաւատոյ՝ որ՚ի Հայր և Յաղի և սուրբ Հոգին. ՚ի Հայր՝ որոյ հայրութիւնն անհասանելի է, և Յաղի՝ որոյ ծնեալութիւնն անբաժանելի է, և՚ի սուրբ Հոգին՝ որ՚ի Հօրէ ելանէ և ընդ Հօր և ընդ Որդւոյ երկրպագի և փառաւորի. զոր և կցորդ արարեալ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս Հայոց՝ յաւուր Ճրագալուցի յայտնութեան տեառն. և ապա ձեռնադրեցին զԱ՛ղիսոյ եպիսկոպոսն։ Ա՛եպ եղև սմա աշխարհաժողով բազմութեք՚ի տօնին Ա՛ղուանից լինել՚ի Ա՛ադուան. և բազմացեալ էր երգ շարականաց յեկեղեցիս Հայոց, մինչև ոչ գիտել միոյ գաւառի զերգս միւսոյն. և ասաց մի դասն[1] շարական՚ի Ա՛ղուանից հարցն, և միւս դասն ոչ կարաց փոխել զնա, և փոխեցին բազում շարականս, և զայն ևս ոչ գիտէին։ Ա՛պա Հայրապետն Ա՛ղուանից հաւանութեամբ ժողովոյն ընտրեաց[2] զպիտանին և զօգտակարն, զի յամենայն եկեղեցիս ամենայն օր մի պաշտօն լինի ըստ աւուրն խորհրդոյ. և ընտրեցին զարս իմաստունս զի շրջեսցին ընդ ամենայն աշխարհս Հայոց,

1 Ձեռ Յ՚ՕՕ· մի դասն։ 2 ՕՕ· ընտրեցին զՀայրապետն։

և զնոյն կարգաւորութիւն հաստատեսցեն, որ ե մինչև
յայսօր։

Յետ Յովհաննու եկաց մարզպան Նոյոց՝ Նամազասպ, ամս եօթն. և յետ Ներսէհի առնու զկաթողիկոսութիւնն տէր Ներսես, ամս վեց։ Ա կոչեաց առ ինքն զմեծ վարդապետն Ներսիա ի Շ Լրակ գաւառէ, այր բանիբուն և հանճարեղ, գիտող յոյժ ամենայն տօմարական արուեստից. զի կարգեսցեն անշարժ տօմար Նոյոց, ոտպէս և այլոց ազգաց, զոր արարեալ մեծաւ ջանիւ, և մինչ կամէին ժողով հաստատել՝ վաղճանի տուրբն Ներսես. անփոյթ եղեալ իրն զկնի եկելոց, այլ առաջինն կարգաւ վարէին։ Ի հինգ ամին Ներսեսեայ եղև շինուած կաթուղիկէին յաւանն Երուձ, զոր շինեաց Գրիգոր պատրիկն, յորում մկրտի նահատակն Քրիստոսի Գաւիթ ազգաւ պարսիկ, որ յառաջն Մուրհան կոչէր, և վասն վկայութեանն Քրիստոսի կախեցաւ զփայտէ ի Գառնի։ Յետ Նամազասպայ եղև մարզպան Նոյոց Գրիգոր Մամիկոնեան ամս տասն. զոր սպանին Խազրիք։ Ած Ներսեհ շիրակացի եկաց իշխան ամս երիս։ Զկնի Ներսեհայ եկաց կաթուղիկոս տէր Իսրայէլ, ամս վեց. և ապա տէր Մահակ, ամս քսան և վեց։ Ա չոգաւ դեսպանութեան աղագաւ առ Մահմետ զօրավարն Իսմայելի, որ գայր ի կոտորել զազգս Նոյոց վասն ապստամբութեան ի Տաճկաց, և հասեալ ի Խառան հիւանդացաւ յոյժ, որ և մեռաւ իսկ. և դեռ չև ևս էր եկեալ Մահմետ ի Խառան, գրեաց գիր պաղատանաց եթէ Գկի ես ընդ առաջ քո աղաչել զքեզ վասն ազգին իմոյ, և ոչ ժամանեցի տեսութեան քո. որ ամենեցուն շտեմարանապետն ե՝ կոչեաց զնա։ Ընդ երդումն տամ քեզ յուխտադրութիւնն Աստուծոյ՝ որ առ Աբրահամ, և առ Իսմայել հայրն ձեր, զի մի ինչ չար արասցես ազգին իմոյ, և հարկեսցեն ձեզ. եթէ լուիցես աղաչանաց իմոց՝ եկեսցեն ի վերայ քո օրհնութիւնք իմ. իսկ եթէ ոչ լուիցես՝ անէծք ժամանեսցեն քեզ, և դարձուսցէ Աստուած զսիրտ զօրացդ քոյ՝ ոչ առնել զկնան քո. յայս երկուցս զմինն ընկալ։ Ան իբրև եկն Մահմետ ի Խառան՝ ասացին նմա զամենայն և ետուն նմա զթուղթն. և իբրև ընթերցաւ, եհարց թէ ո՞ւր իցէ

պերեզմանն նորա, և ցուցին նմա զտեղին, զի առ ժամայն էր վաղձանեալ. և երթեալ վաղվաղակի ըստ դենին իւրեանց՝ ողջոյն ետ մեռելոյն իբրև կենդանւոյ. և ասէն եթէ մեռեալ մարմինն պատասխանի ետ և ընկալաւ զողջոյնն իբրև զկենդանի. և ասէ Մահմետ. Ի գրոյ քումմէ ծանեայ զքեզ, ով այրդ Աստուծոյ. արդ արարից և կատարեցից զամենայն կամս քո: Եւ վաղվաղակի ելոյծ զնշանաւորութիւնն, և ոստիկանս առաքեաց Հայոց, հարկ եդեալ՝ի վերայ նոցա. և ինքն դարձաւ յաշխարհն իւր:

Եւ յետ Մահակայ առնու զկաթուղիկոսութիւնն՝ տէր Աղիա: Իսկ յետ Հերակլայ առնու զթագն որդի նորա Կոստանդին: Ի սորա աւուրս եղև յարձակումն Իսմայելի ընդ ամենայն աշխարհս: Եւ յետ նորա որդին իւր Համանուն հօրն: Իսկ զնշանաւորութիւնն Իսմայելի յետ Աբու–Պաքրայ, Օթմանայ և Օմարայ՝ առնու Մաւիէ: Իսկ զմարզպանութիւն Հայոց յետ Ներսեհի առնու Աշոտ ամն երիս, և սպանաւ՝ի Ցաճկաց. և յետ նորա Ներսեհ Կամսարական ամն երիս. և յետ նորա Սմբատն Բագրատունի Տիւրատեան[1] ամն քսան: Սա պատերազմեցաւ ընդ զօրս այլազգեաց՝ի Մարդանակերտն աւանի, և յաղթեաց քաջութեամբ՝ի Բագրեւանդ գաւառի: Յերեքտասան ամի սորա Մահմետ զծոռն Ղեղամայ արձակեաց, և առ զԱևան. և՝ի վեշտասան ամին սորա Կասմ[2] ամիրայ զիշխանսն Ա աւսպուրականի կոտորեաց: Եւ յետ Կոստանդի Թագաւորեաց Յուստինոս՝ի վերայ սորա յարեան նախարարք իւր և Հատին զքրիստոս նորա, և փախեաւ՝ի Կաղզուս. և առեալ անտի իւր կին և զորս բազումս, և գայ դարձեալ Թագաւորէ: Եւ յետ նորա առնու զթագն Լևոն, և յետ նորա Փխիմերոս, և յետ նորա Յուստինիանոս, և յետնորա Լևոն: Եւ զիշխանութիւնն Իսմայելի՝ յետ Մաւեայ առնու Ուղիտ, և յետոյ Ուրուան, և յետ նորա Աբդելմելիք. սա է[3] որ այրեաց զիշխանսն Հայոց՝ի Նախջուանի եկեղեցւոջ. և սպա որդի նորա Վլիթ. և սպա Սուլէյման. սա զՀարքանտ եհան, և

1 ՕՕ· Բխոբիպան:
2 ՕՕ· Կայ կամ Կամ:
3 Ցաւուրս սորա հրամանաւ Մահմէտի ոստիկանի եղև այրուիլն

հրամայեաց քակել զպարիսպն. և մինչդեռ քակէին գտին քար մի՝ յորում գրեալ էր. Այս Մանկոն[1] կայսր շինեցի զքաղաքս զայս յիմոյ գանձուց. ի վերջին աւուրս քակեացն սա յորդւոցն Իսմայէլի, և յիւրոց գանձուց շինեցան։ Եւ իբրև տեսին զքարն գադարեցին, և շինելոյ սկիզբն արարին։ Եւ զկնի Մուլեմանայ առնու զիշխանութիւնն Ումառ. սա գրեաց առ Հեռն կայսր տեղեկանալ վասն քրիստոնէութեան և նոցին ուսմանց. և կայսրն գրէ պատասխանի լի իմաստութեամբ, կարի ձաղելով զօրէնս նոցա. և իբրև կարդաց Ումառ՝ ամէնեցայ զամենին մեծ, և սկսաւ զգարշելիսն ի բաց հանել յօրինաց իւրեանց. Թէպէտ ոչ համարձակեցաւ եղծանել զամենայն, սակայն բազում ինչ ուղղեաց յանկարգից, և այնուհետև բարեմտութեամբ կայր առ ամենայն քրիստոնեայս, և առաւել առ ազգս Հայոց. և հրամայեաց գերելոցն դարձ առնել յաշխարհն իւրեանց։ Յորում ժամանակի նահատակեցաւ Աստան Պողեան տէրն ի Շամ Հէշմայ[2]. քանզի յետ Ումառայ առ զիշխանութիւնն Ուլիտ, և ապա Շամ, և ապա Ալ Ղլէթ, և ապա յետ նորա Ալվան։

Ասկ զկնի տէր Աղիայի առնու զաթոռն տէր Յոհաննէս Ումենեցին. սա էր իմաստասէր և աւրթ և վայելուչ հասակաւ մարմնոյն, և հոգւովն եւս առաւել գեղեցիկ։ Ոսա կոչեաց Հէշմ ի դուռն իւր, և վասն վայելչութեան երեսաց նորա մեծապէս պատուեաց զնա. քանզի խարտեաշ ոսկի և արկեալ զմօրուքն իւր՝ եմուտ առ նա. և տեսեալ Հէշմայ զարմացաւ ընդ գեղեցկութիւնն, և ասէ ցնա հեզութեամբ. Ալ ասն Ասրիստոսին ձերոյ ասեն թէ կարի հեզ էր և խոնարհ, և զաղքատութիւնն առաւել սիրէր. զայս յայտ առնեն և կարգք քրիստոնէիցն. զի որ նոցա առաջնորդք են՝ զաղքատութիւն և զդձնութիւն առաւել մեծարեն քան զմեծութիւն և զիշխանութիւն. իսկ դու ընդհէր այդպէս զարդարեալ ես։ Ասէ ցնա աւրթն. Ասու քան զծառայն քո աւելի ինչ ոչ ունիս, բայց միայն զԹագն և զհանդերձդ Թագաւորական. վասն այդորիկ երկնչին ի

1 Հնագոյն պատմիչք Մուհա- նոս ասեն. զի և չՀաճախչի ուրեք Մանկոն կայսր. Թէպէտ և Մար- կիանոս իսկ գործդ անատոյգ։

2 Հէշամ ամիրապետ, զորոյ ա- նուն երկակի գրէ։

քէն և պատուեն զքեզ։ Զառաջին հարքն մեր նշանագործք էին և սքանչելի վարուք, վասն այդորիկ երկընչէին հնազանդեալքն և կատարէին զհրամանս նոցա զողութեամբ. իսկ մեք այսպիսիք ոչ եմք. վասն այնորիկ մեք զարդարիմք ՚ի հանդերձս և ՚ի ձև, զի մի արհամարհեսցին հրամանք մեր։ Եւ մերկացուցեալ զկուրծս իւր՝ եցոյց նմա զմաղեղէնն զոր զգեցեալ էր ՚ի ներքոյ հանդերձին երևելոյ, և ասէ. Զայս է իմ հանդերձս։ Եւ զարմացաւ արքայն, և գովեաց զհատատս քրիստոնէից։ Եւ ասէ ցսուրբն. Խնդրեա զինչ և կամիս, զի արարից քեզ։ Զոհ հայրապետն. Արիս իրս խնդրեմ ՚ի քէն, որ քեզ դիւրին է տալ. առաջինն այս, ՚ի քրիստոնէից զոք մի բռնադատեսցես ծողուլ զհատատս իւր, այլ յիւրաքանչիւր ծողեսս զկամն։ Եւ երկրորդ, զաշտաւթիւնս եկեղեցւոյ ընդ հարկաւ մի դնիցես, և մի ինչ առնուցուս յերիցանց և ՚ի սարկաւագաց։ Եւ երրորդ ուր և իցեն քրիստոնեայք համարձակութեամբ պաշտեսցեն զկրօնս իւրեանց. զայս՝ գրով տուր մեզ, և ամենայն ազգ իմ ծառայեսցեն քեզ։ Եւ վաղվաղակի հրամայեաց գրել գիր ըստ խնդրոյ նորա, և կընքեաց մատանեաւ իւրով, և ետ նմա պարգևս բազումս, և գումարեաց զօրս բազումս ընդ նմա և առաքեաց մեծաւ պատուով յաշխարհս Ֆայոց։ Եւ նորա եկեալ հալածեաց զամենայն Ֆոյնս որք էին յաշխարհիս Ֆայոց, եթէ վերակացուք և թէ զինուորք. և նոցա փախուցեալ այնքան շտապով, մինչ զի զգանձս ևս անդամ ոչ ժամանեալ տանել ընդ իւրեանս. այլ աստէն յաշխարհիս Թաղեաւք, և զհանգամանս տեղւոյն ընդ իւրեանս տարեալ, և զաշխարհս Ֆայոց ընդ իշխանութեամբ Ասմայելի նուաճեալ։ Ինքն ժողով առնէ ՚ի Անտաղկերտ. կոչէ և զԹանաս պատրիարգն Ֆռոմոյ, և նա առաքէ վեց եպիսկոպոս. և նզովէ զՖոտինիտան և զապականացու աստղն՝ի Քրիստոս, և ըզԱրեշապուհ և զԱբրիհէ՝ բանսարկուս Ֆայոց և Ասորւոց. և կանոնական օրինադրութեամբ պայծառացոյց զեկեղեցի, ՚ի բաց ընկեցեալ զդաւանութիւնն

1 Զայդոսիկ ոչ առնէ Խմաստասէրն, այլ յանուն նորա յօգեն աստեղքն Ցունաց։ Տ. և վ. 73։

Վաղկեդոնի, որ յաւուրցն Հերակլի կայսեր և Սերգի կաթողիկոսի ունէր անկարգութիւն(!) աշխարհս Հայոց. կարգեալ զընթերցուածս սրբոյն Կիւրղի, և զամենայն տօնս որպէս կարգեալ էր սրբոյն Գրիգորի. և տօնեցին ի քահանայինդ դեկտեմբեր ամսոյ՝ Գաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն, զոր այլազգիք ծնընդեան տօնեն. և երգեաց շարական և զՀարցն Եղաք ամենայնի, որ մինչև ցայսօր պաշտի յեկեղեցիս Հայոց[1], սկսեալ ի Հարիւր յիսուն և հինգ թուականէն մինչև ի վեց Հարիւր իննսուն, որ այժմ մեր աւուրս է. և այսպէս կարգաւորեալ զամենայն աշխարհ ուղղափառութեամբ, և ինքն աղօթից և վարդապետութեան պարապեալ, և շինէ եկեղեցի մի մեծ յիւր գիւղն Աւճուն, որ հուպ է առ քաղաքն Մօշ. և իւր ընտրեալ տեղի բնակութեան սակաւ մի ի բացեայ ի գեղէն, և անդ դադարէր: Եւ եղև օր մի զի յաղօթս էր սուրբն, երկու վիշապք ահագինք յարձակեցան ի տեղիքն՝ ուր կայանքն էին առաքինոյն, և տեսեալ պաշտօնէի նորա աղաղակեաց առ սուրբն օգնել. իսկ սուրբն կնքեաց ընդդէմ նոցա, և առժամայն քարացան, և են մինչև ցայսօր, և ջուր բղխեաց ի պորտոյ վիշապին, և բժշկութիւն է ամենայն օձահարի, որք հաւատով ապաւինին յաղօթս սրբոյն: Եւ կալեալ զՀայրապետութիւնն ամս մեծաս, հանգեաւ ի Քրիստոս պարկեշտ վարուք:

Եւ յետ նորա առնու զկաթողիկոսութիւնն տէր Գաւիթ, ամն երեքտասան. սա էր ի Գրամունեայց՝ ի Կոտայս գաւառէ. սա փոխեաց զաթոռն ի Գառնայ Գրամունս, շինեալ եկեղեցի և տուն բնակութեան Հայրապետական. զի նեղեցաւ նա յոճրագործ ազգէն .....: Եւ յետ նորա եկաց կաթողիկոս տէր Տրդատ, ամն քսանևերեք. և սա էր ի Թմոյ գեղջէ, այր պարկեշտ և սուրբ և փայլեալ ամենայն առաքինութեամբ. և յաւուրս սորա դադարեցին հէնքն Համայէլ. և յետ նորա կաթողիկոս միւս տէր Տրդատ, ամն երիս. և ապա տէր Սիոն ամն ութ. տէր Տրդատ՝ի Գառնոյ նաւորից և ի Գառոյնից[2]. և տէր Սիոն ի Գադուանէ.

1 Որպէս նախասացեալ գործքդ և այդ շարականք՝ չեն վայելք Ս. մեսրոպեանցն:

2 Երկու են Տրդատք մի զինի միոյ գահակալեալք, և զայդ յայտնեն կրկին հայրենեացդ անուանք:

սա առ ոտամբն Սիմն կոչեցեալ լերինն գցամաքեալ աղբիւրն՝ հսկմամբ աղօթից գարձեալ բղխեցոյց։ — Իսկ Լեռնի կայսերն զկնի Թագաւորէ որդի նորա Կոստանդին. սա կոչեցաւ Կաւաղինոս, այսինքն Թըքաժողով. զի զօրն Տաճկաց բնակեալ էին առ Ա՛լիւս գետով, հրամայեաց Թրիք ժողովել և արկանել ՚ի գետն. և նոցա տեսեալ ահաբեկ եղեն, և կարծեցեալք անթիւ լինել զօրացն՝ և փախեան ՚ի նմանէ։ Պատմի Թէ ՚ի միում աւուր՝ զկնի միմեանց հինգ առիւծ սպան սա. և էառ զԿարնոյ քաղաքն. և յետ երկու ամի շինեաց զնա Ի՛ զիտ ամիրա։ Յետ Ա՛րվանայ առնու զիշխանութիւնն Իամայելի Ա՛բդլա. և յետ նորա միւս Ա՛բդլա՝, այր ժանտ և արծաթամած ասէր, զոր կոչէին զնա աղգն իւր Ա՛բդլադանկի, այսինքն Ծառայ դանկի կամ հայր դանկի, զի ըստ լեզուին Ismaելացւոց՝ այսպէս կոչէր, զի զդանկ առաւել սիրէր քան զԱ՛ստուած։ Ա՛ա շինեաց զՊաղտատ և արար բազում չարիս ընդ աշխարհս Իսլոց հարկապահանջութեամբ և յափշտակութեամբ. և այնքան նեղեաց՝ մինչ զի մեռելոցն հարկս ՚ի կենդանեացն էառ, և հատոյց զիւտ արծաթոյ յաշխարհէս Իսլոց. և կոտորումն եղև Քաղիւնոյ, Յարենոյ, Ծալնայ, ուր սպանան ոգիք եօթնհարիւր, և գերեցան ոգիք հազար երկերիւր. և Ա՛ուշեղ Ա՛ամիկոնեան և Սամուէլ այլոք ազատօքն Իսլոց կոտորեցան յաւուրս զատկացն Իսմայելացւոց։

Յայսմ ժամանակի Թուականիս երկերիւր քսանևերկու էր, Սահակոս պրան երէց՝ որ բանիբուն Հանաքիւր, հաս ամենայն իմաստասիրական և գրամատիկոս արուեստից հանդերձ հոգևորական առաքինութեամբ։ Նա և վարդապետ աշխարհիս Իսլոց ընտրեալք տէր Եփրեմ, Ընաստաս, Իսաւիկ և Դաւիթ Իռոմայեցին, և մեծն Սահակոս Սիւնեաց մեծ իմաստասէրն ասշակերտ Ա՛ովսէսի, զոր վերագոյն յիշեցաք, որ Թարգմանիչ եղև ՚ի յունէն ՚ի հայ լեզու. և ՚ի վերայ Թարգմանութեան արար և երգս հոգևորս՝ քաղցր եղանակաւ շարականս, կցորդս և այլ երգս արար, և մեկնութիւն աւետարանացն, քերականին, և Յոբայ, և Ցերբ

1 Որ և Խոսրով Ձեռափար Աղմանսուր։

եթէ շրթանց գիշերոյ։ Այլ վասն սրբոյն Ստեփանոսի
թէ ՚ի մանկութենէ վարժ և կիրթ էր սուրբ գրոց.
հանդիպին նմա հակաճառաբան Մքատ այր երկաբնակ.
և թողեալ զնա յանհաւանութեան՝ գնայ ՚ի Հռոմ[1],
և գտեալ անդ միայնակեաց մի ուղղափառ դաղարեաց
առ նմա և ուսաւ ՚ի նմանէ. և լուեալ Մքատայ գրէ
առ Թագաւորն Հռոմոց թէ Ստեփանոս հերձուածող՝
որ հայհոյէ զդաւանութիւնս ձեր, այդր դադարեալ է
առ այս անուն միայնակեցի. և յոյժ ցասուցեալ Թա-
գաւորն խնդրէ զնա ՚ի դուռն. և ետ նմա խրատ միայ-
նակեացն ասել զինքեանէ, թէ մուրացիկ եմ Թափա-
ռական. և լուեալ զայն կայսեր՝ շինէաւ ցասումն քար-
կութեանն։ Այլ գտեալ համարձակութիւն Ստեփա-
նոսի՝ աղաչեաց զկայսրն բանալ զարկեղս գրոց սրբոց.
և գտին մատեան մի ոսկետիպ սակս հաւատոյ. մատոյց
զայն առաջի կայսերն, և ընթերցեալ զնա՝ ՚ի Հռոմ
յղէ, բերել անտի երիս գիրս համաբարբառս այնմ գրոց՝
յաղագս Աչմարիտ հաւատոյ, զի զաշխարհն յայն ՚ի
կրօնս դարձուսցեն։ Իսկ զդրեանս ՚ի Հռոմայ առեալ,
անփոյթ արար զհրամանս ինքնակալին. գայ ՚ի Դուին
քաղաքն, զիւր աշխարհն նոքօք լուսաւորել. և ձեռ-
նադրէ զնա տէր Դաւիթ՝ Միւնեաց եպիսկոպոս, ՚ի
խնդրոյ Վրթանէսի և Յաբգինի իշխանաց Միւնեաց։
Այլ մի ամ կալեալ զաթոռն՝ սպանեալ եղև ՚ի պոռ-
նիկ կանանց ՚ի Մոզն գաւառի. զորոյ զմարմին առեալ
բերին ՚ի Կապեան գաւառին[2], և անտի ՚ի Վանատեաց
վանս փոխեցին ՚ի Հանգիստ. և ՚ի բերելն երանելւոյն
զդրեանս ՚ի Հռոմայ՝ եպիսկոպոսութիւն Միւնեաց յեր-
բեակ դասս Հայոց եպիսկոպոսաց կարգեցաւ։ Իսկ միայ-
նակեաց ոմն Այդ անուն տեսանէր ՚ի տեսլեան, զի Ստե-
փանոս լի արեամբ զգոգն առաջի Վրկչին ունէր և ա-
սէր. Տէս տէր զայս, զի քո են դատաստանքդ արդար.
և ազդեալ միայնակեացն ՚ի գաւառն զգալ բարկու-
թեան, և բողոքէ կալ յաղօթս. և ահա խաւար կա-
լաւ զՄոզան սահմանն, և զաւուրս քառասուն շարժե-
ցաւ տեղին, և խորասոյզ եղեալ ընկղմեցան ոգիք իբրև

1 Ի Կոստանդնուպօլիս աշա-
կերտի կամ բնակէ առ Յոյն միայ-
նակեացն, և յետոյ գնայ ՚ի Հռոմ։

Աղաւաղ է պատմութիւնդ։

2 Արիազեան գետոյ և ոչ գա-
ւառ։

տասն հազար. վասն այն Ա. այլոյ ձոր անուանեցաւ մինչև ցայսօր ժամանակի. և բազում բժշկութիւնք լինին ի նշխարաց նորա, զոր հաւատով ապաւինին ի բարեխոսութիւն սրբոյն՝ ախտացեալոց ի պէսպէս ցաւոց և ի հիւանդութեանց. զի Աստուած զիաւաւորիչս իւր փառաւորէ աստ, և ի հանդերձելումն տայ զպատրաստեալ բարիսն, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ:

Եւ ապա տէր Աթոյի Աղզապատրօչ գեղջէ կոչի ընորհօքն Աստուծոյ ի պետս ժողովրդեան ի քահանայութիւն, եպիսկոպոսութիւն և հայրապետութիւն, ամն երեքտասան. և յետ վաղճանի նորա՝ Անդրօկին կոչեցաւ զոպտէ զեկեղեցին: Եւ բազում կաշառօք յաջորդէ տէր Ասեփանոս ամ մի. սա էր ի Գունայ. և յետ նորա՝ տէր Յովաք ամ մի. սա էր ի յոստանէն ի կուսրապատին տանէն [1]. և զկնի նորա տէր Աղոմոն ամ մի. սա էր ի Աբէնոցայ վանից ծերացեալ յոյժ. և յետ նորա տէր Գէորգ, ամն երիս, որ Խուլ-որքուն [2] կոչէր. սա էր Աղրատածոտանէ. և յետ նորա տէր Յովսէփ, ամն մետասան. սա էր ի քնակչաց սրբոյն Գրիգորի [3]: Ապա յետ Գոստանդի կայսեր առնու զԹագն Լեռն, և յետ նորա Գոստանդին և Անդրէաս մայր իւր: Ի սոցա աւուրս կանգնուեցաւ եղև պատկերացն ի Նռամ: Եւ եղև սոցա տեսանել տապան մի մեծ մարմարեայ. զարմացան, և հրամայեցին բանալ զտապանն. և գտին գրեալ ի նմա, Թէ Ո՛րինչ օգուտ է ծածկելդ զիս, զի յաւուրս Գոստանդեայ և Անդրէասի մօր նորա՝ տեսցէ զիս արեգակն: Եւ յետ տասն ամի ի միասին Թագաւորելոյ՝ ընկէց զմայրն Գոստանդին և մայրն զորդին, բրեաց զաչս նորա, և ինքն Թագաւորեաց ամն հինգ: Եւ յետ նոցա [4] Թագաւորեաց Անկիփոր: Ի սորա աւուրս երկու եղբարք Սահակ և Յովսէփ իմաստասէրք [5] կատարեցան վկայութեամբ ի Քրիստոս՝ ի Կարնոյ քաղաքին, յորաց հնպետասան: Եւ

1 ՕՕ. ի Կոտրապաղապէն:
2 Այլք գրեն Խոյորբոսի կամ Խոյրբոսի:
3 Այսինքն վանաց Ս. Գրիգորի:
4 Ոմանք նորա:
5 Ա. Գ. Իմաստասէրք:

յետ նորա Թագաւորեաց Ալքայէլ. յաւուրս սորա սով սաստիկ եղև ընդհանուր, և յաւուր միում գտին մեռեալս երեքհազար: Եւ յետ նորա Լևոն. սա զպատկերն ընկէց, և ընտրեաց զԼիւզու և զԼրկադուպօլիս:

Իսկ յետ այրելոյ զիշխանս ի Լախջուանի՝ յետ յիսունևչորս ամի՝ Նայոց մարզպան[1] եղև Լհոտ Նագրատունի, ամն եօթնևտասան. և յետ նորա Ամբատ որդի Լհոտոյ որ Լբլաբեան կոչեր, ամն երեսուն և հինգ. սա չինէ զքաւարանն մեծապայծառ զարդու Անրազգաւոր, որ արդ Ճ իրակաւանն կոչի: Իսկ զիշխանութիւնն Նամայելի յետ Լբղէայ առնու Ահադի, և ապա Ասմաւսէ, և յետ նորա Լհարոն, և յետ նորա Ահամատ, և ապա Ահմուտ, և ապա Լպուսահակ Ահմէտ, և յետ նորա Լհարոն[2]: Իսկ յետ Յովսեփայ եղև կաթուղիկոս տէր Գաւիթ, ամն քսանևհինգ. սա էր ի Ահազազայ ի գեղջէ Կակազայ[3]. և յետ նորա Յոհաննէս ամն քսանևերկու. սա էր ի գաւառէ Կոտայից ի գեղջէ Ովայից: ՅուԹերորդ ամի սորա չարախօսք ոմանք ի նմին տանէ բանս հայհոյութեան խօսէին զնոյնպէս, որք չարամահք սատակեցան, նանրալեզուք, որպէս այնոքիկ որ առ Կարկեսոսիւ էին Կրուսաղեմայ եպիսկոպոսիւ: Եւ յետ նորա տէր Յաքարիա. սա էր ի Կոտայս գաւառէ՝ ի գեղջէն Զագայ, ի միում աւուր ամենայնին արժանաւորեալ, սարկաւագութեան և քահանայութեան և կաթուղիկոսութեան. այր սուրբ և առաքինի, ամն քսանևերկու: Ի սորա աւուրս եկաց գլուխ Նամայելի այր ոմն անօրէն և աստուածատեաց, Յաբր անուն. սա յոյժ մախայր ընդ անունն Քրիստոսի, և զբաղումն հրապուրէր յուրացութիւն, եւ զեւս բազումն որք ոչ հաւանէին նմա՝ սպանանէր զառն տանջանօք, և բազում չարիս գործեաց նա ընդ աշխարհս՝ որ ընդ իշխանութեամբ էին. և սա առաւել ընդ աշխարհս Նայոց սպանմամբ և գերութեամբ: Վանդի առաքեաց ոստիկան մի Լպուսէթ անուն, որոյ եկեալ կալաւ զիշխանն Տարօնոյ զԱգարատ, և զայլս բա-

1 Մարզպան կոչումն ոչ լսեր յայնժամ. և Թուականքդ և կարգ իշխանացդ Թերուղիղք են:

2 Անուանք ամիրապետացդ զանազանին յայլոց և մանաւանդ ի բուն արաբիկ պատմչաց, որպէս և յղկինան:

3 ՈՈ. Կաղկազայ:

զուսմ. զոր իմացեալ բնակիչք լերինն Խօթայ[1] որ Սաւունքն անուանին, եկեալ սպանին զՅուսէթն. զոր լուեալ Ս. աբբի՝ բարկացաւ յոյժ, և առաքեաց զօրագլուխ մի Ռուշայ անուն, Թուրք ազգաւ, այր խորամանկ և անօրէն. որ եկեալ աւերեաց զաշխարհս Հայոց, զոր խաբէութեամբ և զոր պատերազմաւ, և խաղացոյց զգերութիւնն ի Սամոսա. որ և զՍմբատ սպարապետ Հայոց՝ խաբէութեամբ տարաւ առ Ս. աբբ, և նա եդ զնա ի բանդի մի ուրասցի զՔրիստոս, որ ոչ հաւանեալ հրամանի անօրինին, այլ համարձակութեամբ զՔրիստոս խոստովանեցաւ և պահեցաւ ի նմին բանդի, մինչև անդէն մեռաւ, և զխոստովանական անուն ժառանգեաց. և այլք բազումք վկայեցին վասն Քրիստոսի, և մեռան յանօրինէն. և զսարկաւագ ոմն աստր անուն 'Լանան' վասն համբաւոյ վարդապետութեան ըմբռնեալ ածին առաջի Ս. աբբին, և նա խոստովանեցաւ համարձակութեամբ զՔրիստոս. և տանջեալ զնա և ի բանդն արգելեալ յոլով ժամանակս, յետոյ արձակեցաւ խնամօքն Յուստոյ. որ և գրեաց զմեկնութիւն աւետարանին Յովհաննու լուսաւոր բանիւք: Նոյնպէս և յիշխանացն Հայոց մի ոմն Ստեփաննոս անուն որ Կոնն կոչէր, նահատակեցաւ ի Քրիստոս. և բազումք ուրացան զՔրիստոս ձեմարիտն Յուստաճ՝ վասն երկիւղի մահուն. այլ և յոլովակի չարիս անցոյց ընդ աշխարհս. զոր գտցես ի գիրսն Մովսէսի և Ճառպետի և այլոց պատմագրաց: Ի Թուականիս Հայոց Հարիւր ինննսունևչորս և Յոսէի՝ հազար եօթանասունևչորս, շինեաց Ս. աբբ զՄաշտոց ի վերայ Տիգրիս գետոյ, ջրոյս աւուր Ձանապարհաւ հեռի ի Նաբեղնէ: Եւ ծնաւ կին մի, երեսուն տարի ապրեցաւ՝ ոչ ինչ կերաւ:

Յակ զկնի խոստովանողին Սմբատայ առնու զիշխանութիւնն Հոռոմոց որդի նորա. սա ամենայն նախնեացն վեհագոյն գտաւ, զի զկնի սպարապետութեանն՝ իշխանաց իշխան եղև, և ապա Թագաւորեաց յերկոցունց Թագաւորաց յիսմայելէն և յունականէն: Զանգի յետ Ս. աբբի առնու զԹագն Աշմէտ, և ապա Ներսէհ, ապա Աղբէտ, և ապա Աւհմէտ. սա իշխանութ-

1 Խոյթ կամ Խութ:

իշխան կացոյց զՅ.ՀՈՏ, և ապա Թագ ետ նմա։ Ի՛սկ յետ Լևոնի կայսեր՝ առնու զԹագն Մ՛ԻՔայէլ. և յետ նորա Ա՛ասիլ. զսա ասեն՝ ի Տարօնոյ՝ ի գեղջէն Թվալ. սա չինեաց զՕ՛ օրաւարն [1]. սա դարձեալ Թագ առաքեաց Յ.ՀՈՏայ՝ ի վերայ իսմայելականին [2]. և առ Յ.ՀՈՏ գրեաց Թուղթ պատրիարգն Կոստանդինուպօլսի Փոտ, և առաքեաց մանն՝ ի տէրունական խաչէն. որոյ պատասխանի գրեաց Հրամանաւ Յ.ՀՈՏայ վարդապետն Ի՛սահակ գեղեցիկ և իմաստասիրական [3]։ Յ.ՈՐ՝ ի բառնալոյ Թագաւորութեան Յ.ՐՇակունեաց մինչև ցԹագաւորութիւնն Բագրատունեաց լինին ամք չորեքհարիւր երեսունևչորս [4]. որ չերեքհարիւր երեսունևչորս Թուին Հայոց Թագաւորեաց Յ.ՀՈՏ, այր երկիւղած Ա՛ստուծոյ և բարեպաշտօն, զարդարիչ եկեղեցւոյ, և սիրող պաշտօնէից Յ.ստուծոյ, որ զարդարեաց զեկեղեցիս Հայոց մեծաւ զարդիւք և պայծառութեամբ։ Օ՛ամն երեսուն և երկու իշխանաց իշխան կացեալ, և Հինգ ամ Թագաւորեալ՝ փոխեցաւ՝ ի Քրիստոս բարի գաւանութեամբ և Հնմարիտ Հաւատով։ Ա՛ւ յետ նորա Թագաւորեաց որդին Ա՛մբատ, ամն քսան և չորս։ Սա վկայութեամբ կատարեցաւ՝ ի Քրիստոս՝ ի Գ՛ուին՝ ի Յուսփայ որդւոյն՝ Ա՛պուսաղայ։ — Ի՛սկ յետ Օ՛աքարիայի առնու զաթոռն տէր Գ՛էորգ՝ ի գեղջէն Գ՛առնոյ. սա գերեցաւ Ա՛ամայելացւոցն, և իշխանքն Ա՛ղուանից գնեցին և արձակեցին. և յետ նորա եկաց կաթուղիկոս տէր Մ՛աշտոց ամ մի. սա էր սուրբ և առաքինի, լեալ Հանճարով և իմաստութեամբ, և քնակէր՝ ի կղզւոջն Ա՛ևան մեծաւ Ճգնութեամբ. զամն քառասուն Հաց ոչ եկեր և ջուր ոչ արբ, միահանդերձ և բոկոտն։ Սա կարգեաց զդիրսն որ ըստ իւր անուանն Մ՛աշտոց կոչի, ժողովել զամենայն կարդեալ աղօթս և զընթերցուածս՝ ի միասին յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս Հաւատոյ քրիստոնէութեան. և Հասեալ՝ ի ծերութիւն պարարտութեան Հանգեաւ՝ ի Քրիստոս փառաւորապէս, և եղաւ՝ ի գե-

1 Իմն զնկեղեցին։
2 Յառաջ քան զթագաւորելն Աշտոց մեռեալ էր Վասիլ։
3 Ըստ ախորժակաց Կիրակոսի։
4 Զբարձումն Թագաւորութենն ինքնագլուխ ցնահատակութիւնն Վարդանայ. այլ՝ ի մերժելոյ Արտաշէսի վերջնոյ ցԱշտ՝ լինին ամք 458։

ըեզմանի ՚ի Գառնի, հուպ առ զարմանալի Թաղտն Տրդատայ. և չինեցին ՚ի վերայ նորա վայելուչ եկեղեցի. և յետ նորա յաջորդէ զաթոռն տէր Յոհաննէս աշակերտ նորին և ազգային՝ ամս քսանևւութ։ Ալա էր այր իմաստուն և բանաւոր ՚ի քաղաքագիտղջէն Գառնոյ, ուստի սուրբ Հայրապետն Գէորգ էր. սա գրեաց պատմութիւնս գեղեցկայարմարս, զոր ինչ գործեցին անօրէնն ազգն Ասպարացւոց ընդ աշխարհս ամենայն մեծամեծ չարիս։

Ընդ յայսմ վայրի կամ է ինձ երկրորդել վասն պատահմանն... ազգին Համայելի, զի հրամայէ փրկիչն մեր և Ստուած Յիսուս Քրիստոս, եթէ Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, որպէս և սոցայս, զի ՚ի բաղումն բաժանեալ տէրութիւնն. զի Սոփարն[1] տիրէր աշխարհին Կորահանու, և Ապալինն Պուռթորոսի ՚ի Նասրացւոց[2] քաղաքին, Յիսէ Շ եւայ[3] որդին ՚ի Պաղեստինէ, և որդին[4] Ալտփոյ ՚ի Գիլմայ[5] աշխարհի, և այլք ոմանք ՚ի տեղիս տեղիս խառնութիւնս յարուցեալ՝ զանային բռնութեամբ տիրել իրերաց, վասն որոյ դժուարագիւտ եղև անուանք ամբարշտացն։ Նայց յորոց և է ոստիկանք չարք և անմարդիք արձակեալք լինէին յաշխարհս մեր, որպէս գազանաբարոյն Նուզա, և անօրինագոյն Ապշին որդի առաջագոյն չարին Պուսիթայ, և կամ ևս չարագունին ասպականչին Յուսիին եղբօր Ապշինոյ՝ որ սպան զՄամբատ թաթ թագաւորն ՚ի Գուրն, և թագաւորեցոյց զԳագիկ ոմն ՚ի տանէն Ապրծրունեաց զորդի Գերանկանն, այր քաջ և աստուածասէր, որդի քեռ թագաւորին Ամբատայ Նագրատունւոյ. սա շինեաց զկղզին Ագթամարայ, որ ՚ի ծովուն Նզնունեաց, քաղաք թագաւորական և եկեղեցի հրաշազան և պայծառ յօրինուածով։ Ապա քիչ ամենեքեան չար վերակացուք՝ որ գային յաշխարհս

1 Սոֆֆարիտեան տոհմն, այսպէս կոչեցեալ ՚ի Սոֆֆար արաբացի ձայնէ, որ է կատասյագործ, զի զայս արուեստ ունէր հայր իշխանացելոյն՝ Եաղուպայ։

2 Պարիտեան տոհմն բռնացաւ կողմանց Պասրայի ՚ի կէս ժ. դարու։

3 Որ յետոյ և ՚ի Միջագետս կուսակալ կարգեցաւ, և եբեր Աշոտոյ զԹագն։

4 Հասան–պէն–Ջեհիտ, Դևմը. կաց բռնաւորն, որ նուաճեցաւ ՚ի Սոֆֆարեանց։

5 Վ. 95։

մեր աւերել և եղծանել, մինչև բարձաւ Թագաւորու-
Թիւնն Ա՛միրմումնեացն, և փոխանորդեցին ԱկիւԹա-
ցիքն ոչ ելանախոհ՝ այլ բարբարոսք. քանզի բազում
ազգս հարեալ հնազանդեցուցին և ինքեանք իշխեցին,
ընդ որս և զիշխանուԹիւնս Տաճկաց հնազանդեցու-
ցին. բայց զի զանուանս նոցա ոչ ուրեք գտաք գրեալ,
վասն այնորիկ և ոչ մեք կարացաք դրոշմել. Թուի Թէ
և ոչ՝ ի դպրուԹեան կենաց, այլ յարձանս ամբարըշ-
տաց. վասն այնորիկ լքեալ Թողցուք զնոսա իբրև զա-
րանց յուսացելոց՝ ի զօրուԹիւնս իւրեանց, որք խլեցան
յարկայն Ա՛ստուծոյ:

Եսկ՝ ի սկսանել ԹագաւորուԹեանն Յունաց՝ որք
կիսուն հայ ազգաւ նեղեալք՝ ի նոցունց՝ ելին յանա-
պատն սպառազինեալք, և եկին՝ ի Կարաշ: Գտին այր
մի քաջ Փիլարտոս անուն հայ, եդին զնա գլխաւոր, և
մտեալ՝ ի Սիւրիկիա՝ առին զբովանդակ աշխարհն. յորս
եկին և Յունբինեանք սերեալ Թագաւորաղունքն: Ո՛չ
մինչև յայս Ա՛ելիքշահ սուլԹանն՝ գրեալ էր զպատ-
ճառ տիրելոյ նոցա մեծիմաստ վարդապետն՝ որ Կար-
կաւագ կոչիւր, և երկրորդեալ էր Յամուէլ քահանայ,
այլ և զՀօր նորա զարիւնախանձին Ա՛լփասլանայ, և զը-
նորին Հօր և Հաւուց, և զոր Տուղլու-պէկ և Ա՛ահմուտ
և Յալջուկ անուանք են նոցա: Ա՛յլ մեք գարձցուք անդ-
րէն յոճն կարգի ուստի ելաք. Հանցուք արտաքս զը-
մինն[2], և ասասցուք խրախուսուԹեամբ. Ա՛զգա՝ ի ձեռա-
նէ քումմէ մերժեցան. մեք ժողովուրդք և խաչն արօ-
տի քո: Ա՛նզի յետ մահուան Ամբատայ Բագրատու-
նւոյ Թագաւորէ Հայոց Ա՛շոտ որդի նորա, հրամանաւ
Ռոմանոսի կայսեր, յետ եօԹն ամի սպանման Հօրն,
ամն ութ. իսկ յետ Կ՛ասլի կայսեր՝ Թագաւորեաց
Լևոն, և ապա Ա՛լեքսն, և զկնի նորա Ռոմանոս: Ա-
Հալածեաց զամենայն կրօնաւորս և զքահանայս Հայոց
որք էին յաշխարհս Հռոմոյ, զի ոչ Հաւանեցան դա-

1 Ի Յարկաւագ վարդապետի սպատ-
մուԹենէն առեալ իմաստակէ, հե-
լենախոհս, կիրԹս Յունաց ակն՝ կա-
մելով ասել, և ակնարկէ՝ ի Սէլ-
ճուգեանս:

2 Նորին հիշելոյ Յամուէլի ժա-
մանակագրի են բանքդ, զոր ան-
Ճահ՝ ի ներս մուծանէ Կիրակոս.
և դինն է գաւազան մի Թագաւո-
րուԹեան՝ զոր՝ ի կարգէ շարին՝ ի
բաց Թողու գաւազանագիրն:

ւանուԹեան Վաղկեդոնի. և եկեալ յաշխարհս Նայոց՝ յաւուրս Աբասայ որդւոյ Ամբատայ, հաստատեցին վանորայս զկարմիջաձոր, և զկապուտքար ի գաւառին Աշարաւնեաց հռչականուն, և զՆոռոմոսին կոչեցեալ վանք և զՎարդվանք ի Շիրակ գաւառին. շինեցին եկեղեցի մի յանուն սուրբ Աստուածածնի ի վանքն՝ որ կոչի Ամանահին ի սահմանս Նօռէ քաղաքին. և զի կոչէին զերիցուսն Նոռոմոյ՝ երէց, անուանեցին զմի վանքն որ ի Շիրակ՝ Նոռոմոյ վանք. (որ ցարդ ևս Նոռոմոյ վանք ասի[1]): Եւ յետ Ամանոսի Թագաւորէ Կոստանդին որդի Լևոնի, և ապա Ռոմանոս. և զկնի նորա Նիկիփոր, և զկնի նորա Կիր-Յովան:

Ի սկզբան յետ Յովաննիսի առնու զկաԹուղիկոսուԹիւնն տէր Ստեփաննոս ամ մի, և ապա տէր Եղիազարոսն՝ ամս մեռասան. և ապա տէր Նշխէ, ամս եօԹն. և ապա տէր Գնանիա Գոկացին, ամս քսան և երկու: Յաւուրս սորա էր եպիսկոպոս մի կողմանցն Սիւնեաց՝ Յակոբ անուն, որ սկսաւ նորաձևուԹիւնս առնել խօսիլ և կարգաց. և այլ միւս եպիսկոպոսն Խոսրով անուն, որ ասէր. Չէ պարտ կիւրակէ ասել զօրն տէրունի՝ այլ կիւռակէ, զի Հռոմերէն է. նոյնպէս և Հասարակաց ԹողուլՀ ասէր զգեստս և ոչ հատանել, մինչև երկայնասցի և պատառոյտ. զի վասն այն կոչի պատանի, և ապա կտրել հրամայէր, զի վասն այնորիկ կոչի ասէ կտրիճ. և ասէր. Ոչ է պարտ եպիսկոպոսապետի՝ այսինքն կաԹուղիկոսի՝ հլու լինել, զի աւելի ոչ ինչ ունի, բայց միայն զանուանակոչուԹիւն: Եւ այլ այսպէս անիմաստ բանիւք լցոյց զաշխարհս, և խռովուԹիւն յարոյց ամենայն ուրեք վասն նորաձևուԹեան: Զոր գրէ ԹուղԹա խրատականս տէր Գնանիա՝ ի բաց կալ յանհանձար և յանընդունակ բանից. իսկ նա փոխանակ զղջանալոյ՝ առաւել ևս անամօԹանայր, զանձն իմաստուն կարծէր և գնոսա տգէտ. առ որ Հարկաւորի դարձեալ գրել երկից և երից. գրեն և այլ իմաստունքն վարդապետք, և յիշեցուցանեն նմա ի գրոց հանգամանս կարգաց: Իսկ նա ի նոյն միտս ամբարշտուԹեան կացեալ՝ քամահէր զամենեքումբք, և ինքն ապստամբեալ ի կաԹուղիկոսէն

1 Փակագծեալդ չկայ Ա և ի Գ: — Վ. 88:

ամրանայր ՚ի բերդն Սիւնեաց, զոր ընդ բանիւ արա-
րեալ կաթողիկոսն, զրկ առ տիկինն Սիւնեաց՝ տալ
զնա ՚ի ձեռս խրատել զնա, զի Թերևս գայցէ յուղղու-
Թիւն. և նոքա ոչ ետուն զնա ՚ի ձեռս նորա. և զնոսա
և զարարր ընդ բանիւ կապանաց, և ՚ի նոյն միտս եկաց
մինչև մեռաւ։ Եւ ապա գնաց տէր Ներսէհ յաշխարհն
Սիւնեաց հնազանդել զապստամբս. և իբրև լուան իշ-
խանքն Սիւնեաց զգալուստ Հայրապետին՝ ելին ընդ ա-
ռաջ նորա, և մեղադրէին անձանց իւրեանց, և ետուն
նմա ձեռագիր երդմամբ, զի այլ ոչ ապստամբեսցեն յա-
Թոռոյն սրբոյն Գրիգորի յաշդէ մինչև յաշդս. և ա-
պա ձեռնադրեաց յաշդէ նոցա զմի ոմն արքեպիսկոպոս,
որ յառաջն էր Սիւնեաց եպիսկոպոս. զայն ՚ի պատիւ
արարեալ իշխանացն Սիւնեաց՝ հրամայեաց խաչ տա-
նել առաջի արքեպիսկոպոսին Սիւնեաց ուր և երԹիցէ։

Յետ մահուան տեառն Ներսէհ եկաց յաԹոռ նո-
րա տէր Վահան ՚ի Կաղաց ամր մի։ Սա դաչնադիր
եղև ընդ Վ ՚ի նա միաբան դաւանուԹեամբ. վասն որոյ ժո-
ղովեալ յամուրն Յ՚Նի, ՚ի ԹագաւորուԹեան Ներ-
սէհ[1] որդւոյն Ներսէհայ, բազում եպիսկոպոսաց և խոր-
հրդակցաց վանականաց, որք ծանուցեալ հաւաստեաւ ըզ-
հերձուած կորստեան մտաց նորա, զոր ետ բերել պատ-
կերս վասն նորոգման աղանդոյն (!) Կաղկեդոնի, և
որոշեալ զնա՝ հալածական արարին։ Եւ միաբանեալ
նահապետքն յաԹոռ սուրբ Լուսաւորչին զՎահանես հա-
րազատ արեան սուրբ առն՝ Վաչագն՝ որ ՚ի Վանն կըղ-
զեաց. և էր սա հետևեալ վարուց նորա, որ եկաց յա-
Թոռն՝ ամս երկու։ Կայր քանզի Վ ահանիկն դեռ ևս
կենդանի էր ՚ի Վասպուրական, հաւանեցոյց զամենս
՚ի պարզամտաց սուտ զնմանէ կարծել զհամբաւ հերձ-
ուածոյ. և վասն այնորիկ զմիջոց աշխարհիս Այոց
լցին նզովիւք։ Եկն ՚ի հրամանէն Ներսէհայ ՚ի միւս
աւուր[2] մեռան երկոքին. և ամ մի անվերակացու լեալ՝
ապա հրամանաւ Թագաւորին՝ որ Աղուանից կոչիւր՝
ժողովեալ ընտրելոյ արանց, և եպիսկոպոսաց սրբոյ
կացուցանեն յաԹոռ Հայրապետական զերանելի այրն

1 Աղուանից Աշտ։ 2 Ի միում ամի ըստ այլ պատմու-
թեան։

Ա՛ստուծոյ զտէր Յաչիկ՝ հարազատ տեառն Ա՛նանիայի մեծի հայրապետին, որ բանիւ վարդապետութեան սանձեաց զբերանս հերձուածողաց, սրբասէր և քրիստոսասէր, որ կալաւ զաթոռն՝ ամս լիննևւտասն։ Ա՛ւ զկնի նորա տէր Մարգիս ամս քսանևչորս։ Ապա զկնի Ա՛ստուածոյ Թադաւորէ որդի նորա Ա՛մբատ, որ և Շ՛ահնշահ կոչեցաւ։ սա ի Թագաւորելն՝ լիր արկեալ պարսպին Ա՛նւոյ՝ բարձրաբերձ բրգամբք և լայնատարած տեղօք, յԱ՛խուրեան գետոյն մինչև ի Ծաղկոցաձորն կոչեցեալ վայր. հիննարկեաց և զկաթուղիկէն պայծառ ի նմին քաղաքի, և ոչ կարաց աւարտել, զի եհաս նմա մահ. Թագաւորեալ ամս երեքտասան։ Յաւուրս սորա սկիզբն եղև շինուածոյ հռչակաւոր ուխտին Ա՛րամարաչէնն՝ կոչեցեալ, ի քրիստոսասէրն իշխանէն Ա՛հրամայ։ Ա՛ւ յետ նորա Թագաւորէ Գագիկ եղբայր նորա, ամս լիննևւտասն. սա շինեաց զսուրբն Գրիգոր գերահռչակ ի վերայ Ծաղկոցաձորոյն, գաղափար առեալ զՀոյակապ սուրբ Գրիգորն, զոր շինեաց Հայրապետն Ներսէս. և կատարեցաւ ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ի չորեքհարիւր քառասունն և եօթն[2] Թուին Հայոց. և կին նորա Կատրամիտէ Թագուհի աւարտեաց զկաթուղիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Ա՛մբատ Թագաւորն։ Շ՛ինեաց և Ա՛մբատ մատիստրոնն զփափագատես վանքն՝ որ Բագնայրն[3] կոչի։ Ապա Կիւրիոնէ-Յանայ կայսեր՝ առնու զԹագն Ա՛նւոյ՝ ամս լիսուն Թագաւորեալ. սա էր այր բարեմիտ յաւէտ առ ազգս Հայոց, որ և Թողեալ զպատանութիւնս Գագկեդոնի՝ մերում Հնմարտութեանս հետևեաց, և եկեալ յաշխարհն Կիլիկեցւոց մկրտեցաւ ի Հայոց ի վանքն որ կոչի Պաղակձիակ. և ետ վանացն գիւղս և ագարակս և այլ ինչս բազումս[4]։

Ա՛ւ յետ տեառն Ա՛րգսի առնու զկաթուղիկոսութիւնն Հայոց տէր Պետրոս, ամս երեսուն և ինն։ Ա՛ւ յետ Գագկայ Շ՛ահնշահի Թագաւորեաց որդի նորա Յովհաննէս՝ ամս քսան։ Յաւուրս սորա մեծապատիւ Ա՛ետան Ա՛րգսի զկնի բազում շինուածոյ բերդից և

1 Ուղիղն Մարմաչէն, ի Շիրակ։
2 Ինն ըստ սովորական հաշուի։
3 Բագնայրն արդ կոչի Ղուկէ-ձէ, ի Շիրակ։
4 Ուստի ուսաւ Կիրակոս զայսպիսի հեթեթանս։

եկեղեցեաց՝ շինեաց և զփառաւոր վանք զՅակունս[1] և զեկեղեցի յանուն սրբոյն Աստուածածնի, և զՇառաքար[2] վանքն բերդ արարեալ պարսպեաց ամրագոյն, և եկեղեցիս շինեաց փառաւորս՝ ի նմա։ Այլ Թագաւորն Յովհաննէս գԺտուԹեամբ լեալ ընդ Հայրապետին Պետրոսի՝ գնէ զնա՝ ի բանտի, և զԱեոսկորոս ոմն առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Անանհին՝ բերեալ ձեռնադրէ զնա կաթուղիկոս փոխանակ Պետրոսի։ Այսպա եկեալ Յովհէփ կաթուղիկոսն Աղուանից՝հաշտուԹիւն արարեալ՝ ի մէջ Թագաւորին և Հայրապետին՝ հանէ զկաթուղիկոսն՝ ի բանտէ. իբրև տեսին ռամիկք բազմուԹիւն քաղաքին Անյոյ եԹէ արձակեցաւ կաթուղիկոսն՝ ի բանտէն, ընԹացեալ յանդգնուԹեամբ՝ ի վերայ Աեոսկորոսի՝ պատառեցին զքօղն երեսաց նորա յաւուր յայտնուԹեան տեառն, մինչ դեռ օրհնէին ընդ ջուրն. քանզի քօղով վարէին յայնմ ժամանակի կաթուղիկոսք, և հանին զնա անարգանօք՝ ի քաղաքէն, և կացուցին զՊետրոս յաԹոռ իւր։ Այս գնաց Աեոսկորոս տրտմուԹեամբ՝ ի Անանհին՝ ի տուն իւր, և անդ եղև վախճան կենաց նորա. և եղաւ հուպ յեկեղեցին։ Այս յաւուրս իշխանուԹեան Օգաբարիայի և առաջնորդուԹեան Անանհնին Աեոիդոր վարդապետին՝ որդւոյն Տուտայ, որ էր այր երևելի, առաքեցին քնաքիչք քաղաքին Անյոյ այր մի քարկոփ՝ ի Անանհին՝ ի նոյն քաղաքէ, զի յայտնի կամ գաղտնի առցէ մասն մի՝ ի նշխարաց Աեոսկորոսի, և տարցէ՝ ի քաղաքն. զի վասն նորա են ասեն այս կոտորուածք որ լինի՝ ի քաղաքիս հանապազ յայլազգեաց. զի Թերևս ԹողուԹիւն առցէ քաղաքիս վասն յանդգնուԹեանն՝ զոր գործեցին ընդ նա հարքն մեր։ Այլ այրն երԹեալ՝ ի գիշերի կամեցաւ բանալ զգերեզմանն և առնուլ՝ ի նմանէ մասն մի, և ահաբեկեալ ահիւ մեծաւ՝ ոչ կարաց բանալ զգերեզմանն. և երԹեալ պատմեաց Աեոիդոր վարդապետին. և նա ասաց. Այս ոչ կարեմ գործել զայդ իրս, մինչև ժողով բազմուԹեան քաղաքին Անյոյ այսր գայցեն, և մեք ընդ նոսա պաղատեսցուք խնդրել զԹողուԹիւն՝ ի նշխարաց նորա։ Այլ ասացեալն յապաղէր. զի ոչ ոք արար փոյթ զնմանէ։

1 Իմա՝ ի գիւղն Խնձիոս։ 2 Վ. 131։

Ա. յետ Յովհաննիսի առնու զԹագաւորութիւնն Պապիկ որդի Ա.հոտայ՝ ամս երկու։ Ա.րդ յետ մահուան Յովհաննիսի՝ որ և Ամբատ, միաբանեալ իշխանաց և զօրացն յաւէտ և պատրիարգն Պետրոս, ժողովեցան առ դրունս մեծափառ կաթուղիկէին Ա.նւոյ, և կացուցանեն զՊապիկ Թագաւոր, զեղբօրորդին Յովհաննիսի, և երդմունս արարեալ ուխտից միամտութեամբ ծառայել նմա։ Ապա նա պատերազմական արիութեանց ոչ ինչ փոյթ արարեալ, որով աշխարհ վարի, մանաւանդ զի առ այնու ժամանակաւ աւելի հին՝ ի դէպ էր քաջանալ. քանզի իշխանութիւն Իսմայելի շլոթեալ էր, քանզի Ակիւթացիք յարեան ՝ի վերայ նորա, որպէս ցուցաք յառաջագոյն. և Յունացն ևս վըդովեալ էր։ Այլ սա զի ՝ի մանկութենէ դպրութեամբ գրոց վարժեալ էր ՝ի նոսին ևս և զբօսնոյր. զոր իմացեալ ազգին Յունաց՝ առ իւրեանս կոչեցին խաբանօք, յաւէտ ևս ՝ի սաստկելոյ իշխանացն, որք նենգեցին զուխտ՝ զոր եդին ընդ նմա, աննենգ պահել զտէրութիւնն նորա ՝ի վերայ ինքեանց, և ոչ կացին յուխտին. և կատարած գործոյն կորուստ եղև անձանց և աշխարհին. զի և Յոյնք զգնացեալն՝ ՝ի կղզւոջ արգելին, և ՝ի տեղի նորա վերակացուս արձակեալ ամ մի։ Ապա բնակիչք աշխարհին զմիմեամբք ելանելով անձռուն[1] յոխորտացնօք, և ՝ի միմեանս արձակեալ խորամանկութեամբ, և ստաբանութեամբ խորհէին զխորհուրդս նենգութեան, մատնելով զմիմեանս կայսեր; բաղբաղեալ զձեռն տալն առ Ապարայիան. որք և իշխանացն անգամ՝ զհայրապետն, և նորա զնոսա. զոր յոչ կամայս առեալ տանէին ՝ի բնակութենէ իւրեանց։ Ապա մնացեալքն իբր զանտերունչս անգուշեալ կիցս ընկենուին։ Տիրեալ Յունաց ամն քսանևմի. և յետ որոյ հուր հարաւային եքեալ՝ եբեր զգազանն մարդախառնձ, որ հրդեհեալ բնաջինջ արար զազգս մեր, և առաւել զքաղաքն Ա.նի. զի պաշարեալ զնա աւուրս քսանևհինգ. և ապա աւեալ զքաղաքն կոտորեալ զբնակիչս նորա, ոչ ումեք ողոմեալով, արեանաւրհուռ գազանն՝ որ Ա.րփասլան կոչէր։

1 ՕՕ. անձռուին։

Ա.յլ մեր՛ն դադարեաց գաւազան Թագաւորական[1], որպէս Ալեքսիկէին որ՛ի Հօռէ քաղաք և որ շուրջ գնացեալ. զի և սա յազգէ Հագրատունեաց էր. և միւս և այս Յոհաննէս Սմբատեայ և Կարուց, որ գնաց առ Յոյնս. սակայն գլխաւորն դադարեաց յաւուրս Դաւիթ, և այլքն անձնատուրք եղեն ընդ ձեռամբ վիշապին. և կէսք փախստականք գնացին առ կայսրն Յունաց, և նոքա տիրեցին աշխարհիս ամենայն։ Իսկ Յոյնքն՝ գնացեալքն ետուն երկիրս և քաղաքս կալուածոյ, զկողմանս Կեսարու և Սեբաստու՝ զոր ետ Դաւիթայն երկուցն Թագաւորաց։ Իսկ զկաթուղիկոսն Պետրոս մեծապատիւ պատուեաց կայսրն, և եդ նմա աթոռ ոսկի. և իբրև յարեաւ յաթոռոյն և կամէր արտաքս ելանել, եպիսկոպոս մի անուն Դղիսէ՝ առ զսայլիտն[2] ոսկի՝ յորոյ վերայ նստաւ կաթուղիկոսն. իսկ սպասաւորքն արքունի ոչ տային նմա թոյլ առնուլ. և ետ կայսրն զեպիսկոպոսն, եթէ ընդէ՞ր զայդ առնէր. և ասէ ցնա եպիսկոպոսն. Որպէս է մեր, զի յաթոռն յոր նստի կաթուղիկոսն՝ ոչ այլ ումեք նստիլ բայց՛ի կաթուղիկոսէն. և զարմացաւ կայսրն ընդ պատիւն զոր եդ եպիսկոպոսն կաթուղիկոսին, և հրամայեաց սպասաւորացն Թոյլ տալ զի առցէ եպիսկոպոսն. և ասէ ցնա. Աւօթն հազար դահեկանի է այդ, տար պահեա զայդ՛ի պատիւ կաթողիկոսին քո։ Եւ եղև երբեմն ժամանակ, զի յաւուր յայտնութեանն տեառն Ժողովեալ էին ամենայն քրիստոնեայք և այլ ամբոխ բազում՛ի Տրապիզոն քաղաք օրհնել զջուրն ըստ սովորութեան. և ըստ նախանձուն զոր ունին Յոյնք ընդ Հայք՝ կացուցին զՀայրապետն իւրովք ժողովրդովք՛ի վերոյ և ինքեանք՛ի ներքոյ կողմանէ գետոյն. այսպիսի մտօք, զի Թերակատար հաստարկին զօրհնութիւնս Հայոց. զի՛ի ներքոյ կալով՝ զօրհնեսցեն՛ի Հայոց կրկին օրհնեացեն. սովորեցուցեալ էին և աղաւնի մի սպիտակ որ գայր և խառնէր ընդ ջուրս և վերանայր, որով խաբէին զանընտեսն եթէ Հոգին սուրբ էջ՛ի նմանութիւն աղաւնոյ։ Եւ յաղօթեն սուրբ Հայրապետին Պետրոսի՝ դարձաւ ջուրն՛ի

1 Ըստ տպագրին յաւելուած. զէ ՚ի ՚ի ՚ի

վեր և լոյս սաստիկ ծագեաց, որ նուաղեցուցանէր ըզ-
Ձառապայթս արեգական. և իբրև եկին աղաւնին նոցա
խառնիլ ընդ ջուրն որպէս սովոր էր, չանկարծակի խոյա-
ցեալ արծիւ մի[1] էառ զնա և գնաց, և զամենի մեծի
Հարան Յոյնքն ամենայն, և ակամայ գովէին զՀաւատս
Նոյին: Եւ հրամայեաց կայսրն Հայրապետին դնել
զաթոռ իւր ի Սեբաստիա և անդ հովուել զհօտ իւր.
և եկաց անդ մինչև ցամահ իւր. և եղաւ անդէն ի Սե-
բաստիա, կացեալ կաթուղիկոս ամս երեսուն և ինն:

Եւ յետ նորա տէր Իսայիկ սակաւ ժամանակս: Ապա
աշխարհս Նոյոց ժողովեալ ի մի վայր՝ կացուցին Հայ-
րապետ զտէր Սիմէոն արհամ զոր անուանեցին Դրիգորիս.
զորդին Դրիգորի Պափնատրոսի ի քաղաքէն Ընջոյ,
զթոռն Պասակայ մարտիրոսի, զայր խնամատուն և ա-
ռաքինի: Ընդ ինդրեաց[2] յիւրմէ մեկնել զարուեստն
քերականի, զի էր նա իմաստասէր. և մեկնեաց զնա
արուեստաւոր բանիւ: Այս աբանչելի Հայրապետս
Թարգմանեաց բազում Ձառս վկայից Աստուծոյ, և Ձառս
Ներբողականս ի Յունաց և Հայոց: Եդ սա ի մեռ
իւրում յետ ժամանակաց երթալ ի Դուին քաղաք,
Եպիսկոպոսութիւն նշխարաց սրբոց առաքելոցն Պետ-
րոսի և Պօղոսի, խորհրդակից իւր առեալ զոմն վար-
դապետ Դէորգ անուն[3]. և կոչեալ զՀօտս իւր զեպիս-
կոպոսս և զերիցուսն և զիշխանս, ասաց նոցա զմտա-
ծումն իւր. և նոցա յարտասուս հարեալ լային դառ-
նապէս, և աղաչէին զնա մի թողուլ զնոսա որբս և ան-
Հովիւս: Նա նոքա ասէ ցնոսա. Վասն է իմ եղեալ և
անհնար է ինձ ստել. տեսէ՛ք ձեզ այր մի, զի ձեռնա-
դրեցից զնա փոխանակ իմ. և էր պատուամեծար վար-
դապետն այն Դէորգ՝ զոր վերագոյն յիշեցաք: Որում
ոչ հաւանէին ժողովուրդքն՝ այլ ի նոյն աղաչանս պըն-
դեալ կային, և ոչ զոք գտանէին փոխանորդ նորա,
յայնժամ ասէ ցնոսա Դէորգ. Ընդէր այնչափ աղա-
չէք զնա, որ նա ուխտեալ է երթալ, և ես տեղեակ
եմ խորհրդոյ նորա, զի ոչ փոխի յայնմ. ես աՀաւա-
սիկ, թող զիս ձեռնադրեսցէ փոխանորդ իւր: Որում

1 Ոչ պակաս քան զաղաւնին՝ խաբուսիկ է և արծուիդ:

2 Գրիգորիս՝ ի հօրէն իւրմէ:
3 Գէորգ Լօռեցի: — Վ. 102:

լուաւ կաթուղիկոսն զարմացաւ, և լի եղև ցասմամբ, զի երդուեալ էր Աթոռդ ընդ նմա երթալ, սակայն յաւ կամայ կամաց ձեռնադրէ զնա, և ինքն Ճանապարհորդ լինէր, և Աթոռդ նստաւ յաթոռ նորա։ Եւ երթեալ սուրբ Հայրապետն ի Հռոմ, մեծապէս պատուեցին զնա ազգն Ֆռանգաց[1]։ Եւ կատարեալ զուխտն գալ ի Կոստանդինուպոլիս նաւով՝ թարգմանութեան աղագաւ, և յարուցեալ բռնութեամբ հողմոյ ծովուն, և տարեալ զնաւն ընդ այլ Ճանապարհ՝ հանէ զնոսա Այգիպտոս։ Ուր որք ընդ նմա էին սպասաւորքն երկեան, զի սովորութիւն էր բնակչաց աշխարհին զալէկոծեալ նաւսն կողոպտել և սպանանել։ Եւ կացեալ սրբոյն Աւրիգորի յաղօթս, եղև անձրև սաստիկ Այգիպտոս, որ երբէք չէր լեալ. իբրև տեսին զայն բնակիչքն՝ զարհուրեցան։ Ասացի Ճգաւարացին որ թագաւորեր նոցա, այր խաստուն էր, կոչեաց զզօրսն իւր և ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք զի Այգիպտոս անձրև բնաւ չէ եկեալ ի սկզբանց անտի մինչև ցայժմ. բայց միայն կարկուտ յաւուրս Մովսէսի, և անձրև մի յորժամ Յիսուս էր եկեալ. ոյնպէս և այս նշան է գալստեան աբանչելագործ մարդոյն. տեսէք խնդրեցէք զնա թէ ո՞ր է։ Եւ շրջեալ զօրացն ընդ աշխարհն գտին զԱւրիգորիս իւրովք պաշտօնեաքն, զի կային յաղօթս առ եզր ծովուն. և աճին զնա առ սուլտանն։ Ընդարձակ զնոսա և ասէ. Ո՞ւստի էք եկն այս անձրևս. և նոքա ասեն. Ո՛չ։ Եւ ասէ ցնոսա. Ո՞ւստի քինչ պատճառի խնդրեցէք զայս։ Նոքա ասեն, թէ Աւրիգաբ վանն սովորութեան աշխարհիս ի սպանմանէ, զի նաւաբեկ եղաք ի ծովու. և զամենայն իրս ասացին ստուգութեամբ։ Յայնժամ զարմացաւ սուլտանն, և գովեաց զհաւատս նոցա. և ասէ ցհայրապետն. Ինչ դու Այգիպտոս երթեալ՝ արկոյ, և ամենայն քրիստոնեայք որ են ընդ իշխանութեամբս իմով՝ քեզ լինին հնազանդ։ Եւ ետ նմա պարգևս մեծամեծս, և սիրեաց զնա իբրև զհայր. և եղև յայնմ օրէ հնազանդ յաթոռն[2] սրբոյն Աւրիգորի. և անդ կացեալ վախճանեցաւ սուրբն ի փառս Աստուծոյ[3]։

1 Տես ի Պատմ. Հայ. Բ. 1000։
2 ՕՕ. ախոռն։
3 Առ և զկնի (37) չփոթեալ ի համարի զԱւրիգորիս Վկայասէր

Իբրև ետես Ակիւրիկէ արքայ Հադրատունեաց որդի Դաւթի որդւոյ Դերենկան, որ հիմնարկեաց զՀռչակաւոր ուխտն զԱղբատ և զԱնապահին, եթէ եթող տէր Գրիգորիս զաթոռ իւր և գնաց ի Հռոմ, կոչեաց առ ինքն զտէր Յովսէփ կաթուղիկոս Աղուանից, և ետ ձեռնադրել զտէրն Հարսեղ՝ կաթուղիկոս Հայոց. և զԱրգիս ոմն դրան երէց Ակիւրիկէի՝ ձեռնադրեն եպիսկոպոս Աղբատայ, և յայնմհետէ եղև աթոռ եպիսկոպոսի. և յետ Արգսի՝ Գէորգ, և յետ նորա Հարսեղն։ Սա էր գեղեցիկ տեսլեամբ. զսա տեսեալ Թագուհին Վրաց Թամար՝ մեծապէս պատուեաց զինա վանն վայելչութեան գեղոյ նորա, զի եղբարք նորա գոծակալք էին տանն արքունի։ Ու յետ Հարսեղի եղև եպիսկոպոս Գրիգորիս. սա աղգական էր Օ՛աքարիայի և Իւանէի, սա որ յաւուրս մեր եղև. և յետ նորա Յովհաննէս այր հեզ և առաքինի՝ աղգական իշխանաց Խաչենոյ։ Սա զգաւիթն փոքրագոյն քակեաց որ ի դուռն կաթուղիկէին Աղբատայ, և շինեաց մեծ և գեղեցիկ շինուածս, որ զարմացուցանէ զտեսողն հիացմամբ։ Ու յետ նորա միւս Յովհաննէս քուերորդի իշխանաց Օ՛աքարիայի և Իւանէի, և եղբօրորդի առաջնոյ Յովհաննիսին. սա շինեաց բերդ մի ամրագոյն պարսպօք ի մէջ Աղբատայ և Անապահնին. վասն որոյ գժտութիւն ընդ երկուս մեծամեծ վանորայս եղև, որպէս թէ ի հողոյ Անապահնին լինէ, և վրէժխնդիրք էղև իշխանն Շ՛ահնշահ՝ որդին Օ՛աքարէի՝ Անապահնին. զի հայր նորա անդ թաղեալ էր, և իբրեանց սեփական համարէին. զի Աղբատ ի Վրաց Թագաւորին հաշուին էր յայնմ ժամանակին։ Իբրև մեռաւ եպիսկոպոսն Յովհաննէս՝ քակեցին և զպարիսպն բերդին հրամանաւ Վաթարին. և յետ մահու եպիսկոպոսին Յոհաննիսի՝ եկաց ի տեղի նորա Յովհաննէս որդի Ղազարթանայ՝ ի Մաճնաբերդէ Հադրատունեացն՝ աման երկու, որ չև էր ձեռնադրեալ եպիսկոպոս վասն շփոթման ժամանակին, որ յետոյ ձեռնադրեցաւ ի կաթուղիկոսէն Ղազանից Եղիսեէ՝ կողմանցն Մաճնաբ-

Մեծ և զԳրիգոր քեռորդի իւր, զոր ձեռնադրեաց եպիսկոպոս Ե-
պիսկոպոսի, և ինքն դարձաւ ի Հայք, և մեռաւ ի Կարմիր վանս Վեհանոյ։

բերդին. և յետ նորա յամաչասպ ի քաղաքէ Նիւոյ։ Ա՝ա չինեաց եկեղեցի ի տեղին Հրաշալի և զանկաւատուն և ժամատուն մեծ և ոքանչելի։ Ա՛յլ դարձցուք ի կարգն բանին, անդի ուստի ելաք։ Վանդն ի բազում բաժանեցաւ կաթուղիկոսութիւնն Հայոց. տէր Գրիգորիոն որ և Ա՝ահրանին՝ Լուսաւորչագիտաս. և Գէորգ ի կողմանս արևմտից. և միւս ոմն ի Ա՝ասպուրականի՝ ի կղզւոջն Աղթամարայ. և տէր Յարսեղ յաշխարհին Հայոց. այսպէս ի յոլովս բաժանեալ էր։

Յայն Գատիկ Թագաւորն Կարուց[1] գնաց տեսանել զկայսրն Յունաց, քանզի ընդ իշխանութեամբ նորա էր. և ի դառնալն եկն ի Կեսարիա. և լուաւ թէ ոմն Ա՝արկաս՝ մետրապոլիտն Կեսարու՝ ունի շուն մի, և վասն ատելութեան որ առ ազգս Հայոց ունին Հռոմք՝ զանուն շանն Աղմէն կոչեն. և այսպէս ձայնէին զնա, զի զՀայքս՝ ամենայն ազգ Աղմէն կոչեն վասն քաջութեան Աղմանայ[2] Հայկազնոյ։ Գնաց Թագաւորն յիջևանս լինել առ մետրապոլիտն, և նա ուրախութեամբ ընկալաւ զնա, և իբրև ընդ գինիս մտին ասէ Թագաւորն. Լաւեալ է իմ եթէ դու շուն մի ունիս ազնիւ, ցոյց ինձ զի տեսից զնա։ Ասէ մետրապոլիտն. Ա՝նդիկ առ դուրս է հանդէպ մեր. և ասէ Թագաւորն. Ձայնեա զնա զի գայցէ այսր. և նա ձայնէր նմա զայլ շան անուն և ոչ զԱղմէն. իսկ շունն ոչ ընդոստնոյր և ոչ գայր առ նա։ Եւ իբրև ձայնեաց Աղմէն Աղմէն, վաղվաղակի ի վեր յարեաւ և եկն։ Ասէ Թագաւորն. Ո՞յդ անուանդ ընդէր ես դու կոչեալ նմա։ Ասէ մետրապոլիտն. Ո՞ի մանուկ է և նորահասակ. և հրամայեաց Թագաւորն ծառայից իւրոց և ասէ. Բերէք քուրձ մի մեծ, և արկէք անդր զշունն. և հազիւ կարացին արկանել։ Ապա ասէ Թագաւորն. Ա՛րկէք և զեպիսկոպոսդ անդ առնա. Թէպէտ տեսից ես թէ մանո՞ւկ է շունդ, որպէս ասացին դա։ Իսկ նա լայր և աղաչէր զԹագաւորն Թողուլ նմա զյանցանսն։ Իսկ Թագաւորն բարկութեամբ ասէ. Ա՛րդ խնդանաւ խնդեցէք զշունդ, զի կերիցեն զմիմեանս. և խնդէին զշունն, և նա առ կսկծի ցաւոյն ժա-

1 Ոչ Կարուց՝ այլ Բագրատու- նեաց Թագաւորին Գագկայ է որդի։

2 Ա՛յսպէս ՕՕ։

նեօք և մաղլօք պատառ պատառ առնէր զնա մինչև մե-
ռաւ. և ասէ. Ա՛րդ գիտացիր թէ մանուկ է Ա՛րմէն.
և ինքն կողոպտեաց զեպիսկոպոսարանն, և այլ ոչ ևս
ետես զկայսրն։

Ի սկ միւս[1] Գադիկն Թագաւորեալ՝ յաւուր միում
էլ յորս, և էր արբեալ. և՝ի տօթ ժամու էջ յերիվա-
րէն հանգչել ընդ հովանեաւ ծառոյ, և այլ ոչ ոք գոյր
ընդ նմա, բայց միայն մանուկ մի փոքրիկ. զի այլ զօրքն
ամենայն ցրուեալ էին զհետ որսոյ. և պատահեալ նմա
արանց Յունաց՝ ծանեան զնա, և կապեալ առեալ տա-
րան զնա՛ի բերդ մի. և իբրև սթափեցաւ՝ի գինւոյ
անտի, ասէ. Ո՞ւր եմ ես. և Յոռոմքն ասեն. Ո՞ւր է
մետրապօլիտան մեր Ա՛արկոս. և ընկեցին զնա անարգա-
նօք ընդ պարիսպն բերդին, և նա ջարդեալ մեռաւ։
Եւ զմանուկն այն որ էր ընդ նմա՝ գնեաց ոմն վաճառա-
կան Յոյ, և արար իւր փեսայ։ Եւ եղև յետ աւուրց
իբրև զարդացաւ մանուկն[2] և եղև այր, գնաց՝ի սահ-
մանս Ամիւկիոյ արամբ միով որսալ կաքաւս. և էր անդ
բերդ մի՝ զոր Խարձրբերդ կոչեն. և էր անդ եպիսկո-
պոս մի հռոմ. և եղև ծանօթութիւն առն և եպիս-
կոպոսին, և եղեն միմեանց սիրելիք, և զբաղում ա-
ւուրս ուտէին և ըմպէին՝ի միասին. և այրն ոչ հանէր
՝ի մտաց զկրօն զոր գործեցին Յոռոմք ընդ Թագաւորն
Գադիկ ընդ ազգական նորա։ Եւ եղև օր մի, զի ամե-
նայն պաշտօնեայք եպիսկոպոսին ելեալ էին արտաքս՝ի
բերդէն՝ի պէտս ինչ գործոյ իւրեանց. և էր եպիսկո-
պոսն միայն և մանուկ մի ընդ նմա. եկն այրն որսորդ
հուպ առ բերդն որսալ կաքաւս. և տեսեալ զնա եպիս-
կոպոսին ձայնեաց՝ի պարսպէն գալ առ նա, և՝ի միա-
սին ձաշակել, և նա ոչ հաւանէր. և էջ առ նա եպիս-
կոպոսն առանց պաշտօնեի։ Իբրև ետես այրն թէ միայն
գայ եպիսկոպոսն և ծանեաւ թէ ոչ ոք կայ՝ի բերդն,
ասէ ցայրն որ ընդ նմա էր. Ա՛յսօր՝ի դէպ է առնուլ զը-
վրէժ արեան սպանման Թագաւորին մերոյ՝ զոր գործե-
ցին Յոռոմք. տե՛ս գուցէ առաքեսցէ զքեզ եպիսկոպոսն

1 Նոյն Գագիկ է զորմէ յառաջն ասացաւ։

2 Վասն Ռուբենի հեղինակի Կիւլիկեցւոց Թագաւորութեանն այլ չափահաս և ազգական լինել Գագկայ. և ամ պատմածդ Կիւրոսի՝ առասպելեաց ունի ցոյցս։

'ի բերդն, ջանասջիր առնուլ զնա և ինձ իմացուսցես 'ի ձեռն նշանի ինչ, զի ես սպանից զեպիսկոպոսն։ Եւ իբրև եկն եպիսկոպոսն՝ մտին 'ի ձաշել, և 'ի պակասել գինւոյն՝ ասէ եպիսկոպոսն ցսպասաւորն. Արդ 'ի բերդ անդր, և բեր մեզ անտի գինի, զի ուրախասցուք 'ի միասին. և գնաց այրն և ասաց զՀրաման եպիսկոպոսին՝ սպասաւորի նորա. և իբրև նա խոնարհեցաւ 'ի կարաս անդր զի հանցէ գինի, նա կալեալ զոտից նորա ընկէց զնա 'ի կարասն գլխիվայր, և խեղդեցաւ 'ի գինւոյն. և եւեալ 'ի պարիսպն նշանակեաց տեառն իւրում, եթէ առի զբերդս. և սա աստէն 'ի ներքոյ խեղդեաց զեպիսկոպոսն, և ինքն մտեալ 'ի բերդ անդր բռնացաւ. և առ սակաւ սակաւ աձեցոյց զկալուածս իւր, զոր բռնութեամբ և զոր պատրանօք. մինչև տիրեցին նա և որդիքն իւր և Թոռունքն աշխարհին Կիլիկեցւոց, քաղաքաց և գաւառաց։ Սա է նախնի Թագաւորին Լեւոնի որ ընդարձակեաց զսահմանս իւր քաջութեամբ, զոր յիւրում տեղւոջն ասասցուք։—Այլ գինի Ալ ասէի կայսեր Թագաւորեաց Կոստանդին, և յետ նորա Ռոմանոս ծերն, և գինի նորա Միխայէլն, և ապա Կիւրիոյ[1], և յետ նորա Յոհաննէս. առ սովաւ ասեն զերծեն Պագկայ 'ի Յոյնս. և յետ նորա Կիւ Ղաստորն, և ապա Պուկիծն, և յետ նորա Պհուժէնն։ Յառաջին ամին սորա մեռաւ Ե ահնշահն Պագիկ Թագաւորն Ալ անանդայ[2], և յութերորդ ամի իշխանութեան իւրոյ՝ եկ Պհուժէնն բազում զօրօք 'ի Պարսս 'ի պատերազմ, և եկն 'ի Յանազկերտ և առ զնա. զոր լուեալ բռնաւորին Ալփասլանայ՝ եկն ընդ առաջ. և եղև սով սաստիկ և պատերազմ. և պարտեցաւ Պհուժէնն և ըմբռնեցաւ 'ի նմանէ. և հարկ եդեալ 'ի վերայ եթող զնա. իսկ ազգ նորա ոչ հնազանդեցան նմա, այլ Թագաւորեցուցին զՅիքայէլ որդի Պուկիծին։ Պարձեալ պատերազմեալ Միխայէլն՝ եհար զՊհուժէնն, և զօրացան քուրձ ագուցեալ նմա՝ ածին առ Թագաւորն Միխայէլ, և 'ի Ձանապարհին զաչս նորա փորեցին հրամանաւ կայսեր, և 'ի կսկծոյն մեռաւ՝ 'ի հինգ հարիւր քսան և մի Թուին։ Եւ 'ի սմին ամին դատաստանք եր-

1 ՈՀ. Կիւրիկ։ 2 Ոչ սա՝ այլ Բագրատունին էր Ճահնշահ։

կայնամտին և արդարադատին Աստուծոյ յուզեցան ի վերայ խրոխտ և անգառագիւղ գազանին Լփասլանայ. մինչդեռ մրմռայր զայրագնութեամբ տիրել տիեզերաց, և զմիձակեալ սրտին դառնութիւն թափել և յայնոսիկ՝ զոր ոչ էր ածեալ զբռամբ, յեղակարծ ժամանակի սրախողխողեալ բարձաւ ամբարիշտն յերկրէ, և ոչ ետես զփառս Աստուծոյ։ Եւ յետ նորա բարեբախտ որդի նորա՝ որ Հեզիքեայն կոչիւր. սա ոչ նմանեաց հայոց. զի մտահաս եղեալ բասրեր հօր իւրոյ զիմաստութիւնն, իբր թէ հակառակ եղեալ կենաց մարդկան արեամբ և զրկմամբ խնդացեալ. իսկ ինքն իմաստաբար քաղցրավարութեամբ կարեօք հանդերձէր զամենայն։ Եւ զրդ արին այն և խոհեմ քան զՅոլոմէս՝ի թագաւորաց, հոգ տարեալ յամենայնի զի արդարութեամբ վարեսցի և մի ոք լինի տրտում՝ ի զրկելոց, և հպարտ՝ ի գոռոզից, որ և ազատաբարոյ և մեծախորհուրդ. այլ և տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեան։ Ա՝ի դոյզն ժամանակի զբօլորն հնազանդեր զտիեզերս, ոչ պատերազմաւ և բռնութեամբ, այլ սիրով և խաղաղութեամբ. և այսպէս բարի անուամբ կալեալ զիշխանութիւնն ամն քսան, վախճաներ՝ի կնոջէն գեղակուր եղեալ. և անպատմելի խռովութիւն լեալ զամս չորս. զի եղբայր նորա Մընդուշն և որդի նորա Հեքիարուքն՝ զայսոսիկ մարտիւ պատերազմի՝ զբարեյարմարութիւն աշխարհի՝ ի բաց կտրեցին. վասն ոչ ընդ փոյթ միոյ՝ի նոցանէն տիրելոյ՝ հոսմունս արեանցն իբրև զուխից լինէր, ոչ միայն զինակիր նահատակաց, այլ և առհասարակ քաղաքաց և գաւառաց. և այսպէս բարիքն՝ի բաց վճարեցան՝ ընդ խզման կենաց թագաւորին. և ապա Հեքիարուքն սպանեալ զՄընդուշն, և յետ նորա ըզԽզըլն, որ թագդմանի կարմիր։ Ա եառ զ օռէ քաղաք, և զուխտն սուրբ զԱնահիտն և զ աղբատ[1]։

Իսկ յետ Իքայելի կայսեր առնու զթագն Լևքոն։ Յեօթն և տասն ամի սորա ռոմայեցիք ելին ընդ Մրակ[2] ի կողմանս Ասիացւոց, խնդրել զքէն վրէժուց տառա-

1 Զորս և այրեաց։

2 ՈՈ. թիւրք։

պանաց քրիստոնէից՝ ի Սկիւթացւոց և՝ ի Պարսից, հանդերձ Տաճկաստանաւ. և բազումք կրեցին նեղութիւն յորդւոյն բեւլարայ՝ Ալէքս կոչեցեալ, որ էր Թագաւոր՝ ի Կոստանդինուպոլիս, գաղտնի և յայտնի նենգութեամբ. քանզի հրամայէ անօրէնն խառնել՝ ի կերակուրն դեղ մահացու և այնպէս տալ նոցա, նոյնպէս և յըմպելիսն, որք ուտէին և մեռանէին. և՝ ի ծովու ևս նենգեաց զնոսա, որ վստահանային՝ ի նա իբրև՝ ի հաւատակից իւրեանց. իսկ[1] բարբարոսացն խորամանկութեամբ օգնէր, որում հատուսցէ տէր. քանզի և էր իսկ քրիստոնեայ, որպէս և ոչ մայր նորա. զի բազումք մեռան՝ ի Ֆռանկաց. և մնացեալքն ունայն դարձան Կ՚Ընտաք, և առին զնա և զԱրուսաղէմ, երկու Թագաւորազունք Մայունն և Տօնղրիլն[2], և եօթն կոմսունք. և Թագաւորեաց Արուսաղէմ Կոնտոփրի, և ապա Պաղտոյն, ամս եօթնեւտասն. և Ամարի ամս իննեւտասն. և այս եղև՝ ի հինգ հարիւր քառասուն և վեց Թուին Հայոց: Առեալ սկիւթացի բռնաւորն Կպել՝ ի Կառման քաղաքին Կոնեայ՝ ի զօրացն Պարսից. և ապա՝ ի բազումս բաժանի տէրութիւն նոցա. ումն բռնացեալ՝ ի Կորասան, և ումն Կ՚Իւղեստանի, և այլ ումն՝ ի կողմն Կապադովկացւոց և Հայոց[3], և ումն Ա՚նգիպտոս, և այլք յայլ տեղիս. որոց անուանքն անծանօթ են մեզ:

Ի հինգ հարիւր վաթսուն և երկու Թուին փոխեցաւ տէր Կարսեղ, կալեալ զաթոռն ամս երեսուն և երիս. և յաջորդէ տէր Գրիգորիս եղբայր Կ՚Երսեսի մեծաշուք պատուով. սոքա էին յազգէ սուրբ Կուսաւորչին. վասն որոյ և ընդ նմանէն իսկ յաթոռն աբանչելի սուրբ Հայրապետն Գրիգորիս՝ պայծառացոյց զեկեղեցի զանազան կարգօք և օրինադրութեամբ կանոնականօք, և ամենայնիւ ջանայր ըստ իւր նախնեացն վարիլ: Այս փոխեաց զաթոռ Հայրապետական՝ ի բերդն որ կոչի Կոռոմկլայ. քանզի իբրև տանէին Յոյնք զԹագաւորն և զտէր Պետրոս առ իւրեանս, այնուհետև ոչ

1 ՕՕ. ՝ի բարբարոսին:
2 Պեմոնդ և Դանգրեա կամ ասէ:
3 Վասն սուլտանաց Իկոնիոնի ասել: — Վ. 110:

եղեւ յարևելս աթոռ Հայրապետական, այլ ընդ իշխանութեբ Յունաց, երբեմն ՚ի Աեբաստիա և երբեմն ՚ի Նովք վայրն կոչեցեալ. իսկ սա փոխեաց ՚ի Ալայն Յռովմէական։ Եւ պատճառ փոխելոյն այս էր. զի նեղացաւ ՚ի Ակիւթականաց և ՚ի Տաճկաց այսր անդր աճեբլով, և ապա ետես զբերդն ամուր. բարձեալ զսբբութիւնս իւր և զսպասաք եկեղեցւոյ՝ տարաւ եդ անդ ՚ի պահեստի առ բարեմիտ կին մի իշխանի աղգաւ Ֆռանկ։ Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ վաղձանել իշխանին՝ որ էր (տէր) բերդին, և մնաց կին նորա այրի. զոր աղաչեաց սրբազան Հայրապետն զկինն բարեպաշտօն՝ տալ զբերդն ՚ի Հայրապետն զի լիցի նա աթոռ Հայրապետութեան Յայոց, և կինն ետ յօժարութեամբ. և յուզարկեալ սուրբն զկինն յաշխարհն Ակիլիկեցւոց առ մեծ իշխանն իշխանաց Յայոց Լևոն, և նա ետ նմա գիւղս և ագարակս և զայլ կալուածս և ուրախ արար զկինն յոյժ. և ապա յուզարկեաց զնա յաշխարհն իւր։

Ա՛յս Լևոն իշխանս և եղբայրն Ստեփաննէ որդիք էին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբինի, Թոռունք յառաջագոյն ասացեալոց առն, որ յազգականութենէ և ՚ի զօրացն Գագկայ՝ Ա՛րծրունեաց. սոքա ընդարձակեցին զսահմանս իւրեանց քաջութեամբ տիրելով բազում քաղաքաց և գաւառաց, և այլոց բազմաց. և առին զանուանի քաղաքս աշխարհին՝ զՏարսոն, զՄամ, զ՚Ադանա, զՄելևկիա, և որ շուրջ զնոքօք գաւառք և գիւղք և քաղաք։ Եւ լուեալ կայսրն Յունաց որ Ա՛լեքս կոչիւր, առաքէ ՚ի վերայ Յայոց բազում զօրօք, և ըմբռնէ խաբէութեամբ զՄստեփաննէ, և ետ սպանանել։ Իսկ Լևոն առեալ զեղբօրորդիս իւր՝ զՌուբէն և զ Լևոն, եդ զնոսա ՚ի բերդ մի ամուր, և ապա էառ Լևոնն զքէն վրիժուս արեան եղբօրն ՚ի Յոռոմոց անտի՝ որ բնակեալ էին յաշխարհին, զի զբռնացեալսն կոտորէր, և զայլսն փախստական առնէր յաշխարհէն, և ինքն տիրէր ամենայն գաւառաց մեծաւ զօրութեամբ։ Իսկ ՚ի հինգ հարիւր վաթսունևերկու Թուականին՝ յորում վաղձանեցաւ Նարսեղ, փոխեցաւ առ Քրիստոս մեծ և հռչակաւոր վարդապետն Գէորգ՝ որ ըստ քաղցրութեան բարուցն իսկ՝ Մեղրիկ կոչէին։

1 Խմ
2 Ան

Ա՝ կարգաւորէ զՀռչակաւոր ուխտն որ կոչի Կրաչարկ. անդադար լինէր ի պաշտօնն զցայգ և զցերեկ, և հանապազ պահօք կատարել, և առանձին ումեք ոչ լինել՝ բայց ի հասարակաց տանէն։ Ասոյն ամի և արքին Հռովմայեցւոց Տանղրի իշխող քաղաքին Կնտիոքայ՝ վախճանէր դեղակուր լեալ ի պատրիարգէն իւրեանց։

Եւ առնու զկաթուղիկոսութիւն Հայոց յետ տէր Յարսեղի՝ ամս չիսուն և երեք՝ Կրիգորիս։ Այս բազքանչելիս Կրիգորիս ձեռն ի գործ արկեալ շինեաց զեկեղեցի հրաշազան գմբէթարդ ի նոյն բերդն[1]. և սկսաւ թարգմանութիւն առնել աստուածային գրոց, և բազում գիրս ետ թարգմանել ի հայ լեզու զոր ինքեամբ, և զոր այլոց ձեռամբ։ Յաւուրս սորա էին վարդապետք անուանիք և իմաստունք, Եղիսէս սքանչելի հարաշատ նորին կաթուղիկոսի, և միւս Եղիսէս եպիսկոպոս[2], և Եղիսէս Ամբրոնացի՝ եղբայր Հեթմոյ, որ թարգմանեաց զմեկնութիւն տեսլեան Յովհաննու աւետարանչի, և զպատմութիւն Կրիգորի պապուն Հռովմայ, և զօրինադրութիւն սրբոյն Ներսիսի. տոսի. արար և մեկնութիւնս յինքենէ սաղմոսացն Դաւթի, առակացն Սողոմոնի, և սուրբ պատարագամատուցին, և աղօթիցն Յովհաննու աւետարանչին, որոյ սկիզբն է այս, Ի սկզբանէ էր բանն։ Զ՝ինեաց եկեղեցիս հրաշազան ի վանքն որ կոչի Սկևռա, Հուպ ի քերդն անտառ Ամբրոն. և կարգեաց զպաշտօն վանիցն ըստ օրինակի այլոց ազգաց՝ սարկաւագաւ և դպրաւ և անծածկոյթ գլխաւ, զոր յոլովք գտրուէն ի Հայոց։ Եւ միւս ևս եպիսկոպոս անուն Ագնատիոս, որում հրամայեաց կաթուղիկոսն մեկնութիւն առնել աւետարանին Ղուկասու, և նա ոչ առ յանձն. մինչև տեսանէր ի տեսլեան տուն մի լուսաւոր զարդարեալ ամենայն վայելչութեամբ, և զամենայն վարդապետս եկեղեցւոյ անդ խրախացեալս. կամեցաւ և ինքն մտանել ի նոսա, արգելուին զնա և ասէին, եթէ Ոչ ան զի ոչ աշխատեցար ի մեկնել զաւետարանն՝ ոչ մտցես այսր. և զարթուցեալ սկսաւ մեկնել խորհրդական և մտաւոր բա-

1 Խան ի Հռոմկլայ։
2 Այծանօթ է երկրորդս այս Ներսէս եպիսկոպոս, և Թուխ սբխալ կրկնեալ։

նիւ։ Եւ այլ ոմն վարդապետ Սարգիս անուն պատ-
չելի ՚ի վանքն՝ որ կոչի ասորերէն Քարաշխեաւ, արար
մեկնութիւնս եօթանեցունց Թղթոց կաթուղիկէից,
նախերգանօք և յորդորակօք և ընդարձակ և առատ
ճառիւք։ Եւ միւս ևս եպիսկոպոս Յովհէփ անուն, այր
երևելի ՚ի կողմանս Ասորոց։ Սակ յարևելս արք ա-
նուանիք և գիտնականք լուսաւորիչք եկեղեցւոյ՝ յա-
ւուրս Վիմոկորոսի, այր մտաւոր և հանճարեղ, գիտող
տօմարական արհեստից և աստուածայնոց գրոց մեկնող՝
Ոնանիա վարդապետ. սորա ասեն ՚ի մի հաւաքեալ ՚ի
մեկնութիւնն առաքելոյ զբանսն Պետրոսի և Յովհան-
նու Ալեքսանդրացի, և Կիւրղի և այլ սրբոցն, արարեալ
համառօտ վասն դիւրահասուցեան ընթերցողաց. ա-
րար խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմա-
տութիւն աւետարանացն օրինակս, գրեաց և լուսաւոր
իմացուածս վասն խորհրդական սրբասացութեանն՝ որ
յեկեղեցիս ուղղափառաց խաչեցարիւ ասի, և զներքո-
ղեան շողակաթին։ Այնպէս և մեծիմաստն գիտու-
թեամբ քան զյոլով և հանճարեղն ամենայնի, մտա-
հարուստն Յովհաննէս՝ Սարկաւագն կոչեցեալ ՚ի Դաղ-
բատ. սա բազում ինչ աշխատասիրեաց ՚ի գիրս՝ յիշա-
տակ բարի Թողեալ. սա զբազմաց փափաքելին և ոչ
ձեռնհաս՝ զհաստատ և զանշարժ տօմարն կարգեաց
Դայոց, փոխանակ շարժականին և անհաստատնոյն. ա-
րար և զմիաբանութիւն ամենայն ազգաց տումարին
ընդ Դայոց. վասն զի յոյժ իմաստուն էր այրն, և աս-
տուածայինն ընդհօք զարդարեալ. սորա բանքն ամենայն
իմաստասիրական ոճով է՝ որպես զԴիոնիսիոսի Արեո-
ծաբանի և ոչ գեղջուկ։ Սա գրեաց Ճառս ներբողա-
կանս ՚ի մեծապօղ արքայն Դայոց Տրդատ, և ՚ի սուրբ
հայրապետն Ներսէս, և ՚ի սքանչելին Սահակ և Մես-
րոպ. արար և շարականս Վ Լուսոգեանց քաղցր եղանա-
կաւ և յարմար բանիւ, որոց սկիզբն է այս. Պայծառա-
ցան այսօր սուրբ եկեղեցիք։ Գրեաց և Ճառս ներբո-
ղականս նոցունց. գրեաց սա և գիրս աղօթից. գրեաց
և օրինակս ստոյգ գրոց։ Եւ կարի յոյժ սիրեր զսա Թա-
գաւորն Վրաց Գաւրիէլ, հայրն Գեմետրէայ, պապն
Գէորգեայ և Գաւրիէլ. այնքան զի մինչ լսեր զգալուստ
նորա՝ յոտն յառնէր և ելանէր ընդ առաջ նորա և խո-

նարհեցուցեալ զղլուխն խնդրեր ՚ի նմանէ օրհնութիւն. և նա եդեալ զձեռն ՚ի վերայ գլխոյ նորա զայս սաղմոս ասէր. “Ո՛տի զՈ՛ւսուիթ ծառայ իմ, իւղով սրբով օծի զնա. ձեռն իմ ընկալցի զնա և բազուկ իմ զօրացուսցէ։ Ո՛ի մեղիցէ նմա թշնամի և որդի անօրէնութեան մի չարչարեսցէ զնա,,։ Եւ ՚ի պատճառս սորա սիրէր Թադաւորն զաղգս Հայոց։ Ո՛եպ եղև սմա ժամանակ գնացիցն որոշել զոմն ՚ի խորհրդական պատարագն զէն Օ՛ամզոմա անուն. և նա փոխանակ զղջանալոյ և ապաշխարելոյ՝ խորհէր սպանանել զբանչէլին. և օր մի պատահեալ նմա մինչդեռ գայր նա յայրէ անտի՝ որ ՚ի ներքոյ կայ վանիցն՝ հայեցուլ ՚ի վերայ գետոյն, ըմբռնեալ անասնոյն ընկէց յերկիր և հարաւ ՚ի վերայ նորա։ Իսկ սուրբն զի իմաստուն էր, ասէ ցնա. Ողջեակ Աստուածնոս, մի սպանաներ զնա. և ասէ ցնա յանդուգն. Ո՛ինչև ցայժմ Օ՛ամզոմա էի, իսկ այժմ փոխանակ միոյ Նո՛ւի բազում յաւելուս Աստուածնոս. քանզի աւելի անուն նորա Օ՛ամզոմա էր. զոր ընդէր սպաներ զնա, զի հաներ յեկեղեցւոյն։ Ո՛չ ցնա իմաստասէրն. Եւ զարձեալ մուծից զքեզ յեկեղեցի։ Եւ եկեալ ՚ի վանս ասէ ցեղբարան. Օ՛ր ինչ ասէին զեղջօրէս զայսմանէ կարծեմ Թէ սուտ է. ահաւասիկ մուծանեմ զսա յեկեղեցի։ Եւ հրամայեաց եկեղեցպանին առնել զնա աւազ երից. բազում քրմանջիւն էր վասն այսրիկ, որպէս Թէ անարժան էր. և նա կաշառս էառ և եմոյծ զնա յեկեղեցին։ Իբրև եհաս ժամ խորհրդական պատարագին, եւ Թշուառականն ՚ի բեմն անդր զի մատուսցէ պատարագ. և եկն վարդապետն ՚ի գաւիթ անդր ՚ի մէջ առեալն հանդէպ սրբոյ սեղանոյն, եբաց զգլուխն իւր և սկսաւ աղօթել. և վաղվաղակի ոգի չար եմուտ յայրն աներկիւղ, և ընկէց զնա ՚ի բեմէ անտի յատակս տաձարին, և սկսաւ լլկել զնա յոյժ. և հանգիստ զնա արտաքս ՚ի տաձարէ անտի, որպէս զՈղնա. և երկիւղ մեծ անկաւ ՚ի վերայ տեսողացն։ Եւ այսպիսի բարի քաղաքավարութեամբ կեցեալ յաշխարհի, փոխեցաւ ՚ի Քրիստոս աշխատասէրն ՚ի Նաղեատ։ Եւ Թաղեցին զնա յարևելից կուսէ եկեղեցւոյն մեծի առ դուռն փոքրագոյն եկեղեցւոյն, զոր յետոյ քակեաց եպիսկոպոսն Նամազասպ և շինեաց Հրաշալի շինուած,

ուր զանկական կախէին, յարմարեալ ՚ի նմին և եկեղեցիս. և եղև վաղձան սրբոյն ՚ի հինգ հարիւր եօթանասուն և ութ թուականին։ Եւ զկնի ամի միոյ վաղձանեցաւ սուրբ լուսաւորիչն Պաւլոս վարդապետ Ղալակայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմար և պիտանացու ՚ի խնդրոյ քահանայի միոջ՝ որում անուն էր Ղազարիւն, ՚ի քաղաքէն Պանձակայ։ Եւ միւս ևս սքանչելի վարդապետն՝ զոր Յոհաննէսի որդի կոչէին՝ Պրիգոր անուն. սոքա երեքին յաշխարհէն Պանձակայ էին, ուստի և ես։ Պէպ եղև զի յաւուր միում նստէին երեք այս արքս սքանչելի. եկն անդ այր մի չինական, և ասէ ցնոսա. Արանի որ գիտէ ՚ի ձէնջ թէ ո՞րդ իմաստնագոյն իցէ. զայս լսելև ծաղրական ասաց։ Պատասխանի ետ Յոհաննէսի որդին, և ասէ. Ես ասեմ քեզ. մինչդեռ էաք ՚ի մերում աշխարհին՝ ես կտրող էի և կտրօղ. իսկ Պարկաւագս կարել միայն գիտէը. իսկ այժմ սա կտրէ և կարէ, և քաղում նկարս յաւելու ՚ի վերայ. զայս առակաբար վասն յիմարութեան[1] նորա ասաց։ Օ՜ ի այնպէս փոյթ էր այրն յաւուրսն, մինչ պատահեաց յաւուր միում գնալ յայրն յորում էին գրեանքն, և այլք ընդ նմա. իբրև եկին որ ընդ նմա էին և փակեցին զդուռն, նա թաքոյց զանձն ՚ի ներքս. այսպէս գիտելով նոցա՝ եթէ նախ եկ նա։ Իբրև անցին քաղում աւուրք ՚ի վերայ՝ դարձեալ գնացին յայրն ՚ի պէտս ինչ, և տեսին գնա անդ և սքանչացան, և հարցանէին թէ՝ Պրպէս ապրեցար առանց կերակրոյ և ըմպելոյ. և նա եցոյց նոցա զգրեանն զոր ընթերցեալ էր, և ասէ. Այդ է իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի զաւուրս զայսոսիկ։

Իսկ ՚ի հինգ հարիւր ութսուն և ութ ԹուինՆ եղև շարժ սաստիկ և կործանեցաւ քաղաքն Պանձակ, և տապալեցան շինուածքն որ ՚ի նմա ՚ի վերայ քնակչաց իւրոց. և եկն Թագաւորն Պ[2]թաց Պեմեարէ՝ հայրն Պաւլի և Պէորգայ, և տարաւ զգրուռնան յաշխարհն իւր։ Վլաւ և լեառն Ղհարակ ՚ի շարժմանէն, և արգել զձորակն որ անցանէր ընդ մէջ նորա, և եղև ծո-

1 Իմն վասն միամտութեանն շինականին, իսկ տպագիրն Մոսկուայ դնէ խոսրովնէան՝ ՚ի Սարկաւագ ձգելով զբանն։

վակ, որ է մինչև ցայսօր, և լինին ՚ի նմա ձկունք ազ-
նիւք։

Իսկ աքանչելի Հայրապետն Կղիմպոիս օր ըստ օրէ
յաւելոյր ՚ի բարեգործութիւն և ՚ի պայծառութիւն ե-
կեղեցւոյ. և էր սիրեցեալ նա յամենայն ազգաց. և եղև
նմա գնալ ՚ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, զի երկրը-
պագեսցէ սուրբ տեղեացն անօրինականաց. և իբրև
եհաս նա ՚ի քաղաքն Անտիոք՝ եւ ամենայն քաղաքն
ընդ առաջ նորա ջահիւք և լապտերօք, և մեծաւ պա-
տուով տարեալ նստուցին զնա յաթոռն Պետրոսի ա-
ռաքելոյն[1]։ Եւ իբրև եհաս նա Երուսաղէմ, ազգն
Փռանկաց՝ որ իշխեին քաղաքին և պատրիարգն նոցա
առաւել սէր հաստատեցին ընդ ազգիս մերոյ վասն նո-
րա. զի էր նա բարի տեսլեամբ և գիտութեամբ սուրբ
գրոց զարդարեալ. զկնի դաշինս սրբոյն Կղիմպոսի և
Տրդատայ և Կոստանդիանոսի կայսեր և Սեղբեստրոսի
վերստին նորոգեցին առ սովաւ։ Եւ այսպէս քաղաքա-
վարութեամբ կեցեալ փոխեցաւ առ Քրիստոս լի ա-
ւուրբք և կատարեալ առաքինութեամբ. և փոխանոր-
դէ զաթոռ նորա եղբայր նորին՝ Երսէս, զեօթն ամ։
Այս Երսէս առաւելեալ էր իմաստութեամբ քան
զյոլովս ՚ի ժամանակի անդ. ոչ միայն քան զՅայոց
վարդապետս, այլ քան զՅունաց և զՍորուոցն. այն-
քան մինչ զի համբաւ իմաստութեան նորա տարածե-
ցաւ ընդ ամենայն ազգս. և իմաստասէր ումն Կոստանդ-
նուպօլսու՝ անուն Վռոտա[2], լուեալ զհամբաւ նորա բար-
ձեալ զգրեանսն իւր ՚ի վերայ գրաստուց, եկն փորձել
զնա և լսել զիմաստութիւնն նորա. և եկեալ աւուրս
բազումս խօսեցաւ ընդ նմա և եգիտ զնա անփորձ ա-
մենայնիւ, այլ և լցեալ Հոգւով սրբով։ Իբրև գնաց
նա ՚ի քաղաքն Կոստանդնուպօլիս, հարցանէին զնա թէ
որպէս էր համբաւն՝ նոյնպէս է թէ ոչ. և նա ասէր.
Որպէս լուաք նոյնպէս և տեսաք. զի նոր ումն Կղիմպոս
աստուածաբան յարուցեալ է. և զարմացուցանէր զա-
մենեսեան վասն նորա։ Եւ զի էր նա այր բանաւոր, նա՝
բազում ինչ կարգեաց յեկեղեցիս քաղցր եղանակաւ,

1 Ցաթոռն եպիսկոպոսական՝ Պետրոսի։
2 Այն է Թէոդիանոս։

ղոր հաստատեալ էր անդ նախ

խոսրովային ոձով շարականս, մեղեդիս, տաղս և ոտանաւորս. քանզի նորա է յարութեան օրհնութիւնն՝ երրորդ կողմն, և Աստուածածնին փոխման երկու աւուրցն, և Պօղոսի Պետրոսի օրհնութիւն և մանկունքն և համբարձին, և Ղուկասի որոտմանցն օրհնութիւն՝ Ար էնն յէութեան որդին, և Ընտրեալ շարական, և երկու Ստեփանոսի, և մի քառանիցն, և մի առաքելոցն, և աւագ շաբաթուն օրհնութիւն երկուշաբաթուն, երեքշաբաթուն և չորեքշաբաթին, և երկու շարական յարութեն Ձաշոցն, և Վիճակացոյց, և Հրեշտակապետացն, և սրբոցն Վարդանանցն, և այլ բազում շարականս։ Ապա սա զքարոզ սուրբ պատարագին քաղցր եղանակաւ, և տունս շարականաց նմին խորհրդաբար, և երկու գանձս ըստ գրոյ անուան իւրոյ, մի Վարդավառին և մի Փոխման Աստուածածնին, որպէս Վարեկացին Ջ՚Հոգւոյն գալստեան և զեկեղեցւոյ և զսուրբ Խաչին. որ գրեաց գիրս աղօթից յոգնազան բառիւք և խնամատարական ոձով. և զնեղբողական սուրբ Յակոբայ Ծբննայ, և զառաքելոց։ Վայնպէս և սա կարգեաց զհամառօտն Մատթէոսի աւետարանին լուսաւոր և առատ մտօք, մինչև յայն տեղին որ ասաց տէրն. Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս. և այլն ոչ գիտեմ թէ վասն ինչ պատճառի խափան եղև։ Գրեաց նա և Ճառս հրեշտակապետաց ըստ ոձոյն Վիոնիսեայ Ար.իսպագացւոյ. Թարգմանեաց և բազում Ճառս վկայիցն Աստուծոյ։ Եւ այսպէս բարիւք կարգաւորութեամբ փոխեցաւ առ Քրիստոս յոյն ամենեցուն ցանկալի և երանելի մահուամբ։ Օ՜ի այնպիսի էին կամք սրբոյն. զի թէ հնար լիցի՝ ոչ ոք խօսիցի խօսս աշխարհականս՝ բայց՚ի գրոց, ոչ՚ի գինարբուս, ոչ յայլ ուրախութիւնս. վասն այնորիկ և արար նա երգս և ուսոյց այնոցիկ որ պահէին զբերդն, զի փոխանակ վայրապար ձայնից զայն ասասցեն. որոյ սկիզբն է սաղմոսն Դաւթի, “Յիշեցի՚ի գիշերի զանուն քո տէր,,. և այսպէս խորհրդաբար ըստ կարգի. Օ՜արիք փառք իմ. որ այժմ ասի Յեկեղեցի՚ի ժամ գիշերային պաշտամանն։ Կոչեցաւ երբեմն՚ի մեծէն Ա.լեքսէ՝ որ էր փեսայ ինքնակալ Թագաւորին Հռոմոց Վանկլինն, և եկեալ էր՚ի Վամեստիա քաղաք Ափիկեացւոց, և հարցեալ ցնա բանս խոս-

ընն և դժուարիմացս գրոց, և յամենայնի կատարեալ
եռես ընա, և մեծարեաց յոյժ։ Վարձեալ գրեաց առ
նա գրով տալ նմա վիսոստովանութիւն Հայոց, և ըս-
խորհուրդս տօնից և զառաջաւոր պահոց, և զխորհուրդ
մի բնութեանն՝ զոր ասեմք ի Յիսուս Քրիստոս յետ
միաւորութեանն, և այլ կարգաց եկեղեցւոյ՝ որ ոչ է
միաբան այլոց աղգաց. իսկ (նա) համառօտ և յայտնի
բանիւք ետ նմա զինդրելին, զոր ասէ եկեղեցի Հայ-
աստանեայց ուղղափառութեամբ*..... Օ այս իբրև
ընթերցան, գովեցին զՀաւատս Հայոց ամենայն խոհա-
տունքն Յունաց. և զի յամենայնի հանձարեղ էր՝ նե-
սէս, արար և առակս խորհրդաբարս ի գրոց և հանե-
լուկս, զի փոխանակ առասպելեաց զայն ասասցեն ի գի-
նարքուս և ի հարսանիս. և էր ինքն հեզ ամենայնիւ
և պարկեշտ, արժանաւոր այրն Աստուծոյ։ Ու յետ նո-
րա յաջորդէ զաթոռն՝ Գրիգոր ամն քսան։ Սա շի-
նեաց զգեղապաճոյճ եկեղեցին ի Վլայն, և զարդարեաց
զնա մեծապէս։ Ու ապա Գրիգորիս տղայն մի ամ,
քուերորդի նոցունց. և էր նա հասակաւ գեղեցիկ և
բարիոք տեսանելով. բայց զի մխոցք բազում էին նո-
րա՝ արկանէին բարուրս ինչ ի վերայ նորա եպիսկո-
պոսունքն նախանձոտ, և մատնեցին զնա ստութեամբ
Լևոնի Թագաւորի, և նա հրամայեաց արգելուլ զնա
ի բերդ մի, մինչև քննութիւն լիցի Աշմարտութեամբ
վասն նորա, և ինքն գրեաց Թուղթս առ վարդապետս
և եպիսկոպոսունս Հայոց աշխարհին, եթէ զինչ կամք
իցեն նոցա վասն այսր. և մինչդեռ պատասխանի ընկա-
լեալ՝ վաղճանեցաւ կաթողիկոսն այսպիսի մահուամբ.
յաւուր միում տեսին զնա անկեալ ընդ պարիսպ բեր-
դին ունելով կտաւ զմիջաւ իւրով. և զայս ամենքս ա-
սէին եթէ մխոցք նորա ընկեցին զնա, ոչք ակն ու-

* Քանզի բազում անգամ ար-
պագրութեամբ հրատարակեալ է՝
և ծանօթ է՝ զանց առնեմք աստա-
նօր զգրով գաւանութեանն, որ և
արտաքոյ կարգի պատմութեանն.
և առնեմ վերնագիրս զայս.

Գիր հաւատոյ գաւանութենէն Հայ-
ոց պահանջայց եղեալ ոյ. գրեալ ի Ներ-
սիսէ եպիսկոպոսէ, յեղբօրէ Խոսրովիո-
ւին Հայոց Գրիգորի. ի խնդրոյ գեր-
պափ՞ֆէսային ինքնակալ Բագրատունի
Հոռոմոց մեծի Պրոպոսպոտոսրին Աշե-
սի, յորժամ եւ յարևելս ե էր ի Մահե-
պիա մայրաքաղաքն Կիլիկիոյ, անդա-
նօր հնպահելով, ե նմին խոմամբ իրի նո-
րին խաղոպղիկոսի. ի Բոսին ՈՀԴ։

Բանիւք գոպղնափ ինն խօսելով. և
այլն։

նէին ժառանգել զաթոռն, յորոց զմինն ասէին զՅովհաննէս, որ յետ նորա կալաւ զաթոռն, և զՆնանի՝ որ եղև հակառակաթոռ ի Սևաստ՝ յիշխանութենէն սուլտանին Յոռոմոց, և այլք յեպիսկոպոսաց անտի վեց. և կէսք ասէին եթէ ի դիշերի կամեցաւ փախչել ի քերդէն, և հնարեցաւ ինջանել կտաւով, և կտրեալ կտաւոյն անկաւ և մեռաւ. զոր զՀնարիտն միայն ծածկագէտն Նստուած գիտէ։ Նա ապա տէր Գրիգոր Նպիրատն՝ եօթն ամ։ Նա այնուհետև սկսան մանուղքն Գրիգորիսի զմիմեանսք ելանել, թէ ո՞նստգի յաթոռ Հայրապետական. և Յովհաննէսն զի ընտանի էր թագաւորին Լևոնի՝ բռնացաւ և կալաւ։ Իբրև ետես զայս միւս եպիսկոպոսն Ննանիա, չոգաւ նա առ սուլտանն՝ զոր Յոռոմոց կոչէն, ետ նմա կաշառ և նստաւ կաթուղիկոս ի Սևաստ, զի ասէր զինքն յապգէն կաթուղիկոսին Պետրոսի, որ կայ Թաղեաց անդր։ Նա այսպէս բաժանեցաւ աթոռ սրբոյն Գրիգորի յերիս. մի՝ բուռն՝ զոր էառն Յովհաննէս, որ էր ի Յոռոմկլայն, և միւսն ի Սևաստ, զոր ապստամբեցաւ Ննանիա, և միւսն ևս ի կղզւոջն Նղթամարայ Դաւիթ անուն։

Իսկ յետ Նէլքսի կայսեր Թագաւորէ Կալօժանն, և յետ նորա Մանուէլն։ Նդ ի հինգ հարիւրերորդի և իննսունևեւթերորդի Թուականութենէս Յայոց՝ ազգն Յոռոմայեցւոցն զօրաժողով լեալ բիւրք բիւրուց, դիմեցին յայսկոյս Ովկիանոսի ընդ Թրակ, ըստ առաջին անցելոյն զոր նշանակեցաք ի հինգ հարիւր քառասունևվեց Թուականին, և մոռացան զանհնարինն նեղութիւնս զոր եցոյց որդին բեղիարայ Նէլքս՝ անդադնօր այնոցիկ, որք ոչ իմացան զիաւրգան խաբէութիւն նորա, համարելով զնա հաւատակից և պաշտօնեայ Գրիստոսի. վասն այնորիկ և սոքա աստանօր զի չգիտեցին զանցս աղէտիցն՝ ինքեանք առաւել խաբեալք և պատրեալք ի նորին Թուականէն, որոյ անուանն ըստ նեռինն գեռաբրիստոս կոչի, այնպէս և սորայս տարորոշ և հեռի ամենայնիւ ի գործս և ի կրօնս Նմանուելի, Նա-նիլ անուն որ դրժեաց զՅոռոմայեցին մահարար կեբանակօք և ըմպելեօք[1]։ Նայց յաւուրս հաւուն սորա

1 Ախտ են բանքդ և գառատառանք։

Ա.լեքսի կոմս ոմն եկն Երուսաղեմ Ա՛նտիոք, և իբրև եմուտ՝ի տաճարն սրբոյն Պետրոսի առաքելոյ և հաղորդ եղև պաշտամանն, երևեցաւ նմա սուրբ առաքեալն Պետրոս և ասէ. Ի պատուհանին եկեղեցւոյդ Թաղեալ կայ գեղարդն՝ որով խոցեցին զՔրիստիչն մեր, առեալ տարցես յաշխարհն քո. և նորա առեալ խնդութեամբ եկն՝ի Կոստանդինուպոլիս. և լուեալ Ա.լեքսի կայսեր՝ մեծարանս արար նմա, և ետ նմա գանձս բազումս, և խնդրեաց՝ինմանէ զգեղարդն, և եթող առ նմա կոմսն, և գնաց զՀանապարհս իւր:

Իսկ՝ի վեցհարիւր երեսունևվեց Թուին յարեաւ բռնակալ ոմն Վ՛ուրդ ազգաւ Սալահատին անուն, ՝ի Ա՛ասեացն–յոտնէ [1], ծառայ լեալ սուլտանին Ա՛երտինայ: Սա զօրս կազմեալ բազում յոյժ, չոգաւ՝ի վերայ քաղաքին Երուսաղեմի, և էլ Թագաւորն Երուսաղեմի ֆռանկ ազգաւ ընդդէմ նորա զօրու ծանուց, և նենգ գործեցին նմա զօրքն իւր ծովեզերեայ. զի տէրն Տրապօլու բարեկամ լեալ ընդ Թշնամիսն՝ մատնէ զնա՝ի ձեռս նորա, այսպիսի յեղանակաւ: Ա՛ր տօթ յոյժ ժամանակն, և տեղին անջրդի. և խորհրդակից լեալ կոմսին ընդ Թագաւորին՝ առնուլ իւրեանց կայանս զապառաժն անջրդի. իսկ Թշնամիքն կալան զեզրն Յորդանանու. իբրև խմբեցաւ պատերազմին միջօրէին, երիվարք զօրուն քրխատունէից, քանզի պասքեալք էին՝ի ծարաւոյ՝ իբրև տեսին զջուրն, քարշեալ զհեծեալսն ընկեցին՝ի ծովն՝ի մէջ Թշնամեաց, և նոցա սուր եդեալ յանխնայ կոտորեցին: Իսկ Թագաւորն Երուսաղեմի զի այր քաջ էր, զբազում կոտորեաց՝ի Թշնամեացն անձամբ իւրով. իբրև ետես եթէ անհնար է զերծանել նմա, զի սպանին և զերիվար նորա՝ կամաւ ետ զինքն՝ի ձեռս նոցա. և նոքա երդուան պահանջեալ՝ի նմանէ զի մի այլ սուր հանցէ նոցա, Թողին զնա. և գնաց յաշխարհն իւր. և ինքեանք չոգան՝ի վերայ Երուսաղեմի և առին զնա և որ շուրջ զնովաւ քաղաքք. կոտորեցին զամենեսեան, և խաւարեցաւ արեգակն զյոլով ժամս: Եւ տիրեցին Սալահատնեանք Պաղեստինի և Եգիպտոսի և Ա՛ինջագետաց. և մեծ մասին աշխարհիս Հայ-

1 Ըստ կարծելոյ ոմանց՝ի մերոյց:

ոց, ինքեանք և Թոռունք իւրեանց, որ կոչին Նղլեանք, յորոց էին Արևլիք Ռեմ, և Արևլիք Աշրաֆին[1], և այլ սուլդանք, որ տիրեցին բազում աշխարհաց։

Իսկ Կիւրիկէ Նազրատունի որ ի Լօռէ քաղաքէ, զամենայն ժամանակս իւր կացեալ ընդդէմ Պրաց՝ ի հաստատութեան պահէր զհայրենիս իւր. և յետ մահուան նորա դաւեալք ի Պրաց որդիք նորա՝ եկեալ ի տանէ հայրենեաց գնացին ի Պարսիկս, Դաւիթ և Աբաս. և առնուն ի նոցանէ ի ժառանգութիւն զՏաւուշ և զԱծնաբերդ և զայլ տեղիս. և ապա յետ աւուրց առնուն դարձեալ Պարսիկք ի նոցանէ զՏաւուշ. և նոքա բնակեն ի Ածնաբերդ, և փոխին մահուամբ յաշխարհէ։ Իսկ յաջորդէ զտեղի հօրն՝ Դաւթի որդի նորա Կիւրիկէ, այր բարեբարոյ և կատարեալ ի գործս առաքինութեան քան զհարս իւր. և բարիոք փոխեալ յաշխարհէս Թողու ժառանգակալ զորդին իւր զմանուկն Աբաս երկոտասանամեայ. սա առնու իւր կին զդուստրն Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Օթաքարիայի, որդւոյ Ավրամայ, զքոյր մեծամեծ իշխանաց՝ Օպաքարէ և Իւանկի՝ նման անուն. սոցա գործքն յոլովք են, զոր իւրաքանչիւր տեղւոջն ասասցուք։ Իսկ կեցեալ Աբաս ամս երկուս ընդ ամուսնոյն իւրոյ, վաղճանի ինն եւ տասնամեայ. սորա զաւակ ոչ եղև։ Իբրև եռես քոյր նորա Դաւրինեա անուն՝ եթէ քնաջինջ լինին յազգէն, անհնարին սգով վարաներ. և ապա ասացին նմա. Ո՛վ կին մի որ ունի մանուկ մի ստնդիայ յեղբօրէն քումմէ. ապա զուարթացեալ կինոջն առնու զորդին և անուշանէ, և անուանեաց զանուն նորա Աբասարթան, որ եղև ժառանգակալ Ածնաբերդին, այր աստուածապաշտ և քահանայասէր։ Ա՛ս որ եհաս յաւուրս մեր. սորա ի ծերութեան ցաւեցին ոտք. ընդ սա խաբէութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան՝ Կորբերդին. զի էր և նա յազգէն Նազրատունեաց, հայրն Ա՛ասակայ իշխանին, որ շինեաց զեկեղեցին հրաշալեան ի վանքն որ Կնատատն կոչի հուպ ի Կորբերդն, առաջնորդութեամբ և ձեռնտուութեամբ արքեպիսկո-

1 Մալէք էլ-Քամէլ, որ տիրէր Աշրաֆ, 1230–1254. բայց են և յամն 1218–1238. Մալէք էլ- այլք միջակարգեալք սոցին։

պոսին Յովհաննիսի Տուեցւոյ [1], քաղաքին Շ ամքօրոյ և Վարդմանայ, և Արդելանիցն և Տէրունականին և Տաւշոյ և այլ կողմանց։ Յիշխանութեանն Վահրամ իշխանին եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կընքեցաւ յանուն սրբոյ Աստուածածնին։

Ի վեց հարիւր ութսունևինն թուին Հայոց մեռաւ այր սուրբ և առաքինի եպիսկոպոսն Յովհաննէս [2], որ յոլով քառասունս անսուաղութեամբ անցուցանէր։ Իսկ Վասիլ իշխան Նոր-բերդին խաբեաց զմանուկն Աղասրթան և փեսայացոյց զնա ի դուստրն իւր, և ինքն տիրեաց Վանայ-բերդոյ. և ապա եհան զդուստրն ի նմանէ։ Իսկ Աղասրթանայ իւր արարեալ զբնակիչս բերդին, և յանկարծակի յեղակարծ ժամու ըմբռնեալ զՎասիլ ամենայն ընտանեօք՝ հանին արտաքս ի բերդէն, և ետուն զբերդն Աղասրթան. և նա յետ ժամանակաց ի կենդանութեան իւրում ետ զիշխանութիւնն յորդին իւր Աիւրիկէ, և ինքն կրօնաւորեցաւ ի վանքն որ կոչի Վետակից. և Աիւրիկէի եղեն որդիք, և անուանք նոցա միում՝ [3] Վահէաւան, և միւսոյն՝ Վասղիաթին, և երրորդին՝ Աղասրթան։

1 ՕՕ. Ո-էցւոյ կամ Օյնէցւոյ։
2 Վերոյիշեալ Տուեցին։
3 Ա. Գ. Փոյ Վահլաւան։

Ա.

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԼԵՒՈՆԻ՝ ՈՐ Ի ԿՈՂՄԱՆՍ ԱՐԵՒՄՏԻՑ, ԹԷ ՈՐՊԷՍ ՅԱՌԱՋԵԱՑ ԵՒ ԲՌՆԱՑԱՒ ՑՈՑԺ

Մինչև ցայս վայր էր պատմութիւնս երկօք աշխատութեամբ հաւաքեալ՝ ի նախապրելոց. իսկ որ առաջի կայս մեզ ասպարէզ պատմութեանս՝ է որ ականջալուր, և է որ ականատես:

Յառնէ իբրև մեռաւ մեծ իշխանն Լեւոոս, որդին Լեւոնի, որդւոյն Կոստանդեայ, որդւոյ Թագաւորացինն Ռուբենայ յաշխարհին Սիւնեցւոց, էառ զիշխանութիւն նորա Ռուբէն անուն՝ որդի Ստեփանեայ, զոր սպան Ներսեհիկոս նենգիւ զօրավարն Յոաննոյ. և յետ սակաւ ժամանակաց վաղճանեցաւ և նա. և էառ զիշխանութիւնն[1] այր քաջ և պատերազմող՝ անուն նորա Լեւոն:

Ա ընդ տիրելն՝ իսկ և իսկ ընդարձակեաց զսահմանս տէրութեան իւրոյ. զի եւ պատերազմ ընդ շրջակայ ազգսն, և յաղթեաց քաջութեամբ ըստ անուանն առիւծաբար, զի Լեւոն առիւծ կոչի: Իբրև տեսին զաջողութիւն նորա բռնակալքն Ռուբքաց և Տաճկաց՝ որ սուլտանքն անուանին, ժողովեցաւ ի վերայ նորա սուլտանն՝ որ իշխեր Յալպայ և Դամասկոսի անթիւ զօրու և զինու. և լուեալ Լեւոնի իշխանայ իշխանի զգուշանալն ի վերայ նորա այլազգւոյն, ձգապարեալ զգօրսն իւր և յանկարծակի եհաս ի վերայ նոցա իբրև զար-

1 Թուի պակասել եղբայր նորա:

ծիւ սլացմամբ յերան հասուց, և եհաս զնոսա ՚ի հա-
րուածս մեծամեծս, և սուլտանն փախստական լեալ
մազապուր զերծաւ ՚ի նմանէ, այն որ խրոխտանօք գայր
՚ի վերայ նորա։ Իսկ Լևոն հարիւս եդեալ ՚ի վերայ նո-
րա ծառայեցուցանէր զնա. և զայն գործ քաջութեան
նորա տեսեալ շուրջակայ ազգացն Տաճկաց, դողային
՚ի նմանէ, և հարկէին ՚ի նմանէ. և այնպէս բռնացաւ
՚ի վերայ ամենեցուն։ Եւ իբրև ետես եթէ յաջողե-
ցաւ նմա տէրութիւնն առաւել քան զնախնիսն իւր,
խորհեցաւ այնուհետև ընդ իշխանսն իւր և ընդ մե-
ծամեծս թագաւորել, և առաքեաց ՚ի տիեզերահըռ-
չակ քաղաքն Հռովմայեցւոց առ ինքնակալ կայսրն[1],
և առ պապն, զի տացէ նմա հրաման և թագ թագա-
ւորական. զի ոչ կամեցաւ նա այլուր հնազանդել վասն
թագի՝ բայց եթէ ազգին Ֆռանկաց. միանգամայն և
պարծանս իւր վարկաւ զսուրբ առաքեալս Պետրոս և
Պօղոս, որ կան ՚ի Հռոմ քաղաքն, որպէս եթէ ՚ի նո-
ցունց առեալ զօրհնութիւն պսակին։ Եւ առաքեն նմա
կայսրն և պապն Հռովմայեցւոց թագ ազնիւ, զառա-
ջին թագաւորացն[2], և արծուէս մի պատուաւոր՝ այս-
ինքն արքեպիսկոպոս մի, դնել զթագն ՚ի գլուխ նորա.
երիս իրս պահանջել ՚ի նմանէ, տօնել զտօն տեառն և
ամենայն սրբոց յորում աւուր և հանդիպի, և միշտ
յեկեղեցւոջն կատարել զաղօթս տուընջեան և գիշե-
րոյ, զոր ՚ի վաղուց հետէ ոչ առնէին Հայք ՚ի հինա-
հարութեանցն Սամայելի, բայց միայն ՚ի ժամ խորհըր-
դածութեան պատարագին. և ոչ լուծանել զՔրիստո-
ղոյն Հնդեան և զՀարութեան, բայց միայն ձկամբք
և ձիթով. և յորժամ զայդ առնիցէք, ասէ, ոչ ինչ
փոյթ առնիցէք տրոց և ընծայիցն կայսերն և պապին
վասն թագիդ. ապա եթէ ոչ առնիցէք՝ հրաման ունիմ,
ասէ, այնչափ գանձս առնուլ ՚ի ձէնջ ոսկւոյ և արծա-
թոյ և ականց պատուականաց։ Իսկ Լևոն կոչեալ
զկաթուղիկոսն և զեպիսկոպոսսն՝ հարցանէր եթէ զինչ
պատասխանի տացէ պատգամին, և նոքա ոչ հաւանե-

1 Առ կայսրն Ալամանաց կամ Գերմանիոյ, որ ոչ էր ՚ի տիեզերահռչակ քաղաքին Հռովմայեցւոց, այլ կոչէր երբեմն ըստ նախնեաց՝ կայսր կամ Թագաւոր Հռովմայ կամ արևմտից։

2 Ըստ օրինի կամ պսակի առաջին Թագաւորաց։

ցան առնել զԱնդիկն. և ասէ ցնոսա Լևոն. Դուք մի՛ ինչ հոգայք վասն այդորիկ, ես հաճեցից զմիտս նոցա առ անգամ՝ մի կեղծաւորութեամբ։ Եւ պատասխանի արարեալ Լևոնի ասէ ցեպիսկոպոսն Հռոմայ. Օ՜ որ ինչ հրամայէ ինքնակալ կայսրն և պատն մեծ, անյապաղ առնելիք զամենայն։ Եւ նորա երդումն պահանջեալ՝ ի նոցանէ երկոտասան եպիսկոպոսաց. և հաւանեցոյց Լևոն զեպիսկոպոսն յանձն առնուլ զերդումն. և արարին եպիսկոպոսք զբանս երդմանն՝, յորոց մի էր եպիսկոպոսն Տարսոնի՝ Ներսէս Լամբրոնացի, զոր վերագոյն յիշեցաք, և Յովսէփ կողմանցն Նտիոքու, առաջնորդ վանացն՝ որ կոչի Յեսուանց, և Յովհաննէս՝ որ եղև կաթուղիկոս, և Նտանիա՝ որ եղև հակառակաթոռ՝ի Աղեաստ, և այլք ընդ նոսա։ Նպա եղև ժողով բազմութեան յոյժ՝ զօրապետաց և զօրաց և աղգաց և աղանց. պատրիարգն Յունաց որ նստէր՝ի Տարսոն, և կաթուղիկոսն Նյորուց որ նստէր՝ի վանս սրբոյն Պարսումայ՝ի սահմանս Աելտինոյ, և կաթուղիկոսն Հայոց ամենայն եպիսկոպոսօք։ Եւ թագաւորեցուցին զԼևոն, և եղեն ընծաբերք նորոգ թագաւորին կացեալ՝ շուրջակայ ազգքն։

Եւ լուեալ կայսրն Յունաց եթէ Փռանկք ետուն զթագն Լևոնի, առաքեաց և նա ընծայս և թագս գեղեցիկս ոսկւով և ակամբք պատուականօք ընդելուզեալ. և ասէ. Օ՜ թագն Հռոմայեցւոց մի դիցես՝ի գլուխ քո, այլ զմերն. զի առ մեզ հուպ ես քան թէ՝ի Հռոմ։ Իսկ թագաւորն Լևոն քանզի իմաստուն էր՝ ոչ խոտեաց և ոչ զմի ոք յերկոցունց թագաւորաց. այլ ըստ կամաց նորա արար պատասխանի, և սիրով ընկալեալ զկնի եալ, և ետ տուրս մեծամեծս բերողաց թագին. և եղև պատկեալ յերկոցունց։ Եւ էր նա բարի բնութեամբ, ողորմած առ աղքատս և կարօտեալս, սիրօղ եկեղեցեաց և պաշտօնէից Նստուծոյ։ Կարգեր վանուցս ընդ ամենայն կողմանս տէրութեան իւրոյ և բազմացուցանէր զպետոյս նոցա, զի մի ումեք իւիք կարօտեսցին ըստ մարմնոյ բաւականին. այլ միայն աղօթից

1 Ոչ այնքան Լևոնի կեղծաւորութիւն ոչքան հեղինակիր կղզական թիւրութիւն էրևի՝ի բանիդ, որ թուի անծանօթ գոլ և թղթոյ և ոչով Ս. Լամբրոնացւոյն առ Լևոն։

և պաշտամանն պարապեսցին. յորոց մի է՛ի վանորէիցն զոր կարգեաց նա՝ Հռչականուն Կ՚իներ կոչեցեալ վանք. որ մինչև ցարդ ևս վարին՝ նովին կարգադրութեամբ զոր նայն կարգեաց, զամենայն աւուրս պահոցն պահօք կատարել, այլ միայն լուծանել ձկամբ ղշաբաթ և ղկիւրակէն։ Եւ այսպէս կարգաւորութեամբ հաստատեր զիւր թագաւորութիւնն բարեպաշտն Լեոն։ Եւ էր նա ամենայն կրօք բարեգոյն, բայց միայն միով մասամբ, զի էր նա իգասէր. և եթող նա զկինն իւր զառաջին՝ զոր ունէր յիշխանութեան, և առ նա՛ի կնութիւն զդուստրն արքային՛ի Կիպրոս կղզւոյ՝ Փռանկ ազգաւ[1], զի լոյծ նմա թիկունք և օգնական։ Զոր եղև զի չոգաւ նա՛ի Կիպրոս կղզին՛ի տեսութիւն աներացն իւրոց. և լուեալ զայն թշնամեաց նորա որք՛ի ցամաքի ոչ ինչ կարէին առնել նմա՝ պատրաստեցին նաւս բազումս, զի՛ի ծովու նեղեսցեն զնա։ Եւ լուեալ զայն արքային Լեոնի, դարձաւ անդրէն յետս՛ի Կիպրոս, զի էր՛ի Ձանձապարհի՛ի վերայ ծովու. և առ իւր նաւս պատերազմականս, և եկեալ՛ի դարանն որ գործեալ էր նմա՝ նաւաց բազմաց, և զի այր իմաստուն էր՝ ծանեաւ թէ յորում նաւուցն իցէ դլխաւորն, եհար զնա արագաթև նաւով, և ջրասոյզ արար զամենեսեան, և մնացեալ նաւքն փախեան. և անկաւ ահ նորա՛ի վերայ ամենեցուն հեռաւորաց և մերձաւորաց։ Եղև երբեմն զի սուլտանն որ տիրէր կողմանցն Իւալապայ, զօրաժողով եղև՛ի վերայ Նորա յաւուրս զատկաց, և յղեաց առ Լեոն պատգամ այսպէս. Զթէ ոչ հարկեսցես ինձ ծառայութեամբ, բազմութեամբ զօրաց իմոց՛ի սուր սուսերի մաշեցից զձեզ և զամենայն բնակիչս երկրի քո, մայր առ մանկանդ. և զօնդ ձեր՝ յորում ուրախանայք քրիստոնեայք պատուելով զդա, որպէս թէ յարութիւն Քրիստոսին ձերոյ իցէ, դարձուցից զդա՛ի սուգ ձեզ, և արարից զի զպատրաստեալ կերակուրն ձեր վանն տօնիդ՝ ուտիցէք զայդ՛ի վերայ ձիոց։ Եւ իբրև առաքեաց զայս, ինքն առեալ զբազ-

1 Սիպիլ, գուստր Ամաւրեայ Լուսինեան։ Ամբաստ պատմիչ մերձաւոր՝ առ մեծի յանդգնաց առաջին կնոջն ասէ յարգելանի եղեալ զնա. այլ չասէ առ կենդանեաւ նորին առեալ զերկրորդն, որ և չէ հաւանելի։

մուԹիւն զօրացն իւրոց քանակեցաւ առ սահմանօք նո-
րա. և ինքեան գալստեան պատգամին։ Իբրև գիտաց ար-
քայ Լևոն զգալ պատգամին և զօրաժողով լինել այ-
լազգեաց, հրամայեաց զդեսպանսն յայլ կողմն շրջեցու-
ցանել աշխարհին՝ պատճառանօք Թէ այդր իցէ ար-
քայն. և ինքն ածապարեալ ժողովեաց զզօրս իւր, և
ընդ այլ կողմն եԼ՚ի վերայ նոցա. և յեղակարծ ժա-
մու անկան՚ի վերայ նոցա. եՀար զնոսա հարուածս մե-
ծամեծս։ Ա՛ազապուր փախեաւ սուլտանն. և Լևոն
արքայի առեալ զաւար բանակին այլազգեաց՝ Հանդերձ
վրանօք նոցա, և զգերիսն ամենայն, եկն բանակեցաւ
յաշխարհին իւրում՝ առ աւին գետոյն, և հրամայեաց
զօրաց իւրոց կանգնել խորան այլազգեաց, և զիւրա-
քանչիւր զդրօշս կանգնել՚ի դուռն խորանին իւրոյ. և
հրամայեաց կոչել զդեսպանսն, և իբրև եկին տեսին
զխորանս և զվրանս զօրաց իւրեանց և նշանակ զդրօշից
իւրաքանչիւր գնդից, և զարմացան Հիացմամբ մեծաւ,
զի ոչ գիտէին զեղեալսն. ապա իբրև խնայեան՝ զիմե-
ցին յոտս Թագաւորին, և զապրիլ անձանց խնդրէին։
Իսկ արքայն մարդասիրեաւ առ նոսա շնորՀեաց նոցա
կեանս, առաքելով զնոսա առ տէրն իւրեանց. և զայն
Հարկն զոր պահանջէը սուլտանն յարքայէն, զնոյն և
ևս յաւելեալ եդ՚ի վերայ նորա, և ծառայեցոյց զայ-
լազգիսն. և եղև Թագաւորեն նորա՚ի վեց Հարիւր քա-
ռասունևվեց Թուականին Հայոց։

Բ

ՎԱՍՆ ԻՇԽԱՆԱՑՆ ՈՐ ՑԱՐԵԻԼՍ ՀԱՅԱՍՏԱՆՆԱՑՑ, ՋԱՒՐԻՑ
ԵՒ ԻՒԱՆԻՒ ԵՂԲՕՐ ՆՈՐԻՆ

Յաւուրս ժամանակաց Թագաւորութեանն Հայոց
Լևոնի արքայի՝ էին յարեւելս երկու եղբարք, որդիք
Մարգսի բարեպաշտ իշխանի, որդւոց Ա՛ահրամայ, որ-
դւոց Օ՚աքարիայ, որ Հատուածեալ՚ի Վրդոյ, ՚ի քա-
ղիրական խելէն[1]. անուն առաջնոյն Օ՚ապաւէ, և երկ-

1 Բաբիլական կոզմանս ասիցէ Թէ այլ ինչ, կամ Թէ սխալ, ոչ
գիտեմ։

ղորդին Իսանէ, արք քաջք և ձոխք, իշխանութեամբ պատուեալք ի Թագուհւոյն Վրաց, որ Ծամարն կոչէր, դուստր Գէորգայ քաջի, որդւոյ Դեմետրի։ Եւ Օ՝աքարէ էր զօրավար Վրաց և Հայոց զօրուն, որ ընդ ձեռամբ Թագաւորին Վրաց. իսկ Իսանէ ամենաքուԹեան[1] պատուով. սոքա բազում մարտս քաջութեան ցուցին. քանզի զբազում աշխարհս Հայոց՝ զոր ունէին Պարսիկք և Տաճկունք՝ առին ի նոցանէ յինքեանս. զգաւառն՝ որ շուրջ զԾովինն[2] Գեղարքունւոյ, զՏաշիր և զՎրարատ, զԱղնի քաղաք և զԳառնի և զՆերքին և զՆի և զԿարս և զվայոց ձորն, և զաշխարհս Սիւնեաց, և որ շուրջ գնացեալ են բերդք և քաղաք և գաւառք. հարկատուս արարին և զսուլտանն Կարնոյ քաղաքին։ Ընդէրեցին և զբազում քաղաքս Պարսից և զՏրապատականու, և ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց։ Ընդ այսպէս և միւս իշխանն Օ՝աքարէ անուն և եղբայրն իւր Սարգիս, և միւս Սարգիս հայրն Զաքարէի և Իսանէի, աղգականքն մեծ իշխանացն, ձեռնտուութեամբ նոցին՝ առին և նոքա բազում գաւառս ի Պարսից և բերդս ամուրս, զԳարդման, զԲարհերդ և զՎրդեվանք, զՏաւուշ, զԱծբերթ, զՏերունականն և զԳագ. և զամենայն քաղաք ի ներքս հարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վաչրամ, հայրն Ղազարին, պապն Վահրամայ, Օ՝աքարէի և Իսանէ։ Եւ այսպէս աճողեցաւ նոցա ի վերուստ յաղթութիւն նոցա. զի համբաւ քաջութեան նոցա եղ ընդ ամենայն տիեզերս, և բազում ազգք հարկ տային նոցա, ոչ սիրոյ աղագաւ և ոչ յերկիւղէ։ Եւ էնեցան և բազում վանորայք՝ որ ի վաղուց ժամանակէ անտի աւերեալ էին ի հինիցն Իսմայելի. վերստին նորոգեցան եկեղեցիք, և պայծառացան դասք պաշտօնէից. էնեցան և նոր վանորայք և եկեղեցիք՝ որ ի հնոց էին լեալք. ընդ որս և հռչակաւոր վանքն՝ որ Գետիկն կոչի, ի գաւառին Այեաց. զոր շինեաց սուրբ վարդապետն Ամբակում՝ զոր Գոշն կոչէին[3], շինեալ հրաշալեաց եկեղեցի, գմբեթայարկ երկնանման, և կնքեալ զեկե-

1 Ոչ է վերակացութիւն տան Թագաւորի, կամ հազարապետութիւն։

2 ՕՕ. զԳեղամ։

3 Ձան որոյ և Գոշայ վանք կոչեցաւ։

ղեցին և օծեալ յանուն սուրբ Աստուածածնին, տա-
ձար փառաց տեառն և բնակարան բանաւոր հօտին
Քրիստոսի։ Եւ իբրև այսպէս յաջողեցաւ նոցա իշ-
խանութիւնն, հարին զսուլտանն՝ որ Թահի-Աբմէնն
կոչիւր։ Ապա կամեցան առնուլ և զհոյակապ քաղաքն
Կոնիայեցոց, որ կոչի Իսլաթ [1]. և զօրս գումարեալ պա-
շարեցին զնա, և մերձ էին առնուլ. ապա ելեալ իշ-
խանն Իւանէ՝ եղբայր զօրավարին զեօսանաց ինչ ազա-
գաւ՝ ի զնին պարապին, և յանխմաստ շրջելն գիշեաց
ոտք երիվարին՝ ի խորխորատն՝ որ Թագուցեալ էր, և
ընկէց զնա յերկիր. և տեսեալ արանց քաղաքին՝ յա-
րեան՝ ի վերայ նորա, և ձերբակալ արարեալ տարան
զնա՝ ի քաղաքն. և եղև քաղաքին ուրախութիւն մեծ,
և իսկոյն ազդեցուցին զըմբռնումն նորա. ընդ որ կարի
յոյժ ուրախացեալ՝ հրամայեաց առ ինքն ածել։ Եւ
լուեալ զօրավարին Օ՝աքարիայ, յղեաց առ քաղաքա-
ցիս բանս սպառնալեաց և ասէ. Եթէ հանէք զեղբայրն
իմ՝ ի քաղաքէդ յայդմանէ կամ կորուսանէք, զհողդ
երկրիդ՝ ի կողմանս Պրաց տանիմ և անմարդ արարից
զձեզ՝ ի մարդկանէ։ Եւ երկուցեալ նոցա ոչ ետուն
տանիլ առ սուլտանն՝ [2] որք էին՝ ի կողմանս Դամասկո-
սի և Եգիպտոսի, որոց անուանք էին Կուզ [3], և Մէլիք
Քէմէլ, և Աշրաֆ՝ յազգէն Սալահատինին որ առ զԵ-
րուսաղէմ։

Ապա արարեալ սէր ընդ միմեանս խնդրեցին զդուստր
Իւանէի՝ ի կնութիւն, և եղև որպէս խնդրեցին. ա-
ռին պատանդս, և արձակեցին զԻւանէ. և նորա եր-
թեալ՝ ի տուն իւր առաքէ զդուստրն իւր, որ եղև կին
Սըզին, և յետ նորա Աշրաֆի. քազում օգուտ եղև
գալ կնոջն՝ ի տունս սուլտանայց, զի գիւրեցին քրիստո-
նէից՝ որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին. և ա-
ռաւել երկրին Տարօնոյ, զի վանորայքն որ անդ էին՝

1 ՕՕ. Խըլխաթ. ուր նստեր հըզօր ամիրայ իշխող կողմանցդ ան-
գըրսին յ'Թ գարէ։

2 ՕՕ. սուլթանն։

3 Կուզ Թուի Քէյքաուս սուլ-
տան Իկոնիոնի. Քէմըն՝ Եգիպտո-
սի, միւան Դամասկոսի։ Բայց Ա-
յուբի յազգէ Սալահատինին որ և
էառն զդուստր Իւանէի՝ տիրա-
ցաւ Իսլաթայ՝ յետ մահու եղբօրն
Ասհատայ՝ որում նախ խօսեցաւ
դուստրն Իւանէի՝ Թամարա։ —
Վ. 138։

ընդ Կարկաւ էին. Թեթեւացուցին զսակ Կարկին, և կիսոց զամէնն իսկ Թողին. և Հրամայեցին այնոցիկ որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին՝ ոչ զրկել կամ նեղել զՀանապարհորդս, որք աղօթից աղագաւ երթային Երուսաղէմ։ Այս առաւել ընդարձակեցին ազգին Վրաց. զի Ուանէն խոտորեցաւ յաղանդն (!) Վաղկեդոնի, յոր կործանեալ էին Վրք. զի սկրեաց նա զփառս մարդկան առաւել քան զփառս Աստուծոյ (!). Հրապուրեալ նա 'ի Թագուհւոյն որ Վամարն կոչեր, 'ի դստերէն Վեղոգայ։ Վ ան այնորիկ առաւել մեծարէին զՎրս, զի անհարկ էին նոքա յամենայն քաղաքս նոցա, և Երուսաղէմ ևս. և էր անուն կնոջն Վամբա։ Այս պէս եղև սէր և միաբանութիւն ընդ Թագաւորին Վրաց, և ընդ իշխանութիւնն սուլտանաց։

Գ

ՎԱՍՆ ԺՈՂՈՎՈՑՆ ԶՈՐ ԱՐԱՐ ԶԱՒՐԻԱ ՎԱՍՆ ԽՆԴՐՈՑ ԻՆՁ ԻՐԱՑ

Յետ այսորիկ իբրև խաղաղացուցին զաշխարհս ընդ իշխանութեամբն իւրեանց յամենայն հինից, և բազմացան վանորայք և պայծառացան պաշտամունք եկեղեցւոյ, այլ ինչ էած զմտաւ իշխանն Օ՝աքարէ. զի տեսանէր զզօրս Վրաց որ ընդ Թագաւորին իւրում, զի իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ ունէր ընդ իւր քահանայս, և յամենայն տեղիս մատուցանէին պատարագ, և ինքն ոչ ունէր եկեղեցի 'ի Հանապարհին. զի չէր սովորութիւն Հայոց 'ի բազում ժամանակաց, յորմէ հետէ քարձան իշխանքն Հայոց մեծամեծք 'ի Պարսից և յԱմայելացւոց բռնութենէն. և նախատէին Վրք զՀայք՝ ոչ ունել եկեղեցի 'ի Հանապարհի, և անհաղորդ մնալ նոցա, և ոչ տօնել զտօն վկայիցն Աստուծոյ յիւրաքանչիւր աւուր կատարման. վասն այնորիկ կարի յոյժ ցաւէր նմա։ Այսպա Հարցանէր զմեծ վարդապետն Ներսէս Թար, զչինող վանիցն Պետակայ՝ որ էր Հայր խոստովանութեան նորա. և ասէր՝ եթէ Վէ երբէք եղեալ է Թագաւորաց մերոց կամ իշխանաց 'ի պէտս Հանապար-

հաց եկեղեցի՝ տեղի պաշտամանն և պատարագի. հարցանէր և զայլ վարդապետս, և նոքա ասացին նմա զայն, որ առ մեծազօր արքայիւն Տրդատայ՝ վրանն և սեղանն զոր շինեցուցանէին յարքունական բանակին. և որ առ սուրբ Կարդանամբքն, որ զմկրտութիւնն և ըզհաղորդութիւնն կատարէին՝ ի մէջ բանակին. և զայն զոր գրեցին սուրբ վկայքն Հռիփսիմեան[1] և Փիլիտոս առ Յակոբոս երէց, եթէ Ընդեաւ ընդ քեզ զսպաս պատարագիս և զեղջիւր իւղոյդ՝ եկեսցես առ մեզ. և այլ բազումք որ նման են սմին: Ընդ ասէ ցնոսա մեծ զօրավարն. Տուք և ինձ հրաման, զի և ես շրջեցուցից զհետ իմ քահանայս և վրան պատարագի: Ընդ ցնա վարդապետն մեծ. Կերք չունիմք հրաման առնել զայդ առանց կաթուղիկոսին Հայոց և Թագաւորին Լանի: Ընդ գրէ Թուղթ և առաքէ դեսպանս առ կաթուղիկոսն Հայոց Գրիգորիս անուն, որ ընդ այն ժամանակս ապստամբէր ի Թագաւորէն Լանէ ի Հռոմկլայն վանս իրիք պատճառաց. նմանապէս գրէ և առ Թագաւորն Լան, և ծանուցանէ նմա զհնդիրն: Եւ նա նստուցեալ էր զտէր Գրիգոր կաթուղիկոս փոխանակ Գրիգորիսի որ ապստամբեալ էր, յաշխարհէն Աղիկեցւոց՝ ի վանքն՝ որ կոչի Ընդբակաղին: Ընդ արքայն Լան ժողովեալ զվարդապետս և եպիսկոպոսունս իւրոյ իշխանութեանն, հարցանէր վասն խնդրոյն Հռաքարէի. և նոքա յանձն առին, զի մի ելցէ արտաքոյ ուղղափառ հաւատոյն՝ որպէս զեղբայր իւր, և գրեն Թուղթ յապարեւելս այսպէս.

Մեծ սպարապետ և Տ ահնշահ արևելեան կողմանց Հռաքարիա. ի խնդիր ելեալ եղծեալ և աղաւաղեալ կարգաց քրիստոնէից՝ որ ի տկարութենէ այլասեռից, ժողով արարեալ վարդապետաց և եպիսկոպոսաց, հարց և երիցանց, որք քննեալ գտին զհնդիրս նորա համաձայն աստուածային գրոց: Ընդ առաքեաց առ քրիստոսասիրական արքայն Հայոց Լան, որ ի կողմանս արևմտից աշխարհին Աղիկեցւոց. և նորա ժողով արարեալ

1 Ա. Գ. Հիպերիոս. որ են Ս. Հիպերիքոս և Փիլոթէոս, և այլ քնկերքն, վկայք Սամոսատացիք:

'ի մայրաքաղաքն Սիս զկաթուղիկոսն Պաւլիճ իւրովք վարդապետօք և եպիսկոպոսօք և ձգնաւոր միանձամբք, գտին զինդիրս նորա համաձայն առաքելական կանոնաց, և ոչ արտաքոյ. վասն որոյ 'ի գլուխս կանոնաց դրոշմեալ առաքեցին Թուղթ ուղղափառ՝ որ են այսոքիկ։

Ա. Պատուցանել զսուրբ պատարագն դպրաւ և սարկաւագաւ, որպէս օրէնն է։

Բ. Տօնել զտօն աւետեաց Պատուաճածնի 'ի վեցն ապրիլի ամսոյ, յորում աւուր և հանդիպի, և զտօնն փոխման նորին 'ի հնգետասան օգոստոսի, յորում աւուր և հանդիպի, և զտօն սուրբ խաչին 'ի չորեքտասան սեպտեմբերի յորում և հանդիպի։

Գ. Պահել զձրագալոյս Յայտնութեան և Օշական, մինչև ցերեկոյն պահօք, և ոչ այլ իւիք լուծանել՝ բայց միայն ձկամբ և ձիթով։

Դ. Ընդունել զնկարագրութիւն պատկերի Փրկչին և ամենայն սրբոց, և մի խոտել զնոսա իբրև զպատկերս հեթանոսաց։

Ե. Պատարագս մատուցանել և կենդանեաց։

Զ. Կրօնաւորաց միս ոչ ուտել։

Է. Ձեռնադրել դպիր, և ապա յետ աւուրց սարկաւագ, և 'ի կատարեալ հասակի՝ ապա քահանայ։

Ը. Մինաբան կալ 'ի վանս, և առանձին իրս ոչ ստանալ։

Օշականիկ և որ նման սմին գրեցին 'ի ժողովն յաբևմտից, և առաքեցին յարևելս առ Օշաբիա։

Իսկ կաթուղիկոսն Յովհաննէս որ 'ի Դոռոմկլայն, վասն ընդ միտ մտանելոյ իշխանացն արևելից առաքեաց վրան մի գմբեթաւոր եկեղեցաձև, և կազմոյս և յօրինոյս նմին, և սեղան մարմարեայ, և այլ սպասք պատարագաց. և եպիսկոպոս մի Մինաս անուն, և սարկաւագս և դպիրս և քահանայս, և գեղեցկաձայն ասողս պատարագին. որք եկեալ եղեն յանդիման սպասալարին 'ի քաղաքն Լօռէ, և առաջի կացուցին նմա զՏրամանա կաթուղիկոսին, և զթուղթ նորին և զընծայս։ Նոյնպէս և յարքայէն Լեռնէ և 'ի կաթուղիկոսէն Պաւլէ եկին դեսպանք և հրամանաբերք։ Մինդ որ յոյժ ուրախացեալ Օշաբիայ՝ ժողով հրաւիրեաց առնել 'ի Լօռէ քաղաք զեպիսկոպոսն Դաղբատայ

զԱրիգորիան՝ զԼուբեանց ազգականն, և զեպիսկոպոսն Ընեայ, և զեպիսկոպոսն Ընջնայ, զԱռնայ, զԱարուց, և զայլս ոմանս դիպեցան. նոյնպէս և զվարդապետս և զառաջնորդս վանաց հանդերձ քահանայիւք և աշխարհական ամբոխիւ. կամէր կանգնել զվրանն և պատրաստ մատուցանել: Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք, Մխիթար որ Գոշն կոչիւր, այր իմաստուն և հեզ և վարդապետական ուսմամբ հռչակեալ. Յգնատիոս, Ս արդան, Գաւիթ Վրդ. Յոբայրեցին ի Նաղաւատայ, Յովհաննէս հայր Սանահնին, որ էր անուցող նոցին իշխանացն, Գրիգոր զոր Մանմենիկն կոչէին՝ ի Կեչառուաց, Տուրքիկն ի Թեղենեաց, որ բազում կարգաւորեաց զվանքն՝ զամենայն ինչ հաստատակաց լինել, և առանձին ոչ ինչ ստանալ. Նշխա ի Նաւուց–Գառէ, այն որ զեղեցիկ կարգաւորեաց զկարգ վանաց իւրոց, որպէս թէ ամենեցուն ընդ մի բերան հնչել՝ եթէ ցած և կամ բարձր, և ոչ հարստահարել ընկեր զընկերն. Գրիգոր Գառնեցին, Աարգիս միայնակեացն ի Կևանայ: Ընդ ոմանս այլք երևելիք, և այլք բազումք. Գրիգորէս եպիսկոպոս Նաղաւատայ, Ս ըրբանէս Ընջնոյ և Գառնոյ, Աարգիս աԹոռակալ Ընոյ, Յովհաննէս Կարուց. և այլք յոլովք աստի և անտի, հանդերձ երևելի քահանայիւքն վանաց, քաղաքաց և գիւղից: Նակ իբրև լուան և դիտացին զՀրաման կաԹուղիկոսին և Թագաւորին, ոմանք հաւանեցան և կէսքն ոչ. և այսպէս անմիաբան լեալք քակտեցան ի միմեանց. ոմանք ի գիշերի փախչելով գնացին, և ըզկէսն՝ արգել բռնութեամբ, մինչ մատուցեն զպատրաստսն. և այսպէս անմիաբան լեալք գնացին միմեանց մեղադրելով:

Նակ իշխանն Օ՝ աքարէ առաքեաց ի վանօրայս որ ընդ իշխանութեամբ իւրեանց էին, և տայր բռնութեամբ առնել զտօն վոխման Ս.ստուածածնի և տուրք խաչին՝ ոչ ի կիրակէ՝ որպէս սովորն էին, այլ զպատկերն զինչ օր որ գայր: Նազում անմիաբանութիւնք, կռիւք, վոխանակ սիրոյ՝ ատելութիւն ընդ միմեանս, և վոխանակ ուրախութեան՝ տրտմութիւն, ատելութիւն,

մինչև՛ ի սուր և ևս մտաբերել միմեանց։ Ապա առաքեաց Օ՛աքարիա զեպիսկոպոսն Ա՛ինաս՝ որ եկեալ էր՛ ի կա- Թ՛ուղիկոսէն՛ ի Ն՛աղբատ՝ պաշտօնեիւք իւրովք, զի և անդ զնոյն արասցեն. և մինչ գայր նա հուպ՛ ի վանքն՝ առաքեաց Գ՛րիգորիս եպիսկոպոս Ն՛աղբատայ ասս՝ որք սաստիւ Ն՛արէին զնա բրօք և զպաշտօնեայսն նորա, և վերս ՛ի վերայ եդեալ Թ՛ողէին կիսամահ, և զԶորիսն որք էին ընդ նմա բեռնակիրք՝ գահավէժ արարեալ սատակե- ցին. և բարձեալ զեպիսկոպոսն մահչօք տարան առ Օ՛աքարէ. և նորա բարկացեալ յոյժ՛ ի վերայ եպիս- կոպոսին, և հրամայեաց ըմբռնել զնա, մահուչափ ըս- պառնացեալ՛ ի վերայ նորա, և նա փախստական գնաց յաշխարհն Կայենոյ՛ ի վանքն Գ՛ետիկ առ մեծ վար- դապետն Ա՛խիթար, ապաւինութեան աղաչաւ. զի գիտէր Թէ մեծ համարձակութիւն ունէր նա առ Օ՛ա- քարէ, և Ճողոպրեցաւ այն անգամ՛ ի ձեռաց նորա. և յետոյ ըմբռնեաց զնա՛ ի Կեչառուս, եդ զնա՛ ի բան- գի, և զՅովհաննէս կացոյց եպիսկոպոս Ն՛աղբատայ փոխանակ նորա. այն որ յառաջն եւթող զաթոռն և գնաց՛ ի Խաչէն։ Նա էր այս Յովհաննէս այր առաքի- նի, և բազում գործս յիշատակի արժանիս գործեաց նա՛ ի Ն՛աղբատ[1]. ընդ որս և զՀռիփսիմեանց գաւիթս շի- նեաց եկեղեցւոյն՝ որ Հիացուցանէ զտեսողն։ Նա այն- պէս շփոթումն ունէր զեկեղեցիս արևելից. քանզի՛ ի բազում ժամանակաց հետէ չէին սովոր առնել զոր խնդրէրն նա, և ոչ զտօնսն յիւրաքանչիւր աւուր, զի մի պատճառաւ լուծցին պահքն. և զպատարագն սուրբ ոչ մատուցանէին սարկաւագաւ և դպրաւ, այլ միմեանց քահանայքն սպասաւորէին. և կարծեմ Թէ զայս սո- վորութիւն էին կալեալ՛ ի բռնութենէն Տաճկաց, որ ոչ տային համարձակ պաշտել զպաշտօնս իւրեանց քրիս- տոնէից, այլ և ոչ զդրունս եկեղեցեաց Թողուլ՛ ի բաց՛ ի ժամ սոսկալի խորհրդոյն, զի մի ոձիրս ինչ գործեա- ցեն այլազգիքն. և ոչ զայլն՝ զոր նա ախորժէր։

Դարձեալ հրամայէր ժողով առնել՛ ի մայրաքաղաքն Ա՛նի, որ՛ ի Ը՛ լերակ գաւառի, և ժողովեցան վերոյ- գրեալ եպիսկոպոսունք և վարդապետք, և ևս յոլովք.

1 Որ և ցարդ ակն յոյսի վկայէ յարձանաց տեղւոյն։

գրեաց Ո՛աքարիա առ վարդապետն Ա՛խիթար, զի և նա գայցէ ՚ի ժողովն։ Իսկ նա պատճառեաց զհիւանդութիւնն և զանկարութիւնն, և գրեաց պատասխանի այսպէս. Ա՛յժմ զոր ինչ առնեն դոքա և կամին՝ համաձայն եմ ես այնմ. և աղաչեմ զքեզ մի ինչ աւելի աշխատ առներ զիս, զի չեմ կարօղ։ Իսկ Ո՛աքարէ կոչեաց զժողովն և խնդրեր ՚ի նոցանէ ձեռագիրն, զի արասցեն զոր խնդրէ նա. և նոքա ասեն. Ա՛նհնար է մեզ առանց Ա՛ծ վարդապետին առնել զայդ. զի այսպէս կոչէին զնա սակս պատուոյ. իսկ նա ցուցեալ զթուղթն ասէ. Ա՛հաւասիկ նա, զի այս ձեռագիրս նորա. սա նա է և նա սա. և զթուղթն ոչ ետ նոցա՝ եթէ զինչ էր գրեալ ՚ի նմա։ Իսկ ժողովն խնդրէր ՚ի նմանէ ներումն, մինչև ինքեանք առաքեսցեն առ նա՝ գալ նմա ՚ի ժողովն. և առաքեցին առ վարդապետն Ա՛խիթար և աղաչէին զնա գալ ՚ի ժողովն, զի միաբան պատասխանի տացեն զօրավարին. և գրեցին թէ զանկարութիւն մարմնոյ մի ինչ պատճառեր. եթէ ՚ի ձանապարհին հասանէ քեզ վաշճան, ընդ առաջին սուրբ վարդապետաց եկեղեցւոյ կարգեսցուք գլխաւորել քո։ Ա՛յլ իբրև ընթերցաւ ընթուղթն ժողովին՝ վաղվաղակի գնաց զկնի կոչնակացն. և էր աւուրքն ձմեռնային և տօն Ծննդեան և յայտնութեան Յիսուսի Ք՛րիստոսի մերձեալ։ Իբրև գլխաւոր զօրավարն թէ գայ նա, առաքեաց իշխան մի արտաքս քան զդուռն քաղաքին, զի յորժամ գայցէ մի թողացուսցեն նմա երթալ ՚ի ժողովն, այլ առ ինքն տարցեն։ Ա՛յն քան զգալն նորա կէսք հաւանեալ էին առնել զնախկինն, այնքանիկ որ եպիսկոպոսքն էին իշխանութեան, զի մի անկցին յանցառոյն. և կէսք ոչ։ Իբրև եկն վարդապետն և առեալ իշխանն զերասանակս երիվարի նորա՝ տարաւ զնա առ զօրավարն. իբրև գիտաց ժողովն՝ եթէ ոչ թողին զնա առ մեզ, առաքեցին զվարդապետան՝ Ա՛երսէս, զայր առաքինի և ողջախոհ, որ յետոյ առաջնորդ եկաց Ա՛ղեքսանդրացւոց՝ զկնի մահուան Ա՛խիգորի վարդապետին՝ որ Ա՛ռնոնիկն կոչուր. զի երթեալ ասիցէ նմա՝ նախ ՚ի ժողովն գալ, զի խորհեսցին ՚ի միասին թէ զինչ պարտ իցէ առնել. զի ՚ի դիպող պահուն էին, և հանդերձեալ էր զօրավարն աքսորել զնոսա յօտարութիւն։ Ա՛յլ նա երթեալ հանդիպի նմա

յայնմ տեղւոջ՝ զի հանդերձեալ էր նա մնանել յա-
պարանս զօրավարին. և արտաքուստ ձայնեաց առ նա,
և ասաց զպատգամն Ժողովոյն. իսկ իշխանն ստիպով
տարեալ եմոյծ զնա ի ներքս. և զօրավարն եկեալ ընդ
առաջ նորա ողջոյն ետ նմա և ասէ. Արդ հետև եկիր
դու աստ, ինձ ոչ ինչ փոյթ է զնոցանէ: Եւ լուեալ
զբանս զայս Ժողովին[1], նախանձաբեկ եղեն և յաչաղե-
լով[2] ասէին. Ո՞այս ամենայն զոր գործէ զօրավարն ընդ
մեզ, խրատով նորա գործէ. մեք իբրև զանասունս հա-
մարեալ եմք յաչս նորա. և այլ բազում բանիւք բամ-
բասէին զնա: Իսկ նա իբրև խմացաւ զկրոն որ եղեալ
էին առ Ժողովին, մեղադիր եղև զօրավարին Թէ իշխա-
նաբար ոչ պարտ էր զայդպիսի իրս առնել. և առաքեաց
առ Ժողովին և ասէ. Գնա՛ք վասն ազգիս մերդ՝ զի մի այդ-
պիսի սովորութեամբ խառնեսցին ընդ Ա՛իրս, և ես հո-
գամ վասն զօրավարիս, զի մի լինի սա վրացի իբրև
զեղբայրն, որում սպասեն Ա՛իքք: Ա՛րդ Թէ այսպէս
է, զի՛ մեղադրեք ինձ. զի հրաման ունի՛ ի կաթուղի-
կոսէն և՛ ի Թագաւորէն Ա՛ևոնէ՝ առնել զայս. և մեք
Թէ կամիմք և Թէ ոչ՝ սա ոչ դադարէ առնելոյ զայս:
Ա՛րդ դուք գարձջիք յիւրաքանչիւր բնակութիւնս, և
մեք աղաչեսցուք ոչ հանել զձեզ յեկեղեցեաց ձերոց
և՛ ի տեղեաց. և մեք զպաշտօն որ միանգամ ցայսօր պաշ-
տեալ եմք՝ զնոյն պաշտեսցուք: Իսկ Ա՛միր սպարապն Ո՞ա-
քարէ հրաման ետ գաղտնի առանց գիտելոյ վարդապե-
տին՝ մերժել զնոսա յօտարութիւն. զոր գիտացեալ
վարդապետին՝ զբաղում՛ ի նոցանէ Թափեաց դառնալ
՛ի տեղիս իւրեանց. և զայլսն յետ սակաւ ինչ աւուրց
Իւանէ եղբայր զօրավարին՝ հրաման ետ դառնալ՛ ի տե-
ղիս իւրեանց: Իսկ Ո՞աքարիա զժամանակս կենաց իւ-
րոց օրչափ եկաց, նոյնպէս վարեցաւ՝ որպէս կամէր.
բայց եկեղեցիքն ամենայն առաջին պաշտամամբն վա-
րեցան:

Ո՞զուանդակ իրս, և զբան և զգործ այս Ժողովոյ
զրեաց մեծիմաստ և առատասիրտն վարդապետ Ա՛ա-
նական յիւրում՛ պատմութեանն. զի ականատես էր նա
իրացն եղելոց և ականջալուր, յաշակերտի կարգի գոլով

1 ՕՕ· ժողովրդի: 2 ՕՕ· ազգէն:

յայնժամ առ Պետ վարդապետն, Պ.յս և այլ յոլով իրք գտանին ի գիրս նորա, որք կամին մտադիւրու-թեամբ ուսանիլ,

Գ

ՎԱՍՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԳԱԼՈՑ ԱՌ ՄԵԾ ԻՇԽԱՆՆ, ՆԵՂԵԱԼ Ի ՑԱՑԼԱԶԳԵԱՑՆ

Ի բազում վշտաց և ի նեղութեանց զոր կրեաց առ հասարակ ամենայն աշխարհս յազգացն Հարաւայնոց, յորդւոցն Իսմայելի, և առաւել ազգս Հայոց և Պ.-ղուանից, զի բնաջինջ եղեալ ի թագաւորաց և յիշխա-նաց. կաթուղիկոսքն Պ.ղուանից այսր անդր յածելով վասն ոչ ունելոյ տեղի հաստատուն աթոռոյ, դէպ եղև նոցա գալ ի քարայր մի ի սահմանս բերդին՝ որ կոչի Ջարեք[1], և անդ դադարել և անդուստ հովուել զհօտ իւրեանց[2]. և մի ոմն ի նոցունց կաթուղիկոսաց, Ներ-սէհ անուն՝ եթող զկարգ իւր և էառ կին, և ստացաւ որդիս. և մերժեն զնա յաթոռոյն, և ձեռնադրեն փո-խանակ նորա զտէր Պետիաննոս: Որոյ (էր) քորեպիս-կոպոս մի Յարկաւագ անուն. դէպ եղև գնալ նմա ի Գանձակ քաղաք, ժողովել զմուտս յերիցանց և ի քրիստոնէից որ անդ. զնա տեսեալ ամիրայի քաղաքին, որում անուն էր Գուրջի Նազրատին, եհարց զնա թէ Ո՞յր ես, և իբրև ասաց թէ կաթուղիկոսին, ասէ[3]. Ուրեմն է իմ թէ քրիստոնեայք մեծապէս խնդու-թիւն առնեն՝ յորժամ օրհնեն զձուրն. արդ ահաւա-սիկ տօնն ձեր մերձեալ է, կոչեա զկաթուղիկոսն ձեր հանդերձ պաշտօնէիւք որպէս սովորութիւն է ձեր, և օրհնեցէք զձուր ի քաղաքիս. զի և մեք բերկրեսցուք ընդ ձեզ: Նոյն քորեպիսկոպոսն երթեալ պատմեաց կա-թուղիկոսին զհրաման ամիրային. և նա ուրախացեալ յոյժ, զի ոչ երբէք իշխէր կաթուղիկոս կամ երևելի ոք յայտնապէս մտանել ի քաղաքն կամ շրջել անդ. զի Պարսիկք ունէին զայն քաղաքն, որք ծարաւիք ա-

1 Վ. 138:
2 ՕՕ. խր:
3 յ'ՕՕ. չէք ասէ:

բեան քրիստոնէից. քանզի բազում վիշտս կրեալ էին նոքա ի բնակչացն Ասիացոյ աւազակաբար կելով, զբաղումն սպանանէին ի Պարսից, և կողոպտէին զքրիստոնեայս ի ձեռաց նոցա. նոյնպէս և Թագաւորն Պ ըրայ, և զօրք նորա. և վասն այն պատճառին Թշնամի էին ամենայն քրիստոնէից: Իսկ կաթուղիկոսն ժողովեալ զեպիսկոպոսունս և զվարդապետս իւրոյ վիճակին, գնաց նոքօք ի կոչ ամիրային. և տեսեալ զնա ամիրայն՝ յոյժ ուրախացաւ, և հրամայեաց մեծաւ հանդիսիւ և ճոխութեամբ երթալ վառեալ մոմովք և ժամհարովք և մեծաձայն պաշտամամբք՝ օրհնել ըզջուրն. և ինքն հեծեալ յերիվարն զօրօք բազմօք՝ գնաց ի տես զբօսանաց աղագաւ. դղրդեցաւ և քաղաքն ամենայն բնակչօք հեթանոսօք, գնացին և նոքա ի տես: Իբրև արկին զխուղն սուրբ ի ջուրն, ասեն Պարսիկք. Հաւասիկ զամենեսեան քրիստոնեայ արար ամիրայն. զի զինչ աւելի առնեն քրիստոնեայք, բայց Թէ մկրտեն և օծանեն. և մեք ամենեքեան ըմպեմք ի ջրոյս յայսմանէ, և լուանամք ի սմանէ. յայսմհետէ մեք անհաւատ եմք և դենակորոյսք. արդ եկայք հնարեսցուք լինչ: Յայնժամ ամբոխ յոյժ արարեալ և եդին զկաթուղիկոսն ի բանտ, և դրդեցին զկնի ամիրային և եդին զնա ի բերդն. և ինքեանք գրեցին առ Թագաւորն՝ որ նստէր ի Պահան, Թէ այս ամիրայս զմեզ զամենեսեան եհան ի հաւատոց մերոց. զի զխուղն խոզի՝ ետ արկանել ի ջուրն գլխաւորին քրիստոնէից. արդ ի պահօջ են[1] երկոքեանս, կաթուղիկոսն և ամիրայն. արդ զինչ կամք քո հրամայեն՝ այն եղիցի: Եւ հրամանն ետ զամիրայն լուծանել յիշխանութենէն և առ ինքն ածել: Իսկ ի կաթուղիկոսէն բազում գանձս առեալ ոսկւոյ և արծաթոյ՝ Թողին գնալ ուր և կամեսցին. և նա զերծեալ ի վտանգէն՝ չոգաւ ի կողմանս Ասիացոյ, և այլ ոչ իշխեր մտանել ի սահմանս Վանձակայ: Իսկ վանորայքն որ ի կողմանս քաղաքին էին և երիցունքն գաւառաց, իբրև տեսին Թէ ոչ իշխէ գալ տէր Պետիանոս յայն կողմն՝ և նոքա ոչ իշխէին երթալ առ նոսա, առեալ զՎեժգէնն զսյն կարգընկէց՝ տան ի նա

1 Թերևս ի փնպահոջ:

զձև և զկարգ քահանայութեան։ Զոր լուեալ տէր Աթեփանոս՝ ընդ բանիւ կապանաց արկ զնա, և զգործողս իրացն, և ինքն այսր անդր կացեալ, մինչև մեռաւ ի Տերդ[1] գաւառի։ Իբրև տեսին վարդապետք և եպիսկոպոսք կողմանցն Աղուանից՝ եթէ բարձաւ կաթուղիկոսութիւնն ի նոցանէ, և ոչ կայ յազգէն յայնմանէ եպիսկոպոս կամ քահանայ, բայց միայն մանուկ մի սարկաւագ, առեալ զնա տարան ի Հնձնի առ եպիսկոպոսն Աթանէս, և տան ձեռնադրել զնա քահանայ, և առեալ բերեն զնա ի քաղաքն Գանձակ առ իշխող քաղաքին՝ որում անուն էր Ամիր Ասմար. և աղաչէին զնա զի հրաման տացէ ձեռնադրել զնա կաթուղիկոս. և նա ասէ. Արի մանուկ է տիւրք. դուք որ կատարեալ էք հասակաւ՝ ընդէ՞ր ոչ լինիք կաթուղիկոս. և նոքա ասեն. Աթան զի սա է յազգէ կաթուղիկոսաց, և սմա անկ է աթոռն։ Եւ հրաման տայ ձեռնադրել զնա. և էին անդ եպիսկոպոսք սակաւ. և իբրև ձեռնադրեցաւ, հեծոյց զնա ամիրայն յաղնիւ երիվար, և արկ ի վերայ կտաւ ազնիւ ի պատիւ նմա, և փողահարս յառաջ և զկնի, և հրամայեաց շրջեցուցանել զնա ընդ փողոցս քաղաքին։

Եւ այսպէս կալաւ զաթոռն Աղուանից տէր Յովհաննէս զամս բազումս. սա հաստատեաց զաթոռն իւր ի սահմանս Գարեքինն, ի քարի անդ զոր ասացաք վերագոյն։ Ապա նեղեալ յայլազգեացն՝ դիմեաց գալ յերկիրս Տայոց առ մեծամեծ իշխանս Տաքարէ և Իւանէ. և նոքա մեծաւ պատուով ընկալան զնա, և բնակեցոյց զնա Իւանէ ի քաղաքն Ախփոր՝ ի վանքն որ կոչի Ստամին։ Ապա սկսաւ շինել անդ եկեղեցի մեծ և հրաշալի, և մինչ չև էր աւարտեալ խափանումն եղև. զի եկն սուլտանն Խորասանայ Ջալալադինն կոչեցեալ և եհար զթագաւորութիւնն Վրաց, և խոստացաւ մի զկնի միոյ գալ զօրաց այլազգեաց և աւերել զաշխարհս Տայոց, Աղուանից և Վրաց։

1 Դուցէ Հերեթ յաշխարհին Ժինն Հերոսի եղբօր Տայկայ, և Աղուանից, կողմն Ալնախայ, բա- Հերէթ գրելի։

Ե

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ԵՐԵՒԵԼԵԱՑ ՈՐՔ ԷԻՆ Ի ԿՈՂՄԱՆՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ, Ո՛ՐՊԷՍ ԵՂԵՆ ԿԱՄ ՋԻ՛ՆՁ ԱՐԱՐԻՆ

Ընդ այնոսիկ աւուրս ժամանակաց էին վարդապետք առաքինիք և լուսաւորք, որք փայլէին յաշխարհի իբրև լուսաւորք. Ստեփաննոս որդի Յուսկան[1], այր սքանչելագործ և սուրբ, որ և գերեզման նորա յետ մահուանն բժիշկ էր ամենայն ախտացելոց. և Գործն Կապենացի[2], այր իմաստուն և պիտանաւոր. և միւս ևս այլ Տիրացու նորա անուանն, որ և ղաստիճան եպիսկոպոսութեան ընկալաւ. և Ներսեսաճատուր՝ զոր Ներսեսիկայ որդի կոչէին՝ ի Կարճէ քաղաքէ. զսմանէ բազում ինչ առաքինութիւն պատմեցին որք տեսողք լեալ էին. Էր սա որդի մեծատան, յոյժ ողորմած և աղքատասէր. իբրև ասացին նմա թէ մեռաւ մայրն քո ըստ մարմնոյ, գոհացաւ զՍտուծոյ. և գնացեալ ի թաղումն նորա՝ առեալ ոսկի և արծաթ արկանէր ի ձեռս մերկ իւրոյ, և կոչէր զաղքատս առնուլ ի ձեռաց մօր իւրոյ, որպէս թէ ինքն իսկ ձեռօք իւրովք է տուեալ։ Եւ իբրև Հայրն վաղճանեցաւ, առեալ զամենայն ինչան բաշխեաց աղքատաց. և կուպղայք էին նորա բազումք, և զայն ետ ի վարձու, և յամենայն ամի առեալ զգինսն՝ գնէր նոքօք մորթս ոչխարաց, և կարէր ձեռօք իւրովք հանդերձս և տայր աղքատաց. և տեսեալ զբարեգործութիւն նորա բազումք ի Տաճկաց՝ գային առ նա, և մկրտեալ ի նմանէ լինէին քրիստոնեայ։ Եւ տեսեալ անհաւատիցն եթէ նա է պատճառ ամենայնի, կամէին սպանանել զնա, և յոյժ ոչ իշխէին վասն բազմութեան ժողովրդոյն, խորհեցան գնել նմա գաղտնի որոգայթ. և կալեալ մի ի ծառայից նորա խեղդեցին, և բերեալ ի գիշերի ընկեցին առ դրունս վանիցն, և վաղվաղակի ընդ առաւօտն եկեալ պաշարեցին զնա զի սպանցեն զնոսա, որպէս թէ նոքա գործեցին զայն։

1 Ի կողմանց Վանայ, ուր և մանն, մերձ ի ծայր ծովուն։
Արգելանի վանք նորա և գերեզ- 2 Ր. Կարնեցի։

Եւ լուեալ քրիստոնէիցն ժողովեցան անթիւ բազմութիւնք, մեռանել ամենեցուն և ասպատակ զնա՝ ի ձեռս Իսկ սուրբ այրն Աստուծոյ տեսեալ զդաղտնի որոգայթս թշնամւոյն՝ թէ՝ ի պատճառս նորա զբազումս կամին սպանանել, զի Պարսիկք ունէին զիշխանութիւն քաղաքին, ասէ ցնոսա. Երեցէք մեզ զմի գիշեր, և՝ ի վաղիւն որպէս կամք լոցէ ձեզ, այնպէս արարէք դուք մեզ: Եւ հրամայեաց գիշերապահսն առնել, և խընդրել յԱստուծոյ զի զերծցին՝ ի պարտութենէն. և ինքն առանձնացուցեալ զինքն և մեծաւ հառաչանօք խընդրեր յԱստուծոյ զայցելութիւն: Եւ վաղիւն բացեալ զդրունս վանիցն, կոչեաց զամենեսեան՝ ի ներս զհաւատացեալս և զանհաւատս, և ինքն առեալ զնշանն տէրունական, ասէ բարձր ձայնիւ՝ ի լուր ամենեցուն. Զեզ ասեմ այր դու յանուն Յիսուսի Քրիստոսի, որ հաստատեաց զարարածս յոչնչէ, ասա առաջի ամենեցուն թէ ո՞վ սպան զքեզ: Եւ նա յարեաւ վաղվաղակի և նայեցեալ յամբոխն՝ տեսս զսպանողն իւր, և ասէ. Այրս այս սպան զիս: Յայնժամ ասէ ցնա սուրբն Աստուծոյ. Պարձեալ դիր զգլուխ քո և ննջեա մինչև՝ ի հասարակաց յարութիւնն. և իսկոյն մեռաւ դարձեալ. և այսպէս զերծեալը՝ ի մահուանէ՝ փառաւորեցաւ անունն Քրիստոսի [1]:

2

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆՆ ՋԱՓԱՐԻՒ ՋՕՐԱՎԱՐԻՆ

Յետ բազում քաջութեանց և յաղթութեանց՝ զոր արարին մեծամեծ իշխանքն Աքաբէ և Լւանէ, էր պան զօրօք բազմօք՝ ի քաղաքն՝ ի Պարանդ, և առին զնա և աւերեցին զբազում գաւառս որ շուրջ զնոքօք. և ապա գնացին յԱրտաւիլ քաղաքն, նմանապէս առին և զնա: Եւ բազումք՝ ի նոցանէ աղօթակոչօք իւրեանց, զոր Տէրդի անուանեն՝ ապաստանեալք էին յաղօթարանն իւրեանց. Հրամայեաց Աքաբէ բերել

1 Աւանգի այսպէս և՝ ի Յայսմաւուրս ոմանս, և յայսմանէ Մեսրոպայ կոչի վարդապետն:

խոտ և ցօղունս և արկեալ զնովաւ նաւթ և ձէթ և բորբոքել հրով, և այնպէս այրեաց զնոսա, և ասէ ցիշխանս և աշխարհականս[1], փոխանակ իշխանաց Հայոց՝ զոր այրեցին Տաճիկք՝ ի Պախջուանի. և կուրայքն՝ փոխանակ քահանայիցն Նագուանայ՝ զոր մորթեցին, և զարիւնն արկին զպարապոճն եկեղեցւոյն, որ մինչև ցայսօր սևացեալ երևի տեղին: Այլ ինքն դարձաւ յաշխարհն իւր, և ՚ի Ձանապարհին հիւանդացաւ. զի ելլին վերք անբժշկելիք յանդամն նորա, և յողջանալ միոյն միւսն բուսանէր. և այսպէս վտանգեալ զնա, և յետ սակաւ աւուրց վաղձանեցաւ. և եղև սուգ ամենայն քրիստոնէից. և տարեալ թաղեցին զնա ՚ի Պահինն ՚ի մեծ եկեղեցւոջն, առաջի դրան խորանին, ներքոյ՝ յահեակ կողմանէ: Այլ սուգ մեծ զգեցաւ թագաւորն մեծ Պ ըտց Պէորգի, մանաւանդ Թաշա, որդի Պօսլանայ և Ջամարին, Թոռն Պէորգայ մեծի թագաւորի, և եղբայր իւր Իւանէ ամենայն զօրօք Պ ըտց: Այլ մնաց որդի մի Օ աքարէի մանուկ տիօք Ճ ոչնշահ անուն նորա, զոր սնոյց Իւանէ ընդ որդւոյ՝ իւրում Պարգսի՝ զոր Ջագն կոչէին, մինչև եհաս յարբունս հասակի, և ապա տիրեաց հայրենի իշխանութեանն:

Լ

ՎԱՍՆ ԼԵՒՈՆԻ ԱՐՔԱՅԻ ԵՒ ՎԱՂՁԱՆԻ ՆՈՐԱ

Իսկ բարեպաշտ և հզօր արքայն Հայոց Լեւոն ՚ի վերայ բազում քաջութեանց զոր արար՝ հնազանդեցոյց զշուրջակայ զազգսն. եկն և ապստամբ կաթուղիկոսն Հայոց Յովհաննէս՝ որ ՚ի Կլայն Հռոմէական, և հաշտեցան ընդ միմեանս, իբրև վաղձանեցաւ տէր Գագիկ՝ որ յԱրքակաղնին: Այլ հիւանդացաւ և արքայն Լեւոն հիւանդութիւն՝ որ և մեռաւ իսկ. և կոչեալ առ ինքն զկաթուղիկոսն Յովհաննէս, և զամենայն զօրագլուխս զօրաց իւրեանց, և զի որդի ոչ ունէր՝ բայց միայն դուստր մի, զոր յանձնեաց ՚ի կաթուղիկոսն և յամենայն իշխանն՝ թագաւորեցուցանել զնա

1 Առաքել Գ իշխանքն և պաշարհականքն. տ. Վ. 140:

փոխանակ իւր, և կեալ նմա հնազանդ, և ամուսնացուցանել զնա զուգապատիւ առն. և եդ զնա ի ձեռս կաթուղիկոսին և երկու մեծամեծ իշխանացն, Կոստանդնի՝ ազգականին իւրոյ, և Վիր Աբասայ՝ որ էր հռոմ գաւանութեամբ. և ինքն հանգեաւ խաղաղական մահուամբ ի վեց հարիւր վաթսուն և ութ թուին Յայոց, կալեալ զթագաւորութիւնն ամս քսան և չորս, յաղթութեամբ և բարւոյ անուամբ. և յոյժ սգացին ամենայն աշխարհն իւր և ամենայն զօրքն առ հասարակ. զի յոյժ սիրելի էր ամենեցուն քրիստոսասէր արքայն. և յետ օրինաւոր սգոյն՝ կազմեցան առ ի թաղել, և եղև հակառակութիւն. զի կէսքն ասէին թաղել զնա ի թագաւորանիստ քաղաքն ի Վիս, և այլք ի վանքն որ կոչի Կինեբ, զի յոյժ սիրէր նա զայն վանքըն՝ վասն բարիոք կարգաւորութեան նոցա, և հաճոյական աղօթից. իսկ ումանք ոչ համարեցան պատշաճ, զի եզը էր տեղին այն, և թշնամիք բազում էին նորա յայլազգեացն. գուցէ ասեն եկեալ հանցեն զդա և այրեսցեն հրով, վասն բազում քինուն[1] զոր ունէին ընդ նմա. ապա միաբանեալ ամենեցուն տարեալ զմարմին նորա թաղեցին ի Վիս. զսիրտն և զփորն տարան ի վանքն Կինեբ։ Կոստէս հանգեաւ բարեպաշտութեամբ քաջ և յաղթողն ամենայնի արքայն Լեռն։

Եւ կաթուղիկոսն և իշխանք բերին զորդի տեառն Ընտիոքայ՝ զոր բրինձն անուանէին, և ետուն զդուստրն արքային Լեռնի ի կնութիւն նմա, և թագաւորեցուցին զնա. և էր անուն պատանւոյն Փիլիպպոս, և անուն թագուհւոյն Օ՛աբել։ Իսկ նա իբրև եկաց ի թագաւորութեան ամն չորս, խաբեաց զնա հայրն և առ ի նմանէ զթագն Լեռնի արքային, և զպաշտան արքունական[2], զոր յերևելի աւուրս կանգնէին, և այլ գանձս ոսկոյ և արծաթոյ։ Իբրև տեսին եթէ ոչ է միամիտ յարքայութեան անդ, ընդունեալ զնա արարին արդելս, մինչև բերցէ զթագն և զգանձն զոր տարաւ։ Իսկ հայրն ոչ ետ և ոչ զմին, այլ և ոչ օգնել կարաց որդւոյ իւրում, և թողին զնա անդ մինչև ի նմին ժեռաւ։ Եւ

1 Ա. Գ. «խոխալոսիկան»։

2 Թուի վրան կամ գահաւորակ։

իշխանն մեծ Կոստանդին հաւանեցոյց զկաթուղիկոսն և զայլս ոմանս ՚ի մեծամեծացն՝ թագաւորեցուցանել զորդին իւր զՅեթում՝ մանուկ տիօք, առոյգ մարմնով և դեղեցիկ տեսանելով. իսկ Թագուհին ոչ հաւաներ լինել կին մանկան. այլ չոգաւ ապաստանեցաւ[1] ՚ի Աելևկիա առ Ֆռանկս որ անդ, զի մայր նորա Ֆռանկ էր ազգաւ ՚ի Կիպրոս կղզւոյ. և առեալ Կոստանդնի զգօրսն ամենայն պաշարեաց զքաղաքն, մինչև ոչ կամաւ ետուն զԹագուհին ՚ի ձեռս նորա. և տարեալ առմուանայոյց զնա որդւոյ իւրում, և եղեն ՚ի նմանէ որդիք: Եւ յոյժ բարեպաշտ էր կինն այն և ողջախոհ, սիրող ամենայն երկիւղածացն Աստուծոյ, և աղքատասէր, պահօք և աղօթիւք հանապազ ձգնէր: Իսկ մեծ իշխանն Կոստանդին իբրև առ զԹագաւորութիւնն որդւոյ իւրում Յեթմոյ, զամենայն հոգս ալքայութեան յանձն առեալ՝ իմաստաբար կարգաւորէր. զկէսն հնազանդէր սիրով, և զոչ հնազանդսն՝ բառնայր ՚ի միջոյ, զոմանս փախստական առնելով, և զայլս մահուամբ: Աբար սէր և միաբանութիւն ընդ առաջնին Յոռոմոյ, որոմ անուն էր Աւղին[2]: Այսպէս առնէր և ընդ ամենայն շուրջակայ ազգսն, և յամենայն կողմանց խաղաղացոյց զաշխարհս. և կարգեաց զանդրանիկ որդին զԱմբատ՝ զօրավար, և զմիւսն[3] իշխան Թագաւորութեան. և զամենայն վանորայս երկրին անհոգ առնէր յամենայն մարմնական պիտոյից. զի ինքն տայր նոցա զմարմնաւոր պէտս նոցա, զի նոքա միայն աղօթից և պաշտման պարապեսցին: Եւ ցաւ և երկիւղն բազմութեամբ մարդկան՝ անարուեստից և արուեստաւորաց, որք ժողովեցան յամենայն կողմանց, փախուցեալք յաւերմանէ Աղաթարքին զբազում աշխարհս, որք եկեալ յարևելից հիւսիսոյ՝ տապալեցին զամենայն տիեզերս:

Յետ այսորիկ մեռաւ և կաթուղիկոսն Յովհաննէս կալեալ զաթոռն ամս ութ և տասն: Եւ նստուցանէ մեծ իշխանն հանդերձ Թագաւորաւն զտէր Կոստանդին յաթոռ սրբոյն Կիրիպորի, այր առաքինի և հեզ, սուրբ վարուք կեցեալ, և անձին իւրում բարիոք ա-

1 ՕՕ· ապաստանեցաւ:
2 Ալայեոտին Քէյքաւատ:
3 Որ կոչիւր Լևոն:

առաջնորդեալ, որպէս զարդարեաց զկարգ եկեղեցւոյ ուղղափառութեամբ. զսա պատուէին ամենայն աշխարք, ոչ միայն քրիստոնեայք՝ այլ և աղգն Ցաճկաց։ Վասն եղև երից սուլտանացն գալ ի սահմանս Յոռոմկլայն կոչեցեալ քաղաքի, ուր էր աթոռ կաթուղիկոսութեան, ի վերայ Կիրատ գետոյն. գնաց կաթուղիկոսն ի տես սուլտանաց. իբրև գիտացին զգալուստ նորա՝ ինքեանք իսկ ընդ առաջ նորա, և բերեալ զնա ի բանակն մեծաւ պատուով, կանգնեցին խորան ազնիւ ի մէջ խորանաց իւրեանց. ի մի կողմանէ խորան Սելիք Վէհմէլին՝ որ իշխէր կողմանցն Եգիպտոսի, և ի միւս կողմանէ խորանն Սելիք Ալշրափին՝[1] որ իշխէր մեծ մասին Յայոց աշխարհին և Միջագետաց, նոյնպէս և խորանն եղբօրորդւոյ նորա. և այսպէս մեծապատիւ արարեալ զնա յոլով աւուրս՝ և արձակեցին զնա մեծաւ պարգեւօք, գեղօք և դաստակերտօք. զի Աստուած զիաւաւորիչս իւր փառաւորէ առ և ի հանդերձեալն։

Եւ եղև սկիզբն Թագաւորութեանն Յեհմայ ի վեց հարիւր եօթանասունն և երեք թուին Յայոց։

Ը.

ՀԱՄԱՌՕՏ ՀԻՒՕՒԱԾՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԿՈՂՄԱՆՑՆ ԱՂՈՒԱՆԻՑ ԸՆԴ ՆԵՐՔՈՑՍ ՋՐՈՒՑԱՏՐԱԲԱՐ

Սկիզբն առաջնոյ պատմութեանն եդաք զսուրբ Լուսաւորիչն Յայոց, զառաքեալ և զմարտիրոս և զաթոռակալ երից սուրբ աթոռոցն՝ Վաղէոսի և Բարդողիմէոսի և Յուդայի Յակոբեան, զսուրբ Գրիգորիոս, և աղօթիւք նորա հասաք մինչև ցայսվայր։ Յակ երկրորդ հատածիս զիցուք գլուխ՝ զի ուսաւորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք և հայախօսք յոլովք էին, թագաւորք՝ հնազանդ թագաւորաց Յայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսք՝ ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և աթոռակալաց[2] նորա. և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ

1 Սուլտան Դամասկոսի։ 2 Ա. աթոռակից։

կացեալ ՚ի կրօնս. վասն այնորիկ արժան է ՚ի միաբան լինել երկուց ազգաց, Յն մեք համառօտիւք սկսցուք ասել զառաջնորդս նոցա, մինչև ցայսվայր որ Թողաւս։

Ա՚րդ առաջին կողմանցն արևելից ասեն զսուրբն Ա՚ղիշէ՝ զաշակերտ մեծին Թադէոսի առաքելոյն, որ յետ մահուան սուրբ առաքելոյն՝ գնացեալ Յ՚երուսաղէմ առ Յակոբոս եղբայր տեառն, և ՚ի նմանէ ձեռնադրեալ եպիսկոպոս՝ գայ ընդ աշխարհս Պարսից, և հասանէ յաշխարհն Ա՚ղուանից. գայ նա ՚ի տեղի մի անուանեալ Պ՚ից, և անդ շինէ եկեղեցի. և ինքն կատարի անդէն նահատակութեամբ, անյայտ Թէ յումէ եղև. և ընկերացեալ գնա ՚ի ջրհոր մի ընդ այլ բազում դիականց. և անդ եկաց մինչև յաւուրս բարեպաշտ արքային Ա՚սաջադանայ վերջնոյ։

Եւ այս են Թագաւորք Ա՚ղուանից ՚ի զարմից Յայկայ, յազգականութենէն Ա՚ռանայ, զոր կարգեաց Ա՚սաղարշակ ՊարԹև՝ վերակացու և իշխան կողմանցն այնոցիկ. առաջին Ա՚ջդահան, Ա՚ջէ, Ա՚ռնայր. սա եկեալ առ մեծ արքայն Տրդատ և առ սուրբն Գ՚րիգոր՝ մկրտի ՚ի նմանէ, և ձեռնադրէ սուրբն Գ՚րիգոր զայր մի ՚ի սպասաւորաց նորա եպիսկոպոս, որ եկեալ էր ՚ի Յռոմայ ընդ նմա, և տայ զնա Ա՚ռնայրի արքայի։ — Յաւէջեան, Ա՚երհաւան, Ա՚ատոյ, Ա՚ռա [1], Ա՚սվաղեն. յաւուրս սորա արար գիր Ա՚եսրոբ երանելի՝ Յայոց, Ա՚ղբայ և Ա՚ղուանից. Ա՚ջէ, զսա բռնութեամբ մոգ արար Յազկերտ Պարսից արքայ, (որ կոտորեաց զսուրբ Ա՚արդանանքն. և յետոյ Թողեալ զմոգութիւնն [2]) ընդ նմին և զԹագաւորութիւնն՝ կրօնաւորեալ խստակրօն վարուք հաշտեցոյց զԱ՚ստուած՝ օրում և մեզաւն։ Յետ սմա Ա՚ջդահան բարեպաշտ, զոր յիշատակեցաք ՚ի վերոյ։ Ա՚ս լուաւ եԹէ զսուրբն Ա՚ղիշէ ընկեցին ՚ի դուբն, հրամայեաց հանել զամենայն ոսկերս որ ՚ի գբի անդ, և հանեալ կուտեցին զնա շեղջս շեղջս. և յաղօԹս կացեալ բարեպաշտ արքայն զի յայտնեսցէ զոսկերս սուրբ Ա՚ղիշէի. և ել հողմն ուժգնակի և ցանեալ ցըրուեաց զամենայն ոսկերսն ընդ երեսս դաշտին, բայ յոսկերաց սրբոյն Ա՚ղիշէի. և բարձեալ արքայն մեծաւ

1 ՕՕ. Սոփրոն։ 2 Ըստ տպագրին։

պատուով գոհանալով վ՚ախտուծոյ՝ բաշխեաց ամենայն երկրին իւրոյ։

Ա՚պա սուրբն Ե ուփհաղիշոյ եկաց եպիսկոպոս. բայց վասն առնս այսորիկ յառաջ կարգելոյ՝ երկմտութիւն գոյ մեզ. զի որ գրեաց զպատմութիւնն Ա՚ղուանից՝ զայս անուն կարգէ յաւուրս Ա՚աչագանայ բարեպաշտի լեալ. և այսմ վկայ օրինքն՝ զոր եդ Ա՚աչագան արքայ՝ ամենայն եպիսկոպոսիւք Ա՚ղուանից՝ և գրէ այսպէս. Ես Ա՚աչագան Ա՚ղուանից արքայ, և Ե ուփհաղիշոյ Ա՚ղուանից արքեպիսկոպոս Պարտաւայ. և յետ այսորիկ այլ անուն ոչ գտանի ՚ի կարգ հաւարոյ եպիսկոպոսաց. այլ մեք որպէս գտաք և եդաք։ Ա՚ւ ապա տէր Ա՚ատթէ, տէր Ա՚ահակ, հինգ. տէր Ա՚ովսէս, վեց. տէր Պանտ, եօթն. տէր Ղ՚ազար, ութ։ Ա՚ւ ապա սուրբ մանուկն՝ Ա՚ղթանայ մեծի որդի Գ՚րիգորիս, եղբայր Յուսկանն, Թ՚ոռն սրբոյն Գ՚րիգորի. զոր առաքեաց մեծ արքայն Տրդատ, և սպանեալ եղև ՚ի դաշտին Ա՚ռանայ՝ վասն վկայութեանն Ա՚խտուծոյ. և բերեալ Թ՚աղեցաւ Ա՚մարաս, և յետոյ նշխարքն գտեալ եղև յաւուրս Ա՚աչագանայ. ընդ որս և նշխարք սրբոցն գտեալ եղեն՝ Ո՚աբարիայի հօրն Յովհաննու Ա՚կրտչի, և Պանտալեոնի մեծի բժշկի, որ վկայեաց ՚ի Ն՚իկոմիդիայ քաղաքի յաւուրս Ա՚բսիմիանոսի, զոր տարեալ էր սուրբն Գ՚րիգորիս ընդ իւր։ Ա՚ւ ապա տէր Ո՚աբարիա, տասն. տէր Գ՚աւիթ, մեռաւսան. տէր Յովհաննէս, որ և Ն՚ոնացն եղև եպիսկոպոս, երկոտասան։ Տէր Ա՚բեմիա, եբեքտասան. յաւուրս սորա արար երանելին Ա՚եսրովբ գիրս Ա՚ղուանից մեծաւ ջանիւ։ Տէր Ա՚բաս, չորեքտասան. առ սա և գրեցին ՚ի ժողովոյն Գ՚ունայ՝ զսուրբ Ա՚խտուածն անմահ և խաչեցար, և ասել մի բնութիւն աստուածութեան և մարդկութեան։ Տէր Ա՚իրոյ, ամն երեսուն և երեք. սա բազում ամ ՚ի դիպահոլ լեալ ՚ի գրան Խոսրովու Պարսից արքայի, և յետ մահուան նորա աղատեալ եկն յերկիր իւր. սա Թ՚ափեաց զգեբեալս Ն՚այոց, Ա՚րայ և Ա՚ղուանից՝ ՚ի Ե աթոյ Խաղբէ, յորդւոյն Ջ՚աբու-Խաքանեայ, որ գերեաց զաշխարհս [1]. սա շինեաց քաղաքս Հինգ [2] յանուն Ե՝ աթոյ,

1 Ցերկարագոյնս ոճով պատմէ զայսոսիկ պատմիչն Ա՚ղուանից Մովսէս Կաղանկատուեցի։

2 Ա՚յսպէս OO. Թէպէտ վեց քաղաք համարին, գուցէ առաջինն վրիպակաւ մուծեալ, զի և չէ մեզ ծանօթ։

զՇ ամեար, զՇ ամբոր, զՇ աբի, զՇ իրուան, զՇ ա-
մանի, զՇ ապրան։ Ցեր Ո՛ աքարիա՝ ամն հնգետա-
սան. սա աղօթիւք իւրովք ապրեցոյց զմեծ քաղաքն
Պարտաւ՝ի գերութենէ. տէր Յովհաննէս, ամն քը-
սան և հինգ։ Ցեր Ոխտանէս, ամն երկոտասան. սա
անէծ զնահարարս Աղուանից վասն ազգաշաղախ խառ-
նակութեանն, և սատակեալք եղեն ամենեքեան։ Ցեր
Աղիազար, ամն վեց. տէր Եղիսէ, ամն եօթնևտասն.
սա մինչ եպիսկոպոս էր Վարդմանայ[1] հաւանեցոյց
զկին ոմն Սպրամ անուն՝ կին իշխանին Աղուանից, զի
թէ տացէ զնա ձեռնադրել կաթուղիկոս Աղուանից՝
զամենայն ինչ ըստ կամաց նորա գործեսցէ. և էր կինն
աղանդողին (!) Քաղկեդոնի, և աղաչեալ զեպիսկոպո-
սունս՝ եւ ձեռնադրել զԵղիսէ–Վահուր՝ի կաթու-
ղիկոսութիւն Աղուանից։ Իբրև անցին աւուրք ինչ է-
բևեցոյց զաղանդն՝ զոր յղացեալ ունէր. իբրև յանդի-
մանեցաւ յեպիսկոպոսաց և յերիցանց՝ հալածական ա-
րար զբաժդուման, և ժողովեալ առաջնորդաց Աղուանից՝
նզովեցին զնա, և զրեցին առ կաթուղիկոսն Հայոց (Ա-
ղիա) օգնել նոցա. և գլխաւորն Ցաձկաց Աբդլմելիք
լուաւ թէ առաջնորդն Աղուանից և կին մի՝ կամին ապ-
ստամբեցուցանել զաշխարհս՝ի քէն, զի զՅունաց
թևակոխեն. և հրամայէ Աղիայի գնալ յաշխարհն
Աղուանից, և ընկենուլ զնա յաթոռոյն, և զնա և զըզ-
կինն կապել՝ի միասին զոտն՝ և արկանել զուղտով
որպէս զբեռն. և տանել զնոսա՝ի դուռն արքունի, զի
նշաւակ լիցի ամենայն զօրուն։ Եւ գնացեալ Աղիայի
և ներքինւոյն արքայի՝ի քաղաքն Պարտաւ, և արարին
զհրաման արքունի[2]. և մինչ այնպէս անարգանօք ձա-
ղէին զնա՝ի ներգաստուածիւն անկեալ՝Երսէս յետ
ութ աւուրց վաղճանեցաւ դառնապէս. և մուրհակ ե-
տուն ամենայն նախարարքն Աղուանից և ամենայն ե-
պիսկոպոսք առաջի ներքինւոյն՝ հրամանաւ և մատա-
նեաւ արքունի, զի առանց կաթուղիկոսին Հայոց հրա-
մանի ոչ ձեռնադրեն կաթուղիկոս Աղուանից։ Եւ ձեռ-
նադրեաց Աղիա յաթոռն Աղուանից զտէր Աբիմէոն՝

1 ՕՕ· Գարդմայ։ բոցս պատմչաց Խաչփոչճոռիճ
2 Վասն այնորիկ և ոմն՝ի մե- տեառն Աղիայի կոչէ զգործն։

որ զպղտորումն ՝ներսէսի եբարձ, կացեալ ամ մի և կէս. և եդ կանոնս եօթն տուն: Տէր Մինքայէլ, ամն երեսուն և հինգ. սա կոչեաց զՄաքենոցացին հայրն՝ Սողոմոն, անէծ զտեարսն Ղազանից, զերից ազգայ ծնունդս ամուսնացեալս, որք բարձան ՚ի միջոյ առ հասարակ. նզովեցին և զՅաղիկ զրաց առաջնորդն, զի հրաման տայր անօրէն ամուսնութեան: Տէր Յնանիա, ամն չորս. տէր Յովսէփ, ամն հնգետասան.՚ի սորա հինգ ամին լցաւ երկերիւր ամ Հայոց թուին: Տէր Դաւիթ, ամն չորս. սա թափեաց զՀող և զսպաս սրբութեանց, և դեղակուր լեալ մեռաւ: Տէր Դաւիթ, ամն լինն. սա վաճառեաց անօրինացն զԴաստակերտն և զՄահմանախաչ: Տէր Մատթէոս, ամ մի և կէս. տէր Յհարոն, ամն երկուս. տէր Սողոմոն, ամն երիս. տէր Յօրոս, ամն չորս. տէր Սողոմոն, ամն մեռաւսան և կէս. տէր Յովհաննէս, ամն քսանևհինգ. սա փոխեաց զկաթուղիկոսարանն՚ի Կերդակոր՝ (որ էր) իւրեանց հովոցայ տեղի, յորժամ հանաւ՚ի պարտաւայ: Տէր Մովսէս, կէս ամ. տէր Դաւիթ, ամն քսան և ութ: Սա օրհնեաց զանօրէն ամուսնութիւնն Շ աքոյ տեառն. և նորին իշխանին եղբայր աշխարհական՝ հարցեալ ասէ ցնա. Ասաւ զաս տէր. և նա ասէ. Ի տանէ եղբօր քո. և ասէ իշխանն՝ Դաւթի. Եղուկ որ օրհնեաց՝ մի խօսեսցի, և աջդ չորասցի. և առժամայն եղև այնպէս, և ոչ բժշկեցաւ մինչև՚ի մահ: Տէր Յովսէփ, ամն քսան և հինգ. ՚ի սորա երեք ամին՝ լցաւ Թուիս Հայոց երեքհարիւր: Տէր Սամուէլ, ամն եօթն և տասն. անձամբ առեալ սորա զպատիւն, և յետոյ լուծեալ ՚ի Դէորդէ կաթուղիկոսէ Հայոց, ՚ի հարկէ առնու զերկրորդ ձեռնադրութիւն՚ի Դուին: Տէր Յունան, ամն ութ և կէս. սա էր զրան եպիսկոպոս Հայոց. և մինչդեռ ՚ի գերութեան էր Դէորգ՝ սա գայ յԱղուանս, և անդրէն ձեռնադրի առանց կամաց տեառն Դէորգայ. և իբրև գնեցին զտէր Դէորգ իշխանքն Աղուանից՝ լուծանէ զնա ՚ի պատուոյն. բայց աղաչեալ զնա իշխանաց Աղուանից՝ վասն երախտեացն որ առ նա, կրկին ձեռնադրէ զնա և: Տէր Սիմէոն, ամն քսան և հինգ. տէր Դաւիթ, ամն հինգ. տէր Սահակ, ամն ութ և տասն: Տէր Դաւիթ, ամն չորեքտասան.՚ի սորա չորրորդ ամին լցաւ Թը-

ազգան Հայոց ջրերքհարիւր։ Ցէր Դաւիթ, ամն վեց. օա առ ձեռնադրութիւն Յովհաննիայէ Հայոց կաթուղիկոսէ. տէր Պետրոս, ամն վեշտասան, յառաջնորդութենէն Թաւիսոսայ վանաց. ապա տէր Մարկոս այրն Աստուծոյ, և յետ նորա Յուսէփ. և ապա միւս տէր Մարկոս. և ղկնի նորա Ստեփաննոս. ապա տէր Յովհաննէս. և ապա տէր Ստեփաննոս, ամ մի և կէս, ի տիս պատանեկութեան վաղճանեալ։

Յամին հինգհարիւր ուԹսուն և ուԹ Թուխս, յաւուրս տեառն Գրիգորիսի մեծի Հայոց կաթուղիկոսի [1], առաջնորդ ոչ գոյր տանն Աղուանից զամ քսանևհինգ. ապա մանուկ մի էր յազգէ կաթուղիկոսացն Դադիկ անուն, որդի Դէորգայ, Թոռն Կարապետի, զոր սնուցին և ուսուցին. և իբրև ի չափ հասաւ մանուկն, ապա գրեն Թուղթ մաղԹանաց Գրիգոր վարդապետն որդի Մովսէսի, և Դաւիթ որդի Ներսէհայ, և այլ աշխարհն Ողէյ [2] և Աղուանից, առ մեծ Հայրապետան Հայոց Գրիգորիս, որ ընդ այն ժամանակս էր նա ի կողմանս արևմտից. այր մի ընդ ԹղԹոյն առաքեցին, զի ձեռնադրեսցէ զնա եպիսկոպոս, և առաքեսցէ և ինքն եպիսկոպոս զմի յիւրոցն, և տացէ ձեռնադրել զմանուկն Դադիկ յաԹոռն Աղուանից. զի մի կորիցէ առաջնորդ յաշխարհին։ Նակ սուրբ Հայրապետն ձեռնադրեաց զառաքեալն, հրամանն ետ և եպիսկոպոսին Կարնայ՝ գնալ յաշխարհն Աղուանից, ձեռնադրել նոցա կաթուղիկոս։ Ապա եկեալ եպիսկոպոսին Կարնայ՝ Սահակայ, և միւսն և, ձեռնադրեն այլ և և եպիսկոպոս երկոտասան, ըստ օրինի հրամանաց գրոյ, և ապա ձեռնադրեցին զԴադիկ կաթուղիկոս, և անուանեցին Գրիգորէս, ըստ անուան կաթուղիկոսին Հայոց։

Ընդ աւուրսն այնոսիկ եղև յանկարծակի մէգ և մառախուղ, և լցաւ առ հասարակ լեառն և դաշտ, և եղև շարժ ահագին, և կործանեցաւ մայրաքաղաքն Դանձակ. և շնորհօքն Աստուծոյ ապրեալ եղև նորընծայ կաթուղիկոսն. բայց մեռաւ ի շարժմանէն մեծ վարդապետն Գրիգոր, հանդերձ այլ բազմութեամբ արանց

1 Գրիգորիս Փոքր Վկայասէրն, եղբայր Ն. Շնորհալւոյ։

2 ՕՕ. Ալֆոյ։

և կանանց և մանկտւոյն, որոց ոչ գոյ թիւ, զոր սպա-
նին չինուածքն՝ անկեալ ի վերայ։ Եւ եկն Թագաւորն
Վրաց Դաւիթ և աւար էառ զամենայն ինչան, և
տարաւ զղրունս քաղաքին յիւր յաշխարհն. փլաւ և
լեառն Ախարակ, և կապեաց զՁորակ՝ որ անցանէր ընդ
մէջ նորա, և եղև ծով՝ որ է մինչև ցայսօր ժամանակի։
Եւ յետ ութ ամի երևեցաւ աստղ մի գիսաւոր ի լու-
սաւորութեամբ, որ նշանակ էր սովոյ և սրոյ և գերու-
թեան, որ կալաւ զաշխարհս։ Եւ յորժամ եղև այր
կատարեալ կաթուղիկոսն Դաւիթ, ի իմաստութեք աս-
տուածայնովք, փոխեցաւ յաշխարհէս, և դարձեալ
խաւար եղև կողմանցն այնոցիկ։ Եւ ապա տէր Նեժ-
գէն, որ եթող զկարգն և էառ կին. և յետ նորա
տէր Աստեփանոս, ամս քառասուն. և զկնի նորա տէր
Յովհաննէս, ամս քառասուն, որ շինեաց եկեղեցի մի
հրաշալի ի գաւառն Աիափոր, ի վանքն՝ որ կոչի Ատամ
շի. սա որ եհաս յաւուրս մեր։ Եւ ապա տէր Գերսէս
եղբայր նորին, այր հեզ և բարի բնութեամբ, որ ձեռ-
նադրեալ եղև ի վեց հարիւր ութսուն և չորս թուին
Հայոց։

ԹՒ

ՎԱՍՆ ԵԼԱՆԵԼՈՑ ԹԱԹԱՐ ԱԶԳԻՆ ՋՕՐՈՒՆ, ԵՒ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԱՌՆԵԼՈՑ ՁԹԱԳԱՒՈՐՆ ՎՐԱՑ

Ի վեց հարիւր վաթսուն և ինն թուին՝ մինչդեռ
հպարտացեալ էին Աիրք յաղթութեամբն զոր յաղթե-
ցին Տաճկաց, յինքեանս կորզելով բազում գաւառս
Հայոց ի նոցանէ, յանկարծակի յեղակարծումն ժա-
մու յոլով գունդք զօրու ծանուն՝ ամենայն կազմութեամբ
եկեալ ընդ դուռն Դարբանդայ և եկեալ յաշխարհն
Աղուանից, գալ անցանել յաշխարհս Հայոց և Աիրաց,
և զոր ինչ գտանէր ի Ճանապարհին՝ զամենեսեան սրոյ
Ճարակ տային, զմարդ և զանասուն՝ մինչև ի շունս ան-
գամ. և մեծապին հանդերձից և ընչից փոյթ ոչ առ-
նէին, բայց ի ձիոյ։ Եւ փոյթ ընդ փոյթ չոգան մինչև
ի քաղաքն Տփխիս, և դարձեալ եկին յաշխարհս Աղ-
ուանից ի սահմանս Շամքոր քաղաքի. և համբաւ

ստուԹեան գայր ընծայանէ, Թէ մոգք են և քրիստո-
նեայ հաւատով և նշանագործ, և եկեալ են ՚ի վըկայ-
խընդրուԹիւն քրիստոնէից՝ որ ՚ի բռնուԹենէն Տաճ-
կաց. և ասէին Թէ ունին եկեղեցի վրանեայ և խաչ
սքանչելագործ, և բերեալ կապիճ մի գարի՝ արկանեն
առաջի խաչին, և ամենայն գօրքն առեալ տանին տան
երիվարաց իւրեանց, և ոչ պակասի. այլ իբրև եկին
ամենեքեան և սպառեն ՚ի տանելոյ՝ նոյն չափ կապճին
անդէն ծնայ, նոյնպէս և գինեբակուրս մարդկան. և այս-
պիսի համբաւ ստուԹեան լցաւ յաշխարհս։ Ի ժամ այ-
նորիկ ոչ ամրացան քնակիչք աշխարհին, մինչև երէց
մի աշխարհական առեալ զԺողովուրդ իւր, և խաչիւք
վառելովք ընԹացաւ առաջի նոցա. և նոցա սուր ՚ի վե-
րայ եդեալ կոտորեցին զնոսա առ հասարակ. և այսպէս
յանհոգս տեսեալ զբազումս՝ կոտորեցին, և աւերեցին
զյոլով տեղիս. և ինքեանք ամրացուցին զիսխս իւրեանց
(՚ի մօր և ՚ի տղմուտ տեղիս) որ կայ ՚ի մէջ երկուց քա-
ղաքացն՝ Պարտաւայ և Գեղակունեաց[2], յամայագոյն[3]
տեղիս, զոր Գեղամէջն կոչեն. և ինքեանք յանդուգն
յարձակմամբ աւերէին զբազումս գաւառս։ Այսպա դար-
ձեալ զօրաժողով լեալ Թագաւորն Ի Տայ Աշայն, և
մեծ հալածանաւքեան Գանէ, եկաց ընդդէմ նոցա մար-
տիս պատերազմի. և իջեալ ՚ի դաշտավայր տեղիս՝ զոր
Յոնանն[4] անուանեն, քանզի անդ պատահէր Թշնա-
մեաց, և մարտուցեալք ընդ միմեանս՝ զառաջինն ՚ի
փախուստ դարձուցին զԹշնամին. բայց քանզի դարան
դրծեալ էր Թշնամեաց՝ յարեան յետուստ կողմանէ
և սկսան կոտորել զզօրն Ի Տայ. դարձան ընդդէմ և
փախուցեալքն, աստի և անտի ՚ի մէջ առեալ մեծ հա-
րուածս հասուցին ՚ի վերայ զօրուն քրիստոնէից. և փա-
խեաւ Թագաւորն և իշխանքն ամենայն. և Ժողովեալ
Թշնամեացն զաւար զօրուն՝ տարան ՚ի բանակս իւ-
րեանց։ Գարձեալ միւսանգամ զօր Ժողովեալ Թա-
գաւորին Ի Տայ և գայ զաւար քան զառաջինն, կամե-

1 Ա. յսպէս ՕՕ։

2 Պայլիգան ըստ արևելեայց ՚ի դաշտին մեծի Ուռէացւոց՝ ուր Կուր և Երասխ խառնին յիրար. զքաղաքն համանուն աւերեցին ԹաՀմազը յոյս արշաւանս։

3 ՕՕ. յամափոյն։

4 Ի հարաւակողմն Տփղեայ. ՚ի սահմանակցութեան Վրաց, Ա. ղուանից և Հայոց։

ցեալ տալ պատերազմ ընդ Թշնամին. իսկ նոցա առեալ զկին և զորդիս և զամենայն ան՝ կամեցան անցուցանել ընդ գուռն Դարբանդայ յաշխարհն Իբերանց. իսկ զօրն Տաճկաց որ ի Դարբանդ՝ ոչ ետուն նոցա մուտ անցից. և նոցա հատեալ զլեառն Կովկաս ընդ անանց՝ ի վիհսն ընկղմ զփայտ և զքար նաև զանք Իբերանց և զերիվարս և զկազմած պատերազմական, անցին գնացին յաշխարհն Իբերանց։ Այր անուն գլխաւորին Աբջատա Բահատուր[1]։

Ժ

ՊԱՏՈՒ ՈՐ Ի ՍԱՀՄԱՆՍ ԳԱՆՁԱԿԱՑ ԱՆԿՈՒՄՆ ԵՂԵՒ ՋՕՐԱՑՆ

Զկնի այսորիկ իբրև ժամանակք լինչ անցին ի վերայ, այլ զօր եւ ի Հոնաց, զոր Խուչանն[2] անուանէին, և եկեալ ընդ աշխարհն Կ՚երաց առ Թագաւորն Կաշա, և առ Հազարապետն Լուանէ, զի տացէ նոցա տեղի բնակուելոյ, և նոքա ծառայեսցեն նմա միամտութեամբ. իսկ նոքա ոչ առին յանձն լինել նոցա ասպնջական. և նոքա դէմ եղեալ գնացին առ բնակիչսն քաղաքին, և նոքա յօժարութեամբ ընկալան. քանզի էին ի մեծ նեղութեան ի զօրացն Կ՚երաց, որք աւերէին զաշխարհս նոցա, և գերէին զմարդ և զանասուն, եւտուն նոցա տեղի բնակութեան ի սահմանս քաղաքին, և օգնէին նոցա կերակրովք և ըմպելեօք. զի նոքօք կայցեն ընդդէմ Թագաւորութեանն Կ՚երաց։ Իսկ զօրքն Հոնաց դադարեալ անդ և զետեղեալ, զօրաժողով եղեալ ասպա Լուանէ և գիմեաց Հպարտութեամբ ի վերայ նոցա, մեծամեծս փքայր բնաջինջ առնել զնոսա և զքաղաքն. ի բազմութիւն զօրացն յուսացեալ և ոչ Յաստուած, որ տայ պչրաղթութիւնն ում և կամի։ Եւ իբրև հարան ընդ միմեանս՝ ելին խուժքն հանգատեամբ յորջից իբերանց, և զվաստակեալ և զլքեալ զօրսն[3] Կ՚երաց ի բե-

1 Ա. Գ. Սոբա Սոբահապետ։ Ըստ պատմութեան Թաղթարայ երկու զօրավարք էին առաջնորդք, Սուպուդաի և Չեպէ։

2 Ղփչախք կամ Քափչաք տոհմակից են Թուրքաց, և ոչ բնիկ Հոնք. և կալեալ էին զերկիր Խազրաց։ — Տես և Վ. 142։

3 Օօ. զբան։

րան սրոյ արկեալ, և զբազումս ձերբակալ արարեալ և
զմնացորդսն փախուցեալ. և մեծ բեկումն եղև յաւուրն
յայնմիկ զօրուն քրիստոնէից. և այնքան Թողան՝ի ձե-
ռանէ Աստուծոյ՝ մինչ զի մի վատ այր զբազում քաջաց
արս և անուանիս եղեալ՝ի պատերազմունս՝ իբրև հո-
վիւ զհօտս առաջի անցուցեալ էին՝ բերէին[1]. զի ե-
բարձ տէր զօգնութիւն՝ի սրոյ նոցա, և ոչ ընկալաւ
զնոսա՝ի պատերազմի. բերէին զարս պատուականս և
վաճառէին ընդ դոյզն հանդերձից և կամ ընդ կերա-
կրոց. և Պարսիցն գնեալ զնոսա՝ յանհնարին նեղու-
թիւնս կեղէին զկեանս նոցա. և այնքան պահանջէին
՝ի նոցանէ կշիռս ոսկւոյ և արծաթոյ՝ մինչև անհնարին
լինել հատուցանել. և բազումք մեռան՝ի բանտի անդ:
Ընդ ըմբռնեցաւ ընդ այլսն և Գրիգոր որդի Խաղբա-
կայ[2], եղբայր քաջին Վասակայ, և Պապաք նորուն
եղբօրորդի. զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաքն,
Արդամ և Խասան, արք քաջք և անուանիք, որ յահէ
նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց. զՊապաքն սպա-
նին՝ի պատերազմի, իսկ զԳրիգոր ձերբակալ արա-
րեալ՝ նեղեցին բազում խոշտանգանօք, զի ուրասցի զՔ-
րիստոս, և նա ոչ առ յանձն. այլ առաւել անար-
գեր ..... զ'օրէնսդիրն նոցա .... և ..... զ'օրէնս
նոցա. և նոցա բարկացեալ քարշեցին զնա մերկ՝ի վե-
րայ երկրի, և փշով քանցեցին զամենայն մարմինս նո-
ցա. և այնքան տանջեցին զնա՝ մինչև՝ի դանեղն նոցա
աւանդեաց զհոգին, և ընկալաւ՝ի Քրիստոսէ զվկայա-
կան պսակն: Այլք դաւառօք Խաչենեցիք էին՝ յերևե-
լի ազգէ, հաւատով քրիստոնեայք ուղղափառք և ազ-
գաւ Հայք. և զայլ բազումս՝ի գերելոցն՝ անօրէն Պար-
սիկք զանազան տանջանօք նեղէին, քաղցիւ, ծարաւով
և մերկութեամբ: Իսկ քրիստոնեայքն՝ որ էին՝ի քա-
ղաքին Վանձակայ՝ բազում բարեգործութիւնս ցու-
ցին առ գերեալսն. զոմանս գնելով և աղատելով, և
զկեսս կերակրելով, և կիսոցն հանդերձս զգեցուցանե-
լով, և զվախճանեալսն Թաղելով. և այսպէս յամե-
նայն կողմանց բարերարութիւնս ցուցանելով: Այլ
յետ աւուրց ինչ անցանելոյ՝ դարձեալ զօր ժողովեաց

1 Այսպէս ՕՕ: 2 Խաչենոյ իշխան: Տես վ. 143:

մեծ հաղարապետն Իւանէ, երթալ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք կոտորեցին զզօրս նորա. և դիմեալ ՚ի վերայ նոցա յեղակարծ ժամու՝ հար սատակեաց զնոսա. ժադուժան ՚ի թերանոյ սրոյ, և զաւար նոցա և զմանկունս գերի վարեալ ած յաշխարհն իւր։

ԺԱ.

ՎԱՍՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՑ՝ ԹԷ ՈՒՍՏԻ՛ ԷՐ, ԵՒ ԿԱՄ ՈՐՊԻՍԻ ՈՉ ԷՐ

Հռչակաւոյն այն և մեծիմաստն գիտութեամբ՝ էր ՚ի քաղաքէն Իանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք ետուն զնա յուսումն գրոց սրբոց. և իբրև եհաս նա յարբունս հասակին՝ ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրօն. և պաշտեալ զքահանայութիւնն յոլով ամս՝ ցանկացաւ նա համառօտ լինել գրոց սրբոց և առակայ խոսնոյ՝ որ կան ՚ի նոսա. և հանդիպեցաւ նա Յովհաննիսի վարդապետի Ցաւուշեցւոյ անուանեալ, որ ՚ի ժամանակին յայնմիկ երևելի էր գիտութեամբ. զառաջինն յաշխարհականաց կեանս կացեալ սակաւ ինչ, և մնացեալ յամուսնոյն, կրօնաւորութեան հետևեալ և հասու եղեալ աստուածայնոց գրոց պարապեալ. և[1] էր վարդապետն Յովհաննէս շրջագայ տեղւոջէ ՚ի տեղի շրջելով, քարոզելով զբանն Աստուծոյ և ուսուցանելով զբարի վարս մարդկան։ Ա՚ա բազում իրս կարգաւորեաց կարգաց և կրօնից քրիստոնէից. զի դեռ յայն ժամանակն ՚ի տեղիս տեղիս լուծանէին զշաբաթ և զկիրակէն սուրբ քառասնորդաց աղուհացին. սա եդ օրէնս պահօք վճարել, որպէս զայլ աւուրս շաբաթուն. բայց միայն զի տօնեսցեն ՚ի շաբաթուն՝ վկայիցն Աստուծոյ, և ՚ի կիրակէն՝ խորհուրդ յարութեանն Քրիստոսի, և մատուսցեն պատարագ. և այսպէս հաստատութիւն կալաւ յամենայն տեղիս, զի ինքներեակ՝ պահօք վճարել, որ յառաջն կէսք պահօք վճարէին և կէսք ոչ։ Ա՚ա ցեալ առ սմա Ա՚խիթարայ, և առ այլս ոմանս[2] էառ սա զանուն վարդապետական. և այնու ոչ շատացաւ,

1 ՕՕ. և զի էր։

2 ՕՕ. և այլ ոմանս։

այլ չոգաւ յարևմուտս կոյս յաշխարհն՝ որ կոչի Աեաւ
լեառն[1] առ վարդապետսն՝ որք էին ուսուցիչք անդ. և
զայն ինչ՝ ի վեր ոչ հանեաւ, թէ ելեալ նորա առեալ
զայն պատիւ, այլ բազում ինչ օգտեալ՝ ի նոցանէ՝ եկն
նա՝ ի Կարնոյ քաղաք. և անդ գտանէ նա զբարեպաշտ
իշխանն մեծ՝ զանուանեալն Վռուրդ և հաւատոյմն քրիս-
տոնեայ, որ ընդ այն ժամանակս անդ լինէր, սարտու-
ցեալ՝ ի թագաւորէն Պրսից. և եղեալ նորա ծանօթ՝
սիրեցաւ՝ ի նմանէ իբրև զհայր: Եւ յետ այսորիկ
դարձաւ նա յաշխարհն իւր. և ել համբաւ իմաստու-
թեան նորա յաշխարհս, և բազումք աշակերտէին նմա
յուսումն վարդապետութեան, և ապա նեղեալ նա՝ ի
Տաճկաց՝ ի սպրդելոյ կաթուղիկոսին Վրաց Աոե-
փանոսի, և եկեալ նա յաշխարհն Խաչենոյ առ Աթա-
բանակ իշխանն Խաղբերդոյ[2] և առ եղբարս նորա, որք
բազում պատուով պատուեցին զնա, և անդ դադա-
րեալ ամս ինչ. ապա դարձեալ իշխանին Վռուրդ՝ ի հայ-
րենիս իւր, գալ յաշխարհն Կայենոյ և Ոտահկանա-
բերդոյ, և բազում մեծարանս եդ. նմա Թագուհին
Պրոց՝ որ Խաւարն կոչէր, դարձուցանելով զնա՝ ի հայ-
րենի տեղին, և յայլս յորմէ. սա է հայր Աղուանից:
Իսկ իբրև լուաւ վարդապետն Սիւնեաց թէ դարձաւ
Վռուրդն[3] ՝ի հայրենիսն իւր, եկն նա առ նա վասն ա-
ռաջին սիրոյ և միաբանութեանն որ առ միմեանս, և
բնակեցաւ նա՝ ի վանքն որ կոչի Վահիկ, ՝ի գաւառին
Կայենոյ, որ՝ ի վերայ գետոյն մեծագունի զոր անուա-
նեն Ողստեայ գետ, յորմէ կողմանէ գետոյն. և էր ա-
ռաջնորդ վանիցն վարդապետն՝ որ Սարկաւագ անուա-
նիւր՝ աշակերտ նորին. որ բազում ուրախութեամբ
ընկալաւ զնա և ինքն սպասաւորէր նմա, և անդ դադա-
րեալ յորմէ ժամանակս: Ապա եղև շարժ սաստիկ՝ որ
զբազում՝ տեղիս կործանեաց և տապալեաց զբարձրա-
բերձ շինուածս. ընդ որս և խախտեցաւ եկեղեցին Վահ-
կայ սաստիկ յոյժ, մինչ զի ոչ լինել հնար վերստին նո-
րոգելոյ: Ապա երկմտեալ բնակչացն կամէին ցրուիլ
այսր և անդր, ոչ միայն վասն խախտելոյ եկեղեցւոյն՝

1 Ի Կիւլիկիա:
2 Վ. 140:
3 ՈՐ. վրդապետն:

այլ և զի նեղեալ էին ի մերձակայիցն. քանզի ոմն յիշխանացն Սարգիս անուն՝ փոխեաց զգիւղն իւր ի տեղւոջէն իւրմէ, և բերեալ շինեաց մերձ ի վանս այլ գեղ, և այնուհետև բազում գժտութեամբ կային ընդ միմեանս, քանզի պարսաւադէտք էին հանապազօր։ Իսկ վարդապետն սուրբ արգել զնոսա անդ ի խորհըրդոյն յայնմանէ՝ ոչ թողուլ զմիմեանս և ցրուիլ, այլ ի միասին կեալ և խնդրել իւրեանց բնակութիւն։ Ապա չոգան միաբան առ մեծ իշխանն Իւանէ եղբայր զօրավարին Սմբատայ Օրբէլեան, որդիք քեռ բարեպաշտի իշխանին Վիրդին, որ ընդ այն ժամանակս իշխէր բերդին Սայենայ և գաւառին, և ցուցին նմա զխնդիրս զի տացէ նոցա տեղի ուր զվանքն իւրեանց փոխեսցեն. և նա հրամայեաց տեսանել, թէ ո՞ր տեղի պատշաճ իցէ. և նոցա շրջեալ գտին տեղի վայելուչ և գոգաձև առ ստորոտս երկուց լերանց՝ որ կայ ի գլխոյ նորա, զոր անուանեն զտեղին Ցանձուկաձոր[1]. և էր ի նմա գիւղ, և ձորակ մի փոքրագոյն անցանէր ընդ մէջ նորա, և միւս ևս յորդագոյն յաջմէ կողմանէ, տեղի փայտաւէտ և ջրաւէտ. անդր համարեցան թէ պատշաճ իցէ զետեղել։

ԺԲ

ՎԱՍՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՎԱՆՔԱՑ ՆՈՐՆ ԳԵՏԿԱՑ

Սկսաւ այնուհետև վարդապետն սքանչելի հանդերձ միաբանօք իւրովք ձեռն ի գործ արկանել շինուԹեան վանից և եկեղեցւոյ՝ ի վերատացեալ ձորն Ցանձուտայ, հրամանաւ մեծ իշխանին Իւանէի. և շինեցին եկեղեցի մի գեղեցկաշէն փայտակերտ, և օծեալ կնքեցաւ յանուն սուրբ Առաւորչին Գրիգորի։ Իսկ ի տօնախմբուԹեան սուրբ եկեղեցւոյն և սուրբ վարդապետն Յակաստուր Ցարօնացի, առաջնորդ սուրբ ուխտին՝ որ կոչի Նաղարծին, այր սուրբ և առաքինի և գիտուԹեամբ հռչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստիւ։ Սա պայծառացոյց զսուրբ ուխտն՝ յորում առաջնորդ էր ինքն, որ յառաջ քան զգալ նորա սմայի

1 Ցանձուտայ—ձոր, որպէս և առորևդ ասէ։

էր և խամրացեալ։ Ո՛սա սպատուհէր մեծապէս Թագաւորն Ա՛ղբաց Կ՛որգի՛ Նայր Լ՛ամարին. և ետ եկեղեցոյն Ձենանագրաւ իւրով զերկու գիւղսն՝ զԿ՛բասաձոր[1] և զՋանձուտն, և այգի մի՛ ի Մ՛իջնաշէնին. և եդ նըզովս ամենայն սրբովք՝ զի մի ոք իշխեսցէ հանել զնոսա ՛ի վանացն։ Ա՛ա եբեր զխաչն[2] ՛ի կողմանս արևելից[3], զանմարմին եղանակս՛ի մարմին ածել, զարարեալսն ի-մաստնոց առաջնոց, որ ցայն ժամանակս չէր ցրուեալ ընդ աշխարհս. սա եկեալ գրեաց և ուսոյց բազմաց. և ինքն անդ հանգեաւ ՛ի Կ՛րիստոս, և կայ Թաղեալ յարևմտից կուսէ եկեղեցւոյն։ Ո՛ր ինեցին ՛ի նորն Կ՛ետիկ՝ փոքրագոյն եկեղեցի մի յանուն սուրբ կարապետին Յովհաննու, ՛ի ծնունդս կանանց մեծի և Կ՛րիստոսի ձեռնադրողի, ՛ի գլուխ վանիցն. և ապա սկսան հիմն արկանել մեծափառ եկեղեցւոյն կոփածոյ վիմօք և գեղեցկաշէն արուեստիւ գմբեթայարդ երկնանման, սխրալի տեսողաց, սկսեալ ՛ի վեց հարիւր քառասուն Թուին Նայոց, զկնի չորից ամաց առնլոյ զԱ՛րուսաղէմ Ա՛լահադնին, և կատարի յամն հինգ ՛ի խանգար զատկին Յունաց։ Ա՛ան այսր զատկի բազում հակառակութիւն և վէճ էր ամենայն ազգաց ընդ Նայոց[4], և առաւել Ա՛ղբաց ազգին. զի լըբեալ ասէին զԹիւրն ուղիղ. զոր եղծ և ապականեաց Լ՛րոն անիծեալ, որ ՛ի դրան ամբարշտին Յուստիանոսի. որ վասն ոչ կոչելոյ զնա ՛ի ժողովն որ եղև Ա՛ղեքսանդրիա, վասն լըմանոյ զատկաց և այլ տօնից. յետ վՀարելոյ Երկերիւրեկին Ա՛նդրէասայ, զինն ամ խանգար եկաց[5] տօնքն ամենայն. զի ոչ կարացին վարել ուղղապէս զարուեստն նոքա՝ յետ վՀարելոյն։ Ա՛պա Իմաստասէր ումն Լ՛աս անուն՝ ձայն արկեալ առ ինքն կոչել զիմաստունս ամենայն ազգաց. զՊենեհէզ Հրեայ, զՎիգան Ա՛ղուոյ, զԱ՛զգե ՛ի Կ՛ամրաց, զԱ՛ղբս ՛ի Յունաց, և զայլս յոլով. և սկսեալ ՛ի ներքուստ ՛ի վեր Թուել զամն, և գտեալ ՀաստատուԹեամբ՝ կարգեցին զհինգ հա-

1 Ի կայքն գաւառի, ՛ի հիւսիսոյ արևելից Ծովուն Սևանայ։
2 Ջնշանս եղանակաց երգոց։
3 Բ. ՛ի խոմանդն յարևելից։
4 Զոր ՛ի զուր Ջատագովք հնդնակք նովին հակառակութեամբ կամ կանխակալ տգիտութեամբ և գիւրահաւանութեամբ։
5 Ա. Գ. խանգարեաց։

բիւրեակ զօրուն՝ անտարակուսելի օրինակ յաւիտեան. զոր տարեալ առ Յուստինոս կայսրն, նա հրամայեալ Իրոնի, և նա նախանձաբեկ եղեալ վասն արուեստին մեծանձնութեան և իւրն ոչ կոչելոյ [1], կամեցաւ եղծուն ինչ առնել իրացն. փոխեաց զապրիլն եօթնեւտասան՝ ի վեշտասան և զվեցն՝ ի հինգ. բաղայս եդեալ [2] թէ այլն ամենայն ձիմարիտ է բայց յայնմանէ. այն վեշտասան ոչ ինչ սխալէ, իսկ այն հինգն յինսունն և հինգ [3] ամի հանապազ սխալէ զնոսա, ընդ Իրէայս առնելով զզատիկն, ի ներքոյ լրմանն. քանզի շաբաթ ածէ նոցա հինգն, իսկ վեցն՝ մեզ կիրակէ, որպէս դիպեցաւ և աստ։ Եւ վասն այսպիսի վիճման Հայոց և Յոյց՝ առաքէ Թադուհին Ղամար և սպարապետն Օ աքսրիա զմի ոմն՝ ի մեծ իշխանացն Յոյց, նոյնպէս և՝ ի Հայոց՝ Հռուսաղէմ, յառաջ քան զզատիկն, տեսանել զձիմարիտն. և այսոցիկ դատաւճիռ՝ լուցումն կանթեղին որ՝ ի տուրբ գերեզմանին Քրիստոսի. զոր ասեն խնդրուածովք սրբոյն Գրիգորի լուսաւորչին, առանց ձեռաց մարդոյ և զգալի հրոյ՝ լուցանիլ հրամանաւն Աստուծոյ յամենայն զատիկ. որ լինի մինչև ցայսօր ժամանակի։ Բայց զվերակացուն քաղաքին Տաճկաց ունէին, հարցին ցքրիստոնեայս, թէ Ո՞րը իցէ զատիկն ձեր. պատասխանեցին որք՝ ի Յունաց և այլոց ազգաց՝ թէ Հայսմ կիրակէ. իսկ ազգն Հայոց ասեն, Մէ յայսմ այլ միւս կիրակէն։ Իսկ վերակացու Տաճկին այր ի մաստուն էր, հրամայեաց շինուցանել զամենայն կանթեղս որ էին՝ ի տաճարի անդ և փակել զդուրսն, և կնքեաց մատանեաւ իւրով. և ումեք հրամայեաց մտանել՝ ի ներքս և տեսանել թէ ո՞ր ազգն իցէ ձիմարիտ. և իբրև անց օրն այն և եղև երեկոյ, և սպասէին լուցման կանթեղին, և իբրև ոչ լուցաւ՝ հրամայեաց իշխանն անարգանօք հանել զամենեսեան, և գանիւ մեծաւ իբրև զտգէտս և զսուտս, բայց՝ ի Հայոց։ Եւ իբրև անց շաբաթն և եկն միւս կիրակէն՝ զոր ասէին Հայք զատիկ, մինչդեռ՝ ի պաշտաման և յաղօթս էին՝ ի տանեւրորդ ժամու՝ ազդումն եղև ամենեցուն և

1 ՕՕ· ՚ելոյ։
2 ՕՕ· ՚ոխեալ։
3 ՕՕ· ՚ե։

վաղվաղակի լուցաւ կանթեղն առանց ձեռաց, և եղև ուրախութիւն մեծ ի սոյց, և գան Հարկն[1] այլոց աղգաց, և գովէին զաղգս ի սոյց և զՀաւատս նոցա. և առաւել աղգն Տաճկաց, և անարգէին ձաղէին զՅոյնս յամենայն քաղաքս որ ընդ իշխանութեամբ Տաճկաց։ Տեսին զայն և ուրքն առաքեալք ի Թագաւորէն Ա ըստ և ի զօրավարէն, և եկեալ պատմեցին զոր տեսինն, և խնդաց մեծ զօրավարն Օ աքսարէ, և ամենայն ի սոյ-ևարն՝ որ էին ի զօրուն. և առաւել ևս Հաստատէին յուղիղ Հաւատս ի սոյց։

Յայսմ ամի եղև աւարտ Հռչակաւոր և խնդատես եկեղեցւոյն Վետակայ, զոր շինեաց վարդապետն՝ իւր միաբանօք, ձեռնտուութեամբ Ա ախթանկայ Իսրչենե-ցւոյ՝ տեառն ի ալէքերքոյ, և եղբարց իւրոց՝ Վրիդորոյ և Վրիդորխի և Իսդանայ և Ա ասակայ, և այլոց իշխանաց բարեպաշտաց, որոց Վրդին՝ Վաւթի և Ա ադունին. նա և քոյր սոցա՝ որում անուն էր Ա.ըղու-խաթուն՝ կին Ա աղթանկայ ի ալէքերքոյ. սա բազում ինչ յօժանդակ եղև, արար և վարագոյր գեղեցիկ՝ դատերովք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մաղոյ այծինն կակղագունից, ներկեալ պեսպէս և զանազան գործ գնդակերպ[2], և նկարեալ պատկերօք Ա ղբտագոյն հանուածովք տնօրինականօք Վրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն, և որք տեսանէին՝ օրհնութիւն տային Ա.ստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ոստայնանկութեան և հանճար նկարակերտութեան, որպէս առ Յոբն ասացաւ. ոչ ինչ ընդհատ էր ի կազմուածոյ խորանին՝ զոր արարին Ա.ետեսելով և Ա.ղիսաբ, թէ ոչ յանդգնութիւն է ասել՝ թէ նոյն ի ոգւոյն և զսոսա։ Ա.ւ ոչ միայն այս եկեղեցւոյս արար ծածկոյթ, այլ և այլոց եկեղեցեաց, ի աղբատայ՝ և Ա՝ակարայ վանից, և Վադի վանից. քանզի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ տիկինն. և արարին նաւակատիս եկեղեցւոյն մեծապէս խմբիւք. անդ էր և եպիսկոպոսն ի աղբատայ Յովհաննէս, առաքինի և սուրբ այր, և այլ բազմութիւն քահանայից և պաշտօ-

1 Ա. Գ. յաւելուն զՅոյնս։ 2 ՕՕ. գանգալէրպ. Թերևս և գանգալիէրպ։

նէից. և օծեալ կինքեցաւ եկեղեցին յանուն սրբոյ Աս-
տուածածնին։ Շ կինեցաւ և գաւիթն եկեղեցւոյն գե-
ղեցկազարդ և կոփածոյ վիմօք, և յոլովք ձեռնտու ե-
ղեն, մեծ զօրավարն Օ աքարէ և եղբայր իւր Ասանէ.
քանզի նոքա ունէին զիշխանութիւն գաւառին, և յոյժ
սիրէին զվարդապետն. քանզի Օ աքարէ խոստովանու-
թեամբ նորա հոգևոր որդի էր. և ընծայեցին եկեղե-
ցւոյն սահմանն ջրապարձիւք՝ լեռնէ ի լեառն. և բուվ մի
Ա. բաստաձոր, և զՇ որաձորն[1] ի նահանգին Աղնոյ,
և զՕշավա ի գլուխ վանացն. և շինեցին ինքեանք
գիւղ մի մերձ ի ծովակին փոքրագոյն՝ անհնարին խո-
րութեամբ, և անուանեցին զգիւղն յանուն ծովակին՝
Տղրկածով, քանզի բազում մօրաքեր և տղմաքեր սո-
ղունք կային. և այլ միւս ևս փոքրագոյն գիւղ ի ներ-
քոյ վանէին՝ զոր Աւրելանէջ[2] անուանեցին. շինեցին և
այլ մատրունս յանուն սրբոց առաքելոց և սրբոյն Գրի-
գորիսի։ Եւ ինքն քանզի սիրէր զանապատ և զամայու-
թիւն[3], արար իւր տուն բնակութեան բացագոյն ի վա-
նացն. շինեաց և անդ փոքրագոյն եկեղեցի մի փայտա-
կերտ յանուն սուրբ Գրիգորի. և ի ժամանակի ծե-
րութեանն՝ ի գլուխ վանէից յաջմէ կողմանէ շինեաց
եկեղեցի մի՝ շիրիմ գերեզմանի իւրոյ, կրով և վիմօք
մածուցեալ սրբագործ, յանուն Գամբարձմանն Քրիս-
տոսի։

ԺԳ

ԹԷ ՈՑՔ ԷԻՆ ՈՐՔ ԵՐԵԻԵԼԻՔ ԷԻՆ ՑԱՇԱԿԵՐՏՍ ՆՈՐԱ

Բազումք էին ոլք աշակերտեցան ի նմանէ վարդա-
պետական բանին. քանզի Համբաւ իմաստութեան նո-
րա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս, և գային առ նա
յամենայն կողմանց. քանզի ըստ անուան իւրոյ մխի-
թարէր զամենեսեան. քանզի էր նա մխիթարական
որպէս Հառնաբաս, և նշանաւոր ի մէջ ժողովրդեան՝
որպէս Պետրոս. և բանք նորա արդիւնականք և լի շնոր-

1 ՕՕ. Ղուքոյ. տպագիրն Զք-
բոյ։

2 Ա. Գ. Ուրելանէջ գրեն. տպա-
գիրն Ոսելանէջ։
3 ՕՕ. զանապատութիւն։

հօք, և ամենայն ոք փափագէր տեսանել զնա և լսել
'ի նմանէ։ Ալ ասն այսպիսի համբաւոյ բազումք որ էին
'ի կարգի վարդապետաց[1] ծածկէին զինքեանս, և գայ-
էին 'ի կարգի աշակերտաց կալով՝ ուսանէին 'ի նմանէ,
և առնուին վերստին հրամանս. և բազումք յաշակեր-
տաց նորա հասին 'ի պատիւ վարդապետական։ Այլ
երկուք ումանք 'ի նոցանէ որք իմաստնագոյնք էին քան
զայլսն՝ որք կարօղ էին և զայլս օգտեցուցանել, առաջ-
նոյն Ցօրոս անուն՝ 'ի սահմանացն Ալեփինոյ Հայոց,
հայր նորա հայկական, և մայրն ասորի, այր հեզ և
խոնարհ, առաքինի և աղքատասէր յոյժ, ասպնջական
օտարաց և առաստ 'ի տուրս, որ զժամանակս կենաց իւ-
րոց բարեգործեալ վարեալ և 'ի ծերութիւն պարարտու-
թեան յաւելեալ առ Տարսն իւր, և կայ Թաղեալ 'ի հըր-
ջականուն վանքն Հաղբատ, 'ի գլուխ վանացն, 'ի գե-
րեզմանս եպիսկոպոսացն և վարդապետացն, որոց յի-
շատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթք նորա պա-
րիսպ հաւատացելոց։ Եւ երկրորդին՝ Ալանական ա-
նուն, այր սուրբ և պարկեշտ և յամենայն գործս բա-
րիս յառաջադէմ, ողջախոհ և զգաստ յամենայնի, և
վարդապետական բանիւ քան զամենայն որ 'ի ժամա-
նակին էին՝ գերազանցեալ, ծննդական մտօք և յարմար
բանիւք. վասն որոյ բազումք զեգերէին առ նա ուսման
աղագաւ՝ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամե-
նայն կեանք նորա և շարժուածն՝ անգիր օրէնք էին տե-
սողացն. և զայս ոչ եթէ ականջալուր միայն ասեմ, այլ
և ականատես. զի բազում ժամանակս կացաք առ նմա
'ի վարժս կրթութեան, 'ի սահմանս Տաւուշ բերդոյ,
յանապատի անդ՝ զոր ստացաւ իւր բնակութիւն, և
աղերսագիրս արբուցանէր ամենեցուն զբան վարդա-
պետական։

1 ՕՕ· վրդ·պէս։

ԺԴ

ՎԱՍՆ ՎԱԽՃԱՆԻ ՄԵԾ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՑ՝ ՈՐ ԳՈՇՆ ԿՈՉԻ

Ա՛ա երանելիս զոր վերագոյն ասացաք՝ զընթացսն կատարեալ և զհաւատսն պահեալ, եհաս ՚ի խորին ծերութիւն. և իբրև ետես նա թէ տկարացաւ յամենայն զօրութենէ մարմնոյն, և հանդերձեալ է այնուհետև յաւելուլ առ հարս իւր, կոչեաց նա զընտակիչս ուխտին վանացն՝ Լոր Գետիկայ, որք ընդ նմա ժուժկալեալ էին յամենայն աշխատութիւնս վանից և եկեղեցւոյն. օրհնեաց զնոսա, և զաշակերտս իւրեանց՝ յանուն Տեառն. և զմի ոմն ՚ի նոցանէ ընտրեալ Աարտիրոս անուն, որ աշակերտեալ էր նմա և ընտանի էր նմա, կացոյց զնա առաջնորդ նոցա, մանուկ տիովք քայց կատարեալ իմաստութեամբ, այր քաղցրաճաշակ յերկս պաշտաման, և առատաձիտ յընթերցման, և արագ ՚ի գրչութիւն. նմա հրամայեաց իշխել նոցա. և գրեաց կտակ առ մեծ հազարապետն Լուանէ, եղբայր Գաքարէի, և յանձնեաց ՚ի նա զվանս և զառաջնորդն. և ինքն փոխեցաւ յաստեացս առ Քրիստոս՝ ալևորեալ և լի աւուրբք։

Եւ վերակացու վանացն Աարտիրոս՝ հանդերձ միաբանօք գեղեցկապէս յարմարեաց զպատշաճն Թաղման նորա, հոգեկան և մարմնական պիտոյիւք. և տարեալ հանգուցին զնա առաջի դրան եկեղեցւոյն փոքրագունի, որ կայ ՚ի գլուխ վանացն յարևմտից կողմանէ վանացն, և մինչև ցայսօր գերեզման նորա օգնէ ցաւագնեալոցն՝ որք հաւատով ապաւինին յաղօթս նորա. և զհող տեղւոյն հանապազ տանին ՚ի պէտս հիւանդաց մարդոյ և անասնոյ. զի Ըստուած զփառաւորիչս իւր փառաւորէ կենդանութեամբ և մահուամբ։

Գնէպ եղև երբեմն զի պաշտօնեայք նորա գային պրաստիւք բարձեալ գինի ՚ի պէտս վանացն. վրացի ոմն Բասիլիա անուն՝ եկեալ բռնութեամբ կամէր առնուլ ՚ի նոցանէ ՚ի գինւոյ անտի. զի գործակալ էր նա Լուանէի, ՚ի վերայ մայրոյն, որ պահէր զտեղի ինձևանի նորա. և պաշտօնեայքն ասէին մի՛ նեղէր զմեզ, քանզի Գոշին եմք. զի այսպէս կոչէին զնա մանկանուամբ,

զի հեղգագոյն եկիր առիք նորա։ Իսկ Թշուառականն հայհոյեաց զնաւսա և զԻոշն. և իբրև եկն յայն տեղի որ յիշէր զանուն նորա անարգանօք, անդէն վաղվաղակի համրացաւ և կապեցաւ լեզու նորա, և Թիւրեցան շրթունք նորա. և այնպէս եկաց բազում ամս, մինչև հառաչանօք խնդրեաց զԹողութիւն, և ամենայն որ տեսանէր զայրն՝ գովէին զՅաւայն Աստուծոյ։

Եւ եթող նա յարձան և յիշատակ գերեզմանի գիրս իմաստախոհս՝ յօգուտ իմաստասիրաց, համառօտ մարգարէութեանն Երեմիայի՝ գեղեցկագիր կարգօք, և սուղ ինչ կանոնս վասն սպասաւորելոց մարմնոյ և արեան Տեառն, Թէ ո՛րպէս պատշաճ իցէ, կամ որպիսի կարգօք. և գիրք մի Ողբ ի վերայ բնութեանս՝ ի գլմաց Դամայ առ որդիս նորա, և ի գլմաց Եւայի՝ առ դստերս նորա. և գիրք մի Յայտարարութիւն ուղղափառ հաւատոյ՝ ընդդէմ ամենայն հերձուածոց, ի խնդրոյ մեծ զօրավարին Օ՛աքարէի և եղբօր իւրոյ[1]. և այլ Թուղթս խրատականս։ Եւ եղև վախճան նորա ի վեցհարիւր վաթսուն և երկու Թուին։

ԺԶ

ՎԱՍՆ ՈՐՔ ՑԵՏ ՆՈՐԱ ԿԱՒԱՆ ՋԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԱՆԱՑՆ

Փառաւորեցաւ վանքն և հռչակաւոր եղև անուամբ սուրբ վարդապետին, և իմաստութեամբ Աստիրոսի առաջնորդի, քանզի այր շինարար էր՝ շինեաց այլ ժամատուն անտաշ վիմօք, մածուցեալ կրովք, հաստահեղոյս ոսմօք և փայտակերտ վերնայարկօք, որ յետ ժամանակաց փլաւ վերնայարկն. շինեաց և վերնատուն մի գեղեցկաշէն յարկօք, արուեստաւոր ունելով զՀիւսն Աստիաթ, որ ի բազում իրս աշխատ եղև եկեղեցեաց և վանից. և բազում եղբարք ժողովեցան վասն հռչականուն տեղւոյն. և բազմաց եղև տեղի անդէտան և ուսման. որ և մեք իսկ անեալ և ուսեալ եղաք ի նոյն վանս։ Ակսան շինել և եկեղեցի մի եօթն խորանօք, կոփածոյ և տաշած վիմօք, գմբեթաւոր և գեղեցիկ շի-

1 Այս երկու յիսին գիրք ի մեր ձեռս հասեալ չեն։

նուածովք. և իբրև ընդմիջեցաւ եկեղեցին խափա-
նումն եղև յոլով ժամանակս. քանզի եկն սուլդանն
Խորասանու Մալահատինն կոչեցեալ, և եհար զգօրս
Հայոց և Վրաց, և աւերեաց զբազում գաւառս. վասն
այսորիկ և այլ յոլովից մեաց անաւարտ։ Յետոյ այլ
ոմն Վրիգոր Կապալեցի, որ յառաջն արդիւնաւոր եր
ի շինուածն եկեղեցւոյն՝ վերստին ձեռն արկեալ աւար-
տեաց զնա ի վեց Տարիս բննսուն Թուին։

Վաղճանեցաւ և Ուանէ եղբայր Օ աքարեի, և Թա-
ղեցաւ ի Պղնձահանքն, ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շի-
նեաց ինքն, առեալ ի Հայոց՝ վրացի վանս Հաստա-
տեաց. և մինչև մեռանէր նա՝ յանձնեաց զորդին իւր
Յիշխան ոմն իւր սնուցած և փառաւորած, Վրիգոր ա-
նուն, զոր Տղայն կոչէին։ Ա՛ա խնդրեաց յորդւոյն Ուա-
նէի Ա՛ւագէ զվանքն Վաճիկ՝ ի տեղի իւր գերեզմա-
նի, և վասն յոյժ սիրելոյն զնա՝ եւ նմա. գնեաց և
պիւղ մի ի նմանէ Վաշխէ անուն, մերձ Ա՛ղստեւ,
եւ զայն ի վանքն. և այլ բազում արդիւնս արար,
պրեանս, խաչս, և անաւսունս. շինեաց հրաշալեան եկե-
ղեցի մի երեքխորանի մերձ ի գաւիթս եկեղեցւոյն՝
զարմանակերտ, և անուանեցին յանուն սրբոյն Վրի-
գորի. նա և այլ յոլով շինուածք եղեն ի նմա, և բազ-
մացան քահանայք և պաշտօնեայք և մանկունք ուսու-
ցեալքն։ Եւ կալեալ Ա՛արտիրոսն զառաջնորդու-
թիւնն ամն քսան՝ եթող կամաւորաբար. և կալաւ յետ
նորա Ա՛խիթար ոմն, այլ և սա և նա՝ Հովասափն, և
այլք՝ սակաւօրեայ. Ա՛բրահամ վարդապետն, և ապա
տէր Յովհաննէս Ա՛րմանեցին, որ և Հաղարծնին եր
առաջնորդ, և ձեռնադրեցաւ եպիսկոպոս յեօթնհա-
րիւր և հինգ Թուին։ Սա շինեաց ի Հաղարծինն սե-
զանատուն երևելի սրբատաշ վիմօք. և ապա գնաց ի
մեծ աթոռն ի Հաղբատ. և յեօթնհարիւր և երեք
Թուին Խաչատուր վարդապետն և եղբայրն իւր Ստե-
փաննէ շինեցին եկեղեցի մի երեքխորանի՝ հանդէպ վա-
նիցն գմբեթաւոր՝ յանուն սրբոյն Գէորգեայ։

ԺԹ.

ՊԱՏՄՈՒԼՈՒԹԻՒՆ ՍՈՒԼԵՄԱՆԻ[1] ԵՒ ԿՈՏՈՐԵԼՈՑՆ ՋՋՕՐՍՆ ՎՐԱՅ, Ի ՎԵՑ ՀԱՐԻՒՐ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԶՈՐՍ ԹՈՒԻՆ

Յառաջասացեալ ազգն հիւսիսոյ արևելից, որ Գոգ-Մագոգ անուանիւր՝ ի նեղ արկ զսուլտանն Խորասանայ զՍալալատին, և եհար զզօրս նորա և տապալեաց զաշխարհս նորա. և հանին զնա փախստական յաշխարհն Ղուանից. եկն նա ի քաղաքն Գանձակ և առ զնա, և կուտեաց իւր զօրս անթիւս. և զօրքն էր ի Պարսից, ի Ցաճկաց, և ի Գուրքաց. և եկն յաշխարհս Հայոց. (զայն տեսեալ Ղուանէի՝ ազգ առնէ Թագաւորին Վրաց՝ և Ժողովէ զօրս բազումս կալ ընդդէմ սուլտանին.)[2] և հպարտութեամբ մեծամեծս փքային, և դաշինս եդեալ էին, եթէ յաղթեսցեն նմա՝ զամենայն Հայ ի կրօնս Վրաց դարձուսցեն, որք ընդ իշխանութեամբ նոցա, և զընդդիմացեալսն սրով բարձցեն. զայս խորհուրդս խորհեցան ոչ Ղստուծով, և դաշինս կռեցին՝ և ոչ նորա Հոգւով. զայս խորհեցան՝ և զՑնէր ոչ հարցին, որ սըւին է յաղթութեան ուժ և կամի:

Եկն ապա սուլտանն ի գաւառն Կոտայից. գնաց Ղուանէ զօրօքն Վրաց, և կայր հանդէպ նոցա ի վերոյ. և տեսեալ զնոսա զեռեղեաց ի տեղւոջն և զանպատեաց: Իսկ սուլտանն յառաջ վարեալ զզօրս իւր՝ գայր հանդէպ նոցա. իբրև զայն եռաս իշխան մի յաւագացն Վրաց՝ Շ ալէ անուն, և եղբայր իւր Ղուանէ, առք քաջք և անուանիք և յաղթողք ի պատերազմի, ասեն ցայլ զօրս. Դուք կացէք մնացէք վայր մի, և մեք երթեալ խառնեսցուք ի նոսա. եթէ դարձուսցուք զոմանս ի նոցանէ յետս՝ մեր է յաղթութիւնն, եկայք և դուք ապրեցուցէք զանձինս ձեր: Իբրև խառնեցան նոքա սկսան կոտորել զզօրս սուլտանին. իսկ զօրն Յունաց[3] այնմ ոչ ուշ եդին. այլ փախեան ի տեղւոջէ անտի, մինչև այր զընկերն ի փախուստան ոչ գիտէր, եր-

1 ՕՕ. Սալահադին: — Վ. 143. Ծան. 3:

2 Կամ տպագրին:

3 Վասն Վրաց ասէ իբր յունադաւանք:

թեալ առանց ուրուք հալածելոյ, ամենեքեան ի վախճին ի վայր միաբանք՝ ի ձորն անդր ընուին, ի գլուխս քարափուղին՝ Պառնոյ։ Իբրև տեսին զայն զօրքն սուրտանին զհետ մտին, զբազում կոտորեցին և զայլս գահավիժ արարին. (և եկեալ սուլտանին) ի գլուխս ձորոյն՝ ետես զայն ողորմ տեսիլ, զի իբրև զդերբուկս քարանց կուտեալ կային անդ բազմութիւնք մարդկան և երիվարացն. շարժեաց զգլուխ իւր և ասէ. Ա՛յս գործս ոչ մարդոյ է՝ այլ միայն Աստուծոյ, որ կարօղն է ամենայնի։ Եւ դարձաւ դիակապուտ առնել զանկեալսն. և աւերեալ զբազում քաղաքս գնաց ի Տփխիս, և ձեռնտու եղեն Պարսիկք՝ որ ի նմա. և առ զնա և զբազումն կոտորեաց, և զևս բազումն բռնադատեր թողուլ զքրիստոնէութիւնն, և հաւանիլ . . . . . ուսման Տաճկաց. բազումք այնուհետև ջերկիւղ մահուանն զանգիտեալ՝ փոխանակէին զՀիշմարտութիւնն ընդ ստութեան. և այլքն յանձն առեալ զմահ քաջութեամբ քան զկեանս խղճին, զվկայականն անունն ժառանգեալ՝ ելին յաշխարհէս բարւոյ մահուամբ. և ապա տրամանն ետ՝ որք հաւանին և որք ոչ՝ ոչ հարցաքննութիւն առնել, այլ բռնութեամբ զամենեսեան թլփատել. և այսպէս բռնաբար յերկուց կողմանց կալեալ զձեռանէ մարդկան ի հրապարակի անդ, և միւսոմն առեալ սուր՝ հատանէր զմահ առնայն անդամոյն։ Եւ ընդ կանայսն խառնակէին զաղբալի պղծութեամբ. և ընդ ամենայն տեղիս ուր և գտանէին խաչ կամ եկեղեցի՝ կործանէին և քակէին. և զայս ոչ միայն ի Տփխիս, այլ և ի Պանձակ և ի Նախջուան և յայլ տեղիս գործէին։ Եւ մի ոմն յաւագացն, որ և մայր սուլտանին կին էր նորա՝ Օրղան անուն, սա բազում չարչարանօք նեղէր զքաղաքն Պանձակ. ոչ միայն զքրիստոնեայս, այլ և զՊարսիկս, հարկապահանջութեամբ բազմաւ, և սպանաւ ի նմին քաղաքին ի Ալեդայ [2], որք սուլթր էին սպանանել զմարդիկ. և մատեան առ նա ոմանք՝ մինչդեռ գայր ընդ փողոցն քաղաքին, իբր թէ զրկանս կալեալ ինչ նա յումեքէ. և առ նա մատեան սակաւ իրաւունս. ցուցին նմա Թուղթ ի ձեռին ունելով՝

1 Տպ. տղաւոգիներին։ 2 Վ. 97։

աղաղակեցին և ասեն. Կաթ դատ. և իբրև զտեղի առ նա, և կամէր հարցանել, Թէ ոյր էին վնասեալ զնոսա, նոքա աստի և անտի յարեան ի վերայ նորա, և սրովքն զոր ունէին ի ծածուկ՝ խոցոտեալ սպանին զնա. և այսպէս բարձաւ չարն չարեաւ ի միջոյ, և զսպանողս նորա՝ հաղիւ կարացին սպանանել նետիւք. զի զբազումս խոցոտեալ փախեան ընդ մէջ քաղաքին։ Ո՛ի այսպէս սովոր են առնել ազգն այն՝ որ բնակեալ են յամուր տեղիս, զոր Մաունի–Մանջահ կոչեն, այլ և ի մայրին Իբանանու. առնուն զգինս արեան յիւրեանց իշխանէն, զոր պաշտէին փոխանակ Աստուծոյ. և տան յորդիս և ի կանայս իւրեանց, և ինքեանք երթեալ՝ ուր և առաքէ իշխան նոցա՝ բազում ժամանակս դեգերին ի կերպս կերպս եղեալ, մինչև պատեհ ժամանակ գտցեն սպանման. և ապա սպանանեն զորս կամին. վասն այնորիկ երկնչէին ի նոցանէ ամենայն իշխանք և թագաւորք, և տան հարկս նոցա. և սաստիկ կատարողք են հրամանաց իշխանին իւրեանց, զոր ինչ և ասէ՝ մինչև ի մահ անձանց իւրեանց, ոչ խնայեն. և այսպէս բազում մեծամեծս սպանանեն նոքա՝ որք ոչ հարկին նոցա, որպէս և զայս ամբարիշտս։

ԺԷ

ՎԱՍՆ ԿՈՐՍՏԵԱՆ ՍՈՒԼՏԱՆԻՆ ՋԱԼԱԼԱՏՆԻՆ ԵՒ ԲԱՒՆԱԼՈՑՆ ՆՈՐԱ ՑԵՐԿՐԻ

Յետ գործելոյ նորա զայս չարիս, գնաց նա ի քաղաքն՝ որ է Խլաթ, յաշխարհին Արզնունեաց, և էր նա ընդ իշխանութեամբ Աշրաթ իշխանին. և ետ պատերազմն ընդ նմա, և էառ զնա. էր անդ կին սուլտանին՝ դուստր Ուանէի, Ջամեթա անուն, զոր վերապոյն յիշեցաք, առ զնա իւր կնութեան. չոգաւ և աւերեաց ըզբազում գաւառս յիշխանութենէն սուլտանին Հոռոմոց, զոր Ալաղինն կոչէին։ Այսպա միաբանեալք սուլտանքն՝ Աշրաթին և Ալէմշին եղբայր իւր, որ իշխէր կողմանցն Արզիսպատոսի, և Ալաղինն՝ կոչեցեալ իւրեանց

օգնական ՚ի զօրացն Հայոց, որ յաշխարհին Ակիլիկեցւոց, և ՚ի Ֆռանկաց ծովէզերեաց. և եկին տալ պատերազմ ընդ խորագմացւոյն Ղալադնի. և իբրև եկին մօտ առ միմեանս՝ զանպիտեցին երկոքին կողմանքն, և ոչ իշխէին խառնիլ ընդ իրեարս: Այս քրիստոնեայքն ոչք ՚ի Հայոց և ՚ի Ֆռանկաց՝ խրախուսեալք Աստուածէ, պիտեցին ՚ի վերայ նոցա. և էին Թուով սակաւք, նուազք քան զՀազար [1], և զօրութեամբ Աստուծոյ հարին զզօրսն, և ՚ի փախուստ դարձուցին. և զայն տեսեալ զօրացն Ցաճկայ՝ յարձակեցան և նոքա, և հարին կոտորեցին զբազումն մինչև ՚ի մուտս արևու: Այս հրաման ետուն սուլտանքն՝ ոչ պնդել զհետ փախչողացն, իբրև այն Թէ հաւատակիցք նոցա իցեն, և դադարեցին ՚ի պնդելոյ զհետ նոցա: Իսկ սուլտանքն զի ոչք բարեպաշտք էին՝ ոչ ապերախտք լինէին զօրուն քրիստոնէից, զի գիտացին Թէ ՚ի ձեռս նոցա ետ տէր զյաղթութիւնն: Այս դարձան մեծաւ ուրախութեամբ յաշխարհն իւրեանց. և ընդ որ անցանէին՝ ընդ քաղաքս և ընդ գաւառս՝ ելանէին ընդ առաջ նոցա պարիւք և ծնծղայիւք, և գովասացութեամբ ընդունէին: Իսկ Ղալադինն իբրև եկն ՚ի Կեսարիա Կապադովկեցւոց՝ ամենայն բազմութիւն քաղաքին հանդերձ քրիստոնէիւք և քահանայիւք իւրեանց, խաչիւք և ժամահարիւք՝ իբրև աւուր միոյ Ջանապարհ եւին ընդ առաջ նմա. և իբրև մօտ եղև սուլտանն՝ բազմութիւն Ցաճկացն ոչ տային Թոյլ քրիստոնէիցն խառն ինքեանցն հպիլ յերկրպագութիւնն սուլտանին, այլ յետս կոյս մղեցին զնոսա. և նոքա եւին ՚ի բլուր մի հանդէպ բանակին. իբրև եհարց սուլտանն Թէ ո՞ք են նոքա, և գիտաց Թէ քրիստոնեայք են, ինքնին իսկ մեկնեցաւ ՚ի զօրուէն միայն, և գնաց ՚ի մէջ նոցա. և հրամայեաց հարկանել զժամահարսն, և պարել բարձրաձայն. և նոքօք եմուտ այնպէս ՚ի քաղաքն. ետ նոցա պարգեւս, և արձակեաց յիւրաքանչիւր տեղիս: Իսկ Ղալադինն սուլտանն դարձաւ մեծաւ ամօթով յաշխարհն Ղուանից, ՚ի բերրի յարդաւանդ դաշտին՝ որ կոչի

1 ՈՕ. ՚ըզ. զոր մարթ է ընթեռնուլ վէց հազար. Թէպէտ և տպագիրն որոշակի գրէ պոհաս չան պհաղար ։

Ա՝ուղան. և անդ զետեղեալ կամէր զօր ժողովել՝ Ա՛պա Ալաթարն՝ որ եհան զնա փախստական յերկրէն իւրմէ, զհետ մտեալ նորա՝ տարաւ վարեալ զնոսա մինչև յԱ՛միթ քաղաք. և անդ եհար զզօրս նորա սաստկապէս. կորեաւ և անօրէն իշխանն՝ի նմին պատերազմի. և թէ որպէս ոմանք ասեն, երթայր հետիոտս փախստական. դիպեալ նմա առն միոջ՝ և դիտացեալ թէ նա է՝ եսպան զնա, փոխանակ մերձաւորի իւրոյ՝ որ սպանեալ էր զնա յայլում աւուր. և այսպէս բարձաւ չարն՝ի միջոյ։

ԺԲ.

ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԵԼ ԹԱԹԱՐՆ ԱՊԱԿԱՆԵԼ, ՋԱՇԹԱՐՀԻՍ ԱՄԵՆԱՑՆ

Ամենայն բանք պատմութեանս մերոյ և նախաշաւիղ որ մինչև ցայսօր՝ էր վասն ազգիս այսորիկ, զոր ընտրօքն Քրիստոսի հանդերձեալ եմք ձառել. կարծեմք թէ յոլով և զնոցնս պատմեցեն. և ամենեքեան նուազեալ գտանին յարժանաւորութենէն. զի յաձախեն քան զպատմութիւնս՝ չարիքս, որ եկին կալան զաշխարհս ամենայն. զի ժամանակս՝ի վերջ հասեալ է, և կարապետք՝ Հեռինն գուշակեն զգալուստ որդւոյն կորստեան։ Հրկեցուցանեն և զմեզ յայտնութիւնք սրբոց արանց և աստուածազգեցիկ, զոր սուրբ Հոգին եցոյց նոցա՝ի զգուշութիւն ապագայիցն. և մանաւանդ անսուտ հրաման վրկչին մերոյ և Աստուծոյ՝ որ ասէ. Յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ի թագաւորութեան վերայ. և այն, ասէ, սկիզբն է երկանց։ Այլև սրբոյն Հերսեսի հայրապետին մերոյ, զոր մարգարէաբար ազգեաց վասն կործանման աշխարհիս Հայոց՝ յազգէն Հետողաց. զոր աչօք մերովք տեսաք զաւերն և զտառապանս, զոր անցուցին ընդ աշխարհս ամենայն. և եղև պատճառ ելից նոցա այսպէս։

Վանդի աշխարհն հեռաւոր հիւսիսոյ արևելից՝ զոր կոչեն՝ի խժական լեզուն՝ Ղարաղրում[1], ՚ի սահմանս հովտի Օրգոն գետոյ որ՝ի Գարաղրում լերանց ելեալ թափի՝ի լիճն Պալքաշ։

1 Գարագօրում, ուր և համանուն քաղաքն մեծ, որոյ գիւղք չեն քաջայայտ. բայց միայն զի էր՝ի

Ղ ատիայ [1], բարբարոս ազգացն բազմութիւնք որ անտ
են՝ անգիտելիք և անթուելիք բազմաց. զլուխ Թագա-
ւորացն ունելով՝ ազգն որ կոչի Ղանթարք, որում ա-
նուն էր Ղանկզղան, դէպ եղև մեռանել նմա։ Եւ յա-
ռաջ քան զվաղճանն կոչեաց զզօրսն ամենայն և զերիս
զորդիս՝ զոր ունէր, և ասէ ցզօրսն. Կա աւանիկ մեռա-
նիմ. զմի յորդւոց [2] աստի իմոց զոր կամիք ընտրեցէք
ձեզ Թագաւոր փոխանակ իմ։ Եւ նոքա պատասխանի
ետուն. Ո՞ր միանգամ կամք քո ընտրեացեն, նա լիցի
մեր Թագաւոր, և նմա ծառայեացուք միամտութեամբ։
Յայնժամ ասէ ցնոսա. Կա ասեմ ձեզ զբարս և զգոր-
ծըս երեցունց որդւոցս։ Կայս անդրանիկ որդիս իմ Ղա-
զատա, սա այր պատերազմող է և զօրասէր, բայց հը-
պարտ է քնութեամբ, և մեծ քան զպատահեալ բախ-
տըն։ Իսկ երկրորդ որդիս իմ, նոյնպէս յաղթող է՝ ի
պատերազմունս, բայց ռիժտ է քնութեամբն։ Իսկ
կրտսեր որդիս իմ ընտրհաւոր է՝ ի մանկութենէ իւրմէ,
և առատ բարոյիւք, և մեծատուր՝ ի ձիրս. և յորմէ
հետէ ծնաւ սա ինձ՝ օր ըստ օրէ յաւելաւ փառք իմ և
մեծութիւն։ Կրդ ահա ասացի ձեզ զամենայն ստու-
գութեամբ, և ումմէ կամիք պագէք երկիր յերեցունց
աստի։ Եւ նոքա մատուցեալ երկիր պագին կրտերոյն,
որում անուն էր Ջոլթա-խան զան [3]. և հայրն եդ
զթագն՝ ի գլուխ նորա, և մեռաւ։ Իսկ նա իբրև առ
զիշխանութիւն Թագաւորութեանն, զօր գումարեաց
անթիւ բազմութեամբ իբրև զաւազ ծովու անհամար
՝ի բազմութենէ, զիւր սեփական ազգն, զոր Ա՛ուղալ
Ղանթարն անուանէին, և զԽազրաց և զՋոնաց և ըզ-
Ղատիացիս և զՎնկիտանս [4], և զայլ բազում ազգս
բարբարոսաց, ախիւք և բանակօք, կանամբք և որդւովք
իւրեանց և խորանօք։ Հաժանեաց զնոսա յերիս ա-
ռաջս, զմինն ընդ կողմն հարաւոյ առաքեաց, գլխաւոր
վերակացու կարգեաց յիւրոց հաւատարմաց և՝ ի սիրե-

1 Գարա-Խիդա աշխարհ յարև-
մտից Չինաց և՝ ի հիւսիսոյ Դիպե-
թայ։

2 ՕՕ· որդի։

3 Ա· Գ· Խանդան· — Օկո-
դայի կամ Էօկադա Խաքան։

4 Խազիրք և Հոնք ոչ ևս լսէին
յայնժամ, այլ Քափչաք· իսկ
Ղատիացիք Թուին Գարա-Խիդա-
ցիք՝ ի միջնաշխարհին Թուլքա-
ստանի· և Անկիտանքն՝ Անկուտք
յարևելս Թաթարաց և մեծի Քո-
սլի անապատին։

լեայ. և զմիւսն ընդ արևմուտս, և զորդիս իւր ընդ նո-
սա, և ՚ի կողմանս Հիւսիսոյ. և զերրորդն ընդ արևելս
Հիւսիսի, վերակարգեալ զայր մի որում անուն էր Ջար-
մնդան[1], այր խոհագէտ և խմաստուն և յաջողած ՚ի
գործս պատերազմի։ Պատուէր տուեալ նոցա աւերել
քանդել զամենայն աշխարհս և զթագաւորութիւնս
տիեզերաց, և ոչ ևս դառնալ առ նա, մինչև բուսան-
դակեսցեն զամենայն աշխարհս նուաճեալ ընդ տէրու-
թեամբ նոցա. և ինքն անդէն զետեղեալ յաշխարհին՝
ուտելոյ և ըմպելոյ և զբօսանացոյ և շինութեան պարա-
պեալ՝ յանհոգ յամենայն կողմանց։ Իսկ զօրացն էր-
թեալք ընդ կողմանս կողմանս աշխարհին՝ աւերէին
զաշխարհս և զգաւառս, և բառնային զնշխանութիւնս
ազգաց, առնուին զինչս և զստացուածս, զկանայս նո-
րահասակս, և զմանկունս նոցա գերի առեալ ՚ի ծա-
ռայութիւն ստրկութեան. էր զոր առաքէին հեռու
յաշխարհս իւրեանց՝ առ իշխանն Թագաւոր իւրեանց[2],
և էր զոր առ իւրեանս կալեալ ՚ի պէտս ծառայութեան
ախիւ[3] իւրեանց։ Իսկ այս զօր որ եւ ընդ արևելս, ո-
րոց գլխաւոր էր Ջարմա–նուինն, չոգաւ սա ՚ի վերայ
Ա՛ալալագին սուլդանին, որ իշխէր Խորասանայ և գա-
ւառացն որ շուրջ զնովաւ. և եհար վանեալ զնա, և
զգօրս նորա, և արար փախստական, որպէս ցուցաք վե-
րագոյն. և ինքեանք կարգ առեալ աւերեցին զամենայն
աշխարհն Պարսից և զՈ՛տրապատականու և զՈ՛ւիմայ,
կարգաւ սրբեցին զամենայն. որպէս զի մի ինասցէ խոչ
ընդ ոտն գայթակղութիւն նոցա. առին և զմեծամեծ
քաղաքսն և զհոյակապ ամենայնիւ լցեալ զՈ՛ւխ և
զՈ՛պահան, և յիւրեանց անուն վերստին շինեցին.
այսպէս առնէին ամենայն երկրի ընդ որ անցանէին։ Ա՛յս
ապա եկին հասին յաշխարհն Ա՛ղուանից՝ ամենայն ա-
խուժ և բազմութեամբ իւրեանց, և ՚ի գետոյն յար-
գաւանդ դաշտին՝ որ կոչի Ա՛ուղան, և լի ամենայն բա-
րութեամբ՝ ջրով, փայտիւ, և մրգով. անդ զետեղ ա-
ռեալ հարին զխորանս իւրեանց։ Ա՛յսպէս առնէին զա-

1 Ջօրմաղուն։
2 Տպ. առաջէին անդէն ՚ի հեռա-
ւոր յօթարուիխան յաշխարհն իւրեանց
առ խաղանն նագաւոր իւրեանց։
3 Ա. ախթից։

մեծայն աւուրս ձմերային, և ՚ի ժամանակս գարնանայինս սփռէին ընդ կողմանս, ասպատակաւ և աւերմամբ, և դարձեալ դառնային անդրէն և բանակէին։

ԺԹ

ՎԱՍՆ ԱԻԵՐՄԱՆ ՄԵԾԻ ԵՒ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՓԱՂԱՔԻՆ ԳԱՆՁԱԿԱՑ Ի ՊԵՂՁ ԹԱԹԱՐԱՑ

Ա՚յս քաղաքս բազմամբոխ լցեալ Պարսկօք, այլ սակաւ և քրիստոնէիւք, յոյժ Թշնամի էր սա Քրիստոսի և երկրպագուաց նորա, անարգիչ և հայհոյիչ խաչի և եկեղեցւոյ, և այպանիչ և նախատիչ քահանայից և պաշտօնէից. վասն որոյ իբրև լցաւ չափ մեղացն նոցա և էլ աղաղակ չարուն Թեան նոցա առ Ցէր, երևեցան նշանք աւերմանն նորա [1] յառաջագոյն, որպէս ՚ի վերայ Երուսաղեմի յառաջ քան զաւերն նորա, նոյնպէս և այսմ քաղաքի. քանզի յանկարծ պատառեալ երկրի՝ արտաքս ելեալ ջուր սեաւ. և ծառ սօսի զոր Ձանդար կոչէին՝ մերձ յոյժ առ քաղաքն մեծ, տեսին զնա յանկարծակի շրջեալ իւրովի. և ՚ի տեսանել նորա դղրդեցաւ ամենայն քաղաքն, և դարձեալ տեսին զնա կանգնեալ որպէս յառաջն. այս եղեալ երկիւցս և երիցս, և ապա անկաւ և այլ ոչ ևս կանգնեցաւ։ Եւ սկսան իմաստունք նոցա քննել վասն նշանին Թէ զինչ լիցի. և լմացեալ Թէ պատձառ աւերման քաղաքին է, սկըսան այնուհետև զխաչս՝ որ բևեռեալ էին ՚ի վերայ ներքին սեմոյց դրանց քաղաքին՝ հանել յանարգանայն. քանզի վասն այպանելոյ կացուցեալ էին, զի կոխեսցեն ամենայն անցաւորք։ Եւ յանկարծակի հասին զօրքն Թաթար, և պատեցին զքաղաքն յամենայն կողմանց, և մարտ եդեալ մարտնչէին ընդ նմա բազում մեքենայիւք. և Հարին զայգեստանս՝ որ շուրջ զքաղաքաւն էին։ Եւ պա փլուցին և զպարիսպ քաղաքին փխրուկուանօք յամենայն կողմանց, և ոչ ոք եմուտ ՚ի քաղաքն ՚ի Թշնամեացն, վասնզի զինու պահէցին զքաղաքն շաբաթ մի։ Եւ ոմն բնակիչք քաղաքին իբրև տեսին

1 ՕՕ. նոցա։

Թէ առաւ քաղաքն ՚ի Թշնամեաց՝ մտեալ իւրաքանչիւր
ոք ՚ի տուն իւր, այրեաց ՚ի վերայ իւր զշինուածն, զի
մի՛ անկցին ՚ի ձեռս Թշնամեաց. և այլք այրեցին զամե-
նայն որ ինչ ծախիւր ՚ի հրոյ, և ինքեանք միայն մնա-
ցին. և զայն տեսեալ Թշնամեացն առաւել ևս ՚ի բար-
կութիւն բրդեցան, և սուր ՚ի գործ արկեալ զամենե-
սեան Հարակ սրոյ ետուն, զարս և զկանայս և զման-
կունս. և ոչ ոք զերծաւ ՚ի նոցանէ, բայց միայն սակաւ
մի զօրք վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ՝
պատառեցին զմի կողմն պարսպին ՚ի գիշերի և գնային
փախստական, և այլ սակաւ ինչ սինլքորք, զորս պահե-
ցին և խոշտանկեցին ցուցանել զգանձս՝ ուր պահեալ
էին. և ապա զոմանս սպանին, և զկէսն գերի վա-
րեցին. և ինքեանք բրեցին զայրեալ տունս և հանին
զորս գտին Թագուցեալ. և զայս արարեալ զաւուրս քա-
զումն ՚ի բաց գնացին։ Ապա յամենայն գաւառաց շըր-
ջեցան ՚ի վերայ նորա՝ առ ՚ի բրել և որոնել զինչսն և
զանօթսն. և գտանէին բազում ինչս ոսկւոյ և արծա-
Թոյ ՚ի նմա, պղինձ և երկաԹ, և այլ պէսպէս հան-
դերձից, որ Թագուցեալ էին ՚ի գարանս և ՚ի տունս
գետնափորս. և այսպէս ամսոյ եկաց քաղաքն չորս ամ.
և ապա հրաման ետուն շինուԹեան քաղաքին, և հկին
ժողովեցան առ սակաւ սակաւ, և սկսան շինել զնա՝
բայց ՚ի պարսպէն։

Ի

ՎԱՍՆ ԱՒԵՐՄԱՆ ՔԱՂԱՔԱՑ ԵՒ ԳԱՒԱՌԱՑ Ի ԹՈՔԱՐԻՆ

Զկնի ամաց ինչ անցանելոյ աւերման քաղաքին Դան-
ձակայ, այս զօրս մոլեկան և խորամանկ իբրև վիճակաւ
բաժանեալ զաշխարհս Հայոց և Վրաց և Աղուանից,
իւրաքանչիւր գլխաւորի ըստ մեծուԹեան, զքաղաքս և
զգաւառս, զաշխարհս և զբերդս, առնուլ քանդել և
աւերել. և չոքան իւրաքանչիւր մասն բաժանեալ[1],
կանամբք և որդւովք, և ամենայն ախիւք բանակին իւ-
րեանց, ուղտիւք և անասնովք իւրեանց։ Մինդ այն ժա-

1 ՕՕ. բաժանել. Տպ. մասն բաժնի։

մանակս Թագաւորութիւնն Ա[1]ծաց նուաղեալ էր. զի էր ընդ ձեռամբ կնոջ մի՝ որում անուն էր Յուզուդան, դուստր Ղամարայ, քոյր Աշային, Թոռն Ղէորգայ, վաւաշ և կաթոտ որպէս զի ամիրամն. որ անհաւան եղեալ արանցն՝ զոր ածէին նմա, ընդ բազմօք անկեալ և այրի մնացեալ, վարեր զկնճռութիւն Թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Լուանէի, և որդւոյ իւրոյ Ասպին, և Շահնշահի՝ որդւոյ Օաքարէի, և Ահրամայ, և այլոցն. և զի յառաջ քան (զսակաւ) ժամանակս մեռեալ էր Լուանէ, և տարեալ Թաղեցին զնա ի Գնձահանքն[1], զոր իւր շինեալ էր վանն Ա[1]ծաց, առեալ ի Նայոց, և զկնճռութիւն նորա վարեր որդի նորա, և ոչ էին կարօղ զդէմ ունել անհնարին փքոյն եկելոյ. վասն այսորիկ անձնապահք եղեն ամենեքեան՝ գաղթեալ[2] յամրոցս ուր և կարացին: Եւ նոքա սըփռեալք առ հասարակ ընդ երեսս դաշտաց, լերանց և ձորոց, իբրև զմարախս բազմութեամբ, և կամ իբրև զանձրևս յորդութեամբ տեղեալ ի վերայ երկրի. և անդ էր տեսանել այնուհետև աղէտք տրտմագինք, և աշխար արժանի ողբոց. զի ոչ երկիր Թագուցանէր զմեռեալս, և ոչ վէմք և անտառք պահէին զապաստանեալս, ոչ ամրագոյն շինուածք բերդից, և ոչ խոխոմք ձորոց, այլ ամենեքեան արտաքս վարէին զզօղեալքս. լքանէր անձն արի արանց, և լուծանէին ձեռք կորովի աղեղնաւորաց, Թագուցանէին զսուրն՝ որք ունէին զնոսա, զի մի տեսեալ Թշնամեացն՝ անողորմ սատակեսցեն զնոսա. ձայնք Թշնամեացն հալէին զնոսա, դողփինք կապարձայ նոցա ահաբեկ առնէին զամենեսեան. աչք իւրաքանչիւր զօրհասն իւր տեսանէր եկեալ, և սիրտք իւրեանց մեռանէին ի ներքուստ. մանկունք խոսափէին առ ծնօղս յահէ սրոյն, և ծնօղք յահէ նոցա անկանէին հանդերձ նոքօք, նախ քան զընկենուլ Թշնամեացն: Ընդ էր տեսանել զսուրս յանխնայ կոտորեցոյն զարս և զկանայս, զերիտասարդս և զմանկունս, զծերս և զպառաւսունս, զեպիսկոպոսունս և զքահանայս, զսարկաւագունս և զդպիրս. մանկունք ստնդեայք զքարի Ֆարեալք, և կուսանք գեղեցիկք խայտառակ

1 Վ. 148:

2 ՕՕ. գայլախղեալ:

կեալք և գերեալք։ Ընդ այսոքիկ էր տեսիլ կերպարանաց նոցա, և անգութ աղխք որովայնի նոցա. մի և միոյ մօր արտասուաց՝ ոչ ողորմէին, և յալիս երբեք ոչ գթային. ՚ի սպանութիւնս խրախութեամբ ընթանային, իբր ՚ի հարսանիս կամ ՚ի գինարբուս. լցաւ երկիրն ամենայն դիակամբք մեռելոց, և ոչ ոք էր որ թաղէր զնոսա. հատեալ էր արտօսր յաչաց սիրելեաց, և ոչ ոք իշխէր լալ զանկեալսն յահէ անօրինաց։ Ուստ զգեցաւ եկեղեցի, և բարձաւ պայծառութիւն գեղեցկութեան նորա. խափանեցան պաշտամունք նորա, և վերացան պատարագք ՚ի սեղանոյն. լռեցին պաշտամունք նորա, և ոչ ևս լսէր ՚ի նմա ձայն երգոց։ Իբրև խաւարաւ մածեալ էր ամենայն աշխարհս. և սիրէին մարդիկ առաւել զգիշեր քան զտիւն, և երկիր թափուր մնաց ՚ի քննակչաց իւրոց, և շրջէին ՚ի նմա օտարաց որդիք. յափշտակեցան ինչք և ստացուածք նոցա, և ժլատութիւն բարւոյ նոցա ոչ երբեք յագեցաւ. խուզեցան տունք և սենեակք ամենայն. ոչ ինչ մնաց զոր ոչ առին. շրջէին այսր և անդր անդադար արագութեամբ իբրև զայծեմունս, և կեղեքէին պատառէին իբրև զգայլս. երիվարք նոցա ոչ վաստակէին յընթացս, և ոչ ինքեանք ձանձրանային ՚ի ժողովել զաւարս։ Եւ այսպէս առ հասարակ դառնութիւն հասուցին բազում ազգաց և լեզուաց. զի բաժակ բարկութեան տեառն էր հեղեալ յերկիր ՚ի վրէժխնդրութիւն գործոց մերոց չարաց՝ զոր արարաք. զի մեղաք առաջի նորա, և զարդար զցասումն նորա շարժեցաք, վասն այն եղև դիւրամուտ[1] յաշխարհս ամենայն։ Եւ իբրև առին ժողովեցին զաշխարհս ամենայն, և զանասունս՝ որ ՚ի գաղթի և որ ոչ, և զինչս և զստացուածս, և զդերիս բազմութեամբ՝ որ յարձակ վայրս, սկսան այնուհետև մարտնչել ընդ ամրոցս ամենայն, և ընդ քաղաքս բազումս (կանգնեալ մեռքենայս բազումս) և ազգի ազգիս. զի յոյժ խորամանկ և հնարաւորք էին, և առին քանդեցին զբազում ամրոցս և զբերդս. և զի աւուրքս ամառնային էր և խորշակ յոյժ, և ամպարք[2] ոչ հաւաքեալք, զի յեզակարծում ժամու եկին ՚ի վերայ, վասն այնորիկ պատեալ ՚ի ծարաւս՝ մարդ և ա-

1 Տպ. դիւրաս մոպ։ 2 Ըստմարանք (ջրոյ)։

նաստուն՝ կամաւ և ակամայ անկանէին ’ի ձեռս Թշնամեաց առ վտանգի նեղութեանն. և նոքա էր զոր սպանանէին և էր զոր պահէին ’ի պէտս իւրեանց՝ ստրկութեամբ ծառայութեան. զնոյն անցս անցուցանէին և ընդ քաղաքս բազմամարդս, շուրջ նստեալ պատեալ պաշարէին զնոսա։

ԻՕ.

ՎԱՏՆ ԱՌՄԱՆ ՓԱՂԱՓԻՆ ՇԱՓՓՈՐՈՑ [1]

Ա ի սմանէ յաւադացն որում անուն էր Ա՛ղար–նաւին, որոյ հասեալ էր բաժին կողմանքն այնոքիկ, մինչդեռ շարժէին ’ի տեղւոջէ իւրեանց՝ որ բնակեալ էին ’ի դաշտին որ կոչի Ա՛ուղան, առաքեաց սակաւ զօր իբրև արս հարիւր, որ եկեալ հասին առ դրունս քաղաքին Շ՛ամքորոյ, և արգելին զելոյզ և զմտողն առ նա. իսկ քաղաքն այն էր յայնժամ ընդ իշխանութեամբ Ա՛հրամայ և որդւոյ իւրոյ Ա՛ղբուղային, զոր առեալ էին յառաջագոյն ’ի Պարսկաց. և առաքեցին բնակիչք քաղաքին Շ՛ամքորոյ առ Ա՛հրամ [2] և առ որդի նորա՝ զի օգնեսցէ նոցա, և ասացին Թէ սակաւք են. իսկ նա ոչ օգնեաց, այլ և զօրդին՝ որ կամեցաւ գնալ՝ ոչ եթող, այլ խափանեաց, զանս ’ի բերան դնելով եկելոցն, ասել Թէ բազումք են. այլ և ոչ քաղաքացեացն հրամայեաց մարտնչել ընդ նոսա։ Իսկ զօրք այլազգեացն օր ըստ օրէ յաւելուն ’ի Թիւն, մինչև եկն գլխաւորն իւրեանց, զոր Ա՛ղարն կոչէին, և ետ պատերազմ ընդ քաղաքին, և զիոան որ շուրջ զպարսպովն էր քաղաքին՝ ելից փայտիւ և ցօղնով, զի գիւրաւ ելցեն ընդ պարիսպն. և նոքա ’ի ներքուստ հուր ընկեցեալ ’ի գիշերի այրեցին զնա. իսկ ’ի վաղիւն իբրև ետես զայն Ա՛ղար նաւինն, հրամայեաց զօրացն բառնալ բեռն մի հող իւրաքանչիւրոցն և արկանել ’ի փոսն. և իբրև արկին՝ լցաւ հաւասար պարսպին, և գիմեաց զօրն իւրաքանչիւր հանդէպ երեսաց իւրոց ’ի քաղաքն, և առին զնա, և կոտորեցին զամենեսեան բերանով սրոյ, և այրեցին

1 Վ. 100։ 2 Վ. 144։

զչինուածն որ ՚ի նմա, և առին զոր ինչ գտան. և ապա յարձակեցան ՚ի վերայ այլ բերդիցն՝ որ ընդ իշխանու-Թեամբ Ա ահրամայ, ՚ի Տերունականն, և յԱրդե-վանքն, և ՚ի Ա՛ածնաբերդն, զոր ունէր Ախբիկէ Կա-բատաունի որդի Ա՛ղսարԹանայ. և ՚ի Գարդման և յայլ կողմանս, ՚ի Ջարեքն և ՚ի Գետաբակս՝ այլ ոմն գլխա-ւոր չոգաւ, որում անուն էր Գ ատաղան-նուին: Իսկ Ա ահրամ՝ որ էր յայնժամ ՚ի Գարդման, գաղտնա-գնաց եղեալ ՚ի գիշերի փախեաւ՝ ուր և կարաց զերծա-նել. իսկ զօրքն այլազգեաց, մարտ եղեալ ընդ բեր-դիցն, որք ՚ի ներքս էին՝ ակամայ եառն զձիս և զանա-սունս, և զայլ զինչ խնդրեցին. Հարկ եդեալ ՚ի վերայ նոցա՝ Թողին զնոսա յիւրեանց անուն: Այլ այնոքիկ որ առին զԱ ամքոր՝ եկին ամենայն ախիւն իւրեանց ՚ի Տաւուշ[1] և ՚ինԱածարեթ, և ՚ի Նոր բերդն, և ՚ի Գաղ, և որ շուրջ զնոքօք, և ՚ի նեզ արկեալ պաշարեցին զՆ-նոսա:

ԻԲ

ՎԱՍՆ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՆԱԿԱՆԱՑ՝ ԵՒ ՈՐՔ ԸՆԴ ՆՈՍԱ

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ մեծ վարդապետն՝ որ կոչէր Ա անական՝ իւրովք աշխատուԹեամբք փորեալ էր քարայրս ՚ի կատարս բարձրագոյն քարի միոյ, որ կայ հանդէպ գեղջն՝ որ Ա որուտն կոչի, ՚ի հարաւոյ կողմանէ Տաւուշ բերդի. և շինեալ էր յայրն անդ եկեղեցի մի փոքրիկ, և անդ դադարէր գաղտուԹեամբ. իբրև ա-ւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին Ա րգեվանից, ՚ի Ջ ալալատին սուրդանին հինից, և անդ կայր զետեղեալ, ժողովեալ բազում գրեանս. զի յոյժ ուսումնասէր էր այրն այն, մանաւանդ Թէ աստուածա-սէր. և բազումք գային առ նա և ուսանէին բան վար-դապետական ՚ի նմանէ: Ա՛ւ իբրև շատացան մարդիկն՝ հարկ եղև նմա իջանել յայրէ անտի, և առ ստորոտս քարին շինեաց եկեղեցի և սենեակս, և անդ դադա-րեալ էր: Իբրև եղև այս կործանուածն ՚ի ԳաղԹարէն,

1 Տե՛ս գտեղւոյս ՚ի Վ. 145:

և եկն Ա՛ղար-նուէնն յայն սահմանս, բնակիչք գեղջն այնորիկ՝ անդր դիմեցին, և լցաւ արամբք և կանամբք, և մանկտով այրն. և եկեալ Փաղթարն պաշարեաց զնա յայրի անդ. և նոքա ոչ ամպարս ունէին և ոչ ջուր. և էր եղանակն ամառնային և տօթ յոյժ. և սկսան տապել յայրի անդ իբր ի բանտի. և մանկունքն պապակէին ի ծարաւոյ, և մերձ էին ի մեռանել. և Թշնամիքն ձայնէին արտաքուստ, Թէ ընդէր մեռանիք, ելէք առ մեզ, և տացուք ձեզ վերակացուս, և Թողցուք ըզձեզ ի տեղւոջ ձերում. և կրկնէին երիցս երդմամբ։ Ապա որք էին յայրի անդ՝ անկանէին առ ոտս վարդապետին, աղաչէին և ասէին. Վնեա զարիւն մեր ամենեցուն, և էջ առնոսա և արա սէր ընդ նոսա։ Ասէ նա ասէ ցնոսա. Ա՛յս զանձն իմ ոչ խնայեցից վասն ձեր, Թէ պոյ հնար փրկուԹեան, զի և Քրիստոս զանձն իւր ի մահ ետ վասն մեր և փրկեաց զմեզ ի բռնուԹենէ սատանայի. ապա պարտիմք և մեք ի վերայ եղբարց մերոց զնոյն սէր ցուցանել։ Ապա առեալ վարդապետն երկուս քահանայս ընդ իւր, անուն միոյն Ա՛արկոս, և երկրորդին Ոսկեվենէս, որք ապա յետ այնորիկ առին զպատիւ վարդապետական ի նմանէ. զի անդ էաք մեք ի վարժս կրԹուԹեան գլոյ սրբոյ ընդ առաքեան ընդ այնոսիկ, և էջ առնոսա։ Ա՛ւ գլխաւորն կայր հանդէպ այրին՝ ի վերայ բլրակի միոջ. և հովանի ունէին ի վերայ գլխոյ նորա վասն տօԹոյն, զի ի տօնի վարդավառին արգելին զմեզ. իբրև մօտ եղեն ի զօրագլուխն՝ որք տանէին զնոսա՝ երիցս անգամ հրամայեցին երկիր պագանել ի վերայ ծնկաց իւրոց՝ իբրև ուղտուց՝ ի ժամ գՀելոյն. զի այնպէս էր սովորուԹիւն նոցա։ Իբրև եկին առաջի նորա հրամայեաց յարևելս կոյս երկիր պագել Ա՛յաղանին՝ աղքային իւրեանց. և ապա մեղադիր եղև Թէ Ա՛մ լուեալ է զքէն՝ Թէ այր խմաստուն և երևելի ես, և կերպարանք քո յայտ իսկ առնեն զքէն. զի այր բարի ես տեսլեամբ, հանդարտ օրինակաւ, փառաւոր մօրուօք, ծաղկեալ աչեօք. դու իբրև լուար զհամբաւ գալոյ մերոյ՝ ի սահմանս մեր, ընդէր ոչ եկիր ընդ առաջ մեր սիրով և խաղաղուԹեամբ, և ես հրամայեալ էի զամենայն որ ինչ քո է անվնաս պահել ի մեծ մինչև ցփոքր։ Պատասխանի ետ վարդա-

պետն և ասէ. Ա՛ն զբարեմտութիւնն ձեր ոչ գիտէաք, այլ երկիւղիւ և դողմամբ պաշարեալ էաք յահէն ձերմէ, և լեզուիդ անտեղեակ գոլով, և՛ի ձէնջ ոչ ոք եկն առ մեզ կոչել զմեզ առ ձեզ. վասն այսր էր դանդաղումն մեր. և արդ իբրև կոչեցիք՝ եկաք առաջի ձեր. մեք ոչ զինուորք եմք և ոչ ընչից տեարք. այլ արք պանդուխտք և օտարականք, ժողովեալք յայլ և յայլ աշխարհաց՝ վասն ուսման ինչ մերոյ պաշտամանս. արդ ահաւասիկ առաջի ձեր եմք, զոր ինչ կամ է ձեր արարէք ընդ մեզ, թէ կենօք և թէ մահու։

Յայնժամ ասէ ցնա իշխանն. Ա՛ի երկնչիր. և հրամայեաց նոցա նստեալ առաջի իւր, և բազում ինչ հարցեալ՝ի նա վասն բերդիցն, և իշխանին Ա՛ահրամայ, թէ ո՞ւր իցէ, զի կարծէր զնա թէ մարմնական ինչ իշխան էր՝ի վերայ երկրի։ Իբրև առաց զոր ինչ գիտէրն, և զայն ևս թէ ոչ է մարմնական ինչ գործական, ապա հրամայեաց նմա զի իջուսցէ զմարդիկն յամրոցէ անտի յաներկիւղս, և խոստացաւ իւրաքանչիւր յիւրում[1] տեղւոջ կալ՝ իւրովք վերակացուօք, և յանուն նորա շինել զգիւղն և զագարակն։ Ապա ձայնեցին առ մեզ երիցունքն՝ որք էին գլխատ վարգապետին, եթէ Ա՛յնքան վաղվաղակի, և զոր ինչ ձեր է բերէք ընդ ձեզ. և մեր իջեալ դողութեամբ առ նոսա՝ որպէս գառինս՝ի մէջ գայլոց, երկուցեալք և զարհուրեալք, ակն ունելով մահու. իւրաքանչիւր՝ի մեր իւրում՝ ասելով զհաւատս խոստովանութեան՝ որ՝ի տուրբ Աստուածութիւն. զի յառաջ քան զինջանալն մեր յայրէ անտի՝ հաղորդեալ էաք պատուական մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ։ Այնտարան զմեզ՝ի փոքրագոյն աղբիւր մի որ կայր՝ի մէջ վանիցն, և ետուն մեզ ջուր. զի յոյժ ծարաւի էաք զաւուրս երիս. և ապա տարան զմեզ՝ի տեղի ինչ արգելանի, և զաշխարհականան՝ի գաւիթս եկեղեցւոյն. և ինքեանք շուրջ զմեօք պահէին զմեզ զգիշերն, զի ընդ երեկս էր օրն։ Այն՝ի վաղիւ անդր հանին զմեզ՝ի գլուխ վանիցն՝ի բարձրաւանդակ տեղի ինչ, և խոստեալ առնն որ ինչ կայր առ ումեք՝ որ պիտոյ էր նոցա.

1 ՕՕ. Խրատանէխրոմ պէղ ոդջ (կամ ոչ)։

և որ ինչ յայրի անդ էր, և որ ինչ սպասք էր եկեղեցւոյն, կամ շուրջառ կամ այլ անօթ ինչ կամ խաչ արծաթի, և երկուս աւետարանս ընդելուզեալ արծաթով, զայն եւտուն վարդապետին. զոր յետոյ առին ՚ի մէնջ. և ընտրեալ ՚ի մէնջ զարս՝ որ կարող էին շրջել ընդ նոսա, և զայլսն հրամանն եւտուն տանել ՚ի վանսն, և ՚ի գիւղ անդր, և վերակացուս Թողին յինքեանց, զի մի այլք խուսեսցեն զնոսա: Հրամայեաց և վարդապետին ՚ի վանս կալ. և եղբօրորդի մի էր նորա քահանայ Պօղոս անուն, հրամայեաց գալ ընդ մեզ զկնի նորա: Նոսկ վարդապետն սուրբ խնայեաց յեղբօրորդին իւր, զի մանուկ տիւք էր. ինքն եկն զկնի նորա յուսացեալ Թէ հնար իցէ և զմեզ գերծուցանել. և շրջեցուցանէր ըզմեզ զկնի իւր աւուրս բազումս՝ նեղութեամբ և տառապանօք, հետի և բոկոտս: Նա որ կարգեալ էին պահել զմեզ՝ արք Պարսիկք էին, ծարաւիք արեան քրիստոնէից. նոքա առաւել նեղէին զմեզ ամենայն տառապանօք, ուղեգնացութեամբ այնքան ստիպով տանէին զմեզ, որպէս երիվարս յասպատակի. և Թէ դէպ լինէր ումեք վանն տկարութեան մարմնոյ կամ խեղութեան սակաւ մի կասել ՚ի գնացից՝ անխնայ ջարդէին զկապուտնս, և ծեծէին զմարմինն գանալից, մինչ զի ըզփուշս անգամ ոչ կարէին հանել յոտից, Թէ ելանէր ընդ նա. և ոչ ջուր ըմպել ոք կարէր յատիպողացն: Եթէ երբեմն իջանէին տանէին ընտրին զմեզ ՚ի տունս նեղս, և ինքեանք շուրջ նստեալ պահէին զմեզ. և ոչ տային ումեք ելանել արտաքս ՚ի պէտս կարեաց մարմնոյ, այլ ՚ի նոյն տունսն անցուցանէին զպէտսն. և ՚ի նմին ագահնէին զկոլով աւուրս. վասն որոյ ոչ կարեմ ընդ գրով արկանել զամենայն նեղութիւնս՝ որ անցին ընդ մեզ. և զվարդապետն ոչ Թողին առ մեզ, այլ ուրոյն հեռի ՚ի մէնջ՝ յայլս ումանս յանձնեցին զգուշութեամբ պահել: Այսպա առին և զիս յընկերացն իմոց զկնի իւրեանց ՚ի պէտս դպրութեան՝ գրել Թուղթ և ընթեռնուլ. զօրն զկնի իւրեանց շրջեցուցանէին, և յերեկոյն տանէին զմեզ առ վարդապետն՝ երաշխաւորութեամբ, և դարձեալ գային առնուին հետի, կամ մերկ ՚ի վերայ կրմնոյ գրաստու. և այսպէս առնէին զաւուրս բազումս: Նոսկ իբրև անցին աւուրքն ամառնային, և եկն եղանակ

աչնանայինն, և հեռացեալ էին նոքա ի ծանրօդ[1] յաշխարհէ մերմէ յօտարութիւնն, ապա զանձինս ի մահ եդին ամենեքեան, և սկսան առ սակաւ սակաւ փախչել ի գիշերի, ուր և կարասցեն զերծանել. և այսպէս եղև ընդհարձակն Բրիտաոսի ամենեցուն զերծանիլ. բայց յերկուց երիցանց ոչք ի տունջեան կամեցան գաղտ երթալ և ոչ կարացին. զոր ըմբռնեալ ածին ի բանակն, և սպանին առաջի մերոյ յերկիւղ և ի զարմացումն. զի այսպէս առնէին ամենայն փախուցելոց:

Ապա յաւուր միում ասէ ցիս վարդապետն աբանչելի. Ակրակիս. և ասեմ. Ո՞րինչ հրամայես վարդապետ. ասէ ցիս. Արդեակ, գրեալ է թէ յորժամ ի նեղութիւս անկանիցիք համբերեցէք. արդ պարտ է մեզ զբան գրոյն ցուցանել յանձինս. զի ոչ լաւ եմք մեք քան զառաջինսուրբսն՝ Նահիկ և Ապնահիանս, Զաքեկիէլ և Զորեմիա, որք ի գերութեանն Իւրեանց զբարեպաշտութիւնն բուռն հարին, մինչև Ապստաձ այլ արարեալ փառաւորեաց զնոսա ի գերութեանն: Արդ և մեք կացցուք և միաբանք խնամեցին Ապստուծոյ, մինչև ինքն այլ արասցէ մեզ, որպէս և կամի: Նա ասեմ. Սուրբ Հայր, որպէս հրամայես՝ այնպէս արասցուք:

Զկնի եղև ապա յաւուր միում գալ իշխանին այնմիկ որ գերեացն զմեզ՝ ի տեղին, ուր էաք մեք ի պահեստի. և տեսեալ զմեզ խոստովեցաւ առ մեզ. և մեր ընթացեալ ընդ առաջ նորա, ասէ ցմեզ. Ո՞րինչ պիտոյ է ձեզ, միթէ քաղցեաք էք, տայ ձեզ միս ձիոյ. զի ինքեանք անխտիր ուտէին զամենայն անսուրբ ազնասունս, այլ և զմուկն և զամենայն սողունս: Ապէ ցնա վարդապետն. Մեք ձիոյ միս ոչ ուտեմք, և ոչ զայլ կերակուրս ձեր. Թէ կամիս ընդհս առնել մեզ, արձակեա զմեզ ի տեղիս մեր, որպէս խոստացար. զի այր ծեր և հիւանդոտ եմ ես, և ոչ եմ քեզ պիտանի ի գործս ինչ զինուորութեան և հովուութեան կամ այլ ինչ ի պէտս ձեր: Ապէ ցնա զօրագլուխն. Յորժամ եկեսցէ Ջուչու ղան՝ հոգացից զձեզ վասն այդորիկ. և էր Ջուչու ղանն այն վերակացու տան նորա. և երթեալ ընդ զօրս նորա յաւար: Ապստիկս կացաք առա-

1 Բ. Գ. Ջանօղ:

ջի նորա երկիցս և երիցս, և նա զնոյն պատասխաներ։ Եւ ասպա եկն այրն ՚ի Ճանապարհէն, և կոչեցին զմեզ ՚ի ճաշն իշխանին, և յղեաց զնոյն այրն առ մեզ Թարգմանաւ, և ասէ. Ո՞չ ապաքէն ասէք դուք Թէ ինչս տալ մեռելոյն՝ օգուտ է հոգւոյ նորա. արդ եթէ մեռելոյն օգնէ, զկենդանիս ընդէ՞ր ոչ փրկէ. տուր զոր ինչ ունիս և գնեա զհոգի քո. և երթ նիստ ՚ի տան քո։ Պատասխանի ետ վարդապետն և ասէ. Որ ինչք այն էին զոր դուք առիք, խաչքն և աւետարանքն, բայց յայնմանէ մեր այլ ինչ ոչ գոյ։ Ո՛չ ունիմ այրն. Եթէ ոչ ունիս ինչս՝ անհնար է քեզ երթալ աստի։ Ո՛չ վարդապետն. Ճշմարտութեամբ ասեմ քեզ, մեր ոչ ինչ կայ, ոչ գիւն աւուր միոյ կերակրոյ. բայց եթէ կամք էցեն ձեր, առաքեցէք զմեզ ՚ի մի ՚ի բերդիցս յայսցանէ, որ շուրջ կան զմեօք, և քրիստոնեայքն որ կան ՚ի նոսա՝ գնեն զմեզ։ Իսկ նոցա հատեալ գինս ծանուսս ՚ի վերայ նոցա, և դարձեալ Թեթևացուցին յայնմանէ, և առաքեցին զնա ՚ի բերդն՝ որ կոչի Կաղ[1]. իսկ նա խընդրեաց զմեզ գնոյ, զի ընդ իւրն և զմերն տացէ, և ոչ եառն։ Ո՛չ. Ա՛ ՚ի պէտ են մեզ Թուղթ գրելոյ և ընծայելոյն, Թէպէտ բազում գինս տայք ոչ տամք զսա։ Եւ բաժանեցաք ՚ի միմեանց արտասուօք. և ասէ ցիս. Որդեա՛կ, ես երթամ անկանիմ առ ոտս սուրբ նշանին՝ որ յանուն սուրբ Աստուածածնի, խնդրել նովաւ ՚ի տեառնէ վասն քո, և այլ եղբարցն՝ որք կան ՚ի ձեռս անօրինին, զի Թերևս զերծուսցէ և զձեզ Ո՛ստուածդ Թուղթեամբ իւրով։ Ո՛վ էր ՚ի Կաղն խաչ մի սքանչելագործ առ ամենայն նեղեալս, մանաւանդ առ գերիս. զի որք ապաւինէին ՚ի նա բոլորով սրտիւ՝ ինքն իսկ Աստուած բանայր զդրունս բանտից, և արգելլոցն լուծանէր զերկաԹս, և առաջնորդէր մարմնաւոր տեսլեամբ ՚ի տեղիս իւրեանց. և Համբաւ սքանչելեացն տարածեալ էր ընդ ամենայն աշգս. զոր կանգնեալ ասեն զնա սրբոյն Ո՛եսրոբայ վարդապետին մերոյ։ Եւ եղև որպէս ասաց վարդապետն. գնեցին զնա ուԹսուն դահեկանի. և իբրև տարան զնա՝ ՚ի նմին աւուր ասէ ցմեզ Ո՛ղբն. Ո՛՛ր արտմիր ընդ գնալ մեծ երիցուն, զքեզ վասն այնորիկ

[1] Վ. 145։

ոչ Թողաք ընդ նմա, զի պիտանի ես մեզ. մեծացուցից զքեզ ՚ի մեծամեծաց իմոց, և Թէ կայ քո կին՝ բերից զնա առ քեզ, և Թէ ոչ՝ տայ քեզ կին ՚ի մէնջ. և առ ժամայն ետ մեզ վրան մի, և երկուս պատանիս սպասաւոր մեզ. և ասէ. Ի վաղիւն տայ քեզ ձի, և ուրախ արարից զքեզ, միամիտ կացջիր. և գնաց ՚ի մէնջ։ Իսկ մօքն Ի՛ստուծոյ պատահեաց մեզ ՚ի նմին գիշերի գաղտագնաց լինել ՚ի նոցանէ և գերծանել. և եկաք ՚ի տեղի սննդեան մերոյ՝ ՚ի վանքն որ կոչի Ղետիկ, և նա աւերեալ էր ՚ի նոցանէ, և այրեալ զչինուածս որ ՚ի նմա, և անդ դադարեցաք։

ԻԳ

ՎԱՍՆ ԱԽԵՐՄԱՆ ՓԱՂԱՔԻՆ ԼՕՌԻ, ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԱՌԻՆ ՋՆԱ

Զօրավարն ամենայն գնդին Հեթանոսաց՝ որում՛ անուն էր Ջաղադա, լուաւ վասն ամրուԹեան քաղաքին Լօռոյ, և յոլովուԹեան գանձուցն որ ՚ի նմա. զի ՚ի նմա էր տուն իշխանին Հ ա յ ո ց՝ Ս ա հ ն շ ա հ ի[1] և գանձ նորա. առեալ ընդ իւր ընտիր սպառազէնս յոլով մեքենայիւք և ամենայն պատրաստուԹեամբ, չոգաւ անդ և նստեալ շուրջ զնովաւ պաշարեաց զնա։ Իսկ իշխանն Հ այ ո ց Ս ահ ր ն շ ա հ, առեալ զկինն իւր և զմանկունսն՝ էլ գաղտագողի ՚ի ձորն անդ, և ամրացաւ յայրս ուրեք, և զվերակացուԹիւն քաղաքին տայ ՚ի ձեռս աներայ իւրոց. իսկ նոքա քանզի արք կանացիք էին՝ ուտելոյ և ըմպելոյ և արբեցուԹեան պարապեալ, յուսալով յամրուԹիւն պարսպացն և ոչ Ի՛ստուածոյ. և եկեալ Թշնամեացն փոսեցին ՚ի ներքոյ պարսպացն և փլուցին. և ինքեանք շուրջ նստեալ պահէին, զի մի ոք փախիցէ։ Իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին Թէ առաւ քաղաքն, սկսան մղիլ ՚ի վախից, և ՚ի ձոր անդր ընուին. և զայն տեսեալ Թշնամեացն՝ սկսան մտանել ՚ի քաղաքն, և կոտորել անխնայ զարս և զկանայս և զմանկունս, և աւար առեալ զինչս և զստացուածս նոցա՝ գտին և զգանձս իշխանին Հ այ ո ց Ս ահ ն շ ա հ ի, որ զրկեալ կողոպտեալ էր զիւր

1 Որդի մեծին Ջաքարիայ ասացաւալարի։

հնազանդեալսն, և անդ կազմեալ տուն գանձուց ամ-
բարձին, զոր ոչ էր հնար ումեք տեսանել. զի նեղ ա-
բարեալ էր զբերան գբին, որ միայն արկանելոյն էր
բաւական, իսկ հանելոյ ոչ և։ Ապանին և զաներսն
Շ ահնշահին, և ինքեանք խոյզ արկեալ ամենայն ամ-
բոցայ քաղաքին և գաւառին, զոր պատրանօք և զոր
բռնութեամբ՝ առին զբազում. զի տէր մատնէր զնոսա
՚ի ձեռս նոցա։

Ա.յսպէս արարեալ և ընդ այլ քաղաքս, և ընդ Ղա-
մանիս և Շ ահիղլտէ, և ընդ մայրաքաղաքն Տփխիս,
առեալ զամենայն առ յաւար, ՚ի կոտորումն և ՚ի գե-
րութիւն, ասպատակ սփռեալ ընդ ամենայն կողմանս
անխնայ յարձակմամբ և յափշտակութեամբ և կոտոր-
մամբ. զի ոչ ոք էր որ ընդդէմ կայր նոցա, կամ պա-
տերազմէր ընդ նոսա. վասն այնորիկ աներկիւղ էին
յամենայն կողմանց, զի փախստեամբ փախեաւ Թա-
գուհին Վ րաց, որ Ղուզուդանն կոչէր, ուր և կարաց
զերծանիլ. այսպէս և ամենայն իշխանքն անձնապահք
եղեն ՚ի նոցանէն։

ԻԹ.

ՎԱՍՆ ԱՆԿԱՆԵԼՈՑ Ի ՁԵՌՍ ՆՈՑԱ ԻՇԽԱՆԻՆ ԱԽԱԴԻ

Իսկ իշխանն մեծ՝ որդին Լասանէլի՝ որ Ա.հագն կո-
չէին, իբրև եառ զայն ամենայն բազմութիւնս Թշնա-
մեացն՝ որք լինին զաշխարհս ամենայն, ամրացաւ և նա
՚ի բերդն ամուր՝ որ կոչի Կայեան. եկին և ամենայն
բնակիչքն գաւառին, ամրացան և նոքա շուրջ զբերդովին։
Իբրև գիտացին զօրքն այլազգեաց Թէ անդ ամրացաւ
իշխանն, մի ոմն ՚ի գլխաւորացն՝ որում անուն էր Ա-
տուզատայ, առեալ զօրս բազումս եկին և պաշարեցաւ
զբերդն, և առհասարակ լցաւ աշխարհն ՚ի զօրաց այ-
լազգեացն. զի ՚ի նմա գաղթեալ էին յամենայն կող-
մանց վասն ամրութեան վայրացն. և ածին շուրջ զբեր-
դովօքով բերդին որում յամենայն կողմանց. յղեին պատ-
գամս առ Ա.հագն գալ ՚ի հնազանդութիւն ծառայու-
թեան նոցա, և մի երկնչել. և բազում անգամ յղեին
և զնոյն բանս ասէին։ Իսկ նորա կամեցեալ շահել զբ-

միտս նոցա՝ տայ զդուստր իւր նոցա և ինչս բազումս, զի Թերևս Թուլասցին ի պաշարմանէն. իսկ նոցա առեալ զայն՝ ևս սնդուԹեամբ խնդրէին զնա։

Իսկ որք շուրջ զբերդովքն և որք ի ներքս՝ սկսան նեղել ի ծարաւոյ. ապա տարան զձի և զամենայն անասունս իւրեանց ի ձեռս Ջաձարին, զի Թողացուսցեն ոմանց ի նոցանէ երԹալ բերել ջուր ախի իւրեանց. և նոցա յանձն առեալ՝ դիմեցին բազմուԹիւն մարդկան ի ջուր անդր. և նոցա արգելեալ զերԹային[1] ի ջրէ, և ոչ սպանին զոք. այլ ասէին նոցա ի ջուցանել զընտանիս իւրեանց, և կեալ ի մէջ նոցա. և նոցա առ վշտին ածեալ ոչ կամէին ի ջուցեալ զնոսա. և նոցա արբուցեալ ջուր՝ արձակէին ի մէջ իւրեանց, և առին զկանայսն որով ցանկացան, և սպանին զարս նոցա. և զկէսս Թողին առ արս իւրեանց։ Իսկ Ներսէհ իբրև ետես Թէ ոչ Թուլանան նոքա ի պաշարմանէ և ի կոտորելոյն, կամեցաւ զանձն իւր տալ ի ձեռս նոցա, զի Թերևս սակաւիկ մի դիւր լիցի մարդկան. և առաքեաց զԱրիպոն՝ զոր Տըղայն կոչէին գգուանօք, յազատացն Խաչենոյ, զվերակացու տան իւրոյ, յառաջ քան զինքն երԹալ հանդիպել գլխաւորին նոցա՝ որ Ղարմաղանն կոչէին, որ հաբեալ էր զիտրանն առ աին ծովուն Վանայ։ Որ իբրև լուաւ մեծ Նուինն՝ ուրախացաւ յոյժ, և առաքեաց վաղվաղակի առ Տուղատան՝ որ պաշարեալ էր զնա, փութով առ ինքն հասուցանել, և այլ մի նեղել զբնակիչս բերդին և գաւառացն. և նորա առեալ զԱւագն վաղվաղակի հանդիպի նմա։ Նա իբրև ետես զնա, ասէ ցնա. Ո՞ւր ես Ասագն. նա պատասխանի ետ Թէ Աս եմ. ասէ ցնա զօրապետն. Նա ընդէր ոչ եկիր վաղվաղակի առ իս՝ իբրև եկի ես ի սահմանս ձեր։ Պատասխանի ետ իշխանն, և ասէ. Ինչդեռ հեռի էիր և կենդանի էր հայր իմ, նա ծառայեաց քեզ բազում պարգևօք. իբրև մեռաւ հայրն իմ, և ես ծառայեցի քեզ ըստ իմում կարողուԹեանս. և այժմ իբրև եկիր յաշխարհս իմ, ահաւադիկ կամ առաջի քո, որպէս հաճոյ է քեզ արա ընդ իս։ Ասէ զօրապետն. Ասեն ի խօսս առակաց, Թէ յերդն եկի՝ չեկիր, ի դուռն եկի՝ ապա եկիր։

1 ՕՕ· պէրնէսն։ Տպ· պէրնէսան և ու։

Եւ հրամայեաց նմա նստել ՚ի ստորև քան զնա՛ մեծա-
մեծս՝ որք նստէին առաջի նորա. և հրամայեաց Ճաշ մեծ
առնել ՚ի պատիւ նմա. և թերին յոլովութէ մնոց ՚ի սուրբ
և յանստուրբ անասնոց, անդամ անդամ յօշեալ և ե-
փեալ. և խրմիզս[1] ՚ի կաթանէ ձիոց, ըստ սովորութեան
իւրեանց բազում տիկս. և արկին առաջի և սկսան ու-
տել և ըմպել. իսկ Ղազն և որք ընդ նմա՝ ոչ ուտէին
և ոչ ըմպէին. եհարց զօրապետն թէ Ընդէր ոչ ուտէք.
ասէ Ղազն ցնա. Վրիստոնէից ոչ է սովորութիւն ու-
տել զայս կերակուր, և ըմպել զայս ըմպելի. այլ միա
՚ի սուրբ կենդանեացն ջենել, և գինի առ ՚ի ըմպել. և
հրամայեաց զայն տալ նոցա զոր և խնդրեաց։ Եւ ՚ի
վաղիւն նստոյց զնա ՚ի վերոյ յոլովից մեծամեծացն. և
այսպէս օր ըստ օրէ յաւել ՚ի պատիւ նմա. մինչև ՚ի մե-
ծամեծացն կարգի նստուցանել զնա. և հրամայեաց ա-
մենայն զօրուն ոչ մարտնչել ընդ թերդն և ընդ քա-
ղաքն՝ որ ընդ իշխանութեամբ նորա էին, և բազում
դիւրութիւն ածէ աշխարհի նորա. և բազում գերիս
ազատս արձակեցին վասն նորա. և զամենայն աշխարհն
նորա ետ նմա, և այլ ևս աւելի. և անքակ սէր հաս-
տատեաց ընդ նմա։ Եւ առեալ զնա և զամենայն զօրն
ջոգաւ ՚ի վերայ քաղաքին Ընուոյ։

Իե

ՎԱՍՆ ՓԱՂԱՔԻՆ ԱՆԻՈՑ՝ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՄԱՏՆԵԱՑ ՏԷՐ Ի ՁԵՌՍ ՆՈՐԱ

Քաղաքս այս Ընի լցեալ էր բազմութեամբ մարդ-
կան և անասնոյ, և պարսպեալ ամրագոյն պարսպօք. և
եկեղեցի բազում կայր ՚ի նմա. մինչ ՚ի կարգ խօսից
երթման այսպէս երդնուին, Ընուոյ հազար և մի եկեղե-
ցին. և յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իրօք.
վասն որոյ յղփութիւնն յամբարտաւանութիւն աճ
ջնոսա, և ամբարտաւանութիւնն ՚ի կորուստ, որպէս
սովոր է առնել յիսկզբանէն և այսր։ Քաջեաց Ղար-
մաղանն գեսպանս առ նոսա գալ նմա ՚ի հնազանդու-

1 Մինչև ցարդ այսպէս կոչեն թաթարք զչինուկ կամ զրմպկլին ՚ի ձիոյ կաթանէ։

թիւն. և որ զլխաւորքն էին ՚ի քաղաքին՝ ոչ իշխեցին պատասխանի առնել պատգամին, առանց հարցանելոյ զիշխանն Շ ահնյահ. քանզի ընդ իշխանութեամբ նորա էր քաղաքն։ Նոքա ամբոխ քաղաքին և ռամիկքն սպանին զպատգամաւորսն։ Եւ զայն տեսեալ զօրքն այլազգեաց՝ ՚ի բարկութիւն բրդեցան. և պաշարեալ զքաղաքն յամենայն կողմանց, կանգնեցուցին փիլկուանա[1] բաղում՝ արուեստագիտութեամբ, և մարտուցեալ ընդ քաղաքին զօրեղապէս՝ առին զնա։

Եւ այլ և ոմանք յիշխանացն քաղաքին ձեռնտու եղեն առ Թշնամիսն, զապրուստ անձանց իւրեանց շահելով. և նոցա կոչեցեալ արտաքս ՚ի քաղաքէն զբաղմութիւնն՝ խոստացան ոչ ինչ առնել նոցա չար։ Եւ իբրև ելին արտաքս առ նոսա ամենայն բազմութիւնն՝ բաժանեցին զնոսա յինքեանս, և սուր ՚ի վերայ եդեալ կոտորեցին զամենեսեան առ հասարակ անողորմաբար. սակաւ[2] կանայս և մանկունս թողեալ, և արս արուեստագիտս, ՚ղոր վարեցին ՚ի գերութիւն։ Եւ ապա ինքեանք մտեալ ՚ի քաղաքն՝ առին զինչս և զստացուածսն ամենայն. կողոպտեցին և զամենայն եկեղեցիսն, և աւերեցին քանդեցին զամենայն քաղաքն. եղծին և ապականեցին զիարառս վայելչութեանն նորա։ Ընդ ել տեսանել տեսիլ ողորմագին. առհասարակ կոտորեալք ծնօղքն և ծնունդք ընդ նոսին, դիզեալք ՚ի վերայ միմեանց իբրև զդեղբուկս քարանց կուտեալք, քահանայք և սարկաւագունք և պաշտօնեայք եկեղեցականք, ծերք և տղայք և հասակաւ մանկունք և երիտասարդք և կուսանք շատք. ըստ աւետարանին սրբոյ, եթէ մատնիջիք ՚ի սով և ՚ի գերութիւն. նոյն հրամանն եհաս ՚ի վերայ սոցա, զի ցիր և ցան անկեալք ընդ երեսս դաշտացն, արբեալ երկիրն յարենէ և ՚ի չարպոյ վիրաւորացն. փափուկ մարմինքն և աձառոտք լուացեալք[3], սևացեալք և այտուցեալք, և այնոքիկ որ ոչ

1 Փելփան ըստ Տաճկաց, որոց Թուխ առեալ և զգործին և զանունն ՚ի Հռոմոց, առ որս՝ և ՚ի մեզ ծանօթ է բաղխարն, Թէպէտ և ոչ ամենայնիւ. խակ փիլիկուանդ կամ ֆիլիկն՝ նետաձիգ կամ քարաձիգ՝ նոյն Թուխ կոչեցեալն գաստրոբոլտիս ՚ի Յունաց, καταπέλτης. գաստրոբոլտա catapulta ՚ի Լատինաց, որք և զմեծամեծ նետսն կոչէին բիլում pilum.

2 ՕՕ. սակաւ։

3 ՕՕ. լուացեալ։

4 ՕՕ. որոյ։

եւ լեալ էին արտաքս քան զդուռն քաղաքին, բոկ եւ հե-
տիոտս ընթացեալք ի գերութիւն. եւ որք հաղորդէին
ի պատուական մարմնոյ եւ յարենէ որդւոյն Աստուծոյ,
ուտէին զմիս անսուրբ եւ հեղձուցիկ[1]. եւ ըմպէին ի կա-
թանէ ձիոյ պղծոյ. կանայք պարկեշտք եւ ողջախոհք՝
մատնեալք ի խայտառականս ձակաձան եւ վաւաշ մարդ-
կան. կուսանք սուրբք որք ուխտեալ էին Աստուծոյ
(սրբութեամբ) պահել զմարմինս եւ անախտ զհոգիս,
պղծեալք պէսպէս (պոռնկութեամբք) եւ ապականեալք
անկարգութեամբ. եւ այսպէս եղեւ զբաւ գործոյն։

ԻԶ

ՊԱՏՄՆ ԱԻԵՐԱՅԻ ԿԱՐՈՒՑՆ

Ա՛յս քաղաքս իբրեւ ետես որ ինչ գործեաց Ա-
թաւրն ընդ բնակիչս Նուոյ, փութացան եւ աճապարեալ
տարան զբանալի քաղաքին ընդ առաջ նոցա, զի թերեւս
խնայեսցեն ի նոսա. իսկ նոքա քանզի խանձեալ էին
աւարաւ, եւ ոչ յուժեաք ունէին երկիւղ, զնոյն անցս
եւ ընդ նոսա անցուցին, որպէս ընտանի, յափշտակու-
թեամբ ընչից եւ ստացուածոց եւ կոտորմամբ բնակչաց,
եւ աւերմամբ քաղաքաց անզարդացուցեալ զվայելչու-
թիւն նորա, եւ գերի վարեալ զբնակիչս, եւ սակաւ սին-
ջորս թողեալ գնացին ի բաց։ զոր յետոյ եկեալ զօրք[2]
սուլտանին Խոռոմոյ՝ զերծեալսն ի Աթաթարէն մատ-
նեցին ի գերութիւն եւ ի սուր անողորմաբար. ըստ
գրեցելոյն, թէ ահ, գուբ եւ որոգայթ ի վերայ ձեր՝
բնակիչք երկրի. եւ որ փախիցէ յահէն անկցի ի գուբն.
եւ որ ելանիցէ ի գբէն՝ անկցի յորոգայթ. եւ որ փա-
խիցէ յայնմանէ՝ հարցէ զնա օձն. այսպէս եղեւ տառա-
պեալ բնակչացն Կարուց։ Այդ զօրքն առին եւ զքաղաքն
Սուրբ–Վարի[3], զոր սակաւ ամօք յառաջ առեալ էր
զնա ի Ցաճկայ Շ ահնշահն եւ Ասպին, եւ զեռ եւս
կարկատեալ էին. Յանկարծակի եհաս ի վերայ նո-
ցա մի ոմն յաւազացն զօրօք բազմօք, որում անուն էր

1 ՕՕ. հեղձոտիլ։
2 ՕՕ. զմի։
3 Սուրմառի կոչի յայլոց եւ այժմ Սիւրմելի, գեօղ ի հարաւոյ արե-
մտից կողմից Էջմիածնայ առ Երասխա-
ձորով, ի հին ճակատք գաւառի։

Պ ատրա Նահատուր. և վաղվաղակի ած զնա, և զոր ինչ եգիտ ի նմա՝ յափշտակեաց։ Նա իբրև այսպէս այս գործեցաւ ընդ աշխարհս ամենայն, ապա հրաման ետուն մնացորդացն՝ որ ապրեալ էին ի սրոյ անտի և ի գերութենէ՝ գնալ յիւրաքանչիւր տեղիս, ի գիւղս և յագարակս, և շինել իւրեանց տուն [1] և ծառայել նոցա. և սկսաւ երկիրն սակաւ սակաւ շինիլ և շինուԹիւն առնուլ։ Նայց Նստուածոյ որպէս սովոր է՝ ի ժամանակի բարկուԹեան զողորմուԹիւն յիշել, զոր և աստ արար. զի ոչ ըստ մեղաց մերոց արար Տէր, և ոչ ըստ անօրէնուԹեան մերում հատոյց մեզ. զի ժամանակն ամառնային էր՝ յորում ասպատակեցին նոքա ի մեզ, վաստակն չև ևս էր հնձեալ կամ ժողովեալ ի շտեմարանս. և նոքա եկեալ ուղտիւք և անասնովք կերան և կոխեցին զամենայն։ Նակ մերձ յեղանակն ձմեռնայինն, իբրև գնացին նոքա ի դաշտն որ կոչի Նուշան, յաշխարհն Նզուանից. քանզի անդ կային զձմեռնայինն ժամանակն, և ապա ընդ գարունն սփռէին ընդ կողմանս կողմանս. մարդիկն՝ որ մնացին ի սրոյ անտի՝ մերկք էին և առանց կերակրոյ. ի հասկից անտի անկեալոց և կոխեալոց՝ ընուին զպէտս իւրեանց. և ձմեռն ոչ ցուրտ եղև սաստիկ, որպէս յայլ ժամանակս, այլ կակուղ և ըստ միտս. և զի ոչ ունէին եղինս՝ որ գործէին զերկիրն, և ոչ սերմանք՝ զոր ելիք ցանէին, ի գալ գարնան՝ հրամանաւ Նստուծոյ, երկիրն բուսոյց ինքնաբեր [2], որ բաւական էր ընուլ զպէտս մարդկան. այլ և ընդ ամենայն կողմանս լնուԹիւն եղև հացի, որով ապրէին փախուցեալքն ի տեղիս. այլ և անողորմ ազգն Պրաց քաղցում գուԹ և խնամն ցուցանէին երԹեղոյն առ նոսա պանդխտանալ. և այսպէս ողորմածն Նստուած միսիԹարեաց զվշտացեալքն։

1 ՕՕ. անուն։ 2 Տպ. ինքնիւք։

ԻԷ

ՎԱՍՆ ԾՈՒՂԱՐԿԵԼՈՑ ՋԻՇԽԱՆՆ ԱԻԱԳ ԱՌ ՂԱԶՆՆ ՅԱՐՏԻԵԼՍ

Իբրև սակաւ ինչ ժամանակք անցին՝ ի վերայ՝ ա-
ռաքեցին վ՚էսդն առ արքայն Իւրեանց, զոր Կ անն կո-
չէին, ընդ Հեռաւոր Ձանապարհս, յարևելս Հիւսիսոյ.
քանզի այսպէս առնէին, զամենայն մեծամեծս զոր կա-
մէին պատուել՝ առ նա յուղարկէին, և Հրամանաւ նո-
ցա առնէին զոր ինչ և գործէին. քանզի սաստիկ Հրա-
մանատարք էին արքային Իւրեանց: Ա.յլ և ինքն
իշխանն յօժարեաց գնալ, զի Թերևս ինչ գիւր լինի
իւր և երկրին. և ամենայն զոր աղօթս մատուցանէր
վասն նորա առ Ա՚ստուած՝ խաղաղութեամբ դարձուցա-
նել զնա այսրէն. զի ինքն բարի էր բնութեամբ, և ա-
ռաւել ևս զի յուսային եթէ գալստեամբ նորա շահես-
ցին ինչ: Ա՚րդ նորա երթեալ յանդիման լինէր մեծի
արքային, և ցուցանէր նմա զգիրս զօրապետից իւրոց,
և յիշեցուցանէր զպատճառս գալոյն առ նա, Թէ՝ ի
ծառայութիւն եկեալ է նմա: Իբրև լսէր զայն մեծ
արքայն՝ սիրով ընդունէր զնա և տայր նմա կին՝ ի կա-
Թար աղգէ, և յուղարկէր զնա յիւր աշխարհն. և գրէր
առ զօրավարն՝ տալ զնա՝ ի ձեռս նորա, և նովաւ նուա-
ձել զամենայն ապստամբսն, որ և եղև իսկ: Ո՚ր ի իբրև
եկն նա յաշխարհն իւր, և արարին զօրապետքն զհրա-
մանս արքային իւրեանց. եկին՝ ի հնազանդութիւն ծա-
ռայութեան՝ Շ ահնշահ որդի Ո՚ աքարէի, և Ա՚ հրաման
իշխանն, և որդին իւր Ա՚ղպուղայն, և Ի՚ատան՝ որ Ո՚ա-
լալն կոչէին՝ իշխան կողմանցն Խաչենայ, և այլք բա-
զումք. և զիւրաքանչիւր երկիր տային նոցա, և առ ժա-
մանակ մի ներուժն: Ա՚յս ապա սկսան Հարկապահան-
ջութեամբ և երթևեկութեամբ և զինուորութեամբ
նեղել զնոսա. սակայն Թէպէտ այսու ամենայնիւ և որ
առաւել քան զայս էր՝ նեղէին զնոսա, բայց զոք ոչ
ապանանէին: Ա՚յս իբրև անցին ամք ինչ՝ նեղեցաւ՝ ի նո-
ցանէ իշխանն Ա՚ւագ. զի կարի ժլատք էին, և ոչ կա-
րէր զամենեսեան ըստ միտս նոցա հաճել. զի ոչ միայն ո՛չ
բաւականայինն ուտելով կամ ըմպելով, այլ և պահան-

ջէին երիվարս և հանդերձս մեծապինս. զի կարի յոյժ ձիասէրք էին. վասն այսորիկ և քաղեցին զձի յամենայն երկրէ, և ոչ ոք իշխէր Ցամարձակ պահել զձիս և զջորիս, բայց Թէ՛ ի ծածուկ ուրեք վասն Հարկին զինուորութեան. զի ուր և գտանէին յափշտակէին. և աւելի ևս՝ յորում գտանէին զինշանն իւրեանց. և զոր առնուին՝ իւրաքանչիւր զօրագլուխ իւրով նշանով կընքէր, խարելով՛ ի մի անդամն. և Թէպէտ գնէին՛ ի նոցունց՝ և այլ ոք Հանդիպէր յայլմէ գնդէ, առնուին՛ ի նոցանէ, և պատժէին զնոսա իբրև զգողս, և զայս ոչ միայն մեծամեծ մարդիկն առնէին, այլ և փոքունքն ևս. և մանաւանդ աւելի ևս առնէին զայս յորժամ մեռաւ զօրավարն զօրուն, որում անուն էր Ցաղատա. քանզի սպանին զնա՛ ի գիշերի՝ որ Ա՛ուլհէտքն անուանէին. և վասն այսորիկ կոտորած սաստիկ եղև գերւոյն՝ որ էր՛ ի զօրան[1]. և այրս այս բարեկամ էր Ա՛ւագին. իբրև մեռաւ նա՝ Թշնամիք բազումք յարեան՛ ի վերայ նորա:

Յաւուր միում՛ ի տան Ա՛ւագին մի ոմն՛ ի նոցունց եկն՛ ի խորանն ուր նստէր Ա՛ւագն. և իբրև ոչ վաղվաղակի եւ ընդ առաջ նորա, վարոյիւք երիվարին՝ որ՛ ի ձեռինն նորա՝ ծեծեաց զգլուխ նորա. զայն տեսեալ սպասաւորաց իշխանին՝ բարկացան ընդ անարգանս տեառն իւրեանց, յարեան Հարկանել զայրն, և իշխանն արգել զնոսա՝ Թէպէտ զայրացեալ էր. և երԹեալ առն այնորիկ՝ որում անուն էր Ջ՛ ոջբուղա, առեալ ընդ իւր և այլ ընկերս՝ կամեցաւ՛ ի գիշերի սպանանել զիշխանն. և նորա գիտացեալ փախեաւ առ Թագուհին Ա՛ ըայց, զի դեռ ևս ապստամբ էր նա՝ գայԹեալ յամրապոյն ամրոցս յաշխարհին Ա՛ ըայց. և առաւել ևս այսպիսի անկարգուԹիւնս վասն այնորիկ գործէին, զի մեծ զօրավարն՝ որ գլուխ էր ամենեցուն, զոր Ցարմաղանն կոչէին, Համրացեալ էր՛ ի գիւէ և՛ ի ցաւոց. բայց զիշխանուԹիւն ոչ էին բարձեալ՛ ի տանէ նորա. զի կին նորա և որդիք Հանդերձ գործակալօք տանն նորա վարէին զիշխանուԹիւնն. զի Ցաղատն այսպէս Հրամայեաց, Թէ և մեռանի զոսկերս ևս շրջեցուցանել ընդ զօրուն, զի

[1] ՈՐ ԷՐ ՊՐ:

կարի յոյժ աջողած է այրդ և շնորհաւոր։ Եւ իբրև փախեաւ Ագաղն՝ տրտմեցան մեծամեծք, և մեղադիր եղեն առն այնմիկ, և յղեցին դեսպանս զկնի նորա, մի ապստամբիլ՝ ի նոցանէ. և երդնուին ոչ ինչ առնել նմա չար. ևետուն զաշխարհս նորա՝ ի ձեռն Շ ամսնշահի, իբր թէ եղբայր նորա իցէ. և զայս առնէին վասն առաւել հաւատարմութեանն։ Իսկ Ագաղն գրեաց Թուղթ և առաքեաց առ Ստանն, թէ Ի ծառայութենէ քումմէ ոչ եմ ելեալ, այլ՝ ի սպանանելէ փախուցեալ եմ, և անսամ քում հրամանիդ։ Եւ մինչ նա յամէր զգալն և միայր պատասխանւոյ մեծի Թագաւորին, սոքա ըզգանձ նորա որ Թագուցեալ կայր՝ ի բերդորայս՝ զամենայն հանին՝ ի խոյզ արկեալ. և դարձեալ պատգամ յղէին մի զկնի միոյ առ Ագաղն՝ գալ առ նոսա, զի երկընչէին յաղբայէն Իւրեանց։ Եւ իբրև եկն Ագաղն՝ ի զօրն՝ իսկոյն եկն հրամանն յաղբայէն առ զօրսն, զի մի ոք իշխեսցէ չար ինչ առնել Ագաղին. և Թուղթս առ Ագաղն, և պարգևս նմա՝ գալ հանդարձակ և մի երկընչել։ Այսպա մեծարանս արարեալ հանին արտաքս՝ ի զօրէն զարան՝ որք կամէին սպանանել զնա, և առաքեցին զնա. և զոմն մի գլխաւոր Տօնղուզ-աղա անուն՝ որ եկեալ էր ընդ նմա՝ հարկս պահանջել յամենեցունց, հրամանաւ Պ անին՝ առ Թագուհին Պ ըսայ Պուղուդան, գալ՝ ի հնազանդութիւն մեծի արքային. որոյ երթեալ առ նա յորդորեցին զնա կալ՝ ի հնազանդութեան, և մի երկնչել. և առեալ՝ ի նմանէ զօրս, եկին առ առաքիչն պայմանաւ և սիրով խաղաղութեան՝ Թագուհւոյն կալ՝ ի հնազանդութիւն, հանդերձ որդւովն՝ Պաւթաւ մանկամբ, զոր նորընծայ Թագաւորեցուցեալ էր. և նոցա ոչ ստել ուխտին։

ԻԸ.

ՎԱՍՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՈՐ Ի ԿՈՂՄԱՆՆ ԹԱԶԵՆՈՑ, ԵՒ ՎԱՍՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻՆ ՋԱԼԱԼԴՕԼԱՑ

Յուցաք սակաւիկ մի համառօտիւք որ ինչ գործեցաւ ընդ աշխարհս՝ ի մոլեկան զօրացն՝ որ Պաղթարն կոչի. ասասցուք արդ և վասն կողմանցն Կայէնոյ, և որ

ինչ անդ գործեցաւ. քանզի ընդ ամենայն կողմանս սփռեալ էին զասպատակս իւրեանց, այլ և վիճակաւ ևս բաժանեալ՝ հասին անդ ոմանք ի գլխաւորացն զօրու ծանու և զինու, և ամենայն ախիւ բանակին. գերեցին, և զբազումս սպանին որ յարձակ վայրան: Ապա մարտիւք մարտեան և ընդ գաղթականսն և որ յամուր վայրսն, զոմանս խաբէութեամբ և զկէսս բռնութեամբ ինջուցին. էր զոր սպանին և էր որ գերեցին. բայց յոլովքն այն էին՝ որ ամրացեալ կային յանկասկած վայրան՝ զոր վասն դժուարութեան տեղւոյն Հաւախաղաց կոչէին, որք ապաստանեալ յամուրսն անկասկած կային. բայց քանզի ի Տեառնէ էր բեկումն՝ յեղակարծում ժամու գաղտագողի ելեալ մտին յամուրսն, և որոյ Նարակ ետուն զբազմութիւնն, և զկէսն գահավէժ արարին. և ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն, և ապրիւնն առու եղեալ՝ իբրև զջուր երթայր. և յոչ ոք խնայեցին. և ոսկերքն ևս յետ բազում ժամանակաց իբրև զդերբուկս քարանց կուտեալ երևէին:

Ոգան և ի վերայ բարեպաշտ իշխանին Հասանայ՝ զոր Ղալէն կոչէին. քուերորդի էր սա մեծամեծ իշխանացն՝ Օաքարէ և Իւանէ, այր բարեպաշտ և աստուածասէր, հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասէր, Նգնող յաղօթս և ի խնդրուածս, իբր զայնս՝ որ յանապատս կային. զպաշտօն տունջեան և զիշերոյ անխափան կատարէր՝ ուր և լինէր, իբրև զվանորայսն, և յիշատակ յարութեան փրկչին յաւուր միաշաբաթոջ յոտանաւոր տքնութեամբ անցուցանէր անքուն. և էր յոյժ քահանայասէր և ուսումնասէր, և ընթերցող աստուածային կտակարանացն: Այլ և բարեպաշտուհի մայր սորա յետ մահուան առն իւր Վախթանկայ, զոր Տօնկիին կոչէին, կարգաւորեաց զերիս որդիսն իւր՝ զՂալէն, զՕաքարէ և զԻւանէ. չոգաւ նա ի սուրբ քաղաքն Երուսաղէմ և զամն բազում անդ կացեալ մեծաւ Նգնութեամբ, զարմացուցանէր զամենայն տեսողսն. քանզի ծախեալ զամենայն գոյս իւր զոր ունէր՝ յաղքատս և ի կարօտեալս, նման Հեղինէի կնոջն Ադիաբենոյ, և ինքն ձեռագործով իւրով կերակրէր, և անդ

մեռաւ. և Պետուած փառաւորեաց զփառաւորիչս իւր, լայս կամարաձև կացեալ ի վերայ գերեզմանին իւրոյ, առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւնս։ Այս իմաստուն այրս իբրև ետես զարձակումն անօրինաց, առ բացոյց զընակիչսն իւրոյ աշխարհին ի բերդն՝ որ կոչի Խօխանա–բերդ, ըստ բարբառոյն Պարսից. իբրև եկին պաշարել զնա՝ տեսին զի ոչ էր հնար առնուլ զամուրսն, կոչեն զնա սիրով խաղաղութեան առ իւրեանս, և նա իմաստաբար հաձեաց զմիտս նոցա. յետոյ չոգաւ և ինքն առ նոսա՝ բազում ընծայիւք, և մեծարանս արաբեալ նմա՝ տան զաշխարհս իւր ի ձեռս նորա, այլ և յաւելուածով. և հրամայեն նմա ամի ամի երթալ զինի նոցա ի գործ սպատերազմի, և միամտութեամբ կալ ի հնազանդութիւն նոցա. իսկ նա խոհեմաբար կարգաւորեաց զաշխարհ իւր, որ ինչ մարթ էր առնուլ ի պէտս երթևեկացն՝ որ գային առ նոսա, թէ կերակուր և թէ այլ ինչ, ինքն առնոյր և պահէր և յիւրմէն յաւելուածով տայր նոցա՝ յորժամ որ գային առ նա, և ոչ նեղէին զաշխարհս, բայց թէ առ նա գային. իսկ յայլ աշխարհս՝ զայս ոչ առնէին, այլ և ուր հասանէին՝ առնային ուրեք նեղէին զնոսա։

ԻԹ

ՎԱՍՆ ԵԿԵՂԵՑԻՈՑՆ ՋՈՐ ՇԻՆԵԱՑ

Շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածովք, գմբեթազարդ և երկնանման, տաճար փառաց Աստուծոյ, ուր հանապազ պատարագի գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի, ի վանքն՝ որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանա–բերդին, ի տեղի շիրմի իբրեանց. և յոլով ամս աշխատ եղեն ի նմա. և իբրև առ զաւարտուն, արար նաւակատիս մեծահանդէս առ ի օրհնել զեկեղեցին. անդ էր կաթուղիկոսն Աղուանից տէր Եղիսէ բազում եպիսկոպոսօք, այլ և մեծ վարդապետն Անանիա յոլով րաբունիւք. անդ էին և սուրբ վարդապետքն Յաչէնոյ Գրիգորիս և տէր Գրիգոր Հարազատք միմեանց. զորս՝ զարդարեալ էր Աս-

տուաճ երկու մարդով, և փոխեցան յաստեացս առ Քրիստոս, և կան՝ ի պահեստ՝ ի տանն աստուածապատ Խաղայի. առաջնոյն՝ ի Թուին վեցհարիւր ուԹսուն և հինգ, և Նղնիայի՝ ի վեցհարիւր ինսուն և ուԹ. և բազում քահանայիւք որ ասէին զԹիւ երիցանց եօԹն հարիւր: Իբրև կնքեցաւ օծմամբ, Ճաշ մեծ յօրինեալ՝ ինքնին իսկ ձեռօք իւրովք պաշտէր զաւազմեալսն. և տուրս տուեալ ըստ իւրաքանչիւր պատուոյ առատուԹեամբ՝ արձակէր զամբոխն [1]. որ եղև այս՝ ի վեցհարիւր ուԹսուն և ինն Թուին Հայոց, յաւուր մեծի տոնի վարդավառին: Ընդ ինեաց և կին նորա Պաւքան՝ ըզպաւիճն հրաշալի՝ ի ծուն եկեղեցւոյն. և ինքն զանձն ամենայն առաքինուԹեան տուեալ, Ճգնէր հանապազ պահօք և աղօԹիւք, և ընԹերցասիրուԹեամբ խոկայր զպատուիրանս տեառն՝ ի տուէ և՝ ի գիշերի, ըստ գրեցեալսն:

Ի.

ՎԱՍՆ ՅՈՒՑՄԱՆ ԿԵՐՊԱՐԱՆԱՑՆ ԹԱԹԱՐԻՆ ԲԱՑԱՑԱՑՈՒԹԻՒՆ ՍԱԿԱՒ

Վասն զի յօժարեցաւք մեք յիշատակ Թողուլ յազգս՝ որ գալոց են, քանզի ակն ունիմք մեք յուսովք փրկուԹեան՝ ի նեղուԹենէ աստի որ պաշարեալ ե ըզմեզ, սակաւիկ մի ցուցցուք քննասիրացդ՝ զկերպարանս և զնօսս նոցա: Նմին տեսլեամբ կերպարանաց դժոխատես և ահապնալուր. մերուս ոչ ունելով բայց սակաւուց ոմանց կամ՝ ի կլափն կամ՝ ի շուրԹն. ակն նեղ և արագատես, ձայնն նուրբ և սուր, բազմակեացք և տևողք. յորժամ անկանէր՝ յաձախ ուտէին և ըմպէին անյագ, և յորժամ ոչ անկանէր՝ ժուժկալք էին. ուտէին զամենայն կենդանիս, զսուրբս և զանսուրբս, և զմիսն ձիոյն առաւել մեծարէին, անդամ անդամ յօշեալ և կամ եփեալ և խորովեալ առանց աղի, և ապա մանր կտրատեալ և Թացեալ յաղաջուրն, այնպէս ուտէին. ոմանք՝ ի գուճ ըստ նմանուԹեան ուղտուց. կէսք

[1] ՕՐՕ. պամբոխեր:

նատելով ուտէին, և յուտելն հասարակ բաշխէին տե-
րանց և ծառայից. և յրմպելն զ'գմուզ [1] կամ զգինի՝
առեալ մի ոմն մեծ ամանով 'ի ձեռն իւր, և փոքր բա-
ժակաւ առեալ 'ի նմանէ՝ ցանէին ընդ երկինս, և ա-
պա յարևելս, յարևմուտս, 'ի հիւսիս և 'ի հարաւ. և
ապա իւր իսկ ցրոցէին զայն՝ սակաւ մի ըմպեալ 'ի նը-
մանէ, մատուցանէր աւագագունին. և թէ ոք բերէր
նոցա կերակուրս կամ ըմպելիս՝ նախ բերողին տային
ուտել և ըմպել, և ապա ինքեանք ուտէին և ըմպէին,
զի մի 'ի մահացու դեղոց ինչ զրժխոյին [2]: Ուշադիր և կա-
մէին կանայս առնէին. բայց զպոռնիկս ամենևին ոչ
ապրեցուցանէին ընդ իւրեանց կանայս. բայց ինքեանք
ուր և հանդիպէին այլազգեաց՝ անխտիր խառնակէին,
և գողութեան ատելիք էին, մինչ զի չարաչար մահուամբ
սատակէին. և պաշտօն ինչ ոչ գոյր առ նոսա կամ եր-
կրպագութիւն, բայց ստէպ զանուն Աստուծոյ յի-
շէին յամենայն իրս. զայս թէ զի՞նչ Աստուծոյ գոհա-
նային, և կամ թէ զայլ ոմն Աստուած կոչէին, մեք ոչ
դիտեմք և ոչ ինքեանք ևս:

Բայց սովորաբար զայս ասէին, և զարքայն իւրեանց՝
ազգային Աստուծոյ, զերկինս առեալ իւր բաժին, և
զերկիրս տուեալ Խաղանին. զի ասէին զՀանկզխանն՝
ՀՀայր Խաղանին, ոչ ծնեալ 'ի սերմանէ առն, այլ լոյս
ինն եկեալ յաներևութից և մտեալ ընդ երդս տանն,
և ասացեալ մօրն՝ թէ յղասջիր և ծնցես որդի ինքնա-
կալ երկրի. և յայնմանէ ասէին ծնեալ զնա: Ո այս
պատմեաց մեզ Աբիդոր Իշխանն՝ որդի մարզպանին,
եղբայր Աբլան-պէկին, Աարգսի և Ամիրային, յաղգէ
Ամիկոնէից, զոր իւր իսկ լուեալ էր յառնէ միօջէ
մեծէ և 'ի կարի աւագացն, որում անուն էր Ա ու-
թոն-նուէն, յաւուր միում յուսուցանել նորա զնա-
կապոյնս: Նա յորժամ ոք մեռանէր 'ի նոցանէ՝ կամ
սպանանէին, էր որ բազում աւուրս շրջէցուցանէին ընդ
իւրեանս, քանզի մտեալ դիւի խօսէր անդուստ բա-
զում բարբաջմունս, և էր զոր այրէին, և զկէսն թա-
ղէին յերկրի խորափոսիւք, և ընդ նմին դնէին զգենս

[1] Տես 'ի ծանօթ. էջ 138:

[2] Ա Հանացու դեղոյ ինչ դրժխոյին:

ինը, և զՀանդերձն և զսակին և զարծաւծն, որ ինչ բա-
ժին իւր էր. և Թէ 'ի մեծաց ոք լինէր՝ 'ի ծառայից և
յաղախնեաց ևս դնէին ընդ նմա 'ի գերեզմանի, զի
ապաս կալցի ասէին նմա. այլ և զձի ևս, զի ասէին անդ
պատերազմ սաստիկ լինել. զոր յիշատակ կամէին առ-
նել մեռելոյ՝ Ձեղքէին զփոր ձիոյն, և քարշէին ընդ
այն զամենայն միոն առանց ոսկեր, և ապա զփորոտին
և զսակերս այրէին հրով. և կարեալ զմորթն ձիոյն՝ իբր
Թէ զամենայն մարմինն ունիցի, սրեալ փայտ մի մեծ՝
Հարեալ ընդ որովայնն, և Հանեալ ընդ բերանն՝ այն-
պէս վերացուցանէին 'ի ծառ կամ 'ի բարձրաւանդակ
տեղի ինչ: Ա՛ւրէ և կանայք նոցա կախարդք էին, և զա-
մենայն ինչ Հմայէին, և առանց Հրամանի կախարդաց
և դիւթից ոչ երթային 'ի Հանապարհ ուրեք. բայց նո-
քա Հրամայէին:

Ա՛ւրէ և խօսք նոցա խժականք անծանօթք 'ի մէնջ [1]. քանզի կոչէին զանուն Ա՛ստուծոյ Ըանկրէ. և զմարդն՝ էրէ [2]. և զկին՝ եմ ափճէ [3]. և զանուն Հօր՝ էչա [4]. և ըզմօրն՝ ափա. և զեղբայրն՝ աղա. և զքոյր՝ ափաճէ. և զդուխ՝ ընբօն. և զաչս՝ նիպօն. և զականջս՝ ըիֆին [5]. և զմօրուս՝ սախալ. և զերեսս՝ յիւղնիուբ [6]. և զբերանն՝ աման. և զատամն՝ սիդոան—սխուբ [7]. զՀայն՝ օղնափ. և զեզն՝ օփար [8]. և զկով՝ ոանէն. զոչխար՝ ղօյնա. և զգառն՝ ղուրղան. և զայծ՝ եման. և զձի՝ նօրթ. զջոր՝ լուսա. զուղտ՝ նաաման. և զշուն՝ նօխա. և զգայլ ղինա. և զարջն այնիփա. և զաղուէս՝ հոնփան. և զնապաստակն՝ նօբղղա—նուալա [9]. և զՀաւ՝ նախնա. և զաղաւնին՝ փօփուէին. և զարծիւ՝ բուրբուխ—ղուշ. և զջուրն՝ ուսուան. զգինի՝ պորսուս. և զծով՝ նաուր պանդղ [10]. և զգետ՝ նօրան ուլանուս. և զԹուր՝ խօլփա. և զաղեղն՝ նմա [11]. և զնետն՝ ամա. և զԹագաւորն՝ ֆելիփ. և զպարոն՝ նուին. և զմեծ պարոն՝ էփա—նուին. և

1 Մեծաւ մասամբ Մուղալ բար-
բառոյ թարգմանք են բառքդ, այլ
դառնին և Թուրք և արաբիկ ձայնք:
2 Տպագ. հարէրէան:
3 Տպ. միայն ափճի:
4 ՕՕ. էչա: Տպ. էչի:
5 ՕՕ. ճիփ:
6 Տպ. յիօղ:
7 Ա. Գ. սխուրսիդոան: Տպ. սի-
դոան:
8 Տպ. ափար:
9 Թուին երկու անուանք Հոմա-
նիշք, զի յայլ ՕՕ. կամ մին կամ
միւսն գրի:
10 Տպ. միայն պանիղղ, որ և Թուր-
քացի պէնիղ. ՃՀ Ա:
11 ՕՕ. նմօ:

զերկիր՝ եւ երկան [1]. և զերկինք՝ փօփ [2]. զարեգակն՝ նաբան. և զլուսին՝ սարա. զաստեղս՝ հոսոսոպ–սարղա [3]. ըզլոյս՝ օրոր. և զխաւարն՝ սոյնի. և զգրապիր՝ էնինէլե. և զսատանայ՝ բառահոռա էլէպ [4]: Այս զայլ այսպիսի խաժական անուանս, զոր ’ի բազում ամաց մեզ անծանօթ՝ իսկ այժմ ակամայ ծանուցեալ: Այս գլխաւորք երևելիք, որք յառաջադէմք էին՝ այսոքիկ են. առաջինն մեծ՝ որ գլուխ և հրամանատուն էր ամենայն զօրուն՝ Ջարմանան–նուիրն, այր խրատարար և դատաւոր. և որ աթոռակիցք էինն նորա, Խորար–նուիրն, Գուրթուն–նուիրն, Տուրթուն–նուիրն և Ջաղատայն՝ որ զօրագլուխն էր զօրուն, զոր սպանին Աուլհեդքն. և այլ բազում գլխաւորք էին և անթիւ զօրք:

ԼՍ.

ՎԱՍՆ ՌԱԲԱՆԻՆ ԱՍՈՐԻՈՑ

Նախանձամղն Աստուած՝ որ զամենեցուն կեալն կամի՝ նա մարդասիրութեամբ իւրով երևեցոյց այր մի ’ի մէջ նոցա երկիւղած և աստուածապաշտ, ասորի ազգաւ, որ հայր անուանեալ ալքայինն նոցա՝ որ Խաղանն [5] կոչէին. (անուն նորա Աիմէոն, զոր Նաբան–աթա կոչէին.) ռաբան, ասորերէն՝ վարդապետ, և անուն՝ Թաթարերէն հայր. (իբրև լուաւ զանխնայ կոտորումն քրիստոնէից՝ որ ’ի զօրաց Նաթարին), մատուցեալ առ Պաննն խնդրեաց ’ի նմանէ Թուղթ առ զօրսն իւր, զի մի այնպէս առ հասարակ կոտորեսցեն զանմեղ մարդիկ, որք ոչ պատերազմին ընդ նոսա. այլ Թողուլ զնոսա զի ծառայեսցեն նմա: Իսկ նա զնոյն ինքն առաքեաց մեծ և երևելի շքով, գրեալ հրովարտակ առ զօրագլուխն իւր, զի ամենեքեան անսասցեն հրամանի նորա. և նա եկեալ բազում ինչ նպաստ եղև քրիստոնէից, Թափելով ’ի մահուանէ և ’ի գերութենէ, շինեաց և եկեղեցիս ’ի քաղաքս Տաճկաց, որ ոչ լիշեին զԱրիստոս ա-

1 Տպ. էլ:
2 Տպ. փօփայ:
3 Ա. Գ. սուրղ–հոսոպոպ: Տպ. սաղրա:
4 Ա. Գ. պբառելէպահոռա: Տպ. բառահոռաք:
5 Ուղիղն Խափան, յորմէ հանռոտեալ է Խան կամ Ղան:

նուանել. և առաւել ՚ի Մատրէժ և ՚ի Նախճաւան, ուր առաւել Թշնամիք էին քրիստոնէից, զի ոչ իշխէին յայտնի երևիլ կամ շրջել քրիստոնեայք, Թող Թէ եկեղեցիս շինել կամ խաչ կանգնել. իսկ նորա կանգնեալ խաչ և եկեղեցիս, և ժամահար հնչեցուցանել ՚ի տուէ և ՚ի գիշերի, և յայտնապէս տանել զմեռեալս ՚ի Թաղումն՝ խաչիւք, աւետարանաւ և մոմեղինօք և պաշտամամբ, որպէս օրէնն է քրիստոնէից. և զընդդիմացեալսն՝ մահու վախճանէը, և ոչ ոք իշխէր հակառակ կալ հրամանին նորա. այլ և ամենայն զօրք Մատաթարին պատուէին զնա որպէս զարքային իւրեանց, և առանց նորա ոչ ինչ խորհէին կամ առնէին. և մարդիկ նորա վաճառականք՝ որք ունէին զտամգա նորա, այսինքն զնշան և զգիր՝ համարձակ շրջէին ընդ ամենայն աշխարհս. և ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա, որք ասէին զանունն Մատաթային. այլ և ամենայն զօրագլուխք Մատաթարին ընծայ մատուցանէին նմա յաւարէ իւրեանց: Նա ինքն էր այր պարկեշտ վարուք, նոյնպէս ՚ի կերակուրս և յըմպելիս. յաւուրն միանգամ ճաշակէր ընդ երեկս սակաւ ինչ կերակուր: Ասէին այլ ազգք Գստուած ժողովրդեան իւրում ՚ի նշդեհումեան անդ՝ ՚ի ձեռն առնս այսորիկ, և զբազումս մկրտեաց նա ՚ի Մատաթարէ անտի. և ամենայն ոք վասն սքանչելի վարուց նորա և մեծաշուք պատուոյն՝ զարհուրէր և դողայր ՚ի նմանէ:

Նա յորժամ եղև այս գծագրութիւնն՝ որ յայսմ վայրի, ՚ի վեցհարիւր ինննասն Թուականին Հայոց, ՚ի Թագաւորութեանն Հայոց որ ՚ի կողմանս Արևելեցւոց՝ Յեզդեգերդայ, և ՚ի զօրապետութեան եղբօր իւրոյ Աթապատայ քաջի, և իշխանաց իշխանի Վոստանդնի հօր նորա, և ՚ի կաթուղիկոսութեան սուրբ աԹոռոյն Գրիգորի՝ Վոստանդեայ ծերունւոյ և առաքինւոյ, որ նստէր ՚ի Վայն–Հառմէական, և յարքեպիսկոպոսութեան տեառն Գարսղի եղբօր Թագաւորին Յեզդ, զոր պահէին փոխանորդ սուրբ աԹոռոյն կաթուղիկոսութեան. և Գ՝ղուանից կաթուղիկոսութեան տեառն Գերսէսի հեզոյ և մարդասիրի, որ յայս աւուրս նստէր ՚ի վանքն՝ որ կոչի Ստամէն, ՚ի գաւառն Գ՝ուխտորի, և յարքեպիսկոպոսութեան եղբօրորդւոյ նորա՝ տէր Յո-

վաննիսի՝ նոր ձեռնադրեցեալ, և ՚ի քառնակալութեան Հանուրցս՝ Ծաղիարին. և ՚ի ժամանակի կենաց մերոց՝ սմա քառասուն պակաս կամ աւելի։

Լ.Ը

ՎԱՍՆ ԱՒԵՐՄԱՆ ԹԷՈՂՈՒՊՕԼԵԱՑՆ

Արդ ՚ի սկսանել վեցհարիւրերորդի լիննանեւորդի և առաջներորդի Թուին Յայոց, գայր Հասանէր Հրովարտակն ՚ի Խաղանէն՝ առ զօրս և զօրագլուխս յաբևելս, զօրավար և առաջնորդ կացուցանել փոխանակ Ղարմաղուխն՝ որ Համրացեալ էր, զոմն մի ՚ի զօրացն՝ Բաչու–Խուրչի անուն[1]. նմա անկեալ վիճակ առաջնորդութեան, քանզի Հմայիւք վարէին։ Արդ իբրև ամ նա պիշխանութիւնն, իսկոյն զօր գումարեաց յամենայն ազգաց՝ որ ընդ ձեռամբ նորա, և գնաց յաշխարհն Յայոց, որ ընդ իշխանութեամբ սուլդանին Հռոմոց. և Հասեալ ՚ի Կարին գաւառ՝ պաշարեաց զնա, որ այժմ կոչի Թէոդուպօլիս[2]. և նստեալ շուրջ զնովաւ, առաքեաց զդեսպանս առ նոսա գալ ՚ի հնազանդութիւն. և նոքա ոչ կամեցան գնալ. այլ անարգանօք դարձուցին զդեսպանսն, և ինքեանք ելեալ ՚ի պարիսպն նախատէին զնոսա։ Իսկ նոքա իբրև տեսին թէ ոչ ողջունեցին զիաղաղութիւն, յամենայն կողմանց բաժանեալ զպարիսպ քաղաքին գլխաւորացն՝ զի փլուսցեն առ Հասարակ. և նոցա փոյթ յանձին կալեալ՝ կանգնեցին փիլիկուանս բազումս և կործանեցին զպարիսպն, և մտեալ ՚ի ներքս սրոյ Ճարակ տուեալ զամենեսեան անողորմաբար. և յափշտակեալ զինչսն և զստացուածսն՝ Հրով այրեցին զքաղաքն. և զի յոյժ բազմամբոխ էր քաղաքն ՚ի ժամանակին յայնմիկ՝ լցեալ բռնատունկիւք և տաճկօք, և այլ ամենայն գաւառն անդր Հաւաքեալ էր, անթիւ գոյին կտակարանք աստուածային զրոց մեծամեծաց և փոքունց. զայն առեալ այլազգեացն ծախէին քրիստոնէից՝ որ ՚ի զօրուն էին, զյաձախագինն

1 Պայծու՝ յ՚Եփսուգ տոհմէ Թաթարաց։

2 Տպ. պալբէոյ ընդ Էթէոդոսպօլիս, որ այժմ կոչի Կարնոյ գաղաւ։

ընդ դոյն գնոց. և նոցա խնդութեամբ առեալ սըփռէին յիւրաքանչիւր գաւառս՝ բաշխելով յեկեղեցիս և ի վանորայս. այլ և ի գերելոց անտի զբաղումս գնեցին զարս և զկանայս և զմանկտի, և զեպիսկոպոսունս և զքահանայս և զսարկաւագունս՝ որքան հնար էր գնեցին իշխանքն քրիստոնեայք, Աւագն և Շահնշահն և Աղպուղայն՝ որդին Վահրամայ, և Վրիդոր խաչենեցի՝ Առփինն որդին, որ էր այր երկիւղած ի տեառնէ, և զօրք նոցին. որոց վարձահատոյց նոցա Քրիստոս եղիցի. և զամենեսեան ազատ արձակեցին, թողուլ ի կամս անձանց ուր և կայցեն։ Եւ ոչ միայն թէ զքաղաքն Կարնոյ աւերեցին, այլ և զբազում գաւառս՝ յիշխանութենէ սուլտանին. և սուլտանն ոչ ինչ կարաց օգնել. քանզի զօղեալ թագուցեալ էր յերկիւղէ նոցա, այլ և վաղճանեալ էս ասէին զնա։ Իսկ զօրն Վրաց թար իբրև գործեաց նա զայս իր, դարձաւ բազում աւարաւ և խնդութեամբ յաշխարհն Աղուանից՝ ի կայս ձմերոց[1] իւրոց, յարգաւանդ և ի բերդն դաշտն՝ որ կոչի Պարզան, և անդ ձմերեաց։

ԼԳ

ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՈՐ ԵՂԵՒ ԸՆԴ ՍՈՒԼԴԱՆՆ ԵՒ ԸՆԴ ԹԱԹԱՐՆ

Ի ինչդեռ զետեղեալ յատպահովս նստեալ կայր զօրն Վրաց՝ ընդ դաշտս ամենայն Այոց և Աղուանից, գայր դեսպան ի Վ Լհաթատին[2] սուլտանէն՝ խրոխտ և սպառնական բանիւք, որպէս սովորութիւն է Տաճկացն. Թէ Ասպէս հաւանեցաք դուք աւերմամբ քաղաքի մերոյ՝ եթէ յաղթեցաք նմա, և զօրութեան նորա. քաղաքք իմ անթիւք են ի բազմութենէ, և զօրաց իմոց չիք հաւար. արդ կայ մնայ դու ուր ես. և ես ինքնին եկեալ տեսից զձեզ մարտիւ պատերազմաց։ Եւ այլ բազում բանիւք որ նման է սոցին՝ մեծամեծս փքայր. և զայս ասէր պատգամաւորն, թէ հանդերձեալ է սուլտանն զձմեռն որ գալոց է զկնի ամարանն՝ ի դաշտի աստ Պարզան ձմերել, կանամբք և զօրօք։ Իսկ նորա լուեալ

1 ՕՕ. ՅԱրոց։ 2 ՕՕ. Զխլաթին։

ոչ ինչ ըմբռռատանայր կամ խրոխտս ինչ խօսեցաւ ընդդէմ նոցա. այլ միայն զայս պատասխանի ետ գլխաւորն նոցա Յաչու–նուինն, եթէ Ա՝եծամեծս բարբառեցայք. սակայն ուր Ա՝ստուած տացէ զյաղթութիւնն՝ նմա լիցի: Եւ այսպէս մի զմիոյ կնի գայլին՝ դեսպանք՝ փութացուցանել զնոսա՝ի մարտ: Իսկ նոցա ոչ ինչ շտապեալ՝ այլ մեղմով գումարեալ զզօրսն իւրեանց, և որք ընդ ձեռամբ նոցա եկեալ յաշխարհս Նայոց, ՚ի խոտաւէտ վայրս՝ ամենայն ախիւ, գիրացուցեալ զերիվարս. և ապա մեղմով մօտ Հասեալ՝ ուր էր բանակ սուլտանին. քանզի և նա՚ի վեր էր եկեալ՚ի տեղւոջէ իւրմէ յաշխարհն Նայոց, որ ընդ իւրով իշխանութեամբ՝ հուպ՚ի քաղաքագիւղ մի՝ զոր Ումանկատուկն[2] անուանեն, անթիւ բազմութեամբ, կանամբք և հարճիւք, ոսկւով և արծաթով. և որ ինչ սպասք էին նորա մեծութեան՝ զամենայն ընդ իւր բարձեալ բերեալ էր. այլ և զբօսանաց ազագաւ՝ անուցեալ երէկ վայրի, և յայլոց սողնոց բազումս, մինչև՚ի մկունս և կատուս. զի այնպէս աներկիւղ կամէր ցուցանել զինքն զօրացն: Իսկ զօրավարն Յաչու ըստ խորագէտ իմաստութեան իւրոյ բաժանեալ զզօրս իւր՚ի բազում ասրաջս, ՚ի ձեռն գլխաւորաց քաջաց, և զեկամուտ զօրսն՝ որ յաղագս ազգաց եկեալս՝ յրուեաց, զի մի նենգ ինչ գործեսցեն, և ընտրեալ յամենեցունց զարիան և զքաջս՝ յառաջապահս կարգեալ ինքեանց, որք երթեալք հանդիպեցան զօրացն սուլտանին, և մարտուցեալք՚ի փախուստ դարձուցին զնոսա. փախեաւ և սուլտանն մազապուր, թողեալ զկահ և զկարասի անդէն՚ի տեղւոյն. և սոցա զհետ մտեալ կոտորեցին զզօրսն անխնայ սրոյ ձարակ տուեալ, և ապա դարձան՚ի կապուտ անկեղոցն: Իսկ իբրև եկին՚ի բանակին՝ ետես զի փախուցեալ էր սուլտանն և հարեալ զօրք նորա. ապա սկսան ասպատակ սիրել ընդ կողմանս կողմանս յաւարի առ-

1 OO. գայլ:

2 Անծանօթ է քաղաքագիւղս, այլ Թուի յանուն լերին մերոյ կոչեցեալ ըստ Թուրք ձայնի Ումկեհէպէ (մարգաւէտ լեռնանց). և սահմանքն են յարևմտից հիւսիսոյ Երզնկայ Ագչհրօվա, ըստ պատմութեանն Թաղիարաց, որ և Ալաքուհ կամ Քէօսէտաղ կոչէ զլեառնն: Ի Նոր Հայատառն (էջ 105) յիչի Ումկեն տաղ՚ի Գալքիւթ (Գայլ–գետ) վճակի:

նուլ, և քանդել զբաղում գաւառս, և ժողովել զոս-
կի և զարծաթ և զհանդերձս մեծագինս, ուղտս, ձիս,
և ջորիս և անթիւ անասունս. և եկին պատերկին զքա-
ղաքն Կեսարիա Կապադովկացւոց, և պաշարեցին զնա.
և զի ոչ էղեն ձեռնտու բնակիչքն, առեալ բռնութեամբ
'ի սուր սուսերի մաշեցին զբնակեալսն, և յափշտակեալ
որ ինչ 'ի նմա՝ և թողեալ ամայի զքաղաքն՝ եկին 'ի
Կեբաստիա. և զի (յառաջագոյն ձեռնտու էին լեալ
բնակիչք քաղաքին առ նոսա, և ընդ) առաջ երթեալ
ընծայիւք և պատարագօք՝ մարդոյ ինչ ոչ մեղան, այլ
յափշտակեալ մասն ինչ յաւարէ քաղաքին՝ յիւրեանց
անուն գրաւեալ զքաղաքն, վերակացուս կացուցեալ
դարձան։ Եւ եկին պաշարեցին զԱնկիւրէ, և մարտիւք
բազում մարտեան ընդ նմա, և բնակիչք քաղաքին
բազում հարուածս հասուցեալ 'ի վերոյ զօրացն Գա-
թարին, ապա սկսան խաբեութեամբ արտաքս կոչել
սիրոյ ազգաւ, և նոցա հաւանեալ եկին, քանզի ոչ
ունէին ուստեք օգնական. յորոց սուր 'ի վերայ եղեալ
կոտորեցին առհասարակ զարս և զկանայս, և սակաւ
մանկունս և աղջկունս ապրեցուցեալ՝ վարեցին 'ի գե-
րութիւն և ստրկութիւն։ Եւ այսպէս բազում գա-
ւառս և աշխարհս աւերեալ և գերեալ եկին 'ի քա-
ղաքն՝ որ կոչի Տիւրիակէ. իբրև գիտացին բնակիչքն ե-
թէ անհնար է զդէմ ունել նոցա պատերազմաւ, կա-
մաւ ձեռնտու եղեն նմա. որոց առեալ ինչս բազում՝
Թողին զքաղաքն առանց վնասու, և դարձան բազում
աւարաւ և մեծաւ խնդութեամբ 'ի կայս ձմերոց իւ-
րեանց՝ որ 'ի Նայս և որ 'ի Հ'ղուանս, ողջանդամ և ա-
ռանց վնասու. զի 'ի տեառնէ էր խորտակումն ամենայն
ազգաց և կործանումն նոցա։ Նայց քրիստոնեայքն որ
էին ընդ նոսա զինուորեալք՝ զբազում ազատեցին 'ի
գերելոցն, որ յայտնի և որ 'ի ծածուկ, զքահանայս և
զկրօնաւորս. մանաւանդ մեծամեծ իշխանքն Հ'ադգ և
Շ ահնշահ, Ա ահրամ և որդի իւր Հ'ղբուղային, և Նա-
չենեցիքն Ջ այլն և Նասանն և զօրք իւր և ազգա-
կանք, և Գրիգոր Գոմսին՝ որդի մօրքուեր Ջ այլին.
և այլ իշխանք և զօրք նոցին, ըստ կարի իւրեանց. և
այս եղև 'ի Թուին Նայոց վեցհարիւր ինսանուն և երկու։

ԼԴ

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՑՈՑ ՀՆԹՄՈՑ, ԵՒ ԶՈՐ ԻՆՁ ԳՈՐԾԵԱՑ[1] ԱՆԴ

Իբրև այս ամենայն գործեցաւ՝ ՚ի ԵԹՈՒՄ արքայն որ Ակիկեցւոց և այնոցիկ նահանգացն իշխեր, յորժամ ետես Թէ պարտեցաւ սուլդանն առաջի նոցա, առաքեաց դեսպանս առ նոսա, և պատարագս արժանաւորս, դնել նոցա ուխտ ընդ նմա խաղաղութեան, և նմա կալ նոցա ՚ի հնազանդութիւն. որ եկեալ ՚ի մեծ Դուռն[2] յանդիման եղեն Թաչու–նուինին և Ալթինայ խաթունին կնոջ Ղարմաղունին[3] մեծամեծ աւագանոյն, միջնորդութեամբ իշխանին Ղալալին։ Իբրև լուան զպատգամն արքային, տեսին և զընծայսն, խնդրեցին ՚ի նմանէ տալ ՚ի ձեռս նոցա զմայրն սուլտանին և զկինն և զդուստր, որ գաղտականութեան աղագաւ անդ փախուցեալ էին. և իբրև լուաւ արքայն ՚ի ԵԹՈՒՄ, յոյժ տրտմեցաւ, և ասէ. Ես էր ինձ եԹէ զորդին իմ ընդ Ես ևս խնդրէին կինէն՝ քան Թէ զնոսա։ Այլ քանզի երկնչէր ՚ի նոցանէ, զի մի մեծ չարեաց պատճառ լիցի այն, ակամայ կամաւ ետ ՚ի ձեռս նոցա, այլ և ընծայս բազումս այնոցիկ՝ որ եկեալ էին տանել զնոսա. որք բերեալ ցուցին Թաչուին և այլոց գլխաւորացն. որք իբրև տեսին ուրախ եղեն, և մեծարանօք յարգեցին զդեսպանս արքային, և կարգեցին նոցա ուղեկից և ընտիրս նոցա՝ զժամանակս ձմեռանն. զի ՚ի լինել գարնանայնոյն ընդ նոսին երԹիցեն յաշխարհն իւրեանց. հաստատեցին և սէր ընդ արքային, ետուն և գիր ըստ պետին իւրեանց, զոր Ես–տամղային[4] կոչէին. և այսպէս սպասէին ճեալով յեղանակին գարնան, յորում միւսանգամ երԹիցեն ՚ի վերայ սուլտանին և աշխարհի նորա։

1 ՕՕ. գործեցաւ։

2 Ի զօրանիստ բանակին. ըստ արևելեայց Դուռն կոչելով զնիստ նախարարն։

3 Ջարմուղին։

4 Այսինքն հրովարտակ կընքել նշանաւ մեծիմիչխանին։

ԼԵ

ԿԱՍՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՑ ԻՇԽԱՆԻՆ ԼԱՄԲՐՈՆՈՑ, ԵՒ ԶՈՐ ԻՆՁ ԳՈՐԾԵԱՑ ՆԱ ԸՆԴ ԱՇԽԱՐՀՍ ԿԻԼԻԿԵՑԻՈՑ

Ա.րքայն Լ|ևոն մինչ կենդանի էր՝ էր բերդ մի ՚ի նորա աշխարհին, յոյժ անառիկ, որում անուն էր Լ|ամբրոն, և իշխանն որ տիրէր բերդին՝ ապստամբեաց ՚ի նմանէ, որում անուն էր Հ֊եթում. և նա բազում անգամ ջանացեալ՝ ոչ կարէր նուաճել զապստամբն. ապա յետոյ խորամանկութեամբ խաբեալ զնա խնամութեան աղագաւ, որպէս թէ տացէ զդուստր եղբօր իւրոյ՝ որդւոյ նորա ( )ընի կնութեան, ըմբռնեալ զնա և զորդիս նորա չարչարեալ, ետուն ՚ի նա զամրոցն. և նորա առեալ եդ ՚ի նմա զմայրն իւր զտիկնանց տիկին. և գրեաց նզովս ոչ ևս այլ տալ զնա իշխանի ումեք, քայց միայն արքունի լծոյ, զի Հանապազ, ասէ, տեարք նորա ապստամբք են լեալ վասն ամրութեանն։ Իբրև վաղճանեցաւ Լ|ևոն և թագաւորութեան նորա իշխէր դուստրն Օ֊ապէլ, Կոստանդին իշխանաց իշխանն ընդ իւր միաբանեալ զկաթուղիկոսն և զայլ իշխանսն՝ թագաւորեցոյց զորդին իւր զ֊Հեթում մանուկ տիոմք. ածեալ զնա այր դստերն Լ|ևոնի, փոխանակ որդւոյ բըրինձին[1], զոր ըմբռնեալ եդին ՚ի բանտի. կամեցաւ Հեթում օգնականութեան իւր առնել զորդին Հ֊եթմոյ զԿոստանդին համանուն իւր, զորդին Հ֊եթմոյ՝ զանէրն իւր. և տայ ՚ի նա զ֊Ամբրոնն՝ զսեփականն իւրեանց, և եդ զնա թագադիր որդւոյ իւրոյ։ Իսկ նա յետ աւուրց ինչ ըստ հայրենի սովորութեան իւրեանց ապըստամբեաց ՚ի քուերորդւոյ իւրոյ յարքայէ Հ֊եթմոյ, և թէպէտ շատ ջանաց Կոստանդին հայր արքային, և ինքն իսկ արքայ՝ ոչ կարաց ածել զնա ՚ի հաւանութիւն հնազանդութեան. զի ձեռն ետ նա ՚ի սուլտանն Հ֊որումոյ, և այսպէս կայր նա ապստամբ։

Իբրև՝ փախեաւ սուլտանն Հ֊որումոյ ՚ի Կ|ահաթարէն, արքայն զամենայն գիւղս և զանդաստանս Լ|ամբրոնին

1 Իշխանին Անտիոքու։

արար ՚ի ներքոյ հրամանաց իւրոց, և միայն ինքեան նմա թերդն՝ որ ապստամբեալ էր. ապա յղեաց Կոստանդին դեսպանս առ արքայն՝ խնդրել զհաշտութիւն և տալ զորդիս իւր արքայի ՚ի ծառայութիւն, և ինքն ինքեան ՚ի բերդին, և արքայն ոչ կամեցաւ. երկիցս և երիցս յղեաց, իսկ արքայն և հայրն ոչ կամեցան։ Ապա գնաց Կոստանդին ՚ի Կօնն, և առեալ զօրս սուլտանին Հռոմոց, որք յայնժամ թշնամիք էին արքային, զի ետ զմայր սուլտանին ՚ի Մահաթարն, զայ յեղակարծում ժամու մինչ դեռ ցրուեալ էին զօրքն արքունի յիւրաքանչիւր տեղիս, և մտեալ յաչխարհն աւերեաց զբազում աւանս և զօգարակս այրմամբ և սպանմամբ և գերութեամբ, զբազում քրիստոնեայս կոտորեալ. և այսպէս բազում չարիս անցուցեալ ընդ աչխարհն քինանահանութեամբ։ Իսկ արքայն իբրև ետես զայն չարիս՝ ժողովեալ զզօրս իւր՝ արիութեամբ հասեալ ՚ի վերայ բազմութեանն, սրոյ ձարակ ետ զամենեսեան. և փախեաւ միայն ապստամբ իշխանն և սակաւք ընդ նմա. այսպէս եօթն անգամ հարաւ ՚ի նմանէ, ապա եմուտ յամրոցն իւր և ոչ իշխեր համարձակիլ յաջ կամ յահեակ։

ԼԶ

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԴԱՒԹԻ

Բազմահնար և խորամանկ ազգն Կետտղաց՝ յոլով անգամ յղեցին առ Թագուհին Վրաց Թուղուդան՝ գալ առ ինքեանս, կամ տալ զորդի իւր զՎաւիթ մանուկ՝ զօրօք՝ առ նոսա։ Իսկ նա զայս ոչ արարեալ՝ տայ սակաւ զօրս, և ՚ի ձեռն Ջաքին որդւոյ Իւանէի՝ որ էր ընդ Մահաթար զօրուն, յղէ առ նոսա ասելով. Վ՚ինչև է եկեալ դեսպանն իմ՝ զոր յղեցի առ Խաղանն արքայ զսուլտանն Հռոմոց՝ զփեսայ նորին, և առին զկոլովս ՚ի քաղաքաց նորա, առաքեցին առ նա պատգամաւորս՝ զիշխանն Վ ահրամ, գալ նոցա ՚ի հնազանդութիւն. և նա ՚ի գալն իւր եթէր ընդ իւր զորդին Վխորգայ Ա-

ձայ արքային Վրաց, զեղբօր [1] Աուզուդանայ Թագուհոյն, զոր յղեալ էր զՀետ գտեալն իւրոյ առ սուրտանն Յոռոմոց դաւով, զի կորուսցէ զնա, զի մի՛ նեղիցէ ինչ գործեսցէ Թագաւորութեանն. և էր առ սուլտանին յարգելս։ Եւ բերեալ Վ ահրամայ ծանոյց Թագաւոր զօրուն, Թէ որդի արքայի մերոյ է, և տարապարտ զրկեալ է՛ի տերութենէ իւրմէ. իսկ նորա Հակառակք հօրաքեռ իւրոյ Թագաւորեցուցեալ զնա՝ հրամայեցին ըստ օրինի քրիստոնէից՝ օծանել զնա, և կալ ամենայն իշխանաց հօր նորա նմա՛ի հնազանդութեան, և նըստել՛ի Տփխիս քաղաքի։ Եւ առեալ զնա մեծամեծ իշխանաց՝ որք էին հնազանդ Թագաւորին, Վրաց՝ որ զօրավարն էր, և Շ ահնշահի որդւոյ Օ աքարէ, և Վ ահրամայ և որդւոյ իւրոյ Զաքարէին, տարեալ՛ի Ծխիձա՝ կոչեցին և զկաթուղիկոսն Վրաց, և օծին զնա Թագաւոր. և էր անուն նորա Դաւիթ։ Իսկ հօրաքոյր նորա Աուզուդան՝ իբրև լուաւ զայն փախեաւ Ա՛խիսգէձ, և՛ի Անդէձ [2] որդւովն իւրով միւս Դաւիթ. և յղեաց դեսպանս առ միւս զօրագլուխս Թագաւորին՝ որում անուն էր Թամաղ [3], ազգական զանին, որ իշխէր՛ի վերայ այնց զօրացն՝ որք էին Աուզք, և՛ի Դարբանդ, և Օսկէթք [4]. քանզի նա էր յետ զանին, կալ նմա հնազանդ. և նա հրամայեաց նմա նստել՛ի Տփխիս. և սոքա ոչ ընդդիմացան, քանզի ընդ աւուրս ընդ այս մեռեալ էր զանն։

ԼԷ

ՎԱՍՆ ԿՈՉԵՆՑՆ Ի ՄԵԾ ԴՈՒՌՆ ՋԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ ԱՂՈՒԱՆԻՑ ՋՏԻՐ ՆԵՐՍԷՍ

Եւ մինչդեռ զետեղեալ նստեալ կայր զօրն Թագաւոր՛ի Ձմերոցս՛ի գաշտն Հայոց և Վ ղուանից, Աստ բանն ասացի՝ զոր վերագոյն յիշեցաք՝ լուաւ վասն կաթուղիկոսին Վ ղուանից, և ծանոյց Աղթինայ խաթուն

1 Տպ. վեբբօղրէբ։
2 Վ. 119։
3 Վ. 149։
4 Օսկէթք են Ասլանք։ Պապուխ Նստեր՛ի սահմանս Դարբանդայ և իշխեր կովկասեան և հիւսիսական կողմանց, յորս դասէ և ըզ Ռուս։

նին՝ կնոջն Յարմուզանին, որ վարէր զիշխանութիւն նորա՝ յետ հանդրանալոյն, եթէ գլխաւորն քրիստոնէից կողմանցս այսոցիկ՝ գաղտութեամբ նստեալ կայ, և ոչ տեսանէ զմեզ. յղեցին առ նա, թէ ընդէր դու միայն ոչ տեսանես զմեզ. ել վաղվաղակի առ մեզ. և թէ կամաւ զայդ ոչ առնես՝ ակամայ ածցուք զքեզ նախատանօք: Իսկ նա քանզի նստէր ի գաւառն Ասիաւորոյ, ի վանքն որ կոչի Ստամբէ, և էր ընդ իշխանութեամբ Ասպին, առանց զնա հարցանելոյ՝ ոչ իշխեաց երթալ, զի մի ծանր թուեսցի երթ նորա. թագեաւ ի նոցանէ, և ասաց պաշտօնէիցն պատճառել՝ թէ ոչ է ի տան, այլ երթեալ է առ Ասպն. և նոքա երկիցս և երիցս յղեցին՝ սպառնալեօք գալ առ նոսա:

Ապա հրաման առեալ յԱսպէն չոգաւ առ նոսա ի գաշտն Ասուղան, ընծայիւք ըստ կարի իւր. բայց ոչ հանդիպեցաւ անդ Նաբանն, զի գնացեալ էր նա ի Թարվէժ. և գնացեալ ի մեծ գուռն յանդիման լինի Աղթինայ խաթունին. և նորա սիրով ընկալեալ զնա, և մեծաւ մեծարանօք պատուեաց՝ ի վեր նստուցեալ ամենայն մեծամեծացն, որք հաւաքեալ էին առ նա յազգս հարսանեաց որդւոյ նորա Նօրա-նուիին, քանզի առեալ էր զդուստր ուրումն մեծի Ոլոթուն-նուիին կոչեցեալ, կին որդւոյ իւրոյ, և զդուստր իւր տուեալ էր կին միւս աւագագունի՝ Ասուռ-նուին կոչեցելոյ. և տօն մեծ էին առ նոսա աւուրքն այնոքիկ ուրախութեան հարսանեացն. վասն որոյ ասէ ցկաթուղիկոսն. Ի շնահաւոր աւուր եկիր. և նա իմաստաբար պատասխանեաց, թէ Այս ես իսկ ընտրեցի զաւուրս զայսոսիկ ուրախութեան ձեր, և ապա եկի. իսկ նա յանձնեաց զնա և զպաշտօնեայս նորա յեղբարսն իւր, ի Սադեղաղայն և ի Նորգոյն, որք էին քրիստոնեայք հաւատով, նորոգ եկեալ յաշխարհէն իւրեանց, մինչ ինքն հոգասցէ ըստ հոգս հարսանեաց իւրոց, զաւուրս ուրախութեանն. որք առեալ մեծաւ պատուով պատուէին զնա: Այս իբրև սակաւ մի պարապեցաւ ի հոգոցն, ետուն նմա պարգեւս և էլ—տամզայս, զի մի ոք նեղեսցէ զնա. և ետուն նմա Պողալ-Ղաղաթար[1] առաջնորդ, որ տարեալ շրջե-

ցոյց վնա յաշխարհն Ա՛ղուանից՝ ի վիճակն իւր, զի յո-
լով ժամանակք էին՝ որ ոչ նա և ոչ այլ ոք յառաջ քան
զնա՝ ոչ իշխէին շրջել՝ ի վիճակս իւրեանց, յաղագս
արեանաբղխու և գազանաբարոյ ազգին . . : Ուստ նորա
շրջեալ ընդ վիճակեալսն՝ դարձաւ անդրէն խաղաղու-
թեամբ՝ ի տեղի իւր՝ ի վանսն Կամսի :

Լ.Ը

ՎԱՍՆ ԱՍՊԱՏԱԿԵԼՈՑ ՆՈՑԱ ԸՆԴ ԿՈՂՄԱՆՍ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ
Ի ՎԵՐԱՑ ԲԱԶՈՒՄ ԳԱՒԱՌԱՑ

Դարձեալ՝ ի մտանել ամին երկրորդի փախուցանե-
ցաւ զՈ իշադատին սուլտանն, խաղացին գնացին ընդ կող-
մանս Ումնուենեաց՝ ի քաղաքն Կղաթ. և առեալ զնա
տան՝ ի ձեռս Վասլայ՝ քուեր Ա՛ւագին, որ էր յա-
ռաջ տէր լեալ քաղաքին այն, մինչ կին էր նա Ա՛ղբատ
Ա՛հլքին, և գերեցաւ՝ ի Կորազմեն սուլտանէն Ջա-
լալադնէ, և՝ ի նոցունց դարձեալ առաւ գերի, և առա-
քեցաւ[1] առ ղանն, և եկաց անդ զկոլով ամս. և իբրև
առաքեաց Թագուհին Վրաց Ռուզուդան զիշխանն
Չամադօլա՝ դեսպանութեամբ առ ղանն, ՚ի դարձին
իւրում Չամադօլան խնդրեաց՝ ի ղանէն զՈամԹի. և
եբեր ընդ իւր հրովարտակօք՝ ի ղանէն, զի զոր ինչ
լեալ էին նորա՝ մինչ կին էր Ա՛հլքն Ա՛ղբափին՝ տացեն
նմա. և նոքա արարին զհրամանս արքային իւրեանց.
տան՝ ի ձեռս նորա զՎլաԹ և զգաւառսն որ շուրջ ըզ-
նովաւ. և ինքեանք աստիճակ սփռեալ ընդ կողմանս
կողմանս, ՚ի Ա՛ինջազետս Ա՛նդուց, Ա՛միԹ և Ա՛ռհա
և՝ ի Ա՛ծբին և՝ ի Ճ ամբին երկիրն[2], և յայլ բազում
գաւառս, և դարձան ունայն. զի ԹԷպէտ ոչ ոք եկ ընդ-
դէմ նոցա պատերազմաւ, սակայն վասն տօԹոյն ամա-
րայնոյ բազումք՝ ի նոցանէ խորշակահարք եղեալ մե-
ռան, մարդ և երիվար. և եկեալ՝ ի տեղի ինչևանի իւ-
րեանց՝ դադարեցին զաւուրս ձմերան. և տան հրաման
վասն շինուԹեան քաղաքին Կարնոյ. և ժողովեցան

1 ՕՕ· ոգեյաւ:

2 Շամ, Դամասկոս:

ցրուեալքն ղօղեալք և զերծեալքն ի գերութենէ. կո-
չեցին և զեպիսկոպոսն քաղաքին՝ զտէր Սարգիս, զոր
եբեր իշխանն Շահնշահ՝ որդին Օ աքարէ. չոգաւ և
վերստին շինեաց զաւերեալ և զկործանեալ քաղաքն։

ԼԹ

ՎԱՍՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ ՀԱՑՈՑ

Իսկ առաքինի կաթուղիկոսն Յայոց Կոստանդին,
իբրև ետես զաւերն աշխարհին Յայոց և զտառապանս՝
զոր կրէին ի հարկահանացն և ի զօրաց Մահմադրին,
և մտախոհ եղեալ խմացաւ թէ մեղքն են այսմ ամե-
նայնի պատճառ, զի ամենայն մարդ խնամով խոկայր ի
գործել զհաճոյս կամաց նորա։ Օ ի կարգ ամուսնու-
թեան սուրբ օրինացն բարձաւ, և հեթանոսօրէն ա-
րիւն ընդ արեան խառնէին, զազգականս առնելով, և
զոր կամէին թողուին, և զոր կամէին առնուին. և
պարկեշտութեան պահոց փոյթ ինչ ոչ ունէին, և ընդ
հեթանոս խառնակէին անխտիր. նաև որ մեծն է քան
զամենայն չարիս՝ եպիսկոպոսք արծաթով առնէին ձեռ-
նադրութիւն, զպարգևս Աստուծոյ անարժանիցն տա-
լով. և զմանկունս և զտգէտս՝ որ ոչ մարթէին ուղղա-
կի խօսել առաջի մարդկան, միջնորդ ընդ Աստուած և
ընդ մարդիկ կացուցանէին, և անարժան քահանայք և
պոռնկեալք, և յայտնի բոզս նստուցեալ՝ առնէին քա-
հանայութիւն. և այլ բազում չարիս՝ զոր գործէին ի
մեծամեծաց մինչև ցփոքունս. (ըստ այնմ՝ թէ քահա-
նայք) և ժողովուրդք ի միասին յիմարեցան, և կշտամ-
բիչ ոչ ոք։ Ա ման այսր պատճառաց փութացաւ գրել
Թուղթս շրջաբերականս, և կանոնս հաստատուն և զհանձա-
րեղ վարդապետն[1], որ աղօթականութեան աղաչաւ
երթեալ էր յԱլուսաղէմ երկրպագել սուրբ տեղեացն
տնօրէնութեան. և շրջեալ ընդ սրբոց տեղիս, և եկեալ
յաշխարհս Ալիլիկեցւոց՝ առ քրիստոսասպասակ արբայն

1 Պակասէր յՕՕ. անուն վար- դնէ և տպագիրն, պատմիչն և ու-
դապետիդ՝ որ է Վարդան, որպէս սումնասիրիչ Կիւրակոսի։

Ձեռամ և առ նորին եղբարս, չոգաւ և առ սուրբ կաթուղիկոսն. զոր տեսեալ ուրախացաւ յոյժ, և առ իւր պահեր յոլով ժամանակս, սիրով կապեալ ընդ նմա. և զի ոչ կամէր երթեալ մեկնիլ 'ի նմանէ, վասն այսորիկ արձակեաց զնա և յիւրոց սպասաւորաց ընդ նմա, գլբեալ յամենայն քաղաքս, յաւանս և 'ի վանորայս եւ լևեղիս, (և առ) իշխանս փառաւորս, զի մի անփոյթ առնիցեն զսահմանացն եդելոց, որ վասն հոգւոց նոցա փրկութեան. և զի ծերացեալ էր նա՝ զվարդապետն փոխանակ նորա ընդունիցին. և գրեալքն առ 'ի նմանէ են այսոքիկ։

Խ

ԹՈՒՂԹ ՏՆԱՌՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՑ ԵՐՋԱՆԵՐԱԿԱՆ

Ազգմամբ խնամոյն ամենակալ Հոգւոյն սրբոյ, այս գիր ձեռին իմոյ Կոստանդեայ ծառայի Քրիստոսի և ընտրհօք նորին կաթուղիկոսի ամենայն Հայոց, զոր գրեցի յուսով Հոգւոյ իմոյ առ Հայաստանեայսդ՝ ընդհանուր լրման կողմանցդ արևելից. նախ առ սրբազան եպիսկոպոսունդ, և ապա առ երկնագումար վանորայդ, և առ մենաստանս Աստնաւորաց քրիստոսազգեցից, առ քանին սպասաւորսդ և միայար եղբայրութիւնդ, այլ և առ քրիստոսասէր իշխանդ՝ և որք ընդ ձեռամբ ձեր են, պատուական քահանայքդ և քրիստոսասէր ժողովուրդք, արս և կանայս, ծերս և տղայս, և առ ամենայն հօտդ Հոգւոյ. որ էք ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոյ առաքելոցն Պետրոսի և Պարզողիմէոսի, և մեծաւաստակ նահատակին մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զորս ետ ինձ ողորմութիւնն Աստուծոյ յորդեգրութիւն հոգևոր և պարգևական զաւակս. զորս և ողջունեմ երկնաւոր պարգևօք եռափափագ կարօտիւք և ծնողական սիրով, 'ի հովանիս խնամոյ ամբարապահ սրբոյ Հոգւոյն, և զօրութեամբ աստուածընկալ սրբութեանցս և ընտրհայն առաքելական աթոռոյս. այլ և ընդ իս առեալ զամենայն սուրբս 'ի բարեխօսութիւն՝ աղօթեմ առ Աստուած՝ արտաքոյ

լինել ձեզ, ամենայն անախորժելի[1] պատահարաց կըրկին տեսակօքն։

Վ՛իտութիւն լիցի ձեզ, զի պարտական գթովք հոգամք զձեզ զտիս և զգիշեր, և հաղորդիմք կրից ձերոց, խնդականաց՝ ըստ հայրենի օրինաց և հրամանաց սրբոց պատուիրանաց. որ և ըստ յաձախելոյ յանցանաց մերոց՝ ի վաղ ժամանակաց յաձախեաց և տրտմականն մասն. ՝ի հարուածս գաւազանի հարմանն Ք՛ստուծոյ, և արբոյց մեզ Ցեր մրուր ուշաբարձ և արտասուս չափով, ՝ի վիշտն զոր կրեաց աշխարհդ այդ. կոտորումն և կողոպուտ եկեղեցեաց՝ հոգևոր գանձուց, մարմնական տանց և գոյից, մանաւանդ ՝ի գերութիւն գառանցն Քրիստոսի, մերոց աղեաց և անդամոց, յորոց վերայ՝ կարօտացաք գետաբուխ արտասուաց, և խաւարատան սենեկացն, թաւիել զդառն կսկիծ վիրին մեր ՝ի խորոջ ժողովեալ։ Այլ քանզի ՝ի տեառնէ էր պատուհաս, որոյ բազում են գթութիւնք[2] նորա. ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ և ոչ ըստ անօրէնութեան մերում վճարեաց մեզ, այլ պահեաց մեզ գթութիւն նորա միացորդ նշխար յիշատակի, և սերմն զաւակի աճման հայկական[3] զարմից. և ձիւռ օրհնութեան ողկուզաց հայրատունկ որթոյն քրիստոսարկու ուռոյն. որոյ համբաւ աճմանն և զարդացման ոդեկաց մեր միացեալոց, կարկատման և վերստին շինուածոյ աւերեալ տեղեացդ, առ սակաւ սակաւ թափէ զտրտմութիւնն մեր, և փարատէ զմութ սգոյն ՝ի մտաց մերոց, և կազդուրեալ միխթարիմք, և կանգնեալ գոհանամ զՔ՛ստուծոյ, հարկանողն և բժշկողն ձեռին նորա՝ տալով օրհնութիւն յաւիտեանս։ Այց և երկիւղ կասկածանաց առաջիկայ ժամանակին ոչ թողու զիս. քանզի նոյն նիւթ բարկութեանն Ք՛ստուծոյ մեզքն մեր՝՝ի մեզ հաստատեալ է յեկամուտ չարեաց որոմանցն ցանողի՝ գտանելով առ մեզ յեկեղեցիս, և առ իշխանս և իշխեցեալս, գտանիւք արտաքոյ կանոնաց սահմանաց հարցն մերոց՝ առաքելոյ և հայրապետաց. և վասն այսորիկ հարկի մեծապատնի ցանկացայ խնդրել Ձանապարհ, և

1 ՕՕ· ախորժելի։
2 ՕՕ· որոյ բազմաթիւքն նորա։
3 ՕՕ· հայբոյան։

անձամբ գալ և զգուշութիւն առնել հօտիս իմոյ Քրիստոսի Աստուծոյ յիս վստահացեալ ժողովրդեանդ, ապաչանօք և բանադրութեամբ և սպառնալեօք, և ամենայն հնարիւք հանել ի ձէնջ զտեսակ ատելի դիմաց չարին որ են մեղք, և երկնել զձեզ վերստին ցաւովք՝ մինչև նկարեսցի Քրիստոս ի ձեզ։

Ունիմ և այլ պատճառ հարկաւոր գալստեան իմոյ, զի այր ծեր եմ ես, և հասեալ ի դրունս գերեզմանի, և կարօտիմ ի կատարածի կենաց իմոց տեսանել զոր-դեակս իմ ի ձեր. տալ ձեզ զյետին օրհնութիւն, և պահանջել ի ձէնջ աղօթս և պատարագս Թոշակի Ճանապարհի իմոյ առ Քրիստոս, և լինել ձեզ լինձ յիշատակ բարի անուանի վարուք և անսգալ կրօնիւք առաջի Աստուծոյ։ Այլ քանզի ժամանակս այս կասկածոտ և սխալական՝ այսմ լինձ ոչ ներեաց անձամբ գալ և կատարել զաւաղճանս իմ, այլ այլօք հնարիւք հաստատեաց Աստուած զսիրտս իմ զարհուրեալ. և առաքեցի առ ձեզ զարդիւնական վարդապետն զԱրգան փոխանակ անձին իմոյ, զոր ետ լինձ նախախնամութիւնն Աստուծոյ, ձգելով առ իս ի կողմանց ձերոց ի հինգ ամաց հետէ. զոր իբրև տեսի՝ Ճանաչեցի ըստ կարի, կապեցի զդա միջնորդութեամբն Աստուծոյ ընդ անձին իմոյ կենօք և մահուամբ, մեծաւ հարկիւ և սիրով բևեռեալ ընդ իս յաւիտեան։

Իսկ վասն մեծ և հարկևոր կարեաց երկոցունց՝ զոր գրեցի վերագոյնն, առաքեցի զդա առ ձեզ յուսալով Աստուծոյ ընուլ զտեղի իմ, ոչ ի դորա կամաց և ի խընդրոյ, այլ յիմմէ սրտէ և յօժար կամաց և ի հրամանէ հարկեալ. և որպէս անդամ ի կենդանի մարմնոյն՝ ցաւօք հատեալ է, որ ունի (զիմ) սիրտ և զգան՝ յամենայն իրս ի պատեհս պատուիրանացն Աստուծոյ. և գայ բերէ առ ձեզ սահման չափաւոր և դիւրագործ քաղեալ ի կանոնաց և ի հրամանաց Հարցն սրբոց, ի պէտս եկեղեցականաց և աշխարհականաց։ Ո՛ր աղաչեմ բարեխօսութեամբ սրբոցն, և փոխան ասեմ զանձն իմ, զի ընդունիցիք զդա սիրով, և զհրամայեալս գրովք սրբովք. և կատարեցէք ի փրկութիւն ձեզ և յանդատապարտութիւն յաւերնին Աստուծոյ։ Իսկ եթէ ստուգիցէ ոք և ոչ ընկալցի և կատարեսցէ, մեղս առցէ

աննեղելիս, և արիւնն իւր և կորճանումն աչխարհի՝ պահանջեսցի ՚ի նմանէ առաջի ատենին ահաւորի և մեծին։ Նայց մեծ յուսով եմ յԱստուած չընդդիմանալ ումեք իւրում կենաց և փրկութեան. և ՚ի հաւանեցոյդ պահանջեմ աղաչանօք՝ փոխել իւրաքանչիւր ումեք զթուղթս կանոնական. և պահել զգուշութեամբ յաւիտեան, և ամենայն ումեք դիտելի առնել, և զիմ առաքեալ թուղթս ձեռնագրել ամենայն եպիսկոպոսաց, և առ իս առաքել ձեռօք իմոյ վարդապետիս։ Եւ և ամենայն պաշտելի և երկրպագելի սրբութիւնդ՝ ի մուխ երեսօք ընկալցի երկրպագութիւն և աղօթս, դիմօք Ա արդան վարդապետիդ իմ, և ձերով։

Նոյնպէս ընկալարուք և դուք որպէս յիմմէ սրտէ և ՚ի հաւատոյ, քերանով դորա զՀայցուածս աղօթից և պատարագաց՝ զոր մաղթեմ յուսով ՚ի մեծէ և փոքուէ, քաւութիւն պարտեաց յանցանաց իմոց. քանզի որպէս Հարք պարտին որդւոց գութ և օրհնութիւն, նոյնպէս և որդիք օրէնս ունին՝ զպարտս Հարց վճարել. և ես լի հաւատով տարածմամբ ձեռաց իմոց խնդրեմ յԱստուծոյ միջնորդիս կենսակիր սրբոցս, և յաղօթս երանելոյ Աստուածածնին, զի ամենայն աստուածաշարժ պարգեւք և օրհնութիւնք և շնորհք, զոր ետ Հայրն երկնաւոր Որդւովն և սուրբ Հոգւովն աշխարհի և եկեղեցւոյ, և եկն ՚ի Հարց յորդիս, այն ամենայն եկեսցէ և հանգիցէ յոգիս ձեր, յեկեղեցիս և յաշխարհս ձեր և յիշխանութիւնդ, և ՚ի հոգիս ննջեցելոց ձերոց, և ՚ի հանգիստ նոցա, և կենդանեաց՝ ՚ի փրկութիւն հոգւոյ և մարմնոյ. յաճումն և ՚ի բազմանալ նորոյս Յարայելի՝ քրիստոսական հօտիդ, առաւել քան զբազմութիւն և զպայծառութիւն աստեղացն. օրհնեսցին երկնաւոր շնորհօք ամենայն գոյք ձեր՝ կայուն և անկայուն. պարարտասցին և պտղաբերեսցեն անդաստանք և այգեստանք ձեր. և ամենայն պտղաբերք երկնաւոր ցօղովն և շնորհօք Աստուծոյ լցեալք, երկինաւորք և երկրաւորք. եղիցի եղիցի։ Աղջ լերուք, և անյարմար գրոյս անմեղադիր լինիք, զի փափագեցի իմովս ձեռամբ գրել առ ձեզ,

Կրեաց և միւս Թուղթս կանոնականս եկեղեցական-
նաց, և առաքեաց ընդ ջրջաբերական Թղթին՝ ի ձեռս
նոցունց այսպէս։

ԽԱ.

ՍԱՀՄԱՆՔ[1] ԿԱՆՈՆԱԿԱՆՔ ՏԵԱՌՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ՀԱՑՈՑ

Կոստանդին ծառայ Քրիստոսի և ընտրեալ նորին
կաթուղիկոս ամենայն Հայոց, օրհնութեամբ ողջու-
նիւ և սիրոյն Աստուծոյ՝ ծանուցանեմ լսման եկե-
ցւոյդ Հայաստանեայց, վճռակելոց ընդ իշխանութեամբ
գաւազանի սրբոց առաքելոց Յակոբոսի և Յարդողի-
մէոսի, և մեծաւաստակ նահատակին Քրիստոսի Կրի-
գորի, և մերում կրսերութեանս։

Յրաման է այս առաքելադիր, որ՝ ի տարւոջն երեք
անգամ առաջնորդք եկեղեցւոյ ժողովով տեսանեն ըզ-
կարգս եկեղեցւոյ, Թէ որպէս ունիցին զսահմանս յա-
ւիտենականս՝ զոր Հոգին սուրբ հաստատեաց, զպա-
կասն լնուլ, և զեկամուտ որոմն խլել։ և այս պատուի-
րանս՝ ի բազում ժամանակաց խափանեալ եղև, յա-
ղագս ազգիս ցիր և ցան լինելոյն, և հեռաւորու-
թեան և մոխաղրայ[2] Հանապարհացն։ Այլ զի իրա-
ւունք արդար դատաստանին Աստուծոյ յիշատակ արար
անկարգութեան և անիրաւութեան աշխարհի, յետ
բազում երկայնմտութեանն և ներողութեանն՝ ար-
բոյց զբաժակ բարկութեան իւրոյ յոլովից ազգաց և
ժողովրդոց, ընդ որս և մեք գտաք դատապարտք, և
տուաք տոկոսս ազգակցօք մերովք, և Հոգևոր ուստե-
րօք և դստերօք։ քանզի աշխարհ՝ որ լի էր մեղօք և ա-
նիրաւութեամբք՝ լցան արեամբ և արտասուօք և դիա-
կոյտ ոսկերօք կոտորուածովք գազանակուր եղելոց։ և
մնացեալքն՝ ի սրոյ՝ անընտել Հանապարհաւ վաՀառա-
կուր եղեն յազգս հեռաւորս, և փախուկքն մեր և ա-
զատք որդիք Աիոնի և գաւիթք Քրիստոսի, զուգա-

1 ՕՕ· Սերմանք։

2 Մոխաղիաբէ՝ արաբերէն լսի վտանգ, վտանգաւոր։

կշիռքն ոսկւոյ և ականջն պատուականաց, իբրև զաղբ
անպիտան և ընկեցիկք և արհամարհք և անծանօթք
եղեն. այլ և երկրպագելի և պատկառելի նշանք և ըս-
պասք սրբութեան՝ անարգեցան, և անարժանից ձե-
ռօք յանարժան [1] պէտս վարեալք, հանդերձ տապալ-
մամբք քաղաքաց, և ամայութեամբ գաւառաց, զորս
ոչ ոք կարէ զբովանդակն պատմել և արժանապէս ող-
բալ: Այլ քանզի ողորմութիւնն Աստուծոյ եթող սա-
կաւ սերմն կենաց, և զաւակ յուսոյ՝ յաշխարհդ արևե-
լից, յիշատակ առ մեզ երախտեացն Աստուծոյ, որ [2]
վանս աղօթից նախնեաց մերոց սրբոց՝ միսիթարութիւն
մեզ վանս բազում գթութեան իւրոյ. և էք դուք ժո-
ղովրդապետք այսօր և ժողովուրդք, վանորայք, քա-
ղաք և գաւառք. յետ բազմադիմի վշտացն զոր կրե-
ցէք, և դոյ ի ձեզ օրհնութիւն և յոյս աճման և վե-
րացման ի փառան առաջին. և էք Քրիստոսի և մեր
սեփհական ժառանգութիւն և պարծանաց զաւակք,
և յանձնեալք մեզ ի պէտս հոգևորս. վասն որոյ ի վե-
րայ բազում ալտաասուացն՝ զոր հեղաք վասն ձեր ի
բեկման աւուրս և յաւերման և կոտորման մեղսաբեր
սրոյն, և այսօր միսիթարիմք ձեօք մնացեալովք, և գոհա-
նամք զԱստուծոյ. այլ միշտ զարհուրիմք և դողամք
յերկիւղ կասկածանաց նոյն անցիցն՝ զոր կրեցաք. քան-
զի և նոյն պատճառք բարկութեանն Աստուծոյ գտա-
նին և այսօր առ բազում, որ ի կեանք և վարք արտա-
քոյ կամացն Աստուծոյ և կանոնաց հրամանաց: Վասն
որոյ յառաջ քան զերիս ամս գնացաք մեր դրան սպա-
սաւորացս լրմամբ, հանդերձ ամենայն մերձակայ գա-
ւառաց եպիսկոպոսօք, յաշխարհն Ափխազեցւոց, առ
քրիստոսասպասակ Թագաւորն մեր Դեթուամ. և նորին
հրամանաւ և ձեռնտուութեամբ ժողովեցաք զեպիսկո-
պոսունս, զվարդապետս, զմիանձունս և զվանից առաջ-
նորդս, զիշխանս և զիշխեցոյլս՝ արս երևելիս. և արա-
րաք հանդէս մեծ, քննեցաք զպատուէր և զհրամանս
Աստուծոյ, և զԱստուծոյ մերձակայից՝ առաքելոց և հայ-
րապետաց, և գտաք զմեզ բազում մասամբք մոլորեալք
և դատապարտեալք և անպատասխանիք. և որքան կա-

1 Ա. անարժանաց: 2 ՕՕ. այլ:

ըացաք աւաղեցաք զմեզ և ողբացաք. և զկնի յոլով քննութեան՝ ամենեցուն կամակցութեամբ և ձեռնադրով՝ գրեցաք սահման և կանոն չափաւոր և դիւրընթաց, և կարելի գործելոյ, ի զօրութենէ գրոց հաւատոյ, և ուխտեցաք առաջի Աստուծոյ և հրեշտակաց և մարդկան. յանձն առնուլ ամենայն կարողութեամբ զեղեալ սահմանս, և եղաք զայս մեր յօժարութիւն[1] Աստուծոյ. և մնացաք ժամանակի թէ հնար գոյ գալ անձամբ և այդր, ընդ զփաւիաք կարօտութեան իմոյ առ ձեզ, և պահանջել ի ձէնջ ձեռադիր սահմանիդ եղելոյ, որպէս և մեք. և զի չեղև հնար՝ առաքեցաք զսահմանեալ կանոնսդ, չափաւոր քարտիսիւ, և պահանջանեմ ի ձէնջ վկայութեամբն Աստուծոյ, և ընդհիւ և զօրութեամբ առաքելական աթոռոյս և աստուածընկալ սրբութեանցս, և առաջի առաքելոց սրբոյ, և սուրբ Ուսաւորչին մերոյ, զոր առնիցէք անթերի։ Այս եղեալ սահմանն այս է.

Ա. Ամենայն ձեռնադրութիւն յեկեղեցիս՝ որ է պարգեւք Հոգւոյն սրբոյ, զոր տայ արժանաւորաց, առանց արծաթոյ լիցի, ըստ կանոնաց. զի այն ախտ Յուդայի և Սիմոնի կախարդի է, որ խոստեցան և ոչ միաբանեցաւ ընդ նոսա չնորհք, որ ի տեղիս տեղիս վանն աղքատութեան լուծեալ է և տկարութեան[2];

Բ. Այսուհետև արժանաւորքն միայն և գիտունքն առցեն զաստիճան եպիսկոպոսութեան, մեծաւ քննութեամբ և վկայութեամբ և թեմին կամակցութեամբ. առանց հաշառու. և հասակաւ մի պակաս քան զերեսուն ամն։

Գ. Յակ առաջինն գործ եպիսկոպոսին՝ որ զուսուցիչս և զուսումնականս ուսման եկեղեցւոյ՝ ինքն սահմանեսցէ մեծաւ հոգաբարձութեամբ, անգայթակղ, և գիտունք և ուսումնականք ուսուցիչք լինիցին տղայոցն։

Դ. Այսպա զեկեալսն ի չափ հասակի՝ և ուսմամբ և սրբութեամբ՝ ածցէ յաստիճան, վկայութեամբ անձանց իւրեանց և անուցողացն, առանց արծաթոյ՝ տիօք մի պակաս քան զքսանհինգ ամն երիցն, և սարկաւագն քսան ամ։

1 ՕՕ. օգնութեամբն։ 2 Տպ. փգիպոսութեան։

Ե. Իսկ քահանայքն զպսակն և զկնունքն նօթա-
թեամբ արասցեն յեկեղեցիս և հաղորդեսցեն. բայց
թէ մահու երկիւղ իցէ երեխային՝ յորժամ և իցէ ա-
րասցէ, առանց դրամի։

Զ. Ի մեծայն քահանայապետութենէն, կնունք, պը-
սակ և թաղումն, երկիւղիւ լիցի, առանց զրուցի և ծա-
ղու, մեծաւ յուսով, և աղօթիւք մերձակայիցն։

Է. Ի ձաղանն հաստատուն լիցի և անշարժ, և վա-
րագուրաւ ծածկած, զի մեծ է խորհուրդն։

Ը. Ի պսակն ընտրութեամբ արասցեն, վեց ծննդովք
հեռացեալք յազգակցութենէ արեան. և փեսային մի՛
պակաս քան զչորեքտասան ամն, և հարսն զերկոտասան։

Թ. Յօտար[1] աշխարհէ եպիսկոպոս, վարդապետ,
կամ երէց, կամ գերոյ տէր, առանց թեմի եպիսկո-
պոսին մի՛ շրջեսցեն կամ շինեսցեն, այլ նորա հրամա-
նաւ՝ ըստ պատշաճի. բայց ձիմարտացն մի՛ հակառակես-
ցեն և ընդդիմասցին. և եթէ յանդգնի ոք՝ նզովեալ
եղիցին։

Ժ. Գրոց[2] դասատացք բազմաց վկայութեամբ լիցի,
որ լինին գիտունք և ամենայն գրոց վարժք և տեղեակք
և փորձ ամենայնիւ. նոյնպէս և գրոց աշակերտքն ընտ-
րութեամբ նորին և առաւել փորձիւ, և վկայութեամբ
կատարելոց։

ԺԱ. Նա հրամայեսցէ եպիսկոպոսն զսուրբ գիրս ե-
կեղեցւոյ գրել արուեստաւորաց, և գիտնոց և ուղղա-
փառաց։

ԺԲ. Երկիցս անգամ շրջեսցի եպիսկոպոսն ի տա-
րւոջն յիւր թեմին, և հանդէս արասցէ իւր հօտին, և
սուրբ և գիտուն քորեպիսկոպոս դիցէ, որ զեկեղեցւոյ
դատաստան ըստ կանոնաց առնել մարթասցի, երկիւ-
ղած և անագահ։

ԺԳ. Ընտր և գիտուն խոստովանահայրս կարգեսցեն,
որ յամէն կիւրակէի առանց դրամի խոստովանութիւն
կոչեսցէ վասն շաբաթուն յանցանացն, և քահանայքն՝
խոստովանահարցն հրամանաւ զիւրեանց ժողովրդեան
զարժանաւորն հաղորդեսցեն՝ առանց դրամի, նոյնպէս
և զհիւանդս առանց դրամի։

1 ՕՕ. Ջօփոյ։ 2 ՕՕ. Որոց։

ԺԴ. Օ՚Հաղորդն առանց բուրվառի և մոմեղինի մի՛ տարցեն առ Հիւանդն, այլ մեծաւ երկիւղիւ. իսկ ժողովրդեան չեն իւրեանց Հրամանքն ումէ և կամին ծուխ լինել, այլ որպէս եպիսկոպոսն Հրամայեսցէ։

ԺԵ. Լ՚սաւել ջան տարցին եպիսկոպոսք և քորեպիսկոպոսք՝ զպոռնիկս, զընացողս և զՀմայս, և զամենայն յանցաւորսն՝ երկիւղիւ գեՀենին ՚ի դարձ ածել. իսկ զանդարձն՝ մարմնաւոր պատուհասիւ և Հոգևորաւ խրատել և տուգանել, մանաւանդ զայնպիսիսն՝ որ այր և կնոջ մէջ մտցեն, կամ բոզ ունիցին կին, կամ ըզկինն Թողուցուն զօրինաւոր և առ բոզս երԹան, կամ ատելութեան պատՃառաւ Թողուն զկանայս առանց բանի պոռնկութեան. զայնպիսիս առանց խղճի անողորմ խրատեսցեն տուգանօք. և Թէ պատուաւոր է մարդն, և ընդդէմ ասէ եկեղեցւոյն օրինաց լըբութեամբ, Թագաւորն խրատեսցէ զալանի [1] մեղքն, և իշխանքն զմեղադրանքն. եԹէ ոչ առնեն զայս և նզովք [2]. և Թէ կինն լըբի և մարդ խաբէ, կամ ազապ կամ կանամբի՝ խրատեսցէ երէցն։

ԺԶ. Լ՚մենայն պահք՝ ըստ կանոնաց առանց ձկան և ձիԹոյ և գինւոյ եղիցի, բայց ՚ի Հարկէ Հիւանդութեան, առաւել աղուՀացիցն և ուրբաԹ և չորեքշաբաԹին, որ Ա՚Քրիստոսի չարչարանաց աւուրք են. որ զայս լուծանէ՝ տուգանեսցեն և յաղքատս տացեն, և պահօք վՃարեսցեն Լ՚ստուծոյ։

ԺԷ. Ա՚յսր քան զամենայն և յառաջ քան զամենքդ, զայս եմք Հոգւացեալ առաջի արքային Յ՚ԵԹովմոյ և Հօր իւրոյ Կոստանդեայ, և ամենայն իշխանօք, և բանադրանօք բանադրեալ՝ որ յամենայն տեղի մեծ և փոքր՝ յիշողաւապ [3] դնեն, ՚ի դարպաս, ՚ի գիւղ, ՚ի քաղաք, ՚ի բերդ, զԼ՚ստուծոյ բարկութիւն շարժողն և զաննեբելի անօրէնս՝ որ անարգեն զՀաւատս, զստեղծողս, զկնունք, Հրեշտակք, քահանայ, բերան, երես, գեբեզման, և այլ այսպիսի. զնոր բուսեալ չարիսդ, զայնպիսեացն զլեզուն Հատցեն, և կամ ծակեսցեն և լար

1 Ա՚յսինքն՝ զյայտնի։
2 Ա՚յսպէս ՕՕ. յորս պակաս կամ աղաւաղութիւն։
3 ԵԹէ ստոյգ իցէ ընԹերցուածդ՝ Թուի զքննիչս կամ գաւառս առնել յիշողաւուաց։

'ի ներս ածցեն, և ծեծելով 'ի շուրջ ածցեն օր մի, և ըստ գոյին տուգանս առցեն և յաղքատսն տացեն։

ԺԸ. Եթե քահանայ գտանի 'ի վերոյ գրեալ մեղս՝ կրկին պատուհասիւ պատժեսցի, հանդերձ կարգիւն։

ԺԹ. Քահանայ որ զատ եկեղեցւոյ գործոյ՝ այլ գործս առնէ, նօտարութիւն կամ որտորդութիւն, զժողովուրդն 'ի բաց առցեն, նոյնպէս զանուսումն երիցանց, մինչ աղէկ ուսցին, առցեն և յանարժանից։

Ի. Քահանայն 'ի տարւոջ ժողովեսցէ յեկեղեցւոջն զարս և զկանայս՝ առանձինս, և որիշ զկուսան աղջկունս, և որիշ զմանր տղայսն. և ըստ իւրաքանչիւր պատշաճի խրատեսցէ՝ աղաչանօք և սաստիւ, և իմացի զիւրաքանչիւրոցն վարքն, և դիտեսցէ հանապազ. և թէ ինքն չիցէ բաւական՝ 'ի ձեռն այլ կատարելոց առաքեսցէ, որպէս ասէ տուրքն Քանաս յիւր կանոնքն։

ԻԱ. Ժողովրդականք յօժարութեամբ և աղաչանօք տացեն զհաս քահանայիցն, յամ արմտեաց պտուղս, և զկարգեալ բաժին մատաղին և պասկին ընծայիւք, և թաղման հանդերձ, և ժամու դրամ. ոչ զին պատարագին, այլ երիցուն հանդերձ և կերակուր, որ աղօթից և պատարագի և եկեղեցւոյն պարապէ։

ԻԲ. Երիցունք ընդ ժողովրդեանն ծառայեսցեն զեպիսկոպոսն, սահմանեալ հասիւն և ընծայիւ ըստ պատշաճին։

ԻԳ. Եպիսկոպոսքն ծառայեսցեն զՀայրապետական աթոռն, կարգեալ հասիւն և ընծայիւք արժանաւորօք, ըստ կանոնաց. զի սուրբ Ղուսաւորիչն գրեալ է, որ քահանայն զժողովուրդն տասանորդէ, և եպիսկոպոսն զքահանայն, և Հայրապետն զեպիսկոպոսունս. արդ թէ և զայն չառնէք՝ զչափաւորն արարէք. և ըզպակասն զոր գրեցաք՝ խնդութեամբ տուք իբրև զօրհնութիւն և մի իբրև զագահութիւն. որ աթոռքն հաստատ և անկար[1] մնան, և եկեղեցիքն պայծառ, և Աստուծոյ օրհնութիւն խառնի յարդիւնս արդարութեան ձերոյ. զի Աստուծոյ տայք և ոչ մարդոյ, և մարդոյ մի երախտէք։

ԻԴ. Այն երկու աղօթքն՝ յորոյ վերայ սուրբ Աս-

1 Այսպէս յՕՕ. Թուի անխոթոփ կամ անխոթիփ։

տուած ասեմք, զկիսադքն 'ի Հայր և 'ի Որդի և 'ի սուրբ Հոգին աւարտեք, զի մի Աղերսողութեանն վերայ Թըւեսցի խաչն. զկատարած՝ լաւ ճանիցին՝ ասել պիտի. "Զոր ինչ 'ի բարձունս առաքեսցուք ամենաղօր պերճութեանդ, այժմ և ինչ,,: Ո Ճոհաննա՛կին վերջքն. "Լինիցի պաճար և քնաքարան ապրուածոյին շնորհացդ, և գոհութեամբ ճառաբերեսցուք զքեզ Հօր,,. և այլն:

ԻԵ. Ի Ֆռանկաց գրեալ են առ մեզ, Թէ զՏեառնեղբօրն հրաման ընդՀէր ոչ առնեք, զհիւանդն՝ ժամուն օրհնել, ձիւթով օծանել[1], որ Թէ մեռանի՝ օծումն լինի Թաղմանն. և Թէ ապրի՝ լինի քաւութիւն մեղաց, և պատճառ առողջութեան. և գիտէք որ Յակնեցին Յովհան, որ զատեալ է զմեզ յաշխարհէ[2], գրեալ է որ առնենք, և պարտ է առնել, և արարէք ստուգիւ: Միայն զգուշասցի քահանայն, և սակաւ օրհնեսցէ՝ որ աւելի չգայ, և նզովք առցէ Աստուծոյ և 'ի մէնջ, և լինի պատճառ գայթագղութեան. զայս պատեհ տեսաք և գրեցաք յետոյ և հարկաւոր: Աղէ լեցէք տեղրամբ:

Որ զայս չափաւոր բանիքս գրէ և պահէ, հասկացնէ և գործովք կատարէ՝ պահեսցէ նմա տէր Աստուած զգուշութիւն և զողորմութիւնն իւր. և որ կորուսանէ և արհամարհէ՝ յանցաւոր լիցի առ մեզ, և առ աղքայն. և Աստուծոյ ատենին տացէ պատասխանի ամենեքին:

Եւ եկեալ Սարդան վարդապետն, և որք ընդ նմա առաքեալք 'ի կաթողիկոսէն՝ յարևելս, և շրջեալ ընդ գաւառս Հայոց, 'ի յեպիսկոպոսս և վանորայս և յիշխանս, և տուեալ ամենեցուն զկանոնական հրամանս, և պահանջեալ յամենայնէ ձեռագիր հաւանութեան սահմանին եդելոյ: Եւ զի ամենայն ոք խոստովեալ էր 'ի Հնմարտութենէն և ըմբռնեալք ախտիւ ագահութեան և արծաթասիրութեան, ծանր Թուեցաւ հրամանն. բայց սակայն ոչ իշխեցին արհամարհել, այլ 'ի վերին երեսս մեծարեցին. և ետուն ձեռագիր երդմամբ և նզովիւք առնել զհրամանն. եպիսկոպոսն Սարնոյ քաղաքի Սարգիս.

1 Ցակ. Ղուկ. կի. Ե. 14:
2 Ըստ յոլովից անատոյգ վար. կածոյ են բանքդ զՅովհաննէ խմաստասէրէ:

և եպիսկոպոսն Ընտոյ միւս Սարգիս. եպիսկոպոսն Կարուց Յակոբ. եպիսկոպոսն Ընջնայ Ա անական և Կրիկոր. և եպիսկոպոսն Յանբերդայ Ա կրտիչ. և եպիսկոպոսն Յաղբատայ Յամազասպ. և այլ եպիսկոպոսունքն որ ի կողմանս կողմանս. և գլխաւոր վանորայքն՝ Անահին և Դեատիկ և Ցաւարծին [1], և Ակեսառուս, և Յաւուց Ձոռ, և Ա.յրի վանք, և Յովհաննու վանք, և Սաղմոսայ վանք և Յոռոմոսի վանք, և որ շուրջ զնոքօք՝ Նա և կաթուղիկոսն Ընդուանից տէր Ներսէս, և եպիսկոպոսն Յովհաննէս՝ զոր Տուեցին կոչէին, և մեծ հրեշակաւոր վարդապետն Ա անական, և իշխանաց իշխան Ընդգն, և այլ իշխանք։ Նա առեալ զայս գիր հաւատոյ Թեան իմաստնոյն Ա արդանայ՝ (առաքէ) առ կաթուղիկոսն Կոստանդին, ի Ա.յն Հռոմէական. և ինքն եկեալ ի ձորն Այանոյ ի միայնարանն իւր, զոր տուրք Ընդրէն կոչէին՝ հանդէպ անառիկ բերդին Այանոյ, և անդ դադարեալ ուսուցանել զբազումս, որք աշակերտէին նմա վարդապետական բանին։

Նա ի գալ երկրորդ ամին՝ յորժամ վեցհարիւր լինոսուն և վեց էր Թուականն Հայոց, առաքինի կաթուղիկոսն Կոստանդին առաքէ յարևելս եկեղեցեացն ընծայս՝ մետաքսաւէջս ի կերպասուց պէսպէս գունոց, և մեծագինն նափորտս ի սպաս պատարագին սրբոյ, ի ձեռն Ա.եոդոսի սպասաւորի իւրոյ՝ ի պատուաւոր վանորայս, և շրջաբերական նամակ շնորհի առաքելոյն Ա.ադէոսի [2], տալ նմա վիճակ զշրջակայ գաւառն և զքաղաքս, և ոսկի յոլով ի շինուԹիւն գաւԹին՝ զոր շինէր վարդապետն Յովսէփ, յետ աւերածոյն որ ի Ա.ուրքացն, և ի հինին Ա ղբայ, քանզի յոլով ժամանակս անբնակ էր ի մարդոյ, և ամայի։ Նա Յովսեփայ երԹեալ առ զօրագլուխ Ա.աԹարին, որում անուն էր Ընգուն–նուին [3], որոյ իջևանքն իւր յաւուրսն ամարայնոյ հուպ էր ի գեղջն առաքելոյն Ա.ադէոսի, և նորա հրամանաւ սրբեալ զեկեղեցին և նաւակատիս կատարեալ՝ շինեաց զվանս, և ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս. և այրն Ա.աԹար ընդարձակեաց զՀանապարհս յամենայն կող-

1 Որ յաձախ Հաղբծին գրի։
2 Որ ՅԱրտազ գաւառի։
3 Տպ. Անոփոխակ նոին։

մանց, անեղկիւղ գալ ուխտաւորացն՝ որ ընդ մէջ զօրացն նորա. պատուէր հրամանի տուեալ՝ մեծաւ սաստկութեամբ՝ մի զոք զգուել և նեղել որ կամիցին գալ. և ինքն սիրով խոնարհէր առ նոսա. և բազումք՝ ի նոցունց գային և մկրտէին զուստերս և զդստերս իւրեանց, և բազում այսահարք և չիւանդք բժշկէին, և փառաւորեր անուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Այլ և ամենայն զօրքն Յաղթար ոչ էին թշնամի խաչի և եկեղեցւոյ, այլ յոյժ պատուէին, և ընծայս մատուցանէին, քանզի նախանձ հակառակութեան առ նոսա ոչ գտանիւր։

Խ Բ

ՎԱՍՆ ՀԱՐԿԱՀԱՆԱՑՆ՝ ՈՐՔ ԵԿԻՆ Ի ՂԱՆԷՆ

Իբրև առ զմեծ թագաւորութիւնն Յաղթար զօրուն՝ որ յաշխարհն իւրեանց՝ զանն Գիւուգ, իսկոյն առաքեաց զարս հարկապահանջս ի զօրս իւր՝ որ ի կողմանս և յաշխարհս՝ որ հնազանդեցան նոցա, առնուլ տասանորդս ամենայն ստացուածոց զօրուն, և հարկս ի գաւառացն և ի թագաւորութեանց, որք նուաճեալ էին նոցա, ի Պարսից, ի Տաճկաց, ի Յունաց, ի Յոյոց, ի Վրաց և Աղուանից. և հարկահանք՝ արք խիստք և յափշտակողք, անուն միոյն Ալդուն, որ ամենին իշխէր, և երկրորդին Նուղա, որ չարագոյն էր քան զայն Նուղայն՝ որ յաւուրս Գափրին իսմայելականին՝ եկն ի Յայս և աւերեաց զբազում աշխարհս. նմանապէս և այս Նուղայս եկեալ ի զօրսն Յաղթար, մտանէր ի տունս աւազանոյն, և զոր ինչ ախորժ թըւէր՝ առնոյր անխնայ, և ոչ ոք իշխէր ասել ինչ նմա. զի ժողովեալ էր առ իւր արս սրիկայս ի Պարսից և ի Տաճկաց, որք անխնայ գործէին զգործս խակութեան, և թշնամիք էին առաւել քրիստոնէից. վասն որոյ չարացուցին զնա ի վերայ բարեպաշտ իշխանին Գալստեանին[2]. որ ըմբռնեաց զնա ի մեծ դրանն առաջի ամենայն աւազայնոյն, և ընդ բազում պատժոք զնա

1 OO · առեալ։

2 Որ էր իշխող Խաչենոյ։

արկեալ՝ քակեաց զանմարտնչելն բերդս նորա, զոր [illegible]ոյ-
ախանայ բերդ՝ կոչէին՝ ըստ Պարսից լեզուին, և ըզ-
Դեղ և զՕխրանաքարն, և զայլ ամրոցս նորուն. և
այնպէս յատակեաց զնոսա՝ մինչև հետք անգամ ոչ ե-
րևէին, թէ բնաւ շէն լեալ իցէ. և բաղում ոսկի և
արծաթ առեալ՝ ի նմանէ՝ հաղիւ զերծաւ՝ ի նմանէ. և
մեծամեծ աւազանին ոչ կարացին օգնել նմա. այսպէս
ահարկու ամենայն տեսողացն էր: Կամեցաւ և զիշխա-
նաց իշխանն Ք՛ս զայդ՝ նոյնպէս ըմբռնել՝ ի տանջանս և՝ ի
ձաղանս. և ազդեցուցին նմա մեծամեծ աւազանին,
թէ մի երկնչիր, այլ զամենայն զօրս քո ժողովեա, և
այնպէս երթ՝ ի տեսութիւն նմա. և թէ դէպ լինի ըմ-
բռնել զքեզ՝ կալջիր և դու զնա. և այնպէս արարեալ
չոգաւ առ նա բաղում զօրօք. զոր տեսեալ Ներսէին՝
երկեաւ, և ասէ ցնա. Ո՞րինչ է այդ բազմութիւն զօ-
րաց, մինթէ ապստամբ լինիս՝ ի զանէն, և եկիր սպա-
նանել զմեզ. և ասէ ցնա Ք՛ս. Նա դու ընդդէմ ժողո-
վեցեր զբազմութիւն արանց չարագործաց Պարսից, և
եկիր նենգիւ ըմբռնել զմեզ: Նա իբրև գիտաց Ներ-
սէին թէ յայտնի է նմա նենգութիւն նորա, խօսեցաւ
ընդ նմա՝ ի խաղաղութիւն. բայց հանապազ խորհէր
՝ի մտի իւրում չարութիւն, գտանել դիպող ժամանակ
և կատարել զկամս չարութեանն: Նա մինչդեռ զայս-
պիսի չարիս խորհէր՝ ժամանեցին նմա արդար դատաս-
տանքն Ք՛ստուծոյ. եւ վերք՝ ի փող նորա յանկարծակի,
և հեղձամուղձ սատակեցաւ չարն չարաւ, և այսպէս
բարձաւ ամբարիշտն յերկրէ, և մի տեսցէ զփառս Ք՛ս-
տուծոյ:

ԽԳ.

ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ՎՐԱՑ ԵՐԹԱԼՈՑՆ ԱՌ ՂԱՆՆ

Թագաւորութիւնն Վրաց յայսմ ժամանակի նը-
ւազեալ էր, որ յառաջն ձեռն էր, եմուտ ընդ ծառայու-
թեամբ թաթար զանին՝ որ յարևելս, որոց գլխաւոր

1 Որ և Խօխան բերդ, այժմ աւերակ, մերձ՝ ի Գանձասար. յորմէ
ոչ հեռի Թուին և միւս երկուքն:

էր Նաչու–նուին, յետ մահու Ջարմաղունին. էր յայնժամ Թագաւոր Պարսից մի ոմն Պուզուդան անուն, որ զօղեալ ամրացաւ յանառիկ ամրոցս Սուանեթայ, և գայլն առ նա դեսպանք երկուց կողմանց՝ ի զօրաց Յաթարին, ի մեծ զօրավարէն՝ որ ի կողմանս Հիւսիսոյ, որում անուն էր Նաթու, մօտևոր աղգական գանին՝ որ ամենից իշխէր, այլ և գանն առանց Հրամանի նորա ոչ նստէր յաթոռն. և ի միւս զօրավարէն՝ որ ի կողմանս Հարաւոյ, որ Նաչուն կոչէր. գալ առ նոսա սիրով խաղաղութեամբ, և իշխել տերութեան իւրոյ նոցին Հրամանաւն: Ուստ նա քանզի կին գեղեցիկ էր, ոչ իշխեաց առ մի ոք ի նոցանէ երթալ, զի մի խայտառակեսցէ ի նոցունց, այլ զօրդի իւր մանուկ տիւրք Թագաւորեալ՝ որում անուն էր Գաւխթ, առաքեաց առ Նաթու զօրավարն: Ուստ այս գլխաւորքս որ ընդ Նաչու–նուինին էին՝ ի կողմանս արևելից, որք ըմբռնեալ էին զամենայն աշխարհս Հայոց, և Պարսից իշխանութեանն իշխանք առ նոսա կային, իբրև տեսին թէ ոչ եկն նա առ նոսա, (այլ) առ զօրդին իւր (և) առաքեաց առ Նաթուն, դժկամակ եղեալ ընդ իրսն, առաքեն առ Գիսթատին սուլդանն Հոռոմոց, և բերեն անտի զեղբօրորդին Լաշա Գիւորգայ Պարսից Թագաւորին, զոր նոյն Պուզուդան առաքեալ էր զետ գաւերն իւրոյ, որ էր կին Գիսթատին սուլդանին, և եղ զնա յալգելս, զի մի դաւ լինի զոքանչին իւրոյ վասն Թագաւորութեան. և սոցա աճեալ զնա անտուատ՝ տան զիշխանութիւն հօր նորա, և առաքեն զնա առ արքայն[1] զանն հաստատել զնա յիշխանութեան. և ինքեանք դեսպանս առաքեն ստիպով մի զկին միոյ առ Թագուհին Պուզուդան՝ գալ առ նոսա կամաւ և ակամայ. նոյնպէս և Նաթուն առաքեալ զօրդի նորա առ զանն, և ինքն կոչէր զՊուզուդան երթալ առ նա. և նորա նեղեալ յերկուց կողմանց՝ իւրովի դեղ մահու էառ և վճարեցաւ ի կենացս. և գրեաց գիր կտակի առ իշխանն Լաշ և յանձնեաց ի նա զօրդին իւր, եթէ դարձցի ի զանէն: Ուստ նոցա երթեալ առ զանն Գիւուպ, և նա սիրով ընկալաւ զնոսա, և սահմանեաց նոցա ըստ կարգի

1 Գիւուպ մեծ խաքանն:

ունել զԹագաւորութիւն. նախ որ աւագն էր՝ի նոցունց Դաւիթ, որդի Յեսսէի Բեթղեհէմայ, և յետ վաղճանի նորա՝ Թէ կենդանի էր՝ միւս Դաւիթ, որդին Ուռուզեանայ, նորին Հօրաքեռորդի: Եւ զգանձ Թագաւորութեանն յերիս բաժանել. զտախտն պատուականն և զանգին, և զԹագն հրաշալի՝ զոր ոչ ունէին այլ Թագաւորքն, զոր Խոսրովու լեալ մեծի՝ Հօրն Տրդատայ արքային Հայոց, և անդ մնացեալ գաղտականութեամբ վասն ամրութեան տեղւոյն, և՝ի Թագաւորան Ա ըստ անկեալ և մնացեալ մինչև ցայսօր, զայն և զայլ պատուականս՝ի գանձուցն առաքել զանգին, և զայլսն բաժանել՝ի վերայ հնգեանց: Օ որ եկեալ արարին այնպէս, միջնորդութեամբ Ներսէհին, որդւոյն Իւանէի. և նստէր Դաւիթ որդի Յեսսէի՝ի Տփխիս քաղաքին և միւս Դաւիթն՝ի Ուանանդ,

ԽԹ.

ՎԱՍՆ ԵՐԹԱԼՈՑ ԱՌ ՂԱՆՆ՝ ՍՐՊԱՏԱՑ ՁՕՐԱՎԱՐԻՆ ՀԱՑՈՑ, ԵՒ ՈՐԴՒՈՑ ՂԻՆԹԱՏԻՆ ՍՈՒԼԴԱՆԻՆ

Արքայն Հայոց Յեթում որ՝ի Կիլիկիա, առաքեաց զեղբայր իւր Սմպատ զօրավարն առ ղանն՝ երթևելի պատարագօք. և նորա երթեալ խաղաղութեամբ զերկայնութիւն Ճանապարհին, և յոյժ մեծարեալ՝ի նմանէ՝ դարձաւ երեւելի փառօք և հաւատարիմ հրովարտակօք, տուեալ նմա գաւառս բազումս և քերթս յոլովս, զոր յառաջ լեալ էր Լեռնի արքային, և զկնի մահուանն առ՝ի նոցունց Ղայատինն սուլդան Հռոմոց: Եւ առաւ զԼևթաատին[1] սուլդանն. և մնացին նորա որդիք երկու մանուկ տիոմք, և ընդ հակառակս լեալ նոցա՝ չոգաւ մինն՝ի ղանն, և առ՝ի նմանէ զկնքանութիւն հօր իւրոյ, և դարձաւ ընդ Սմբատայ զօրավարին Հայոց. և եկին առ Կաչու-Նուինն և առ այլ աւագանին. և նոցա հաստատեալ զհրամանս արքային իւրեանց՝ տան զօրս զկնի նոցա, տանել զնոսա յերկիրն իշխանութեան իւրեանց: Եւ իբրև հասին՝ի

1 Եւ առաւ Զևթաատին գրէ:

քաղաքն՝ որ կոչի Անկիայ, լուան եթէ եղբայրն Պ Լա-
Թատին սուլդանին փեսայացեալ Հշքարեայ [1] Յոռո-
մոց Թագաւորին որ Անփեսոս, և նորին օգնականու-
Թեամբ սուլտանացաւ Ասկօնն. և եղբայր նորին տը-
ղայոյն [2] Ալէյիայ [3]. ի բուն յաԹոռն երկեաւ երԹալ,
անդրէն դադարեաց Անկիայն, տեսանել Թէ զինչ լի-
նիցի վաղձան գործոյն։

Խե

ՎԱՍՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ԶՈՐ ԱՐԱՐ ԹԱԹԱՐՆ ՑԱՇԽԱՐՀՆ ՎՐԱՑ

Եւ մինչդեռ սակաւ մի կազդուրեալ էր երկիրս ի
հինից և յասպատակէ բորբոքեալ աշխարհակուլ հը-
րոյս, և մարդիկ ի տոտա ապաստանեալ էին առաւել
քան Աստուաճ, և իշխանքն կողոպտէին և գրկէին
զաղքատս, և ի գրկանաց անտի գնէին հանդերձս մե-
ծագինս և ագանէին, ուտէին և ըմպէին և մեծամեծս
փքայէին, որպէս սովորութիւն է ամբարտաւանու Թեան
Պ րաց. Թոյլ ետ Աստուաճ խոնարհիլ ի բարձրու Թե-
նէ՝ և Ձանաչել զչափ տկարու Թեանց, որք առաջնումն
ոչ խրատեցան։ Յարոյց նոցա սատանայ զնոսա՝ յորս
նոքա յուսային. յանկարծակի խորհուրդ արարեալ ա-
սպանէին ՎաԹսար զօրուն՝ և վառեցան գինու, և կաղ-
մեցան առ հասարակ կոտորել զաշխարհս Հայոց և
Պ րաց և զհնազանդեալս իւրեանց, վասն այսպիսի պատ-
Ճառի. Թէ ապստամբել կամի Թագաւորն Պ րաց ամե-
նայն զօրօք, և զօրաժողով (լինի) գալ կոտորել զնոսա.
քանզի երևէր խակ՝ զի զօրաժողով եղեն ամենայն իշ-
խանքն առ Թագաւորն Պ րաց ՎաւիԹ ի Ցփխիս. և
մինչ ըմպէին գինի՝ բարձրացան սիրտք իւրեանց, և ա-
սացին ի նոցանէ արք խակք. Ընդէր ծառայեմք մեք
սոցա ունելով զայսքան բազմուԹիւն զօրաց, այլ ե-
կայք յանկարծակի անկցուք ի վերայ նոցա և կոտո-
րեալ ջնջեսցուք զնոսա, և մեք ընկալցուք զաշխարհս
մեր։ Եւ խափանեաց զայս խորհուրդս մեծ իշխանն

1 ՕՕ. Լէչոյ, այսինքն է Լա-
դարիա կայսր Ցունաց ի Նիկիա։
2 Տպ. եղբայր նորին փղոյն։
3 Յաւելուածակողմանս Գաբա-
նաու։

Ա՛ւագ. և՛ յաւելաւ զօրուն պատահել՛ ի տեղւոջն այն[1], և ազդեցուցին գլխաւորացն։ Եւ իբրև ցրուեցան զօրք իշխանացն յիւրաքանչիւր տեղիս, ապա նոցա այսպէս զինեալ՝ կամէին առ հասարակ կոտորել զամենեսեան. և իշխանացն զորս գտան առ իւրեանս՝ ի կտրանս արարին, և որք ոչ էին անդ՝ հրաւիրակս առաքեցին փութով առ իւրեանս կոչելով։ Նոքա ողջոյնածն Ա՛ստուած ոչ ետ թոյլ խոպան լինել իրին, խափանեաց այսպիսի պատճառաւ։ Ա՛ի ոմն յաւագ գլխաւորացն՝ որ զօրավար էր ամենայն զօրուն, Ղազատա անուն նորա, որ բարեկամ էր Ա՛ւագին, եկաց ի մէջ վառեալ զօրացն, և ասէ ցնոսա. Ա՛՛ք ոչ ունիմք հրաման ի զայնոսիկ՝ որ հնազանդ են մեզ, և կան մեզ ի ծառայութեան և հարկատուք են զանին, և իրք ապստամբութեան նոցա ոչ է աչքդրեալ. արդ եթէ կոտորէք զնոսա առանց պատճառի, դուք տայք պատասխանի զանին։ Եւ լուեալ զայս զադարեցին՝ ըստուգել զիրն։ Եւ գնացեալ առ նոսա մայրն Ա՛ւագին, որում անուն էր Խոշաք, երաշխաւոր լինէր վասն որդւոյն իւրոյ միամտութեան առ նոսա, և թէ ինքն հուպ իսկ գալոց է առ նոսա, որ եղէն իսկ. զի եկին վաղվաղակի իշխանն Ա՛ւագն, և եցոյց նոցա զիւր մտերմութիւնն առ նոսա՝ բազում վկայիւք։

Ա՛յն և Թագաւորն Պաւլիք և այլ իշխանքն. և կապեալ զամենեսեան ուժգին ըստ օրինի իւրեանց զձեռս և զոտս բարակ չուանօք. և Թողեալ այնպէս կապեալ զերիս աւուրս՝ ձաղէին և անարգէին զնոսա, վասն հըպարտութեանէ և ապստամբ խորհրդոյն. և ապա առեալ զերիվարս և զգինս գլխոյ նոցա՝ Թողին զնոսա. և ինքեանք յարձակեցան ի կողմանս Ղրաց՝ ի վերոյ բազում գաւառաց՝ որք ապստամբք և որք ոչ, և զբազումս կոտորեցին, և զևս բազմագոյնս գերի վարեցին զարս և զկանայս, և զմանկունս գետամոյն առնէին անթիւ՝ ի բազմութենէ. և այս գործեցաւ՝ ի վեցհարիւր իննսուն և ութ Թուին Հայոց։ Յետ այսորիկ մեռաւ իշխանացն իշխան Ա՛ւագն, և Թաղեցաւ՝ ի Պղնձահանքն՝ ի գերեզմանի հօր իւրոյ Խուանէի. և ետուն զիշխանութիւն

[1] Տպ. նոցա պայն ևս։

Նորա Օ աքարէ որդւոյն Շ ասնշահի հօրեղբօրորդւոյ Լւանէ, զի Լ՛ւազն որդի ոչ ունէր, բայց մի դուստր ե֊րախայ, և՛ի պոռնկութենէ որդի մի երախայ. զոր յետ մահու նորա ասային թէ՛ի նմանէ է, զոր առեալ քոյր նորա անուցանէր. և ապա հանեալ՛ի Օ աքարէէ՝ ե֊տուն կնոջ Լ՛ւազին՝ որում անուն էր Գոնցա։

Խ Զ

ՎԱՍՆ ԴԱՒԻԹԻ ՄՈԼՕՐԵՑՈՒՑԻՒ

Կատարած աշխարհիս մօտեալ է, և վասն այնորիկ կարապետք՝ Լեւին բազմացան, որպէս յառաջագոյն ասաց կենարարն, թէ մերձ՛ի կատարածն յարիցեն ստուտ քրիստոսք և ստուտ մարգարէք, տալ նշանս և ա֊րուեստս դիւականս, մինչև մոլորեցուցանել թէ հնար լինչ լոկ և ընտրեալսն։ Լ՛ւրդ՛ի վերհարիւր լինաւսն և լինն Թուականիս Հայոց եղև այսպիսի լինչ. զի համ֊բաւ հանին թէ՛ի սահմանս Իսրաէնոյ կարկուտ եկն և խառն ընդ կարկտին ձկունք բազումք անկան յերկիր, չափ Թզոյ միոյ. մեք աչօք ոչ տեսաք, բայց բազումք էին որ հաւատարմացուցանէին թէ ականատես լեալ եմք։ Լ՛ինդ այսոսիկ և միւս ևս յօդուածք բանի հան֊դոյն առասպելեաց, ասէին. Թէ յերզր ծովուն Գ՛եղա֊մայ աւան մի է Լ՛ոթ անուն. ՛ի սահմանս այնր գեղջն հուպ՛ի լեառն՝ գտին մարդ մի հսկայաձև մեռեալ և կիսաթաղ, նոր հանդերձ ունելով և կօշիկս նորս, և հանդէպ սրտին ծակ, որպէս Թէ խոցած է աշտէիւ, և ՛ի վերայ սակաւ մի բանպակ. և յորժամ առին զբամ֊պակն՝ սաստիկ վիժէր արիւնն, և իբրև դնէին՛ի վե֊րայ՝ դարձեալ արգելոյր արիւնն, և Թէ այլ նոր բամ֊պակ դնէին և ոչ զիւրն՝ նոյնպէս հոսէր՝ արիւնն, մին֊չև դնէին զառաջինն. զայսոսիկ յոլովք շաղակրատէին, Թէ ձշմարիտ և Թէ ստուտ մեք ոչ գիտեմք։ Լ՛այց այս եղև ստուգութեամբ զի՛ի սոյն ամի յարեաւ մոլար ոմն Գ՛աւիթ անուն, դիւական հոգւով շարժեցեալ՝ հան֊դոյն Հուդայի և Լ՛ևազդայ մոլորեցուցչին։

Կիւզ մի է ի սահմանս Կեղաքունեաց ծովուն՝ ի կողմն հարաւելենոյ, հուպ ի բերդն Գանդաբերդ, ուր ջերմուկն է Ջուար[1] անուն. ի նմա էր այրս այս ի ջքաւորաց և ի մնանկաց. պահէր զջրաղաց նոցա, և յայնմանէ կերակրէր ինքն և կին և որդիք իւր. և ի գիշերի միում երևեալ նմա սատանայ ի կերպս լուսոյ և իշխեաց ասել, թէ ես եմ Քրիստոս, և եկի առնել զքեզ ինձ քարոզ, և ածից առ քեզ յամենայն կողմանց զմարդիկ. և որք գան առ քեզ ի պէտս բժշկութեան՝ համարձակ դիր ձեռն քո ի վերայ նոցա, և առ զգերան ձիթահանաց գեղջդ և արա խաչ, և կանգնեա ի դուրս եկեղեցւոյն. և զայլ ամենայն հնարս խորամանկութեան ուսոյց նմա: Եւ նա սկսաւ քարոզել, թէ Քրիստոս երևեցաւ ինձ և ասաց, թէ դարձո զաշխարհս, և բժշկութիւնս կատարեա: Եւ յարեցան ի նա այլք. և նոքա սկսան համբաւել զնա, և կոչէին զնա Դաւիթ միայնակեաց և սքանչելագործ. և առեալ բռնութեամբ զգերան ձիթահանաց ի տանէ իւրմէ՝ արարին խաչ բարձրաբերձ, և կանգնեցին զնա ի դուռն եկեղեցւոյն, և զենին նմա զուարակս, և տային ի մոյն և յոսկեբացն զուարակին, և ի տաշեղէ խաչին և ի հատէ կոբեկոյն՝ որ ի ջաղացքն՝ որպէս նշխարս օրհնութեան ամենայն ուխտաւորաց, որք գային յամենայն կողմանցն: Ռանզի նոյն բանսարկուն՝ որ յորդորեացն զնա յայն՝ ղրդեաց և զամենայն գաւառս երթալ ի համբաւն այն, արք և կանայք և մանկտի, նա և երիցունք ևս, և ապատ մարդիկ, և ախտացեալք և ամենայն ցաւագնեալք. և նա զառաջինն կեղծաւորեալ ոչ ինչ առնոյր յումեքէ, ըստ նմանութեան դերաքրիստոսին. այսպէս քարոզէր, Ա՛վ եմ ես, աղքատ մեղաւոր. բայց Քրիստոս հրամայեալ է ինձ քարոզել, զերկուշաբաթի օրն պահեցէք. յիշոյք մի տայք. և եկայք համբուրեցէք զիս, և թողեալ լիցին մեզք ձեր և ապրին ձեր, մինչև յեօթն ազգ: Եւ յորժամ դիւահարք գային՝ առնոյր բերէր մի հաստ հարկանէր անխնայաբար, և կոխէր ոտիւք ըզփոշեն և ասէր. Ա՛ռ շուն, ել շուն. Դաւիթ միայնա-

1 Ցելս սահմանաց Սոթից գաւառի Սիւնեաց, և ի գլուխ Արցախոյ նահանգի:

կեացն հրամայէ քեզ. և ասէր ցայրն այսակիր. Ա՛հա այլ մի երկնչիր, բժշկեցար. և նա երթայր զնոյն չար ունելով և բազմագոյն ի նմա. և որք հարցանէին՝ ոչ իշխեր ասել թէ ոչ բժշկեցայ. քանզի պատուէր տայր՝ թէ յորժամ ասես ոչ բժշկեցայ, առ ժամայն լկկիս ի դիւէն, և նա թէպէտ ոչ իշխեր ասել, արդիւնքն իսկ յայտ առնէին, որ հանապազ լկկէին. որ յառաջն ամ- սով և շաբաթով կրէին զնեղութիւնն, յետ գնալոյն առ նա՝ յամենայն աւուր չարչարէին։ Եւ լեկրոտք [1], որ երթայրին առ նա՝ ասէր, թէ խաղացէք առաջի իմ, և պարեցէք. և նոքա առնէին զայս յօժարութեամբ. քանզի այս ազգ դիւաց [2] ախորժեն զխաղ և զպար. և ասէր. Ակայք համբուրեցէք զիս և զկինն իմ, և երթայք, և այլ մի երկնչիք։ Եւ գօդեացն ասէր. Ա՛յդ ցաւոյդ չկայ հրաման Աստուծոյ բժշկելոյ, բայց զմեղս քո թողում, զի եկիր առ իս։ Եւ զկարկամեալս և զկըզայեալ՝ հրամայէր արանց չորեցունց՝ ունել երկուցն զգլուխն, երկուցն զոտն. և ասէր, ձգեցէք և պարզեցէք. և նոցա ձգեալ ուժգնակի՝ ձարձատէին ամենայն յօդուածք մարմնոյն. և այրն վայէր ուժգնակի առ վըտանգի ցաւոցն. և նա եւեալ կոխէր զթիկունս և զմկանունս, և ցաւագնեալն անչնչանայր իբրև զմեռեալ և կամ մեռանէր իսկ. և նա ասէր վասն այնոցիկ՝ որ մեռանին, եթէ չափ ժամանակի դորա լցեալ էր և չէր մարթ կեալ դմա, բարիոք է զի մեռաւ, և հանդչի ի վշտացն. և որք ապրէին՝ կիսամահ մնացեալք ոչ բըժշկեալ, ասէր վասն նոցա, թէ Ոչ ունին կատարեալ հաւատ առ մեզ, վասն այն ոչ բժշկին։ Ապա՝ զորոց զփողն կոխէր, և նոքա մեռանէին, վասն նոցա ասէր. Ա՛ա վաղուց էր մեռեալ, և այն որ շրջեցուցանէր գնա՝ դևն էր, զոր հանի այժմ։ Եւ կուրացն ասէր. Ո՛ւր կամիս, բանամ զաչդ թէ թողում զմեղսդ. և գիտեմ որ ժամանակդ մերձ է, և վաղվաղակի մեռանիս. և նա ասէր, թէ այդպէս է՝ լաւ է ինձ որ թողուս զմեղս իմ. և նա ասէր, թողեալ եմ զմեղս քո։ Եւ այսպէս ամենեցուն զմիտս յինքն ձգէր. մինչև այնքան

1 Ա. Գ. ընթերց. Թուին ոմանք զեալք կամ պռոտագլուխք։

2 Լաւ ևս ասել՝ գիւահարաց։

լինէր առ նա ժողով բազմութեան, զի տեղիք վայրացն ոչ բաւէին տանել զմարդիկ։ Եւ զի ամառնային էր ժամանակն, ՚ի մարդս և ՚ի սարս ելեալ՝ անդ դադարէին զգիշերն, և գործէին զամենայն չարիս. զի կանայք որք ոչ իշխէին ընալ՝ յարանց կամ ՚ի ծնողացն՝ ՚ի տան իւրեանց, ելանէին ուխտիւ պատճառաւ, և ընային համարձակ ընդ որս և կամէին. նոյնպէս և արքն չարք զնոյն առնէին՝ որոց ցանկային։ Եւ գնային բազում պատարագօք, ոսկով և արծաթով, զուարակաւ և ոչխարաւ. և որք երթային և գային՝ զոչ գնացեալսն կշտամբէին, և գարշէին ՚ի նոցունց՝ որպէս ՚ի մեղաւորաց և յանառժանից նորա տեսութենէն։ Եւ երիցունք եկին և յարեցան ՚ի նա, ընչից և զօշտութեան աղագաւ, և կային նմա ՚ի սպասու, լուանալով զոտս նորա, և զջուրն ցանէին ՚ի վերայ ինքեանց և ժողովրդոցն բազմութեան. և ինքն կեղծաւորեալ ոչ ինչ առնոյր յումեքէ. այլ ՚ի ձեռն քահանայից և արբանեկաց իւրոց առնոյր։ Եւ տէր գեղջն քանզի Պարսիկ էր, առնոյր զբաժին իւր ընչիցն. քանզի յոյժ տանէին բազմութիւք և յօժարութեամբ տային։ Եթէ ոք ՚ի վարդապետաց կամ երիցանց արգելոյր կամ խափանէր զնոսա յերթալոյ՝ հայհոյէին և բամբասէին իբրև զնախանձոտս և զյաչախոտս, թէ ինքեանք ոչ կարեն գործել զգործս նորա, և ոչ զսրբոյն բարեգործութիւնս կամին։ Ապա գրեաց գիր սաստից և մեղադրանաց մեծ վարդապետն Ովանէս՝ որ բնակէր ՚ի վանս Խորանաշատոյ, հանդէպ Արդեվանից բերդին, թէ ընդէր զբաւումն գիւղին Քրիստոսի համարիք՝ ոմն քրիստոնեայք, զի և սատանայ սովոր է կերպարանիլ ՚ի հրեշտակ լուսոյ. և բանադրեաց զայնոսիկ, որ ՚ի պեղծ մոց անտի կերեալ էին, և կամ ուներին նշխար ՚ի տաշեղէն և ՚ի կորեկոյն, և մի քառասուն պահք, հինգշարիւր ծունր եդ ՚ի վերայ նոցա, և ապա արժանի լինել սուրբ խորհրդոյն։ Գրեցաք և մեք նմանապէս նովին սաստիւ և բանադրանօք, և առաքեցաք յոլով տեղիս. նոյնպէս և եպիսկոպոսն Խաղբատայ գրեաց տէր Յամազասպ. էին և Վաղի վանից եպիսկոպոսն տէր Գրիգորիս, և վարդապետն Ովարդան, զոր Յօժար–սրտիք կոչէին, բազում քահանայիւք ՚ի գիւղն այն, քանզի նոցա վիճա-

կին էր, խաչիւ և աւետարանօք, և արարեալ դիշերապաշտօն, և կանգնեցուցին զայրն խաչեալ ՚ի միջի, զի Թերևս ելցէ ՚ի նմանէ ոգին պիղծ. և յորժամ հարցանէին Թէ զինչ տեսանես, ասէր. Թէ Կրկնեալ անկանիմ ՚ի վերայ երկրի բերանսխվայր՝ յերկրէ աստի երևի ինձ և խօսի ընդ իս։

Ապա ձեռն արկեալ եպիսկոպոսին և երիցանց կամէին կործանել զնաւն՝ զոր կանգնեաց մոլարն. յարեաւ ամենայն ամբոխ բազմութեանն սրովք և բրօք, կամէին սպանանել զնոսա, և նոքա արտաքս ելեալ յամբոխէն, անիծիւք սաստիկ նզովէին զյանդգնողսն։ Ապա ոմանք ՚ի նոցանէ զղջացեալք չոգան աղաչեցին զեպիսկոպոսն և զերիցուսն՝ արձակել զնոսա ՚ի կապանաց անիծիցն, և զայրն եառուն ՚ի ձեռս նոցա. և մինչ տանէին զնա՝ հանդիպեցան արք Վառնեցիք, որ գային ՚ի մեծ դրանէն. աղաչեաց այրն զնոսա, զի խնդրեսցեն զնա յեպիսկոպոսէն. քանզի ասէր զինքն ազգակից նոցա և ՚ի Վառնոյ. զի այսպէս ասէր նա յառաջն ժողովրդեան, Թէ Արշակունեաց ազգէն եմ ես, և պարտ է որդւոց իմոց՝ միոյն լինել Թագաւոր և միւսոյն կաթուղիկոս, և սրբոյն Սահակայ տեսիլն [1] ՚ի վերայ նոցա կատարել։ Ապա ետ զնա եպիսկոպոսն ցնոսա, երդուեալ պահանջեալ, զի մի՛ այլ մոլորեցուսցէ զմարդիկ. և այսպէս հաշիւ շինեաւ չարն։

Խէ

ՎԱՍՆ ԴԻՒԻՆ՝ ՈՐ Ի ԿԵՐՊԱՐԱՆՆ ԿՆՈՋ ԼԵԱԼ՝ ԽԱՈՆԱԿԻՐ ԸՆԴ ՄԱՐԴԻԿ

Պատմեաց մեզ վարդապետն Յովսէփ [2], որ շինեաց զվանս գերեզմանի Ստեփանոսի առաքելոյն Արտաւազն գաւառի, յետ աւերածոյն և ամայի լինելոյն, Թէ չոգայ ես ՚ի գաւառն Վողէթան, ՚ի պէտս ինչ իրաց. ասացին ինձ ՚ի գիւղ մի, Թէ է աստ այր մի՝ որ ունի կին դև, և մեր անհաւան լեալ ասացելոյն՝ չոգաք ՚ի տուն

1 Տպ. փեալեանն մարի է ՚ի վերոյ նոցան։ 2 Աշակերտակից հեղինակին։

առն և ոչ տեսաք զդևն. և իբրև հարցաք զայրն՝ նա ասաց զպատճառն. Թէ կին ունէի ես և մեռաւ, և Թող ինձ մանկունս մանուսս, և ես նստեալ լայի Թէ ո՞նու- ցանէ զսոսա ինձ: Եւ ահա երևեցաւ կին մի յանկար- ծակի և ասէ. Մի լար, ես եղէց քեզ կին, և սնուցից զմանկունսն. և յայնմհետէ հանապազ էր ՚ի տան ի- մում, և առնէր մեզ կերակուր, և զամենայն պէտս մեր ընու, և սաստիկ սիրով հարեալ եմ ՚ի սէր նորա, և հանապազ խառնակի ընդ իս. և զշաբաթի ամենայն անպործ կայ և յաւուր հինգշաբաթի առնէ մանած ե- րեք լիտր: Եւ իբրև հարցի Թէ ո՞ւր է այժմ. և նա մատամբն եցոյց Թէ աւանիկ է, երևի ինձ և մանկանց իմոց, և ոչ այլ ումեք. և յոլով ժամանակք են՝ զի գնա- կեմք ՚ի միասին: Եւ ես յարեայ աղօթել և աւետա- րան ընթեռնուլ, զի Թերևս հալածեսցի ոգին մեղսա- սէր և պեղծ. իսկ նորա ոչ ինչ փոյթ արարեալ զայն- մանէ, այլ նստեալ ծիծաղէր, որպէս այրն պատմեաց: Եւ մեր ոչ տեսեալ զնա՝ եկեալ գնացաք:

ԽԸ

ՎԱՍՆ ԽՆԴՐՈՑՆ ՈՐ ԵՂԵԻ Ի Մ�էՋ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՎԱՍՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՑՆ ԱՍՏՈՒԾՈՑ, ԹԷ Ի ՀՕՐԷ՞ ՄԻԱՑՆ ՊԱՐՏ Է ԱՍԵԼ ԹԷ Ի ՀՕՐԷ ԵԻ ՑՈՐԴԻՈՑ

Ի Յռոմայեցւոց ազգաց շարժեցաւ այս խնդիրը ՚ի մէջ քրիստոնէից. քանզի գրեաց փափն Յռոմայ[1], առ մեծ կաթուղիկոսն Յայոց տէր Կոստանդին, որ յայնմ ժամանակի նստէր ՚ի Կլայն–Հռովմէական, քանզի անդ էր աթոռ սրբոյն Գրիգորի՝ ՚ի ժամանակս Գրիգորի և Եերսէսի՝ երկուց եղբարց, որք էին յազգէն Ա֊րշակու- նեաց, արք գիտնականք և վերժխնդիրք օրինացն Ա֊ստուծոյ. Թէ ո՞րպէս խոստովանիք դուք զամենասուրբ Յոգին Ա֊ստուծոյ, ՚ի Յօրէ միայն բղխեալ և երևեալ, Թէ ՚ի Յօրէ և ՅՈրդւոյ. քանզի Յռոմայեցիք այսպէս խոստովանին ՚ի Յօրէ և ՅՈրդւոյ,

Եւ նմանապէս և առ Թագաւորն Յեթում գրեցին և

1 Ինոսենտիոս Գ:

պատասխանի ինդրէին։ Եւ նոցա ժողովեալ զնոսա-
տունս իւրեանց աչխարհին՝ ի քաղաքն Սիս որ ի Կի-
լիկիա, ի Նայոց, Յունաց և Ասորւոց, և այլազգեաց
քրիստոնէից որք գտան անդ. Յոյնք՝ ի Նօրէ միայն
ասացին, և Ասորւոց ոմանք այլ. իսկ Նայոցն ժողով
գրեցին ի կողմանս արևելից՝ ի մէջ Սահ Նայոց, և առ
գիտնական վարդապետն Սանական, քանզի ի ժամա-
նակին երևելի էր, և առ Յովսէփ[1], և առ այլս, Թէ
նոքա զինչ ասեն. և ապա պատասխանի արասցեն Նո-
մայեցւոցն։ Եւ նոքա քննեալ զաստուածաշունչ գիրս
առաքելոց, մարգարէից և սրբոց վարդապետաց եկե-
ղեցւոյ, որք մարգրեցին զեկեղեցիս Հեթանոսաց, ըստ
պիտոյիցն վարեցեալ երկոքեան ձայնիւք, և ուղղակի
զՆոմայեցւոց խոստովանութիւնն. և լի են ամենայն
աստուածաշունչ գիրք այնպիսի ձայնիւք։ Որպէս գրեաց
վէմն հաւատոյ երանելի առաքեալն Պետրոս, որ վասն
Ճշմարիտ հաւատոցն երանեցաւ ի Տեառնէ, Թէ Յո-
րոմ և յորպիսի ժամանակի գուշակէր ի նոսա Նո-
գին Քրիստոսի. և Յովհաննէս աւետարանիչն ասէ.
Որ զՆոգին Քրիստոսի ոչ ունի՝ նա չէ նորա։ Եւ մեծն
Պօղոս. Քառաքեաց Քստուած զՆոգի Որդւոյ իւրոյ ի
սիրտս մեր, որով աղաղակէ Քբբա, Հայր։ Եւ այլ
բազում այսպիսիս ի գիրս առաքելոց։ Իսկ սուրբ Ու-
սուցիչն մեր Գրիգոր, (որ) ուսոյց մեզ զհաւատոյ խոս-
տովանութիւն, այսպէս ասէ. Նայր լինելենէ, Որդի ի
Նօրէ, սուրբ Նոգին ի նոցունց էութենէ։ Իսկ յաղ-
թօղ սպառազէնն Քրիստոսի Քթանաս՝ ընդդէմ Քա-
րիանոսացն այսպէս քարոզէր և ուսուցանէր. Քնսկիզբն
Նայր ոչ յումեքէ, Որդի ի Նօրէ, և Նոգին սուրբ ի
նոցունց էութենէ. զի երկրորդէ Սոկրատ պատմագիր։
Եւ Գրիգոր աստուածաբան ի Ձառին՝ որոյ սկիզբն է[2]
Երեկ զլուսաւոր պայծառութեանցն զօր տօնեցաք, ասէ
զսպաղմոն առեալ, Ո՛ քէն է տէր աղբիւր կենաց և լու-
սով երեսաց քոց տեսանելիք զլոյս. այս է Նոգւով Որ-
դի. և դարձեալ՝ Որ ի Նօրէ ելանէ, որ ըստ որում
անտի առաքի՝ ոչ է ստացուած, ըստ որում ոչ ծնեալ՝

1 Վերոյիշեալն։

2 Ձառս որ ի Մկրտութիւն Տեառն՝ ոչ բովանդակ թարգմա-
նեալ գտանի առ մեզ, և ոչ յա-
ջաքերեալ վկայութիւնդ։

ոչ որդի, և ըստ որում յոչ ծնեալքդ և՛ ի ծնեալքդ՝ ի
մէջ Աստուած է: Եւ Դիմիդոր Ալեսացի, և մեծն Բա-
սիլիոս, և Աբբա Եփրեմ, և Յովհան Ասկեբերան, ի
բազում տեղիս յիւրեանց գիրսն. զոր թէ աշխատու-
թեամբ ոք խնդրէ՝ յոլովս գտանէ. և Սեբիանոս Ա-
մեսու եպիսկոպոսն ի Ձառէին որոյ սկիզբն է՝ ի մէջ
քրիստոսասիրաց, զԲրիստոսէ խոստացեալ Ձառել ի կա-
տարածին ասէ. Ընծանին Աստուածոյ, և ծնեալքդն ի
նմանէ՝ Որդւոյն միածնի, և սուրբ Հոգւոյն՝ եղողին ի
նոցունց էութենէ, երիցն ի միում աստուածութեան,
ամենայն փառք յաւիտեանս. ամէն: Եւ Ոսկէս Խո-
րենացին ասէ ի մեկնութեան քերականին. Սուրբ
Հոգին առինչունակ է, զի որում Հոգի է. զի ի դէմս
Հօր և Որդւոյ ասի Հոգի: Եւ Ստեփաննոս Սիւնեաց
եպիսկոպոսն ասէ [1]. Բանզի բղխէ ի Հօրէ իբր յա-
կանէ անհատաբար, դադարէ յաղբերէ. ի Որդւոյ ե-
լանէ անմեկնելի խոհականագոյն գետ արփիաբաշխ,
լուսապարգեւ, աստնջական զծոմն ունելով, զԵրեշտա-
կաց և զմարդկան գիտութիւն ունելով. տիւնա, զի Հա-
րուստ Որդին իբրև զՀայր. զի Թէպէտ սուղ որդի,
զի սկիզբն նոյն փարթամ, զի պատճառ է Հոգւոյ ե-
լողութեան. Հոգին սուրբ Հարուստ, զի պատճառ է
մարգարէական տաղից: Եւ սքանչելին Եպիփան՝ ի գիրս
մեկնութեան Աղմոսաց [2]: Եւ գլուխ բանիցս՝ ամե-
նասքուհի Աստուածածինն Մարիամ՝ ի բանն Հա-
ւատոյ զոր հրամայեաց աւետարանչին Յովհաննու ու-
սուցանել Աքանչելագործին Դիմիդոսի, ասէ. մի Աս-
տուած Հայր Անեին կենդանւոյ, իմաստութեանն ան-
ճնաւորի և զօրութեան, և կերպարան էութեան. կա-
տարեալ կատարելոյ ծնօղ, Հայր Որդւոյ միածնի, տէր
միայնոյ, Աստուած Աստուծոյ, կերպարան և պատկեր
աստուածութեան. բանն Աստուած ներգործական յա-
մենայնի, և եղելոցս ամենայնի բովանդակիչ, և զօրու-
թիւն անսահմանելի, և ամենայն ստացականացս արա-
րիչ: Որդի ձշմարտի Հօր, անտեսանելի անտեսանե-
լոյն, անապականին անապական, անմահ անմահի: Ի

1 Եւ սա ի մեկնութեան քե-
րականին:

2 Պակասէ վկայութիւնն:

Հոգի սուրբ առ ի Հայրէ զէութիւն ունելով. և ի ձեռն Որդւոյ երևեալ և յայտնեալ մարդկան, պատկեր Որդւոյ. կատարեալ կատարելոյ, կեանք կենդանեաց պատճառ. սրբութիւն և սրբութեան պարգևիչ. որով յայտնի Հաստուած հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեսին, և Հաստուծոյ որդին՝ որ ի ձեռն որոյ ամենայնք: Նրբորդութիւն կատարեալ՝ փառօք, միտքն ջենաւորութեամբ և անբաժանելի թագաւորութեամբ, և անօտարանալիք: Ոչ ապա ստացական ինչ, և ոչ ծառայ Նրբորդութեան, և ոչ ի ներքսածական, որպէս թէ յառաջագոյն ոչ գոլով և յետոյ ի ներքս մտեալ: Ոչ նուազ Որդին ի Հօրէ, և Հոգի՝ Հօրէ. անայլայլելի, անփոփոխելի, նոյն ինքն Նրբորդութիւն միշտ:

Հայսպիսի խոստովանութիւնս ընդունելի է յեկեղեցիս Հայաստանեայց, և յոգիս Աւրբակոսի, և համարձակ արժան է քարոզել զՀոգի ի Հօրէ ելեալ, և Որդւոյ երևեալ: Օ այս պատասխանեցաք թղթոյն արևմտից, և մեք ի սոյն հաւատ հաստատեալ կամք ընդՀօք Նրբորդութեանն սրբոյ, որում փառք յաւիտեանս. ամէն:

Խթ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՈՑ ՈՒՂՂԱՓԱՌՈՑ

Հաւատամք ի Հայր և Որդի, և ի Հոգի սուրբ, երիս անձինս կատարեալ, և մի աստուածութիւն փառաւորեալ, սուրբ և զուգափառ Նրբորդութիւն. անսկիզբն և անվաղճան, անեղբ, անուր, միշտ անկարօտ և բերկրեալ, ամենայնիւ կատարեալ, և ի բարւոջ իմացեալ, զոր բնաբար ունի, և աննիւթապէս (տայ) կարօտից, Նրբորդութիւն կատարեալ, անաձեւի [1] և անհնուազ: Զնճամբ բաժանեալ, և է զի և անուամբ, և ի միութիւն կացեալ, և կայ փառաւորեալ և փառաւորի ի բնութեան աստուածութեան, ի զօրութեան, ի կամին, յիմաստութեան, ի գործն, ի մեծութիւն,

1 OO· անձաոեչի:

և մանաւանդ յանհասուԹեանն և յանասելի ողորմուԹեանն ։

Ւայր անծին, Ուրդի ծնեալ ՚ի Ւօրէ՝ անախտ և անմարմին, բնուԹիւնակից Ւօր նախ քան զժամանակս ։ Ւոգին սուրբ բղխումն ՚ի Ւօրէ, և երևումն Ուրդւոյ, ոչ ըստ Ուրդւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբիւրաբար, ինքեան միայնոյ քննելի օրինակին, և արարածոյ անգիտելի. միշտ ընդ Ւօր Ուրդի և Ւոգի ։ Ւոգին որպէս Ւօր՝ նոյնպէս և Ուրդւոյ, ոչ փոխեալ Ւայր Ուրդի կամ Ուրդի ՚ի Ւոգի, կամ Ւոգին Ուրդի և ՚ի Ւայր ։

Ւայր ունելով զանձն և զանուն Հայրական, և Ուրդի ունելով զանձն և որդիական անուն, և Ւոգի ունելով զանձն և զանուն Հոգիական. անդրադարձուԹիւն ոչ ունելով, կամ փոփոխումն անուանցն և անձանցն. այլ Ւայր միշտ Ւայր, Ուրդի միշտ Ուրդի, և Ւոգի միշտ Ւոգի. յոր հաւատամ ։ Յայսմանէ և ՚ի սիրոյ եկեալ Ուրդւոյն անձամբ չափ, աւետեօք Հրեշտակապետին Գաբրիէլի ՚ի կոյս Մարիամ, որ սուրբ էր Հոգւով և մարմնով, և ՚ի պատճառս փրկուԹեան մերոյ մարդացեալ ՚ի նմանէ՝ սահմանաւ բնուԹեանս մերոյ, Հոգի, միտք, շունչ, մարմին որ ինչ և է կատարեալն մարդ մեղուցեալ բնուԹեանս Ադամայ, ուստի Մարիամին էր. զոր առեալ աստուածագործեաց, առանց շփոԹման և այլայլման, անքննելին և անձառելի խառնմամբն, և եղև յերկուց կատարեալ բնուԹեանց՝ յաստուածայնոյն և ՚ի մարդկայնոյն՝ մի անձնաւորուԹիւն կատարեալ, անայլայլելի և անբաժանելի բնուԹեամբ. ոչ փոխելով մարդկայինն Թանձր և յօդական բնուԹիւնս՝ յանյօդ և պարզական աստուածուԹեանն բնուԹիւն, զիւրն ոչ կորուսանելով. և ոչ պարզ և անմարմնական բնուԹիւնն Ստուծոյ՝ խառնելով ընդ բնուԹեան մարմնոյ՝ վրիպեաց յիւրն յաւէտ պարզուԹենէն. Թէպէտ և ասի յաղագս անքակ միուԹեան՝ անմարմնոյն մարմնանալ, և բանին Թանձրանալ ։ Մնաց միածինն մի որդի, մի անձն, մի Ենրիստոս, և Ճշմարտապէս՝ յերկուց միացեալ՝ մի բնուԹիւն, մի կամք, մի ախորժակք, մի գործ [1].

1 Կամք և գործք առանձինն ըստ երկաքանչիւր բնուԹեանց, այլ հաւանուԹեամբն մի ։

մի ծնունդ կուսութեամբ, մի մայր առանց հօր, որ և նախ քան զյաւիտեանս առանց մօր ծնեալ։ Եւ խոստովանիմ զմայրն Աստուածածին մինչև յաւիտեան, նովին մարմնովն և որ զհետ ծննդեանն։ Ո՛ամենայն տնօրինականս խոստովանիմ գործ Աստուծոյ, զխոնարհագոյնս և զբարձրագոյնս, և զկիրսն անբամբասելի՝ որ վասն մեր կրեաց՝ ոչ բաժանեմ, այլ մի յատուկ ասեմ ՚ի տէրն իմ. ոչ իմանամ զչիութիւնն[1]։ Եւ նոյնպէս զկիրսն խաչին խոստովանիմ Աստուծոյ խաչ և մահ. ոչ էական բնութեանն ասեմ մահ կամ ՚ի մարմնոյն բաժանումն, այլ զիմ բնութիւնն միացեալ յաստուածութիւնն և աստուածացեալ Աստուած խոստովանիմ. որով մեռաւ անմահն, զբանական հոգին աւանդելով ՚ի ձեռս հօր Աստուծոյ։ Եւ աստուածութիւնն ոչ բաժանեալ ՚ի հոգւոյն և ՚ի մարմնոյն, միաւորեալ անբաժանելի. և ըստ որում և զդժոխս աւերեր հոգւովն և զմահ սպանաներ, և մարմինն լուծաներ զապականութիւն որպէս զԱստուած և զԱստուծոյ մարմին. ընդ ամենայն գերեզմանս արձակելով Ճառագայթս, յարուցանելով[2] զբազումս, գիտելով զսահմանեալ ժամանակն ՚ի լանջս երկրի, հզօրագոյն թուովն յառներ, ոչ միայնաբար ըստ Յունանու ՚ի ձկանէն, այլ լրմամբ հոգւոյն մահակուռ՝ որ Աստուած ՚ի գժոխս, և յոլովիւք մարմնովք հողացելովք ՚ի գերեզմանաց. ելաներ կուսութեամբ անլոյծ կնքօք ՚ի գերեզմանէն՝ որպէս յարգանդէն Մարիամու. և վերացեալ մտաներ յերկինս կուսութեամբ անձեղքելիս, որպէս ՚ի վերնատունն՝ դրամբք անբացիւք, զի յայտ լինի եթէ ՚ի վեր է քան զբնութիւն մարդոյ։ Ո՛ ի մարմնոյ բնութիւն՝ մահկանացու, ապականացու և ախտալի է, թէ յատկացն ըստ ինքեան. և ընդ մարմին ոչ կարէ մտանել անճառնօթապէս, այլ տերունականն և տէրն լինով ունելով զՀնամարիտն մարդ՝ իւրովն սահմանովն, սակայն շողացեալ և փայլատակեալ աստուածութեամբն ներդործեր զվայելչականն Աստուծոյ, զոր շօշափեցին ձեռօք դասք առաքելոց, և տեսին երանելի աչօք զանտեսանելին տեսա-

1 Տպ. Յաւելու. և նպաւեմ զի-մաստն և պատճն չիմանամ։

2 ՕՕ. մեր պակասորդք, յաւելաք ըստ տպագրին։

կացեալ։ Պաւղոյ ի նովին մարմնով և փառօք Յօր՝ դա-
տել զկենդանիս և զմեռեալս, որոյ Թագաւորութեանն
ոչ գոյ վաղճան։

Յաւատամ՝ ի նոյն Երրորդութենէն եղեալ յոչէիս
զեղեալքս ամենայն. և զԱդամ պատկերեալ բարւոյն,
և յանցանօք լուծեալ՝ ի մահ անձնիշխան կամօք, և՝ ի
նոյն արարչէ վերստին նորոգել տնտեսութեամբ միոյն
միածնի, կամօք Յօր և Յոգւոյն։ Յաւատամ զհամո-
րէն յարութիւն բանականացս՝ որ ՅԱդամայ, ՚ի նոյն
զօրութենէ ստեղծողին և նորոգողին։ Յաւատամ յար-
դար իրաւունս՝ յաւուրն դատաստանին ըստ արժա-
նեաց, և՝ ի հատուցումն յաւիտենական տանջանաց և
կենաց։

Զայս է մերոյս հաւատոյ համառօտ խոստովանու-
թիւն, և ամենայն ուղղափառաց. որով մանաւորես-
ցէ զմեզ Տէր՝ ի ընորհս ողորմութեան իւրոյ սովիմք
կեալ յաշխարհի անարատ կենցաղավարութեամբ և
բարի գործովք, և այսու դաւանութեամբ գնալ առ
Քրիստոս յոյն ամենեցուն, և մեր վստահութիւն.
և արժանի լինել տեսանել համարձակութեամբ զերա-
նելի և զամենասուրբ Երրորդութիւնն՝ յերից ան-
ձինս յատկացեալս և՝ ի մի աստուածութիւն և տէրու-
թիւն, և՝ ի Թագաւորութիւն փառաւորեալ. և ար-
ժանացուսցէ զմեզ և զամենայն Քրիստոս հաւատա-
ցեալսն անձառ բարեացն և անպատում ուրախութեց,
զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և՝ ի սիրտ մար-
դոյ ոչ անկաւ, զայն պատրաստեաց Աստուած սիրելեաց
իւրոց։ Ունդ զայս դաւանութիւնս յօրով մասն աշխար-
հիս ունի, և պահէ սրբապէս քաղաքավարութիւ՝ զոր
պարտ է յամենայն քահանայապօրծութեան տալ զայս
դաւանութիւն մեծի քահանայապետին, և պահանջել
յայնցանէ՝ զորս ձեռնադրիլն կամին։ Եւ ապա յանուա-
նէ նզովէ զգայլն ապականիչ՝ զամենայն հերետիկոսա-
կանսն՝ հարիւր յիսուն և լինն հերձուած, մինչև ցայ-
սօր ժամանակի, և այլք որք լինին նման սոցա, և դա-
ւանել զամենայն ուղղափառան զհովիւս եկեղեցւոյն,
որք ընդ Քրիստոսի անարատ կենցաղավարութեամբ
Քրիստոսի, և յարօտս կենսաբերս մնուցին. և ապա իջանէ
Յոգին յայնպիսի սեղանն սրբութեան, և հանդչէցէ

յընծայեաւն՝ յայն որ պիտէ Ճանաչել զաւարտն և զընտանին, որպէս զգիտնական և զհմաստուն հովիւս կացուցանել, որ կարասցէ՝ ի կեանս կոչել զարժանիս կենացն, այսինքն առ Ն.ստուած ածել։ Օ՚ի այս է պարիսպ պահպանութեան խաչիս և արեամբ գնեալ հաւատացելոց, ոչ միայն՝ ի չարեացն՝ ի բաց կալ, այլ և բարեացն ընդ երթալ. ՚ի Քրիստոս Յիսուս՝ ի տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

Քրեաց և մեծ վարդապետն Ս՚անական, թէ որպէս մարթ է խոստովանել և կամ առնել զսուրբ Հոգին՝ ի Հօրէ և ՅՍորդւոյ։

Ծ

ԽՐԱՏ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Հոգւոյնէ խօսել զՀոգւոյն՝ հոգևորացն է. իսկ եթէ ոք և որ՚ի ձեռն[1] հաստատուԹեան է յօժար առ՚ի քաղել, ամառան խզուզին հանդիպիլ սիրելի է, և Թէ հասկի[2]. բայց Թէ ընկերէ հոգի անօսր Ն.ղիայուն՝ ընԹասցի քանն և փառաւորեսցի մի աստուածուԹիւն յերիս անձինս միմեամբ երևեալ, որպէս լոյս՚ի լուսոյ։ Օ՚ի Թէ արարածականս այս լոյս և հուր՝ ոչ փակի յիւրեանի ընտանեացն և յայլոց, զիաւրդ անեղ արարչականն՚ի միմեանց և յարարածս. Թէ և մեք ոչ կարեմք գիտել. վասն զի երեսք[3] անձնական բաժինս տալ՝ ոչ զօրէ՚ի յօդ, ՚ի հուր, ՚ի ջուր և՚ի գինի, վասն նրբամանուԹեանն։ Ն.ւ զի այս հարկելիք Թուիլն և անապուասելիք, ոչչափ և առաւել միտքն մի ժտեսցի յանեղ, յանարար, յանսահման, միասնական սուրբ Ն.րորդուԹիւնն՝ ոչ գոլ որով եղերիցի, կամ տեղի՝ ուր գնիցի, համիմացուԹեամբ Ճանաչիլ. այլ զոր գիրք աստուածաշունչ առԹէ եկեղեցւոյ, զոր սկսանելի է, իմացումն իմացական՝ իմացողին՝ որպէս մնունդ ելով և կերակուր ուրեմն մտաց, հրեշտակական էուԹիւնք՝ և նոցա արարչականք, զի իմանալին իմացուԹեամբ իմա-

1 ՕՕ. ՚ի յոչ։

2 Ա յապէս ՕՕ. որ իանդարձ Թուին՝ որպէս և զինիդ. Թէ և հենակին կամաւ խրԹնաբանեալ է։

3 Տպ. էրէ։

ցողապէս իմանայ զիմացական իմայուսին։ Ընդ միտ դիր դու քեզ, ասէ նախամանդարէն Մովսէս, հայեա յանձն քո. և Փիլոնիոս իրատէ, թէ քոյով երկոր-դութեամբդ իմա ի մարմին քո, որ է հոգի, միտք և բան։ Ոյն օրինակ և Պօղոս գրէ. մեզ մի է Հայր, և մի տէր Յիսուս Քրիստոս, և մի սուրբ Հոգի։ Իսկ Յովհաննէս Մկրտիչ միութիւն խոստովանի քնու-թեանն, զՀայր և զՀոգի աղն գնէ, այսինքն՝ Նան[1], և Ողջոյ ունել ասէ զՀայր և (Հօր) զՎրդի։

Ընթանաս՝ Այրեք ենթակայ ասէ, կամ երեք դէմ։ Ընտուածաբանն Գրիգոր՝ Այրեք անձն կամ Այրեք ե-րես. կամ որ ի քեզ սիրելի է՝ զայն ասա։ Ինքն Ընտուած. Որ էնն ասէ. որ է ոչ սկսեալ և ոչ դադարի։ Գրիգոր Ընտուածաբանն և Նարսեղ և Գրիգոր Նիւսացին. Ընծին և ծնեալ, և ելոյծն. որոյմ հետևի ամենայն ուղղափառ եկեղեցի։ Յովհան Ոսկեբերան, Ընտատ, բոյս, և բողբոջ։ Պօղոս՝ զՀայր էութիւն ա-սէ, և զՎրդին նկարագիրը, զՀայր լոյս, և զՎրդին ճա-ռագայթ։ Ընթանաս, զՎրդին նկարագիրը ասէ էու-թեանն Ընտուծոյ՝ Հօր[2], և զՀոգի Ողջոյ. ինքն տէր զՀայր Հոգի ասէ։ Այլ Առաւորիչն Գրիգոր՝ զՎրդին Հոգի ասէ. և ամենայն գիրք աստուածաշունչք զՀո-գի Հոգի ասեն։ Պօղոս, զՀայր անեղոյթ ասէ, և զՎրդի պատկեր անեղութեին. յայտ է թէ Հոգին պատկեր է Հօր և Ողջոյ. զի մի է էիցն նկարագիրը և պատկեր. ըստ այնմ, թէ Ընդար Ընտուած զմարդն ի պատկեր իւր, զի էիցն մի պատկեր է. մին սկզբնատիպ միոյ մարդոյն միոյ քնութեան, և երից անձանց միոյ աս-տուածութեան. և ամենայն հին և նոր կտակարանք վկայեն։ Այլ զի Հայր անսկիզբն և անպատճառ է, ինքն իսկ ասէր յԸնդրահամ. Ձիմ Լան[3] երդնում քեզ. և յՈվսէս, Այս եմ իմ էն. որպէս ասել թէ ոչ յումեք քէ։ Այլ զի Ողջի և Հոգի ի Հօրէ, Ովսէէ ասէ. Հո-գի իմ և բան ի միջի քումմ. և ինքն տէրն ասէ. Հոգին ուր կամի հնչէ, այլ ոչ գիտես ուստի գայ կամ յո՞ եր-թայ, նոյնպէս և ամենայն ծնեալն ի Հոգւոյն։ Այսան

1 Խառն և խրթին։ Ա. Օ. ունի աղքն փոխանակ աղինն։

2 Օ. Հայր։

3 Օ. Ինն։

ոգոյ և սուրբն Հպիփան Կիպրացին ասէ. Հոգի Հայր, և Հոգի Որդի և Հոգի. զի Հայր անսկզբնութեան է անուն. և երեք են անսկիզբն ի ժամանակէ: Հոգի ասելն՝ անմարմնութեան է նշան. և երեքեան անմարմին. Որդի ասելն՝ գոյացութեան և բնութեան է նշան. և զի երեք գոյացութիւն և մի բնութիւն են, Որդի ի Հօրէ ասի, Հայր ՚Որդւոյ ոչ ասի, զի սա ի նմանէ է, և ոչ նա ի սմանէ. և Որդի և Հոգի ասի ի Հօրէ, ոմն ծննդեամբ, և ոմն ելոզութեամբ: Որդի բղխումն ասի, և Հոգի բղխումն: Որդի եղ ասի ի Հօրէ. ասի և Հոգի եղ ի Հօրէ. Հայր Հոգի ասի, բայց որդի չասի. Հոգի՝ ոչ Հայր ասի և ոչ որդի: Որդի ի Հօրէ, և Հոգի ի Հօրէ և ՚Որդւոյ. Հայր արմատ, Որդին բոյս, Հոգին ի յարմատոյն և ի բուսէն բողբոջ: Հոգին շունչ, Որդին բերան, Հայր գոյ. Հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նորա, Նա թէ Ղազարուն քո դրախտ նանեներաց. և թէ փչեաց յերեսս նոցա և ասէ. Ընդէք ջՀոգին սուրբ: Հայր անձն, Որդին գոյացութիւն, Հոգին բազուկ, և ի բազկէն մատն. Նա մատամբն Ղաւծոյ Հանեմ զդեւս:

Որդի ի Հօրէ և Հոգի ի նոցունց, ասէ սուրբն Հպիփան: Որդի ի Հօրէ ելանէ, և Հոգի ի ՚Որդւոյ և ի Հօրէ եղ. Որդի ի Հօրէ առնու. նմանապէս և Հոգի ՚Որդւոյ առնու: Ընդ ինքն տէրն. Ամենայն անտի առնու և ուսուսցէ ձեզ. և Որդի ի Հոգւոյն առնու, ըստ այնմ, թէ Որ ի նմանէ ծնեալ է՝ ի Հոգւոյն սրբոյ է: Երեք արեգակն. լոյս է ամենայնիւ, միօրինակ անձառ, անհաս և անձև, անորակ, անքանակ, անսահման: Այլ մին որ զամեր բնութիւնս էառ՝ Հանն՝ մերոյս երևի, և նովաւ Հանապէն Հայր և Հոգի. Որդի ծնեալ ասի, որ Հարգմանի յումեքէ ունել. և եղ ասի, որ Հարգմանի ոչ զումեք ունել. զի ոչ ունի զանձն Հօր, և ոչ զանձն ՚Որդւոյ, այլ զիւր որդիականն. Հոգի եղ ասի ի Հօրէ և ՚Որդւոյ, զի ոչ ունի զանձն Հօր և զանձն Որդւոյ, այլ զիւր Հոգիական անձն: Այս երեք անուն Հաւասար՝ նշան երից անձանցն, ոչ մի միոյ վերոյ, և ոչ մի միոյ ներքոյ, այլ Հաւասար միմեանց ամենայնիւ. ոչ

բնութեան նշան երիցն [1], մի լիցի ուժեք իմանալ այնպէս, այլ նշան երից անձանց և մի բնութեան. ոմն Հայր՝ զի ոչ յայլմէ հօրէ, և ոմն Որդի՝ զի՛ի Հօրէ, և ոմն Հոգի՝ զի՛ի Հօրէ և ի Որդւոյ:

Հայր անծին ասի, զի ոչ յումեքէ է. և Որդի ծընեալ, զի՛ի Հօրէ. Հոգի ոչ ասի Որդի կամ ծնեալ, զի մի երկու եղբարք թուեսցին, և ոչ երկուորի [2] ընդ Որդւոյ, զի մի դուստր կարծիցի, և ոչ Որդւոյ միայն, զի մի Թոռն համարիցի: Զոր ընդէր ծանրանաս ով իմաստուն և ճշմարիտ հաւատացեալ, երկու պատճառ իմանալ: Առաջին հարցանէր զեղբայր իւր զՈրիգոր. Ո՞ր ինչ է սկիզբն սկզբանն. և նա ասէ. Ա՛ռաջինն պատճառ երկրորդ պատճառին: Ով սիրելի, ոմ՞ այլ ումեք իցէ պատճառ Հայր և Որդի, եթէ ոչ Հոգւոյ իւրոյ: Որիգոր աստուածաբանն զՊղատոնի բանն առնու, որ գրեալ է, Որպէս խաոնարանն յեղեալ զեղեալ. զիսառնն և զեղեալ ասելն՝ խոտէ: Առայ զառաջինն և զերկրորդ պատճառ ասելն՝ հաւանի. զոր ընդէր զմի բոստնուս խոստովանողդ զերկու պատճառն. զի ոչ եթէ անուանքս և կարգս զանազանէ զմի բնութիւնն. այլ և այլ նշանակ է անձանց երիցն՝ ի մի բնութիւն. զի սահման և կարգ խոստովանութեան հաւատոյ՝ անխառնակ և անշփոթ մնասցէ. մի աստուածութիւն, որ զամենայն ըստ կարգի և սահմանաւ յօրինեալ է, զի մի՛ի միտս խոստովանողին խառնակութիւն և շփոթումն անկցի: Զոր ասեմ որ լսողդ ես. զիաւրդ քո միտքդ՛ի քեզ կայ, և յայլումն միտք ծնանի: Եթէ զայս իմանաս ոչ՝ ընդէր քննես վասն Աստուծոյ, և ընդդիմանաս գրոց. եթէ զլռեսդ՝ որ՛ի խելս քո ծագէ, և զհանձար՝ որ յերի կայ [3] բանիդ, և զբղխումն սրտիդ՝ ոչ կարես տեսանել, և զոլորեալն՛ի ձայնդ, Աստուծոյ հակառակ և գրոց՝ մի՞ ջանար իմանալ ինչ: Այլ դարձեալ ասեմ. բանդ քո (եթէ) ՛ի մտացդ է առանց Հոգւոյդ, անհոգի է քո բանդ, և եթէ՛ի Հոգւոյդ է առանց մտաց, անմիտ է քո բանդ. ապա եթէ՛ի Հոգւոյդ և՛ի մտացդ՝ հոգևոր և մտաւոր է քո բանդ, որպէս և է. ապա եթէ ընչաւոր

1 Տպ. Ոչ բնաւ նոցա երիցս-ութեան: 2 Ընտ Տպ. — ՕՕ. մեր. երիս- որդի: 3 ՕՕ. յերիմտի:

իմացիւք է զո բանդ՝ վայրապար է։ Ո՛Աստուծոյ բնու-
թեանն միութիւն և զանձին բաժանումն՝ մարմնական
օրինակաւ մի՛ տեսաներ, զի մի գայթակղեսցիս։

Հոգին՝ եթէ ի՛ Հօրէ միայն ասիցես եւ ևս բղխումն,
անբան է Հոգին, և եթէ Որդւոյ միայն ասիցես, օ-
տար սկիզբն է. իսկ թէ ի՛ Հօրէ և Որդւոյ՝ ձշմարիտ
է, որպէս և է։ Եւ զոր օրինակ Հայրութիւնն Ա՛ստու-
ծոյ ոչ է մարմնական, և ոչ որդիութիւն, նոյնպէս և
ոչ ելոզութիւն։ Բառ է գաւառի՝ սուլորութիւն, այս
անուն յայս բանէ՛ի դուրս եկն ոզջ, ՛ի յայս իրացս բա-
ժանեցաւ ոզջ, ոչ յիւրմէն ՛ի տեղն մնաց և ոչ յայլոց
՛ի Հետ եբեր, և ոչ յայլոց կտրեաց, և ոչ յայլոց Հա-
տաւ. թէպէտ ոզջ ասա, թէպէտ յստակ ասա, թէպէտ
պարզ ասա։ Ա՛յսպէս Հոգի ՛ի Հօրէ և Որդւոյ. ոչ
ինքն պակասէ ինչ, և ոչ ՛ի նոցանէ Հատած։ Ա՛յ կա-
տարեալ Ա՛ստուած Հայր, այ կատարեալ Ա՛ստուած
Որդի, այ կատարեալ Ա՛ստուած Հոգի սուրբ. մի աս-
տուածութիւն կատարեալ, յերիս անձինս, Հաւասար
ամենայն ամենայնիւ։ Ա՛յս է խոստովանութիւն ուղ-
ղափառ Հաւատոյ։ Սուրբն Գրիգոր զելոզական ա-
նունն ՛ի վերայ Երրորդութեան Հաւասար դնէ, Հօր
և Որդւոյ և Հոգւոյ, այսպէս ասելով. Ելոզական ա-
նունն իմաստացուցիչ. և որ յայս ոճիս է. և գարձեալ
Իմաստացութիւն, զօրացութիւն, կենդանացութիւն,
և որ այլ ըստ այսմ։

Գարձեալ աղաչեմ զքեզ, մի կարծեր զԱ՛ստուծոյ
անունն ըստ բնութեան, այլ ըստ խնամոյն որ առ մեզ.
ապա թէ ոչ՝ լաւ ասի Ա՛ստուած և կեանք. զինչ կա-
միս ասել. այսպիսի՛ լաւ և կեանք՝ որպէս և մեք տե-
սանեմք և կեամք. կամ զքո Հոգւոյդ անունն և զէու-
թիւնն կարե՞ս գիտել. այս խոստումն Հանդերձելոցն
է, յորժամ յայտնի այն՝ զոր ակն ոչ ետես և ունկն ոչ
լուաւ, և՛ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց
Ա՛ստուած սիրելեաց։ Ա՛յս մի խնդրեր աւելի՝ զի մի յա-
մենէն անկանիցիս։

ԾԱ.

ՎԱՍՆ ՎԱԽՃԱՆԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՎԱՆԱԿԱՆԻՆ

Աստուածահաճոյ և մեծ վարդապետն Վանական հասեալ ի բարիոք ծերութիւն, ալեւորեալ ընդ լի աւուրբք, ըստ օրինակի նահապետին Աբրահամու՝ առ Ցէր փոխեցաւ, զընթացսն կատարեալ և զհաւատս պահեալ ուղղափառ խոստովանութեամբ՝ որ ի սուրբ Երրորդութիւնն և ի տնօրէնութիւնն Քրիստոսի. ի տղայական տիոյն աստուածապարծ ծառայութեամբ կալեալ. բազում քրտունս և աշխատութիւնս ցուցեալ ի բան վարդապետական, և բազում որդիս ի փառս ածեալ, և աղգի աղգի ձգնութիւնս կրեալ և սպանեալ զանդամս երկրաւորս, ըստ խրատու առաքելոյն, և ըզմարմինն ի խաչ հանեալ կարեօք և ցանկութեամբ հանդերձ, Օ՛ի նման էր սուրբն Պօղոսի՝ սրաթռիչ թռչնոյն մեղուի, որ թռչելով ի վերայ բազում և ազգի ազգի ծաղկանց, ժողովէ ի նոցանէ զպիտանին և զօգտակարն՝ ի պէտս ինքեանց և ի կերակուր, և ի բժշկութիւն թագաւորաց և ռամկաց. նոյնպէս և սա յանձն իւր հաւաքեալ զամենայն սրբոց զվարս և զառաքինութիւնս, և նոքօք արկանէր զգործ խորհրդին՝ ի պէտս անձին իւրոյ և յայլոց օգուտ։ Վանդի ստացեալ ունէր զարդարութիւնն Աբելի, և զգեղեցկութիւնն Սեթայ, և զլռոյն Ենովսայ, և զհաւատսն Ենովքայ, զկատարելութիւնն Նոյի, զհաւատն և զգործն Աբրահամու և զհնազանդութիւնն Սահակայ, զաստուածատեսութիւնն Իսրայէլի, զողջախոհութիւնն Յովսեփու, և զհամբերութիւնն Յոբայ, զհեզութիւնն Մովսէսի, զնահանձն Փենէհէզի, զկուսութիւնն Յեսուայ, զանմեղութիւնն յիստակմտութեանն Սամուէլի, և ըզխոնարհութիւն սրտին Դաւթի, և զիմաստութիւնն Սողոմոնի, զհամարձակութիւն Ելիայեայ, և զվերջիընդրութիւնն Եղիայի, և զախտակցութիւնն Եղիսէի. ըստ Դանիէլի և Եզեկիէլի ի գերութիւն երթեալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. ըստ Օբդիայ և Յեսուայ՝ նորոգօղ լեալ տաճարի Աստուծոյ.

ըստ Պաղումեայ բազում գրեանս հաւաքեալ յաղբաց և լեզուաց. Յովհաննու նման յանապատի բնակեալ, և Տեառն հրամանաւ զսպաշխարութիւն քարոզեալ, ՚ի հին և ՚ի նոր կտակարանս վայելեալ. Պետրոսի հանգոյն զտէրն որդի Աստուծոյ դաւանեալ և գլուխ եկեղեցւոյ լեալ, ընդ որս ոյն Աւետման գՀոգևառն որսացեալ և աստուածաբանեալ. ընդ Պօղոսի յընդհանուր սերմանեալ զկենաց բանն, և գրով հաստատեալ. ընդ վարդապետս եկեղեցւոյ հանդիսացեալ և զպայքն վանեալ, կիսոց կաթն ջամբեալ, և կատարելոցն զհաստատուն կերակուրն։

Ընդ նա որ զայս ամենայն բարիս ստացեալ ունէր յանձին, ինքն առնէր և այլոց ուսուցանէր, առ տէր փոխեցաւ, զբնութեան զպարտսն հատուցեալ։ Այս եղև վաղճան նորա այսպիսի օրինակաւ ՚ի վանսն՝ զոր իւր իսկ էր շինեալ, որ կոչի Խորանաշատ, և վանն յոլով եկեղեցեացն որ ՚ի նմա՝ ընկալաւ զանուն, որ կայ հանդէպ Արգէվանից բերդին և ՚ի Թիկանց Վարդմանոյ. առնէր նա շինուածս երևելիս. գաւիթ շինելով ՚ի կոփածոյ վիմաց, ՚ի գուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր. և զբան վարդապետութեան ուսուցանէր այնոցիկ՝ որ ժողովեալ էին առ նա յամենայն գաւառաց. յաւուրս աղուհացիցն հիւանդացաւ նա հիւանդութիւն՝ որ և մեռաւ իսկ. և նախ քան զաւանդել սուրբ Հոգւոյն ՚ի ձեռս Աստուծոյ ըստ գրեցելումն, կոչեցեալ զեղբարսն՝ քաղցր և ախորժ բանիւ մխիթարէր զնոսա, աղաչէր հաստատուն կալ ՚ի կարգս և ՚ի կրօնս ուղղափառութեան և աստուածպաշտութեան։ Այս ապա քաղցր ընչմամբ մաքուր Հոգին արձակեցաւ ՚ի կապանաց մարմնոյն, յարեգ ամոյ տասն, ըստ նոր եղանակի Հնմարտութեան [1], և յութևտասն մարտի ըստ Հռոմայեցւոց, երկու օրով յառաջ քան զպարսնանամուտ, յաւուր շաբաթու. յորում աւուր յիշատակ կր Ալիրղի Արուսապետին, որ զընկեր երցուածոն կարգեաց [2], և զՈչման գիրն գրեաց. և վկայութիւն

1 Ա յսինքն ըստ ասմարին Հընմարտելոյ ՚ի Սարկաւագոյ։

2 Վ յոն պատարագի ընթերցուածոյն ասէ։ — Սիւս գիրքն են կոչեն ընծայարինեան հրաւիրեցոյն ՚ի սկրտութիւն։

արբոյն Ա)րէնղի՝ և վեց եղբարց իւրոց, որք նահատակեցան ՚ի Աքսիմիանոսէ ամբարշտէ. նոցին վարուցն լեալ հետևող, վասն այնորիկ և յիշատակի նոցունց արժանացաւ։ Եւ ժողովեցան անթիւ բազմութիւնք ՚ի Թաղուհն նորա, և մեծաւ սգով և տրտմութեամբ ողբային յոյժ, զի զրկեցան ՚ի լուսաւոր վարդապետութենէ երանելւոյն և ՚ի հոգեշահ բանիցն։ Եւ տարեալ Թաղեցին զնա ՚ի գլուխ վանիցն, յարևելից կուսէ, մօտ ՚ի փոքրագոյն եկեղեցին, ուր էին գերեզմանքն աղքատաց. զի ինքն այսպէս հրամայեաց։ Ընդ ետր և եպիսկոպոսն գաւառին տէր Սարգիս բազում վարդապետիւք և երիցամբք. չոգաւ և կաթողիկոսն Հայոց տէր Եղիսէ, և եպիսկոպոսն տէր Յովհաննէս, յետ միոյ աւուր յիշատակի նորա, ողբացեալ և լացեալ յոյժ ՚ի վերայ գերեզմանի նորա, և մխիթարեալ զեղբարս որ անդ՝ գարձան յիւրաքանչիւր տեղիս։ Եւ կալաւ զառաջնորդութիւն վանիցն եղբօրորդի նորա Պօղոս քահանայ, և զվարդապետական ուսումն՝ Գրիգորիս վարդապետ՝ նորին աշակերտ և ազգական։ Եւ այս եղև յեօթն հարիւր Թուին։ Ընդ աղօթիւք նոցա տայցէ Ընտուած խաղաղութիւն աշխարհի և մեզ մանն ՚ի յարութեան նորա և ՚ի պսակիլն։

ԾԲ

ՎԱՒՄՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑԻՈՑՆ

Ասր ոմն առաքինի և զարմանալի վարիւք, գործող պատուիրանաց Ընտուծոյ և լծաբարձ ՚ի մանկութենէ, արժանացեալ քահանայական պատուոյ, կուսակրօն, Յովհաննէս անուն, ՚ի գիւղաքաղաքէն Գառնոյ, ուր զարմանալի սարաւոյնն է Տրդատայ[2], ՚ի սուրբ ուխտէն Գրիգորեանց։ Ա՚ ՚ի մանկագոյն տիոցն արհամարհեաց զամենայն ինչս կենցաղոյս՝ լքեալ զազգս և զբնտուն, յանապատ տեղիս բնակէը, սիրէր առանձին լինել, և հովանոյ խորհրդոյ՝ ՚ի խորհրդածութիւն. որոյ ցարդ երևին մնացուածք կործանեալք։

1 Ի նմին աւուր, 18 մարտի, ոմնին և սուրբքս ըստ Յայտնութեան։

2 Ի յետնոյ թագաւ Տրդատայ կո-

նել և անզբաղապէս խօսել ընդ Պետուծոյ. տուեալ զինքն աղգի աղգի ձգնութեան, պահոց և աղօթից, գետնատարած անկողնօք և անհանգիստ աշխատութեամբ, շրջելով տեղւոջէ ի տեղի, և լուսաւորելով զպատահեալսն։ Տուաւ նմա և շնորհք բժշկութեանց, զի միայն ձեռն դնելով բժշկէր զբազումս ախտաժէտս։ Այսպէս ի նմանէ և գիր՝ պահապան անձանց իւրեանց[1], և նա անյապաղ տայր ամենայն խնդրողաց. և զայս ոչ միայն հաւատացեալքն առնէին, այլ և բազումք յանհաւատից. և նա գրելով զանուն սրբոյ Աստուածութեան և խորհրդական բանս աղօթից՝ տայր նոցա. և նոքա առեալ հաւատով կապէին յանձինս իւրեանց։

Ապա սորա բազումք բազում ինչ պատմէին. բայց առաքել՝ հարազատն մեր և սքանչելին Վարդան վարդապետն, որոյ բանքն արժանի էին ընդ միմեանս. զի մեք մարմնով զնա[2] ոչ տեսաք վասն հեռաւորութեանն։ Ահա ի մխիթարութիւն մեզ պատմեաց ինչ ի վարուց նորա մանաւոր, և ասաց[3], թէ ինքն իսկ Յովհաննէս ասաց մեզ, թէ Ոտքս ես ի սուրբ քաղաքն Երուսաղէմ՝ երկրպագել տնօրինական տեղեաց, և յամեցի անդ աւուրս, իջևան կալեալ ի սուրբ Յակոբն. և ի գիշերի միում կանխեալ նախ քան զհարկանել ժամուն աղդարարի՝ որ յաղօթն զարթուցանէր զամենեսեան. և մինչդեռ աղօթէի ի սուրբ եկեղեցին՝ վարդապետն որ իշխան էր սուրբ Յակոբայ, կոչեաց զիս և ասէ. Ահա լուր զարմանալի իրս, զոր պատմէ քահանայս իմ մանկագոյն. և իբրև չոգայ առ նա, կոչեաց զերէցն, որ ետես զտեսիլն զարմանալի, և ասէ. Որդի սաա զոր յառաջագոյն պատմեցերն ինձ՝ զի լուիցէ և սա։ Եւ երէցն սկսաւ պատմել, թէ Ահա քան զգալդ ձեր յեկեղեցին՝ ես էի յաղօթս ի սուրբ վերնատունն. և յանկարծակի նկարեալ պատկերն Գաբրիէլի հրեշտակապետի՝ որ կայ հանդէպ ամենասրբուհւոյ Աստուածածնին, բարբառեցաւ և ասէ. Արդ ահա լեր քեզ կրեալ տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս, և

1 Միամտութեամբ արդեօք նա գործէր և սա գրէ. որպէս և զյետագայ պատմութիւնքն։

2 Զան Յովհաննու ասէ։ Իսկ Վարդան՝ պատմիչն է։

3 Զայսոսիկ պատմէր Վարդան և Հեթմոյ Թագաւորի. պատմեն և Ցայսմաւուրք։

օրհնեալ է պատուլ որովայնի քո։ Ահաւասիկ ես ամենայն
սրբոյն կարեաւ պատկերքն զնոյն բարբառել ցմեծ ժամն.
և իմ զարմացեալ փառս ետու Աստուծոյ, և գիտեալ
տօմարական արուեստիւ՝ գոր զի երեսուն էր այն օր
արեգ ամոյ և եօթն ապրիլի և եօթն և տասն նիսան
ամոյ։ Ահա այս տեսիլ և ցուցմունք հրաշիցն՝ նոյոց
անսուտ տօնին, որ ասեմք զաւետիք սուրբ Կուսին յե-
րեսուն արեգի և յեօթն ապրիլի, և ոչ որպէս հակա-
ռակին այլազգիքն, և մանաւանդ Յոյնք, ասելով՝ քսան
և հինգ մարտի ամոյ՝ անխորհուրդ։ Այս պատմեաց
Հիմարտահոն այրն Աստուծոյ ի հաստատութիւն ուղ-
ղափառ հաւատոյս։

Դարձեալ միւս և սմին հանգոյն զոր պատմեաց սուրբ
այրն այն Յովհաննէս. Ես էի ասէ ի կողմանս Յորդա-
նան գետոյն աղօթելով ի տեղւոջ մկրտութեան Տեառն,
և սրբոյն Յովհաննու կարապետին. եկին առ իս արք ե-
րեք, տաճիկ տօհմաւ, և խնդրէին զինիք սուրբ մկըր-
տութեան. և ես յանպատրաստի տալ յայնժամ աւուր, և
կամ թէ յայնոց առցեն՝ զի տեսանէի զնոսա արս խու-
ժադուժս, և համարէի կեղծաւորեալ. և որ աւագն էր
ի նոցանէ՝ պատմեաց ինձ, և ասէ. Մեք ի Օ անգիա-
նայ[1] եմք ի քաղաքէն Պարսից, եմք մուղլի[2] գենիւ.
ընեցաք մեք միտարա մի մեծ և զեղեցիկ, և պատրաս-
տեցաք որ ինչ պէտք էին նաւակատեաց, և եկի ես ի
ծայրն զմպէթին ըստ գենին Ցաչկաց՝ տալ զ.....
ձայնն. և ահա տեսի ես յարևելից կուսի, զերկինս բա-
ցեալ, և զվայրն լի անբաւ լուսով, և Թագաւոր մի ա-
հեղ և զարմանալի՝ յաթոռ փառաց նստեալ. և շուրջ
զնովաւ բազմութիւնք լուսեղինացն՝ որք օրհնէին զնա
անձառելի ձայնիւ. և զայնն առ նա յերկրպագութիւն
ամենայն ազգք քրիստոնէից, խրաքանչիւր առաջնոր-
դօք սեամանն, որք զարդարեալ էին երևելի փառօք. և
յորժամ երկրպագէին նմա՝ ընդունէր զողջոյնն։ Ի վեր-
ջոյ եկն այլ ազգ մի՝ որ կարի առաւել էին փառօք քան
զառաջինսն. և առաջնորդն նոցա կարի զարմանալի. և
յորժամ եկին և երկիր պագին Թագաւորին, նա յա-

1 Ջէնձեան. ի հարաւային ամմանածայր Աղրպատականի։

2 տես, կարգացող կամ ու-սուցիչ։

բեաւ յաղթութեան ընդ առաջ նոցա, և համբուրեաց զնա և մեծարեաց քան զամենայն ազգան. և մինչ ես զարմացեալ էի հիացմամբ և ապշեալ, եկն առ իս՝ ի վեր այս աւագ որդիս իմ, և ասէ. Ընդէր յամեցեր, զի քեզ ինան ամենայն ժողովուրդն. Հայեցաւ և սա առաւել և ս, և ետես զնոյն տեսիլ, և եկաց յիմարեալ: Ապա իբրև կարի յամեցաք, նեղեցաւ ամբոխն ընդ յամելն մեր. եկն եւ այս կրսեր որդիս իմ, և մեզադրէր մեզ վասն յամելոյն մեր. և քանզի անցեալ էր տեսիլն՝ ի գալ սորա, և պատմեցաք սմա զպատճառս յամելոյն և զիրս տեսլեանն, և իսկոյն կամեցաք՝ ի բարձանց անտի քարոզել զՔրիստոս Յիսուս Աստուած, և զմեզ քրիստոնեայս նորա: Այս արգել զմեզ և ասէ, որովհետև այդպէս է՝ իմաստութեամբ գործեսցուք. թէ այժմ մեք քարոզեմք զՔրիստոս, իսկոյն սպանանեն զմեզ ամբոխն Տաճկաց, և դնեն բարուրս, թէ վասն յանցանաց իրիք սպանաք և ոչ կիտէ զմէնջ. այլ երթիցուք տացուք նոցա զկերակուրս, զոր պատրաստեցաք, և ապա երթիցուք մեք՝ ի տուրբ քաղաքն Յերուսաղէմ, և անդ լիցուք կատարեալ քրիստոնեայք՝ ի ձեռն կընքոյ աւազանին, և մանաւանդ յայնց քրիստոնէից՝ զոր դուք ասէք՝ եթէ խնդութեամբ ընկալաւ զնոսա Թագաւորն: Այս նշանակեցաւ մեզ՝ ի տեսլեանն, եթէ ազգն այն՝ Հայոց էր, որք վիճակ հասին Մատէոսի և Բարդողիմէոսի և Փիլիպոսի Աւետարչաց: Այս մեր ունկնդիր եղեալ բանից սորա՝ իջաք առ նոսա, ոչ ինչ պատմեալ ումեք, թողաք զամենայն զգոյս մեր զշարժուն և զանշարժուն, և եկաք Յերուսաղէմ. ազաչեաք զԱստուած պատահիլ մեզ այն ազգին, որ փառաւքն էին՝ ի տեսլեանն. և եղեալ Աստուած մեզ զքեզ, և զնոյն տեսիլն տեսաք՝ ի վերայ քո: Ընդ ազաչեմ, զքեզ տուր մեզ զկնիքն Քրիստոսի, և արա զմեզ կատարեալ ծառայս Աստուծոյ քո: Այս իմ տեսեալ զյօժարութիւնս նոցա, և թէ՝ ի տեառնէ է կոչումն՝ մկրտեցի զնոսա՝ ի տուրբ գետն Յորդանան, յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, և հաղորդեցի զնոսա՝ ի տուրբ պատուականն մարմնոյ և արեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և ողջունեալ զմեզ եղեն՝ ի քաղաքէն՝ գնալ՝ ի մեծն Հռոմ, ի տեսութիւն գերեզմանին տուրբ առա-

քելոյն Պետրոսի և Պօղոսի, ՚ի փառս Քրիստոսի Աստուծոյ։

Այսչափ և զայս նոյն սքանչելին Յովհաննէս, եթէ արք քառասուն Այս ազգաւ չոգան յանապատն Սինա, ՚ի լեառն ուր երևեցաւ Աստուած Մովսէսի (և ետ զտախտական քարեղէնն՝ յոր գրեալ էին տասն պատգամքն, երկիր պագանել Աստուծոյ) և տեսանել զսուրբ տեղին. և էր ՚ի ստորոտ լերինն վանք մի Հռոմ ազգաւ խստակրօն վարուք, անդ օթևեցան. և մինչ կամէին ելանել ՚ի լեառն, պատուիրեցին նոցա բնակիչք վանացն և ասեն. զգուշերուք մի ագանիք անդ, քանզի ահագին արհաւիրք երևին, այլ և կորուսա բազմաց պատահեալ է։ Նոքա նոքա ելին համարձակութեամբ, ոչ լինչ կերակուրս բարձեալ ընդ իւրեանս, և յամեցին անդ աւուրս. և զարմացեալ էին բնակիչք վանացն թէ զինչ եղեն. զի ընդ այլ՝ անց ոչ կայր, և համարէին թէ կորեան յարհաւրաց անտի։ Նոքա նոքա յետ կատարելոյ զպաշտօնն իւրեանց, ելին ՚ի լեառն անտի, փառաւորեալ և ընծրհալի երեսօք. և էին քառասուն և երկու. և զարմացեալ բնակիչք վանացն ելին ընդ առաջ նոցա ջահիւք և լապտերօք, և մեծաւ պատուով տարեալ հանգուցին, և զարմանային՝ զի յորժամ ելին ՚ի լեառն քառասուն էին, և իբրև իջին՝ քառասուն և երկու. զի գիտէին եթէ այլ ոք ոչ չոգաւ ՚ի վեր բայց ՚ի նոցունց. և իբրև եղին սեղան առ ՚ի կերակուր՝ յարեան արքն այն երկու փառաւորք՝ որք աւելի էին քան զքառասունս, պաշտել զնոսա ՚ի սեղանն, և ոչ տային թոյլ վանաց արանցն ծառայել, այլ ասէին, մեր սովորութիւն է զեղբարս մեր մեզ պաշտել։ Եւ իբրև կերան որ ինչ պատշաճ էր, ողջունեալ զնոսա եղեն աներևոյթ. որք էին Մովսէս և Եղիա. և ահիւ մեծաւ ըմբռնեալ բնակիչք վանացն՝ պատուէին զնոսա իբրև զհրեշտակս. և յուզարկեցին մեծաւ պատուով։ Այս պատմեր արքասէր այրն Յովհաննէս ՚ի դէմս այլոց, վասն անձին խոնարհութեանն. զի մի գիտասցեն՝ թէ և ինքն ընդ նոսա էր։

Յետ այսորիկ շրջեալ նա ընդ բազում գաւառս և ընդ քաղաքս, եհաս ՚ի քաղաքն Կոստնիա. և բազումք ՚ի Մուրքաց և ՚ի Տաճկաց գային առ նա, և մկրտէին

վան սքանչելի վարուց նորա և բժշկութեանցն զոր առ-
նէր։ Այլ նախանձեցան ընդ նա Պարսիկքն, և իշխան
քաղաքին Ադոնիայ ըմբռնեաց զնա և զերծից մի, և կու-
տեալ փայտ չոր՝ եդեալ զնոսա ի միջի վառեաց հրով.
և լայր երէցն որ ընդ նմա, և նա քաջալերէր զնա և ա-
սէր. եթէ Աստ ի երկնչիր, կարող է ապրեցուցանել զմեզ Աստուած ի հրոյս, որպէս զերիս մանկունս։ Եւ
մինչդեռ բորբոքէր բոցն՝ մանուկ իշխանին անկաւ ընդ
պարիսպն բերդին, և յարեաւ անվնաս. և ի հարցա-
նելն, թէ Որպէս կաս կենդանի, պատասխանի ետ թէ
Այրն այն զոր ընկեցիք ի հուրն՝ նա եբարձ զիս ձեռօք
իւրովք, և ոչ ետ ինձ անկանել յերկիր։ Եւ առժա-
մայն առաքեաց իշխանն, և հրամայեաց հանել զնոսա
ի հրոյն. և թոյլ ետ գնալ ուր և կամեսցի։ Եւ նորա
շրջեալ ընդ բազում գաւառս, գնաց ի Հռոմկլայն առ
մեծ կաթուղիկոսն Հայոց տէր Կոստանդին, և նա ու-
րախութեամբ ընկալաւ զնա մեծաւ պատուով, և ոչ
ետ թոյլ երթալ այլ ուրեք. և անդ եկաց մինչև փո-
խեցաւ ի Քրիստոս, և թաղեցաւ ի նմին[1]. զընթացսն
իւր կատարեալ, զհաւատսն պահեալ, եհաս անթառամ
պսակին և անվաղճան կենացն։ Աղօթք նորա մեզ ի
սատարութիւն և ի թողութիւն մեղացն. և յիշատակ
նորա ընդ սուրբս ամենայն ի Քրիստոս Յիսուս, ի
տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։

ԾԳ

ՎԱՍՆ ՍԱՐԴԱԽԻՆ ՈՐԴՒՈՑ ԲԱԹՈՒԻՆ

Մեծ զօրավարն Բահթու՝ որ ի կողմանս Հիւսիսոյ առեալ իւր բնակութիւն, առ աւին ծովուն Կասբից, և Աթլ[2] գետոյն մեծի՝ որ ոչ գտանի հանգոյն նմա ի վե-
րայ երկրի, քանզի ծովէրէն ընթանայ վասն հարթայա-
տակութեան երկրին ի մեծ և ի լայնանիստ գաշտին
Խիւչախայ. զետեղէր նա և բազում և անթուելի
զօրքն[3] որ ընդ նմա. քանզի խորանօք բնակէին, և ի

1 Հռոմկլայն։
2 Իթիլ կամ Վոլգա։
3 ՕՕ · զօրսն։

չուեն՝ զխորանան սայլիւք տանէին, բազում եպինս և ձիս լծեալ ՚ի սայլն։ Ա՚ա զօրացաւ յոյժ և մեծացաւ քան զամենեսին, և հնազանդեաց զտիեզերս, և ՚ի հարկի կացոյց զաշխարհս ամենայն. այլ և իւր ազգայինքն՝ զնա քան զամենեսին մեծ ունէին. և որ թագաւորն էր ՚ի նոցունց՝ զոր ղան կոչէին, հրամանաւ նորա նստէր յաթոռն։ Օ՚ի եղև մեռանել Վխուզ ղանին, և ՚ի միմեանս անկեալ ազգատոհմ նորին, թէ ով որ նստցի յաթոռն, և ամենեքեան զնա արժանացուցանէին նստել, և կամ զով և կամեսցի նա՝ այն լինի թագաւոր. և կոչեցին զնա ՚ի կողմանցն հիւսիսոյ գալ յաշխարհն իւրեանց, և թագաւորել ՚ի վերայ ամենից. և չոգաւ նա հաստատեալ զթագաւորութիւնն, և եթող գլուխ զօրացն զորդին իւր՝ որում անուն էր Ա՚արդախ. և ինքն երթեալ ոչ նստաւ յաթոռ թագաւորութեան, այլ զայլ ումն կարգեաց յաղգայնոցն, որում անուն էր Ա՚անգու. և ինքն դարձաւ առ զօրս իւր։ Ա՚ակ յաղգականացն ումանք տհաճ եղեն ընդ գործն. զի ակն ունէին կամ ինքեան թագաւորել և կամ թագաւորեցուցանել զորդին Վխուզ ղանին, որում անուն էր Ղ օձա ղան. բայց յերեսս ոչ իշխեցին բերել զիրս անհաճութեան։ Ա՚ակ յորժամ դարձաւ նա առ զօրս իւր՝ նոքա սկսան ցուցանել իրս ապստամբութեան առ Ա՚անկու ղանն, և սկսան խռովել. և լուեալ Ա՚աթու՝ հրամայեաց կոտորել զբազումս յաղգականացն և ՚ի մեծամեծաց, ընդ որս և զմեծ ումն գլխաւոր՝ որում անուն էր Ա՚լխ-Ա՚աթա[1]. որ հրաման առեալ էր ՚ի Վխուզ ղանէն զօրավար լինել զօրուն Ա՚աթար՝ որ յարևելս և յաշխարհս Չայոց, փոխանակ Ա՚ազու-նուէնին. և մինչդեռ ՚ի Չանապարհի էր յաշխարհին Պարսից՝ եհաս նմա համբաւ շար մահու Վխուզ ղանին, և անդէն զետղ առեալ մնայր, թէ ով առնու զաթոռն թագաւորութեան։ Օ՚ամանէ ամբաստան եղեն առ Ա՚աթու գլխաւորքն զօրուն որ յարևելս. զի ոչ կամէին զնորա իշխել ՚ի վերայ ինքեանց, զի այր մեծամիտ էր. և առեն թէ և առ ևս յանհնազանդիցին և Ա՚անկու ղանին, և հրամայեաց առ ինքն ածել. զոր ըմբռնեալ տարան

1 Ալխպադաի, կոչնական Պարսից։

կապանօք, և եապան չարապէս։ Ա՛պա սկսան երթալ առ նա թագաւորք և թագաւորազունք և իշխանք և վաճառականք, և ամենայն վշտատեաք որք զրկեալ էին ՚ի հայրենեաց. և նա արդար դատաստանաւ տայր զիւրաքանչիւր գաւառն և զհայրենիս և զիշխանութիւնս՝ ամենայն ումեք երթողացն առնա, և գիրս նշանաւորս. և ոչ ոք իշխէր ընդդէմ դառնալ հրամանաց նորա։

Սորա էր որդի մի որում անուն էր Սարդախ, զոր վերագոյն յիշեցաք. որ անաւ քրիստոնեայ դայեկօք, և ՚ի չափ հասեալ հաւատաց ՚ի Քրիստոս և մկրտեցաւ Ա՛ստուծոյ՝ որք անուցին զնա[1]։ Ա՛ա քաջութիւն գիւրութիւն արար եկեղեցեաց և քրիստոնէից, և կամաւ հօր իւրոյ գլուեաց գիր ազատութեան քահանայից և եկեղեցւոյ. և առաքեաց ամենայն կողմանց ապառնալիս և մահ, եթէ ոք հարկ առնու յեկեղեցւոյ կամ ՚ի պաշտօնէից նորա, զինչ աղգ և լեզն, այլ և զծառկաց մըզկիթն և զնորին սպասաւորաց։ Ա՛ստուստ ապա համարձակութիւն առեալ չոգան առ նա վարդապետք, եպիսկոպոսք և երիցունք. և նա սիրով ընդունէր զամենեսին և կատարէր զխնդրուածս նոցա, և ինքն երկիւղածութեամբ և աստուածապաշտութեամբ կայր հանապազ, եկեղեցի խորանեայ ընդ իւր շրջեցուցանելով և զաստուածային խորհուրդն անյապաղ կատարելով։ Ընդ որս չոգաւ առ նա և մեծ իշխանն Լաչէնոյ և կողմանցն Ա՛ղցախոյ՝ Հասան, զոր Վալաշն կոչէին գգուանօք, այր աստուածապաշտ և երկիւղած և պարկեշտ, Հայ ազգաւ. և նա սիրով և մեծարանօք ընկալաւ զնա և զորս ընդ նմանն էին, Գրիգոր իշխանն՝ զոր սուլորութեամբ Տղայն կոչէին, և էր ծեր յոյժ. և զԳեսում իշխանն՝ պարկեշտ պատանի, և զԱ՛արկոս վարդապետն, և զեպիսկոպոսն Գրիգոր. և տարեալ առ Հայրն իւր մեծապատիւ[2], և ետ ՚ի նա զՀայրենիս իւր զՋարաբերդն[3] և զԱ՛կանա և զԱ՛արկաւ, զոր հանեալ էին յառաջագոյն ՚ի նմանէ ազգն Ղուլքաց և Ա՛ղուանց։

1 Ա՛յս կարծիք են և նոցին իսկ մահմետական պատմչաց։ Գառանի և գիր Խնովկենտեայ պապի առ Սարդախ գրեալ յամի 1254։

2 Սարդախ առ Բաթու Հայր իւր։

3 Ա՛յժմ Ձլբիւրդ, որ և Ճառաբերդ, ՚ի Խաչէն, ուր և այլ յիշեալք։

Ա՛ռ և զիր ազատութեան կաթուղիկոսին Ա՛զուանից՝ տէր Ներսէսի, և ամենայն գոյից նորա և ստացուածոց, զի ազատ և անհարկ լիցին, և համարձակ շրջեսցի ՚ի վիճակս իւրոյ իշխանութեանն, և ամենայն ուրեք, և մի ոք դիմադարձ լիցի ասացելոցն ՚ի նմանե։ Նա եկն Ջալէն ուրախութեամբ ՚ի տուն իւր. բայց զկնի աւուրց նեղեալ ՚ի հարկապահանջաց և յԱրղունէն, գնաց առ Աանգու ղանն։ Նա թագաւորեաց Աանկու ղանն յեօթն հարիւր թուին Հայոց։

ԾԴ

ՎԱՍՆ ՄԱՐԱԽԻՆ ՈՐ ԵԿԵՐ ՋԱՇԽԱՐՀՍ ԱՄԵՆԱՑՆ

Յեօթն հարիւր և մի թուին Հայոց եկն մարախ սաստիկ այնքան՝ մինչ զի ՚ի վերանալն ստուեր գործէր և նուաղէր լոյս արեգական. և եկեալ ՚ի կողմանցն Պարսից եկեր զաշխարհս Հայոց, ոչ միայն զբոյսս դալարոյ՝ այլ և զչող երկրի, և զաղբս լափէր. և մնանէր ՚ի տունս ընդ երդս և ընդ դրունս, թէ պատահէր ՚ի բաց. և զահի հարաւ երկիր, և եղև սղութիւն հացի. և հասեալ ՚ի ձմերան եղանակ՝ արկ ձուս յերկիր, և մեռան և նեխեցաւ երկիր ՚ի հոտոյն. և ՚ի գալ գարնան յեօթնհարիւր և երկու թուին՝ բուսոյց երկիր զձագս մարախոյն յոյժ թանձրութեամբ, մինչ զի ծածկեցաւ հող և քարինք երկրի, և ՚ի ժամ երեկոյին կուտէին ՚ի վերայ միմեանց բլրաձև, և սկսան ուտել զդալարի և զխոտ և զչող, և խորհեցան մարդիկ թողուլ զբնակութիւնս իւրեանց և երթալ յօտարութիւն, ուր և գտցեն կերակուր. և զի յառաջագոյն կերեալ էր զչքնակայ գաւառան՝ սկսեալ ՚ի Սպանիոյ[1], և Ա՛սիոյ և ՚ի Պարսից և ՚ի Ա՛ինջագետաց, վասն այնորիկ տարակուսեալք՝ ոչ գիտէին զինչ գործեսցեն։ Սկսան այնուհետև ապաւինիլ յամենակարող ձեռն և ՚ի բազուկն՝ որ յոչէէ գոյացոյց զարարածս և ողորմութեամբ իւրով խնամէ զարարածս, որոյ՝ և անհնարինքն հնարաւորք

1 Ոչ կարծեմ զԻբերիականն Սպանիա Եւրոպիոյ ասել, այլ զոր աշխարհ։

էն, և արտասուօք և ուխտիւք հայցէին ՚ի նմանէ բառնալ զպատուհասն յաշխարհէ։ Իսկ ողորմածն Աստուած խիստ վիրացաւ ետ սպեղանիս արագ, և որ ետ նոյն և բժշկեաց. քանզի եկին բազմութիւնք մանր հաւուց պիսակաց, զոր վասն բազմութեանն տարմ անուանեն սովորաբար, և կարգ կալեալ եղերեալ[1] առ հասարակ սպառեաց, և եկեր զամենայն բազմութիւն մարախոյ. այնքան զի և մի ոչ երևիւր. և անդ էր տեսանել զամենայն բերան ՚ի գոհութիւն Աստուծոյ և ամենայն միտք ՚ի զարմացման։ Այլ վասն հաւուցս զրոյց սքանչելի է, ասեն թէ ՚ի կողմանս Պարսից աշխարհին՝ որ կոչի Կրման[2], է ջուր մի, զոր երթեալ առնուն յայն ջրէն ՚ի շիշս ապիկիս, և բերեն յանյետս[3] դառնալի, և զջուրն յերկիր ոչ դնեն. այլ կապեն ՚ի ձողս և ցցեն. և անդ է դադարք հաւուցն զհետ ջրոյն, որ տանին հաւքըն ըստ թռուցն խնդրողին. և այսպէս գան հաւքն, և կորուսանեն զմարախս։ Նմին մեք հաւատամք զամենայն գործ ՚ի խնամոցն Աստուծոյ արարեալ, որ ըստ մեզայ աշխարհի թոյլ տայ գալ պատուհասին, և դարձեալ բժշկէ ողորմութեամբ իւրով՝ որպէս և կամի. որպէս և այս պատուհաս մարախիս՝ ետ զայս հաւքս դեղ և սպեղանի։

ԾԵ

ՎԱՍՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԻՆ ՈՐ ԵՂԵՒ ՀՐԱՄԱՆԱՒ ՄԱՆԳՈՒ ՂԱՆԻՆ

Առդ յեօթնհարիւր և երեք թուին Հայոց առաքեաց Մանգու զանն և մեծ զօրավարն Նաթու՝ այր մի ոստիկան, Ալղուն անուն, որ ՚ի Կխուզ զանէն առեալ էր հրաման վերակացութեան հարկայն արքունի ՚ի հնազանդեալ աշխարհացն. և միւս ևս այր գլխաւոր ՚ի տանէ Նաթուին, որում անուն էր Կուրա Ալզա[4], հանդերձ այլօք բազմօք՝ որ ընդ նոսա, աշխարհագիր առնել յամենայն ազգս՝ որ ընդ ձեռամբ նոցա էին հնա-

1 Տպ. խրգ խալեալ յեղէբոյն։
2 Կրման աշխարհ յեզերս Պարսկային Ծովոյն։ Ա յապիսի ինչ ասեն և այժմ զմերոյ Հայաստան աշխարհիս զաղթերէ Ս. Յակովբայ որ ՚ի Մասիս։
3 Տպ. յանէպս։
4 Ա. Թուրագանայ։

նաշանդեալ. և նոցա առեալ զայս հրամանն ելին ընդ աշխարհս ամենայն կատարել զգործն. և հասին և յաշխարհս Նայոց և Արեաց և Աղուանից, և որ շուրջ զնոքօք գաւառք. սկսեալք 'ի տասնամենից և 'ի վեր՝ գրով 'ի համար[1] արկանել զամենեսեան, բայց 'ի կանանց. և յամենեցունց պահանջել խստագոյն հարկս՝ առնել քան զկար մարդոյն. և սկսան չքաւորել, և նեղէին անհնարին կտտանօք և չարչարանօք և գերծիւք. և որ թագչէր՝ ըմբռնեալ սպանանէին. և որ ոչ կարէր հատուցանել զհարկն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն. քանզի պարսիկ տաճկահաւատ սպասաւորօք շրջէին։ Աւրէ և իշխանք տեառք գաւառաց՝ նոցուն գործակից լեալ 'ի նեղելն և 'ի պահանջելն, վասն իւրեանց շահելոյ. և այսու ոչ բաւականացան, այլ և զամենայն արուեստագէտս եթէ 'ի քաղաքս եթէ 'ի գիւղս՝ զամենայն 'ի հարկի կացուցին. այլ և զծովակս և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս և զդարբինս և զշպարս[2]. և զի պիտոյ է մանրաբար ասել, զամենայն դուռն շահից հասին 'ի մարդկանէ, և ինքեանք միայն շահէին. և զամենայն աղահանս առին որ 'ի Արոզ[3], և յոր այլ կողմանս կողմանս։ Եւ 'ի վաճառականացն բազում ինչ ուսեալ և շահեալ, կուտեցին բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց. և այսպէս զամենեսեան սղացուցեալ[4], վայիւ և աշխատութիւ լցեալ զաշխարհս, Թողին չար ոստիկանս 'ի վերայ աշխարհացս, զնոյն պահանջել յամենայն ամի նովին համարով և գրով։ Եւայլ մեծարեցաւ 'ի նոցանէ այր մի մեծատուն վաճառական, Ալմիկ[5] անուն, զոր ինքեանք Ալիլ կոչէին, այր բարեգործ, զոր երբեմն յիշատակեցաք. որ ապրեցաւ յաւերն Կարնոյ քաղաքի 'ի Թաղթարէն, հանդերձ որդւովքն. և էր յայնժամ 'ի Տփղիս քաղաքին բնակութիւն կալեալ, և հայր աւնուանեալ Թագաւորին Արեաց Վախթի և մեծարեալ

1 ՃՕ. գրով համարս։ Տպ. ընդ գրով համարոյ։

2 Թուին բովք պաղնդղի, որ և ձէպ կոչի առ մեզ, որպես ջաղ 'ի Թուղրքաց. այլք իմանան ղեղտպործս կամ շպարիչս։

3 Հին և անուանի աղահանքն 'ի Ճակատ գաւառի, մերձ 'ի Սուրմառի. որ և ցարդ մատակարարէ զպատուական նիւթն։

4 Ա. Գ. աղաչացուցեալ։

5 Վ. 147։

'ի ղանէն գրով և յաւետեանն աւազանն։ Նայց յեկե-
ղեցականացն ոչ լինչ առին Տարկս, զի չունէին հրաման
'ի ղանէն. նոյնպէս և որդիքն Սարաւանին՝ Շ՝նորհա-
ւորն՝ և Ս՝կրտիչ՝ ընչաւէտք և մեծատունք։

ԾԶ

ՎԱՍՆ ԵՐԹԱԼՈՑ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱՅԻՆ ՀԵԹՄՈՑ ԱՌ ԲԱԹՈՒ ՂԱՆՆ

Մեծահաւատ և քրիստոսասէր արքայն Նայոց Նե-
թում՝ որ 'ի կողմանս Ակիլիկեցւոց նստէր 'ի քաղաքն
Սիս, նա յառաջագոյն առաքեաց զեղբայր իւր զՍըմ-
բատ, որ զօրավարն էր նորին, առ ղանն Գ՝իւուգ՝ ըն-
ծայիւք և պատարագօք, և դարձաւ 'ի նմանէ ընծայիւ
և հրովարտակով ընդունելութեան. իսկ յորժամ Թա-
գաւորեաց Մ՝անգու ղանն՝ առաքեաց մեծ Թագաւորա-
հայրն և զօրապետն Նաղաու՝ որ 'ի կողմանս Հիւսիսոյ
զետղ առեալ կայր անթիւ բազմութեամբ որ ընդ նմա՝
առ ամէն մեծ և անհուն գետոյն՝ զոր Իթիլ կոչեն, որ
մտանէ 'ի ծովն Կասբից, առ Թագաւորն Նեթում
գալ տեսանել զնա և զՄ՝անգու ղանն։ Եւ նա երկու-
ցեալ 'ի նմանէ՝ գայ գաղտագողի այլակերպեալ զինքն՝
վասն ահին Մոնղքայ, որք սահմանակիցք նորա էին.
զոր Նոռոմոյ սուլդան անուանեն, որում անուն էր Ա-
զատին[2], զի ոխս մեծերեալ ունէին ընդ նմա՝ վասն ձեռն
տալոյ նորա 'ի Մաճարն. և փութով անցեալ ընդ եր-
կիր նորա[3] յաւուրս երկոտասան եկն 'ի Գ՝արս քա-
ղաք, և տեսեալ զՆաչու-նուինն, որ զօրապետ էր Մո-
ղարի զօրուն՝ որ յարևելս, և առ այլ մեծամեծան, և
պատուեալ 'ի նոցունց, զտեղի առ յոտն Ա՝րագածոյ,
հանդիպ լերին Ա՝րայի, 'ի գիւղն որ կոչի Ա՝արգենիս.
'ի տանն իշխանին՝ զոր Վ՝ուրդ անուանէին, Նայ ազ-
գաւ, կրօնիւք քրիստոնեայ[4], և որդիք իւր Ա՝աչէ և
Նասան. և կէն նորա Խորիշահ յազգէ Ա՝ամիկոնէից՝

1 Վ. 155։
2 Ազգէատին Քէյ-Քաուս Բ, սուլտան Ղոնիոյ։
3 Յամին 1254։
4 Որ էր վերակացու կարգեալ այնոց կողմանց 'ի մեծէն Ջաբարիէ ապաստալուէ. առհմ նորա ցվնց ազգ յիշի յարձանս վանորէից Զո-րոգեաց, նոյնպէս և մարզպանաց Մամիկոնի։

դուստր Արշպանայ, քոյր Աբգար–սեկլին և Աբիգո-
րոյ. մինչև բերան նմա ինչք ի տանէ իւրմէ՝ ի պետս
ընծայից և պատարագաց, զոր առաքեաց Հայր նորա ի-
ւանաց իշխանն Կոստանդին, յայնժամ ծեր գոլով, և
որդիք նորա Լևոն և Թորոս՝ զոր ելիցէ փոխանորդ
իւր. զի փոխեալ էր առ Քրիստոս բարեպաշտ Թագու-
հին նորա Օ ապել անուն, որ Թարգմանի Աղնւաբէթ,
այս է Աստուծոյ եօթնեերեկ[1]. զի արդարև ըստ անուանն
և հանգիստ էր նա կամացն Աստուծոյ, բարեգործ, ո-
ղորմած և աղքատասէր, դուստր մեծ Թագաւորին
Լևոնի՝ առաջինն պսակաւորին: Եւ իբրև գիտաց մեծ
կաթուղիկոսն Կոստանդին՝ եթէ գնաց նա խաղաղու-
թեամբ, և դադարեալ է ի մեծն Հայք, առաքեաց
զմեծ վարդապետն Յակոբ՝[2] զոյր բանաւոր և իմաս-
տուն, զոր առաքեալ էին յառաջագոյն վասն սիրոյ և
միաբանութեան՝ առ Թագաւորն Յունաց Յովհաննէս՝[3]
որ ունէր զկողմանս Ասիոյ, և մեծացեալ էր յաւուրսն,
և առ պատրիարքն նոցուն, երթեալ իմաստախոհ բա-
նիւք աստուածային գրոց՝ ընդդիմացան հարցաքննու-
թեան ժողովոյն Յունաց, որ յաղագս մի բնութիւն
ասելոյ ի Քրիստոս բամբասէին զմեզ Նեստորեանս
լինել. և նա խոհեմ բանիւք եղոյց գրովք յերկուց միա-
ցեալ զՔրիստոս՝ Աստուած և մարդ կատարեալ երկո-
քումբ, անձառ միաւորութեամբ, զաստուածութիւն
ոչ կորուսեալ և զմարդկութիւն ոչ շփոթեալ ի մի
բնութիւն փաստաւորեալ, գործելով աստուածաբար և
մարդկապէս: Զոյնպէս և որ վասն սուրբ–աստուա-
ծին էին բանք, զոր մեք ասեմք ի դէմն Արդւոյ, ըստ
Յովհաննու աւետարանչին վկայութեան, և որ այլ գայ-
թակղութիւնք կային առ նոսա, սակս դատանութեան
մերոյ, զամենայն աստուածիմաստ բանիւք և գրոց վը-
կայութեամբ հաստատեալ՝ չինեաց զմիտս նոցա ի սէր
և ի միաբանութիւն ընդ աղգս մեր, և դարձաւ ի նո-
ցանէ պատուով: Եւ զեպիսկոպոսն տէր Աստեփաննոս[4].

1 Յերրայականէն Թարգմանէ, յորմէ և առ մեզ եօթնեերորդ օրն և եօթնեակին, ըստ (սոպան):
2 Գուցէ անուանեալն Սահակ ի կաթողիկոսէն Հռեսոր:
3 Նախայիշեալն Լասգարիս:
4 Խմա առաքեալ ընդ Յակոբայ ի կաթողիկոսէն:

եկն և Աբիմաւր վարդապետն, որ լինէր ի Սկևռայն, գնացեալ անդ ի կոզմանց[1] արևելից, և Յարսեղ քահանայ որ դեսպան էր Յաթուէին՝ ընդ նմա իսկ եկեալ էր. և Յովրոս քահանայ կուսակրօն, և Կարապետ որ գրան երէց էր ալքային, հեզ բարուք և դիտնական. այլ և իշխանք յոլովք: Զորս ընդ իւր առեալ ալքային՝ չոգաւ ընդ աշխարհս Զուանից, և ընդ դուռն Վարբանդայ՝ որ է պահակն Շորայ, առ Յաթուն և առ Սարթաւան, որդի (նորա), որ էր քրիստոնեայ հաւատով. և մեծարեալ ի նոցունց բազում պատուասիրութեամբ, ապա առաքեցին առ ղանն Սանգու՝ ընդ երկայնաձիգ Ձանապարհն, յայնկոյս ծովուն Կասբից. և ելեալք ի նմանէ ի վեց մարերի ամոյ, և յերեքտասան մայիսի անցեալ ընդ Զայիկ գետն[2] եկին յԱլրն[3], որ է մեջ Ձանապարհին՝ ընդ Յաթուն և ընդ Սանգու ղանն. և անցեալ ընդ Արթիձ[4] գետ՝ մտին յաշխարհ Նայիմանին[5]. և եկեալ ի Յարախըտայն[6] և անցեալ ի Թաղարխատան[7] ի չորս հոգի ամոյ, և յերեքտասան սեպտեմբերի՝ ի տօնի նաւակատեաց խաչի, տեսին զՍանգու ղանն երևելի փառօք նստեալ, և մատուցեալ զընծայս՝ մեծարեցաւ անուն՝ ի նմանէ ըստ արժանւոյն. և կացեալ յօրդուն[8] աւուրս չխուն, և տուեալ նմա հրովարտակ նշանաւոր, զի մի ոք իշխեսցէ նեղել զնոսա, և գաշխարհս նորա. և ետ գիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս: Եւ եղ՝ ի նմանէ յաւուրն յիսներորդի՝ ի քան և երեք սահմի և՝ ի մի նոյեմբերի. և յերեսուն օրն հասին ի Գ ումնղուրն[9], և եկեալ՝ ի Պերպալեխն և՝ ի Պեշպալեխն[10], և յաւազուտ երկիրն[11],

1 ՕՕ. Ի կոզմանս:

2 Եայիգ, Yaïk, Iaïk որ Թաիփի յունէ արևելից հիւսիսոյ ծովուն Կաղբից, և արդ կոչի Ուրալ:

3 Անծանօթ և անաստղ անուն:

4 Որ խառնի յՕպի և Թաիփին՝ ի հիւսիսային Ովկիանոս:

5 Մեծ տոհմն Թաղարաց, ի սահմանս Ազդայի լերանց:

6 ՕՕ. Խորախատայն: Այն է Գարա-Խիդայի, աշխարհ ընդարձակ ընդ մէջ Թուրքաստանի, աջնապատին Քօպեայ և Դիպեթայ. այժմ Փոքր Պուխարա:

7 Որ յելից և հիւսիսոյ Գարա-Խիդայի, ուր էր Գարագօրում գահ մեծի ղանին:

8 Այսինքն՝ ի բանակին:

9 Թուի՝ ի Հարաւոյ լերանց Գարագօրումայ յանապատին Քօպեայ կամ Կոպեայ:

10 Պերպալեխն անծանօթ. իսկ Պեշպալեխն՝ Պիշպալիք՝ քաղաք էր Ույղուր Թուրքաց և յառաջն կոչէր Իլը:

11 Վերոյիշեալ մեծ անապատն է՝ Կոպի:

յորում կային մարդիկ վայրենիք, մերկք, մազ ունելով միայն ի գլուխն. և ստինք կանանց մեծ յոյժ և երկայն. և էին անբանք. յորում կան և ձիք վայրենիք, դեղին և սև գունով, և ջորիք սպիտակ և սեաւ գունով, և մեծ քան զձի և քան զէշ, և ուղտք վայրենիք՝ որք ունէին երկուս կուտակենս: Եւ անտի եկին ի Ալեքեան, և ապա մտին ի Քաղքաստան. ի Նամպալեքեան[1], և ի Խութափայն, և ի Կնկապալեքեան[2], և անտի ի Կոփրուկն, և ի Կինկապալեքեան, և ի Վուլատն. և անցեալ ընդ Աստ–գօլն՝ և ընդ Կաթին–ծովն[3], եկին ի Լուալիեան[4], և ի Կանապալեքեան[5], և անցեալ ընդ գետն որ կոչի Նիլան–Աւ[6], և անցեալ ընդ բազուկ լերին Տօրոսի[7], և եկեալ ի Գալաս[8]: Եւ եկեալ առ Գալասեան՝ որ էր եղբայր Մանգու ղանին, և առեալ էր իւր բաժին զկողմանս արևելից[9]. և ապա դարձեալք յարևմտից ի Հիւսիս՝ եկին ի Խութուխչի–ղան[10], և ի Պերքանեան[11], և ի Աղուլ–ղանն, և ի Կէրուսոյ–ղանն, և ի Կայիքանեան[12], և ի Խուղաին՝ որ է Կաամոյ, և ի Կնդրախոյրն[13], և ի Աղնաին՝ որ է Խարչուխ լեառն[14], յորմէ Սալչուխիքն[15] են, որոյ սկիզբն ի Տօրոս լեառնէ, և երթայ մինչև ի Խարչինն, և հատանի: Եւ անտի եկին առ Սարթաքն՝ որդի Նաեթուին՝ որ երթայր առ Մանգու ղանն, և անտի ի Սղաքն, և ի Օրարն՝ որ է սաստիկ մեծ[16], և ի Խարաչուխն, և յԱ-

1 Անճանօթ են դիրք քաղաքացս, այլ Ճանապարհն ընդ առևմուտս է հարաւախառն:

2 Ըստ այլոց Անկէ–պալեխ, որպէս թէ Եէնկի (նոր):

3 Սիւա–կէօլ՝ թարգմանի կաթին ծով, և թուի լինել մեծ պալքաշ, կամ մի ի մերձաւոր լճաց անապատին:

4 Աշ–մալիք կոչեցեալ ի թուրքաց, և թուի լինել ընդ մէջ վերոյիշեալ լճացդ և Խոսէ լճի:

5 Երկոքին ևս անուանքդ զՕձ նշանակեն (էջան), և ծանօթ է ցարդ Իլի քաղաք և գետ ի հիւսիսոյ թիւանշան լերանց որ են կոչեցեալ բազուկդ Տօրոսի:

6 Քաղաք, գետ և լճակ համանուն՝ ընդ մէջ Ջուի գետոյ և մեծի գետոյն Սիհունի (Եաքսարտ):

7 Ըստ վերոյգրելոցդ և ըստ բաժնին Մանկուի ի դէպ էր ասել առևմտից:

8 Անճանօթ տեղիք ի հիւսիսոյ կամ յաջմէ մեծի գետոյն Սիհունի:

9 Այլք Խոպաիոյ:

10 Թուի Աշա–Թաու կոչեցեալ բազուկն Թիան–շան լերանց:

11 Սէլճուք թուրքք:

12 Սիհուն կամ Սիր–Տէրեա և ըստ հնոց Եաքսարտ գետ մեծ, որ Թաւիի յԱրաչ ծովալիճ:

սուն, և՛ ի Սոլի, և՛ ի Հելեպոն [1], և՛ ի Տունուխան, և՛ ի Վխշակն։ Այս անտի յերեսուն օր՛ի Սմբրղանդ [2], և՛ ի Սարխուլն [3], և՛ ի Բրման [4] և՛ ի Բուխարա. և ապա անցին ընդ գետն մեծ Ջհոն [5]. և եկին՛ ի Մըլմլին [6], և՛ ի Սարախս [7], և ապա՛ ի Տուս [8] որ կայ ընդդէմ Խորասանայ, որ կոչի Ասղաստան [9]. և մտեալ՛ ի Սաղանդարանն, անտի՛ ի Պատան [10], և ապա յաշխարհն Նըլոսոյ [11] ՛ի սահմանս Մուրհետին [12]. և եկեալ՛ ի Տամղան [13], և յԱխ մեծ քաղաքն [14], և՛ ի Խզուինն [15], և անտի յԱՀր [16] և՛ ի Զանգիան [17], և՛ ի Մհանա [18], յերկոտասան օրն՛ ի Ջահլըժ։ Այս յետ քան և վեց աւուր անցեալ ընդ գետն Նրասխ, և եկեալ՛ ի Ախսիան [19] առ Բաջու–նուին, որ գլխաւոր էր Ջահթար զօրուն, և նա յուղարկեաց զնա առ Խօձա–նուին, զոր Թողեալ էր փոխանորդ իւր գլխաւոր զօրուն. և ինքն առեալ զգլխաւորս զօրուն՝ գնաց ընդառաջ Հօլաւուին՝ եղբօր Մանգու ղանին, որ գայր յարևելս։

Իսկ Թագաւորն քարեպաշտ Հեթում եկեալ՛ ի

1 Օլթրար ցարդ ծանօթ է յեղջ Սիհունի, առ որով և այլք ոմանք։

2 Ի մայրաքաղաք մեծին Պուխարայ, ըստ այժմուս. ուր և յետոյ յիշեալն Բուխարա մեծ քաղաք։

3 Թերևս քաղաք Համանուն Ջառաքշան գետոյ. առ որով և Տոռս։

4 Քէրմինիէ զարդիս։

5 Ճիհուն կամ Գեհոն, որ և Ամու–ռէրեա, և ըստ նախնեաց Ոքսոս. և սա Թափիլ յԱրալ։

6 Երկու քաղաք են յայս անուն առ Համանուն Մերու կամ Մերվ կամ Մըրմն գետով, որ և Մուրղ–ապ. մին՛ ի հիւսիսոյ՝ Մէրէ Շահիճան, ընդ որ Թուխ անցեալ Հնդմոյ, միւսն ընդ հարաւ Մէրվ–բոպ, նշանաւոր՛ ի հնումն, ուր գործ մեծի քաջութեան գործեալ է սրբոյ և մեծին Վարդանայ։

7 Ծանօթ է և այժմ Սէրուխս անուամբ, յարևմտից Մէրվիրուտոյ առ Դէձինա գետով։

8 Ա. Գ. Տուտ. Բ. Տունս. այն է Դուս քաղաքն ծանօթ քաղաք Խորասանայ։

9 Թերևս Ռուէղ՝ ըստ աշխարհագրութեան Խորենացւոյ։

10 ՕՕ. Պատայն այժմ Պօսատամ աւան ընդ մէջ Աստերաբատայ և Տամղանայ։

11 Տպ. Երոպոյ։

12 Մուրհետքն աւազակք. տես Վ. 97։

13 Տամղան, ՛ի հարաւոյ Մազանդարանի։

14 Մերմ էր յայժմեան Թադաւորանիսան Դէհրան։

15 Յարևմտից հիւսիսոյ Դէհրանայ՝ քաղաք մեծ։

16 Աւան յարևմտից Գազուինայ։

17 Ի հիւսիսոյ Ահարայ։

18 Ընդ մէջ Ջէնճհանայ և Դավղիժու, ՛ի սահմանածայր Աղբրպատականի Մարայ։

19 Յերկրին Սիւնեաց, ՛ի Հայս։

տուն իշխանին Հռոմին՝ ի գիւղն Ալարդենիս[1], ուր Թո-
ղեալ էր զաղխ իւր և զկարասի, և ինայր գալստեան
Խարսղի քահանայի՝ զոր յուղարկեալ էր առ Խաթուն
վերստին, զի ցուցցէ նմա զգիրսն և զհրաման Աանգու
գանին, զի և նա ըստ նմին օրինակի գրեսցէ հրամանս։
Ապա եկին առ նա վարդապետք իւր, Յակոբ՝ զոր Ե-
թոզ՝ աստէն՝ ի պէտս գործոյ եկեղեցւոյ, և Ախի-
թար՝ զոր դարձոյց՝ ի Խաթունէն, մինչև երթեալ էր
առ Աանգու գան. այլ և եպիսկոպոսք և քահանայք և
իշխանք քրիստոնէից՝ ողք գային առ նա՝ սիրով ընդու-
նէր զամենեսին. զի այր քաղցր էր և խնաստուն և գիտ-
նաւոր գրովք. և տայր պարգևս, և ուրախ արձակէր
զամենեսին. տայր պարգևս և հանդերձս քահանայա-
կանս՝ ի զարդ եկեղեցեացդ, զի յոյժ սիրող էր պատա-
րագի և եկեղեցւոյ. և ընդունէր զամենայն աղգայ քրիս-
տոնեայս, և աղաչէր սիրով կալ առ միմեանս, իբրև
զեղբարս և զանդամս Քրիստոսի. որպէս պատուիրեաց
Տէր, Թէ յայսմ ծանիցեն Թէ իմ աշակերտք էք՝ ե-
Թէ սիրէք զմիմեանս։

Խազում իրս զարմանալիս և անճանօթս պատմէր
մեզ զբարբարոս ազգաց՝ զոր տեսեալ էր և լուեալ։ Ա-
սէր, Թէ կայ աշխարհ մի անդր քան զԱտայիքն[2]. ո-
ր կանայքն են՝ ի ձև մարդոյ՝ բանականք, և արքն՝ ի
կերպարանս շանց, և են անբանք և մեծք և մազեղք.
և ոչ ումեք Թոզուն մտանել յաշխարհս իւրեանց՝ շուն-
քըն. և որսան որս շունք՝ և այնու կերակրին շունք և
կանայքն. և՝ ի խառնակել շանց ընդ կանանցն՝ արուքն
շանց կերպն ծնանին և էգքն կանանց։

Կայ և կղզի մի աւազուտ՝ յորում բուսանի ծառօ-
րէն ոսկր ինչ պատուական, զոր ձկնատաւն կոչեն. և՝ ի
հատանելն՝ այլ բուսանի՝ ի տեղին, ըստ նմանութեան
եղջերաց։ Կայ և աշխարհ բազում կռապաշտից, ո-
պաշտեն կուռս կաւեղէն մեծ յոյժ, անուն Շակմա-
նիա[3], և ասեն չ՚ստուած երիք հազար քառասուն ա-
մաց. և կայ ևս երեսուն և հինգ գուման ամն, որ է

1 Ցբրագածոան գաւառի Ա-
բարատայ։

2 Կաթայի կամ Խութայի կո-
չէին արևմտեան հիւսիսային կամ
համարէն Չինք, ՚ի գրչաց միջին
դարուց։

3 Վ. 159։

մին դուման տան հազար և քառասուն ամաց. և ապա հանեն զնա յաստուածութենէն։ Ա՛յլ միւս ևս ոմն՝ որում անուն էր Մադրին[1], արարեալ են և նմա պատկեր կերս կաւեղէնս անհնարին մեծութեամբ[2] գեղեցիկ տաճարի. և ազգն են ամենայն հանդերձ կանամբք և մանկտովք քուրմք, և անուանին Տոյինք, գերծածք հեթրօք և մոլուօք. ունին և փիլոն գեղին ըստ նմանութեան քրիստոնէից, բայց զլանջօքն ունին և ոչ զխիկամբք. և են պարկեշտ ի կերակուրս և յամուսնութիւնս. առնուն կին ի քսան ամին, և մինչև յերեսուն ամին շաբաթն երկուց անգամ մերձենան ի նոսա, և մինչ ի քառասուն՝ յամենեան երեք հետ. և յորժամ անցանէ յիսուն ամն՝ այլ ոչ մօտին ի նա։

Ա՛զգս և այլ ինչ պատմէր Թադեւորն իմաստասէր ի խժական ազգացն, զոր Թողաք մեք, զի մի յաւելցուք համարեցայ։ Յութ ամիան ապա եհաս յերկիրս Տայոց յետ ելանելոյ ի Մանկու զանէն. և էր Թուին Տայոց եօթն հարիւր և չորս։

Ծէ

ՎԱՍՆ ԿՈՏՈՐԱԾԻՆ ՑԵՐԿՐԻՆ ՀՈՌՈՄՈՑ

Սկզբ ի սկսանել Թուին Տայոց եօթն հարիւր և հինգ՝ մեռաւ Ա՛ամէտ զօրապետն Հիւսիսոյ, և որդին նորա Սարգսէն ի Ձանապարհին էր, զի երթայր առ Մանդու զանն. և ոչ դարձաւ ի տուն իւր Թաղել զհայրն իւր, այլ գնաց զառաջի եղեալ Ձանապարհս իւր. ընդ որ յոյժ ուրախացեալ Մանդու զանն՝ էլ ընդ առաջ նորա, և մեծարեաց զնա ի պատիւ յոյժ մեծ. և ետ նմա զիշխանութիւն հօրն իւրոյ իշխել ամենայն զօրացն, այլ և ամենայն հնազանդելոց իշխանութեան նորա, և երկրորդ իւր կոչել, և տալ հրամանն տիրաբար, և յուզարկեաց զնա ի տուն իւր։ Ընդ նմա էր և քաղեպաշտ իշխանն Աստղենոյ Ջալալն, որ երթեալ էր ցուցանել զաղէտս իւր՝ տեառն տիեզերաց, զոր կրեաց նա Ա՛զդուն ոստիկանէն. որ հազիւ զերծաւ ի մա-

1 Վ. 159։ 2 Տպ. ի գեղեցիկ պատկեր։

հուանէ 'ի սաղրելոյ Տաճկաց. և ետ նմա գիր՝ իշխանութեան իւրոյ տիրել սեփականաբար և ոչ երկնչել յումեքէ. զի սիրէր զնա Արդախան վասն քրիստոնէութեանն, զի և նա քրիստոնեայ էր։ Իբրև[1] եհաս իշխանութիւն իւր Արդախն երևելի վաւառք, ազգականքն իւր տաճկահաւատ Նարաքայն և Նալքաշայն՝ ետուն նմա մահադեղ և լուծին զնա 'ի կենացս, և մեծ տրտմութիւն եղև ամենայն քրիստոնէիցն, այլ և զըլխովին իսկ Անգու զանին, և եղբօր իւրոյ Նօլաւուին, որ տիրէր ամենայն կողմանցն արևելից։ Նայց մինչեւ եղեաւ էին այսոքիկ իրք, մեծն 'ի զօրավարս՝ զանաձևն Նալաւու՝ հրաման ետ ամենայն Ճահաթար զօրուն՝ որ յարևելս, որոց գլխաւորն էր Նաչու–նուին, ամենայն ախիւք իւրեանց և ընչիւք՝ թողուլ զերկիրն կալուածոյ քնակութեան իւրեանց՝ զՈուզան և զաշխարհն Ղզուանից, Նայոց և Ս բոց, և երթալ (յերկիրն) Նոռոմոց. զի ինքն նստցի փոխանակ նոցա 'ի բարի երկիրն. զի յոյժ բազմութեամբ եկեալ էր նա. մինչ զի ասեն թէ ամիս մի հազիւ բովանդակեցաւ զօր նորա անցանել ընդ մեծ գետն Ց հուն։ Ա.յլ և ոմանք յազգականաց նորա 'ի կողմանց Նաճուի և Արդախին եկին անցին ընդ դուռն Դարբանդայ յայնկոյս՝ բազում և անթիւ զօրօք, արք մեծամեծք և գլխաւորք իշխանութեամբ. որոց անուանքըն էին՝ Նալախա, Տուտհար, Գ ուլի, զոր մեք իսկ տեսաք, Թոռունք Ընկրզ զանին[2], զոր և աստուածորդիս ասէին. որք հարթեցին զիւրացուցին զամենայն անցս Ճանապարհին՝ ընդ որ անցանէին, զի սայլիւք իսկ գային, և բազում տառապանս հասուցանէին ամենայն աշխարհաց հարկապահանջութեամբ և յափշտակութեամբ, ուտելով և ըմպելով անյագաբար, և 'ի գրուն մահու հասուցին զամենայն ազգս։ Ա.յլ և միւս ընդ այլ բազում նոր եղաւ յԱ.րղունէն՝ մանի և խաւիչուրի[3]. եղաւ հրաման 'ի Նալաւուէն պահանջման հարկի, զոր Թաղարն[4] ասեն. յամենայն գլխոյ որ մնեալ

1 ՕՕ. Է։

2 Թոռունք և Թոռնորդիք Ճիւչեայ որդւոյ Ճինկիզխանի։

3 Տպ. Փոխըսրէ։ — Թուի անանահարիկ, որպէս և մանին. պատմիչք Թաթարաց փոխըսր կոչեն ընդհարուրորդ անասնոց, այսինքն զմի 'ի հարիւրոցն առնուլ։

4 ՕՕ. Բաղդան։ Թաղարն հարկ՝ բազում ուրիք նշանակի յարձանս Աեոյ և այլուր, առանձնակ և զոյգ՝ որպէս Եղին–Թաղար, Կալի–Թաղար։

եր՝ի գիրն արքունի՝ պահանջէին հարիւր լիտր ցորեան, չինաւն լիտր գինի, երկու լիտր բրինձ և ծնծաստ [1] եւ րեք տոպրակ, երկու չուան, մի սպիտակ [2], մինետ, մինալ, Թողլ զայլ կաշառս. և՝ի քսան անասնոյն մի անասուն և քսան սպիտակ. և որ ոչ գոյր՝ զուստերս և զդստերս առնուին ընդ պահանջմանն. և այսպէս նեղէցաւ և տառապեցաւ երկիրն ամենայն: Նոյնժամայր զօրքն Թէպէտ դժուարեցան Թողուլ զկալուածոյ երկիրն իւրեանց, յանկամայ Թողին յահէ նորա, զի յոյժ երկընչէին՝ի նմանէ՝ որպէս՝ի զանէն, և գնացին յաշխարհն Նոռոմոց: (Եւ սուլտանն Նոռոմոց) եւ ընդդէմ նոցա պատերազմաւ, և ոչ կարաց ընդդիմանալ, այլ փախուցտական անկաւ նա Ա՛նլայիա [3] կղզին. և նոքա՝ի սուր սուսերի մաշեցին զամենայն գաւառս իշխանութեան նորա, մինչև՝ի ծովն Ովկիանու և Պոնտոսի, կոտորելով զնոսա, և յափշտակելով. կոտորեցին զՎարնոյ քաղաք և զՆիկայն և զՎաստ, զԵսարիա և զՕնն, և որ շուրջ զնոքօք գաւառք. և զաղխս իւրեանց դարձուցին յետս, գնալ յինչևանս իւրեանց՝ հրամանաւ Նոռոսլաւուին, և ինքեանք ասպատակ շրջեալ ընդ կողմանս կողմանս: Գնաց ընդ նոսա և Թագաւորն Նեթուամ, որ եկեալ էր՝ի Վանգու զանէն և՝ի Նաթուէն և Վարդահէն և՝ի Նօլաւուէն. և էր առ [4] Նաչու–նուինն, որ քաղուամ զօրօք առաքեաց զնա յերկիր իւր՝ի Վիլկիա, ՚ի քաղաքն Վիս. և բազում ընծայիւք և զօրօք սպասաւորութիւն կատարէր Նաչու–նուինի [5] և զօրացն՝ որ ընդ նմա, մինչև զի Թուղթ գոհութեան և գովութեան գրեալ առ Նօլաւուն վասն նորա: Նոյն մեծն Նօլաւու՝ զի այր պատերազմող էր, ժողովեաց զամենայն բազմութիւն զօրացն և գնաց յերկիրն Ա՛ուզհետաց, Ա՛լամուդ [6], և կալաւ զնա. զի՝ի բազում ամաց պաշարեալ էր զնա զօրն արքունի. զի որդիք Ա՛լադինին սպանին զՀայրն իւրեանց, և ինքեանք եկին առ Նօլաւուն. և նա հրաման ետ քակել զամենայն բերդո-

1 Թուի հասկախառն կամ յայլ դահառն գարի կամ այլ ընդեղէն:

2 Արծաթի դահեկան ժամանակին:

3 Թուի Ալայա կամ Կորակեսիոն ըստ հնոց, հրուանդան և ամուր նաւահանգիստ յեղեր Պամփիւլիոյ:

4 ՕՕ· էառ:

5 ՕՕ· Բաչունոյ:

6 Վ· 97· 149:

լայն ամուր՝ որ կայրին Ա՛լամուդն։ Եւ ինքն պատուէր հրամանի ետ ամենայն զօրացն և ամենայն հնազանդելոց ընդ ձեռամբ նոցա՝ գումարել ՚ի միասին ՚ի վերայ մեծ քաղաքին և իշխանութեանն՝ որ կոչի Պաղտատ, այս է միջոց Պարսից և Ա՛սորւոց, զի դեռ չէ եւս էին առեալ զնա. և խալիփայն որ նստէր ՚ի նմա՝ էր յազգէն Մահմէտի. զի խալիփայն յետամնաց[1] ասի, որում հնազանդեալ էին ամենայն տաճկահաւատքն և սուլտանքն որ յազգէն Թուղրքայ և Սելջուայ և Պարսից և Նախճաւանոյ, և այլոց ազգայ. և նա (էր) գլխաւոր հրամանատու իշխանութեան նոցա[2]. և նոքա զամենեքեան հնազանդէին և պատուէին զնա, որպէս զազգակից և զհամազգի օրէնսդրին իւրեանց, առաջին ..... ցուցչին։ Պնացին յայսպիսեաց[3] և այլ մեծամեծ գլխաւորք կողմանցն Խաթուին՝ Պոլն և Խալաղայն և Տուտարն[4] և Պատաղանն. զի ամենեքեան պատուէրին զՆօլաւուն որպէս զղեանն, հնազանդէին նմա և երկրէին ՚ի նմանէ։

ԾԸ.

ՎԱՍՆ ԱՒԵՐԱԾՈՑՆ ԲԱՂԴԱՏԱՑ

Մեծն ՚ի Թագաւորս երկրի և տիեզերակալ Ա՛նկու զանն յեօթնհարիւր և եօթն Թուին Հայոց՝ զօր գումարեաց անթիւ և անհամար, և գնաց ՚ի հեռաւոր աշխարհն ընդ կոյսանս արևելից հարաւոյ, ՚ի վերայ ազգին որ կոչի Կանգաս[5], զի ապստամբք էին ՚ի նմանէ, և ոչ տային նմա հարկ՝ իբրև զայլ աշխարհս, զի էին այնք պատերազմողք և ամրացեալք աշխարհաւ, և կռապաշտք, և ուտէին զծերս իւրեանց և զպառաւսն, զի ժողովէին ցեղքն ամենայն՝ որդիք և Թոռունք և Թոռնիքայք, և զծերացեալ ծնօղս իւրեանց մորթէին ընդ բերանն, և հանեալ զմիսն և զոսկերսն եփէին և

1 Իբրև յաջորդ կամ տեղակալ։
2 OO. Նոքա։
3 Թուի՝ ՚ի սղէն ՚ի պաշարումն։
4 Վերոյիշեալքն (218)։
5 Նանքիաս ըստ Թաթարաց, որ է Հարաւային Չինաստան, ուր և մեծ Թագաւորութիւն էր յայնժամ Սունկ կոչեցեալ։

ուտէին առանց ինայուածի, և զմորթն հանեալ տիկ՝ առնուին և մէջն լնուին գինի, և ընդ առնացի անդամըն ըմպէին ամենեքեան՝ որ յապզիէն էին և ոչ օտարացեալք, իբր ԹԷ ի նմանէն սերեալք. և նոցա սեփական է զայն ուտել և ըմպել, և զոսկերն գագաթան պատեալ ոսկով՝ նուաւս ըմպէին զբուվանդակ տարին։ Ոգաւ ի վերայ նոցա ի պատերազմի՝ զանն Ա՛անգու, և կոտորեաց և հնազանդեցոյց զօրեղապէս. և ի դառնալն ի տուն՝ կալաւ զնա ցաւ մահու և մեռաւ. և կալաւ զաթոռ նորա եղբայր իւր Ա՛րիք–բուղայն[1]։ Յոկ մեծն Հօլաւու եղբայր նորուն և գլխաւոր ի նմանէն կարգեալ ի վերայ զօրուն որ յարևելս, հրաման ետ ամենայն հնազանդելոց իւրոց առ հասարակ՝ գնալ ի վերայ մայրաքաղաքին Ցաձկաց՝ Պաղտատայ, որ էր նիստ արքայութեան Ցաձկաց, և զթագաւորն որ նըստէր ի նմա՝ ոչ կոչէին սուլտան կամ մելիք, որպէս սովոր են զայլսն անուանել, որ ի Ճարտասից կամ ի Պարսից և ի Հնդացն էին բռնացեալք, այլ Խալիֆա անուանէին, այսինքն յետամնաց ի Մահմետ. ի վերայ նորա խաղաց մեծն Հօլաւու ամենայն բազմութեամբ, ամենայն ազգօք հնազանդելովք, յեզանակս աշնան և ձմերան՝ վասն սաստիկ տօթոյ երկրին։ Եւ նախ քան զերթալն իւր՝ հրաման ետ Խաչու–նուէնին զօրացն՝ որ ընդ նմա էին յաշխարհն Հոռոմոց՝ գնալ և անցանել զմեծ գետն Տիգրիս, յորոյ վերայ շինեալ է Պաղտատ քաղաք, զի մի ոք փախիցէ ի քաղաքէն նաւովք՝ երթեալ մտանել ի Կատիսբոն[2] կամ ի Պարսից ամրոցն. և նոցա անյապաղ արարեալ զհրամայեալն՝ կապեցին կամուրջս նաւեայ՝ ի վերայ գետոյն մեծի, և ընկեցին ցանցս ամուրս հանդերձ երկաթի կեռօք[3] և շամփրօք ի մէջ գետոյն և յատակն, զի մի ոք լողալով զերծանիցի. և հեռի ի քաղաքէն՝ զի մի գիտասցեն։ Յոկ խալիֆայն Ա՛ուսդասար՝[4] որ նստէր ի նմա, հպարտացեալ և յանձնապաստան, առաքեաց զօր

1 ՕՕ. Աղբուղային. զոր նուաձեաց միւս եղբայրն Ղուպիլայի ցան։

2 Տիգրան, Կտեսիփոն կոչեցեալ ի Յունաց, աթոռ Սասանեանց։

3 ՕՕ. Խօփ։

4 Խալիֆայն կոչիւր Մօսդասին կամ Մօսդազէմ որդի Մօսդանսէրայ։

բազում ՚ի վերայ այնոցիկ՝ որ պահէին զգետն, ՚ի ձեռն առն միոյ գլխաւորի, որում անուն էր Դաւդար[1], ոստիկան տան նորա. որ երթեալ յաղթեաց զառաջինն, և կոտորեաց ՚ի Ջալթարէն զօրս իբրև երեք հազար. և յերեկոյին հասեալ նստաւ ուտել և ըմպել անհոգութեամբ. և առաքեաց աւետաւորս առ խալիֆայն, թէ հարի զնոսա, սակաւ մնաց, և զնոսա սպառեմ ՚ի վաղիւն:

Իսկ զօրն խորամանկ և բազմահնար Ջալթարէն, զգիշերն ամենայն սպառազինեալք և կազմեալք՝ պատեցին շուրջանակի զբանակն Տաճկաց, ընդ որս էր և Օ՞աքարէ իշխանն՝ որդի Շ ահնշահի. և ընդ լուսանալ առաւօտուն՝ սուր ՚ի գործ եդեալ առ հասարակ կոտորեցին զամենեսեան և գետամոյն արարին, և ոչ ոք մնաց ՚ի նոցանէ ապրեալ, բայց ՚ի սակաւուց: Իսկ նմին առաւօտու և մեծն Խօլաւու պատեաց զքաղաքն Պաղտատ շուրջանակի, տուեալ ամենայնի գիրկ մի ՚ի պարսպէն փլուցանելոյ, և պահել զգուշութեամբ, զի մի ոք փախիցէ. և զքաջն Պաւշ և զայլս առաքեաց դեսպան առ խալիֆայն՝ գալ նմա ՚ի հնազանդութիւն և հարկել զանին: Նա նա խստութեամբ ետ պատասխանի և անարգանօք, գրեալ զանձն Ջինգիզ[2], և տէր ծովու և ցամաքի, պարծելով ՚ի դրօշն Մահմետի, զի աստ է ասէր. և թէ շարժեմ զնա՝ առ հասարակ կորընչիս դու և տիեզերք, և դու շուն մի ես Ջալթարք, ասէ, ես զիաւրդ տաց քեզ հարկս և հնազանդեցայց: Իսկ Խօլաւուն ոչ ըմբռնստացաւ վասն անարգանացն և ոչ գրեաց ինչ մեծաբանութիւնն, այլ միայն զայս ասաց. Ընտուած գիտէ զինչ առնէ: Նա հրաման ետ և փլուցին զպարիսպն առ հասարակ. և ասաց դարձեալ շինել և պահել զգուշութեամբ, և այնպէս արարին. և լի էր քաղաքն զօրօք և ամբոխիւ, և զեօթն օր կացին ՚ի վերայ պարսպին, և ոչ ոք նեռտաձիգ եղև ՚ի նոսա, կամ սուր ՚ի գործ էարկ, ոչ ՚ի քաղաքէն և ոչ ՚ի Ջալթար զօրաց, և յետ եօթն աւուր սկսան քաղաքացիքն խընդրել զխաղաղութիւն, և ելանէին առ նա սիրով և հնա-

1 Որ է փեղեաւոր رئاوا այսինքն զրահաւոր, զի զայս անուն կրէր յայնժամ մեծ հազարապետ տէրութեան խալիֆային:

2 ՕՕ. էջանփիր. ՃԻհանկիր այսինքն աշխարհակալ جهانكير

զանդուլեաւքն, և հրամայեաց Յօլաւուն այնպէս առնել. և ելանէին ընդ դրունս քաղաքին անվնաս բազմութեամբն եւ և ելս առնելով զմիմեանսն, թէ ո՞ յաջողջ հասցէ առ նա. և նա զեկեալն բաժանէր զօրացն և հրամայէր հեռացուցանել՝ի քաղաքէն, և կոտորել՝ի ծածուկ, զի մի գիտասցեն այլքն. և կոտորէին զամենեսեան: Եւ յետ չորրորդ աւուրն եւ խալիֆայն երկու որդւովք և ամենայն մեծամեծօք, և բազում ոսկի և արծաթ և ականս պատուականս և մեծագին հանդերձս բարձեալ ընդ իւր, ՚ի պէտս պատարագաց Յօլաւուին և մեծամեծացն. և նա զառաջինն մեծարեաց զինա, մեզադրելով ընդ յամենն և ոչ գալ առ նա վաղվաղակի. ապա եհարց զինա. Ո՞րինչ ես դու՝ Ստուածծ ես թէ մարդ. և նա ասաց. Ա՛րդ և ծառայ Ստուծոյ: Ասէ Յօլաւուն. Ապա Ստուածծ ասաց քեզ անարգել զիս, և շուն կոչել և ոչ տալ շանս Ստուծոյ կերակուր և ըմպելի: Ասդ ՚ի քաղցնուլս՝ շունս Ստուծոյ կերիցէ զքեզ. և սպան զնա ձեռօք իւրովք [1]. այդ ասէ պատիւ քեզ՝ զի ես սպանի զքեզ, և ոչ եւս այլ ումեք սպանանել. և զմի որդի խալիֆային հրամայեաց որդւոյ իւրում սպանանել, և զմիւս որդին տալ գետոյն Տիգրիսի սաղաւաթ [2], զի ոչ մեղաւ մեզ ասէ, այլ գործակից մեզ եղև ՚ի կոտորել զանզգամն. և ասաց. Ա՛յս այրս բազում արիւն եւս հեղուլ հպարտութեամբ, երթիցէ տացէ պատասխանի Ստուծոյ, և մեք անպարտս լիցուք. կոտորեաց և զայլ մեծամեծսն:

Եւ ապա հրամայեաց զօրացն՝ որ պահէին զպարիսպն՝ իջանել կոտորել զբնակիչս քաղաքին ՚ի մեծաց մինչև ՚ի փոքունս. և նոցա զկարգ առեալ ըստ օրինակի ոմոյ արտոյ՝ կոտորեցին անթիւ և անհամար բազմութիւն արանց և կանանց և տղայոց. և զաւուրս քառասուն ոչ դադարեաց սուրն ՚ի գործոյ, և վաստակեցան ձեռք իւրեանց, և զայլս ՚ի վարձու ունէին, և կոտորէին անխնայ: Այդ կին Յօլաւին աւագ խաթունն քրիստոնեայ էր, որ կոչէր Տօխտուզ Խաթուն. սա խնդրեաց զքրիստոնեայսն՝ որք էին ՚ի Պաղտատ, նեստորական աղան-

1 Ոչ թուի ստոյգ. այլով օրինակաւ ետ սպանանել զնա, մինչ ինքն Հուլաւու մեկնեալ խոկ էր ՚ի քաղաքէն:

2 Սալվատ صلاط աղերս, կամ նուէր:

պով և Թէ յայլ աղգաց, և եթող զնոսա ընչիւք և ըս-
տացուածովք. զի խնդրեաց յառնէն իւրմէ՝ ոչ սպանա-
նել զնոսա: Նա լցան ոսկւով և արծաթով և մեծագին
հանդերձիւ. զի էր քաղաքն յոյժ փարթամ, որ ոչ
գտանիւր նման նմա ՚ի վերայ երկրի. և ինքն Հօլաւու
կալաւ իւր բաժին զգանձն խալիֆին, և եբարձ ՚ի նը-
մանէ երեքհազար և վեցհարիւր բեռինս ուղտուց. և
ձիոյ և ջորւոյ և իշուց ոչ գոյր Թիւ. և զայլ տուընան լի
գանձիւք՝ կնքեաց մատանեաւ իւրով, և եթող պահա-
պանս, զի ոչ կարաց բառնալ զամենայն, որ անչափ էր
բազմութեամբ. զի հինգհարիւր և հնգետասան[1] ամ
էր յորմէհետէ շինեցաւ քաղաքն ՚ի Ջափրէ իսմայե-
լականէ, ՚ի հարիւր ինննսուն և չորս Թուին Հայ-
ոց, ՚ի վերայ Տիգրիս գետոյն, ՚ի վեր քան զԱա-
տիսբոն, հեռի ՚ի Բաբելոնէ, հինգ աւուր ճանա-
պարհաւ. և զամենայն (ժամանակն զոր) կացեալ
էր ՚ի Թագաւորութեան իւրեւ անյագ տզրուկ կը-
լեալ զամենայն տիեզերս, և այժմ ՚ի բաց փախեաց
յեօթն հարիւր և եօթն Թուականիս Հայոց, տալով
զվրէժս արեանց զոր եհեղ, և չարեացն զոր գործեաց,
յորժամ լցաւ չափ մեղաց իւրոց առաջի ամենագիտին
Աստուծոյ, որ հատուցանէ արդար իրաւամբք անաչառ
և ստուգութեամբ. և դադարեաց գոռ և ..... Թա-
գաւորութիւնն Տաճկաց, որ և տևեաց ամն վեց հա-
րիւր քառասուն և եօթն[2]. և առաւ Բաղտատ յառաջ-
նումն աւուր աղուհացիւ յերկուշաբաթի օրն, նաւա-
սարդի քսան[3], ըստ շրջագայութեանս: Նա զայս ամե-
նայն պատմեաց մեզ Իշխանն Հասան՝ զոր Պաօչն ա-
նուանէին, որդին Վասակայ քարեպաշտի, որդւոյ Հաղ-
բակայ, եղբայր Պապաքին և Վկդեմայ, Հայր Վկդե-
մայ և Պապաքին և Հասանայ և Վասակայ, որ ակա-
նատես և ականջալուր էր իրացս:

1 Եթէ ՚ի ՃՂԴ (745) Թուին շինեցաւ և յ'ՉԻ (1258) աւերե-
ցաւ՝ 513 կամ 514 ամք լինէին և ոչ 515· բայց ՚ի յիշեալ Թուա-
կանի շինութեանդ (745) և ոչ իսկ գահակալեալ էր Ջափրայ (ճեա-
ֆար): Տ· Վ· 150:

2 Ի հիճրէդի Թուականէն (621) սկսեալ լինին 637 և ոչ 647 ամք:
Բայց հեղինակդ հաշուէ յերևելոյն Մահմէտի և տասն ամաւ յառաջ
քան զփախուստան:

3 Որ է 4 փետրուարի 1258 ա-
մին· Թէպէտ և մասն մի քաղա-
քին աւերեալ և բանագնացու-
Թիւնք լինէին, այլ աւուրքք ինչ
յետոյ եղև առումն նորին և մուտն
Թաթարաց:

ԾԹ

ՎԱՍՆ ԱՒԵՐԱՅԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԱՑ ՓՈՂԱՌԻՆ

Արդ՝ ի նոյն (ամի) աւերելոյն Նաղդատայ՝ մեծն Նօլաւու՝ ի գալ գարնան ժամանակին զօր գումարեաց և ետ՝ ի ձեռն որդւոյն կրտսերին, որոյ անուն էր Վ խասմուԹ[1], և զմեծ վերակացու տանն իւրոյ զԱլիզենուինն[2] առաքեաց ընդ նմա, գնալ՝ ի կողմանս Ասիրատ գետոյն՝ զբօսանաց աղագաւ, յառ յաւար և՝ ի հնազանդեցուցանել զկողմանսն զայնոսիկ։ Եւ մինչ դեռ անցանէին ընդ քաղաքն Մարտիրոսաց՝ որ կոչի Մոաֆարղին, կոչեցին զնոսա՝ ի հնազանդուԹիւն, տալ զօրս և հարկս, և կալ անհոգուԹեամբ. և սուլտանն որ՝ ի նմա էր՝ յազգէն Ղզլեանց՝ ոչ առ յանձն. այլ զօր ժողովեալ ել զկնի նոցա և սպան զոմանս՝ ի նոցանէ, և եմուտ ինքն՝ ի քաղաքն և ամրացաւ յերեսաց ԹաԹարաց զօրուն. և նոցա ԹողեալՀ զօրս ԹաԹար՝ ի վերայ քաղաքին՝ ինքեանք չոգան մինչ՝ ի գետն Ասիրատ՝ ի կողմանս Միջագետաց՝ և առին յաւար, և դարձան յաւելին՝ ի զօրսն՝ որ պահէին զքաղաքն Մարտիրոսաց. և եկեալ առ Նօլաւուն՝ պատմեցին զոր ինչ արարին, և զաստպատակուԹիւն քաղաքին. և նա յղեաց զօր բազում՝ ի վերայ քաղաքին. և գԼհասաւորս կացոյց՝ ի վերայ զօրացն՝ զՂաղատա զոմն, որ զօրավար էր յառաջ եկեալ ԹաԹար զօրուն, և քրիստոնէից՝ զիշխանն Պռօշ, զոր Նասան կոչէին, արք քաջք և անուանիք. երԹալ պաշարել զքաղաքն յամենայն կողմանց և ոչ տալ Թոյլ մտողի և ելողի։ Եւ երԹեալ նոցա հզօրեցաւպէս մարտնչէին, եգեալ բաբանս և փիլիկուանս. հատին և զջուրն որ մտանէր՝ ի քաղաքն. նոյնպէս և քաղաքացիքն կռուէին ընդ նոսա զօրեղապէս, և զբազում ԹաԹարս սպանին և զքրիստոնեայս որ ընդ նոսա։ Եւ այսպէս զամն երկու և աւելի կրեալ զպաշարուԹիւն, և սաստկացաւ սովն՝ ի քաղաքին. և կերան զշ-

1 Վ. 130։ — յԻլի Մոնղայի–Նոյին օգնական ԻմուԹայ։
2 Ի պատմուԹեան ԹաԹարացց

սուրբ և զանսուրբ կերակուրս. և ապա սկսան զմարդիկ ուտել՝ առ ի չգոյէ կերակրոյն, զի զօրաւորքն զտկարքն ուտէին. և յորժամ սպառեցան աղքատքն՝ դարձան ի միմեանս. հարք զորդիս ուտէին, և կանայք զդստերս, և ոչ գթային ի ծնունդս որովայնի իւրեանց. և ուրացան սիրելիք զսիրելիս և բարեկամք զծանօթս. և այնպէս պակասեաց կերակուրն՝ զի մին լիտր մարդոյ միան վաճառէին եօթանասուն դահեկան. և ամենևին սպառեցաւ մարդ և կերակուր: Ոչ միայն սոցա, այլ և բազմաց այլոց գաւառաց եհաս վտանգ. զի աշխարհ՝ որ հնազանդեալ էին Յաղթարին՝ նեղեցան ի հարկապահանջութեանց և ի բռնակալութեանց, որք տանէին զկերակուր և զըմպելի պաշարողաց քաղաքին, և յոլովք մեռանէին ի սաստիկ ցրտոյ ձեռանն՝ որ ունէր զլերինս յեղանակս ձմեռնայինս: Այլ և ամրագոյն երկիր Սասնոյ՝ եկին ի հնազանդութիւն ծառայութեան Յաղթարին, ապաւինեալք յիշխանն Սադունի, յորդի Հրպարըքին, ի Թոռն Սադունին, քրիստոնեայ հաւատով, և (եկն) մեծ պատուով առ Ներսէսն. զի այր անձնեայ և քաջամարտիկ էր, մինչ զի ընդ առաջին ախոյանին կարգեալ էր զնա Ներսէսն: Սմա ետ զգաւառն Սասնոյ, զոր յետոյ ստեղին երդմանն, և կոտորեցին զբազումս ի նոցանէ: Նոյնժամ Թափուր եղև քաղաքն ի մարդկանէ, վասն սաստիկ սովուն, առին զքաղաքն, և կոտորեցին զորս գտին ներգևեալս ի սաստիկ սովոյն. այլ և զսուլտանն և զեղբայրն աճին կենդանի առ Ներսէսն, և նա հրամայեաց սպանանել զնոսա սրով. և իբրև չարժանիս կենաց և զարեանպարտս ամենայն բազմութեան՝ որք կոտորեցան ի պատճառս նորա. բայց զեկեղեցիս ոչ քակեցին, և ոչ զանթիւ նշխարս սրբոց՝ զոր ժողովեաց սուրբն Սարուեթա յամենայն ազգաց և եդ անդ. զի քրիստոնեայքն որ ի զօրուն՝ ծանուցին Յաղթարին զպատիւ նոցա. այլ և ինքեանք պատմէին բազում տեսիլս զօրքոյն, ի վերայ պարսպին լոյս սաստիկ ծագեալ և արս լուսատեսիլս երևեալ: Եւ առաւ քաղաքն յեօթնհարիւր և ինն Թուին Հայոց, ի մեծ պահս քառասնորդացն աղուհացին:

Կ

ՊԱՏՄՆ ՈՐ ԻՆՁ ԳՈՐԾԵՑԱՒ Ի ԿՈՂՄԱՆՆ ՄԻՋԱԴԵՏԱՑ ԵՒ Ի ԽՈՐԻՆ ԱՍՈՐԻՈՑ

Պարձեալ մեծն Յօսաւա ժողովեաց զբազմութիւն զօրաց իւրոց և չոգաւ Ա՛սորիս, ՚ի Յալապ և ՚ի Դամիկ, սիրեալ ՚ի կողմանն՝ ՚ի Խատան, Ա՛ւհա, Ա՛միթ, և յայլ գաւառն ասպատակեալ. և ինքն նստաւ ՚ի վերոյ Յալպայ, պատերազմել ընդ նմա։ Եւ սուլտանն որ ՚ի նմա՝ էր Յուսուփ յազդէ Սալահատնին՝ որ աւերեաց զԵրուսաղէմ, և դիմեցաւ նմա, և ոչ եկին ՚ի հնազանդութիւն, այլ փակեաց զդրունս քաղաքին ընդդէմ նորա և կռուէր զօրութեամբ. և մեծն Յօսաւա պաշարեաց զքաղաքն յամենայն կողմանց. և յետ յոլով աւուրց կալաւ զնա բռնութեամբ, և սկսան կոտորել զքաղաքն. ապա սուլտանն և որք ընդ նմա մեծամեծք՝ որ ամրացեալք էին ՚ի բերդն, սկսան աղաչել զնա և գալ ՚ի հնազանդութիւն նմա։ Եւ յանձն առ և հրամայեաց դադարել ՚ի կոտորելոյ զքաղաքն. և հնազանդեալ և հարկս եդեալ դնացին ՚ի Դամիշկ. և նորա բազում պատարագօք և մեծամեծ ճախիւք ելին ընդ առաջ նորա, և նա սիրով ընկալաւ զնոսա, յիւր անուանն գրաւեալ կալաւ զՅամն և զՅամա, և այլ բազում քաղաքս։ Ա՛ռաքեաց զօրս ՚ի վերոյ ամուր քաղաքին Ա՛երտինայ, որք հազիւ կարացին առնուլ զնա յետ բազում աւուրց. կոտորեցին և զբազում յելուզակս զնաս իչս աւենայն ազգաց և Ճանապարհորդաց, զորս Դաճարիս[1] անուանէին՝ Գորբք ազգաւ, ամրացեալք ՚ի Թաւ մայրիս և ՚ի դժուարին վայրս ամրոցայն, անթիւ բազմութիւնք, ոչ ումեք հնազանդ, ժողովածու յամենայն կողմանց, արք սրիկայք և ապականիչք, և մանաւանդ քրիստոնէից. զբազում կոտորեցին ՚ի նոցունց և զևս բազմադոյնս գերեցին. և Թողեալ ՚ի զօրացն

1 Թուին նախահարք այժմեան խաճար ազգի Թագաւորաց Պարսից, և առ ժամանակօք հնդինաց կիս ծանօթագոյն բնակութեան վայր խաճարաց եր ՚ի Մազանդարան, ուր և աւազակացն ամուր ապաստանարանք։

իբրև քան հազար արս կողմնապահս, և ինքն դարձաւ ձմերել ի դաշտն Հմիանայ։

Իսկ սուլտանն Սուրայ ժողովեալ զօրս բազում՝ եկն ի վերայ կողմնապահացդ Ղաթարու զօրուն. որոց գլխաւորն էր այր մի Վիլհբուղա անուն, հաւատով քրիստոնեայ, Նայիման ազգաւ, մեծաւ պատուով. որ եւ ի պատերազմ ընդդէմ սուլտանին, և քաջապէս մարտուցեալ կոտորեցաւ ամենայն զօրօքն որ ընդ իւր. զի յոյժ բազումք էին Եգիպտացիքն. և կռուեցան ի Ղաթարական լերինն. կայրն ընդ Վիլհբուղային ի պատերազմի անդ յոլովք ի Հայոց և Սուրայ, որք ընդ նմա կոտորեցան. և եղև այս յեօթն հարիւր և ինն Թուին Հայոց։

ԿԱ.

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ ԲԱՐԵՊԱՇՏ ԻՇԽԱՆԻՆ ՋԱԼԱԼԻՆ

Իսկ Թագաւորն Սուրայ ՂաւխԹ՝ որդի Աշայինն որ կայր ի հնազանդութեան Ղաթարին, նեղեցաւ և ձանձրացաւ ի բազում հարկապահանջութեանցն որ նեղէին զնա, և զամենայն իշխանս և զամենայն աշխարհս, անհնարին ծանրութիւնս, զոր ոչ կարէին բառնալ. եԹող նա զքաղաքն իւր զՋիխիս, և զաԹոռն և զամենայն զոր ինչ ունէր, և փախեաւ ի խորին Վրաստան, և յամուրսն ՌուանեԹոյ. ընդ նմա և այլ մեծամեծք, իշխանք գաւառաց, նեղեալք և տառապեալք, ծախեալք և գրաւ եդեալք զքաղաքս և զգաւառս, և ոչ կարացեալք յապեցուցանել զանյագս՝ ըստ նմանութեան չար տզրկաց։ Եւ այնպէս տագնապաւ փախեաւ, զի զկին իւր զՌանցա Թագուհի և զնորածնունդ որդին իւր զԴեմետր՝ ոչ կարաց ընդ իւր տանել, բայց միայն զԴեորգէ զանդրանիկն։ Իսկ մեծ ոստիկանն Վրաստանի՝ զօր բազում գումարեալ և գնաց ի վերայ Թագաւորին ՂաւԹի, զի ըմբռնեսցէ զնա. և իբրև ոչ կարաց ժամանել նմա՝ զբազում գաւառս Սուրայ կոտորեաց և գերեաց անխնայապէս. այլ և զգերեզմանատունս Թագաւորաց Սուրայ՝ զԴևԹ՝ սաստկապէս

կոտորեաց և քանդեաց, և զկաթուղիկոսարանն զՅ-
ղոր՝ [1] նոյնպէս կոտորեաց անողորմաբար։ Այլ յան-
կարծակի եկին գունդ մի հեծելոց ՚ի Վրաց և ցուցին
մեծ քաջութիւնս, զի զբազումս կոտորեցին ՚ի զօրաց
Ա.րղունին՝ իբրև հուր ընդ եղէգն ընթացեալ, և ին-
քեանք գնացին ողջանդամ. և էին արք իբրև չորեք
հարիւր. և երկուցեալ Ա.րղունին՝ ոչ իշխեր այնպէս
համարձակ խուզել զվայրսն [2]։

Ա.պա դարձաւ առ Ջօլաւուն, և նուիթեաց ՚ի սրտի
իւրում չարութիւն, և ՚ի կալանս արար զԹագուհին
Վրաց՝ զԿոնցայն, և զդուստր նորա՝ զՍուշաքն, և զիշ-
խանն մեծ զՇահնշահ, և զՓալաՋասան՝ զտէրն
Իսաչենոյ, և զայլ բազումս՝ պատճառանօք պարտուց և
հարկի. յորոց բազում գանձս առեալ՝ հաղիւ զերծան
՚ի մահուանէ։ Իսկ զբարեպաշտ և զառաքինի իշխանն
Փալալ նեղէր անհնարին կոտտանօք, բազում հարկս
պահանջելով ՚ի նմանէ առաւել քան զկարն. և եդեալ
փայտ ՚ի պարանոց նորա և երկաթս յոտան. և զայս
առնէր նմա վասն առաւել քրիստոնէութեանն, զի
Թշնամիք էին նմա ամենայն տաճկահաւատք, և յոր-
դորէին զԱ.րղունն ՚ի սպանութիւն նորա, զի ասէին սա
առաւել Թշնամի է դենիս մերոյ և օրինաց. զի և Ա.ր-
ղունն ևս տաճկակրօնք էր. և առեալ տարաւ զնա ՚ի
Խաղուինն։ Իսկ նա զոհութեամբ տանէր ամենայնի,
զի յոյժ տեղեակ էր Ա.ստուածային գրոց, պահօղ և
աղօթական, և պարկեշտ ՚ի կերակուր և յըմպելիս. և
ցանկայր մարտիրոսական մահուան։ Իսկ դուստր Փա-
լալին Ղուզուքան՝ որ կին լեալ էր Կուրա-Նուինին, որ-
դւոյ Ջարմաղուին, առաջին գլխաւորին Վաճարին,
գնաց առ Վոխուշ [3] խաթունն՝ կին Ջօլաւուին, զի
Թափեսցէ ՚ի նմանէ զայր իւր ՚ի ձեռաց Ա.րղունին. և գիտա-
ցեալ անօրէն ոստիկանին՝ առաքեաց վաղվաղակի զա-
հիճն՝ և ՚ի գիշերի եւս սպանանել զարդար և զսուրբ
այրն Ա.ստուծոյ. և երթեալ անօրէն դահճացն՝ անդամ
անդամ յօշեցին զնա, ըստ նմանութեան սուրբ վը-
կային Յակովկայ. (Նորին չարչարանացն հաղորդեալ)

1 Ի հիւսիսոյ Ախալցխիսէ քա-
ղաքի։

2 ՕՕ. վերայ։

3 Տաղուզ խաթուն կոչէ Վար-
դան. 160։

և նորին պատկաւն արժանացեալ (լինի) ի Քրիստոսէ Յաստուծոյ մերոյ։

Այսպէս կատարեցաւ այրն անարատ և աստուածապաշտ, զընթացսն կատարեալ և զհաւատսն պահեալ յեօթնեն հարիւր և տասն թուին Հայոց. և առաքեաց որդի նորա Թագէկ արս հաւատարիմս, և էտ զոզանալ զնշխարս հօրն իւրոյ, զի ընկեցեալ կայր ի ջրհոր մի ցամաք. զի Պարսիկն որ ի տան իւրում ունէր զնա ի կապանս՝ տեսեալ նշանս աստուածայինս ի վերայ նորա՝ խնամ արկեալ ընկէց զնշխարսն ի ջրհորն, զի յետ աւուրց Թագէոսի զնա պատուով. նա եցոյց խնդրողացդմարմինն և պատմեաց զսքանչելի երևումն. և նոցա ժողովեալ խնդութեամբ և բարձեալ տարան զնա ի տուն իւր, և ի վանքն Պանձասար Թագէոսին զնա ի գերեզմանս հարց իւրոց. այլ և բերողք նշխարացն տեսին զնոսն տեսիլ լուսոյն ի վերայ նշխարացն։ Եւ կալաւ զնշխանութիւն նորա Թագէկն՝ որդի նորա Հրամանաւ Յօլաւուն և Աղունկն, այր սրբասնունդ և պարկեշտ և խոնարհամիտ և աղօթական, որպէս զմի ի տուրբ միայնակեցացն. զի ծնօղք նորա այնպէս սնուցին զնա։

Սպան Յօլաւուն զնշխանն Օաքարէ՝ զորդին Շահնշահի, բարուրս եդեալ ի վերայ նորա։ Յայնմ ամի փոխեցաւ առ Քրիստոս մարդասէրն և հեզ կաթուղիկոսն Աղուանից տէր Եղիսէ, կալեալ զկաթուղիկոսութիւնն սմա քսան և եօթն, և յաջորդեաց զաթոռն տէր Ստեփաննոս մանուկ տիոմք։

ԿԲ

ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ ԻՇԽԱՆԻՆ ՇԱՀՆՇԱՀԻ ԵՒ ՈՐԴՒՈՑ ՆՈՐԱ ՁԱՒԱՐԻՒ

Մեծ իշխանն Շահնշահ որդի Օաքարէ, եւ զնշխանութիւնն յաւագ որդին իւր Օաքարէ, զի որդիք բազում էին նորա, Օաքարէ, Ադամ Ստրպէս, Աղբատակիր և Իւանէ, և ինքն խնամէր զտուն իւր. և Օաքարէ ընդ վաղահաս զօրուն երթայր ի գործ պատերազմի, և արիութիւն և քաջութիւն ցուցեալ մեծարեալ լինէր ի մե-

ծէն Յօսաւան, և Ա՛ղջուն ոստիկանէն։ Վասն եղև զի Ա՛ղջունն զօրօք բազմօք էր՝ի կողմանս Ալ ըսց, ընդ նմա էր և Ո՛ աքարէ, և գաղտ Ա՛ղջունէն և յայլ զօրացն գնաց Ո՛ աքարէ՝ի տեսութիւն կնոջ իւրոյ՝ որ էր առ հօր իւրում Ասրգսի իշխանին Ալխատեաց[1], որ ապրստամբ էր ընդ Թագաւորին Ալ ըսց Վաւթի. և իմացեալ Ա՛ղջունին ազդ առնէ Յօսաւային, և նա առ ինքն հրամայեաց տանել կապանօք. և այլ բարուրս կուտեաց՝ի վերայ նորա և հրամայեաց սպանանել զնա և անդամ անդամ յօշել, և արկանել շանց. և յորժամ լուաւ զգոյժն հայր նորա Շ՛ահնշահ, ՝ի գիւղն Ո՛ձուն, ՝ի նեղասրտութիւն անկեալ՝ի տրտմութենէն մեռաւ. և տարեալ Թաղեցին զնա՝ի Վ՛ոբայրն, զոր առ կինն նորա՝ի Հայոց։

ԿԳ

ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԵԽԻ ՈՐ ԵՂԵՒ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՍ ՀՕԼԱՒՈՒՆԻ ԵՒ ԲԲՐՔԱՑԻՆ

Ա՛շխարհակալք և մեծ զօրավարքն որ կային յաբևելս և՝ի հիւսիս, ազգականք էին զանին Ո՛անկուի՝ որ մեռաւ յետ պատերազմին Ա՛լենգնանայ[2]. և երկու եղբարք նորա հակառակէին ընդ միմեանս վասն Թագաւորութեանն, Ա՛րիքբուղայն և Ղ՛ուպիլայն. և յաղթեաց Ղ՛ուպիլայն կոտորելով և սպառելով զզօրան Ա՛րիքբուղային և փախստական հանելով զնա յաշխարհէն և ինքն Թագաւորելով. և Յօսաւուն եղբայր էր նոցունց և Ո՛անգու զանէին, օգնէր նա Ղ՛ուպիլային. և Ա՛րքայն՝ որ՝ի կողմանս հիւսիսոյ՝ օգնէր Ա՛րիքբուղային. և միւս ևս ազգական նոցին՝ այլ զօրապլուխ՝ որդի Զաղաջադա զանէին[3] անդրանիկ որդւոյն Ջանկզզանէին, Ա՛ղու անուն, նա պատերազմէր ընդ Ա՛րքային, թէ նոցուն խրատուէն կոտորեաց Ո՛անկու զանն զազգս նորա. և առաքեաց առ Յօսաւուն օգնել նմա յայսմ կողմանէ ընդ դուռն Դարբանդայ։ Իսկ մեծն Յօսաւու զմե-

1 Այժմ Օլթի գաւառ։
2 Տես յկէ 220։
3 ՕՕ. Զաղանջաքային։

ծամեծս և զփառաւորագոյն իշխանսն Հանգոյն ինքեան՝ որ կայրն ընդ նմա ՚ի կողմանսն Ասիոն և Երքայրն, զԱրուն, զԱղալխայն, զՏուտհարն, զԱեղանն՝ զորդի Ազուրն, զԱտաղանն, և զայլս բազումս, Հանդերձ զօրօք իւրեանց կոտորեաց յանխնայ անողորմաբար, զծերս և զտղայս, և սպառեաց զնոսա կոտորմամբ սրոյ, զի առ նմա կայրն, և խառն էին ընդ միմեանս իշխանութեամբ. և սակաւք ՚ի նոցանէ մազապուրծ զերծեալք՝ առանց կանանց և մանկանց և ընչից, գնային փախստական առ Երքայն և առ այլ ազգականսն. և լուեալ զայն Երքայրն ժողովեաց զօրս անթիւս և անհամարս, առնուլ զվրէժս արեան ազգականացն ՚ի Տօ-լաւուէն:

Իսկ մեծն Տօլաւու նոյնպէս ժողովեաց զզօրս իւր բազմաձեռն, և արար երիս առաջս. զմինն ետ ՚ի ձեռս որդւոյն՝ Ասպաղա զանուն[1], գումարեաց ընդ նմա և զոստիկանն Ազդուն, և առաքեաց ՚ի Յորասան օգնել Ազղունն յայնմ կողմանէ. և զմի բաժինն գումարեաց ՚ի դուռն Ալանաց, և զայլ զօրս ընդ իւր առեալ գնաց եմուտ ՚ի ներքս քան զդուռն Դարբանդայ. զի այս երկու մուտք են՝ Ալանս և ՚ի Դարբանդ. և աւերելով զմանն բաժնի Երքայրին՝ եհաս մինչ ՚ի գետն մեծ և անհուն՝ յասպնջական յոլովից գետոց՝ զոր կոչեն Ադիլ, որ ծովէորէն ընթանայ, և մտանէ ՚ի ծովն Կասբից: Եւ ել ընդդէմ նորա Երքայն հզօր ձեռամբ, և եղև խառնուրդ պատերազմին առ մեծի գետոյն, և բազումք անկան յերկոցունց (կողմանց), և առաւել ՚ի կողմանէ Տօլաւուին. զի պաղեցան ՚ի սաստկութենէ ձեռանն և ցրտին, և բազումք գետամոյն եղեն: Եւ ապա դարձաւ Տօլաւուն և եկն ել ՚ի դուրս քան զդուռն Դարբանդայ: Եւ մի ումն ՚ի զօրագլխացն Տօլաւունին՝ այր քաջ և պատերազմող՝ զօրօք իւրովք՝ Ամրամայ անուն, որդի Ջարմաղունին՝ առաջին գլխաւորին Ջահաթարին, ընդդէմ կացեալ զօրացն Երքայրին՝ յետս նահանջեաց. և ՚ի նա պատսպարեցան փախուցեալքն և ապրեցան մեղմով ընդդէմ կալով: Այլ և նա ՚ի դուրս քան զԴարբանդ, և կացուցին պահակս ՚ի դուռն Դարբան-

դայ, և ինքեանք եկին ի դաշտն Ասուղան ի ձմերոց, և այսպէս զամս հինգ պատերազմեալք ընդ միմեանս սկսեալք յեօթն հարիւր և տասն թուականէն մինչ յեօթն հարիւր և հնգետասան թիւն Քայոց, յամենայն ամի զօր ժողովելով, և ընդ միմեանս բախելով յեղանակս ձմեռնայինն, զի յամառնայինն ոչ կարէին վասն տօթոյն և գետայարոյց լինելոյն։

Յաւուրս յայսոսիկ սկսաւ մեծն Քօլաւու շինել քաղաք բազմատար և բազմամարդ ի դաշտին Վառնոյ, և եդ հարկս ի վերայ ամենայն հնազանդելոցն՝ բազմութիւն փայտից բերել յամենայն կողմանց ի պէտս շինուածոյ տանց և ապարանից քաղաքին, զոր շինէր ի տեղի Հովհոցացն[1] իւրոց յաւուրս ամարանոյ, և տասնապէին մարդ և անասուն ի խիստ և ի դառն վերակացուացն՝ որ դառնագոյնք էին քան զՊարաւոնին ի վերայ որդւոցն Իսրայելի. քանզի լուծ հարիւր եզանց լծէին ի փայտ մի յամենայն կողմանց, և ոչ կարէին շարժել՝ վասն մեծութեան և հաստութեան փայտիցն, և հեռաւորութեան և դժուարութեան ձանապարհին, ընդ գետս և ընդ լերինս. և յանխնայ հարկանելոյ՝ մեռանէին մարդիկ և անասունք։ Այլ և տունս մեծամեծս կոյն շինեաց, անդ գումարեալ զամենայն աշխատաւորս քարանց և փայտից և նկարուց. զի ազգ մի զոր Տոյինքն ասէին՝ դիւթք, և կախարդն՝ որ տայ խօսել ձիոց և ուղտուց և Թաղեայ պատկերաց՝ դիւահան արուեստիւ. և են ամենայն քուրմք գերծեալ գըլխովք և մորուօք, և ունին փիլոն գեղին զկրծովք, և պաշտեն զամենայն ինչ, և առաւել զՇ ակմանիա և զՎադրին[2], նոքա խաբեցին զնա, և ասեն պահել զնա անմահ. և ի բանն իւրեանց կայր և շարժէր և հեծնոյր, տուեալ ինքն ամենևին կամաց նոցա, և խոնարհեալ երկրպագէր գլխաւորին նոցա յոլով անգամ յաւուրն, և ուտէր ի նուիրական սեղանոյն ի տան կռոցն, և առաւել մեծարէին[3] քան զամենեսին զնոսա. վասն որոյ զտաճար կռոց նոցա առաւել մեծարզի յարդարէ։ Իսկ աւագն կանանց նորա քրիստոնեայ էր, Տօխուզ

1 ՕՕ. հովհոցացն։ 218։
2 Զորոց ասաց և յառաջն, յէջ
3 Տպ. ունէին։

խաթուն, թէպէտ բազում անգամ յանդիմանէր, ոչ կարաց զերծուցանել զնա 'ի դիւթից. այլ ինքն առտուածպաշտութեամբ կեցեալ ձեռնտու և օգնական էր քրիստոնէից։

Ի սակ յեօթն հարիւր և 'ի չորեքտասան թուին նշան երեւեցաւ յերկինից. աստղ մի երևեալ յերկինս գոլով 'ի կողմանս հիւսիսոյ, յարևելս և 'ի հարաւ. և երկայն ձառագայթ լուսոյ սիւնաձև երևէին առաջի նորա. բայց աստղն նուազ երևէր և երագ ընթանայր, և երևէր իբրև ամիս մի և այլ ոչ ևս, իբրև զաստղն պիսաւոր՝ որ ընդ ժամանակս ժամանակս երևի՝ ընթանալով յարևմտից 'ի հիւսիս. այլ սա ընդերկայնաձիգ շառաւիղօք, և օր քան զօր աճէին շառաւեղքն մինչև կորեաւ։ Ի սկզբան վաղձանեցաւ Հօրաւուն, և կիսին իւր Տօնսուզ խաթունն. և կալաւ զտեղի նորա որդի իւր Ալպաղայն յեօթն հարիւր և 'ի չորեքտասան թուին. և առ կին զդուստր Հուռմոց Թագաւորին՝ որում անունն էր Կեսպինա[1] խաթուն, որ եկն երևելի փառօք. և պատրիարգն Անտիոքու և այլ եպիսկոպոսունք ընդ նմա. զոր եբեր տէրն Սարգիս Անձևկայեցի եպիսկոպոսն, և Բեներ[2] վարդապետն. և մկրտեալ զԱլպաղա-ղանն՝ ետուն նմա զաղջիկն կին։ Ի նորա զօր գումարեալ բազում յոյժ՝ գնաց ընդդէմ՝ տալ պատերազմ[3] զօրացն Բերքայեցին, որք եկին ընդ դուռն Վարբանդայ, և հալածին զբանակս իւրեանց առ ափն գետոյն[4]. և կային սաքա աստի և նոքա անտի, ամրացուցեալ զեզերն գետոյն ցանկովք խորագունիւք[5]։

1 Վ. 161։
2 Ոչ լիշի այլուր վարդապետ։
3 Տպ. ընդդէմ կալ պատերազմաւ։
4 Տպ. Կոր գնացեալ Վարդան Շի-
բար կոչէ զգետս։
5 OO. և խոր գոյիւք կամ խորա-
գոյիւք։ Տպագիրն. և գոսխոյ խորա-
գոռնիւք։

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅԱԽԵԼՈՒԱԾ

ՄԻՍ ԵՒՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍՓԱՆՉԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱՑ[1]

Յետ շինելոյ գմբեթայարկ եկեղեցւոյն սխրալի տեսողաց, զոր անուանեն Ս. Յարուածածինն, շինեաց մեծ վարդապետն Մխիթար զեկեղեցին.՝ի ՈԽԵ թուին կամեցաւ գնալ յերկրպագութիւն մարմնառիկ տնօրինութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և լուսաբուխ գերեզմանին: Եւ ունէր սա միաբանս բազումս. և մտեալ՝ի տաճար սուրբ Յարուածածնին՝ և անկեալ՝ի վերայ երեսաց իւրոց, և աղօթիւք յանձնեաց զմիաբանսն իւր՝ի Ս. Յարուածածինն, ասելով. Ո՛վ Տիրամայր, ՚ի քեզ յանձն առնեմ զսոսա. դու հոգա և պատրաստեա ըզպէտս հոգւոյ և մարմնոյ սոցա: Եւ ինքն յուղի անկեալ գնաց զփափագելի Ձանապարհն իւր. և գնացեալ կատարեաց զուխտն իւր, և դարձաւ յետս:

Եւ եկեալ յերկիրն Կեղամայ՝ի յեզր Ծովակին՝ մերձ՝ի Վանս կղզին. և լուեալ միաբանաց վանիցն իւր որ՝ի Կետիկ՝ զգալուստ սուրբ վարդապետին, և գնացին ընդ առաջ նորա հանդերձ սուրբ ուխտիւն՝ի նոյն տեղին, մերձ՝ի կղզին Վեանայ. և համբուրեալ զնոսա ՚ի համբոյր սրբութեան, յետ ողջունելոյ զնոսա և հարցանելոյ զկենցաղավարութենէ նոցա: Եւ նոքա ար-

1 Տես՝ի վերջ կոյս յառաջաբանի մատենիս վասն այսր պատմութեան:

տասուալից Հառաչմամբ ձայն բարձեալ ասեն. Հայր Հոգևոր, զիաւրդ Հարցանես զորպէսն մեր. և յետ գնալոյն քո անկաւ սուլ սաստիկ ի վանս մեր, և մեռաւ երկրորդ մասն միաբանից։ Եւ իբրև լուաւ սուրբ վարդապետն Մխիթար զբօթն զայն, և ինքն ձայնակից եղեալ նոցա լացին մինչև ցմեծ ժամն։ Եւ յետ լալոյն և կոծոյն Հեռացեալ ի նոցանէ իբրև զքարընկէց մի, և ծունկս ի գետնի եդեալ և անկեալ ի վերայ երեսաց իւրոց դէպ յարևելս, և աղօթեաց այսպէս. Ով տէր իմ Յիսուս Քրիստոս որդիդ Աստուածածարդար դատաւոր. խնդրեմ ի Հեշտալուր տեառնէդ իմէ, զի այժմ լուիցես ձայնի պաղատանաց իմոց, և առաքեսես զդատաստանս իմ և ծնողի քո Ա. Աստուածածնին, որ ծնաւ զԱստուածդ մարդացեալ։ Օվ է եթէ տայէ ոք մարդ զինչ իւր ի պահեստ և աւանդ այլ մարդոյ՝ աշխարհի օրինակաւ՝ պահեն զնա, և տան զայն որ տուեալն է զաւանդն և պահեստն. ապա եթէ աշխարհական ոք պահէ զաւանդն և տայ ցտուօղն, պարտէր և մեր[1] քո այնպէս առնել։ Ցէր իմ Յիսուս Քրիստոս, և ես յորժամ կամէի գնալ յերկրպագութիւն սուրբ գերեզմանի քո, զմիաբանս իմ յանձնեցի ծնողին քո Ա. Աստուածածնին. և նա ոչ է տարեալ խըղճամ մայրական գթով, այլ և անտես է արարեալ. և մեռեալ է միաբանից բազում։ Օ, այս և այլ սոցին նմանս աղօթէր արտասուալից։ Եւ սուրբ ուխտն անդէն կացեալ լային։

Եւ յետ աղօթից և արտասուելոյ վարդապետին և միաբանից, յառաջ կացեալ գլխաւոր արանցն՝ անկանէին յոտս վարդապետին Մխիթարայ, և ասեն. Հայր սուրբ, մի այսուհետև Հոգալ վասն մեռելոցն, այլ խընդրեա ի սուրբ և յարժանաւոր աղօթսդ քո Աստուծոյ, զի տայէ առատութիւն աշխարհի. զի դեռ ևս սաստիկ է սովն ի վերայ երկրի ըստ մարգարէին Դաւթի, զոր ասէ. Կոչեաց զսով յերկիր, և զամենայն զօրութիւն հացի եբեկ։ Եւ ապա պատասխանեալ վարդապետին ասայ մինչդեռ ի յաղօթիան էր. Ուրեակք իմ, Թէպէտ ժամանակ մի անտես արար զմեզ Ա. Աս-

1 Օ. պմայրն։

տուածածինն, այլ ոչ անտես առնէ զմեզ Տէր, և յա-
ւիտեան պահէ ոխս. այլ ունի գութ մայրական, և ոչ
անտես առնէ զերկիւղածս իւր. դուք ևս պաղատեցէք
առ մայրն ողորմութեան, զի նա աղօթեսցէ առ որդին
իւր միածին. զի նա յոյժ լսէ ծնողին իւրոյ:

Եւ զայս ասացեալ վարդապետն եղ յաղօթիցն. և
առեալ զմիաբանան և ուղղեցին զերեսս իւրեանց և հաս-
տատեցին գնալ զառաջիկայ զՀանապարհն իւր՝ դէպ ի
լեառն որ Հանդէպ երեսաց իւրեանց էր. և եկեալ հա-
սին ի գլուխ լերինն[1] որ մէջն է երկուց աշխարհացն՝
Վեղամայ և Կայանու, և կամէին անցանել յերկիրն
Կայանու առ վանս իւրեանց ի Կորս-Վետիկ: Եւ զայն
որ ի վերոյ յիշեցաք զասացեալն ի սուրբ վարդապետէն՝
զոր ասաց, միաբան աղաչեցէք զսուրբ Աստուածածինն,
զի նա մայր է ողորմութեան, և Հնմարիտ ոչ անտես ա-
րար զաղաչանս վարդապետին և միաբանացն. և լուաւ
Աստուած աղօթից նոցա բարեխօսութեամբ սուրբ Աս-
տուածածնին այսպէս:

Եւ ի Հասանել նոցա ի գլուխ լերինն, դարձեալ
Հեռացաւ ինոցանէ վարդապետն Մխիթար և կացեալ
յաղօթս. և ի յաղօթելն նորա յանկարծակի Հասա-
նեն փայեակք[2] երկու, և տան ողջոյն վարդապետին և
ասեն. Հրամայեա տէր Հոգևոր, կոչէ զքեզ սոսկալի
Թագաւորն մեր: Եւ ասէ վարդապետն. Որդեակք, յո-
րմէ Թագաւորէ առաքեցայք կամ ուստի եկիք: Եւ ա-
սեն փայեակքն՝ զոր աշխարհական բառիւ ընդէր[2] ա-
սեն. վարդապետ, յետս Հայեաց և տես զզարմանալի
զօրս Թագաւորին մերոյ, որ իջեալ կայ ի դաշտ անդր:
Եւ յետս Հայեցեալ վարդապետին ի յերեսս դաշտին՝
մերձ ի գեօղն Նապոտիկ, զոր աշխարհական բառիւ Ղի-
բուկլու[3] ասեն, (եառես) ի ներքոյ գիւղին մերձ ի ծովն
կոյս, վրանս բազումս իբրև զաստեղս երկնից և զօրս
անթիւս որպէս զաւազ առ ափն ծովու. և Հիացեալ
զարմանայր ընդ միտս իւր և ասէր. Ո՛վ որդեակք, այժմ
յանցանել իմում անդէն ոչ զոք տեսի. ահա երևի տե-

1 Ա.յժմ կոչի Էչէ-Ղեպան:
2 Սուրհանդակք:
3 Յարդ այսպէս կոչի և չէն կայ ի բարձրաւանդակի Հիւսիսային լեռնատարու ծովուն Վեղամայ, ի 6575 ոտս բարձու յերեսաց Պոնտոս ծովու:

սիրդ որպէս երկնային և ոչ երկրաւոր։ Եւ ինքն յա-
րուցեալ յաղօթիցն՝ անցեալ գնայ զհետ եկելոցն, և
հասանէ ի մէջ զօրացն և վրանացն. Թէպէտ վրանք
բազումք էին պեղեցկատեսք, բայց վրանն այն որ Թա-
գաւորին՝ էր գմբեթաւորեալ երկնանման, և լոյս ցո-
լանայր ի նմանէ. և ոչ կարէր ի նա հայել աչք հողե-
ղէն։ Եւ վարդապետն իբրև եհես զտեսիլն զարմանա-
լի և ապշեցաւ, որպէս Պօղոս յափշտակեալն յերրորդ
երկինս. և զոր աչքն ոչ եհես և ունկն ոչ լուաւ և ի
սիրտ մարդոյ ոչ անկաւ, այնպէս. եհես վարդապետն
Ա՛խթար վանն պայծառ տեսութեանն. և յառաջ
մտեալ ի ներս վրանին, եհես գոյնզգոյն երանգօք զար-
դարեալ և սիւնս քառասուն և չորս լուսատեսիլք և
պաղպաջունք. և եհես երկուս աթոռս ոսկետեսակս ա-
կամբ շափիւղայիւ զարդարեալ. եհես Թագաւոր մի
նստեալ ի վերայ միւս աթոռոյն, և կինն մի նստեալ ի
վերայ միւս աթոռոյն, և կինն էր մայր Թագաւորին։
Եւ վարդապետն անկեալ ի վերայ երեսաց իւրոց և ե-
կիր եպագ Թագաւորին և մօրն, և եկաց ի վերայ ո-
տից իւրոց։ Եւ Թագաւորն սիրով ընկալաւ զերկրպա-
գութիւնն և զողջոյն վարդապետին և քաղցրութեամբ
հարցանէր զորպիսութենէ նորա։ Եւ յետ բազում
խօսից հարցանէր Թագաւորն զվարդապետն. Ո՞անա-
չէս զիս և զմայրս իմ։ Եւ վարդապետն լցեալ Հոգւով
սրբով և մարգարէական Հոգւով Ձանաչեաց որ Թա-
գաւորն այն տէրն մեր Յիսուս Քրիստոս էր, և մայրն
իւր տիրամայրն Ս. Ա՛ստուածածինն։ Եւ անդէն վար-
դապետն Ա՛խթար գոչեաց լալագին աչօք և ասաց.
Տէր իմ Յիսուս Քրիստոս, ալ բազուկ Հօր Ա՛ստու-
ծոյ, որդի կուսիդ Մարիամու, որ ծնաւ զԱ՛ստուածդ
մարդացեալ. դաւանիմ զքեզ որպէս Պետրոս որդի Ա՛ս-
տուծոյ և ծնեալ ի սուրբ Ա՛ստուածածինդ, որ նստեալ
կայ ընդ աջմէ Հօրդւոյդ Ա՛իածնիդ. եկիր յաշխարհս
վասն Ա՛զամայ նախահօրն, խաչեցար և Թաղեցար, և
զմարմինդ Թողեր ի խաչին և Հոգւովդ իջեր ի դժոխս,
և ազատեցեր զԱ՛դամ, և զծնունդ նորա, և հաներ ի
կայանս Հոգւոցն[1]. և մարմնովդ միաւորեցար ընդ աս-

1 Ուր կայն Քրիստոս յերկինս՝ անդր և զսուրբան դիտեմք հանեալ։

տուածուԹեան չօր քում՝ զոր ունէիր յառաջ քան զլինելն աշխարհի. այլ և գալոց ես միւսանգամ ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որ և յարուԹիւն ամենայն մարդկան. Հաւատամ և երկիր պագանեմ քեզ։ Եւ յետ բազում անգամ խօսելոյ վարդապետին Ա՛խիԹարայ ընդ երկնաւոր Թագաւորին և առնելոյ պատասխանի, և անդրէն դարձեալ առաց Թագաւորն. Վարդապետ, այսօր զինչ դատ ունէիր զմօրէ իմէ զսուրբ կուսէս։ Եւ առաց վարդապետն. Տէր իմ Յիսուս Քրիստոս, այս է դատն իմ զսուրբ Աստուածածնէդ, որ ՚ի գնալն իմ յերկրպագուԹիւն լուսաբաշխ գերեզմանի քո, յանձնեցի զմիաբանքս իմ առ սուրբ Աստուածածինդ և մայրդ ողորմուԹե՛ն, և ոչ է ողորմեալ միաբանն եղբարցն, և մեռեալ (են) ՚ի նոցանէ քազումք. և այս է դատն իմ առ հեշտալուր Տէրդ իմ և արդար դատաւորդ։

Եւ Թագաւորն ողորմած լուաւ զպաղատանս ծառային, և զկամս երկիւղածին կատարեաց, ըստ մարդարէին որ ասէ. Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղօԹից նոցա լսէ և կեցուցանէ զնոսա։ Եւ այնպէս լուաւ զպաղատանս սուրբ վարդապետին, և ետ լիուԹիւն ստացուածոյ այսպէս։ Եւ փայեակին ՚ի նմանէ եալ կայր առաջի Թագաւորին, և ետ փայեկին այն Թագաւորն փոքրիկ սկուտեղ երեք նշխարաւ, և փոքրիկ սկաւառակ մի լի քաժակաւ, և առաքեաց վարդապետին։ Եւ առեալ վարդապետն զնոսա ՚ի ձեռն իւր, և հրամայեաց Թագաւորն վարդապետին ըմպել զքաժակին. և առաց Թագաւորն իւր սուրբ բերանովն. Ա՛ռ Ա՛խիԹար և ասեմ զպատճառս սկուտեղիդ և նշխարացդ և քաժակիդ և սկաւառակիդ. և ուր և հասանեն դոքա՝ ոչ լինի սուղ երկրին այն, և ոչ մորեխ և ոչ ԹրԹուր և ոչ ժանկ, և ոչ մինհնայ, և ոչ դալուկ, և ոչ ջորեակ, և ոչ մուկն, և ոչ կարկուտ, և ոչ մահ, և ոչ գերուԹիւն. և եղիցին նոքա առատուԹիւն և փարԹամուԹիւն երկրի և առողջուԹիւն ամենայն ցաւոց. և ուր և հասանեն դոքա, և ոչ միայն դոքա, այլ և նշխար ոսկերաց քոց։ Եւ առ կրկին անգամ հրամայեաց Թագաւորն ըմպել զքաժակին. և երեսս յետս դարձուցեալ՝ զգուշուԹեամբ ըմբեաց. և այնու կոչեցաւ[1] Պոչ անուն նորա։ Եւ

1 Ո. խնչոյ։

յետս դարձաւ եթէ տացէ զսկաւառակն ՚ի փայեակն. յայնժամ ոչ ղօք ետես. և եղև տեսիլն այն ամենայն աներևոյթ: Յայնժամ զահի հարեալ զարմացաւ, և հիացեալ փառս ետ Աստուծոյ՝ զպարգևս այսպիսի տուողին: Եւ ապա առեալ զօրքուն[թ]իւնն իւր ՚ի ձեռս իւր, և կազմեաց զսկաւառակն սուրբ նշան ձեռօք իւրովք. և գնաց անտի ՚ի լեառն առ աշակերտսն իւր. և դեռ ևս աղօթէին նոքա անդ ՚ի գլուխ լերինն, և առէտիս մատուցանէր նոցա, և պատմէր զաքանչելի տեսիլն և ցուցանէր զօրքուն[թ]իւնն. և նոցա եկեալ համբուրէին և գոհանային զՏեառնէ, որ ոչ անտես արար զաղաչանս իւրեանց:

Եւ սակաւիկ մի յառաջ գնացեալ՝ ետես սքանչելի վարդապետն յաշակերտաց իւրոց զոմն Պօղոս անուն վախճանեալ. և ասաց նոցա, Որդեակք իմ, եկայք տեսցուք զհրաշս սուրբ նշանին. և եդ զսուրբ նշանն ՚ի վերայ պարանոցի մեռելոյն. և ինքեանց կացեալ յաղօթս արտասուելով առ Տէր. և լուաւ Աստուած աղօթից նոցա և յարեաւ մեռեալն աղօթիւք և զօրու[թ]եամբ սուրբ նշանին: Եւ եկեալ նոցա ցնծու[թ]եամբ և ուրախու[թ]եամբ օրհնելով զԱստուած ՚ի վանս իւրեանց ՚ի նորս Գետիկ. և տարեալ զսուրբ նշանն վարդապետն Անխիթար եդ ՚ի շտեմարանն անտես յամենեցուն. և առեալ զմիաբանսն իւր եմուտ ՚ի տաճար սուրբ Աստուածածնին, և յերեկօրեայ հսկումն կատարեալ մինչև ցառաւօտն: Եւ լուեալ աշխարհաց զայնքան սքանչելիսն և ընթացեալ երիվարօք անդր հասանէին ՚ի տեսու[թ]իւն սրբու[թ]եանցն և յողջոյն սուրբ վարդապետին: Եւ ասաց վարդապետն, Որդեակք, պատրաստեցէք նշխարս վասն պատարագի. և ասեն. Հայր հոգևոր, ուստի պատրաստեսցուք, ոչ գոյ նաշիհ: Եւ ապա պատարագեաց զմի ՚ի նշխարացն զոր առեալ էր ՚ի Տեառնէ, և զմինն ՚ի նշխարաց կտակ արարեալ զի լնդ[ք] ինքեան թաղեսցի. և զմիւսն հանդերձ սկուտեղամբն եդ ՚ի կապարեայ մնտուկս և ամփոփեաց յեկեղեցին: Եւ ինքն սկսաւ մատուցանել զպատարագն. և յետ արձակման պատարագին ասաց. Որդեակք, պատրաստեցէք Հաշ ժողովրդեանդ. և ասեն. Վարդապետ, յայլում ժամու ոչ կարացաք գտանել ալիւր վասն նրշ-

խարաց, և այժմ ուստի պատրաստեսցուք այդքան ժո-
ղովրդեանդ կերակուր: Եւ ասաց. Արդեակք, ոչ կա-
րիմ արձակել զնոսա նօթիս, գուցէ նքթիցին ՚ի ճա-
նապարհին. մի երկմտութեամբ և մի թերւի, այլ հա-
ւատով գնացէք ՚ի դուռն շտեմարանին և տեսէք զըս-
քանչելիս սուրբ նշանին. զոր ինքն Հոգւոյ ակամբ տե-
սանէր: Եւ գնացեալ ՚ի դուռն շտեմարանին, և տե-
սին զի լցեալ էր ալիւրով և աննեայն բարութեամբ.
և սուրբ նշանն բազմեալ ՚ի վերայ տանեացն. և հիա-
ցեալ փառս ետուն Աստուծոյ: Եւ առեալ զսուրբ նը-
շանն ՚ի ձեռս իւր օրհնեաց զժողովուրդն՝ սուրբ վար-
դապետն Պօղոս. և եօթն ամ սով եղև, ՚ի շտեմարա-
նաց նորա կերակրեցաւ երկիրն՝ մինչև եղև լիութիւն:

Եւ ես Աբրահամ Պատմագիր՝ բանի սպասաւոր և ա-
շակերտ սուրբ վարդապետին Մխիթարայ, որ մնաց
նուամբ Պօղոս կոչիւր, ականջով իմով լուայ և աչօքս
տեսի զայսքան սքանչելիսս. և ձեռօք իմով գրեցի զատ
՚ի պատմութեանց իմոց, և եդի ընդ սուրբ նշանին. և
յատուկ կայ գրեալ ընդ սկզբնեղին՝ որ ամփոփեցաւ ՚ի
տաճարի սուրբ Աստուածածնին: Եւ Քրիստոսի փառք
յաւիտեանս. ամէն:

ՑԱՌԱ
Համա
մին
Ա.
Բ.
Գ.
Դ.
Ե.
Զ.
Է.
Ը.
Թ.
Ժ.
ԺԱ.
ԺԲ.
ԺԳ.
ԺԴ.
ԺԵ.
ԺԶ.
ԺԷ.

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ՑԱՌԱՋԱԲԱՆ . . . . . Ա

Համառօտ պատմութիւնք ժամանակաց ՚ի սրբոյն Գրիգորէ մինչև ՚ի յետին աւուրս Թուացեալ 1

Ա. Վասն Թագաւորութեան Լևոնի՝ որ ՚ի կոլմանս արևմըտից, թէ ո՛րպէս յառաջեաց և բռնացաւ յոյժ . . 74

Բ. Վասն իշխանացն որ յարևելս Հայաստանեայց՝ Զաքարիայ և Իւանէի եղբօր նորին 78

Գ. Վասն Ժողովոյն զոր արար Զաքարիա վասն խնդրոյ ինչ իրաց. 81

Դ. Վասն կաթուղիկոսին Աղուանից գալոյ առ մեծ իշխանան, նեղեալ ՚ի յայլազգեացն 88

Ե. Վասն վարդապետացն երևելեաց որք էին ՚ի կոլմանս Վասպուրականի, ո՛րպէս եղեն կամ գինչ արարին . 91

Զ. Վասն մահուանն Զաքարէի զօրավարին 92

Է. Վասն Լևոնի արքայի և վաղճանի նորա 93

Ը. Համառօտ հիւսուածք պատմութեանց կոլմանցն Աղուանից ընդ նեղըթոյս զոր յաւարտ արար 96

Թ. Վասն ելանելոյ Թաթար ազգին զօրուն, և փախստական առնելոյ զԹագաւորն Վրաց 102

Ժ. Վասն որ ՚ի սահմանս Գանձակայ անկուածն եղև զօրացն . 104

ԺԱ. Վասն վարդապետին Մխիթարայ՝ Թէ ուստի էր, և կամ որպիսի ոք էր 106

ԺԲ. Վասն չինութեան վանացն Կարնոյ Գետակայ 108

ԺԳ. Թէ որք էին որք երևելիք էին յաշակերտս նորա . . . 112

ԺԴ. Վասն վախճանի մեծ վարդապետին Մխիթարայ՝ որ Գոշն կոչի 114

ԺԵ. Վասն որք յետ նորա կալան զառաջնորդութիւն վանացն . 115

ԺԶ. Վասն սուլտանին Ջալալատնին և կոտորելոյն զզօրսն Վրաց, ՚ի վեց Հարիւր եօթանասուն և չորս Թուին . 117

ԺԷ. Վասն կորստեան սուլտանին Ջալալատնին և բառնալոյն նորա յերկրէ 119

ԺԸ. Թէ որպէս եւ Թաթարն ապականեալ զաշխարհս ամենայն . 121
ԺԹ. Վասն աւերման մեծի և պատուականի քաղաքին Գանձակայ ի պեղծ Թաթարաց 124
Ի. Վասն աւերման քաղաքաց և գաւառաց ի Թաթարէն . 125
ԻԱ. Վասն առման քաղաքին Շամքորոյ 128
ԻԲ. Վասն գերուԹեան վարդապետին Վանականայ՝ և որք ընդ նմա 129
ԻԳ. Վասն աւերման քաղաքին Լօռի, Թէ որպէս առին զնա . 135
ԻԴ. Վասն անկանելոյ ի ձեռս նոցա իշխանին Աւագի . . . 136
ԻԵ. Վասն քաղաքին Անւոյ՝ Թէ որպէս մատնեաց Տէր ի ձեռն նորա 138
ԻԶ. Վասն աւերածի Կարուցն 140
ԻԷ. Վասն յուղարկելոյ զիշխանն Աւագ առ Ղանն յարևելս . 142
ԻԸ. Վասն կոտորածին որ ի կողմանս Խաչենոյ, եւ վասն բռնապաշտ իշխանին Ջալալդօլայ 144
ԻԹ. Վասն եկեղեցւոյն զոր շինեաց 146
Լ. Վասն ցուցման կերպարանացն Թաթարին բացայայտու Թիւն սակաւ 147
ԼԱ. Վասն Իաբանին ասորւոյ 150
ԼԲ. Վասն աւերման Թէոդուպօլէացն 152
ԼԳ. Վասն պատերազմին որ եղև ընդ սուլդանն և ընդ Թաթարն 153
ԼԴ. Վասն Թագաւորին Հայոց Հեթմոյ, և զոր ինչ գործեաց անդ 156
ԼԵ. Վասն Կոստանդեայ իշխանին Լամբրօնոյ, և զոր ինչ գործեաց նա ընդ աշխարհս Կիլիկեցւոց 157
ԼԶ. Վասն Թագաւորութեանն ԴաւԹի 158
ԼԷ. Վասն կոչելոյն ի մեծ գուռն զկաթուղիկոսն Աղուանից ըզ տէր Ներսէս 159
ԼԸ. Վասն ասպատակելոյ նոցա ընդ կողմանս Վասպուրականի ի վերայ բազում գաւառաց 161
ԼԹ. Վասն կանոնական հրամանաց կաթուղիկոսին Հայոց . . 162
Խ. Թուղթ տեառն Կոստանդեայ շրջաբերական 163
ԽԱ. Սահմանք կանոնականք Տեառն Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց 167
ԽԲ. Վասն հարկահանացն՝ որք եկին ի Ղանէն 175
ԽԳ. Վասն Թագաւորացն Վրաց երթալոյն առ Ղանն . . . 176
ԽԴ. Վասն երթալոյ առ Ղանն Սմպատայ զօրավարին Հայոց, և որդւոյ Ղեղեաանին սուլդանին 178
ԽԵ. Վասն կոտորածին զոր արար Թաթարն յաշխարհն Վրաց . 179
ԽԶ. Վասն ԴաւԹի Մոլորեցուցչի 181
ԽԷ. Վասն դևին՝ որ ի կերպարանս կնոջ լեալ՝ խառնակեր ընդ մարդիկ 185
ԽԸ. Վասն խնդրոյն որ եղև ի մէջ .բրխաւոնէից վասն սուրբ

Հոգւոյն Աստուծոյ, թէ՛ի Հօրէ՛ միայն պարտ է ասել
թէ՛ի Հօրէ և յՈրդւոյ 186
խթ. Խոստովանութիւն հաւատոյ ուղղափառաց 189
Ծ. Խրատ դաւանութեան Վանական վարդապետին . . . 193
ԾԱ. Վասն վախճանի սուրբ վարդապետին Վանականին . . 198
ԾԲ. Վասն Յովհաննու գառնեցւոյն 200
ԾԳ. Վասն Սարգսիկն որդւոյ Բաթուկին 205
ԾԴ. Վասն մարտիկին որ եկեր զաչխարհս ամենայն 208
ԾԵ. Վասն աչխարհապրին որ եղև հրամանաւ Մանգու Ղանին 209
ԾԶ. Վասն երթալոյ բարեպաչտ արքային Հեթմոյ առ Բաթու
Ղանն 211
ԾԷ. Վասն կոտորածին յերկրին Հոռոմոց 217
ԾԸ. Վասն աւերածոյն Բաղդատայ 220
ԾԹ. Վասն աւերածին Մարտիրոսաց քաղաքին 225
Կ. Վասն որ լինէ գործեցաւ՝ի կոմսին Միքայէլոյ և՛ի խո-
րին Աստրւոյ 227
ԿԱ. Վասն մահուան բարեպաչտ իչխանին Զալալին 228
ԿԲ. Վասն մահուան իչխանին Շահնշահի և որդւոյ նորա Զա-
քարէի 230
ԿԳ. Վասն պատերազմին մեծի որ եղև ընդ միմեանս Հօլաւու-
նի և Բերքային 231
ՑԱԻԵԼՈՒԱԾ 237

ՅԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ *

Աբասաձոր գ· 109· 112·
Աբաս Թգ· բագր· 48· 49·
Աբաս իշխան կորիկեան 72·
Աբաս որդի Գ· Կիւրիկէի 72·
Աբգար Թգ· 145·
Աբգիսոյ 34·
Աբգէ ամիրապետ 40·
Աբգէ » մեծ 40· 43·
Աբգէ » միւս 44·
Աբգէմէլիք ամիրապետ 36· 99·
Աբել 198·
Աբխազիա 5·
Աբրահամ առաջնորդ Գեղակայ 116·
Աբրահամ Խոսրովանոզ 3· 16·
Աբրահամ կթ· 26· 29·
Աբրահամ Նահապետ 33· 194· 198·
Ագաթանգեղոս 2·
Ադամ 2· 29· 190· 192· 240·
Ադդէ խմաստասէր 24· 109·
Ազատին } Քէյ–Քաուս Բ·
Ազէատին } 211·
Աթանագինէս 11·
Աթանաս Ս· 18· 172· 187· 194·
Աթանաս խմաստասէր 24·
Աթանաս պատրիարգ Ատրուոյ 38·
Աթապէկ որդի Ջալալի 230·
Աթէ (Էթիէ) գեա 205·
Ալադին } Քէյքաւուսա 95–
Ալայէտին } 219·
Ալա–Թաու Լ· 214*
Ալամանաց կայսր 75*
Ալամուդ 219· 220·
Ալայիա 179· 219·
Ալանաց դուռն 232·
Ալանք որ և Օսէթք 21· 159* 232·
Ալաւիկ (կամ Ալօկ) 66· 101·
Ալաքուհ կիր Քէօսէ տաղ Լ· 154*
Ալդայի Լ· 213*
Ալէքս կայսր Ա· 47· 71*
Ալէքս Բ· 60-70·
Ալի 32· 33·
Ալիւս գետ 40·
Ալհարակ Լ· 66· 102·
Ալղու թաթար 231· 232·
Ալուալիխ 214·
Ալփասլան 47· 52· 59· 60·
Ալփիանոս էպ· 13·
Ախալցխէ Ք· 229*
Ախուրեան գետ 30·
Ածղոր 229·
Ախանա 207·
Ախներ վանք 77· 94·
Ահարոն (Հարուն) ամիրապետ 43·
Ահարոն կթ· Աղուանից 100·
Ահմատ ամիրապետ 44·
Ահր առան 215·
Աղան (Արծրունի) 16*
Աղբուղա որդի Վահրամայ 79· 128· 142· 159·
Աղէքսանդրիա 21· 55· 109·

* Համառօտագրգ նշանակէն, բ· բերդ· գ· գիւղ· լ· լեառն· Թգ· Թագաւոր· կթ· կաթուղիկոս· ս· սուրբ· ք· քաղաք· գե· գաւառ· վ· վարդապետ· * ծանօթութիւնք։

Աղթամար 46· 57· 70·
Աղիովիա 33·
Աղուանք 7· 9· 17· 30· 45· 56· 90· 96· 97· 98· 99· 102· 117· 120· 123· 125· 141· 159· 161· 174· 200· 210· 218· 213·
Աղուանից կթ· 88· 90· 96-102·
Աղասրթան հայր կխրիկէի 56· 72· 73·
Աղասրթան որդի կխրիկէի 73·
Աղասեւ 116·
Աղասեւոյ գետ 107·
Ամարաս գ· 98·
Ամարի թգ· 61·
Ամուրի Լիւսինեան 77*
Ամիթ .ք· 121· 161· 227·
Ամիրայ Մամիկոնեան 148·
Ամիր Օմար 90·
Ամիրմուհիք 34· 47·
Ամր ամիրապետ 34·
Այեխ գետ 213·
Այրարատ 79·
Այրի–վանք 174· 200·
Անանեանք 133·
Անանիա Մոկացի կթ· 48· 49· 50· 101·
Անանիա կթ· Աղուանից 100·
Անանիա Շիրակացի 33·
Անանիա Սանահնեցի 64·
Անանիա Սեբաստացի 70· 76·
Անապատ վանք· 72·
Անաստաս կթ· 33·
Անաստաս կայսր 22·
Անաստաս վգ· 40·
Անբերդ գե· 79·
Անգուն–նուին 174·
Անդրէաս առաքեալ 6·
Անդրէաս խոնստաանէր 24· 25· 109·
Անդրէի (Ս·) վանք 174·
Անդրոնիկոս զօրավար 74·
Անեցիք 31·
Անի 49· 50· 52· 57· 79· 84· 85· 138· 140· 174· 218*
Անկիատանք, որ և Անկուտք 122·
Անկապաղեխ .ք· 214·
Անտաք / Անախոք } 61· 63· 64· 71· 76· 234·
Անախոքայ Բրինձ 94·
Անտոն Ձգն· 68· 112·
Աղխարօվա կամ Ագխհրօվա 154*
Աշոտ Բագրատունի 8·
Աշոտ Իշխանաց Իշխան 44· 47·
Աշոտ մարզպան 36· 43·
Աշոտ Գ· Ողորմած 49·
Աշխշատ 11·
Աշտակ իշխան 119·
Աշտակ սուլդան 80·
Ապահիկ Ապուհորոսպ 46·
Ապաղա–ղան 232· 234·
Ապ–ալուփ (Էպիւ Թալէպ) 46·
Ապու–Պաքր 34· 36·
Ապուսահակ Մահմէտ 43·
Ապուսէթ ասոխիան 43· 44· 45· 46·
Առան 97*
Առէխ 214·
Առա Թգ· Աղուանից 97·
Ախա 208· 212·
Ախացիք 60·
Ախլ որ և Ուժիկ 210·
Ալան–պէկ 148· 212·
Ասորեստան 61·
Ասորիք 15· 29· 33· 34· 44· 67· 76· 130· 187· 207· 220· 227·
Աստն .ք· 214·
Աստէրապատ 215*
Աստուածածնայ եկ· ի Գետիկ 112· 237·
Աստուածատուր Աղբայրկայ որդի 94·
Աստն· տ· Սիր Աստն
Աստնա 62·
Աստիկոս պատրիարգ 18·
Արտպատական աշխարհ 79· 123·
Արտպատական Մարզպ 215*
Արաբիա 25·
Արաշ լիճ 214* 215·
Արագած լ· 211·
Արագածոտն 42· 216·
Արամունիս 39·
Արայի լ· 211·
Արգելանի վանք 91*
Արղու–խաթունն 111·
Արիանոս 12· 32· 187·
Արիստակէս 7· 8· 9·
Արիստոտէլ 17·
Արիք-բուժ 221· 231·
Արծրունեաց իշխան 16·
Արծրունիք 46· 62·
Արկադէոս կայսր 14· 18·
Արկադուպոլիս 43·
Արկպէտն գ· 41*
Արձան 16·

— այլ 16·
Արդուն 175-231·
Արձիշ ք· 91·
Արման 57·
Արշակ Բ 11· 12· 13· 14·
Արշակաւան 12· 13·
Արշակունիք 5· 19· 45· 185· 186·
Արշարունեաց գաւ· 48·
Արուճ աւան 35·
Արտաշատ 10·
Արտաշէս կամ Արտաշիր Թգ· որդի Վռամշապհոյ 18· 19· 30* 45·
Արտաշիր որդի Շահնշահի 230·
Արտազ գաւ· 174*
Արտաւազդ գաւ· 185·
Արտաւիկ ք· 92·
Արտեմոն հերձուածող 31·
Արցախ 182* 207·
Արփասլան ս· Ալփասլան·
Արփասուս գ· 28·
Արքակաղին վանք 82· 93·
Արքայութիւն քահանայ 66·
Արքեղայոս իշխան 8·
Աւագ որդի Իւանէի մեծի 93-180·
Աւագ–Սարգիս որդի Շահնշահի 230·
Աւազակք 227*
Աւհատ եղբայր Աշրափայ 80*
Ախիազէթ 159·
Ախիազք 228·
Ախշէն 46·
Ախսխմերոս 36·
Բաբգէն կթ· 21·
Բաբգէն Սիւնի 41·
Բաբելոն 44· 78· 224·
Բագարան գ· 29·
Բագարատ իշխան Տարօնոյ 43·
Բագնայր վանք 30·
Բագուան 34· 39· 93·
Բագրատունիք 5· 45· 53· 56· 57· 72·
Բագրեւանդ 22· 36·
Բահթու զան 159· 177· 205· 207· 209· 211· 213· 214· 216· 217· 218· 220· 232·
Բալահա Թաւիթար 218· 220· 232·
Բահաուր իշխան Թաւիթար 104·
Բաղաց գաւ· 49·
Բաղդատ ք· 220· 224· 225·
Բաշու–Խուրշու զինաւոր 132·
Բաշու–Նուվին 154· 156· 177· 178· 206· 211· 213· 218· 219· 221·
Բառնաբաս առաք· 112·
Բասիլիա վրացի 114·
Բասրացւոց ք· 46·
Բարաքա (Թաւիթար) 218·
Բարդուղիմէ 6· 96· 165· 167· 203·
Բարեշապուհ (ասորի) 38·
Բարի–Հրեշտակ (Ագաթանգ·) 2·
Բարձրբերդ 58·
Բարսեղ (Ս·) 13· 18· 188· 194· 196·
Բարսեղ եղ· Խաչատրոյ վարդապետի 116·
Բարսեղ եպ· (արքայեղբայր) 151·
Բարսեղ եպ· Հաղբատայ 56·
Բարսեղ Ա· կթ· 56· 57· 61· 62· 63·
Բարսեղ քհ· գեսպան 213· 216·
Բարքաշա (Թաւիթար) 218·
Բաւրինա քոյր Աբասայ կորիկեան 72·
Բեթանիա 17·
Բեժգէն կթ· Աղուան· 88· 89· 102·
Բեղուկուամ ք· 103·
Բեղամէջ 103·
Բենեւոկեատոս (Ս·) 63·
Բենէր վդ· 234·
Բեսեղիէ 111·
Բերդակոր գ· 100·
Բերքայ զօրավ· Թաւիթար 231· 232· 234·
Բզնունեաց ծով 46·
Բզնունիք 33· 36· 80· 119· 161·
Բէքխարուխ սուլտան 60·
Բիւզանդ պատմիչ 3·
Բիւզու ք· 43·
Բիւրատեան (Սմբատ) 36·
Բորա–Նուվին 160· 229·
Բոր գլխոյ Պարսից 30·
Բուխարա 215·
Բուղա Հարկահան Թաւիթար 175-176·
Բուղա ոսոխկան 44· 46· 175·
Բուոյնկից գաւ· 39·
Բուրզան մարզպան 30·
Գնունի ք· 54· 79· 84· 90· 112· 174·
Գրքիշու 19·
Գօրա–Նուվին 160·
Գաբրիէլ Հրեշտակ 190· 201·
Գաբրիէլ վդ· 38·
Գագ բ· 79· 129· 134·
Գագիկ Ա· Թգ· Արծրունեաց 62·
Գագիկ Թգ· Բագրատ· Ա· 50·
Գագիկ Բ· 52· 53· 57* 58· 59*

Գագիկ Ծպ. Վանանդայ 33. 37. 38. 39.
Գագիկ Ա. կթ. Աղուանից 100.
Գագիկ Բ. (Գրիգորէս) 102.
Գազուին 215*
Գալքիւթ (Գայլ գետ) 154*
Գամիրք 24. 109.
Գայխանէ 8.
Գայլ (Պետրոս) եպս. 26.
Գանձակ ք. 66. 88. 89. 90. 101. 115. 117. 118. 124. 125.
Գանձասար վ. 146. 176* 181. 230.
Գառնեցիք 185.
Գառնի գ. 45. 46. 118. 185. 200.
Գառնիկ Ճգ. 1. 8. 21.
Գարագօրում ք. 121* 213*
Գարա-Խիթայ աշխարհ 122* 213*
Գարաման 179*
Գարգամ, Գարգման } 73. 79. 99. 129. 199.
Գեղամ 228.
Գեղոն 215*
Գեղամայ աշխարհ 239.
Գեղամայ ծով 36. 129. 181. 247. 239*
Գեղաքունեայ ծով 79. 137. 182.
Գեռաբակ բ. 31.
Գեռակիցք վ. 73.
Գեղիկ վ. 79. 81. 85. 107. 108. 109. 111. 114. 116. 135. 174. 237. 239. 242.
Գերմանիա 75.
Գերմանոս պատր. 17.
Գէորգ (Ս.) եկեղ. 116.
Գէորգ եպս. Հաղբատայ 36.
Գէորգ կամ Գորգի Գ. Թգ. Վրաց 64. 66. 79. 81. 93. 109. 124.
Գէորգ Լաչա 93. 158. 177. 178.
Գէորգ Թոռն Լաչայի 228.
Գէորգ կթ. Խուլ-որբուկ 42.
Գէորգ Բ. Գառնեցի 45. 46. 101.
Գէորգ վգ. Լօռեցի 54. 55. 56. 57. 62.
Գիգան ասորի 109. 24*
Գիւղ խան 175. 177. 206. 209.
Գիս 97.
Գիւա կթ. 20.
Գնէլ արշակունի 12.
Գողգոթա 7.
Գողթն 37. 185.
Գոնդա Թագուհի վրաց 228. 229.
Գոնդա կին Աբաղի 181.
Գոշայ վ. 79* տ. Գեղիկ
Գորդ վգ. Կարենացի 91.
Գորգոզ իշխան Թաճար 160.
Գորտոսակ (գիրք) 29.
Գուրջի Բագրատունի 88.
Գրատխանոս կայսր 13.
Գրիգոր Աստուածաբան 13. 64. 67. 187. 194. 196.
Գրիգորեանք (Նիւս. Աստուածաբան) 18.
Գրիգոր Դունեցի 84.
Գրիգոր եղբայր Վահթանկայ տեառն Հաթերքոյ 111.
Գրիգոր եպս. (քեռորդի Վկայասիրի) 55. 56*
Գրիգոր եպս. Բջնոյ 174.
Գրիգոր եպս. Խաչենոյ 207.
Գրիգոր իշխան Խաչենոյ 105. 153.
Գրիգոր իշխան մամիկ. եղբայր Ալան-սէկիի 148.
Գրիգոր որդի Ալան-սէկիի 212.
Գրիգոր Լուս. 1-11. 19. 30. 31. 39. 96. 97. 110. 163. 167. 169. 172. 187. 194. 203.
» Ախոռ 25. 29. 46. 70. 95. 98. 186.
» Դաշինք 67.
» Նշխար 21.
» Վանք 42*
» Վիրապ 34.
Գրիգոր կապալեցի 116.
Գրիգոր կթ. Բ. Վկայասէր 55. 56. 57.
Գրիգոր կթ. Գ. Պահլաւ 55. 61. 63. 67. 101. 186.
Գրիգոր կթ. Դ. Տղայ 69. 100.
Գրիգոր կթ. Ե. Գահավէժ 69. 116. 137.
Գրիգոր կթ. Զ. Ապիրատ 70.
Գրիգոր մագխաստոս 34.
Գրիգոր մամիկ. պատրիկ 35.
Գրիգոր (Մանաճիհր) 24.
Գրիգոր Նիւսացի 13. 188. 194. 196.
Գրիգոր Պապ 63.
Գրիգոր Սքանչ. 88.
Գրիգոր վգ. (առ Մօրկաւ) 28.
Գրիգոր վգ. Գանձակեցի 101.
Գրիգոր վգ. Երգեվանից 200.
Գրիգոր վգ. Թոքաակերի որդի 66. 101.

Գրիգոր վդ. Մոնմոնիկ 84. 85.
Գրիգոր Տղայ Խաչենեցի 137. 153. 155.
Գրիգոր Տղայ որդի Իւանէի 116. 137. 207.
Գրիգոր Տուաէորդի 51. 84. 85.
Գրիգորիս եղբայր վախթանկայ Համեղբոյ 111.
Գրիգորիս եպս. Դադի վանից 184. 186.
Գրիգորիս եպս. Հաղբատայ 56.
Գրիգորիս կթ. Աղուանից 10. 98.
Գրիգորիս վդ. Խաչենոյ 146.
Դադի վ. 111. 184.
Դալաս ք. 214.
Դամասկոս 74. 80. 96* 161*
Դանգրէա 61*
Դանիէլ եպս. ասորի 10. 11. 15.
Դանիէլ մարգարէ 17. 133. 198.
Դառնոյ գաշտ 233.
Դասնաւորից գէ. 39.
Դավրէժ 215*
Դարբանդ 36. 102. 104. 159* 218. 231. 232. 234.
Դաւգար (գրիչ) 222.
Դաւիթ Ալաւկայ որդի 66. 101.
Դաւիթ Ախօղլն թգ. 56.
Դաւիթ Ախլաղէթ 16. 17. 20.
Դաւիթ Բագրատունի կորիկեան 'ի Մածնաբերդ 72.
Դաւիթ Դուինեցի 35.
Դաւիթ Ա. թգ. վրաց 64.
Դաւիթ թգ. Բ. Դեմեթրեան 64. 66.
Դաւիթ թգ. Գ. Վահրամուղ որդի Աշոյի 159. 178. 228. 231.
Դաւիթ թգ. Դ. որդի Ռուզուդանայ 144. 150. 159. 177. 178. 179. 180. 210.
Դաւիթ Իշխան Նոր-քերդոյ 72. 73.
Դաւիթ կթ. Ա. (ՅԱրամունեաց) 39. 41.
Դաւիթ կթ. Բ. ('ի Մազազայ) 43.
Դաւիթ » Գ. (ՅԱրքակաղնոյ) 70. 82. 83. 93.
Դաւիթ կթ. Աղուանից Ա. 98.
» » » Բ. 100.
» » » Գ. 100.
Դաւիթ կթ. Աղուանից Դ. 100.
» » » Ե. 100.
» » » Զ. 101.
Դաւիթ Հռոմայեցի 40.
Դաւիթ մրգր. 2. 39. 63. 68. 198. 238.
Դաւիթ Մոլորեցուցիչ 181. 182.
Դաւիթ Սահառունի 30. 32.
Դաւիթ Սիւնեաց եպս. 41.
Դաւիթ վդ. Քոբայրեցի 84.
Դաւիթ Քրիմին որդի 111.
Դեգ բ. 176.
Դելմուկք 46*
Դեմեթրէ թգ. Վրաց 64. 66. 102. 228.
Դեսում իշխան 207.
Դեսպինա խաթուն 234.
Դերենիկ արծրունի 46.
Դերենիկ բագրատունի 36.
Դէձինա գ. 215*
Դէոսկորոս սանահնեցի 51. 64.
Դէրան 215*
Դըդուշ որդի Ալփասլանայ 60.
Դիզակ 215.
Դիլմա կամ Դիլմաց աշխարհ 46. 123.
Դինկապալեխ ք. 214.
Դիոնէսիոս Արիսպ. 68. 197.
Դիուժէն կայսր 59.
Դիպէթ 122* 215*
Դմէկ 227.
Դուին 10. 34. 35. 39. 41. 42. 46. 61. 79. 84. 98. 100.
Դուկիծն կայսր Յունաց 59.
Դուս ք. 215*
Դուփ խաչենեցի 153. 155.
Դպրեվանք 48.
Դրազարկ վ. 63.
Եաքսարտ գետ. 214*
Եբիոս (գիրք) 29.
Եգիպատացիք 33.
Եգիպտոս 32. 55. 61. 71. 80. 96. 119.
Եգլեանք 72. 225.
Եզեկիէլ 17. 133. 198.
Եզնակ 16. 17.
Եզնիկա 154* 155. 179. 219. 234.
Եզր կթ. 31. 34. 39.
Եզրաս Անգեղացի 22.
Եիլան-սու 214.
Ելիփինա 156. 159. 160.
Ելիսացիք 220.

Եղեքս 109· (Իդգս)
Եկոփորուկ 214·
Եղապատրօշ գ· 42·
Եղնա կԹ· 36· 37· 99·
Եղնա Հաւուցքաառեցի 84·
Եղնա մարդարէ 193· 198· 204·
Եղնա վդ· Խաչէնոյ 146· 147·
Եղնաբ 111·
Եղնազար եպս· Աղուանից 99·
Եղնէկ առաքեալ 97·
Եղնէկ պատմիչ 3· 16· 17·
Եղնաբէթ (Զապէլ) 212·
Եղնակ եպս· 53·
Եղնակ կԹ· 48·
Եմեսիա 188·
Ենովս 198·
Ենովք 199·
Եպիփան կիպրացի 188· 195·
Եռինէ 42·
Եսայի կԹ· 42·
Եսայի մարգ· 198·
Եսվաղեն 97·
Երազգաւոր 43·
Երասխ գետ 215·
Երզեվանք 75· 79· 129· 184· 199·
Երեմիա եպս· Աղուանից 98·
Երեմիա մարգ· 115· 133· 198·
Երիճ գետ 213·
Երոսոյ 215·
Երուսաղէմ 6· 17· 22· 29· 30· 43· 61· 67· 71· 80· 97· 109· 110· 124· 145· 199· 201· 203· 227· 237·
Եսա 115·
Եսեբիոս 2·
Եսայեան 212·
Եփեսոս 179·
Եփրատ 96· 225·
Եփրեմ (Ս·) 64· 188·
Եփրեմ վդ· 40·
Զանգիան 202· 215·
Զապէլ 94· 157· 212·
Զառաֆշան գետ 215*
Զարմանդուխտ 30·
Զաւէն կԹ· 13· 14·
Զաքարէ Սպասալար 51· 56· 72· 78· 79· 80· 87· 90· 92· 93· 108· 110· 111· 112· 115· 116· 126· 142· 145· 211*
Զաքարէ եղբայր Սարգսի 79·
Զաքարէ որդի Շահնշահի 159· 162· 181· 222· 230· 231·
Զաքարիա եպս· Աղուանից 98· 99·
Զաքարիա (այլ) 99·
Զաքարիա կԹ· 43· 45·
Զաքարիա Հայր Յովհ· Մկրտ· 98·
Զաքարիա որդի Վահրամայ 72· 78·
Զենոն կայսր 8· 21· 22·
Զմզոմա 65·
Զոյլ 59·
Զուռնուխ 215·
Զօրաբաբէլ 198·
Իսա ազէքսանդրացի 24· 109·
Իմիլ 211· 232·
Իլխ–Գաձա 206·
Իմմանուէլ 70· 191·
Լռասակէս լասախվերցի 4·
Լաբորական Լ· 228·
Թադէոս առաք· և վանք· 96· 97· 163· 167· 174· 185· 203·
Թաճարք 4· 56· 95· 102-232·
Թաճարտան 213·
Թաճուլ եղբ· Վարոսի 21·
Թալիլէ 100·
Թալին 40·
Թաղիաճին 73·
Թամար Թագուհի 56· 79· 81· 93· 107· 109· 110· 126·
Թամձա 80* 81· 119· 161·
Թանատեաց վ· 41·
Թավրէժ 151· 160· 215·
Թեղենիք 84·
Թեւդաս 181·
Թէոդոս մեծն 3· 13· 14· 68·
Թէոդոս փոքրն 18· 20·
Թէոդոս սպասաւոր Կոստանդին կԹ· 174·
Թէոդորա կին Յուստինոսի 22·
Թէոդորոս աշ· Մ· Խորէն 16·
Թէոդորոս կԹ· 48·
Թէոդորոս Ոչտունի 32· 35·
Թէոդորոս (Ս·) 21·
Թէոդուպօլիս 18· 152·
Թիլ գ· 45·
Թոռոր կայսրուհի 59·
Թորա (Թէոբիանոս) 67·
Թորգան 8· 21·
Թորոս աշ· Մխ· Գոշի 113·
Թորոս եպս· Աղուանից 100·
Թորոս իշխանաց իշխան 62· 74·
Թորոս որդի Կոստանդնի Ա· 212·
Թորոս քահ· 213·

Թումայա աշ. Թաթիկ 21.
Թումնի–Թանկահ 119.
Թուրա Ալա. 209.
Թուրքաստան 214.
Թուրք 47. 74. 104* 117. 174. 175. 204. 207. 211. 220. 221. 222. 227.
Թոքակեր 66. 101.
Թրակիա 60. 70.
Թօխուզ Խաթուն 223. 229. 233. 234.
Իբերիական Սպանիա 208*
Իգնատիոս մեկինիչ Ղուկայ 63.
Իգնատիոս վդ. 84.
Իշխան ամիրապետ Ա. 36.
Իշխան » Բ. 37.
Իշխան » Գ. 40.
Իմիկ ս. Վոլկա
Իլանպեխ 214.
Իլի գ. 214*
Ինգլի–Նուին 225.
Ինգլի–Գագաի ս. Էնգլի–Գաթա.
Իշոդա (Եշոքա) խնամատարէր 25.
Իկոնիոն գ. 60* 80*
Իկօն գ. 179.
Իճաա կամ Իյաա Իլն–զանէմ 33*
Իննովկենտիոս պապ Դ. 186* 207*
Իշմուէթ (որդի Հօլաւուի) 225.
Իլինգօկ Հարկահան 42.
Իսահակ վդ. Մուսա 45.
Իսմայէլ (ազգ) 34. 36. 38. 42. 43. 46. 52. 75. 81.
Իսմայէլ (որդի Աբրահամու) 35. 37. 88.
Իսկ լինի 214*
Իսրայէլ կթ. 35.
Իսրայէլ (Յակոբ նահ.) 198.
Իսրայէլ (Հրեայք) 2. 233.
Իսրար–Նուին 150.
Իտուզաստա 136.
Իրան տօմարագէտ 25. 109. 110.
Իսանէ Ամթաբէկ 56. 72. 79. 80. 81. 90. 92. 103-8. 112-9. 126. 158. 178. 180.
Իսանէ եղբայր Շալուէի 117.
Իսանէ Թոռն Չաքարէի 230.
Լամբրօն բ. 63. 137.
Լաչա Թգ. Վրաց 103. 104. 126. 158. 228.
Լևոն կայսր Ա. 21.
Լևոն որ և Լևոնդ կայսր 36:
Լևոն Գ. (Խաւբրացի) 37. 40.
Լևոն Դ. 42.
Լևոն Ե. (Հայկազն) 43. 45.
Լևոն Իուբինեան Ա. 62. 74.
Լևոն Բ. Թգ. 59. 62. 69. 74. 78. 82. 83. 93-96. 157. 212.
Լևոն Գ. 156.
Լեշկարխս, Լասգարխս կայսր 179. 212.
Լիբանանու մայրք 119.
Լորուա գ. 129.
Լօսէ գ. 39. 48. 53. 54* 60. 72. 83. 155.
Խադայ 147.
Խաղիրք 30. 33. 36. 104* 122.
Խաճար տոհմ 227*
Խամճի վանք 90. 102. 151. 160. 161.
Խաչատուր վդ. Գեռակայ 116.
Խաչատուր վդ. Տարօնեցի 108.
Խաչենեցիք 103. 155.
Խաչէն գբ. 85. 89. 103* 107. 137. 142. 144. 175* 181. 182. 207. 217. 229.
Խաչիկ կթ. Ա. 50.
» » Բ. 54.
Խաչիկ վդ. 40.
Խառան 33. 227.
Խարախորտայ, Գարա–Խիդա 213.
Խարչին 214.
Խարչուխ լ. 214.
Խզրլ բռնաւոր 60. 61.
Խզուին գ. 215. ս. Գազուին
Խիւչախք (Ղիչաղք) 203.
Խլաթ, Խլհաթ գ. 80. 119. 161.
Խնդրախոյր, Խնդախոյր 214.
Խնծկօնա գ. 51*
Խոյախան բ. 176.
Խոյդան 111.
Խոշան գաշտավայր 103.
Խոշաք տիկին 229.
Խոռխան կամ Խոռեամ պարսիկ 29. 30.
Խոսրով եպիսկոպոս 48.
Խոսրով Թգ. Բ. 9. 10.
Խոսրով Թգ. Գ. 14. 18.
Խոսրով պատմիչ. 3. 16.
Խոսրով մեծն Թգ. Պարսից 23.
Խոսրով Բ. Թգ. Պարսից 29. 30. 98.
Խոսրով Գ. » 30.
Խոսրովիդխտոյ Հովհաննոյ 200*
Խորազմեան 161.

Խորանաշատ վանք 184· 199·
Խորասան աշխարհ 46· 61· 90· 116· 117· 123· 215· 232·
Խորենացի 200* 215*
Խորէն խոստովանող 3·
Խորիշահ կին Քուրդ իշխանի 211·
Խորին Ադորիք 227·
Խուզախ աշխարհ 214*
Խութ, Խոյթ, Խօթ լ· 44·
Խութայի, (Ձինք) 216*
Խութափիա ք· 214·
Խութուխչի–զան 214·
Խուլ–որբուկ, Խոյլորբուկ 42·
Խուչախիք 104· (Խիւ չախ)
Խցկունք վանք 51·
Խօհանա–բերդ 146· 176*
Խօձա–Նուին 215·
Խօշաք մայր Աւագին 180· 229·
Ծաղկոցաձոր 50·
Ծառաքար վ· 51·
Ծար Ջերմուկ 182·
Ծիրանաքար ք· 176·
Ծովք կղզի· 62·
Ծոփք 9·
Կազեան գր· 41·
Կաթայի կամ Խութայի 216*
Կաթին ծով 214·
Կալօժան 70·
Կածարէթ 79· 129·
Կակաղ գ· 43·
Կաղանկատուացի 4· 98*
Կայան աշխարհ տ· Կայենոյ Ե
Կայանոյ ձոր 174·
Կայեան բերդ 108· 136· 174·
Կայենոյ աշխարհ 85· 107· 108·
Կայէն գաւ· 79· 109*
Կապուտքար 48·
Կապպադովկացիք 61·
Կապպադովկիա 28·
Կասբից ծով 205· 211· 213· 232·
Կամ ոսոիկան 36·
Կառխպուն 221· 224·
Կառրամիտէ Թագուհի 50·
Կարապետ Հաւ Գագկայ կթ· 101·
Կարապետ (Ս·) վ· 24·
Կարապետ ք· դրան երէց Հեթումոյ Ա· 215·
Կարին գաւ· 18· 152·
Կարկառ 207·
Կարմիր վ· Քեանոյ 56*
Կարմնջաձոր 48·
Կարնոյ ք· 18· 31· 40· 79· 107· 110· 152* 153· 161· 173· 210· 219·
Կարս ք· 53· 57· 79· 84· 140· 174·
Կաւաղենոս կայսր (Կոպրոնիմ·) 40·
Կաւատա Ա· 22·
Կաւատա Բ· 30·
Կեսարիա կապադովկացւոց 12· 53· 57· 120· 155· 219·
Կեչառուք 84· 85· 86· 174·
Կերինեթոս 32·
Կիլիկիա և Կիլիկեցւոց աշխարհ 9· 47· 50· 58· 62· 68· 82· 107* 120· 151· 157· 162· 168· 178· 187· 211· 219·
Կիլիկեցիք 156·
Կիպրոս կղզի 77· 95·
Կիրակոս (Պատմիչ) 133· 189· 243·
Կիրակոսակ (գիրք) 29·
Կիր–Յան 48· 50·
Կիւրեղ աղեքսանդրացի 64·
Կիւրեղ երուսաղէմացի 31· 39· 199
Կիւրիկէ Բագր· կամ Աղուան Թգ· Ա–Բ· 53· 56· 72·
Կիւրիկէ » Գ· 72·
Կիւրիկէ » Դ· 129·
Կիւրիոն կթ· Վրաց 4· 25· 26·
Կլայ–Հռովմէական · տ· Հռովմ· կլայ :
Կոգովիա 29·
Կոթ աւան 181·
Կողբ 31· 210·
Կողնիա 204· 205·
Կոմանա 14·
Կոմիտաս կթ· 30· 31·
Կոնստիլի 61·
Կոպէ անապատ 213*
Կոստանդին կաթ· Ա· 93· 151· 162· 163· 167· 174· 186· 205· 212·
Կոստանդիանոս Մեծն 2· 10· 67·
Կոստանդին կայսր Բ· 9· 10·
Կոստանդին » Գ· 36·
Կոստանդին » Ե· 42·
Կոստանդին » Զ· 48·
Կոստանդին » Ը· 59·
Կոստանդին Հերակլ կայսր 32· 33·
Կոստանդին պայլ 94· 95· 151· 157· 158· 171· 212·
Կոստանդին Ռուբինեան Ա· 74·
Կոստանդնուպոլիս 8· 13· 14· 17· 21· 24· 27· 30· 41* 45· 55· 61· 67·

Կովկաս լ. 104.
Կոտայք գաւ. 39. 43. 117.
Կորակեսիոն 219*
Կորինն 3. 16. 17.
Կուզ սուլթան Իկոն. 80.
Կուզ Տիմոթէոս 21*
Կուր գետ 103*
Կրմանն աշխարհ 209*
Կօն 158. 219. տ. Իկոնիոն:
Հաբէլ երէց 15.
Հագար 32.
Հագարացիք 46.
Հաթերք 107. 111.
Հալաւուս. տ. Հօլաւուս.
Հալէպ 74. 227.
Հաղարծին վ. 108. 116. 174.
Հաղբակ Խաչենեցի 105.
Հաղբատ գ. և վ. 56. 60. 64. 65. 83. 84. 85. 111. 113. 116. 174.
Համա 227.
Համադօլայ էշ. 161.
Համազասպ Եպս. Հաղբատայ 57. 65. 174. 184.
Համազասպ մարզպան 55.
Հայաստան և Հայք 6. 11. 12. 15. 17. 19. 22. 29. 31. 44. 48. 61. 102. 117. 125. 152. 153. 159. 167. 173. 175. 189. 208. 209* 212. 215* 218.
Հայկ 90* 97.
Հայկազն Արման 57.
Հայք 2. տ. Հայաստան:
Հանքերդ 174.
Հանդաբերդ բ. 182.
Հասան որ և Ջալալ 142. 145. 175. 207. 208. 229.
Հասան միւս Խաչենեցի 155.
Հասան-պէյն-Ջէլիա 46*
Հասան. տ. Պռօշ:
Հասան որդի Պռօշի 224.
Հասան Քրդի որդի 211.
Հարք գաւ. 13.
Հաւախաղայց 145.
Հաւարծին. տ. Հաղարծին:
Հաւուց-թառ 84. 174.
Հեթում ալքայ Ա. 93. 96, 156. 163. 168. 171. 178. 186. 201* 211. 215.
Հեթում աէր Լամբրօնի 63. 157.
Հեղինէ կին Աբգարու 145.
Հերակլ կայսր 3. 30. 31. 32. 36. 39.
Հերդ գաւ. 90.
Հերեթ աշխարհ 90*
Հերոս եղբայր Հայկայ 90*
Հեփեթաղք 21.
Հէմիանայ դաշտ 228.
Հէշմ 37.
Հիպերիքոս վկայ 85.
Հմայեակ մամիկոնեան 21.
Հոյլորբուկ 42* տ. Գէորգ կթ. Խուլորբուկ
Հոնք 98. 104. 122.
Հոռոմոսի վ. 48. 174.
Հոռոմոց աշխարհ 219.
Հոռոմոց (Իկոնիոնի) սուլտանք 70. 119. 140. 152. 157. 158. 159. 211. 219.
Հոռոմք (Լատինք) 139. 204.
Հոռոմք (Յոյնք) 33. 40. 41. 57. 58. 68. 69* 234.
Հոքճա-խան 122.
Հռիփսիմեայ վկայարան 30.
Հռիփսիմեանք 8. 16.
Հռոմ 2. 6. 41. 42. 54. 75. 97. 186. 203.
Հռոմայեցիք (Լատինք) 75. 187.
» (Յոյնք) 10. 60. 70.
Հռոմայեցւոց ք. 75.
Հռոմկլայ 61. 62. 63* 70. 93. 96. 151. 174. 186. 205.
Հռոփանոս Սամոսատցի 16.
Հրեայք 25. 33.
Հրէաստան 24.
Հօլաւուս դան 214-234.
Ձագ գ. 43.
Ձորոգեաց վ. 211*
Ղազար Փարպեցի 3. 16. 17. 21.
Ղաճարիք ազգ 227.
Ղաւաղան-Հուբին 129. 220. 232.
Ղաւայիք 216.
Ղասիա 122.
Ղասիացիք 122.
Ղարա Բահադուր 141.
Ղարաղրում աշխարհ 121. տես Գարագօրում.
Ղարս ք. 211. տ. Կարս.
Ղևոնդ երէց 3. 16. 20.
Ղևոնդ կթ. 22.
Ղևոնդեանք 64.
Ղսիաճաճին սուլտան Բ. 153. 161. 177. 179.
Ղուճուն-Հուբին 148. 150. 160.

Ղուկ կամ Ղուկի զօրավ. թաղեալ 218. 220. 232.
Ղուկայ վեհնութիւն 63.
Ղումղումուր 213.
Ղուպիլայի 221* 231.
Ղօզլիճ 50*
Ղօճա ղան 206.
Ճակատք գե. 140* 210*
Ճառաբերդ 207*
Ճեաֆար 224*
Ճիհուն գտ. 215*
Ճիհր–Բուզէն 30.
Ճիհր–Վզուէլ 30.
Ճիհր–Վշնասպ Սուհէն 30.
Ճինկիզխան 218*
Ճիւէ 218*
Ճապոտիկ գ. 239.
Ճորայ պահակ 213.
Ճամպալէխ ք. 214.
Մադիամ 33.
Մադիանացիք 33.
Մադրին (կուռք) 217. 233.
Մազազ 43.
Մազանդարան 213. 227*
Մազդէն 20.
Մախոժ 24.
Մածնաբերդ 56. 72. 73. 129
Մակարայ վանք 111.
Մակեդոն 12. 13.
Մահադի 43.
Մահամետ ամիրապ. 43.
Մահկանաբերդ 107.
Մահմէտ 3. 32. 33. 34. 220. 221. 222.
Մահմէտ Ապուսահակ 43.
Մահմէտ Ոսմիկան 33.
Մահմէտ միւս 36.
Մահմուտ ամիրապետ 43.
Մահմուտ Սալջուկ 47.
Մամբրէ 16. 17. 22.
Մամեստիա 68. 69*
Մամիկոն Մամիկոնեան 13.
Մամիկոնեանք 211.
Մանքան 147.
Մայուն (Պեմունդ) 61.
Մայրավանեցի } 31.
Մայրագոմեցի }
Մանազկերտ 13. 38. 39.
Մանաճիհր 24.
Մանգնոս եպ. 24.
Մանգնոս մարզպան 21.
Մանգու ղան. 206. 208. 209. 211. 213. 214. 215. 216. 217. 218. 219. 220. 221. 231.
Մանեայ այրք 21.
Մանէ 29.
Մանիլ (Մանուէլ) կայսր 68. 70.
Մանկոն կայսր տ. Մարկիանոս.
Մանուէլ Մամիկոնեան 13.
Մաշտոց կթ. 45. 49.
Մասեաց–ոան 71.
Մատթէոս կթ. Աղ. Ա. 98.
Մատթէոս Բ. 100.
Մատթէոս Ուրհայցի 4. 32*
Մատթէոսի վեհնութիւն 68.
Մարանդ ք. 92.
Մարաշ 47.
Մարզպան մամիկոնեան 211* 212.
Մարի (Ս.) 140.
Մարիամ սուրբ կոյս 191. 238. 240.
Մարկիանոս կայսր 20. 21. 37.
Մարկոս կթ. Աղ. Ա. 101.
Մարկոս Բ. 101.
Մարկոս աշակերտ վանականք 130.
Մարկոս վգ. 207.
Մարկոսի աթոռ. 53.
Մարկոս վեռրապօլիտ կեսարու. 57. 58.
Մարմաշէն 50* } Մարմարաշէն վանք 50. }
Մարտիրոս առաջնորդ Գեռկայ 114. 115. 116.
Մարտիրոսաց քաղաք 225.
Մարուխա 226.
Մաւիէ 33. 36.
Մաքենոցաց վանք 42. 100.
Մաքսիմիանոս 98. 200.
Մեժէժ (Մժէժ) 25.
Մելտինէ 113.
Մելտինի 76.
Մեծ Հայք 187.
Մեղան իշխան թաղեալ 232.
Մեռելայարոյց վգ. (Աճառուր) 93*
Մեսրովբ վգ. 15. 16. 17. 18. 19. 97. 98. 134.
Մերհասան Թգ. Աղ. 97.
Մերու գտ 213*
Մերտին 71. 227.
Մելիք Աշրաֆ 72. 80. 96. 161.
Մելիքշահ Ա. 47.
Մելիքշահ Բ. 60.
Մելիք Քեղմ. 72. 80. 96.

Մկհմէհ 44.
Մկոմենէ 53*
Մկրվ գա. 215*
Մկրվ-Ջահկհան ք. 115*
Մկրվե-Ղուա ք. 115*
Մղրմին գա. 215*
Մժէժ գնունկ 23.
Մհանա ք. 215*
Մհափոր գե. 102. 151. 160.
Մհափոր ք. 90.
Մհտղտաա Պարսիկ 53.
Մհնաս եպ. 83. 85.
Միջագետք 46* 71. 96. 208. 227.
Միջնաշէն 109.
Մքայէլ կայսր Ա. 43.
Մքայէլ » Դ. 59.
Մքայէլ կթ. Ակ. 100.
Մլհէաք կամ Մուլհէաք 118. 145. 150. 215* 219.
Մխիթար առաջնորդ Գետկայ 116.
Մխիթար Գոշ 79. 81. 86. 106. 107. 114. 237. 238. 239. 240. 241. 243.
Մխիթար Հիւան 115.
Մխիթար վդ. 213.
Մծբին 161.
Մկդէմ որդի Վասակայ 105. 224.
Մկրտիչ եպ. Հանքերդայ 174.
Մոզն գե. 41.
Մոլար-Նուին 128. 130. 134.
Մոնգայէ-Նոյին 225*
Մոնտահ 59.
Մովալ. 160*
Մովսէս Բագրեւանդայ եպ. 22.
Մովսէս Խորենացի 3. 16. 21. 188.
Մովսէս Կալկանդուացի 3. 98*
Մովսէս Մարգարէ 2. 32. 55. 194. 188. 204.
Մովսէս կթ. 24. 25. 26.
Մովսէս կթ. Ակ. Ա. 98.
Մովսէս Բ. 100.
Մովսէս վդ. 40.
Մովսէս Ցուրտաւայ եպ. 26.
Մուհէաք ս. Մլհէաք.
Մուղալ Թաճար 122. 149*
Մուղան գաշտ. 121. 123. 128. 141. 153. 160. 218. 233.
Մուշէղ 13. 33. 40.
Մուշ կթ. 21. 22.
Մուսդասար 221.
Մուսէ ամիրապ 43.
Մուֆարղին (Տիրկէթ) 225.
Մարայ սուլտանք 228.
Մրեն 30.
Մրվան 36. 37. 40.
Մօսդազէմ, Մօսդասէն } խալիֆայ 221*
Մօսդանսէրայ 221*
Մօրիկ 27. 28. 29.
Ցաղ 33.
Ցաղկէբա Բ. 20. 31. 33. 97.
Ցակոբայ վանք 7. 201.
Ցակոբ (Ս.) Մծբնայ 68. 209*
Ցակոբ եպ. Կարուց 174.
Ցակոբ եպ. Սիւնեաց 48.
Ցակոբ վդ. Հռեոռ 212. 216.
Ցակոբոս Եդեց 82.
Ցակոբոս վկայ. 229.
Ցակոբոս Տեառնեղբայր 31. 97.
Ցարութեան եկեղ. 7.
Ցաւհաքան Թգ. Աղուան 97.
Ցեսու 198.
Ցեսուանց վանք 76.
Ցիսէ 46.
Ցոբ 17. 198.
Ցոբհաննես կայսր 12*
Ցովնք 12. 14. 20. 21. 22. 24* 26. 28. 29. 38. 41* 52. 54. 67. 69. 109. 110. 111. 117. 187. 212.
Ցովաբ կթ. 42.
Ցովասափ առաջ. Գետկայ 116.
Ցովէլ զօրավար 33.
Ցովհաննես կայսր 12*
Ցովհաննէս Արմանեցի 116.
Ցովհաննէս Աւետարանիչ 44. 63. 187. 188. 212.
Ցովհաննէս Գառնեցի 200. 201. 202. 204.
Ցովհաննէս Եկեղեցացի 16.
Ցովհաննէս եպ. Կարուց 84. 85.
Ցովհաննէս եպ. Հաղբատայ Ա. 56.
Ցովհաննէս » Բ. 56. 111.
Ցովհաննէս » Գ. 56.
Ցովհաննէս Լասպարխ 212.
Ցովհաննէս կթ. Հայոց Ա. 16. 20. 21.
» » Բ. 23. 24.
» » Գ. 29. 30.
» » Դ. 37.
» » Ե. 43.
» » Զ. 3. 46. 48.
» » Է. 70. 73. 76. 82. 83. 93.

Յովհաննէս կթ. Ակ. Ա. 98.
» » Բ. 99.
» » Գ. 100.
» » Դ. 101.
» » Ե. 90. 102.
Յովհաննէս Մայրագոմեցի 31. 32.
Յովհաննէս Մկրտիչ 23. 134. 199. 202.
Յովհաննէս պատրիարգ Ցուննայ 27.
Յովհաննէս Ոսկեբերան 14. 18. 188. 194.
Յովհաննէս Սանահնին հայր 84.
Յովհաննէս ս. Սարկաւագ.
Յովհաննէս Սմբատ թգ. 50. 51. 52.
Յովհաննէս Տաւուշեցի 106.
Յովհաննէս Տուէցի 174. 200.
Յովհաննէս Տօմարագէտ 25.
Յովհաննու վանք 174.
Յովսէփ կթ. Հյց. Ա. 16. 20.
Յովսէփ » Բ. 43.
Յովսէփ կթ. Ակ. Ա. 100.
Յովսէփ » Բ. 101.
Յովսէփ մարտիրոս 42.
Յովսէփ վգ. առաջն. Թադէի վան. 174. 185. 187.
Յովսէփեանք 3.
Յորդանան 71. 205.
Յուդայ կախարդ 169. 181.
Յուլիանեանք 38.
Յուլիանոս ուրացող 10. 21.
Յունան մարգ. 191.
Յունան կթ. Ակ. 100.
Յուչաքան Թգ. Աղուան 97.
Յուսիկ կթ. 10. 11.
Յուսկան որդի 91.
Յուսուփ եղբայր Ափշինի 45. 46.
Յուսուփ Սալահատտինեան 227.
Յուստինիանոս Ա. 22. 23. 25. 109. 110.
Յուստինիանոս Բ. 26.
Յուստինոս (Յուստինիանոս) Ա. 22.
Յուստինոս Բ. 26.
Յօժար–որդիք 184.
Նախջուան 36. 43. 93. 118. 151.
Նայիման 213. 228.
Նանա քոյր Սարգսի իշխանի 72.
Նանան սարկաւագ 44.
Նանգաս աշխարհ 220.
Նանքիաս 220*
Նարկեաոս 43.
Նեռն 121.
Նեստոր 29.
Նեստորայ աղգ. 121. 158.
Ներսէհ կամսարական 36.
Ներսէս Լամբրօնացի 63. 76.
Ներսէս կթ. Ա. 4. 11. 12. 13. 121.
» Բ. 22. 23.
» Գ. (Շինող) 34. 35. 50.
» Դ. (Շնորհալի) 61. 63. 67. 69. 104* 186.
Ներսէս (Բակուր) կթ. Ակ. Ա. 99. 100.
» » Բ. 56.
» » Գ. 102. 146. 174. 208. 230.
Ներսէս Նարեկացի 68.
» Շիրակացի 35.
» վգ. առաջ. Կեչառուաց 86.
Նիկիա ք. 179*
Նիկիոյ ժող. 7. 25.
Նիկիփոր կայսր Ա. 42.
Նիկիփոր Բ. 48.
Նիկոմիդիա 98.
Նոյ 41.
Նորբերդ 72. 129.
Շամ խազը 98.
Շամախ ք. 99.
Շալուէ իշխան Վրաց 117.
Շալուէ որդի Սարգսի 79.
Շակմանիա 216. 233.
Շահակ կթ. 13. 14.
Շահի–Արմէն 80.
Շահնշահ որդի Զաքարէի 56. 93. 126. 135. 136. 139. 140. 142. 144. 162. 181. 222. 229. 230. 231.
Շամ ք. 161*
Շամ խալիֆայ 37.
Շամ–Հէշամ 37.
Շամախի 99.
Շամքին աշխարհ 161.
Շամիրամ 126.
Շամշյլտէ 136.
Շաքոր ք. 73. 79. 99. 102. 128. 129.
Շապուրան ք. 99.
Շապուհ Թգ. Պարսից Բ. 9. 10. 11. 12. 13. 14.

Ճապուհ որդի Յազկերտի Ա· 18*
Ճապուհ պատմագիր 3· 44·
Ճաքի ք· 99· 100·
Ճխիկ 46·
Ճկտպարըք 226·
Ճխար գո· 234*
Ճխրակ գբ· 48· 50* 85·
Ճխրակաւան 43·
Ճխրուան ք· 99·
Ճմուխլ 19·
Ճնորհաւոր 214·
Ճորաձոր 112·
Ճուփհաղիշոյ կթ· Ակ· 98·
Ոզնա 65·
Ոզբիանոս 12·
Ոնորիոս կայսր 14·
Ովայից գղ· 45·
Ովկիանոս 70· 219· 213*
Ովհէ 194·
Որ 213·
Որմիզդ Լթգ· Պարսից 29·
Ոսխանէից պատմիչ 4· 22·
Ոսխոկը 231·
Ոսճուն գ· 39·
Ոսկէ 210·
Ոսկուր ք· 213*
Ուահա 161· 227·
Ուռնայր Լթգ· Ակուանից 97·
Ուսուս–Նուբին 160·
Ուտէացւոց դաշտ 103*
Ուրալ 213*
Ուրբանիչ 112·
Ուրուայ–գան 214·
Ք.քսոս 213*
Քաղաաս 122· 133· 143· 180· 225· 231·
Քանիզդան 122· 148· 218· 231· (Ճին–կիզդան)·
Քարթերդ 207·
Քարկէ բերդ 88· 90· 129·
Քարմաղան–Նուբին կամ Քարմաղու և Քարմուզան 123· 137· 138· 143· 150· 152· 156· 160· 229·
Քարմա–Նուբին· տ· Քարմաղան–Նուբին:
Քէպէ 104*
Քիրուկլու գ· 239·
Քինաստան 122* 220*
Քինք 216*
Քմանկաաուկ 154·
Քոլայ աշխարհ 101·
Քորդուդ Հայք 8·
Քուի գետ 214*
Քուշու–գան 133·
Պալքալ լիճ 121*
Պաղակճիակ 50·
Պաղեսթին 29· 33· 71·
Պաղտատ 40· 44· 220-223·
Պաղտոյն Ա· 64·
Պամփիւլիա 219*
Պանա կթ· Ակ· 98·
Պանտալևոն բժիշկ (Ս·) 98·
Պապ Լթգ· 11· 13·
Պապաք որդի Վաստակայ 105· 224·
Պապաք որդի Պաօշի 224·
Պասրա 221·
Պարթևք 33·
Պարսիկք 3· 13· 18· 19· 20· 21· 25· 33· 61· 81· 88· 92· 97· 105· 117· 118· 124· 128· 175· 176· 203· 220· 221· 230·
Պարսկային ծով 209*
Պարսկաստան 30· 72· 123· 202· 206· 208· 220·
Պարսումայ (Ս·) վանք 76·
Պարտաւ 98· 99· 100· 103·
Պեմենդ 61*
Պետրոս առաքեալ 6· 54· 68· 71· 73· 187· 199·
Պետրոս Գետադարձ 50-53· 61· 70·
Պետրոս կթ· Ակ· 101·
Պէշպալեխ ք· 213·
Պէրպալեխ ք· 213·
Պերոզ Լթգ· Պարսից 20· 21·
Պէրքանէթ ք· 214·
Պղատոն 196·
Պղնձահանք 116· 126· 180·
Պոնտոս 219·
Որմիւզդ 17·
Ոսխարա 213*
Պռօշ 222· 224· 225·
Պատան 213·
Պտղոմէոս 199·
Պրոտոստաւաւոր 69*
Պօղոս առաքեալ 6· 54· 68· 75· 187· 194· 199·
Պօղոսի մեկնութիւն 64·
Պօղոսի տեսիլ (գիրք) 29·
Պօղոս քահանայ 132· 200·
Ջաբուս խաքան 98·
Ջալալ (գօլա) 143· 155· 156·

*

Ջալալադին 90· 117· 119· 120· 123· 129· 161·
Ջալալ–Հասան տ· Հասան–Ջալալ·
Ջամասպ 22·
Ջափր 43· 44· 175· 224·
Ջհուն 215· 218·
Ջոջբուղա 145·
Ռաբան Առոլի 150· 151· 159· 160·
Ռհ 123· 215·
Ռոմանոս կայսր Ա· 47·
Ռոմանոս Բ· 47· 59·
Ռուբէն Ա· 58* 62· 74·
Ռուբէն Բ· 62·
Ռուբինեանք 47·
Ռուզուգան 126· 136· 144· 158· 159· 161· 177· 229·
Ռուզք 159·
Ռօղաստան 215·
Սաբատա Բահատուր 10·
Սագաստան աշխարհ 29·
Սադեղ–աղայ 160·
Սադուն Շէրսալըքի որդի 226·
Սադուն Փրդի որդի 107· 111·
Սալահատին 71· 80· 109· 116· 227·
Սալահատինեանք 71·
Սալտուխք (Սէլճուկք) 214·
Սալտուկ 47·
Սահակ (Նահապետ) 198·
Սահակ կթ· Ա· (Պարթեւ) 3· 14· 15· 16· 17· 18· 19· 30· 64· 185·
Սահակ » Բ· 22·
Սահակ » Գ· 35· 36·
Սահակ Բագրատունի 16·
Սահակ եպ· Կարնոյ 101·
Սահակ եպ· Ոչտունեաց 16· 20·
Սահակ և Յովհէփ վկայք 42·
Սահակ արքեպ· Պարսաւայ 98·
Սահակ կթ· Աղուանից 100·
Սահատունի տ· Դաւիթ·
Սահմանախաչ 100·
Սալմոսայ վանք 174·
Սամսատ ք· 44·
Սամուէլ (մարգարէ) 198·
Սամուէլ կթ· 21· 22·
Սամուէլ Անէցի 4· 47·
Սամուէլ վկայ 40·
Սամուէլ կթ· Աղուանից 100·
Սանահին վանք 48· 50· 56· 60· 84· 93· 174·
Սանասարուկ արշակունի 9·
Սասանեանք 221·
Սասուն Էրկիր 226·
Սասունք 44· 226·
Սասոյ 97·
Սարաւան 211·
Սարախս (Սէրուխս) 215·
Սարգիս կթ· Ա· 50·
Սարգիս եպ· Ախոյ 84· 174·
Սարգիս եպ· Գարդմանայ 209·
Սարգիս Երզնկացի 234·
Սարգիս եպ· Կարնոյ 162· 175·
Սարգիս եպ· Հաղբատայ 56·
Սարգիս միայնակեաց 84·
Սարգիս վդ· 64·
Սարգիս (Ս·) 134·
Սարգիս (Ս·) Եկեղեցի 51·
Սարգիս (Ս·) Խաչ 134·
Սարգիս (Ս·) վկայարան 34·
Սարգիս սպանգաւոր 31·
Սարգիս Բխիրա 32·
Սարգիս Վեհաս 50·
Սարգիս նախահայր Զաքարեանց 72· 78·
Սարգիս Իւանեան տ· Աւագ:
Սարգիս Աւագ տ· Աւագ Սարգիս:
Սարգիս մամիկոնեան 148·
Սարգիս Շալուէի հայր 79·
Սարգիս Շահնշահի որդի 79 230·
Սարգիս իշխ· Ուխտեաց 231·
Սարգիս իշխան 108·
Սարգսախ, Սարթախ, Սարգսաք· 205· 206· 207· 213· 214· 217· 218· 219·
Սարխիուլ 215·
Սարկաւագ վդ· 47· 64· 66· 107· 199*
Սաւա Լեհաւն 107·
Սեբաստիա 53· 54· 62· 70· 76· 135· 219·
Սեբիանոս 188·
Սեբիոս պատմիչ 3*
Սեթ (Նահապետ) 198·
Սելեւկիա 62· 93·
Սեղբեստրոս 2· 6· 7· 67·
Սեւան 36· 43· 49, 84· 237·
Սեւասա տ· Սեբաստիա·
Սիմ Լեհաւն 40·
Սիմէոն կթ· Աղուանից Ա· 99·
Սիմէոն » Բ· 100·
Սիմէոն Առոլի 150·

Սիմէոն Սիւնակեաց 21.
Սիմոն կախարդ 169.
Սին անապատ 52.
Սինա անապատ 204.
Սիսն կԹ. 39.
Սիսն (վերին) 167.
Սիսիկ 77*
Սիս 62. 84. 94. 187. 211. 219.
Սիսիան գ. 215.
Սիրաման 232.
Սիր Աստան 94.
Սիւնիք 41. 48. 49. 79.
Սկեւռայ վանք 53. 213.
Սկիւթացիք 47. 82. 61. 62.
Սղնախ 210. 214.
Սմբատ Բագրատունի 29. 43.
Սմբատ բիւրատեան վոգբր 36.
Սմբատ Թգ. Բագրատ. Ա. 45. 46. 47.
Սմբատ Բ. 50.
Սմբատ Գ. ս. Յովհաննէս.
Սմբատ սպարապետ 44.
Սմբատ եղբայր Հեթմոյ Ա. 77* 95. 151. 178. 211.
Սմբատ հայր Աբասայ 48.
Սմբատ Մագիստրոս 50.
Սմբղանդ 215.
Սնղախ 214.
Սոկրատէս պատմագիր 2.
Սողոմոն խնամատուն 15. 63. 198.
Սողոմոն կԹ. 42.
Սողոմոն կԹ. Աղուանից Ա. 100.
Սողոմոն » Բ. 100.
Սողոմոն հայր Մաքենոցաց 100.
Սոնէթ ս. Սուանէթ.
Սոսթենէս 130.
Սուանէթ 139. 177. 178. 228.
Սուէմոն ամիրապետ 36. 37.
Սուղուբ-պան ք. 214.
Սուհէն (Ճիշր-Վշնասպ) 30.
Սունկ 220*
Սուպուդան 104*
Սուա-գօլ (Սիւա կէօլ) 214.
Սուրբ-Մարի (Սուրմառի) 140.
Սուրէն ս. Ճիշր-Վշնասպ.
Սուրհան 35.
Սուրմակ 19.
Սուրմառի 210*
Սոփար 46.
Սպահան ք. 89. 123.
Սպրամ 99.
Սուխանէ եղբայր Թորոսի 62.
Սուխանոս Ա. կԹ. 42.
» Բ. » 48.
» Գ. » 49.
Սուխանոս Աղ. կԹ. Ա. 88. 89. 90
» » Բ. 107.
» » Գ. 101. 107.
» » Դ. 230.
Սուխանոս Աստղիկ 4.
Սուխանոս Մեծն Սիւնեցի 17. 40. 41. 188.
Սուխանոս եպ. Սիւնեաց 16.
Սուխանոս եպ. Նռնիրակ 212.
Սուխանոս գրան երէց 40.
Սուխանոս Զամզամայ 65.
Սուխանոս Կոն իշխան 44.
Սուխանոս որդի Յուսկան 91.
Սօսլան 93.
Սօրար (Սիհոն գեա) 214.
Սօրի 215.
Վախտանգ Համեղբայր տէր 107. 111.
Վախտանգ Տօնկիկ 145.
Վահան Գողթնացի 57.
Վահան (Վահանիկ) կԹ. 49.
Վահան Մամիկոնեան 21* 23.
Վահրամ հայր Աղբուղայի 50. 72. 73. 142. 153. 155. 158. 159.
Վահրամ որդի Զաքարէայի 78. 79. 126.
Վահրամ (Գրիգոր վկայասէր) 54.
Վահրամ Թոռն Վահրամայ տեառն Շահբոցոյ 79. 128. 129. 131.
Վաղարշ եղբայր Պերոզի 21. 22.
Վաղարշակ 14. 97.
Վաղէս 12.
Վայոց ձոր 42. 79.
Վան 91*
Վանական եպ. Բջնոյ 174.
Վանական վարդապետ 4. 113. 129. 146. 174. 187. 193. 198.
Վաչիկ պ. 116.
Վաչագան 97. 98.
Վաչէ Թգ. Աղուան Ա. 97.
Վաչէ Բ. 97.
Վաչէ որդի Քրդի 211.
Վասակ Բագրատունի 72.
Վասակ Խաչենեցի 105.
Վասակ միւս 111.
Վասակ հայր Պռոշայ 224.
Վասակ Պահլաւունի 54.

Վասակ Սիւնի 20.
Վասիլ կայսր Ա. 8. 47. 50.
Վասիլ Բ. 45.
Վասպուրական 36. 49. 161.
Վասպուրական (Ասպուրական) 14.
Վանեան գաշտ (Վանիանեան կամ Վանայ գաշտ) 10. 98.
Վարազդատ 13.
Վարդ եղբայր Վահանայ 25.
Վարդան վդ. (պատմիչ) 84. 165. 166. 173. 174. 201.
Վարդան Մամիկ. Մեծն. 3. 18. 19. 20.
Վարդանանք 17. 82. 97.
Վարդանակերտ 36.
Վարդենիս գ. 211. 216.
Վարոս Ձգնաւոր 21.
Վեհմիհրշապուհ 19.
Վեսա Սարգիս ս. Սարգիս Վեսա.
Վիրոյ կիթ. 30. 98.
Վիրք 4. 7. 25. 26. 49. 66. 72. 81. 87. 89. 93. 97. 98. 143. 144. 174-179. 207. 210. 218. 228. 229. 231.
Վլիմ 36. 37.
Վղան 30*
Վչնասպ 30*
Վոլկա 203*
Վռամ Բ. 19. 20.
Վռամշապուհ 14. 15. 17. 18*
Վրախձա (Վահրիճ) 15.
Վրաստան 17. 80. 126. 143. 180.
Վրթանէս եպ. Բջնոյ 84. 90.
Վրթանէս կիթ. 9. 10. 98.
Վրթանէս վդ. 28.
Վրթանէս քերթող 26.
Վրկան աշխարհ 29.
Տաճիկք 34. 35. 40. 62. 79.
Տաճկաստան 61.
Տամղան, Տամղան 215.
Տանձուտ գլ. 109.
Տանձուտայ-ձոր 108.
Տանդրի 63.
Տաշիր 79.
Տարսան 9. 62. 76.
Տարօն 11. 27. 33. 43. 45. 80.
Տաւուշ բ. 72. 73. 79. 129.
Տղրկածով 112.
Տէրունական բ. 73. 79.
Տիագիկ մանկուիմեան տեառն (պիրք) 29.
Տիբեր կայսր 27. 29.
Տիգրիս գետ 44. 221. 225.
Տիզբոն ք. 221*
Տիմոթէոս երէց 21.
Տիրան Թգ. Բ. 10. 11.
Տիրացու եպ. 91.
Տիւրիկէ ք. 155.
Տղայ ս. Գրիգոր Տղայ.
Տոյինք (քուրմք) 217. 233.
Տուէցի 73.
Տուիմուն-նուէին 150.
Տուհար թաղիար 218. 220.
Տուղասան թաղիար 157.
Տուղու-սէկ 47.
Տուս, Տուա 215.
Տուտհար իշխան 218. 232.
Տու-ղբիկ 84.
Տրապիզոն ք. 53.
Տրապօլիս ք. 71.
Տրդատ Թգ. 2-10. 46. 64. 67. 82. 97. 98.
Տրդատայ Թաղա կամ սարաւոյք 46. 200.
Տրդատ կիթ. Ա. (յՕթմանոյ) 39.
Տրդատ » Բ. (Ի Դամասեւորիէ) 39.
Տփխիս ք. 102. 103* 118. 136. 178. 210. 228.
Տօխուզ-խաթուն 223. 233. Տ. և. Թօխուզ
Տօնղուզ-աղա 144.
Տօնղրիլ (Դանգրէտ) 61.
Տօրոս լ. 214.
Ցուրտաւ կամ Ցրտաւ 26.
Փալհաւան 73.
Փախչուբի (Հարիկ) 218*
Փառանձեմ 12.
Փառխառայ վանք 101.
Փառնեբուեհ 11.
Փարաւան 233.
Փարպեցի ս. Ղազար:
Փաւստոս Բիւզանդ 3. 12.
Փենէհէզ (քահանայապետ) 198.
Փենէհէզ կամ Փենէհ հրեայ ի մաստասէր 24. 109.
Փիլարտոս 47.
Փիլիպպոս այր Ջաբէլի 94.
Փիլիտոս (Փիլոթէոս) 82.
Փիլոնիկոս 194.
Փոկաս կայսր 29.
Փոտ 45.
Փուլատ 214.

Քաղնւն գբ. 40.
Քաղկեդոն 20. 21. 25. 28. 31. 39. 48. 49. 50. 81. 99.
Քամոյ 214.
Քայքանեի 214.
Քարաշխեաւ վանք 64.
Քարհերձ 79.
Քաւիչաք-ք 122*
Քէմ 119 տ. Մհլնք Քէմ.
Քիթբուղա 228.
Քոբայր 84. 231.
Քուրդ Իշխան 107. 108. 111. 211. 216.
Քուրդիկ Իշխան 41.
Քուրդք 71. 78. 220. 221.
Քրիստափոր կթ. 22. 31.
Քման աշխարհ 209. 215.
Քօպի 213*
Օթման 33. 34. 36.
Օթմանս գբ. 39.
Օթրար ք. 215.
Օլթի 231*
Օձնեցի տ. Յովհան Օձնեցի.
Օձուն գղ. 231.
Օշական 27.
Օշավա գբ. 112.
Օշին որդի Հեթմոյ լամբրօնացւոյ 157.
Օմառ 37.
Օմար 36. 37.
Օպի 214*
Օսէթք 159.
Օրէնդ 200.
Օրղան 118.
Ֆռանկք 55. 61. 62. 67. 75. 76. 95. 120. 173.